

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ  
ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ

## **Հեղինակներ**

### **Արա Գաբուզյան՝**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ

*Քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 5-րդ, 6-րդ (հոդվածներ 29-31), 7-8-րդ, 14-րդ 20-21-րդ գլուխներ, Քրեական օրենսգրքի հատուկ մասի 23-24-րդ, 33-րդ, 40-րդ, 42-րդ և 44-րդ գլուխներ*

### **Աննա Մարգարյան՝**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ

*Քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 1-4-րդ, 10-11-րդ, 13-րդ և 15-19-րդ գլուխներ, Քրեական օրենսգրքի հատուկ մասի 22-րդ, 25-րդ, 28-րդ, 32-րդ (հոդված 267-282), 35-րդ, 38-39-րդ, 41-րդ, 43-րդ և 45-րդ գլուխներ*

### **Տիգրան Միմոնյան՝**

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, իրավաբանական  
գիտությունների թեկնածու, դոցենտ  
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ

*Քրեական օրենսգրքի ընդհանուր մասի 6-րդ (հոդվածներ 32-41), 9 և 12-րդ գլուխներ*

*Քրեական օրենսգրքի հատուկ մասի 26-27-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ (հոդվածներ 283-296), 34-րդ, 36-37-րդ և 46-50-րդ գլուխներ*

### **Փորձագիտական խմբի համակարգող՝**

#### **Գագիկ Ղազինյան՝**

Իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան

### **Խորհրդատու փորձագետ՝**

#### **Համլետ Ասատրյան՝**

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ

---

Funded  
by the European Union  
and the Council of Europe



COUNCIL OF EUROPE



---

Implemented  
by the Council of Europe

ՀՀ Քրեական օրենսգրքի ուղեցույցը մշակվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից: Սույն ուղեցույցի մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ.

*Ուղեցույցը ենթակա է հետագա սրբագրման*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԲԱՆ..... 7

ԱՍՓՈՓՓՈՒՄ..... 9

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ**

ԳԼՈՒԽ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....16

ԳԼՈՒԽ 2 ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ.....26

ԳԼՈՒԽ 3 ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ.....30

ԳԼՈՒԽ 4 ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ.....42

ԳԼՈՒԽ 5 ՀԱՆՑԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ .....44

ԳԼՈՒԽ 6 ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.....67

ԳԼՈՒԽ 7 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՓՈԻԼԵՐԸ.....101

ԳԼՈՒԽ 8 ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ .....105

ԳԼՈՒԽ 9 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....116

ԳԼՈՒԽ 10 ՊԱՏԺԻ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԵՎ ՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ .....126

ԳԼՈՒԽ 11 ՊԱՏԺ ԵՆԿԱՆԱԿԵԼԸ.....144

ԳԼՈՒԽ 12 ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ.....164

ԳԼՈՒԽ 13 ՊԱՏԺՑ ԱԶԱՏԵԼԸ.....178

ԳԼՈՒԽ 14 ՀԱՄԱՆԵՐՈՒՄԸ, ՆԵՐՈՒՄԸ, ԴԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ .....194

ԳԼՈՒԽ 15 ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՆԿԱՆԱԿՎՈՂ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ .....196

ԳԼՈՒԽ 16 ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԵՎ 21 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԺԻ ԵՆԿԱՆԱԿԵԼԸ.....200

ԳԼՈՒԽ 17 ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻՆ ԵՎ 21 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ.....203

ԳԼՈՒԽ 18 ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻՆ ԵՎ 21 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԺՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....207

ԳԼՈՒԽ 19 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳՐԱՎՈՒՄԸ.....209

ԳԼՈՒԽ 20 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....216

ԳԼՈՒԽ 21 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.....220

**ՀԱՏՈՒԿ ՄԱՍ**

ԳԼՈՒԽ 22 ԽԱՂԱԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՈՒՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....225

ԳԼՈՒԽ 23 ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ԴԵՍ ՈՒՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....240

ԳԼՈՒԽ 24 ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	255
ԳԼՈՒԽ 25 ԿՅԱՆՔԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	259
ԳԼՈՒԽ 26 ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ՊԱՏՎԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՍ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	264
ԳԼՈՒԽ 27 ՍԵՌԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	287
ԳԼՈՒԽ 28 ՍԱՀՄԱՆԱՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	295
ԳԼՈՒԽ 29 ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	305
ԳԼՈՒԽ 30 ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	315
ԳԼՈՒԽ 31 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	333
ԳԼՈՒԽ 32 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	344
ԳԼՈՒԽ 33 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	367
ԳԼՈՒԽ 34 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	375
ԳԼՈՒԽ 35 ԶԵՆՔԻ, ՀՐԱԶԵՆԻ ԿԱՍ ԱՅԼ ՀԱՆՐԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	390
ԳԼՈՒԽ 36 ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	396
ԳԼՈՒԽ 37 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ԿԱՍ ՊԱՀԱՆՁՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	406
ԳԼՈՒԽ 38 ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	407
ԳԼՈՒԽ 39 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	414
ԳԼՈՒԽ 40 ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ, ԴՐԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ, ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ, ԽԻՍՏ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԿԱՍ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	426
ԳԼՈՒԽ 41 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	436
ԳԼՈՒԽ 42 ՍԱՀՄԱՆԱՐԴԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	441
ԳԼՈՒԽ 43 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	445
ԳԼՈՒԽ 44 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	453
ԳԼՈՒԽ 45 ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	463
ԳԼՈՒԽ 46 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	475

ԳԼՈՒԽ 47 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	482
ԳԼՈՒԽ 48 ԶԵՆՔԻ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ, ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ՍԱՐՔԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	487
ԳԼՈՒԽ 49 ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	493
ԳԼՈՒԽ 50 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	496

## ՆԱԽԱԲԱՆ

2022 թ. հուլիսի 1-ից գործողության մեջ է դրվել 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգիրքը (այսուհետ նաև՝ քրեական նոր օրենսգիրք)<sup>1</sup>: Դրանում տեղ գտած նորամուծությունները, հայեցակարգային փոփոխություններն ու նոր կարգավորումները կոչված են լրացնել ՀՀ քրեական նախկին օրենսգրքում (այսուհետ՝ քրեական նախկին օրենսգիրք) եղած բացերը, վերացնել թերությունները, ներմուծել արտասահմանյան լավագույն փորձն այնպես, որ կիրառելի լինի ՀՀ-ում, բարձրացնել քրեական արդարադատության արդյունավետությունը, երաշխավորել մարդու իրավունքների պաշտպանությունն ու ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը: Թե ինչքանով է դա հաջողվել, ցույց կտա պրակտիկան:

Քրեական նոր օրենսգրքի նորմերը ճիշտ կիրառելու, օրենսդրի կամքն ընկալելու նպատակով պատրաստվել է քրեական նոր օրենսգրքում տեղ գտած ինստիտուտների, դրանցում արտացոլված նոր մոտեցումների և լուծումների վերաբերյալ այս Ուղեցույցը:

Ուղեցույցի նպատակն է՝ ուղղորդել իրավակիրառող սուբյեկտներին՝ ընկալելու քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծությունների էությունը և գործնականում կիրառելու դրանք: Դրա համար այստեղ մեկնաբանվել ու քննարկվել են նորամուծություն հանդիսացող նորմերը, ընդ որում, ոչ թե հողված առ հողված, այլ ինստիտուտ առ ինստիտուտ, և չեն մեկնաբանվել այն նորմերը, որոնք մնացել են քրեական նախկին օրենսգրքից և հանրահայտ ու ծանոթ են գործնականում դրանք կիրառողներին: Տեսական դրույթներն ու համեմատությունները քրեական նախկին օրենսգրքի նորմերի հետ կատարվել են այնքանով, որքանով դա կօժանդակի նորամուծությունների էությունը հասկանալուն և արարքները ճիշտ որակելուն: Իրավակիրառողներին ճիշտ կողմնորոշելու և քրեական նոր օրենսգրքի բովանդակությունը ճիշտ ընկալելու նպատակով ուղեցույցում բացահայտվել է, թե ինչն է եղել օրենսդրի կամքը, մանրամասն քննարկվել է նոր կամ բարեփոխված ինստիտուտների էությունը, առաջարկություններ են արվել՝ ուղղված նոր կամ բարեփոխված նորմերի ճիշտ կիրառմանը: Բազմաթիվ հիմնախնդիրների քննարկման ժամանակ ուղեցույցի հեղինակները հիմնվել են Եվրոպական դատարանի

---

<sup>1</sup> Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանը վերաբերող դրույթները ուժի մեջ կմտնեն 2023 թ.-ի հունվարի 1-ից, ազատության սահմանափակում պատժատեսակը կանոնակարգող դրույթները՝ 2023 թ.-ի հուլիսի 1-ից իսկ կարգապահական գումարտակում պահել պատժատեսակը կանոնակարգող դրույթները՝ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան կարգապահական գումարտակներն ստեղծելուց և դրանք շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան մինչև 2023 թ.-ի հուլիսի 1-ը: Անչափահասների վերականգնողական հաստատությունում տեղավորելու և հաստատության ծրագրերին մասնակցելու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ կմտնեն օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան՝ անչափահասների վերականգնողական հաստատություն ստեղծելուց և շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան մինչև 2024 թ.-ի հուլիսի 1-ը:

նախադեպային պրակտիկայի, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա:

Հարկ է նշել, որ ուղեցույցն ի սկզբանե չի հավակնում սպառիչ պատասխաններ տալ քրեական նոր օրենսգրքի կիրառման հետ կապված բոլոր հարցերին, և գործնականում հանդիպող կոնկրետ դեպքերի կամ իրավիճակների հետ կապված կարող է առաջանալ լրացուցիչ դատական կամ տեսական մեկնաբանման անհրաժեշտություն:

Ուղեցույցի հիմնական հասցեատերերը քրեական օրենսգիրքն առաջնային կիրառողներն են՝ դատավորներ, դատախազներ, փաստաբաններ, նախաքննության և հետաքննության մարմինների ներկայացուցիչներ:

Ուղեցույցը բաղկացած է՝

**նախաբանից**, որտեղ պարզաբանված են Ուղեցույցի նպատակը, հասցեատերերի շրջանակը, բովանդակության շարադրման սկզբունքները և մեթոդները, նպատակը,

**ամփոփումից**, որտեղ ներկայացված են քրեական նոր օրենսգրքում առկա հայեցակարգային գաղափարների, նորարարական մոտեցումների և առանցքային ինստիտուտների ամփոփ նկարագիրը, գաղափարախոսությունը, բացահայտված են այն լուծումները, որոնք ընկած են օրենսդրական կարգավորումների հիմքում,

քրեական նոր օրենսգրքի մասերի հաջորդական **ներկայացումից**, ուր տրված են առանձին նորմերի պարզաբանումներ կամ մեկնաբանություններ:

Հույս ունենք, որ ուղեցույցը կծառայի իր նպատակներին և կօգնի ՀՀ քրեական նոր օրենսգրքի դրույթների գործնական կիրառմանը:



## ԱՄՓՈՓՈՒՄ

Քրեական նոր օրենսգիրքը քրեական արդարադատության ոլորտում ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը երաշխավորող առանցքային փաստաթղթերից է, և վերջինիս մշակման ժամանակ առանձնահատուկ կարևորություն է տրվել ոչ միայն քրեական նախկին օրենսգրքում եղած բացերի ու թերությունների վերացմանը, այլև իրավական որոշակիության ապահովմանը, մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորմանը, միջազգային հանրության առջև ՀՀ-ի կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանը:

Քրեական նոր օրենսգիրքը բաղկացած է ավանդական Ընդհանուր և Հատուկ մասերից:

Ընդհանուր մասում առկա հիմնական նորամուծությունները հանգում են հետևյալին՝

- տրվել է քրեական նոր օրենսգրքում կիրառվող հիմնական հասկացությունների բացատրությունը, վերանայվել են քրեական օրենսդրության սկզբունքները, նախատեսվել է քրեական օրենքի Ընդհանուր մասի դրույթների անալոգիայով կիրառման հնարավորություն, պայմանով, որ դա չի վատթարացնում անձի վիճակը: Հստակեցվել է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունը ոչ միայն պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց կիրառելիս, այլև անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս,

- փոփոխություններ են կատարվել օրենքին հետադարձ ուժ տալու հարցում. մասնավորապես, հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով: Հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարելուց հետո ուժի մեջ մտած, սակայն մինչև իրավասու մարմնի կողմից եզրափակիչ դատավարական ակտը կայացնելն ուժը կորցրած միջանկյալ քրեական օրենսդրությունը հետադարձ ուժով կիրառվում է քրեական օրենսդրության հետադարձ ուժին վերաբերող հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան,

- տարածության մեջ քրեական օրենքի գործողությունը կարգավորվել է նաև փախստականների և երկքաղաքացիների կապակցությամբ,

- քրեական օրենսգրքով է կարգավորվում միայն տուժողի հայցով քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը,

- հանցանքի հասկացության մեջ չի կիրառվում հանրային վտանգավորության մասին նշումը. այն ենթակա է սուբյեկտիվ գնահատականի, որովհետև կախված է

օրենսդրի կողմից կատարված գնահատումից, ուստի չի կարող լինել հանցանքի օրենսդրական հատկանիշ,

- կարգավորվել է հատուկ սուբյեկտի ինստիտուտը,

- էական փոփոխությունների է ենթարկվել մեղքի ինստիտուտը: Ներկայումս մեղքի էությունը հետևյալում է քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե այն կատարողը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել դա: Միաժամանակ նշվում է, որ օրենսգիրքը հիմնվում է արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողության կանխավարկածի վրա,

- տրվել են դիտավորության և անզգուշության նոր հասկացություններ՝ շեշտը դնելով արարքի փաստական հանգամանքների վրա,

- կարգավորվել է փաստական սխալի ինստիտուտը,

- արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների փոխարեն կարգավորվել է քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների ինստիտուտը, որում ամփոփվել են ոչ միայն արարքի հանցավորությունը բացառող հանրահայտ հանգամանքները, այլև նոր հանգամանքներ՝ սպորտային ռիսկը, մասնագիտական գործառույթների իրականացումը, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը և այլն, անմեղսունակությունը, առանց մեղքի վնաս պատճառելը,

- որոշակի փոփոխություններ են կրել հանցագործության փուլերի և հանցակցության ինստիտուտները, տրվել է հանցափորձի տեսակների հասկացությունը. ըստ քրեական նոր օրենսգրքի, հանցափորձը լինում է ավարտված և չավարտված: Հանցափորձը համարվում է ավարտված, եթե անձը կատարում է այն արարքը, որն անհրաժեշտ ու բավարար էր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունն ավարտին հասցնելու համար, և գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին է հասել, կամ հանցագործությունն ավարտելու համար արարքը շարունակելու անհրաժեշտություն չկա: Հանցափորձը համարվում է չավարտված, եթե անձը գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել սկսած արարքի կատարումը կամ նոր արարք կատարել:

- նախատեսվել է հանցակցության նոր ձև՝ հանցավոր կազմակերպությունը: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն

անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

- մանրամասն կարգավորվել է հանցակցի սահմանազանցման հարցը,

- ամբողջականորեն կարգավորվել է հանցագործությունների բազմակիության ինստիտուտը. տրվել է դրա հասկացությունը, համակցության նոր հասկացությունը, որի համաձայն իդեալական համակցություն կարող է որակվել նաև արարքը միննույն հոդվածով նախատեսված լինելու դեպքում, կարգավորվել է նաև քրեաիրավական նորմերի մրցակցության հարցը, վերացվել է ռեցիդիվը տեսակների բաժանելը,

- պատժի համակարգում ավելացել են նոր պատժատեսակներ՝ օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը և ազատության սահմանափակումը, տուգանքի չափը որոշվում է ըստ հանցավորի եկամտի չափի,

- մանրամասն կարգավորվել է պատիժ նշանակելու հարցը,

- որոշակի փոփոխությունների է ենթարկվել քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը. մասնավորապես այստեղ է նախատեսվել հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը, երկարացվել են վաղեմության ժամկետները, և փոխվել է դրա հաշվարկման կարգը,

- պատժից ազատելու ինստիտուտի մեջ է ընդգրկվել պատիժը պայմանականորեն չկիրառելը, բացի այդ, այստեղ դատապարտյալի վրա դրվող պարտականությունների շրջանակն ընդլայնվել է, և դրանք նախատեսելը դատարանի համար դարձել է պարտադիր: Նախատեսվել է նաև փորձաշրջանի երկարացման հնարավորություն,

- պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու համար պատժի՝ օրենքով սահմանված պարտադիր կրելու ժամկետը կապվում է ոչ թե հանցագործության ծանրության, այլ դատարանի կողմից նշանակված պատժի ժամկետի հետ,

- անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելը էական փոփոխության է ենթարկվել: Այսպես՝ մինչև 16 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: 16-ից մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երկրորդը: Եթե նշված կանոնները կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա

նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ,

- նոր օրենսգրքում, ռեցիդիվի դեմ պայքարի արդյունավետության համար, նախատեսվել են անվտանգության միջոցներ, որոնք կարող են կիրառվել պատժի հետ զուգակցված կամ ինքնուրույն: Անվտանգության միջոցներն են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները, որոշակի վայրեր այցելելու արգելքը, հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը,

- օրենսգրքում առաջին անգամ նախատեսվում է նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը. ամրագրված են իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմքը, քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանները, իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները՝ տուգանք, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցում, Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելք, հարկադիր լուծարում:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությամբ Ընդհանուր մասն ավարտվում է:

Հատուկ մասն սկսվում է խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գլխով, որտեղ պահպանվել են միջազգային իրավունքի նորմերը: Այստեղ պատասխանատվություն է նախատեսվում պատերազմական տարբեր հանցագործությունների, ցեղասպանության տարբեր դրսևորումների, մշակութային արժեքների դեմ ուղղված հանցագործությունների, դիակապտության և մի շարք այլ հանցանքների համար:

Հատուկ մասի հիմնական փոփոխությունները հանգում են հետևյալին՝

- մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործությունների, հատկապես սպանությունների, ծանրացնող հանգամանքները ենթարկվել են էական փոփոխությունների: Այսպես՝ այլևս առկա չէ երկու կամ ավելի անձանց սպանությունը, թե իրական, թե իդեալական համակցության դեպքում երկու կամ ավելի անձանց սպանությունը պետք է որակվի համակցությամբ: Վերացվել են այլ հանցագործությունների հետ զուգորդված ծանրացնող հանգամանքները: Դա թույլ կտա խուսափել կրկնակի դատապարտումից, բացի դա, եթե առկա է այլ հանցագործություն, արարքը կարող է որակվել համակցությամբ: Այլ ծանրացնող հանգամանքներում ևս առկա են փոփոխություններ,

- ավելացել է տուժողի խնդրանքով սպանությունը, ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի սպանությանը հանցակցելը, փոփոխությունների է ենթարկվել ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի սպանության հանցակազմը,

- նախատեսվել է նաև ուղղակի դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու

հանցակազմը,

- նախատեսվել է ինքնասպանությանը նպաստելու նոր հանցակազմը,

- առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլխում էական փոփոխություններ չկան: Միայն առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշ է ավելացվել նաև ականջի և կզակի անջնջելի այլանդակումը,

- կյանքը և առողջությունը վտանգող հանցագործությունների գլխում փոփոխության են ենթարկվել մի շարք հանցակազմեր: Մասնավորապես՝ պատասխանատվություն է նախատեսվել հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելու, մարդու սաղմի, պտղի, մարդու կամ դիակի բջիջների, հյուսվածքների, օրգանների կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների ապօրինի շրջանառության,

- ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների գլխում, բացի թրաֆիքինգից, մարդուն առևանգելուց, ապօրինի ազատությունից զրկելուց և այլնից, պատասխանատվություն է նախատեսվել հոգեկան և ֆիզիկական ներգործության, ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելու համար,

- սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների գլխում հիմնական փոփոխությունն այն է, որ բռնաբարությունն ու սեքսուալ բնույթի բռնի գործողությունները միավորվել են մեկ հանցակազմում,

- սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների գլխում պահպանված են նախկին օրենսգրքում առկա հանցակազմերը՝ որոշ փոփոխություններով,

- ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների գլուխը նույնպես էական փոփոխություններ չի կրել,

- առանձնացվել է «Հափշտակությունները» գլուխը, որի հիմնական փոփոխությունը հանգում է նրան, որ ավազակությունը դարձել է նյութական հանցակազմ, բռնության տեսակները չեն սահմանազատվում, ուստի դրա գործադրմամբ ցանկացած հափշտակություն համարվում է ավազակություն, հափշտակության հասկացությունից, որը տրված է հոդված 3-ում, դուրս է բերվել շահադիտական նպատակը,

- սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններում նորամուծությունները հանգում են հետևյալին. շորթման հանցակազմում ավելացվել է գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, ավելացել են բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելու կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի

ցուցմունքներն ապօրինի փոխելու կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելու, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու, ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելու, սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելու հանցակազմերը,

- էական փոփոխությունների են ենթարկվել տնտեսական հանցագործությունները: Ավելացվել են հետևյալ հանցակազմերը՝ կենսապահովման նվազագույն զամբյուղի մեջ մտնող ապրանքները ապրանքային շուկայից հանելը, ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը, ապօրինի գործունեություն իրականացնելու կամ ապօրինի գործունեությունը քողարկելու նպատակով իրավաբանական անձ, դրա առանձնացված ստորաբաժանում, հիմնարկ ստեղծելը կամ օգտագործելը կամ նույն նպատակով անհատ ձեռնարկատեր հաշվառելը: Փոփոխությունների են ենթարկվել նախկինում եղածները,

- հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններում փոփոխությունները հանգում են հետևյալին՝ հստակեցվել է խուլիգանության հանցակազմը, ավելացվել են հնագիտական օբյեկտները ոչնչացնելու կամ վնասելու կամ այլ ապօրինի արարքներ կատարելու, նույն արարքն անզգուշությամբ կատարելու հանցակազմերը, նախկինում եղածները փոփոխվել են,

- հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գլխում փոփոխությունները հանգում են հետևյալին՝ ավելացվել են ահաբեկչական գործունեությանը նպաստելը, ահաբեկչական կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը, ահաբեկչական կազմակերպությանը մասնակցելը, ահաբեկչություն կատարելու կոչեր պարունակող նյութեր կամ առարկաներ տարածելը, նախկինում եղածները փոփոխությունների են ենթարկվել,

- բնակչության առողջության դեմ ուղղված և բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործությունների գլուխներում նորամուծությունն այն է, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ավելացել են նաև դրանց անալոզները, ածանցյալները, ավելացել են դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների ապօրինի շրջանառությունը, իրացման նպատակով կեղծ ակոհոլային խմիչքների, մանկական սննդի, կենսաբանական ակտիվ հավելումների, դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների շրջանառությունը կամ դրանք իրացնելը, կեղծ ակոհոլային խմիչքների, մանկական սննդի, կենսաբանական ակտիվ հավելումների, դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական

արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների ինքնությունը հավաստող կեղծ փաստաթղթեր պատրաստելը կամ օգտագործելը, դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների ինքնությունը հավաստող իրական փաստաթղթերի ապօրինի շրջանառությունը,

- սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գլխում կատարվել են կոսմետիկ փոփոխություններ,

- հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները գլխում ավելացել են կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալու, բռնի անհետացման հանցակազմերը, պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմը միավորվել է պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի հետ, ընդլայնվել է պաշտոնատար անձի հասկացությունը, որը տրված է հոդված 3-ում,

- կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների գլխում իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու հանցակազմի փոխարեն նախատեսվել է պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու հանցակազմը, պետական սահմանն ապօրինի հատելու հանցակազմում նախատեսվել է խրախուսական նորմ, համաձայն որի՝ հոդվածի գործողությունը չի տարածվում թրաֆիքինգից տուժած անձի վրա, ինչպես նաև ապաստան հայցողի վրա, որը, ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրա կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել, առանց ձգձգման դիմում է իրավասու մարմին և մատնանշում իր ապօրինի մուտքի հիմնավոր պատճառը, ինչը հիմնված է միջազգային իրավունքի վրա,

- օրենսգիրքը ավարտվում է արդարադատության դեմ ուղղված և զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների գլուխներով, որոնցում փոփոխություններն էական չեն:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

## Գլուխ 1

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Քրեական օրենսգրքի կիրառման առումով առանցքային նշանակություն ունի **քրեական օրենսդրության** ընկալման խնդիրը: 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքով այս առումով տեղ է գտել էական փոփոխություն. եթե քրեական նախկին օրենսգրքը սահմանում էր, որ ՀՀ քրեական օրենսդրությունը բաղկացած է միայն քրեական օրենսգրքից և քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են ՀՀ քրեական օրենսգրքում, ապա քրեական նոր օրենսգրքով առավել հստակ մոտեցում է դրսևորվել և սահմանվում է, որ քրեական օրենսդրությունը բաղկացած է ոչ միայն քրեական օրենսգրքից, այլև քրեաիրավական նորմեր պարունակող կամ քրեական օրենքը կիրառելու համար նշանակություն ունեցող ՀՀ միջազգային պայմանագրերից և ՀՀ իրավական այլ ակտերից: Քրեական նոր օրենսգրքով ամրագրվում է, որ հանցակազմ կամ պատիժ կամ քրեաիրավական ներգործության միջոց նախատեսող նորմերը կարող են կիրառվել միայն քրեական օրենսգրքում ընդգրկվելուց հետո:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած այս մոտեցումն առավել արդարացված է, քանի որ նախկինում էլ բլանկետային դիսպոզիցիա պարունակող նորմերի կիրառության պարագայում անհրաժեշտություն էր առաջանում դիմել իրավունքի այլ ճյուղերի, և ըստ էության, դրանք հանդես էին գալիս որպես քրեական օրենսդրության մաս: Նույն կերպ՝ պատասխանատվությունը բացառող դրույթներ պարունակող միջազգային փաստաթղթերի վավերացման դեպքում դրանք գործում են անմիջականորեն՝ հիմք հանդիսանալով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար, հետևաբար՝ դրանք ևս քրեական օրենսդրության մաս են:

Այլ խնդիր է, որ օրենսդիրը հստակեցրել է, որ քրեական օրենսգրքում պարտադիր պետք է ընդգրկվեն այն նորմերը, որոնք նախատեսում են հանցակազմ կամ պատիժ կամ քրեաիրավական ներգործության միջոց: Հետևաբար, եթե ՀՀ-ի կողմից վավերացված որևէ միջազգային փաստաթղթով նախատեսվում են նոր հանցակազմեր կամ քրեաիրավական ներգործության միջոցներ կամ պատժատեսակներ, ապա դրանք կարող են կիրառվել միմիայն քրեական օրենսգրքում ընդգրկվելուց հետո: Այս կարգավորումը նույնական է ՀՀ քրեական նախկին օրենսգրքում եղած տարբերակին, հետևաբար՝ գործնական կիրառության տեսանկյունից այս առումով դժվարություններ ծագել չեն կարող:



Քրեական նոր օրենսգրքում հստակեցվել են նաև **ՀՀ քրեական օրենսդրության խնդիրները**. ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում որպես խնդիր ամրագրված են օրենքով նախատեսված շահերի պաշտպանությունը հանցավոր ոտնձգություններից, հանցագործությունների կանխումը, սակայն օրենսդիրը կարևորել է նաև քրեական պատասխանատվության ենթակա իրավաբանական անձի և հանցանք կատարած անձի պատասխանատվության արդարացիությունը, հասարակությունում հանցանք կատարած անձի վերաինտեգրումը, վերասոցիալականացումն ապահովելը: Հասարակությունում հանցանք կատարած անձի վերաինտեգրումն ու վերասոցիալականումն ապահովելը, որպես քրեական իրավունքի խնդիր սահմանելը բխում է մի շարք միջազգային իրավական կանոնակարգումներից, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրից<sup>2</sup>, Եվրոպական բանտային կանոններից և այլն<sup>3</sup>: Այս խնդիրների սահմանումն ինքնանպատակ չէ, այլ բխում է քրեական նոր օրենսգրքում տեղ գտած պատժողական քաղաքականության սկզբունքներից: Օրինակ, պատժի նպատակները սահմանելիս՝ քրեական նոր օրենսգրքը առաջնային կարևորություն է տալիս պատժի ենթարկված անձի վերասոցիալականացմանը: Ընդ որում, հանցանք կատարած անձի վերասոցիալականացմանը, հասարակությունում անձի վերաինտեգրմանը առանձնահատուկ ուշադրություն դարձնելը կարևորվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) պրակտիկայում, օրինակ՝ *Murrey vs Netherlands*, *Khoroshenko vs Russia*<sup>4</sup>:

ՀՀ քրեական օրենսդրության խնդիրները ամրագրելիս՝ քրեական նոր օրենսգրքը զերծ է մնացել քրեաիրավական պաշտպանության ենթակա շահերի մանրակրկիտ թվարկումից և փոխարենն օգտագործել է «օրենքով նախատեսված շահեր» եզրույթը: «Օրենքով նախատեսված շահեր» հասկացությունն ենթադրում է ֆիզիկական, իրավաբանական անձի, հասարակության, պետության, մարդկության բարեկեցությանն ու պաշտպանությանն ուղղված և օրենսդրությամբ սահմանված պայմանները, այդ թվում՝ վերջիններիս իրավունքները, ազատությունները, անվտանգությունը: Այն ներառում է քրեական նախկին օրենսգրքով թվարկված շահերը (մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, հասարակական կարգը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը), սակայն չի սահմանափակվում դրանցով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ

<sup>2</sup> Տե՛ս, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, ընդունված 16.12.1966:

<sup>3</sup> Տե՛ս, ԵԽ Նախարարների կոմիտեի հանձարարականը՝ «Եվրոպական բանտային կանոնների մասին», 11.01.2006:

<sup>4</sup> Տե՛ս, *Case of Murray vs Netherlands*, 16.04.2016, *Case of Khoroshenko vs Russia*, 30.06.2015, *Case of Vinter and Others vs UK*, 09.07.2013:

հասարակության, գիտության, տեխնիկայի զարգացման գործընթացում կարող են ի հայտ գալ քրեաիրավական պաշտպանության երաշխիքներ ակնկալող նոր շահեր:

Քրեական նոր օրենսգրքի նորամուծություններից է **օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունների** պարզաբանումը: Քրեական նախկին օրենսգրքի պարագայում նման հասկացությունների պարզաբանումն իրականացվում էր դոկտրինալ մակարդակում կամ դատական ակտերում: Մինչդեռ քրեական նոր օրենսգրքը հստակեցնում է առավել հաճախ հանդիպող հասկացությունների բովանդակությունը: Օրինակ՝ այդ հասկացությունների շարքում պարզաբանվում է **բնակարանի հասկացությունը** (քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ), որի էությունը իրավակիրառ պրակտիկայում հաճախ տարբեր կերպ է բացահայտվում, կապված, օրինակ, առանձնատան կցակառույց շինությունների, առանձնատան 1-ին հարկում տեղակայված ավտոտնակի հետ և այլն: Քրեական նոր օրենսգրքը հստակ սահմանում է, որ բնակարան է դիտարկվում շինությունը, կառույցը կամ դրանց մասը, որը նախատեսված է կամ օգտագործվում է բնակության համար, համապատասխանաբար դրանց հարող ծածկապատշգամբը, վերնասրահը, պատշգամբը, նկուղը կամ ձեղնահարկը կամ այլ շինությունը կամ կառույցը, որոնցից անարգել մուտք է առկա բնակության համար օգտագործվող կամ նախատեսված շինություն, կառույց կամ դրանց մաս, ինչպես նաև հյուրանոցային համարը, նավախցիկը, հիվանդասենյակը, գնացքի մեկուսացված ճամփորդախցիկը, գետային կամ ծովային նավը կամ այլ տրանսպորտային միջոցը, եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար:

Ներկայացված ձևակերպումից հետևում է, որ բնակարան են դիտարկվում բնակության համար օգտագործվող կամ բնակության համար նախատեսված շինությունը, կառույցը, դրանց մասը, հետևաբար՝ անկախ նրանից, հանցանքի կատարման պահին կոնկրետ շինությունում, օրինակ՝ բնակարանում կամ առանձնատանը, մարդիկ ապրում են, թե ոչ, եթե այն օգտագործվում է կամ նախատեսված է բնակության համար, պետք է դիտարկվի որպես բնակարան: Օրինակ՝ արտերկրում մշտապես բնակվող անձի կողմից ՀՀ-ում ձեռք բերված, սակայն տարվա մեջ միայն մի քանի օր բնակության համար փաստացի օգտագործվող բնակարանը:

Քրեական նոր օրենսգրքի սահմանմամբ՝ բնակարան է դիտարկվում նաև տրանսպորտային միջոցը, օրինակ, ավտոմեքենան՝ պայմանով, որ այն մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվի բնակության համար:

Բնակարան են դիտարկվում նաև բնակության համար օգտագործվող կամ բնակության համար նախատեսված շինությանը, կառույցին կամ դրանց մասին հարող ծածկապատշգամբը, վերնասրահը, պատշգամբը, նկուղը, ձեղնահարկը կամ այլ շինությունը կամ կառույցը, որոնցից անարգել մուտք է առկա բնակության համար

օգտագործվող կամ նախատեսված շինություն, կառույց կամ դրանց մաս: Ձևակերպումից հետևում է, որ վերը թվարկվածը բնակարան պետք է դիտարկել միայն այն դեպքում, երբ դրանցից առանց արգելքի հնարավոր է մուտք գործել բնակության համար օգտագործվող կամ բնակության համար նախատեսված շինություն, կառույց կամ դրանց մաս: Օրինակ՝ առանձնատանն կցակառույց հանդիսացող, դեպի առանձնատուն անմիջական մուտք ունեցող, առանձնատնից փականով փակվող դռնով չառանձնացված հացատունը, նկուղը: Մինչդեռ, եթե օրինակ, առանձնատանը կցակառույց հանդիսացող կառույցը, շինությունը, օրինակ՝ ավտոտնակը, դեպի առանձնատուն անմիջական մուտք չունեն, ունեն առանձնացված մուտք, փակվում են փականով, ապա դրանք չեն կարող դիտվել որպես բնակարան:

Քրեական նոր օրենսգրքում ներկայացված հասկացությունների շրջանակում առանձնացված են նաև այնպիսիք, որոնք առանցքային նշանակություն ունեն հանցագործությունների որակման կանոնների կիրառման կամ առանձին պատժատեսակների կիրառման առումով: Օրինակ, հասկացությունների շարքում առանձնանում է տուգանք պատժատեսակի կիրառման համար հիմք հանդիսացող **ամսական եկամտի հասկացությունը** (քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ), այն է՝ հանցանքն ավարտվելու օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում անձի ստացած միջին ամսական եկամտի 35 տոկոսը: Ընդ որում, միջին ամսական եկամտի մեջ հաշվարկվում են ստացվող աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները, անձի կողմից իր ակտիվների ներդրմամբ (տրամադրմամբ) այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտը (շահաբաժինը, տոկոսը, ռոյալթին, վարձակալական վճարը): Ամսական եկամուտը հաշվարկելիս հաշվի չեն առնվում դրանց համար վճարվող հարկերը, տուրքերը կամ այլ վճարները:

Ներկայացված ձևակերպումն արտացոլում է քրեական նոր օրենսգրքում տեղ գտած առանցքային փոփոխություններից մեկը, այն է՝ տուգանքի հաշվարկման հիմքում դրվում է ոչ թե պետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի, այլ անձի ամսական իրական եկամտի չափը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ անձը տարբեր ամիսների կարող է ունենալ եկամտի տարբեր չափ, օրենսդիրը հստակեցրել է, որ տուգանքի հաշվարկման հիմքում դրվող ամսական եկամուտ պետք է դիտարկել հանցանքի ավարտման օրվան նախորդող 12 ամիսներին ստացած եկամտի միջինացված չափի 35 տոկոսը: Օրինակ, եթե անձը 2022 թ.-ի հուլիսի 1-ին կատարելավարտել է քրեական նոր օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք, և դատարանը գտնում է, որ նրա նկատմամբ պետք է կիրառվի տուգանք, ապա տուգանքի կիրառման համար հիմք հանդիսացող եկամտի չափը որոշելու համար պետք է՝

□ պարզել, թե 2021թ.-ի հունիսի 30-ից մինչև 2022 թ.-ի հունիսի 30-ն ընկած

Ժամանակահատվածում անձը որքան եկամուտ է ունեցել (աշխատավարձ, օրենսդրությամբ դրան հավասարեցված այլ վճարումներ, իր ակտիվների ներդրմամբ այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտ),

□ ստուգել, որ այդ եկամտի մեջ ներառված չլինեն հարկերը, տուրքերը, այլ վճարները,

□ հարկերը, տուրքերը, այլ վճարները չներառող եկամտի գումարը բաժանել 12 ամիսների վրա,

□ որոշել բաժանման արդյունքում ստացված եկամտի չափի 35 %-ը:

Եթե նշված ժամանակահատվածում անձը ստացել է, օրինակ, 6 մլն ՀՀ դրամ մաքուր եկամուտ (հարկերը, տուրքերը, այլ վճարները չներառելով), ապա տուգանքի հաշվարկման համար հիմք կհանդիսանա 500 000 ՀՀ դրամի 35%-ը կազմող չափը, այն է՝ 175 000 ՀՀ դրամը:

Տուգանքի հաշվարկման համար հիմք հանդիսացող եկամտի չափը որոշելիս կարևոր է նաև հստակեցնել, թե երբ է հանցանքն ավարտվել: Որպես կանոն, հանցանքի կատարման օրվա որոշումը առանձին դժվարություն չի ներկայացնում: Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հասկացությունների շարքում ներկայացված է **այլ ծանր հետևանքի կամ այլ էական վնասի հասկացությունը** (քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ), այն է՝ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածում, հոդվածի մասում կամ կետում թվարկված հետևանքներին համարժեք կամ համաբնույթ վտանգավորություն ներկայացնող հանգամանք: Այս հասկացությունն ունի առանցքային նշանակություն այն հոդվածների կիրառման համար, որոնց դիսպոզիցիաները նկարագրելիս, օրենսդիրը մատնանշել է հնարավոր հետևանքների միայն մի մասը՝ անհնարին դիտարկելով հնարավոր բոլոր հետևանքների սպառիչ ներկայացումը: Նման դեպքերում, օրենսդիրն օգտագործել է «այլ ծանր հետևանք կամ այլ էական վնաս հասկացությունը»՝ իրավակիրառողի գնահատմանը թողնելով այլ հնարավոր հետևանքները ծանր կամ վնասներն էական դիտարկելը: Այնուհանդերձ, որպեսզի իրավակիրառողի գնահատականը չլինի սուբյեկտիվ և կամայական՝ օրենսդիրը տվել է կողմնորոշիչ ուղենիշերը՝ այդ հետևանքները կամ վնասները պետք է համարժեք վտանգավորություն ունենան, ինչ և հոդվածի դիսպոզիցիայում շարադրվածները: Օրինակ, 516-րդ հոդվածի 1-ին մասում՝ հրամանը չկատարելը, օրենսդիրը շարադրում է՝ «...հրամանը չկատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել, կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին»: Հետևաբար՝ այլ էական վնասը պետք է դիտարկել այնպիսին, որն իր վտանգավորությամբ, բնույթով համաչափ կլինի անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելուն կամ ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացմանը, վնասմանը: Ըստ էության, քննարկվող դրույթում

տեղ է գտել մեկնաբանման ejusdem generis այն կանոնը, որի համաձայն՝ բաց թվարկման չորոշակիացված տարրի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ելնել որոշակիացված տարրերի բովանդակությունից. անորոշ տարրը պետք է կրի այն ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են որոշակիացված տարրերին: Այս մոտեցումը նախկինում տեղ է գտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում, մասնավորապես՝ Անդրիաս Ղուկասյանի գործով կայացված որոշման մեջ<sup>5</sup>:

Հասկացությունների շարքում ներկայացված են նաև **հափշտակության, պատճառած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի չափերը** (քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետ): Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում դրանք ոչ թե առանձին-առանձին սահմանվում են կոնկրետ հոդվածներում, այլ տեղ են գտել հասկացությունների շարքում: Մասնավորապես, սահմանվում է, որ հափշտակված գույքի, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերի:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որտեղ հանցագործության չափերը որոշվում էին նվազագույն աշխատավարձի հետ հարաբերակցությամբ (օրինակ՝ հափշտակության խոշոր չափ էր դիտարկվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 500-պատիկից 3000-պատիկը չգերազանցող գումարը (արժեքը)), քրեական նոր օրենսգրքում նախատեսվել են հստակ և կոնկրետ չափեր: Ընդ որում, քննարկվող չափերը վերաբերելի են ինչպես հափշտակություններին (օրինակ՝ գողությանը), սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններին (օրինակ՝ շորթմանը, գույքը ոչնչացնելուն), այնպես էլ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասում տեղ գտած այն հանցակազմերին, որոնցում առկա է գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի չափերի որոշման անհրաժեշտություն (օրինակ՝ կաշառք ստանալը, մթնոլորտային օդն աղտոտելը):

Այնուհանդերձ, օրենսդիրը սահմանում է, որ եթե Հատուկ մասի հոդվածում տեղ են գտել չափերի վերաբերյալ այլ կարգավորումներ, ապա այդ հանցակազմերի կտրվածքով կիրառելի պետք է լինեն հատուկ կարգավորումները: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանված չափերը վերաբերելի են նաև տնտեսական հանցագործություններին, սակայն դրանց առանձին դրսևորումների պարագայում, օրենսդիրը նախատեսել է հատուկ կարգավորումներ՝ սահմանելով ներկայացված չափերից տարբերվող սահմանաչափեր: Օրինակ՝ իրացնելու նպատակով

<sup>5</sup> Տե՛ս, Անդրիաս Ղուկասյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2017 թ.-ի ապրիլի 12-ի թիվ ԵԱՔԴ/0533/06/16 որոշում:

կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթղթեր, վճարահաշվարկային այլ փաստաթղթեր կամ վճարային գործիքներ պատրաստելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, ձեռք բերելու կամ դրանք իրացնելու համար պատասխանատվություն սահմանող նորմում՝ քրեական նոր օրենսգրքի 267-րդ հոդվածի 4-րդ մասում, սահմանվում է, որ քննարկվող հոդվածում խոշոր չափ է համարվում 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ 30 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը: Հետևաբար, եթե այլ հանցագործությունների, օրինակ՝ մասնավոր ոլորտում կաշառք ստանալու պարագայում առանձնապես խոշոր չափ պետք է դիտարկել 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը, ապա 267-րդ հոդվածով նախատեսված հանցանքի համար՝ 30 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը:

Հարկ է նշել, որ քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում տեղ գտած չափերը կիրառելի չեն թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, համարժեք նյութերի (անալոգների), ածանցյալների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի չափերը որոշելիս: Վերջիններիս պարագայում օրենսդիրը նախատեսում է առանձին կանոնակարգում:

Քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում տեղ գտած չափերը սահմանելիս տեղ է գտել ևս մեկ փոփոխություն. քրեական նախկին օրենսգրքում օրենսդիրը նախատեսել էր մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափեր, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում տեղ են գտել միայն մանր, խոշոր և առանձնապես խոշոր չափերը: Ընդ որում, քրեական նախկին օրենսգրքի համեմատ՝ էապես բարձրացվել է առանձնապես խոշոր չափի ստորին շեմը՝ 3 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարի փոխարեն սահմանվելով 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարը:

Քրեական նոր օրենսգրքում, հասկացությունների շարքում ներկայացված է նաև ***նվազագույն աշխատավարձի սահմանումը*** (քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ): Որպես այդպիսին է դիտարկվում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում 19.11.2019 թ.-ին կատարված փոփոխության համաձայն, ՀՀ-ում որպես նվազագույն ամսական աշխատավարձ է դիտարկվում 68 000 ՀՀ դրամը: Հասկացություններում հիշյալ եզրույթի սահմանումը նպատակ է հետապնդում հստակեցնելու, որ քրեական օրենսգրքի իմաստով նվազագույն աշխատավարձի հաշվարկային միավոր պետք է դիտարկել ոչ թե 1000 դրամը, ինչը մինչ քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը կիրառվում էր, այլ հանցանքը կատարել-ավարտելու պահին պետությունում սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը:

Քրեական նախկին օրենսգրքում 1000 ՀՀ դրամը որպես նվազագույն աշխատավարձի հաշվարկային միավոր դիտարկելու հիմքը «Նվազագույն ամսական

աշխատավարձի մասին» օրենքի 3-րդ հոդվածում տեղ գտած սահմանումն էր, համաձայն որի՝ «ՀՀ օրենսգրքերի, օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, նախարարությունների և գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, առանձին իրավաբանական անձանց ակտերի իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել սույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1000 դրամը»: Սակայն հիշյալ նորմում կատարվել է փոփոխություն, որը բացառություն է սահմանել քրեական օրենսգրքի համար, հետևաբար՝ քրեական նոր օրենսգրքում նվազագույն ամսական աշխատավարձի հաշվարկը պետք է իրականացվի հանցագործությունն կատարելու-ավարտելու պահին սահմանված նվազագույն ամսական աշխատավարձով, այլ ոչ թե 1000 դրամով:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած առանցքային փոփոխություններից է հասկացությունների շարքում **հափշտակության սահմանումը** (քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետ): Քրեական նախկին օրենսգրքում նման բնորոշումը բացակայում էր, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում ոչ միայն տրվել է դրա սահմանումը, այլև փոփոխության է ենթարկվել հափշտակության դոկտրինալ բնորոշումը: Եթե քրեական նախկին օրենսգրքի գործողության ժամանակ հափշտակություն էր դիտարկվում ուրիշի գույքին ապօրինի, անհատույց, շահադիտական դրդումներով տիրանալը, հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, ապա քրեական նոր օրենսգրքի կարգավորումներով շահադիտական դրդումները այլևս չեն դիտարկվում որպես հափշտակության հատկանիշ: Արարքը հափշտակություն որակելու համար այլևս էական չէ, թե գույքին անձը տիրացել է նյութական օգուտ ստանալու, թե այլ (օրինակ՝ գույքի սեփականատիրոջը հոգեկան ապրումներ պատճառելու) դրդումով:

Ընդ որում, օրենսդիրը նախատեսել է նաև հափշտակության ավարտման պահը, այն է՝ եթե հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Ըստ էության, հափշտակության ավարտման պահի առումով օրենսդրի դրսևորած մոտեցումը ամրապնդում է Դավիթ Ղամբարյանի, Վարդան Եղիազարյանի, Կարեն Հովհաննիսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշման մեջ տեղ գտած դիրքորոշումը<sup>6</sup>:

Քրեական նոր օրենսգրքում նախատեսված հասկացությունների շարքում տեղ է գտել նաև **պաշտոնատար անձի բնորոշումը** (քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ): Քրեական նախկին օրենսգրքում տարբերակվում էին պաշտոնատար անձ և հանրային ծառայող հասկացությունները. պաշտոնատար անձի հասկացությունը նախատեսված էր օրենսգրքի 308-րդ հոդվածի 4-րդ մասում: Քրեական

<sup>6</sup> Տե՛ս, Դավիթ Ղամբարյանի, Վարդան Եղիազարյանի, Կարեն Հովհաննիսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թ.-ի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշում:

նոր օրենսգրքում, պաշտոնատար անձի հասկացությունը սահմանելիս, ոչ միայն նախատեսվել են քրեական նախկին օրենսգրքում որպես պաշտոնատար անձ դիտարկվող կատեգորիաները, այլև այս հասկացությունն ընդլայնվել է. օրենսդիրը որպես պաշտոնատար անձ է դիտարկում հանրային ծառայողին, հանրային պաշտոն զբաղեցնող անձին, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձին: Այս փոփոխությունը համահունչ է Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածին, որը ևս պաշտոնատար անձի հասկացությունը սահմանելիս առավել ընդգրկուն մոտեցում է դրսևորել<sup>7</sup>:

Պաշտոնատար անձի սահմանման ժամանակ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած այս մոտեցմամբ է պայմանավորված նաև քրեական նախկին օրենսգրքում առանձին հոդվածներով նախատեսված, սակայն պասիվ կաշառակերության դրսևորում հանդիսացող երկու հանցակազմերի՝ կաշառք ստանալու և պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի, հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու միավորումը (նույն տրամաբանությամբ՝ միավորվել են նաև կաշառք տալու և պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձին, հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու հանցակազմերը):

Քրեական նոր օրենսգրքում հստակեցվել է նաև մասնավոր ոլորտում գործունեություն ծավալող անձին պետական գործառույթների դելեգացման, օրինակ՝ պետական կառավարման մարմնի անունից հանդես գալու լիազորությամբ օժտելու պարագայում վերջինիս պաշտոնատար անձ դիտելու հնարավորությունը: Այդ հարցին անդրադարձ կատարվել է Ալեքսանդր Այվազյանի, Քրիստինա Ջամալյանի, Էդգար Ջամալյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ<sup>8</sup>:

Պաշտոնատար անձի սահմանման ժամանակ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած փոփոխություններից է այն, որ հստակեցվել է, որ պաշտոնատար անձ են դիտարկվում ոչ միայն պետության, այլև համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձինք:

Քրեական նոր օրենսգրքում նախատեսված հասկացությունների շարքում տեղ է գտել նաև **ազատությունից զրկելու հետ կապված պատժի բնորոշումը** (քրեական նոր

<sup>7</sup> Տե՛ս, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 31.10.2003:

<sup>8</sup> Տե՛ս, Ալեքսանդր Այվազյանի, Քրիստինա Ջամալյանի, Էդգար Ջամալյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2018 թ.-ի դեկտեմբերի 24-ի թիվ ԵԷԴ/0040/01/16 որոշում:



օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ): Վերջինս հստակեցնում է, որ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ են հանդիսանում կարճաժամկետ ազատազրկումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը, ցմահ ազատազրկումը: Ազատության սահմանափակումը որպես այդպիսին չի դիտարկվում:

Այս հասկացության հստակեցումն ունի կարևոր կիրառական նշանակություն, քանի որ այն վճռորոշ նշանակություն ունի, օրինակ, պատժի առանձին տեսակներ նշանակելու, հանցագործությունների, դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնները կիրառելիս, քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի առանձին հանցակազմերի էությունը պարզաբանելիս:

## Գլուխ 2

### ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում սկզբունքների քանակը կրճատվել է: Քրեական նոր օրենսգրքում առանձին ամրագրում չեն ստացել օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքները: Սակայն, դրանց չնախատեսելը ոչ թե նշանակում է, որ քրեական իրավունքում դրանք կիրառելի չեն, այլ օրենսդիրը նպատակահարմար չի համարել ամրագրել ընդհանուր իրավական սկզբունքները, օրենսդրական կարգավորում է տվել միայն այն սկզբունքներին, որոնք քրեաիրավական տեսանկյունից առանձնահատկություններ ունեն:

Բովանդակային առումով փոփոխության է ենթարկվել *օրինականության* սկզբունքը՝ սահմանելով, որ ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այն արարքի համար, որը կատարման պահին հանցանք չի համարվել: Քրեական նախկին օրենսգրքի համեմատ՝ այս ձևակերպումն առավել հստակ է, շեշտադրումը դնում է ոչ միայն արարքի հանցավորությունը, պատժելիությունը կամ քրեաիրավական հետևանքները քրեական օրենքով որոշելու վրա, այլ պարզաբանում, որ հանցավոր արարքը կատարելու պահին այն պետք է արդեն իսկ հանցագործություն լիներ: Այս ձևակերպումը արտացոլում է նաև ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը<sup>9</sup>:

Վերանայվել է անալոգիայի կիրառման առումով մոտեցումը: Քրեական նախկին օրենսգրքը կատեգորիկ կերպով արգելում էր անալոգիայի կիրառումը, մինչդեռ քրեական նոր օրենսգրքով նման կատեգորիկ արգելք սահմանված է միայն քրեական օրենքի Հատուկ մասի նորմերի կիրառման առումով: Օրենսդիրը սահմանում է, որ քրեական օրենքի Ընդհանուր մասի նորմերը կարող են անալոգիայով կիրառվել, եթե դա չի վատթարացնում անձի վիճակը: Այս դրույթի նախատեսումը չի ենթադրում, որ անալոգիայի ինստիտուտը հաճախակի կիրառություն պետք է ունենա. այն պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, ընդ որում՝ պայմանով, որ անձի վիճակը չվատթարացնի: Ավելին, խոսքը կարող է գնալ միայն օրենքի անալոգիայի մասին:

Ոչ մի պարագայում անալոգիան չի կարող կիրառվել հանցակազմերի ձևակերպման ժամանակ տեղ գտած բացերը կամ թերությունները վերացնելու նպատակով: Այդ հարցին անդրադարձ կատարվել է ինչպես ՄԻԵԴ-ի (Kokkinakis vs Greece<sup>10</sup>), այնպես էլ ՀՀ ՎՃՌաբեկ դատարանի կողմից (Վարուժան Ավետիսյանի գործով թիվ ՍԴՅ/0013/01/11 ո-

<sup>9</sup> Տե՛ս, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիա, 04.11.1950

<sup>10</sup> Տե՛ս, Kokkinakis vs Greece, 25.05.2003:

որոշում<sup>11</sup>, Դավիթ Սիմիոյանի գործով թիվ ԵԷԴ/0122/01/13 որոշում<sup>12</sup>, Երվանդ Մելքոնյանի գործով թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշում<sup>13</sup>):

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում տեղ գտած իրավական որոշակիության սկզբունքը շարունակում է մնալ առանցքային նշանակություն ունեցող: Ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այնպիսի արարքի համար, որն իրավական որոշակիության չափանիշին բավարարող եղանակով սահմանված չէ օրենքով: ՀՀ Վճռաբեկ դատարանը Վարուժան Ավետիսյանի<sup>14</sup> գործով թիվ ՍԴ3/0013/01/11 որոշմամբ արձանագրել է, որ «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nulum crimen, nulla poena sine lege) կանոնը համընդհանուր ճանաչում ստացած հիմնարար սկզբունք է և իրավունքի գերակայության կարևորագույն տարր: Ընդ որում, օրենքի առումով իրավական որոշակիությունը ևս ենթադրում է երկու չափանիշների բավարարում՝ «կանխատեսելիություն» և «հասանելիություն», որոնք առավել մանրամասն ներկայացված են ինչպես Վճռաբեկ դատարանի նշված որոշումներում, այնպես էլ ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցում<sup>15</sup>:

**Անձնական պատասխանատվության** սկզբունքի առումով էական փոփոխություն չի եղել. ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որտեղ նշվում էր, որ անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար, քրեական նոր օրենսգրքով սահմանված է, որ յուրաքանչյուր *ֆիզիկական անձ* ենթակա է քրեական պատասխանատվության միայն *իր* կատարած հանցանքի համար:

Հիմնական տարբերությունները վերաբերում են երկու ձևակերպումների.

1. «անձ» եզրույթի փոխարեն քրեական նոր օրենսգիրքն օգտագործել է «ֆիզիկական անձ» եզրույթը, պայմանավորված նրանով, որ քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվել նաև իրավաբանական անձանց համար: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ անձնական պատասխանատվության սկզբունքը իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության պարագայում վերաբերելի չէ, իսկ «անձ» եզրույթը ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց, օրենսդիրը հատուկ մատնանշել է, որ անձնական պատասխանատվության սկզբունքը վերաբերում է միայն ֆիզիկական անձանց:

2. «անձամբ իր կատարած» ձևակերպման փոխարեն քրեական նոր օրենսգիրքն օգ-

<sup>11</sup> Տե՛ս, Վարուժան Ավետիսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թ.-ի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշում:

<sup>12</sup> Տե՛ս, Դավիթ Սիմիոյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թ.-ի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշում:

<sup>13</sup> Տե՛ս, Երվանդ Մելքոնյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թ.-ի մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշում:

<sup>14</sup> Տե՛ս, Վարուժան Ավետիսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թ.-ի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշում:

<sup>15</sup> Տե՛ս, Guide on Article 7 of the European Convention on Human Rights, 30.04.2022, [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_7\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_7_ENG.pdf)

տագործել է «միայն իր կատարած» արտահայտությունը: Նման փոփոխությունը պայմանավորված է «անձամբ» եզրույթի բովանդակային մեկնաբանման ժամանակ ծագող հարցերով, այն է՝ արդյո՞ք դա ենթադրում է անձի անմիջական մասնակցություն հանցագործությանը, թե մասնակցությունը կարող է կրել նաև միջնորդավորված տարբերակ: Օրենսդրական ձևակերպման տեսանկյունից քրեական նոր օրենսգրքում տեղ գտած սահմանումն առավել հստակ է:

**Ըստ մեղքի** պատասխանատվության սկզբունքը բնորոշելիս՝ օրենսդիրը, նախ՝ սահմանել է, թե որ դեպքերում անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության՝ ներառելով թե՛ քրեական նախկին օրենսգրքով սահմանված օբյեկտիվ մեղսայնացման արգելքը (քրեական օրենքով արգելված արարքը առանց մեղքի կատարելը), թե՛ անզուգուշայամբ արարքը կատարելը՝ այն դեպքում, երբ օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում տվյալ արարքը միայն դիտավորությամբ կատարելու համար: Օրինակ՝ քրեական նոր օրենսգրքի 205-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում բժշկական գաղտնիքը միմիայն դիտավորությամբ հրապարակելու համար, հետևաբար բժշկական գաղտնիքն անզուգուշայամբ հրապարակելու պարագայում հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող մեղքն առկա չէ, ինչն էլ բացառում է քրեական պատասխանատվությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվում նաև իրավաբանական անձանց համար, հստակեցվել է, որ ըստ մեղքի պատասխանատվության քննարկվող բնորոշումը վերաբերելի է միայն ֆիզիկական անձանց:

Էական փոփոխություն է տեղի ունեցել **արդարության և պատասխանատվության անհատականացման** սկզբունքը սահմանելիս: Նախ՝ հստակեցվել է արդարության սկզբունքի ձևակերպումը. ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը սահմանում էր, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, քրեական նոր օրենսգրքը հատուկ մատնանշում է, որ արդարացի պետք է լինեն նաև անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը: Ընդ որում, օրենսդիրը հատուկ մատնանշել է արդարության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը ինչպես կիրառվող օրենսդրության, այնպես էլ պետական հակազդեցության համաչափությունը երաշխավորելու առումով: Մասնավորապես, անհրաժեշտ է, որ երաշխավորվի պետական հակազդեցության, այն է՝ կատարված հանցանքի համար կիրառվող քրեական պատասխանատվության, այդ թվում՝ պատժի, անվտանգության միջոցների, քրեաիրավական ներգործության այլ միջոցների, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու համաչափությունը կատարված հանցանքին, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավոր-

րությանը: Առանցքային փոփոխությունը, սակայն, վերաբերում է կրկին դատապարտման արգելքին (Non bis in idem սկզբունքին): Քրեական նախկին օրենսգիրքը կատեգորիկ կերպով արգելում էր անձին կրկին դատապարտել նույն հանցանքի համար, մինչդեռ քրեական նոր օրենսգիրքը բացառիկության կարգով նման հնարավորություն ընձեռում է, սահմանելով, որ արգելվում է անձին կրկին քրեական պատասխանատվության ենթարկել նույն հանցանքը կատարելու համար, բացառությամբ քրեական օրենսգրքի 133-154-րդ, 155-րդ, 308-րդ, 450-րդ կամ 451-րդ հոդվածով նախատեսված հանցանքների համար այլ պետության կողմից քրեական պատասխանատվության ենթարկված լինելու այն դեպքերի, երբ անձն անհիմն ազատվել է քրեական պատասխանատվությունից կամ անարդարացիորեն դատապարտվել է մեղմ պատժի կամ անհիմն լրիվ կամ մասնակիորեն ազատվել է պատժի կրումից:

Առաջին հայացքից խիստ հեղափոխական թվացող այս նորամուծությունը իրականում տեղ է գտել նաև Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 20-րդ հոդվածում<sup>16</sup>, ՄԻԵԿ-ի 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածում<sup>17</sup>:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած ձևակերպումը հստակեցնում է, որ նույն հանցանքի համար կրկին քրեական պատասխանատվության ենթարկելու արգելքից բացառությունը հնարավոր է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

- Կատարված հանցանքը նախատեսված է քրեական օրենսգրքի 133-154-րդ, 155-րդ, 308-րդ, 450-րդ կամ 451-րդ հոդվածով,
- անձը քրեական պատասխանատվության է ենթարկվել այլ պետության կողմից,
- անձն անհիմն ազատվել է քրեական պատասխանատվությունից կամ անարդարացիորեն դատապարտվել է մեղմ պատժի կամ անհիմն լրիվ կամ մասնակիորեն ազատվել է պատժի կրումից:

Հետևաբար, այս դրույթի նախատեսումը չի նշանակում, որ ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթարկված անձին նույն հանցավոր արարքի համար հնարավոր է ՀՀ-ում կրկին ենթարկել պատասխանատվության: Օրենսդիրը հստակ սահմանում է, որ նման հնարավորություն կարող է ծագել միայն այն դեպքում, եթե հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվության է ենթարկվել այլ պետության տարածքում: Ընդ որում, այս մոտեցումը իր արտացոլումն է գտել նաև ՄԻԵԴ պրակտիկայում<sup>18</sup>:

<sup>16</sup> Stéu, Rome Statute of International Criminal Court, 17.07.1998, <https://www.icc-cpi.int/sites/default/files/Publications/Rome-Statute.pdf>

<sup>17</sup> Stéu, Guide on Article 4 of Protocol No. 7 to the European Convention on Human Rights, 30.04.2022, [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_4\\_Protocol\\_7\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_4_Protocol_7_ENG.pdf)

<sup>18</sup> Stéu, Krombach vs France, 29.03.2018; Boheim vs Italy, 22.05.2007:

### Գլուխ 3 ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

*Ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության* առումով քրեական նոր օրենսգիրքը էական նորամուծություններ չի պարունակում: Փաստացի, ամրագրելով քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած նույն կարգավորումը, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դրա կատարման ժամանակ գործող քրեական օրենքով, քրեական նոր օրենսգիրքը հստակեցնում է, որ նույն մոտեցումը պետք է դրսևորվի նաև քրեախրավական այլ հետևանքները որոշելիս (օրինակ՝ դատվածության ժամկետները հաշվելիս, ռեցիդիվի առկայությունը հավաստելիս, անվտանգության միջոցներ կիրառելիս և այլն): Օրինակ, եթե անձի կողմից հանցանք կատարելուց հետո, մինչ նրան դատապարտելը, քրեական օրենսդրությունը ենթարկվի փոփոխության և դատվածության մարման ժամկետները երկարացվեն, ապա այդ անձի նկատմամբ պետք է կիրառվեն դատվածության մարման այն ժամկետները, որոնք գործել են հանցանքի կատարման պահին:

Քրեական նոր օրենսգրքում ամրագրում ստացած այս կարգավորումը ավելի հստակ է և թույլ է տալիս գերծ մնալ տարաբնույթ մեկնաբանություններից:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ամրագրվել է, որ հանցանքը կատարելու ժամանակ է համարվում գործողությունը կամ անգործությունը կատարելու պահը՝ անկախ հետևանքներն առաջանալու պահից: Միաժամանակ, օրենսդիրը հստակեցրել է, թե որ օրենքը պետք է կիրառվի տևող, շարունակվող հանցագործությունների, ինչպես նաև հանցանքը հանցակցությամբ կատարելու դեպքում: Նկատի ունենալով այն, որ տեսաբանների և իրավակիրառ գործունեության մեջ ներգրավված իրավագետների շրջանում այս հարցերի շուրջ միասնական մոտեցում չկա, օրենսդրական հստակ դիրքորոշման դրսևորումը խիստ կարևոր է: Քրեական նոր օրենսգրքում տեղ է գտել այն մոտեցումը, որ տևող հանցագործության դեպքում պետք է կիրառվի հանցանք կատարած անձի բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ անձի միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքներից վերջինը կատարելու պահին գործող քրեական օրենքը: Օրինակ՝ եթե ծագել է դասալքություն (տևող հանցագործություն) կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի կիրառման խնդիր, ապա պետք է ղեկավարվել հետևյալ մոտեցմամբ՝

□ եթե անձը բռնվել է այն ժամանակահատվածում, երբ դեռևս հանդիսանում է դասալքության սուբյեկտ, պետք է կիրառել նրա բռնվելու պահին գործող քրեական օրենքը,

□ եթե անձը բռնվել է այն ժամանակահատվածում, երբ այլևս չի հանդիսանում դասալքության սուբյեկտ, պետք է կիրառել այն պահին գործող *քրեական* օրենքը, երբ դադարել է դասալքության սուբյեկտ լինելուց,

□ եթե անձը ոչ թե բռնվել է, այլ՝ ներկայացել մեղայականով, պետք է կիրառել նրա մեղայականով ներկայանալու պահին գործող *քրեական* օրենքը:

Ինչ վերաբերում է հանցակցությամբ հանցանքը կատարելուն, ապա *քրեական* նոր օրենսգրքում տեղ է գտել այն մոտեցումը, որ հանցակիցներից յուրաքանչյուրը ենթակա է *քրեական* պատասխանատվության իրեն վերապահված արարքը կատարելու պահին գործող *քրեական* օրենքով:

Նորամուծություն է *քրեական* նոր օրենսգրքում տեղ գտած այն դրույթը, որի համաձայն՝ եթե *քրեական* օրենքը փոփոխվել է *քրեական* օրենքով նախատեսված արարքը կատարելու ընթացքում, ապա կիրառվում է արարքն ավարտվելու, դադարեցնելու կամ խափանելու պահին գործող օրենքը: Այս դրույթի նպատակն է՝ կանոնակարգել այն իրավիճակը, երբ տևող կամ շարունակվող հանցագործություն չհանդիսացող հանցանքի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող արարքի կատարումը ժամանակային որոշակի տևականության պատճառով սկսվել է *քրեական* մի օրենքի, իսկ դադարել՝ *քրեական* մեկ այլ օրենքի գործողության ժամանակ: Օրինակ՝ *քրեական* նոր օրենսգրքի 483-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ *քրեական* վարույթի տվյալներ հրապարակելու օբյեկտիվ կողմի իրականացումը հանցավորը սկսել է 2022 թ.-ի հունիսի 30-ի 23.55 րոպեին, իսկ ավարտել՝ 2022 թ.-ի հուլիսի 1-ի 00.06-ին: Կամ՝ *քրեական* նոր օրենսգրքի 261-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գրավառուին վնաս պատճառելու օբյեկտիվ կողմի իրականացումը, օրինակ՝ գրավ դրված գույքի վնասումը, հանցավորը սկսել է 2022 թ.-ի հունիսի 30-ի 23.48 րոպեին, իսկ ավարտել՝ 2022 թ.-ի հուլիսի 1-ի 00.12-ին: Նման դեպքերում պետք է կիրառվի արարքն ավարտելու պահին գործող *քրեական* օրենքը:

Քրեական նոր օրենսգրքում սկզբունքային փոփոխություններ են տեղ գտել *քրեական օրենսդրության հետադարձ ուժի* հետ կապված:

Ինչպես և *քրեական* նախկին օրենսգիրքը, *քրեական* նոր օրենսգիրքը իմպերատիվ կերպով պահանջում է, որ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող, հանցանք կամ *քրեական* օրենքով նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենսդրությանը հետադարձ ուժ չտրվի: Ընդ որում, եթե *քրեական* նախկին օրենսգրքում շեշտվում էր միայն *քրեական* օրենքը, նոր կարգավորումներում շեշտադրում է կատարված օրենսդրության վրա:

Միաժամանակ, *քրեական* նոր օրենսգրքում տեղ գտած սահմանման մեջ տարանջատում է արված հանցանք և *քրեական* օրենքով նախատեսված արարք կատարած անձանց միջև, ինչը թույլ է տալիս անձի վիճակը վատթարացնող *քրեական*

օրենքին հետադարձ ուժ տալու անթույլատրելիության պահանջը հավասարապես տարածել ինչպես հանցագործության սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական, իրավաբանական անձանց, այնպես էլ այն ֆիզիկական անձանց վրա, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության (օրինակ՝ անմեղսունակներին):

Անձի վիճակը վատթարացնող քրեական օրենքին հետադարձ ուժ տալու անթույլատրելիությունը հավաստվել է ինչպես ՀՀ Վճռաբեկ դատարանի<sup>19</sup>, այնպես էլ ՄԻԵԴ որոշումներում<sup>20</sup>:

Եթե հանցանք կատարած անձի վիճակը վատթարացնող քրեական օրենքին հետադարձ ուժ չտալու պահանջի առումով քրեական օրենսդրության նախկին և ներկա կանոնակարգումները նույնական են, ապա այլ է վիճակը հանցանք կատարած անձի վիճակը բարելավող օրենքի հետադարձ ուժի տեսանկյունից:

Քրեական նախկին օրենսգիրքը սահմանում էր, որ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն ունի հետադարձ ուժ, տարածվում է մինչ այդ օրենքի ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, բայց ունեն դատվածություն: Հետևաբար՝ ցանկացած պարագայում, երբ քրեական նոր օրենքը լրիվ կամ մասնակիորեն վերացնում էր հանցավորությունը, մեղմացնում էր պատիժը կամ որևէ կերպ բարելավում անձի վիճակը, անկախ նրանից, թե անձի վերաբերյալ դատավճիռ առկա էր, թե ոչ, անձը պատիժ էր կրում, թե արդեն կրել էր այն, քրեական նոր օրենքին տրվում էր հետադարձ ուժ:

Մինչդեռ քրեական նոր օրենսգիրքը գնացել է Ֆրանսիայի քրեական օրենսգրքի<sup>21</sup> տրամաբանությամբ և հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող քրեական օրենսդրության հետադարձ ուժի կիրառումն անվերապահ չի դիտարկել: Օրենսդիրը տարբերակված մոտեցում է դրսևորել՝ պայմանավորված եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտած լինելու կամ չլինելու հետ: Նման մոտեցման դրսևորման հիմքում ընկած է դատական ակտերի կայունության կամ *res judicata* սկզբունքը, որը քննարկվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից<sup>22</sup> Մելիք Մեսրոպյանի գործով որոշման շրջանակներում:

Քրեական նոր օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը ներկայացնում է

<sup>19</sup> Տե՛ս, Ալվարո Ստեփանյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թ.-ի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0327/01/10 որոշում,

<sup>20</sup> Տե՛ս, *Del Rio Prada vs Spain*, 10.07.2012; *M vs Germany*, 17.12.2009, *Vasiliaskus vs Lithuania*, 17.06.2009

<sup>21</sup> Տե՛ս, *Criminal Code of French Republic*, 01.03.1994, article 112-1

[https://legislationline.org/sites/default/files/documents/50/France\\_CC\\_am012020\\_fr.pdf](https://legislationline.org/sites/default/files/documents/50/France_CC_am012020_fr.pdf)

<sup>22</sup> Տե՛ս, Մելիք Մեսրոպյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2021 թ.-ի հունիսի 11-ի թիվ ԵԷԴ/0040/01/12 որոշում:



արարքի հանցավորությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող քրեական օրենսդրությանն օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտի բացակայության, իսկ 3-րդ մասում՝ առկայության պայմաններում, հետադարձ ուժ տալու կանոնները:

Այդ կանոնների վերլուծությունից հետևում է, որ արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, անկախ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտի առկայությունից կամ բացակայությունից: Հարկ է նշել, որ ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում օրենսդիրը հստակեցրել է, որ հետադարձ ուժ պետք է տրվի արարքի հանցավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ մասնակիորեն վերացնող օրենսդրությանը: Արարքի հանցավորությունը մասնակիորեն վերացնելը կարող է դրսևորվել ինչպես քրեական օրենսգրքի Ընդհանուր, այնպես էլ Հատուկ մասի դրույթների փոփոխություններով (քրեական պատասխանատվության տարիքը բարձրացնելով, 14 տարեկանից քրեական պատասխանատվություն նախատեսող հանցավոր արարքների շրջանակը նեղացնելով, հանցավոր արարքների առանձին տեսակների պարագայում նախատեսված ընդհանուր սուբյեկտի փոխարեն՝ հատուկ սուբյեկտի պահանջ սահմանելով, ձևական հանցակազմով նկարագրված արարքը նյութական հանցակազմով նախատեսելով և այլն): Օրինակ՝ քրեական նոր օրենսգրքով առանց ծանրացնող հանգամանքներով գողության, առանց ծանրացնող հանգամանքներով կողոպուտի համար պատասխանատվությունը սահմանվել է ոչ թե 14 տարեկանից, ինչպես նախատեսված էր քրեական նախկին օրենսգրքով, այլ 16 տարեկանից: Փաստացի՝ տեղի է ունեցել մասնակի ապաքրեականացում:

Ինչ վերաբերում է պատիժը մեղմացնող օրենսդրությանը, ապա այստեղ արդեն վճռորոշ նշանակություն ունի այն հանգամանքը, թե մինչ այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձանց վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ, թե ոչ: Եթե նման ակտ (օրինակ՝ մեղադրական դատավճիռ) առկա չէ, ապա պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, այսինքն տարածվում է մինչ այդ օրենսդրությունն ուժի մեջ մտնելը հանցանք կատարած ֆիզիկական անձանց, քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարած իրավաբանական, ինչպես նաև այն ֆիզիկական անձանց վրա, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքում տեղ գտած պատիժը մեղմացնող կանոնակարգումները կկիրառվեն բոլոր այն անձանց վրա, ում գործերով դեռևս օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատավարական եզրափակիչ այլ ակտ չկա, օրինակ, եթե գործը դեռևս գտնվում է նախաքննության ընթացքում:

Մինչդեռ եթե առկա է օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ, ապա պատիժը մեղմացնող օրենսդրությունը, որպես կանոն, հետադարձ ուժ չունի, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակված պատիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետից կամ նշանակված պատժատեսակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պատժատեսակից: Նշված դեպքերում մեղմացնող օրենսդրությանը տրվում է հետադարձ ուժ և այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնք կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

Օրինակ, անձը 2019 թ.-ի դեկտեմբերին դատապարտվել է 5 տարի ժամկետով ազատազրկման բռնություն գործադրելով ինքնիրավշության համար: Քրեական նոր օրենսգրքով բռնություն գործադրելով ինքնիրավշության համար 460-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիայով նախատեսված պատիժը մեղմացվեց՝ նախատեսելով ազատազրկում մեկից երեք տարի ժամկետով: Այս դեպքում քրեական նոր օրենքին պետք է տրվի հետադարձ ուժ:

Մեկ այլ օրինակ՝ անձը 2020 թ.-ին դատապարտվել է հինգ տարի ժամկետով ազատազրկման առանձնապես խոշոր չափերով յուրացման համար: Քրեական նոր օրենսգրքով՝ հանցավորին վստահված գույքը առանձնապես խոշոր չափերով հափշտակելու համար (հանցավորին վստահված գույքի հափշտակությունը նույնանում է քրեական նախկին օրենսգրքով նախատեսված յուրացման և վատնման հետ) 256-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիայով նախատեսված պատիժը մեղմացվեց՝ նախատեսելով ազատազրկում 4-ից 8 տարի ժամկետով: Այս դեպքում քրեական նոր օրենքին հետադարձ ուժ չի տրվելու:

Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ պատժի մեղմացումը կարող է տեղ գտնել ոչ միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում, այլ՝ Ընդհանուր մասի դրույթներում, օրինակ՝ պատիժ նշանակելու կանոններում: Նման դրույթի օրինակ է քրեական նոր օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած կանոնակարգումը, որը սահմանում է, որ մինչև 16 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: Հետևաբար, եթե 15 տարեկան երեխան 2021 թ.-ին դատապարտվել է 4 տարի ժամկետով ազատազրկման՝ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության համար, ապա վերը նշված կանոնի ուժով քրեական նոր օրենսգրքին պետք է տրվի հետադարձ ուժ, քանի որ թեև քննարկվող հանցանքի համար

պատասխանատվություն սահմանող նորմի սանկցիան մնացել է գրեթե անփոփոխ, սակայն 16 տարին չլրացած անձի նկատմամբ կիրառելիս՝ այն կրճատվում է 1/3-ով՝ դառնալով 1 տարի 4 ամսից մինչև 2 տարի 8 ամիս ժամկետով ազատազրկում:

Քրեական նոր օրենսգիրքը, ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, կարգավորում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող օրենքի հետադարձ ուժի հարցը, սահմանելով, որ քրեական նոր օրենսգրքով սահմանված հետադարձ ուժի չափանիշներին համապատասխան այն հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը: Հիշյալ կանոնակարգումը սահմանելիս՝ թեև օրենսդրի կողմից օգտագործվել է ոչ թե «օրենսդրություն», այլ «օրենք» եզրույթը, սակայն դա ավելի շուտ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած տեխնիկական բնույթի խնդիր է, քան բովանդակային առանձին կանոնակարգում: Ընդ որում, քննարկվող հարցի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանն ունի որոշում՝ Գասպար Պողոսյանի գործով<sup>23</sup>:

Քրեական նոր օրենսգիրքն անդրադառնում է նաև հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրության հետադարձ ուժի հիմնախնդրին: Մասնավորապես, հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ միայն օրենքով նախատեսված դեպքում՝ անկախ նրանից՝ եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ է մտել, թե՛ ոչ: Այս մոտեցումը բավականին խնդրահարույց է, քանի որ հետադարձ ուժի կիրառման սահմանափակում է նախատեսում նաև այն իրավիճակներում, երբ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտը բացակայում է:

Այնուհանդերձ, նշված կանոնակարգումը օրենսդիրը կապում է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասում տեղ գտած ձևակերպման հետ, որը սահմանում է, որ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող դրույթները կարող են վերաբերել, օրինակ՝ դատվածության ժամկետներին: Օրինակ, «Հայաստանի հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» 2022 թ.-ի հունիսի 9-ին ընդունված ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, անդրադառնալով 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգրքում դատվածության ինստիտուտի կանոնակարգմանը, սահմանում է, որ նշված օրենսգրքի 93-րդ հոդվածի 5-րդ մասին պետք է տալ հետադարձ ուժ՝ դատապարտված անձի վիճակը բարելավող մասով: Սակայն եթե օրենքում նման հատուկ կարգավորում չլիներ, ապա մինչ այդ օրենքի

<sup>23</sup> Տե՛ս, Գասպար Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ1/0013/01/11 որոշում:

օրինական ուժի մեջ մտնելը հանցանք կատարած անձանց նկատմամբ պետք է կիրառվեն իրենց կողմից հանցանքի կատարման պահին գործող քրեական օրենքով սահմանված դատվածության ժամկետները:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում ամրագրում է ստացել նաև հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարելուց հետո ուժի մեջ մտած, սակայն մինչև իրավասու մարմնի կողմից եզրափակիչ դատավարական ակտը կայացնելն ուժը կորցրած միջանկյալ քրեական օրենսդրությանը հետադարձ ուժով կիրառելու հարցը: Այդ հարցին անդրադարձ կատարվել է ՀՀ ՎՃճաբեկ դատարանի կողմից՝ Վաղարշակ Գալոյանի գործով կայացված որոշման շրջանակներում<sup>24</sup>, որով փաստվել է, որ. «...քրեական օրենքի հետադարձության կանոնը, ենթադրում է, որ հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված, հանցանք կատարած անձի համար բարենպաստ հետևանքներ առաջացնող նոր օրենքը պետք է տարածվի այդ անձի վրա: Այս դեպքում ևս որևէ նշանակություն չունի, թե մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու հարցը լուծելիս այն գործում է, թե արդեն իսկ կորցրել է իր իրավաբանական ուժը»:

Այնուհանդերձ, քրեական նոր օրենսգրքում սահմանվել է, որ միջանկյալ քրեական օրենսդրությունը կիրառվում է քրեական նոր օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված չափանիշներին համապատասխան: Հետևաբար, եթե միջանկյալ քրեական օրենսդրությամբ վերացվում է արարքի հանցավորությունը, ապա անկախ այն հանգամանքից, եզրափակիչ դատավարական ակտ առկա է, թե ոչ, այդ օրենսդրությանը պետք է տրվի հետադարձ ուժ: Եթե միջանկյալ քրեական օրենսդրությամբ մեղմացվում է պատիժը, ապա այդ դեպքում գործում է հետադարձ ուժ տալու երկու ռեժիմ՝ պարզ, երբ եզրափակիչ դատավարական ակտ առկա չէ և ռեզիզիոն, երբ առկա է եզրափակիչ դատավարական ակտ: Վերջին դեպքում, ըստ քրեական նոր օրենսգրքի, հետադարձ ուժ տրվում է՝ պայմանով, որ դրանով սահմանված պատժաչափը կամ պատժատեսակը ավելի մեղմ լինեն, քան անձի նկատմամբ նշանակվածը: Ինչ վերաբերում է անձի վիճակը բարելավող միջանկյալ քրեական օրենսդրությանը, ապա դրան հետադարձ ուժ կարող է տրվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Անդրադառնալով **քրեական օրենքի գործողությանը տարածության մեջ**, հարկ է նշել, որ այս առումով քրեական նոր օրենսդրությամբ էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը ևս առանցքային է համարում տարածքային սկզբունքի կիրառումը, այն է՝ ՀՀ տարածքում քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով: Խոսքը վերաբերում է թե ֆիզիկական և թե իրավաբանական անձանց:

<sup>24</sup> Տե՛ս, Վաղարշակ Գալոյանի գործով ՀՀ ՎՃճաբեկ դատարանի 2013 թ.-ի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13 որոշում:

Քրեական նոր օրենսգրքում հստակեցվել է, թե քրեական օրենքով նախատեսված որ արարքն է համարվում ՀՀ-ում կատարված: Քրեական նախկին օրենսգիրքը սահմանում էր, որ ՀՀ տարածքում կատարված էր համարվում այն հանցանքը, որը սկսվել, շարունակվել կամ ավարտվել էր ՀՀ տարածքում կամ հանցակցությամբ կատարվել այն անձի հետ, ով իր հանցավոր գործունեությունն իրականացրել էր ՀՀ տարածքից դուրս: Մինչդեռ քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ քրեական օրենքով նախատեսված արարքը համարվում է ՀՀ տարածքում կատարված, եթե դրա բաղկացուցիչ մասերից որևէ մեկն իրականացվել է ՀՀ տարածքում: Օրինակ՝ քրեական օրենքով նախատեսված արարքը կատարվել է ՀՀ-ում, բայց հետևանքները առաջացել են ՀՀ տարածքից դուրս կամ ընդհակառակը՝ ՀՀ տարածքից դուրս սկսված արարքն է ավարտվել ՀՀ-ում կամ շարունակվող հանցագործության էպիզոդներից մեկն է տեղ գտել ՀՀ-ում: Սա, ըստ էության, Ֆրանսիայի քրեական օրենսգրքի դրույթների արտացոլումն է քրեական նոր օրենսգրքում<sup>25</sup>: Քրեական օրենքով նախատեսված արարքը համարվում է ՀՀ տարածքում կատարված նաև այն դեպքում, երբ ՀՀ-ում գտնվելու ժամանակ անձը հանցակցել է ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելուն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բացի դիվանագիտական անձեռնմխելիությունից, գոյություն ունի նաև հյուպատոսական, միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված անձեռնմխելիություն, քրեական նոր օրենսգրքում սահմանվել է, որ ՀՀ տարածքում քրեական օրենքով նախատեսված արարքը կատարած օտարերկրյա դիվանագիտական, հյուպատոսական կամ միջազգային կազմակերպության համար սահմանված անձեռնմխելիությունից օգտվող անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան:

Եթե անձը քրեական օրենքով նախատեսված արարքը կատարել է ՀՀ տարածքում գտնվող այն վայրում, որտեղ գործում է օտարերկրյա պետության դիվանագիտական, հյուպատոսական կամ միջազգային կազմակերպության համար սահմանված անձեռնմխելիությունը, ապա նրա քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած այս դրույթները, ըստ էության, արտացոլում են «Դիվանագիտական կապերի մասին» և «Հյուպատոսական կապերի մասին» Վիեննայի կոնվենցիաների պահանջները<sup>26</sup>, և դրանց կիրառությունը պետք է լինի նշված կոնվենցիայի դրույթների մեկնաբանման լույսի ներքո:

Ինչ վերաբերում է նավերին և օդանավերին, ապա քրեական նոր օրենսգիրքը, հիմնվելով քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած համանման կարգավորման վրա,

<sup>25</sup> Sté u, Criminal Code of French Republic, 01.03.1994, art. 113-2:

<sup>26</sup> Sté u, Դիվանագիտական կապերի մասին կոնվենցիա, 06.10.1992, Հյուպատոսական կապերի մասին կոնվենցիա, 06.10.1992:

սահմանում է, որ ՀՀ դրոշի ներքո գտնվող կամ տարբերանշանը կրող քաղաքացիական նավի կամ թռիչքի մեջ գտնվող քաղաքացիական օդանավի կամ այլ թռչող սարքի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը, անկախ դրա գտնվելու վայրից, լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով:

Քրեական նոր օրենսգրքում տեղ է գտել նոր կարգավորում, որը, ըստ էության, բխում է Տոկիոյի կոնվենցիայի<sup>27</sup> դրույթներից: Մասնավորապես, նշվում է, որ ՀՀ դրոշի ներքո չգտնվող կամ տարբերանշանը չկրող քաղաքացիական օդանավի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով, եթե դա նախատեսված է ՀՀ միջազգային պայմանագրերով: Սա, ըստ էության, կոչված է ապահովելու Տոկիոյի կոնվենցիայի և հատկապես՝ դրա 4-րդ հոդվածով նախատեսված դրույթների կյանքի կոչելը, օրինակ, եթե մեկ այլ պետության տարբերանշանը կրող քաղաքացիական օդանավի վրա, ՀՀ տարածքում թռիչքի ընթացքում, հանցանք է կատարվում ՀՀ քաղաքացու դեմ և ՀՀ-ն միջամտում է: Այդ դեպքում պետք է գործի ՀՀ օրենսդրությունը:

Քրեական նոր օրենսգրքում հստակեցվել է նաև այն նավերի և թռչող սարքերի շրջանակը, որոնց վրա հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվությունը միշտ առաջանում է ՀՀ քրեական օրենսգրքով: Քրեական նախկին օրենսգրքով այդ շրջանակը սահմանափակվում էր միայն ռազմական նավերով և օդանավերով, մինչդեռ թե Տոկիոյի կոնվենցիան և թե Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիան<sup>28</sup> այդ շրջանակը ավելի ընդգրկուն են սահմանում, ինչն էլ արտացոլվել է քրեական նոր օրենսգրքում: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքում սահմանվում է, որ ՀՀ ռազմական կամ կառավարական նավի կամ պետական օդանավի կամ այլ թռչող սարքի (ռազմական, ոստիկանական, մաքսային) վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը, անկախ դրա գտնվելու վայրից, լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով:

Քրեական նոր օրենսգրքում, ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, տեղ է գտել քաղաքացիության սկզբունքը, սակայն հստակեցվել է, որ այն տարածվում է նաև երկրաքաղաքացիություն ունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց վրա, եթե նրանց կատարած արարքը հանցանք է համարվում դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել: Այս կարգավորումը քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպումից էապես տարբերվում է, քանի որ հստակեցնում է, որ փախստականների, ապաստան հայցող կամ ստացած անձանց նկատմամբ պետք է կիրառվի տարածության

<sup>27</sup> Տե՛ս, Օդանավերի մեջ կատարվող հանցագործությունների և որոշակի այլ գործողությունների մասին կոնվենցիա, 14.09.1963, Տոկիո:

<sup>28</sup> Տե՛ս, Ծովային իրավունքի ՄԱԿ-ի կոնվենցիա, 10.12.1982:

մեջ քրեական օրենքի գործողության ոչ թե ունիվերսալ, այլ քաղաքացիության սկզբունքը:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծություններից է այն, որ եթե քրեական օրենքով նախատեսված արարքը քաղաքացիության սկզբունքի կիրառման շրջանակի մեջ ընդգրկված անձանց կողմից կատարվել է որևէ պետության չպատկանող տարածքում, ապա այդ արարքը կատարած անձինք ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքի համար որպես պատիժ ՀՀ-ում նախատեսված է ազատազրկում: Օրինակ, եթե որևէ պետությանը չպատկանող տարածքում ՀՀ-ում ապաստան ստացած անձը սպանի Քամերունի քաղաքացու, ապա ՀՀ-ում հայտնվելուց հետո նրան հնարավոր կլինի ենթարկել պատասխանատվության, նույնիսկ այն պարագայում, որ սպանության փաստացի կատարման վայրում այդ արարքը հանցանք չէր համարվում, քանի որ քրեական օրենսգիրք չէր գործում: Ընդ որում, քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած՝ ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե առկա են ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված պայմանները:

Օրենսդիրը նաև մեկ այլ փոփոխություն է կատարել, սահմանելով, որ ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց: Քրեական նախկին օրենսգրքով ոչ թե նշվում էր «ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում» արտահայտությունը, այլ ներկայացված էր հանցավոր արարքների սահմանափակ շրջանակ, որոնց պարագայում ՀՀ քրեական օրենսդրությունը կիրառելի էր՝ անկախ այդ արարքների փաստացի կատարման պետությունում դրանք քրեականացված լինելուց: Օրինակ՝ կաշառք ստանալը, կաշառք տալը և այլն: Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած մոտեցումն առավել արդարացված է թվում, քանի որ ՀՀ-ի կողմից նոր միջազգային պարտավորությունների ստանձնման պարագայում կարիք չի լինի քրեական օրենսգրքում անընդհատ փոփոխություններ կատարել:

Քրեական օրենքի գործողության ունիվերսալ սկզբունքը քրեական նոր օրենսգրքում փոփոխությունների չի ենթարկվել, հետևաբար քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած և ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և ՀՀ-ում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց քրեական պատասխանատվության հարցի լուծումը մեծ դժվարություն չի ներկայացնի:

Էական փոփոխության է ենթարկվել քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքը: Քրեական նախկին օրենսգիրքը սահմանում էր, որ օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ-ում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր հանցանքը կատարել են ՀՀ տարածքից դուրս, ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանք կատարել են այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, որոնք ուղղված են ՀՀ շահերի կամ ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ:

Քրեական նոր օրենսգրքում այս սկզբունքը ձևակերպելիս տեղ են գտել հետևյալ փոփոխությունները. նախ՝ օրենսդիրը հստակեցրել է, որ այս սկզբունքը կիրառելի է ոչ միայն ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ շահերի դեմ հանցավոր ոտնձգությունների պարագայում, այլև եթե կատարված արարքն ուղղված է ՀՀ քաղաքացիություն ունեցող երկքաղաքացիություն ունեցող անձի, ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ: Բացի այդ՝ ռեալ սկզբունքի կիրառման շրջանակն է ընդլայնվել, քանի որ այն հնարավոր է կիրառել ոչ միայն ծանր և առանձնապես ծանր հանցանքներ կատարած, այլև ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց վրա:

Քրեական նոր օրենսգրքով առավել մանրամասն կարգավորվել են նաև ՀՀ տարածքից դուրս անձի քրեական պատասխանատվության ենթարկվելու **իրավական հետևանքները**: Քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ ՀՀ տարածքից դուրս անձի քրեական պատասխանատվության ենթարկված լինելը հաշվի է առնվում ՀՀ-ում նրան քրեական պատասխանատվության, պատժի ենթարկելիս, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը ոչ թե մատնանշում է, որ ՀՀ տարածքից դուրս անձի քրեական պատասխանատվության ենթարկված լինելը հաշվի է առնվում հանցագործությունները որակելիս, այլ տալիս ավելի ընդհանրական հասկացություն՝ քրեական պատասխանատվության ենթարկելիս: Ընդ որում, օրենսդիրը հստակեցնում է, որ քննարկվող նորմով սահմանված կանոնները կիրառվում են համապատասխան դատական ակտը ՀՀ-ում ճանաչելուց հետո:

Քրեական նոր օրենսգիրքը հստակեցնում է, որ եթե կատարված հանցանքի համար անձն այլ պետության տարածքում կամ միջազգային դատարանի կողմից դատապարտվել է և ամբողջությամբ կրել է պատիժը կամ ազատվել է քրեական պատասխանատվությունից կամ պատժից, ապա այդ արարքի համար նա ՀՀ-ում այլևս քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկվել չի կարող, բացառությամբ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Եթե կատարված հանցանքի համար անձը մասնակիորեն է կրել պատիժը կամ այն դեռևս չի կրել, ապա ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթարկվելիս պատժի կրած մասը հաշվակցվում է, իսկ այն պատժատեսակների պարագայում, որոնց հաշվակցումն



անհնարին է, պատժի կրած մասը հաշվի է առնվում անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս: Հաշվակցման ենթակա է նաև այն ժամանակահատվածը, որի ընթացքում անձը մինչև դատապարտվելը կամ պատժի կրման ուղարկվելը քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան պահվել է անազատության մեջ:

Օտարերկրյա պետության կամ միջազգային դատարանի սահմանած պատիժը ՀՀ-ում կրող անձի նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ պատժից ազատելու հիմքերն ու պայմանները:

## Գլուխ 4

### ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Քրեական նոր օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության հիմքն ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված հանցանք կատարելն է: Այս մոտեցումը տարբերվում է քրեական նախկին օրենսգրքի 3-րդ հոդվածում տեղ գտած ձևակերպումից, որը սահմանում էր, որ «քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած մոտեցումն առավել հստակ է. քրեական նախկին օրենսգրքի կանոնակարգումից հետևում էր, որ քրեական պատասխանատվության հիմքը ավարտված հանցանքն է (միայն ավարտված հանցանքն իր մեջ կարող է պարունակել քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները), մինչդեռ ներկայումս օրենսդրորեն հստակեցվել է, որ քրեական պատասխանատվության հիմք են նաև հանցագործության նախապատրաստությունն ու հանցափորձը:

Հարկ է նշել, որ քրեական նոր օրենսգրքի 14-րդ հոդվածում իր ամրագրումը ստացած քրեական պատասխանատվության հիմքը վերաբերում է միայն ֆիզիկական անձանց պատասխանատվությանը, մինչդեռ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմքը սահմանված է քրեական նոր օրենսգրքի 123-րդ հոդվածում:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծություններից է նախկինում քրեական դատավարության օրենսգրքով կարգավորվող՝ տուժողի բողոքի հիման վրա հարուցվող գործերի շրջանակը քրեական օրենսգրքում զետեղելը: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է. «սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 168-րդ հոդվածի 1-ին մասով, 169-րդ հոդվածի 1-ին մասով, 170-րդ հոդվածի 1-ին մասով, 171-րդ հոդվածի 1-ին մասով, 172-րդ հոդվածով, 173-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 180-րդ հոդվածի 1-ին մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով, 194-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 1-ին մասով, 227-րդ հոդվածի 1-ին մասով, 228-րդ հոդվածի 1-ին մասով, 253-րդ հոդվածի 1-ին մասով, 254-րդ հոդվածի 1-ին մասով, 255-րդ հոդվածի 1-ին մասով, 256-րդ հոդվածի 1-ին մասով, 257-րդ հոդվածի 1-ին մասով, 259-րդ հոդվածի 1-ին մասով, 262-րդ հոդվածի 1-ին մասով, 263-րդ հոդվածի 1-ին մասով, 264-րդ հոդվածի 1-ին մասով, 265-րդ հոդվածով, 266-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարած անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն հանցագործությունից տուժածի քրեական հայցի հիման

վրա, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի»: Բացառության նման դեպքեր կարող են լինել, օրինակ՝ ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքները: Քրեական դատավարության նոր օրենսգիրքը որպես նման բացառություն է դիտում նաև այն դեպքերը, երբ կատարվել են քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք, սակայն անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ վնաս պատճառողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը:

Քրեական նոր օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած կանոնակարգումները քրեական դատավարության օրենսգրքից քրեական օրենսգիրք տեղափոխելը պայմանավորված է քրեական օրենսդրության այն պահանջով, որ հանցակազմ կամ պատիժ կամ քրեաիրավական ներգործության միջոց նախատեսող նորմերը կարող են կիրառվել միայն քրեական օրենսգրքում ընդգրկվելուց հետո, ինչն էլ փաստացի քրեական նոր օրենսգրքում իրականացվել է: Բովանդակային առումով՝ քննարկվող կանոնակարգմամբ նախատեսված հանցանքների շրջանակը գրեթե փոփոխության չի ենթարկվել. այս ցանկից դուրս են մնացել այն արարքները, որոնք տեղ չեն գտել քրեական նոր օրենսգրքով (օրինակ՝ վաշխառությունը, ապրանքային նշանն ապօրինի օգտագործելը), ինչպես նաև քրեական նոր օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը (համապատասխանում է քրեական նախկին օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմին): Միաժամանակ, ցանկում կատարվել են լրացումներ, օրինակ՝ ավելացվել է կողոպուտի հիմնական հանցակազմը:

## Գլուխ 5

### ՀԱՆՑԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

#### ՀԱՆՑԱՆՔ

**Հանցանքը**, պատժի հետ մեկտեղ, քրեական իրավունքի հիմնական հասկացությունն է: ՀՀ քրեական նոր օրենսգրքում այս հասկացությունն էական փոփոխությունների է ենթարկվել: Հիմնական նորույթը հանգում է նրան, որ «հանցանք» հասկացությունից հանվել է հանրային վտանգավորության մասին նշումը: Ինչպես շատ այլ երկրների քրեական օրենսդրություններում է, հանրային վտանգավորությունը չի նախատեսվում որպես հանցագործության հատկանիշ: ՀՀ քրեական նոր օրենսգիրքը հիմնվում է շատ քրեագետների կողմից հիմնավորվող այն գաղափարի վրա, որ մյուս իրավախախտումները ևս օժտված են հանրային վտանգավորությամբ և հանցանքի ու դրանց միջև տարբերությունը հանրային վտանգավորության աստիճանի մեջ է: Սակայն, հանրային վտանգավորությունը գնահատողական հասկացություն է: Բացի այդ, հաճախ հանցանքների և մյուս իրավախախտումների միջև տարբերությունն այնքան չնչին է, որ անհնար է խոսել դրանց հանրային վտանգավորության աստիճանի մեջ առկա էական տարբերությունների մասին: Որոշ դեպքերում իրավախախտումները, օրինակ՝ վարչական զանցանքները և հանցանքները կարող են փոխվել տեղերով: Դրա համար էլ հանրային վտանգավորությունը չի կարող լինել այն հստակ չափանիշը, որով հանցանքը տարբերվում է այլ իրավախախտումներից: Հանցանքն այլ իրավախախտումներից տարբերակող միակ հստակ չափանիշը քրեական օրենքով նախատեսված լինելն է: Կարելի է նույնիսկ ասել, որ քրեական օրենքով նախատեսված լինելը կամ քրեական հակաիրավականությունը հանցագործության օբյեկտիվ չափանիշն է, որովհետև օրենսդիրն, իր սուբյեկտիվ պատկերացումների հիման վրա, գնահատելով այս կամ այն արարքի հանրային վտանգավորության աստիճանը, այն նախատեսում է քրեական օրենքում և օբյեկտիվ տեսք տալիս: Ասվածը չի նշանակում, թե հանցագործությունը օժտված չէ հանրային վտանգավորությամբ. պարզապես հանրային վտանգավորությունը չի կարող դիտվել զուտ հանցագործությանը բնորոշ հատկանիշ և նախատեսվել որպես դրա օրենսդրական հատկանիշ: Դեռ ավելին՝ հանրային վտանգավորությունը որպես հանցագործության օրենսդրական հատկանիշ նախատեսելն այն թյուր տպավորությունն է ստեղծում, թե բացի քրեական օրենքով նախատեսված լինելուց արարքը պետք է նաև հանրային վտանգավորության որոշակի աստիճան ունենա, ինչը խառնաշփոթ է ստեղծում տարբեր իրավախախտումները սահմանազատելու հարցում:

Եթե արարքը նախատեսված է քրեական օրենսգրքով՝ ուրեմն այն հանցագործություն է, եթե նախատեսված է վարչական իրավախախտումների

վերաբերյալ օրենսգրքով՝ ուրեմն վարչական իրավախախտում է:

Քննարկվող հասկացության մեջ նշվում է արարքը մեղավորությամբ կատարած լինելու մասին: Առանց մեղքի կատարված արարքը չի կարող հանցագործություն համարվել:

Քննարկվող նորմում նշվում է, որ հանցագործությունը պատժի սպառնալիքով արգելված արարքն է: Պատժի սպառնալիքով արգելված լինելու մասին նշումը պատահական չէ: Բանն այն է, որ քրեական օրենսգրքով նախատեսված են արարքներ, որոնք ոչ միայն արգելված չեն, այլև իրավունքի տեսանկյունից իրավաչափ են. անհրաժեշտ պաշտպանություն, հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառել, հիմնավորված ռիսկ և այլն:

Հանցագործություն կարող է համարվել միայն հակաիրավական արարքը, այսինքն՝ արարքը, որն արգելված է օրենքով, հակասում է իրավունքին, իրավական ակտերի պահանջներին: Այն, որ արարքը պետք է նախատեսված լինի քրեական օրենքով նշվում է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշման մեջ<sup>29</sup>, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածում, Փեսինոն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանի վճռում, Գերմանիայի, Իսպանիայի քրեական օրենսգրքերում<sup>30</sup>: Հարկ է նշել, որ քրեական օրենքով նախատեսված և պատժի սպառնալիքով արգելված լինելը նույնական հասկացություններ չեն: Պատժի սպառնալիքով արգելված լինելը նշանակում է, որ արարքը հակաիրավական է: Օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանությունը պատժի սպառնալիքով արգելված արարք չէ, չնայած նախատեսված է քրեական օրենսգրքով: Մինչդեռ, քրեական օրենքով նախատեսված լինելը նշանակում է, որ արարքը համապատասխանում է որևէ հանցակազմի: Արարքում հանցակազմի հատկանիշների առկայությունը նշանակում է, որ այն քրեական օրենքով նախատեսված արարք է: Կատարված արարքի հատկանիշները պետք է լիովին համապատասխանեն քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հատկանիշներին: Կատարված արարքում հանցակազմի որևէ տարրի կամ հատկանիշի բացակայությունը վկայում է այն մասին, որ տվյալ արարքը չի կարող հանցագործություն համարվել:

Հանցանք հասկացության պարտադիր հատկանիշներից է նաև արարքը՝ հանցագործության սուբյեկտի կողմից կատարված լինելը: Բանն այն է, որ եթե քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը կատարվում է հանցագործության սուբյեկտ չհամարվող անձի (անմեղսունակի, քրեական պատասխանատվության տարիքի չհասածի) կողմից, ապա հանցանքը բացակայում է: Այդ դեպքում գործ ունենք օբյեկտիվորեն վտանգավոր, բայց ոչ հանցավոր արարքի հետ:

Այսպիսով՝ հանցագործության հատկանիշներն են ա) արարքի

<sup>29</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Երվանդ Մելքոնյանի գործով 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշումը:

<sup>30</sup> Տե՛ս Уголовный кодекс ФРГ, статья 1, Уголовный кодекс Испании, статья 1:

հակաիրավականությունը, այսինքն՝ պատժի սպառնալիքով արգելված լինելը, բ) քրեական օրենքով նախատեսված լինելը, այսինքն՝ արարքում հանցակազմի առկայությունը, արարքի համապատասխանությունը որևէ հանցակազմի, գ) մեղավորությամբ կատարված լինելը, դ) հանցագործության սուբյեկտի կողմից կատարված լինելը:

Այս տեսակետից ոչ այնքան հիմնավորված է թվում նոր քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումը, համաձայն որի՝ «Հանցանք չի համարվում այն արարքը, որը թեև ձևականորեն պարունակում է քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հատկանիշներ, սակայն իր նվազ վտանգավորության պատճառով ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել» (համանման է քրեական նախկին օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին): Փաստորեն, հանրային վտանգավորությունը անուղղակի ձևով ընդգրկվում է քրեական օրենսգրքում որպես հանցագործության հատկանիշ: Կարծում ենք, որ, եթե արարքն օրենսդրի կողմից նախատեսվել է որպես հանցանք, ապա այն չի կարող իրավակիրառողի կողմից հանցանք չհամարվել: Այլ հարց է, որ արարքի նվազ վտանգավորությունը դիտվեր որպես քրեական պատասանատվությունից ազատելու հիմք: Բացի այդ, հոդվածում խոսվում է նվազ վտանգավորության մասին, իրականում պետք է նշվեր արարքի նվազ կարևորությունը, որի հետևանքով արարքը իրենից բարձր հանրային վտանգավորություն չի ներկայացնում: Այս նորմի կիրառումը մեկնաբանության կարիք չունի, քանի որ այն հայտնի է իրավապահ մարմիններին. նախկինի նման այս նորմը կիրառելու համար պետք է, որ անձի դիտավորությունը ուղղված լինի չնչին վնաս պատճառելուն, որն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը:

Որոշ փոփոխությունների է ենթարկվել նաև քրեական նախկին օրենսգրքով սահմանված **հանցագործությունների դասակարգումը՝ ըստ բնույթի և վտանգավորության աստիճանի**: Նորությունն այն է, որ անզգուշությամբ և դիտավորությամբ կատարվող հանցանքների միջև տարբերություն չի դրվում. անզգուշությամբ կատարվող հանցանքներն էլ կարող են ծանր լինել: Օրենսդրի համոզմամբ՝ վրաերթի հետևանքով երկու մարդու մահ պատճառած վարորդի արարքը պակաս վտանգավոր չէ, քան, ասենք, ապօրինաբար բնակարան մուտք գործած և կոմպոտ գողացած անձի արարքը:

Պետք է նշել, որ պահպանվել են օրենսգրքով նախատեսված պատժի այն ժամկետները, որոնք դրված էին հանցագործությունների դասակարգման հիմքում: Ընդ որում, հանցանքն այս կամ այն տեսակին դասելու հիմքում դրվում է ոչ թե դատարանի կողմից նշանակված պատիժը, այլ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված

պատժատեսակն ու չափը:

Քրեական նոր օրենսգրքում տրվել է նաև **արարքի** հասկացությունը, որտեղ ճշգրտվել է, որ անգործության համար անձը ենթարկվում է պատասխանատվության այն դեպքում, երբ անձի վրա իրավական ակտով գործողություն կատարելու պարտականություն է դրվել կամ այդ պարտականությունը բխել է նրա ստանձնած պարտավորություններից (աշխատանքային, քաղաքացիաիրավական պայմանագիր և այլն) կամ օրենքով պաշտպանվող շահերը վտանգի ենթարկած կամ դրանց վնաս պատճառած իր նախորդ վարքագծից: Օրինակ՝ վրաերթ կատարած վարորդը պարտավոր է օգնություն ցույց տալ վրաերթի ենթարկված տուժողին:

Քրեական նոր օրենսգրքում նշվել է նաև, որ անգործության համար անձը ենթարկվում է պատասխանատվության այն դեպքում, երբ տվյալ իրադրությունում կարող էր կատարել իր պարտականությունը, այսինքն՝ ուներ դրա հնարավորությունը:

### **ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԸ**

Օրենսգրքում կարգավորվում է **հանցագործության սուբյեկտի** հարցը: Սրա հետ կապված հիմնական նորությունները հանգում են հետևյալին: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ սահմանափակվել է այն հանցագործությունների ցանկը, որոնց համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում տասնչորս տարեկանից: Քրեական նախկին օրենսգրքի համաձայն՝ այն անձինք, որոնց տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության (104-108-րդ հոդվածներ), դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու (112-116-րդ հոդվածներ), մարդուն առևանգելու (131-րդ հոդված), բռնաբարության (138-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139-րդ հոդված), ավազակության (175-րդ հոդված), գողության (177-րդ հոդված), կողոպուտի (176-րդ հոդված), շորթման (182-րդ հոդված), առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու (183-րդ հոդված), ծանրացուցիչ հանգամանքներում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու (185-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասեր), զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու (238-րդ հոդված), թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելու կամ շորթելու (269-րդ հոդված), տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու (246-րդ հոդված), խուլիզանության (258-րդ հոդված) համար: Քրեական նոր օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից բխում է, որ տասնչորս տարին լրացած, բայց տասնվեց տարին չլրացած անձինք պատասխանատվության չեն ենթարկվում առանց ծանրացնող հանգամանքների կողոպուտի և գողության համար՝ ի տարբերություն

քրեական նախկին օրենսգրքի: Դա կատարվել է անչափահասներին քրեական հարկադրանքից հնարավորինս զերծ պահելու համար, քանի որ որքան վաղ տարիքից են ենթարկվում քրեախրավական հարկադրանքի, այնքան մեծանում է ռեցիդիվի հավանականությունը: Միևնույն ժամանակ, նոր քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում ավելացել է տուժողի խնդրանքով սպանությունը:

Նորամուծություն է նաև այն, որ քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ եթե անձը հասել է օրենքով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ունակ չի եղել գիտակցելու իր արարքի հակախրավականությունը կամ ղեկավարելու իր արարքը, ապա ենթակա չէ քրեական պատասխանատվության: Եթե անձը հասել է օրենքով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ունակ չի եղել ամբողջությամբ գիտակցելու իր արարքի հակախրավականությունը կամ ղեկավարելու իր արարքը, ապա պատիժ նշանակելիս դա հաշվի է առնվում որպես մեղմացնող հանգամանք:

Քրեական նոր օրենսգրքով, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, եթե անձը հասել է օրենքով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ունակ չի եղել **ամբողջությամբ** գիտակցելու իր արարքի հակախրավականությունը կամ ղեկավարելու իր արարքը, ապա նա չի ազատվում քրեական պատասխանատվությունից, բայց պատիժ նշանակելիս դա հաշվի է առնվում որպես մեղմացնող հանգամանք: Քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն այն անձը, որը մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ունակ չի եղել գիտակցելու իր արարքի հակախրավականությունը կամ ղեկավարելու իր արարքը:

Մյուս կարևոր նորամուծությունն այն է, որ կարգավորվել է հանցագործության հատուկ սուբյեկտի հարցը: Նշվել է հատուկ սուբյեկտի հասկացությունը: Օրենքում հատուկ սուբյեկտը բնորոշվել է հետևյալ կերպ. հանցագործության հատուկ սուբյեկտը հանցանք կատարած այն անձն է, որը, բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, օժտված է քրեական օրենսգրքի Հատուկ մասով սահմանված լրացուցիչ հատկանիշներով, որոնք հիմք են տալիս նրան քրեական պատասխանատվության ենթարկելու քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված համապատասխան հանցագործության համար: Օրինակ՝ պետական դավաճանության սուբյեկտ կարող է լինել միայն ՀՀ քաղաքացին, կաշառք ստանալու սուբյեկտ՝ միայն պաշտոնատար անձը և այլն:

Նշվել է, որ եթե անձն իր կամ մեկ ուրիշի անօրինական արարքի հետևանքով անհիմն հատուկ սուբյեկտի կարգավիճակ է ձեռք բերել, ապա ենթակա է քրեական պատասխանատվության որպես հատուկ սուբյեկտ, բացառությամբ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերի: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 516-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված է, որ այլ անձի ապօրինի



արարքի հետևանքով զինճառայողի կարգավիճակ ոչ իրավաչափորեն ձեռք բերած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար: Նույն դիրքորոշմանն է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը<sup>31</sup>: Միննույն ժամանակ, այն դեպքերում, երբ անձը իր կամ մեկ ուրիշի անօրինական արարքների հետևանքով հատուկ սուբյեկտի կարգավիճակ է ձեռք բերել, ապա ենթակա է քրեական պատասխանատվության որպես հատուկ սուբյեկտ, եթե այնպիսի հատուկ սուբյեկտ է, որ իրավաբանական նշանակություն ունեցող գործառույթներ է իրականացնում կամ այդպիսի փաստաթղթեր է տրամադրում: Քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասում բացառություն նախատեսված չլինելու դեպքում վերոնշյալ պայմաններում անձը ենթակա է քրեական պատասխանատվության որպես հատուկ սուբյեկտ: Օրինակ՝ անձն իր կամ մեկ ուրիշի անօրինական արարքի հետևանքով անհիմն ձեռք է բերել պաշտոնատար անձի՝ քննիչի կամ դատախազի կարգավիճակ և ստացել է կաշառք: Եթե այդ անձանց պատասխանատվության չենթարկենք որպես հատուկ սուբյեկտ, ապա այն ոլորտը, որտեղ աշխատում է տվյալ անձը, կձախողվի, որովհետև մինչ այն հանգամանքի բացահայտումը, որ անձն իր կամ մեկ ուրիշի անօրինական արարքի հետևանքով է անհիմն հատուկ սուբյեկտի կարգավիճակ ձեռք բերել, ստիպված կլինենք այդ անձի կողմից կայացրած բոլոր որոշումները բեկանել, տրամադրած փաստաթղթերը առոչինչ համարել:

Նշվում է նաև, որ այն անձը, որը հատուկ սուբյեկտի հատկանիշներ չունի, բայց կատարում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը, ենթակա է պատասխանատվության այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են նրա արարքում: Բնականաբար, եթե նրա արարքում այլ հանցագործության հատկանիշներ չկան, նա չի կարող պատասխանատվության ենթարկվել: Օրինակ՝ անձը պաշտոնատար անձ չէ, սակայն ներկայանում է քաղաքացիներին որպես այդպիսին և նրանց օգտին իբրև թե որևէ արարք կատարելու համար գումար է վերցնում: Այդ անձը պատասխանատվության կենթարկվի ոչ թե կաշառք ստանալու համար, այլ օրենսգրքի 440-րդ հոդվածի առաջին մասով, որի հատկանիշներն առկա են նրա արարքում:

Նշվում է նաև, որ եթե անձն օժտված է եղել հատուկ սուբյեկտի հատկանիշներով նախքան հանցանքը, բայց հանցանքը կատարելու պահին, այդ հատկանիշները բացակայել են, ապա նա հատուկ սուբյեկտով հանցագործության համար ենթակա չէ քրեական պատասխանատվության: Դա բնական է, քանի որ արարքը կատարելու պահին անձն այլևս հատուկ սուբյեկտ չէ:

Առաջին անգամ ՀՀ քրեական օրենսգրքում տրվել է մեղսունակության հասկացությունը: Ըստ քրեական օրենսգրքի՝ մեղսունակությունն անձի՝ հանցանքը

<sup>31</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Հայկ Մովսիսյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՄԴ/0389/01/11 որոշումը:

կատարելու պահին իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու և այն ղեկավարելու ունակությունն է: Այս դրույթը հանրահայտ էր տեսության մեջ, ուստի մեկնաբանության կարիք չունի:

Փոփոխությունների են ենթարկվել **անմեղսունակության և սահմանափակ մեղսունակության** ինստիտուտները: Նախ՝ որպես անմեղսունակության և սահմանափակ մեղսունակության բժշկական հատկանիշ քրեական նոր օրենսգիրքը սահմանում է «հոգեկան առողջության խնդիրներ» եզրույթը՝ ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որում որպես անմեղսունակության բժշկական հատկանիշ թվարկված էին հոգեկան գործունեության խանգարման չորս ձևեր, իսկ սահմանափակ մեղսունակության դեպքում կիրառված էր «հոգեկան խանգարում» եզրույթը, որը բացի այդ չորս ձևերից նկատի ունի նաև հոգեկան առողջության այլ խնդիրները:

## ՄԵՂՔԸ

Էական փոփոխությունների է ենթարկվել **մեղքի ինստիտուտը**: Մեղքի բնորոշման մեջ նշվում է արարքի հակաիրավականությունը գիտակցելու մասին:

Այսպես՝ «Քրեական օրենսգրքով նախատեսված պատժի սպառնալիքով արգելված արարքը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե այն կատարողը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել դա»:

Մեղքի ինստիտուտը քրեական իրավունքի առանցքային հիմնախնդիրներից է: Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի վրա են հիմնված բոլոր երկրների քրեական օրենսդրությունները: Հակաիրավական արարք կատարած անձին կարելի է պատասխանատվության ենթարկել միայն այն դեպքում, երբ այդ արարքի համար նրան կարելի է պարսավել: Արարքի պարսավելիության գլխավոր պայմանը դրանում մեղքի առկայությունն է: Նախկին քրեական օրենսգիրքը հիմնված էր մեղքի այն տեսական հայեցակարգի վրա, ըստ որի՝ մեղքը դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևերով, ընդ որում մեղքը բնորոշվում էր անհասկանալի և անորոշ ձևով. մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր արարքի և դրա հետևանքների նկատմամբ, որը դրսևորվում է դիտավորության և անզգուշության ձևերով: Ի՞նչ հոգեբանական վերաբերմունքի մասին է խոսքը՝ իրականում անհասկանալի է: Այս հայեցակարգի շրջանակներում դիտավորության բովանդակության տարր էր համարվում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի կողմից իր արարքի հանրային վտանգավորության գիտակցումը, իսկ անզգուշության դեպքում արարքի նկատմամբ հոգեբանական վերաբերմունքն օրենսդրական ամրագրում չունի:

Քննարկենք դիտավորության բովանդակության հարցը: Դիտավորության

բովանդակության տարր էր համարվում արարքի հանրային վտանգավորության գիտակցումը: Սակայն, պետք է նշել, որ քրեական օրենքով նախատեսված արարքը կատարող անձի կողմից իրականում արարքի հանրային վտանգավորությունը գիտակցելը ոչ միշտ է առկա: Օրինակ՝ դժվար թե կարեկցանքի շարժառիթով հանցանք կատարող անձը գիտակցում է իր արարքի հանրային վտանգավորությունը: Դեռ ավելին, որոշ դեպքերում անձը կարող է կարծել, որ հանրորեն օգտակար արարք է կատարում: Օրինակ՝ ծանր վիճակում հայտնված, գոյատևման միջոցներից զրկված իր ընկերոջն օգնելու համար անձը, որը նույնպես ծանր պայմաններում է, գողություն է կատարում մեծահարուստից: Բացի այդ, ոչ մի երաշխիք չկա, որ քրեական օրենսդրությամբ որպես հանցագործություն չեն նախատեսվի այնպիսի արարքներ, որոնց քրեականացումը պայմանավորված է քաղաքական, գաղափարախոսական նկատառումներով: Այդպիսի արարքի օրինակ կարող է լինել, ասենք, սպեկուլյացիան (ապրանքները գնելը և վերավաճառելը շահ ստանալու նպատակով), որը նախկինում հանցանք էր համարվում: Այս հանցանքը կատարած անձանց շրջանում մեր կողմից նախկինում իրականացված հարցումները ցույց տվեցին, որ նրանցից և ոչ մեկը չէր գիտակցում իր արարքի հանրային վտանգավորությունը, դեռ ավելին՝ նրանցից շատերը նշում էին, որ իրենք հանրորեն օգտակար արարք են կատարում, քանի որ մարդկանց ապահովում են այնպիսի կենսականորեն անհրաժեշտ ապրանքներով, որոնք դժվար կամ անհնար է հայթայթել: Միննույն ժամանակ այս անձինք գիտեին, որ իրենց կողմից կատարված արարքն արգելված է քրեական օրենսգրքով, այսինքն՝ գիտակցում էին իրենց արարքի հակաիրավականությունը:

Մեղքն առկա է այն դեպքում, երբ կատարած արարքի համար անձին կարելի է պարսավել: Իսկ դա հնարավոր է այն դեպքում, երբ անձը գիտակցում է իր արարքի հակաիրավականությունը կամ թեև չի գիտակցում, սակայն կարող էր գիտակցել: Եվ իրոք, ե՞րբ կարելի է անձին մեղադրել, պարսավել նրա կողմից կատարված և օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած արարքի համար: Իհարկե, նախ՝ այն դեպքում, երբ նա գիտակցում է իր արարքի արգելված լինելը և չնայած դրան, արհամարհելով արգելքը, խախտում է այն, երկրորդ՝ այն դեպքում, երբ թեև չի գիտակցում իր արարքի հակաիրավականությունը, սակայն կարող էր գիտակցել դա: Ըստ էության այս դեպքում նույնպես առկա է արհամարհական, ժխտողական վերաբերմունք օրենքի և իրավակարգի նկատմամբ: Հասարակության մեջ ապրող մարդը պարտավոր է գոնե ընդհանուր պատկերացում ունենալ այդ հասարակության մեջ առկա իրավակարգի և օրենքների մասին: Ընդ որում, շատ կարևոր է նաև, որ նա հնարավորություն ունենա գիտակցելու իր արարքի հակաիրավականությունը:

Արարքի պարսավելիությունն այս դեպքում դրսևորվում է հենց նրանում, որ մարդը, հնարավորություն ունենալով գիտակցելու իր արարքի հակաիրավական բնույթը,

իմանալու տվյալ հասարակությունում առկա իրավական արգելքները, ջանք չի գործադրում դա անելու համար: Իսկ, եթե մարդն անհաղթահարելի խոչընդոտների հետևանքով չի կարողացել գիտակցել իր արարքի հակաիրավականությունը, ապա մեղքը բացակայում է: Օրինակ՝ պաշտոնատար անձը մոլորության մեջ է գցել հարկ վճարողին, վստահեցնելով, որ վերջինս հարկային պարտավորություններ չունի:

Նման դեպքերում անձին պարսավելն անհնար է: Ուստի, մեղքի քննարկվող հայեցակարգի շրջանականերում «օրենքը չիմանալը չի ազատում պատասխանատվությունից» սկզբունքը դադարում է անձեռնմխելի լինելուց. այս սկզբունքը գործում է միայն այն դեպքում, երբ անձը, որը չգիտեր օրենքը, հնարավորություն ուներ և կարող էր իմանալ դա: Սա բոլոր իրավական և ժողովրդավարական պետությունների կողմից որդեգրված մոտեցում է: Դասական ձևով այս հայեցակարգն առկա է գերմանական, ֆրանսիական քրեական օրենսդրություններում<sup>32</sup>: Մեղքի այս հայեցակարգը թույլ է տալիս նաև հիմնավորելու քրեական պատասխանատվությունն այն դեպքերում, երբ անձը չի գիտակցում ո՛չ իր արարքի հակաիրավականությունը, ո՛չ էլ հանրային վտանգավորությունը, սակայն կարող էր գիտակցել: Օրինակ՝ մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում կան անձինք, որոնք չգիտեն, որ կաշառք տալու համար քրեական պատասխանատվություն է նախատեսված: Այս անձինք չեն գիտակցում նաև իրենց արարքի հանրային վտանգավորությունը, հատկապես, երբ կաշառքը տրվում է օրինական որևէ արարքի համար: Մեղքի և դիտավորության՝ քրեական նախկին օրենսգրքում առկա բնորոշումներն իրականում թույլ չէին տալու նման դեպքերում անձին քրեական պատասխանատվության ենթարկել (կաշառք տալը դիտավորությամբ կատարվող հանցանք է): Մինչդեռ մեղքի այն հայեցակարգը, որն առկա է քրեական նոր օրենսգրքում, վերացնում է այս բացը: Տվյալ դեպքում կարող ենք ասել, որ անձը, թեև չի գիտակցել իր արարքի հակաիրավականությունը, սակայն կարող էր գիտակցել դա: Ոչ մի խոչընդոտ տվյալ պարագայում չկա, որպեսզի անձն իմանար կաշառք տալն արգելված լինելու մասին, ուստի նրա մեղքն առկա է: Առկա է նաև դիտավորությունը, քանի որ տվյալ դեպքում կաշառք տվողը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք կաշառք տալու հանցակազմի հատկանիշ են:

Մեղքի նշված հայեցակարգը թույլ է տալիս հիմնավորելու քրեական պատասխանատվությունը նաև ծանր հարբածության մեջ գտնվող անձի կողմից հանցանք կատարելու դեպքում, քանի որ եթե անձն ինքն է իրեն հասցնում այդ վիճակի, ապա կարող ենք հավաստել, որ նա հնարավորություն ուներ և կարող էր գիտակցել իր ապագա արարքի հակաիրավականությունը: Այլ հարց է, որ եթե տվյալ անձը չի գիտակցել իր արարքի՝ հանցակազմի հատկանիշ համարվող փաստական

<sup>32</sup> St' u Уголовное законодательство зарубежных стран. М. 1999, էջ 198, 255:

հանգամանքները, ապա նա պատասխանատվության կենթարկվի անզուգուշությամբ հանցանք կատարելու համար՝ հակառակ դեպքում, եթե անձը դիտավորությամբ է իրեն դրել այդ վիճակի մեջ՝ ապագայում հանցանք կատարելու նպատակով, ապա ենթակա է պատասխանատվության դիտավորյալ հանցանք կատարելու համար՝ անկախ նրանից՝ գիտակցել է իր արարքի՝ հանցակազմի հատկանիշ համարվող փաստական հանգամանքները, թե ոչ:

Այսպիսով՝ մեղքի բովանդակությունն է կազմում արարքի հակաիրավականությունը գիտակցելը կամ դա գիտակցելու կարողությունը, հնարավորությունը: Սրա հետ կապված անհրաժեշտ է քննարկել նաև այն հարցը, թե ինչ պետք է հասկանալ արարքի հակաիրավականությունը գիտակցել ասելով: Խոսքն այս դեպքում ոչ թե այն մասին է, որ անձը պետք է գիտակցի, թե իր արարքը կոնկրետ որ օրենքով կամ նորմով է արգելված, այլ ընդհանուր պատկերացում ունենա այն մասին, որ արարքն արգելված է օրենքով կամ հնարավոր է, որ արգելված է, որովհետև պարսավելի է: Ուստի իրավակիրառողը պարտավոր չէ ապացուցելու, որ անձը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ կարող էր գիտակցել դա: Մեղքի քննարկվող հայեցակարգը հիմնվում է այն կանխադրույթի վրա, որ հասարակությունում ապրող մարդը պետք է գիտակցի իր արարքի հակաիրավականությունը, գիտակցում է դա կամ, եթե չի գիտակցում, ապա կարող էր գիտակցել: Ուստի մեղքի բացակայության հարցը կարող է բարձրացվել միայն այն դեպքերում, երբ անձը ծանրակշիռ փաստարկներ է ներկայացնում, որոնք ապացուցում են, որ ինքը չի գիտակցել և չէր կարող գիտակցել իր արարքի հակաիրավականությունը:

Քանի որ մեղքի բովանդակությունն է կազմում արարքի հակաիրավականությունը գիտակցելը կամ դա գիտակցելու կարողությունը, ապա մեղքի առկայության կարևոր պայմաններից են մեղսունակությունը, ինչպես նաև արարքում դիտավորության կամ անզուգուշության առկայությունը:

Ինչ վերաբերում է դիտավորությանը և անզուգուշությանը, ապա դրանք, մեղքի քննարկվող հայեցակարգում, խիստ պայմանականորեն կարող են համարվել մեղքի ձևեր: Բանն այն է, որ մեղքը քննարկվող հայեցակարգում հանցագործության ինքնուրույն տարր է, և ոչ թե հանցագործության սուբյեկտիվ կողմի հատկանիշ: Այդ պատճառով դիտավորությունն ու անզուգուշությունն ավելի շուտ հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշներ են: Այլ հարց է, որ մեղքի առկայությունը կամ բացակայությունը սերտորեն կապված է դիտավորության կամ անզուգուշության հետ, քանի որ արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողության հարցը հնարավոր է բացահայտել այս երկու հասկացությունների միջոցով (դիտավորությունը և անզուգուշությունը կապված են արարքի փաստական հանգամանքները գիտակցելու կամ դրանք գիտակցելու հնարավորության հետ, ինչն իր

հերթին թույլ է տալիս եզրակացություն անել անձի կողմից իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դրա կարողության մասին):

Քրեական նոր օրենսգրքում էական փոփոխությունների են ենթարկվել **դիտավորության և անզգուշության** հասկացությունները: Օրենքում տրվում է դիտավորության ընդհանուր բնութագիրը և ամրագրվում է այն դրույթը, որ դիտավորության առկայության համար անհարաժեշտ է, որ անձը գիտակցի իր արարքի փաստական հանգամանքները, ընդ որում՝ այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են: Սա շատ կարևոր է դիտավորությամբ կատարվող հանցագործությունների ճիշտ որակման համար: Բանն այն է, որ հանցակազմի հատկանիշ կարող են լինել բազմաթիվ օբյեկտիվ հանգամանքներ՝ հանցագործության եղանակը, տեղը, ժամանակը, հանցագործության առարկան, հետևանքները: Եթե նշված փաստական հանգամանքները հանցակազմի հատկանիշ են, ապա դրանք կարող են մեղսագրվել անձին միայն այն դեպքում, երբ նա գիտակցել է դրանց առկայությունը: Հակառակ դեպքում արարքը չի կարող որակվել այն հոդվածով, որով նախատեսված է տվյալ հանցակազմը: Եթե անձը չի գիտակցել իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք օրենքով նախատեսված են որպես տվյալ հանցակազմի հատկանիշ, ապա արարքը կարող է որակվել մեկ այլ հոդվածով կամ հոդվածի մեկ այլ մասով, որում նախատեսված հանցակազմի հատկանիշները նրա արարքում առկա են և նա գիտակցել է դրանք, կամ կարող է պատասխանատվության ենթարկվել անզգուշությամբ հանցանք կատարելու համար, եթե դրա համար օրենքով պատասխանատվություն է նախատեսված, կամ ընդհանրապես կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից: Օրինակ՝ անձը սպանում է կնոջը, չգիտակցելով, որ նա հղի է: Այս դեպքում նա պետք է պատասխանատվության ենթարկվի ոչ թե հղի կնոջ սպանության, այլ հասարակ սպանության համար: Կամ, անձը մարտադաշտում հափշտակում է սպանվածների կամ վիրավորվածների մոտ գտնվող իրերը, սակայն իրադրությունն այնպիսին է լինում, որ նա չի գիտակցում, որ արարքը մարտադաշտում է կատարում: Այս դեպքում անձը քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի սովորական հափշտակության համար: Մեկ այլ օրինակ. անձը հրապարակում է պետական գաղտնիք համարվող տեղեկություն, սակայն ինչ-ինչ պատճառներով չի գիտակցում, որ հրապարակվող տեղեկությունը պետական գաղտնիք է: Տվյալ դեպքում, եթե անձը պարտավոր էր և կարող էր գիտակցել դա, ապա պետք է պատասխանատվության ենթարկվի պետական գաղտնիքն անզգուշությամբ հրապարակելու համար:

Կարևոր է փաստել նաև, որ արարքի հակաիրավականության գիտակցումը կամ դա գիտակցելու կարողությունը չի մտնում դիտավորության բովանդակության մեջ. այն կազմում է մեղքի բովանդակությունը: Ուստի, եթե անձը նույնիսկ չի գիտակցել իր

արարքի հակաիրավականությունը, սակայն կարող էր գիտակցել դա, ընդ որում, գիտակցել է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, ապա մեղքն առկա է, և անձը պետք է պատասխանատվության ենթարկվի դիտավորությամբ հանցանք կատարելու համար: Մրա հետ կապված անհրաժեշտ է նշել, որ եթե հանցակազմի հատկանիշ է նախատեսված արարքի ապօրինությունը (օրինակ՝ ապօրինաբար զենք կրելը), ապա դա պետք է դիտել իբրև փաստական հանգամանք, որը հանցակազմի հատկանիշ է և նշանակություն ունի արարքը որպես դիտավորյալ հանցանք գնահատելու համար: Նման դեպքերում, եթե անձը չի գիտակցել ապօրինության փաստը, ապա դիտավորության մասին խոսելն ավելորդ է և, եթե քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված տվյալ հանցատեսակի միայն դիտավորյալ դրսևորումների համար, ապա անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել այդ հանցագործության համար: Այս կապակցությամբ անհրաժեշտ է վերլուծության ենթարկել Վ.Աղաջանյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը: Գործի փաստական հանգամանքները ցույց են տալիս, որ Վ.Աղաջանյանը, որը սառը զենք է գնել տոնավաճառից ու բնականաբար կրել է այն, չի գիտակցել դրա ապօրինությունը: Սակայն ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ այն միտքն է արտահայտվել, թե դիտավորության առկայության համար անհրաժեշտ է, որ անձը գիտակցի իր արարքի հանրային վտանգավորությունը, այլ ոչ թե դրա հակաիրավականությունը: Հետևաբար նման պայմաններում օրենքի չիմացությունը չի կարող դիտվել որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք<sup>33</sup>: Նախ՝ նոր քրեական օրենսգրքի կարգավորման պայմաններում արարքի հանրային վտանգավորության գիտակցումը չի մտնում դիտավորության բովանդակության մեջ: Բացի այդ, ավելի կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ տվյալ դեպքում խոսք չի կարող լինել «օրենքը չիմանալը չի ազատում քրեական պատասխանատվությունից» սկզբունքի մասին: Բանն այն է, որ Վ.Աղաջանյանը միգուցե շատ լավ էլ գիտեր, որ սառը զենքն ապօրինի կրելու համար քրեական պատասխանատվություն է նախատեսված, բայց կոնկրետ իրավիճակում չի գիտակցել, որ տոնավաճառում ազատ վաճառվող սառը զենքը գնելը և կրելն ապօրինի է: Այսինքն՝ Վ.Աղաջանյանը չի գիտակցել իր արարքի այն փաստական հանգամանքը, որը տվյալ դեպքում հանցակազմի կարևորագույն հատկանիշն է, (Վ.Աղաջանյանը ոչ թե իրավաբանական, այլ փաստական սխալ է թույլ տվել) ուստի նրա արարքում բացակայում է դիտավորությունը, իսկ քանի որ նրան մեղսագրվող հանցագործությունը միայն դիտավորությամբ կարող է դրսևորվել, ապա նա չպետք է ենթարկվեր քրեական պատասխանատվության:

<sup>33</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Վ.Աղաջանյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0345/01/09 որոշումը:

Սահմանված է նաև ուղղակի դիտավորության այն բնորոշումը, որը հատուկ է ձևական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությանը: Ձևական հանցակազմերում հանրորեն վտանգավոր հետևանքները հանցակազմի հատկանիշ չեն, ուստի հանցանք կատարողի գիտակցական և կամային վերաբերմունքը դրսևորվում է ոչ թե հետևանքների, այլ կատարվող արարքի նկատմամբ: Ձևական հանցակազմով հանցագործության դեպքում ուղղակի դիտավորությունը սկզբում սահմանվում է դիտավորության ընդհանուր հատկանիշը ներկայացնելով, այն է՝ անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են: Այնուհետև ներկայացվում է արարքի նկատմամբ անձի վերաբերմունքը. արարքը կատարելը նրա նպատակն է կամ նպատակին հասնելու միջոց: Այն, որ արարքը կատարելը նպատակին հասնելու միջոց է, խիստ վերապահումով կարելի է համարել ցանկություն: Ոստի քրեական նոր օրենսգիրքը, ձեռնպահ մնալով «ցանկանալ» անորոշ հասկացությունն օգտագործելուց, ճշգրտել է ուղղակի դիտավորության հասկացությունը՝ այն բնորոշելով անձի իրական հոգեբանական վերաբերմունքն արտահայտող հասկացությամբ:

Ինչպես արդեն նշվել է, ձևական հանցակազմով նկարագրված հանցանքի կատարումը կարող է լինել անձի ինչպես նպատակը, այնպես էլ նպատակին հասնելու միջոց: Օրինակ՝ շահադիտական դրդումներով կամ, ասենք, ամուսնանալու նպատակով մարդուն առևանգողի համար հանցանքի կատարումը որոշակի նպատակների հասնելու միջոց է (ամուսնանալ սիրած աղջկա հետ, ապահովել իր նյութական բարեկեցությունը): Իսկ, ասենք, վրեժից դրդված մարդուն առևանգողի համար հենց առևանգումն արդեն նպատակ է:

Քրեական իրավունքի տեսության մեջ գերակշռողն այն տեսակետն է, որ ձևական հանցակազմով նկարագրված հանցանքը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, քանի որ, եթե անձը գիտակցում է իր արարքի հանրային վտանգավորությունն ու կատարում է այն, նշանակում է, որ ցանկացել է կատարել: Նախ՝ ինչպես արդեն նշել ենք, «ցանկանալ» հասկացությունը չի արտացոլում անձի իրական հոգեբանական վերաբերմունքը հանցանքի նկատմամբ: Երկրորդ՝ ձևական հանցակազմով նկարագրված հանցանքը, իհարկե ոչ հաճախ, սակայն կարող է կատարվել անուղղակի դիտավորությամբ: Օրենքում նկարագրվում է այն իրավիճակը, երբ հանցանքը կատարելը անձի նպատակը չէ, նպատակին հասնելու միջոց չէ, անխուսափելի չէ, սակայն անձն այնուամենայնիվ կատարում է դա, անտարբերություն դրսևորելով այն հանգամանքի կապակցությամբ, որ դրանով կարող է վնաս պատճառել օրենքով պաշտպանվող իրավական բարիքին, այսինքն՝ անուղղակի դիտավորություն է դրսևորում: Օրինակ՝ քրեական նոր օրենսգրքի 192-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդուն ապօրինի ազատությունից զրկելու



համար: Այս հանցագործությունը հիմնականում կատարվում է ուղղակի դիտավորությամբ, սակայն հնարավոր են անուղղակի դիտավորությամբ այն կատարելու իրավիճակներ: Մասնավորապես, հաստատության պահակը, իմանալով, որ աշխատակիցներից մեկը դեռևս ներսում է, աշխատանքից հետո փակում է մուտքի դուռը ու հեռանում՝ կատարելով հիմնարկի ղեկավարի կարգադրությունն այն մասին, որ աշխատանքի ժամն ավարտվելուց հետո, ոչ ոք չպետք է մնա այնտեղ և դուռը պետք է փակվի: Տվյալ դեպքում գիտակցելով մարդուն ազատությունից զրկելու փաստը, պահակն անտարբերություն է դրսևորում դրա կապակցությամբ. աշխատակցին ազատությունից զրկելը ոչ պահակի նպատակն էր, ոչ էլ որևէ նպատակի հասնելու միջոց:

Ինչ վերաբերում է նյութական հանցակազմով նկարագրված հանցագործություններում ուղղակի դիտավորության դրսևորման ձևերին, ապա պետք է նշել, որ նյութական հանցակազմով նկարագրված հանցագործությունների դեպքում հանցակազմի պարտադիր հատկանիշ են համարվում վտանգավոր հետևանքները, ուստի հանցավորի գիտակցական և կամային վերաբերմունքը դրսևորվում է նաև դրանց նկատմամբ: Պահպանելով որդեգրված տրամաբանությունը՝ քրեական նոր օրենսգիրքը նյութական հանցակազմով հանցագործության ժամանակ դրսևորվող ուղղակի դիտավորությունը բնորոշում է «նպատակ» հասկացությամբ: Ուղղակի դիտավորությունն այս հանցագործություններում կարող է դրսևորվել երեք ձևով՝ ա/ վտանգավոր հետևանքներն անձի նպատակն են, բ/ վտանգավոր հետևանքները նպատակին հասնելու միջոց են, գ/ անձը նախատեսել է վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը: Առաջին երկու դրսևորումների կապակցությամբ օրենքը հատուկ չի շեշտում հետևանքները նախատեսելու մասին, քանի որ նպատակի մասին նշումն արդեն իսկ բավարար է հավաստելու, որ դրանք նախատեսվում են անձի կողմից: Առաջին իրավիճակի օրինակ կարող է լինել, ասենք, խանդի կամ վրեժի շարժառիթով կատարված սպանությունը: Երկրորդ իրավիճակի օրինակ կարող է լինել շահադիտական դրդումներով սպանությունը: Օրինակ՝ անձը սպանում է մյուս ժառանգորդներին՝ ժառանգությանը միայնակ տիրանալու համար: Այս դեպքում մյուս ժառանգորդներին սպանելը անձի վերջնական նպատակին հասնելու միջոց է: Երրորդ իրավիճակի օրինակ կարող է լինել գրականության մեջ հաճախ ներկայացվողը. դիվերսանտը պայթեցնում է կամուրջը, որը միշտ մարդաշատ է, ուստի մեծ թվով մարդիկ մահանում են: Այս դեպքում մարդկանց կյանքից զրկելը ոչ դիվերսանտի նպատակն է, ոչ էլ նպատակին հասնելու միջոց (կամուրջը պայթեցվում է պայթուցիչ սարքը գործի դնելով և ոչ թե մարդկանց կյանքից զրկելով), սակայն դիվերսանտը նախատեսում է մարդկանց մահվան անխուսափելիությունը:

Ինչ վերաբերում է նյութական հանցակազմերով հանցագործություններում

անուղղակի դիտավորության դրսևորմանը, ապա, ի տարբերություն ուղղակի դիտավորության, անուղղակի դիտավորության դեպքում վտանգավոր հետևանքները անձի ոչ նպատակն են, ոչ նպատակին հասնելու միջոց են, ոչ էլ անխուսափելի են: Օրենքը նշում է այն մասին, որ անուղղակի դիտավորության դեպքում անձի համար միևնույն է՝ հետևանքները կառաջանան, թե ոչ: Օրինակ՝ ամայի փողոցում, ուշ գիշերով, 40 աստիճան սառնամանիքի պայմաններում հանցավորը հափշտակում է անցորդի հագուստը, նրան մերկ թողնելով: Այդ դեպքում հանցավորի համար միևնույն է՝ անցորդը կմահանա սառչելու հետևանքով, թե նրան կօգնեն պատահական անցորդները, եթե այդպիսին լինեն:

Անուղղակի դիտավորությունը բնորոշելիս օրենքը հստակ նշում է այդ դեպքում վտանգավոր հետևանքների առաջացման իրական հնարավորությունը նախատեսելու մասին: Սրանով անուղղակի դիտավորությունը տարբերվում է հանցավոր ինքնավստահությունից: Հանցավոր ինքնավստահության բնորոշման մեջ նույնպես նշվում է վտանգավոր հետևանքները նախատեսելու հնարավորության մասին, սակայն առանց «իրական» բառն օգտագործելու: Բանն այն է, որ անուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է, որ եթե վտանգավոր հետևանքներն առաջանան, ապա դրա պատճառը կոնկրետ իր արարքն է լինելու, իսկ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը նախատեսում է վտանգավոր հետևանքների առաջացման ոչ թե իրական, այլ վերացական հնարավորությունը, այսինքն՝ անձը գիտակցում է, որ իր արարքին նման արարքներից վտանգավոր հետևանքներ կարող են առաջանալ, սակայն կոնկրետ իր արարքից տվյալ իրադրությունում դրանք չեն առաջանալու:

Անուղղակի դիտավորության որոշ դեպքերում անձը կարող է հույս ունենալ, որ իր արարքից վտանգավոր հետևանքներ չեն առաջանա, սակայն հույսը դնում է պատահականության վրա: Օրինակ՝ անձը, առանց սպանության նպատակի, մեկ ուրիշին գցում է լեռնային վարար գետը՝ նախատեսելով վերջինիս մահվան հնարավորությունը, սակայն հույսը դնելով պատահականության վրա (կբռնվի ծառի ճյուղից, լողալով դուրս կգա ափ և այլն)՝ կարծում է, թե այդ հետևանքը կարող է և չառաջանալ:

Օրենքը խոսում է նաև քրեական իրավունքի տեսությանը հայտնի երկրնտրելի և չկոնկրետացված դիտավորության դեպքերի մասին: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ անձը նախատեսում է մի քանի վտանգավոր հետևանքներից որևէ մեկի առաջացման հնարավորությունը (օրենքը հիմնվում է տեսության մեջ առաջ քաշված այն դրույթի վրա, որ երկրնտրելի և չկոնկրետացված դիտավորությունները իրենց իրավական բնույթով նույնն են): Մեկնաբանվող նորմն ամրագրում է հանրահայտ այն դրույթը, համաձայն որի՝ նման դեպքերում անձի արարքը պետք է որակել ըստ փաստացի առաջացած հետևանքների: Օրինակ՝ անձը մուրճով հարվածում է գոհի գլխին՝

նախատեսելով կամ մահվան կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու հնարավորությունը: Ընդ որում, վտանգավոր հետևանքներից երկուսն էլ ընդգրկվում են անձի նպատակների մեջ կամ նպատակին հասնելու միջոց են: Կամ՝ հագուստից գողություն կատարող գրպանահատի համար միննույն է թե որքան գումար կա այնտեղ: Նման դեպքերում արարքը պետք է որակել ըստ փաստացի առաջացած հետևանքի: Առաջին դեպքում, եթե մուրճով հարվածի հետևանքով տուժողը մահանա, ապա արարքը կորակվի որպես սպանություն, իսկ եթե առողջությանը ծանր վնաս պատճառվի, ապա՝ առողջությանը ծանր վնասի պատճառում: Գրպանահատի պարագայում գողությունը պետք է որակվի փաստացի հափշտակածի չափով:

Այլ է իրադրությունը այն դեպքերում, երբ հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված հետևանքներից որևէ մեկը չի առաջանում կամ ընդհանրապես ոչ մի հետևանք չի առաջանում, ապա արարքը, մեր օրինակում, պետք է որակել որպես հասարակ գողության փորձ:

Պետք է նշել, որ դիտավորության և անզգուշության բնորոշումները շատ նման են Նյու-Յորքի քրեական օրենսգրքում առկա ձևակերպումներին, որտեղ առանձնացվում են մեղավորությամբ կատարվող արարքի հետևյալ տեսակները. նպատակով, ակնհայտորեն կամ գիտակցված, անզգուշություն և անփութություն<sup>34</sup>:

Օրենքը կարգավորում է նաև ծանրացնող հանգամանքները մեղսագրելու հարցը: Օրենքի համաձայն՝ դիտավորյալ հանցագործության՝ օրենսգրքով նախատեսված ծանրացնող հանգամանքները մեղսագրվում են անձին միայն այն դեպքում, երբ նա գիտակցել է այդ հանգամանքները: Խոսքը վերաբերում է հանցակազմի ծանրացնող հանգամանքներին՝ հանցագործության առարկա, եղանակ, տեղ, ժամանակ և այլն: Օրինակ՝ սպանության ծանրացնող հանգամանք է այլ անձի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարելը կամ հղի կնոջ սպանությունը: Այս ծանրացնող հանգամանքները կարող են մեղսագրվել անձին միայն այն դեպքում, երբ նա գիտակցում է դրանց առկայությունը: Դրանով է պայմանավորված այն, որ քրեական նոր օրենսգրքում բացակայում է նախկին օրենսգրքին հայտնի «ակնհայտ» հասկացությունը, որը կիրառվում էր որոշ հանցակազմերի հատկանիշների կամ ծանրացնող հանգամանքների կապակցությամբ՝ այն փաստն ամրագրելու նպատակով, որ հանցավորը գիտակցել է դրանց առկայությունը: Մակայն այս հասկացությունը որոշ դեպքերում վեճերի տեղիք էր տալիս: Հարց էր առաջանում, թե արդյոք «ակնհայտ» նշանակում է միայն աչքով տեսանելի, թե խոսքը նաև տվյալ հատկանիշի առկայությունն այլ եղանակներով գիտակցելու մասին է: Քրեական իրավունքում միանշանակ գործում է այն սկզբունքը, որ դիտավորյալ հանցագործության այն հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, կարող են մեղսագրվել անձին

<sup>34</sup> St' u Уголовное законодательство зарубежных стран. М. 1999, էջ 103-104:

միայն այն դեպքում, երբ նա գիտակցում է դրանց առկայությունը, ընդ որում, անկախ նրանից՝ դրանք աչքով տեսանելի են, թե ոչ: Այս տեսակետից «ակնհայտ» ոչ հստակ հասկացության կիրառումն օրենսդրության մեջ ավելորդ է: Մեկնաբանվող նորմը հստակ ուղեցույց է իրավակիրառողի համար այն հարցում, թե հանցակազմի հատկանիշները, այդ թվում՝ ծանրացնող հանգամանքները, երբ կարող են մեղսագրվել անձին: Այսպես, հղի կնոջ սպանությունն անձին կմեղսագրվի ոչ միայն այն դեպքում, երբ կնոջ հղի լինելը տեսանելի է նրա ֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետևանքով, այլև այն դեպքում, երբ ֆիզիոլոգիական առանձնահատկություններ դեռևս չկան և կնոջ հղի լինելը աչքով տեսանելի չէ, սակայն հանցավորն այդ մասին գիտի այլ աղբյուրներից (բժշկից, հենց իրենից՝ կնոջից և այլն):

Օրենքում որպես ծանրացնող հանգամանք են նախատեսվում անզգուշությամբ հետևանքներ առաջացնելը: Սա, այսպես կոչված, քրեական նախկին օրենսգրքին հայտնի մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունն է: Քրեական նոր օրենսգիրքը հրաժարվել է «մեղքի երկու ձև» հասկացությունից այն պատճառով, որ մեղքն ավելին է քան դիտավորությունը և անզգուշությունը, չի սահմանափակվում դրանցով: Նման դեպքերում պարզապես գործ ունենք բարդեցված հանցակազմի հետ, որտեղ միաժամանակ առկա է ն՝ դիտավորությունը, և՛ անզգուշությունը, այսինքն՝ բարդեցված է հանցակազմի սուբյեկտիվ կողմը: Այսպիսի հանցակազմերը կարող են ունենալ երկու դրսևորում:

Առաջին տեսակը մեկից ավելի հետևանք նախատեսող նյութական հանցակազմերն են: Ընդ որում, հետևանքներից մեկը հանդիսանում է առավել ծանր և հիմնական հանցակազմը ծանրացնող հանգամանքներով զուգորդված հանցակազմի հատկանիշի դեր է կատարում: Նման հանցակազմի օրինակ կարող են հանդիսանալ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս հասցնելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահը (նոր քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մաս, 17-րդ կետ), դիտավորությամբ գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացրել է պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկայի ոչնչացում կամ վնասում (նոր քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 3-րդ մաս, 2-րդ կետ) և այլն:

Բարդեցված սուբյեկտիվ կողմ ունեցող հանցակազմի երկրորդ տեսակը բնութագրական է այն ձևական հանցակազմերին, որոնցում հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսվում են որպես հիմնական հանցակազմը ծանրացնող հանգամանք: Օրինակ՝ նոր քրեական օրենսգրքի 331-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում ռադիոակտիվ կամ միջուկային նյութ ապօրինի պատրաստելու, ձեռք բերելու, պահելու, իրացնելու, օգտագործելու, փոխադրելու, առաքելու, ոչնչացնելու կամ վնասելու, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը՝ նույն արարքի

համար, որն անզուգուծությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում, առանձնապես խոշոր չափի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք:

Այն հանգամանքը, որ նշված հանցակազմերում միաժամանակ առկա է ն' դիտավորությունը, ն' անզուգուծությունը, անհրաժեշտություն է առաջանում պարզելու, թե ընդհանուր առմամբ մեղքի որ ձևով են կատարված նշված հանցանքները: Օրենսդիրը լուծել է այս խնդիրը՝ ուղղակիորեն նշելով, որ նման հանցագործությունները պետք է համարել դիտավորությամբ կատարված:

Փոփոխություն է առկա հանցավոր ինքնավստահության բնորոշման մեջ:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքն օգտագործում է ոչ թե «հույս է ունենում, որ հետևանքները կկանխվեն», այլ «համոզված է» հասկացությունը: Բանն այն է, որ հույսը միշտ ռիսկ է ենթադրում: Այսինքն՝ եթե նշվում է, որ անձը հույս ունի, թե հետևանքները կկանխվեն, ապա դա նշանակում է, որ անձը գիտակցում է, որ հնարավոր է նաև վտանգավոր հետևանքների առաջացումը, որովհետև հույսը կարող է և չարդարանալ: Նման իրադրությունը բնութագրական է ոչ թե հանցավոր ինքնավստահությանը, այլ անուղղակի դիտավորության որոշ դեպքերին: Իրականում հանցավոր ինքնավստահության ժամանակ անձը համոզված է լինում, որ վտանգավոր հետևանքները չեն առաջանալու, հակառակ դեպքում նա չէր կատարի արարքը:

Հանցավոր անփութության հարցում որևէ փոփոխություն չի կատարվել:

Քրեական նոր օրենսգրքում սահմանված են նաև **փաստական սխալի** դեպքում արարքի որակման կանոնները: Քրեական նոր օրենսգրքում այս նորմի սահմանումը նորույթ է: Փաստական սխալի դեպքում հանցագործությունների որակման կանոնները նախկինում սահմանվում էին միայն տեսության մեջ և արարքի որակումը փաստորեն որևէ օրենսդրական հիմք չունեի, ինչը չէր կարող ապահովել նման դեպքերում արարքների որակման միասնականությունը: Քրեական նոր օրենսգրքը վերացնում է այդ բացը:

Փաստական սխալի դեպքում, ի տարբերություն իրավաբանական սխալի, արարքը որակվում է ըստ անձի դիտավորության ուղղվածության: Այս կանոնն իր արտացոլումն է գտել քրեական նոր օրենսգրքում:

Օրենքը սահմանում է հանցագործությունների որակման համար կարևոր նշանակություն ունեցող դրույթ, համաձայն որի՝ եթե անձը չի գիտակցում իր արարքի փաստական հանգամանքները, սակայն պարտավոր էր և կարող էր գիտակցել, ապա ենթակա է պատասխանատվության հանցանքն անզուգուծությամբ կատարելու համար, եթե դա քրեական օրենսգրքով նախատեսված է: Սա նշանակում է, որ դիտավորյալ հանցագործությունների դեպքում հանցագործության որակման և անձի արարքում

կոնկրետ հանցակազմի առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է, որ անձը գիտակցի իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են: Ընդ որում, խոսքը դիտավորյալ հանցագործությունների մասին է: Քրեական օրենսգրքի համաձայն՝ հանցանքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք տվյալ հանցակազմի հատկանիշ են: Հանցակազմի հատկանիշները կարող են բնութագրել հանցագործության տարբեր տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Եթե անձը չի գիտակցում նշված տարրերը բնութագրող հատկանիշներից որևէ մեկը, ապա տարբեր տարրերի հետ կապված արարքի որակումը կարող է ունենալ իր առանձնահատկությունները: Այսպես, եթե անձը մեկ ուրիշի հետ նախնական համաձայնության գալով ձեռնամուխ է լինում հանցանքի կատարմանը, չգիտակցելով, որ իր հետ համատեղ հանցանք կատարողը հանցագործության սուբյեկտ չէ, ապա արարքը պետք է որակել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցանք կատարելու փորձ, նույնիսկ այն դեպքում, երբ հանցագործության օբյեկտիվ կողմը լիովին իրականացվել է: Կամ, եթե անձը ցանկանում է թմրամիջոց վաճառել, սակայն պարզվում է, որ վաճառված նյութը թմրամիջոց չէ, ապա նրա արարքը պետք է որակել որպես ապօրինաբար թմրամիջոց իրացնելու փորձ: Սակայն հնարավոր են իրավիճակներ, երբ անձի դիտավորությունն ուղղված չի լինում հանցանք կատարելուն, բայց սխալի հետևանքով առաջանում են հանցավոր հետևանքներ, կամ կատարած արարքը որևէ հանցակազմի հատկանիշներ է պարունակում: Օրինակ՝ անձը հրապարակում է տեղեկություններ՝ չգիտակցելով, որ դրանք պետական գաղտնիք են: Նման դեպքերում անձի արարքը պետք է որակել որպես անզգուշությամբ կատարված հանցանք, եթե ապացուցվի, որ նա պարտավոր էր և կարող էր գիտակցել, որ հրապարակվող տեղեկությունները պետական գաղտնիք են համարվում: Փաստական սխալի նման դեպքերում անձի արարքը անզգուշությամբ կատարվող հանցանք որակելու համար անհրաժեշտ է մի կարևոր պայման, այն է՝ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված տվյալ արարքն անզգուշությամբ կատարելու համար: Բերված օրինակում, անձը ենթակա է քրեական պատասխանատվության քանի որ քրեական օրենսգրքը պատասխանատվություն նախատեսում է պետական գաղտնիքն անզգուշությամբ հրապարակելու համար: Մինչդեռ այն դեպքերում, երբ տվյալ արարքն անզգուշությամբ կատարելու համար քրեական օրենքը պատասխանատվություն չի նախատեսում, անձը չպետք է քրեական պատասխանատվության ենթարկվի: Օրինակ՝ անձն ապօրինաբար սառը զենք է կրում, սակայն ապացուցվում է, որ այդ զենքը նրա կողմից այնպիսի պայմաններում էր ձեռք բերվել, որ նա չգիտեր դրա ապօրինի լինելու մասին (զենքը նվիրել է իր պաշտոնյա ընկերը՝ հավատացնելով, որ զենքն օրինական է, կամ զենքը գնել է հանրային առևտրի

կենտրոնից, որտեղ այն ազատ վաճառվում էր): Նման դեպքերում, եթե նույնիսկ անձը պարտավոր էր և կարող էր գիտակցել զենքի ապօրինի լինելու փաստը, նա չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, որովհետև սառը զենքն անզգուշությամբ ապօրինաբար կրելու համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէ (եթե ապօրինությունը նախատեսված է որպես հանցակազմի հատկանիշ, ապա դա չգիտակցելը ոչ թե իրավաբանական, այլ փաստական սխալ է, որովհետև հնարավոր է, որ անձը գիտի տվյալ արարքն ապօրինաբար կատարելու համար քրեական պատասխանատվության մասին, սակայն տվյալ իրադրությունում չի գիտակցում, որ իր արարքն ապօրինի է):

Օրենքը սահմանում է նաև հանցակազմի ծանրացնող հանգամանքների կապակցությամբ փաստական սխալի դեպքերը: Համաձայն օրենքի՝ եթե դիտավորությամբ հանցանք կատարող անձը կարծում է, թե իր արարքում առկա է օրենքով նախատեսված ծանրացնող հանգամանք, սակայն դա բացակայում է, ապա արարքը որակվում է որպես ծանրացնող հանգամանքով հանցագործության փորձ, իսկ եթե դիտավորությամբ հանցանք կատարող անձը կարծում է, թե իր արարքում առկա չէ օրենքով նախատեսված ծանրացնող հանգամանք, սակայն դա առկա է, ապա արարքը որակվում է որպես առանց ծանրացնող հանգամանքի հանցագործություն: Առաջին իրադրության օրինակ կարող է լինել այն, երբ անձը սպանում է կնոջը, կարծելով թե նա հղի է, սակայն պարզվում է, որ կինը հղի չէր: Այս դեպքում անձի արարքը պետք է որակել որպես հղի կնոջ սպանության փորձ, քանի որ դիտավորությունն ուղղված էր հղի կնոջ սպանությանը: Երկրորդ իրադրության օրինակ կարող է լինել այն, երբ անձը սպանելով կնոջը չի գիտակցում, որ նա հղի է, սակայն հետագայում պարզվում է, որ կինը հղի էր: Այս դեպքում արարքը պետք է որակել որպես առանց ծանրացնող հանգամանքի հասարակ սպանություն: Այս իրադրությունն օրենսդրական կարգավորում է ստացել նաև քրեական նոր օրենսգրքում, համաձայն որի՝ դիտավորյալ հանցագործության՝ քրեական օրենսգրքով նախատեսված ծանրացնող հանգամանքները մեղսագրվում են անձին միայն այն դեպքում, երբ նա գիտակցել է այդ հանգամանքները:

Օրենքը կարգավորում է հանցագործության օբյեկտի մեջ փաստական սխալի դեպքում արարքի որակման հարցերը: Համաձայն դրա՝ եթե անձի դիտավորությունն ուղղված է խիստ պաշտպանվող օբյեկտը վնասելուն, սակայն իրականում վնասվում է մեղմ պաշտպանվող օբյեկտ, ապա արարքը որակվում է որպես դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձ: Եթե սխալմամբ վնաս է պատճառվում համարժեք օբյեկտի, ապա արարքը որակվում է ըստ փաստացի առաջացած հետևանքի:

Առաջին իրադրության օրինակ կարող է լինել հետևյալ դեպքը: Նոր քրեական օրենսգրքի 493-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու

իրավունքների պաշտպանի կամ նրա մերձավորի կամ խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու համար, որը կապված է մարդու իրավունքների պաշտպանի ծառայողական գործունեության հետ: Անձը, մարդու իրավունքների պաշտպանի ծառայողական գործունեության հետ կապված, ցանկանում է նրա մերձավորի առողջությանը վնաս պատճառել, սակայն սխալմամբ վնաս է պատճառում մեկ այլ անձի, որը ոչ մի կապ չունի մարդու իրավունքների պաշտպանի հետ: Տվյալ դեպքում նրա արարքը պետք է որակել որպես 493-րդ հոդվածով նախատեսված հանցագործության փորձ, իսկ այն հանգամանքը, որ իրական վնաս է պատճառվել մեկ այլ անձի, պետք է հաշվի առնվի պատիժ նշանակելիս:

Երկրորդ իրադրության օրինակ կարող է լինել այն դեպքը, երբ անձը խանդի շարժառիթով ցանկանալով սպանել Ա.-ին, մթության մեջ չկողմնորոշվելով, նրա տեղն է դնում Բ.-ին ու սխալմամբ սպանում է վերջինիս: Այս դեպքում փաստական սխալն արարքի որակման վրա ոչ մի ազդեցություն չունի, որովհետև արարքի քրեաիրավական էությունը չի փոխվում (երկու դեպքում էլ հասարակ սպանություն է), ուստի արարքը պետք է որակել որպես Բ.-ի սպանություն:

Օրենքով կարգավորվում են այն իրադրությունները, երբ անձի դիտավորությամբ ընդգրկված հետևանքներն առաջանում են, սակայն ոչ թե անձի արարքից, այլ ուրիշ պատճառներով: Տվյալ կարգավորման համաձայն՝ եթե անձի դիտավորության մեջ ընդգրկված վտանգավոր հետևանքներն առաջանում են ոչ թե անձի արարքից, այլ ուրիշ պատճառներով, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար: Օրինակ՝ անձը ցանկանում է սպանություն կատարել և գոհի կերակրի մեջ թույն է լցնում, սակայն վերջինս մահանում է, ոչ թե թունավորվելուց, այլ կերակուրը շնչափողին կանգնելու հետևանքով շնչահեղձ լինելուց: Տվյալ դեպքում հանցավորը փաստորեն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում իր արարքով իրագործել դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը, ուստի պետք է պատասխանատվության ենթարկվի սպանության փորձի համար: Այլ է իրադրությունը այն դեպքերում, երբ վտանգավոր հետևանքներն առաջանում են անձի արարքից, սակայն ոչ թե նրա դիտավորությամբ ընդգրկված, այլ ուրիշ գործոնների հետևանքով: Օրինակ՝ անձը ցանկանալով սպանություն կատարել, գոհին զցում է բարձր կամուրջից այն դիտավորությամբ, որ վերջինս կընկնի ջուրն ու կխեղդվի, սակայն գոհը գլուխը հարվածում է կամրջի հիմնապատին և մահանում է մինչև ջուրն ընկնելը: Տվյալ դեպքում արարքը պետք է որակել որպես ավարտված սպանություն, որովհետև մահվան պատճառը հանցավորի արարքն էր: Այս դեպքում նշանակություն չունի այն, որ մահը վրա հասավ ոչ թե հանցավորի մտադրության մեջ եղած, այլ մեկ ուրիշ պատճառական մեխանիզմով: Բանն այն է, որ տվյալ դեպքում առկա են սպանությունը հանցավորին



մեղսագրելու բոլոր անհրաժեշտ և բավարար պայմանները՝ հանցավորի դիտավորությունը՝ ուղղված անձին կյանքից զրկելուն, ինչպես նաև նրա արարքի և զոհի մահվան միջև պատճառական կապը:

Օրենքի համաձայն՝ էթե անձը կարծում է, թե իր արարքում առկա են քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված ծանրացնող հանգամանքներ, սակայն դրանցից մեկը կամ մի քանիսն առկա չեն, ապա արարքը որակվում է որպես այն ծանրացնող հանգամանքով ավարտված հանցագործություն, որն առկա է անձի արարքում: Օրինակ՝ անձը շահադիտական դրդումներով սպանում է հղի կնոջ, բայց հետագայում պարզվում է, որ կինը հղի չէր: Այդ դեպքում հանցավորի արարքը կորակվի միայն որպես շահադիտական դրդումներով սպանություն:

Եթե անձի դիտավորությունն ուղղված է խիստ պաշտպանվող օբյեկտը վնասելուն, սակայն իրականում վնասվում է մեղմ պաշտպանվող օբյեկտ, ապա արարքը որակվում է որպես դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձ: Օրինակ՝ անձը ցանկանում է ծանր վնաս պատճառել առողջությանը, բայց իրականում միջին ծանրության վնաս է պատճառում: Անձը պատասխանատվության կենթարկվի առողջությանը ծանր վնաս պատճառելու փորձի համար:

Եթե սխալմամբ վնաս է պատճառվում համարժեք օբյեկտի, ապա արարքը որակվում է ըստ փաստացի առաջացած հետևանքի:

Եթե անձը կատարում է արարք, սակայն իր դիտավորության մեջ ընդգրկված վտանգավոր հետևանքներն առաջանում են ոչ թե նրա արարքից, այլ ուրիշ պատճառներով, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար:

Եթե անձի դիտավորության մեջ ընդգրկվածից բացի, առաջանում են նաև այլ հետևանքներ, ապա անձն այդ հետևանքների համար քրեական պատասխանատվության է ենթարկվում միայն այն դեպքում, երբ դրանց նկատմամբ առկա է անզգուշություն:

**Նոր օրենսգրքով մեղքի ինստիտուտի հետ է առնչվում** ակտիվ, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալի ազդեցության հետևանքով ոչ սթափ (հարբած) վիճակում քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը կատարած անձի քրեական պատասխանատվությունը: Այս ինստիտուտը, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, ավելի մանրամասն է կարգավորված: Քրեական նախկին օրենսգրքով խոսվում էր միայն այն մասին, որ ակտիվ, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարած անձը

քրեական պատասխանատվությունից չի ազատվում, որ ակոհողամուլի, թմրամուլի կամ թունամուլի կողմից հանցանք կատարելու դեպքում դատարանը պատժի հետ միաժամանակ կարող է նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, եթե այդ հակման պատճառով առկա է նրա կողմից նոր հանցագործություն կատարելու վտանգը: Քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ ակոհողի, թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութի, դրանց պատրաստուկի կամ դրանց համարժեք նյութի (անալոգի) ազդեցության հետևանքով ոչ սթափ (հարբած) վիճակում հանցանք կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության:

Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքով, խաբեությամբ, ինչպես նաև անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով ոչ սթափ (հարբած) վիճակի հասցված լինելը հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է: Եթե նույն եղանակներով ոչ սթափ (հարբած) վիճակի հասցված անձը զրկվել է իր արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ իր արարքը ղեկավարելու հնարավորությունից, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Ինչպես տեսնում ենք հարբածության տարբեր իրադրություններում, կապված անձի վարքագծային առանձնահատկությունների և դրա հետևանքով մեղքի առկայության, դրա աստիճանի հետ, անձի քրեական պատասխանատվության հարցը տարբեր կերպ է լուծվում:

Ոչ սթափ (հարբած) վիճակ է համարվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված ոչ սթափ վիճակը:

## Գլուխ 6

### ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Քրեական նոր օրենսգրքում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ, որոնց էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է կատարել համեմատական վերլուծություն: Կատարված փոփոխությունները կրում են համակարգային և ինստիտուցիոնալ բնույթ և վերաբերելի են գրեթե բոլոր հոդվածներին և իրավակարգավորումներին: Նախկին և նոր իրավակարգավորումների «կոմպարատիվիստիկ» վերլուծությունը կարող է հստակություն և որոշակիություն հաղորդել կատարված փոփոխությունների բնույթին, բացահայտել դրանց նպատակը, ինչպես նաև վեր հանել այն հիմնահարցերը և խնդիրները, որոնք կարող են ծագել իրավակիրառ գործունեության ընթացքում: Այս լույսի ներքո՝ անհրաժեշտ է քննարկել քրեական պատասխանատվությունը բացառող մի շարք հանգամանքների և քրեական նախկին օրենսգրքով նախատեսված՝ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների հարաբերակցությունը, վեր հանել դրանց տարբերությունները, ընդգծել կատարված փոփոխությունները, բացահայտել դրանց իմաստը և նպատակը:

Հիմնական փոփոխությունը, որը կատարվել է այս հանգամանքների մեջ այն է, որ այստեղ ընդգրկվել են այն բոլոր հանգամանքները, որոնք թեկուզև արտաքնապես նման են հանցագործությանը, բայց տարբեր պատճառներով հանցագործություն չեն համարվում. մի դեպքում բացակայում է մեղքը, մեկ այլ դեպքում՝ արարքի հակաիրավականությունը:

Քրեական նախկին օրենսգրքի նման, քրեական նոր օրենսգրքում պահպանվել են քրեական պատասխանատվությունը բացառող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ անմեղսունակությունը, առանց մեղքի վնաս պատճառելը, **քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը նյարդահոգեկան ծանրաբեռնվածության վիճակում: Բայց, ի տարբերություն** քրեական նախկին օրենսգրքի դրանք նախատեսվել են քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների մեջ:

Ինչ վերաբերում է անմեղսունակությանը, ապա այդ մասին արդեն նշվել է հանցագործության սուբյեկտի մասին խոսելիս:

Առանց մեղքի վնաս պատճառելը ձևակերպված է հետևյալ կերպ: Քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ «Քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության այն դեպքում, երբ չի գիտակցել իր արարքի հակաիրավականությունը և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել կամ չի նախատեսել իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և տվյալ իրադրությունում պարտավոր չէր կամ չէր կարող նախատեսել դա»: Թե, երբ անձը չի գիտակցում և չէր կարող

գիտակցել իր արարքի հակաիրավականությունը, նշված է մեղքը մեկնաբանելիս:

Որոշակի փոփոխություններ է կրել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը նյարդահոգեկան ծանրաբեռնվածության վիճակում: Նախ, այն նախատեսվել է առանձին հոդվածով: Քրեական նախկին օրենսգրքում այն նախատեսված էր առանց մեղքի վնաս պատճառելը կարգավորող հոդվածում: Երկրորդ՝ այս ինստիտուտը որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Այս ինստիտուտը կարգավորող հոդվածում խոսքը ոչ թե այն մասին է, որ անձը չի կարողանում կանխել հանրորեն վտանգավոր հետևանքները ծայրահեղ իրադրությանը կամ նյարդահոգեկան ծանրաբեռնվածությանն իր հոգեֆիզիոլոգիկան հատկանիշների անհամապատասխանության պատճառով, այլ միայն նյարդահոգեկան ծանրաբեռնվածության հետևանքով չէր կարող կանխել դրանց առաջացումը: Օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար բավական է նրա նյարդահոգեկան ծանրաբեռնվածությունը: Միևնույն ժամանակ օրենքը նշում է, որ եթե անձը, նախատեսելով վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, նյարդահոգեկան ծանրաբեռնվածության հետևանքով չի կարողացել կանխել դրանք, սակայն ինքն է դրել իրեն այդ վիճակի մեջ կամ տվյալ իրադրությունում, նախատեսելով վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, կարող էր ձեռնպահ մնալ գործողությունը կամ անգործությունը կատարելուց, ապա ենթակա է քրեական պատասխանատվության:

### ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիտարկենք **անհրաժեշտ պաշտպանության** ինստիտուտի նոր իրավակարգավորման յուրահատկությունները: Քրեական նախկին օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում»:

Քրեական նոր օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «*Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը*, որն արարքը կատարել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ *այլ անձի* կյանքը, առողջությունը, իրավունքները,

**ազատությունները, օրինական շահերը, հասարակության կամ պետության օրինական շահերը սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգությունից** կամ դրա իրական սպառնալիքից ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում»:

Առաջին հայացքից միմյանց բավականաչափ նման այս հասկացությունների մեջ առկա են էական տարբերություններ: Նախկին իրավակարգավորմամբ նշվում է՝ «(...) Հանցագործություն չի համարվում այն գործողությունը (...), սակայն փաստն այն է, որ գործողությունն ինքնին չի էլ կարող համարվել հանցագործություն: Հանցանքը միմյանց հետ օրգանապես փոխկապակցված տարրերի և հատկանիշների ամբողջություն է և միայն գործողությանը վերագրել այդ տարրերի համակցությունը սխալ է: Բացի դա, որքան էլ տարօրինակ կարող է հնչել, բայց որոշ, բացառիկ, դեպքերում անհրաժեշտ պաշտպանությունը կարող է իրականացվել նաև անգործությամբ, որպիսի հանգամանքը չպետք է անտեսվի օրենսդրի կողմից: Այս է պատճառը, որ քրեական նոր օրենսգրքում խոսվում է ոչ թե գործողության, այլ արարքի (գործողության կամ անգործության) մասին: Կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակում որոշակի հանրային բարիքներին վնաս պատճառելն իրականում ոչ թե արարքի հանցավորությունը բացառող հանգամանք է, այլ քրեական պատասխանատվությունը բացառող, որովհետև ոտնձգողին վնաս պատճառելը, ձևական առումով, պարունակում է հանցակազմի բոլոր հատկանիշները, և ճիշտ չէ նշել, որ այստեղ բացառվում է արարքի հանցավորությունը: Նման իրավիճակում, կախված իրավաչափության որոշակի պայմանները պահպանելու հանգամանքից, բացառվում է ոչ թե արարքի հանցավորությունը, այլ այն կատարող անձի քրեական պատասխանատվությունը: Այս հանգամանքը ևս արտացոլվել է քրեական նոր օրենսգրքում տեղ գտած իրավակարգավորմամբ, որտեղ նշվում է «(...) Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որն արարքը կատարել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում (...): Այս կարգավորումը որոշակի առումով համահունչ է ԳԴՀ քրեական օրենսգրքի 4-րդ գլխի § 32-ին, որի համաձայն՝ անձը, ով արարք է կատարում անհրաժեշտ պաշտպանության վիճակում, չի գործում հակաիրավական կերպով<sup>35</sup>: Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 122-5 հոդվածը ևս համանման իրավակարգավորում է նախատեսում՝ սահմանելով անհրաժեշտ պաշտպանության վիճակում արարք կատարած անձի քրեական պատասխանատվության ենթակա չլինելու հանգամանքը<sup>36</sup>:

ՀՀ քրեական նոր օրենսդրությունը, այս առումով, համահունչ է մի շարք

<sup>35</sup> Տե՛ս [https://www.uni-potsdam.de/fileadmin/projects/ls-hellmann/Forschungsstelle\\_Russisches\\_Recht/Neuaufgabe\\_der\\_kommentierten\\_StGB-%C3%9Cbersetzung\\_von\\_Pavel\\_Golovnenkov.pdf](https://www.uni-potsdam.de/fileadmin/projects/ls-hellmann/Forschungsstelle_Russisches_Recht/Neuaufgabe_der_kommentierten_StGB-%C3%9Cbersetzung_von_Pavel_Golovnenkov.pdf)

<sup>36</sup> Տե՛ս [https://yurist-online.org/laws/foreign/criminalcode\\_fr/doc-5-.pdf](https://yurist-online.org/laws/foreign/criminalcode_fr/doc-5-.pdf)

արտասահմանյան երկրներում առկա իրավակարգավորումներին և, ըստ էության, սահմանում է, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակը պետք է դիտարկել ոչ թե որպես արարքի հանցավորությունը բացառող, այլ դրա հակաիրավականությունը և, հետևաբար, նաև՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք: Կարևոր է նշել նաև, որ քրեական նոր օրենսգրքով խոսվում է անձի, հասարակության կամ պետության **օրինական** շահերի մասին: Մա ևս կարևոր դրույթ է, քանզի անհրաժեշտ պաշտպանության վիճակ չի կարող առաջանալ **սպօրինի** շահերի պաշտպանության պարագայում: Նոր իրավակարգավորմամբ ընդլայնվել է նաև պաշտպանվող օբյեկտների շարքը, որոնց մեջ, ի թիվս այլոց, նախատեսվել են նաև պաշտպանվող անձի կամ այլ անձի **ազատությունները**:

Բացի դա՝ նոր իրավակարգավորմամբ նշվում է «(...) **սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգությունից** (...)»: Այս ձևակերպումը ևս հույժ կարևոր է և արդիական, քանի որ անհրաժեշտ պաշտպանության վիճակ կարող է առաջանալ ոչ թե ցանկացած վտանգավոր ոտնձգության, այլ միայն այն դեպքում, երբ կատարվում է քրեական օրենսգրքով նախատեսված հակաիրավական արարք: Վարչական կամ քաղաքացիաիրավական իրավախախտումները ևս օժտված են հանրային վտանգավորության որոշակի աստիճանով, սակայն դրանց կատարման դեպքում անհրաժեշտ պաշտպանության վիճակ առաջանալ չի կարող: Նոր իրավակարգավորմամբ կատարվել է նաև եզրութաբանական շտկում, նշվել է «**այլ անձի**» եզրույթը՝ նախկին իրավակարգավորման «**մեկ այլ անձի**» եզրույթի փոխարեն:

Քրեական նախկին օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված էր. «Անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ»: Քրեական նոր օրենսգրքի 32-րդ հոդվածի 4-րդ մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում չի համարվում հակաիրավական ոտնձգություն կատարողին դիտավորությամբ կյանքից զրկելը, եթե տվյալ իրադրությունում **ոտնձգությունից պաշտպանվելը հնարավոր չէր ավելի թեթև վնաս պատճառելով, կամ պաշտպանվողը տվյալ իրադրությունում չի գիտակցել և չէր կարող գիտակցել ավելի թեթև վնաս պատճառելու հնարավորությունը**»: Հարկ է փաստել, որ նշված իրավակարգավորումների տարբերություններն ակնհայտ են: Նոր իրավակարգավորմամբ՝ ոտնձգողին կյանքից զրկելու իրավաչափության պայմանները խստացվել են: Այս իրավակարգավորումը համահունչ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի (Կյանքի իրավունքը) 2-րդ կետին, որով սահմանվում է. «Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

- ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,
- բ) օրինական ձեռքարկում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,
- գ) խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար»:

Չնայած՝ նոր իրավակարգավորմամբ ուղղակիորեն չի խոսվում կյանքից զրկելու բացարձակ անհրաժեշտության մասին, սակայն փաստվում է, որ դա պետք է լինի ոտնձգությունից պաշտպանվելու միակ հնարավոր տարբերակը, այսինքն՝ ավելի թեթև վնաս պատճառելով հնարավոր չէ կանխել ոտնձգությունը, կամ էլ որոշակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ պաշտպանվող անձը չպետք է գիտակցի այլ ճանապարհով պաշտպանվելու հնարավորությունը: Ըստ էության՝ այս իրավակարգավորումը փաստում է, որ ոտնձգողին կյանքից զրկելը պետք է պայմանավորված լինի «բացարձակ անհրաժեշտությամբ»: Պետք է նշել նաև, որ իրավաչափության պայմանների խստացմանը զուգընթաց, նոր օրենքը չի խոսում անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ դրա իրական սպառնալիքի մասին, քանի որ անհրաժեշտ պաշտպանության վիճակում, ոտնձգողը կարող է զրկվել կյանքից ոչ միայն կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելու կամ դրա իրական սպառնալիք ստեղծելու պարագայում, այլև այն դեպքերում, երբ ոտնձգում է անձի առողջության, սեռական ազատության կամ անձեռնմխելիության, ազատության և մի շարք այլ իրավական պաշտպանության ներքո գտնվող արժեքների և հասարակական հարաբերությունների դեմ:

Քրեական նախկին օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ **պետական** մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և պաշտոնեական դիրքից»: Քրեական նոր օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը գրեթե նույնությամբ վերարտադրում է նախկին իրավակարգավորումը, սահմանելով՝ «Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում՝ անկախ հակաիրավական ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ **իրավասու** մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից **կամ** պաշտոնեական դիրքից»: Առաջին հայացքից նույնանման այս սահմանումներն, այնուամենայնիվ, ունեն որոշակի տարբերություններ, որոնք հանգում են հետևյալին՝ նոր օրենքով խոսվում է ոչ թե **պետական մարմիններին**, այլ **իրավասու մարմիններին** դիմելու հնարավորության մասին: Այս առումով կատարվել է որոշակի հստակեցում, քանի որ անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի կիրառման ընթացքում խոսք

կարող է գնալ իրավապահ մարմիններին, այլ ոչ թե ցանկացած պետական մարմիններին դիմելու հնարավորության դիտարկման մասին: Քանի որ իրավապահ մարմինների և պետական ուժային կառույցների ամբողջական ցանկը, որոնց հնարավոր է դիմել հակաիրավական ոտնձգությունից պաշտպանվելու ընթացքում, հնարավոր չէ օրենսդրորեն սահմանել, կիրառվել է ավելի նախընտրելի մոտեցում՝ շեշտելով «իրավասու մարմին» եզրույթը: Կարևոր է նաև քրեական նոր օրենսգրքի համանման սահմանման մեջ «հատուկ պատրաստվածությունից կամ պաշտոնական դիրքից» ձևակերպման կիրառումը, որի պարագայում «կամ» շաղկապն ունի հույժ կարևոր նշանակություն, քանի որ նախկին իրավակարգավորմամբ ստացվում էր, որ այս բացառությունը վերաբերելի էր միայն այն պաշտոնատար անձանց, ովքեր ունեին հատուկ պատրաստվածություն:

Քրեական նախկին օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի հատուկ մասով»:

Քրեական նոր օրենսգրքը սահմանում է «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում է համարվում դիտավորությամբ ոտնձգողին այնպիսի վնաս պատճառելը, որը համաչափ չէ հակաիրավական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը և չի բխում պաշտպանվելու անհրաժեշտությունից (3-րդ մաս)»: Նոր իրավակարգավորումն ավելի հստակ է, բացի այդ՝ նախատեսվել է կարևոր դրույթ առ այն, որ հասցված վնասը կարող է սահմանազանցում համարվել, եթե չի բխում պաշտպանվելու անհրաժեշտությունից: Այսինքն՝ պաշտպանվելու ողջամիտ անհրաժեշտությունից բխող ցանկացած վնասի պատճառում (խոսքը մահ պատճառելու մասին չէ, քանի որ այդ առումով առկա է հատուկ կարգավորում) չի կարող դիտվել որպես սահմանազանցում: «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով» (5-րդ մաս): Ինչպես տեսնում ենք, քրեական նոր օրենսգրքն այս առումով որոշակի փոփոխությունների է ենթարկվել, իսկ քննարկվող պարբերությունները տրոհվել են և նախատեսվել են 32-րդ հոդվածի տարբեր մասերով: Անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի իրավաչափության պայմանները հանգամանալից վերլուծված են տեսական տարբեր աղբյուրներում, որոնցում արտահայտված են միմյանցից տարբերվող, հաճախ նաև իրարամերժ մոտեցումներ: Այս առումով հատկանշական է, որ քննարկվող իրավաչափության պայմաններին որոշակի անդրադարձ է կատարվել ՀՀ



Վճռաբեկ դատարանի կողմից Արտյոմ Հակոբյանի վերաբերյալ որոշմամբ<sup>37</sup>: Այսպես, նշված որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) [Ա]նհրաժեշտ պաշտպանությունը, որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, կարող է դրսևորվել այն իրավիճակում, երբ հանրորեն վտանգավոր ոտնձգությունից՝ ոտնձգողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանվում են անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը: Իսկ սեփական կյանքը, առողջությունը և իրավունքները պաշտպանելիս անհրաժեշտ պաշտպանությունը դրսևորվում է որպես մարդու հիմնարար իրավունք:

27. Անհրաժեշտ պաշտպանության իրավունքն ունի որոշակի սահմաններ: ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի մեկնաբանման հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենքով ամրագրված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում է միայն պաշտպանությունը իրավաչափ և հետևաբար՝ արարքի հանցավորությունը բացառող: Այսպես, անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններն են.

- ա) ոտնձգության հանրային վտանգավորությունը.
- բ) ոտնձգության առկայությունը.
- գ) ոտնձգության իրական լինելը,
- դ) վտանգ սպառնալը անձի, հասարակության, պետության շահերին.
- ե) վնաս հասցնելը միայն ոտնձգողին.
- զ) պաշտպանության համարժեքությունը ոտնձգությանը:

Առաջին պայմանից հետևում է, որ ոտնձգությունն օժտված է հանրային վտանգավորությամբ, եթե այն անձի, հասարակության, պետության շահերին կարող է էական վնաս հասցնել:

Երկրորդ պայմանի համաձայն՝ ոտնձգությունը համարվում է առկա այն դեպքում, երբ այն արդեն սկսվել է, ընթացքի մեջ է և չի ավարտվել, ինչպես նաև այն դեպքում, երբ առկա է ոտնձգությունը սկսելու իրական, անմիջական սպառնալիք: Ոտնձգության առկայության պայմանը ենթադրում է, որ անհրաժեշտ պաշտպանությունն անթույլատրելի է արդեն ավարտված ոտնձգության դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ վնաս պատճառողը չի գիտակցել ոտնձգության ավարտման փաստը: Վերջինիս դեպքում ոտնձգությունից առաջացած հուզմունքի պատճառով պաշտպանվողին կարող է թվալ, թե ոտնձգությունը դեռևս չի ավարտվել և անհրաժեշտ է պաշտպանվել: Նման դեպքերում, թեև պաշտպանությունն անժամանակ է (ուշացած է), այն այնուամենայնիվ, իրավաչափ է:

Երրորդ պայմանի իմաստով ոտնձգությունն իրական է, եթե այն իրոք կատարվում է

<sup>37</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արտյոմ Հակոբյանի գործով 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵԿԴ/0149/01/09 որոշումը:

և ոչ թե պաշտպանվողի երևակայության արդյունք է:

Չորրորդ պայմանի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանությունը ներառում է ոչ միայն սեփական, այլ նաև ուրիշ անձանց իրավունքների, ինչպես նաև հասարակության և պետության շահերի պաշտպանության դեպքերը: Ընդ որում, այլ անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունն իրականացնող անձը կարող է պաշտպանությունն իրականացնել սեփական նախաձեռնությամբ՝ առանց սպասելու, որ իրենից օգնություն խնդրեն:

Ըստ հինգերորդ պայմանի՝ անհրաժեշտ պաշտպանությունն իրականացվում է միայն ոտնձգողին վնաս հասցնելու միջոցով: Ընդ որում, անհրաժեշտ պաշտպանության իրավունքն անձին է պատկանում անկախ ոտնձգությունից խուսափելու, կամ այլ անձանց, պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, ինչպես նաև, անկախ անձի մասնագիտական կամ այլ հատուկ պատրաստվածությունից և ծառայողական դիրքից: Այլ կերպ՝ եթե անգամ հնարավորություն կա պաշտպանությունն իրականացնել այլ միջոցներով (օրինակ՝ փախչել, դիմել այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը), բայց պաշտպանություն իրականացնողը ընտրում է պաշտպանության այն ձևը, որը կապված է ոտնձգողին վնաս պատճառելու հետ, իրականացված պաշտպանությունը չի համարվի ոչ իրավաչափ:

Վեցերորդ պայմանը պաշտպանության համարժեքությունն է ոտնձգությանը: Անհրաժեշտ պաշտպանությունը համարժեք չէ ոտնձգությանը, եթե պաշտպանության և ոտնձգության միջև անհամապատասխանությունն ակնհայտ է, այսինքն՝ ոտնձգողին հասցվում է այնպիսի ծանր վնաս, որը տվյալ պայմաններում անկասկած արդարացված չէ: Ընդ որում, ոտնձգության և պաշտպանության միջև եղած անհամապատասխանությունը պետք է ակնհայտ լինի հենց իր՝ պաշտպանությունն իրականացնողի համար: Պաշտպանվողը պետք է գիտակցի, որ չափից դուրս մեծ վնաս է հասցնում ոտնձգողին, ինչն արդարացված չէ տվյալ իրադրությունում:

28. Անհրաժեշտ պաշտպանության համարժեքության գնահատման և որպես արդյունք՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման առկայության կամ բացակայության որոշման համար անհրաժեշտ է գնահատել ոտնձգության վտանգավորության աստիճանի և պաշտպանության միջև համապատասխանությունը:

Օրենքը չի պահանջում, որ պաշտպանվողը կիրառի ոտնձգողի կողմից կիրառվող միջոցներին հավասարազոր միջոցներ: Պաշտպանվողը կարող է գործադրել նաև առավել արդյունավետ միջոցներ:

Ոտնձգության և պաշտպանության միջոցների միջև համամասնության խնդիրը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝

ա) պաշտպանվող բարիքի արժեքավորությունը և այն վնասի չափը, որ կարող էր

հասցվել դրան,

բ) ոսնձգության ինտենսիվությունը ու հանկարծակիությունը,

գ) պաշտպանվողի և ոսնձգողի ֆիզիկական հնարավորությունները (սեռը, տարիքը, առողջական վիճակը, ֆիզիկական ուժը և այլն),

դ) ոսնձգողների և պաշտպանվողների քանակը,

ե) ոսնձգության իրադրությունը, տեղը, ժամանակը և այլն (...):

Զարգացնելով Արտյոմ Հակոբյանի գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Անուշավան Թորոսյանի վերաբերյալ որոշմամբ<sup>38</sup> արձանագրել է, որ. «(...) [Ա]նհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման օբյեկտիվ հատկանիշների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոսնձգության բնույթն ու վտանգավորությունը որոշվում են ոսնձգության օբյեկտի արժեքավորությամբ, ոսնձգության ինտենսիվությամբ, պաշտպանվողի և ոսնձգողի ֆիզիկական հնարավորություններով, նրանց քանակով, ոսնձգության իրադրությամբ և այլն: Ուստի, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ առկա է ակնհայտ (խիստ, էական) անհամապատասխանություն ոսնձգությամբ սպառնացող և պաշտպանվողի կողմից պատճառվող վնասների միջև:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով խոսքը սպառնացող և պատճառվող վնասների միջև առկա խիստ (էական) անհամապատասխանության մասին է: Այլ կերպ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումն առկա է այն դեպքում, երբ պաշտպանվողը կիրառել է պաշտպանության այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնց կիրառումն ակնհայտ կերպով չէր բխում ո՛չ ոսնձգության բնույթից և վտանգավորությունից, ո՛չ էլ իրադրությունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման օբյեկտիվ հատկանիշների առկայության կամ բացակայության հարցի քննարկման համար առաջին հերթին պետք է պարզել անհրաժեշտ պաշտպանության վիճակի առկայության հարցը: Այլ կերպ՝ անհրաժեշտ է առաջին հերթին պարզել ոսնձգության և պաշտպանության առկայության, ապա նոր միայն դրանց արդյունքում պատճառված վնասների համապատասխանության հարցը:

16. Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման սուբյեկտիվ հատկանիշների կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով:

<sup>38</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Անուշավան Թորոսյանի գործով 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0118/01/11 որոշումը:

*Անհրաժեշտ պաշտպանության վիճակում ուղղակի դիտավորությամբ գործելու պարագայում պաշտպանվողը՝*

*ա) գիտակցում է, որ ոտնձգությունից կարելի է պաշտպանվել ոտնձգողին նվազ ծանր վնաս պատճառելով,*

*բ) կանխատեսում է ոտնձգողին վնաս պատճառելու անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը,*

*գ) ցանկանում է վերոնշյալ հետևանքի առաջացումը:*

*Անհրաժեշտ պաշտպանության վիճակում անուղղակի դիտավորությամբ գործելու պարագայում պաշտպանվողը՝*

*ա) գիտակցում է, որ ոտնձգությունից կարելի է պաշտպանվել ոտնձգողին նվազ ծանր վնաս պատճառելով,*

*բ) կանխատեսում է ոտնձգողին վնաս պատճառելու հնարավորությունը,*

*գ) գիտակցաբար թույլ է տալիս վերոնշյալ հետևանքի առաջացումը կամ անտարբեր է դրա առաջացման նկատմամբ (...):»:*

Չնայած այն հանգամանքին, որ Վճռաբեկ դատարանի վերը ներկայացված վերլուծությունները ոչ ամբողջական են արտացոլում տեսության մեջ առավել տարածված անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտին վերաբերող հանրորեն վտանգավոր ոտնձգությանը, դրանից պաշտպանությանը, ինչպես նաև անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմանը վերաբերող իրավաչափության պայմանները, այնուամենայնիվ, այս մեկնաբանությունները պետք է դիտարկել դրական լույսի ներքո, քանզի դրանք միտված են միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը: Կարծում ենք, որ հետագայում, նոր իրավակարգավորումները կյանքի կոչելու և դրանց միասնական կիրառությունն ապահովելու ընթացքում Վճռաբեկ դատարանն առավել հանգամանալից անդրադարձ կկատարի այս ինստիտուտին:

Նախկին իրավակարգավորմամբ սահմանվում էր նաև հետևյալ դրույթը՝ «Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում չի համարվում և քրեական պատասխանատվության չի հանգեցնում զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրումը զինված անձի հարձակումից կամ անձանց խմբի հարձակումից պաշտպանվելու համար, ինչպես նաև ապօրինաբար և բռնությամբ բնակարան կամ այլ շինություն ներխուժելը կանխելու համար՝ անկախ ոտնձգողին պատճառած վնասի ծանրությունից» (42-րդ հոդված, 5-րդ մաս):

Քրեական նոր օրենսգիրքը նման իրավակարգավորում չի սահմանում: Նոր իրավակարգավորումն ավելի համապարփակ է և չի նախատեսում կոնկրետ իրավիճակներ և գործիքակազմ: Ինչպես նշվեց՝ քրեական նոր օրենսգրքի 32-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ոտնձգողին կյանքից զրկելու իրավաչափության պայմանները, որտեղ առանցքայինն այն հանգամանքն է, որ տվյալ իրադրությունում

նունձգությունից պաշտպանվելը հնարավոր չէ ավելի թեթև վնաս պատճառելով: Իսկ թե ի՞նչ միջոցներով կամ եղանակներով, որտե՞ղ և ի՞նչ պայմաններում կպատճառվի վնասը՝ էական չէ և կախված է կոնկրետ իրավիճակից:

Նախկին իրավակարգավորումն, այս առումով, որոշակի խնդրահարույց էր: Եթե բռնությամբ բնակարան ներխուժելը զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրմամբ կանխելը որևէ տարակուսանք չէր առաջացնում, ապա այլ շինությունների պարագայում՝ որոշակի խնդրահարույց իրավիճակներ կարող էին առաջանալ, օրինակ՝ պահակին հրելով (որն իր մեջ ևս բռնության տարրեր է պարունակում), անձը փորձում է մտնել անասնագոմի տարածք: Արդյո՞ք այս դեպքում զենքի կամ ցանկացած այլ միջոցների կամ առարկաների գործադրմամբ նրան ցանկացած վնաս (այդ թվում՝ մահ) պատճառելն իրավաչափ է: Հարկ է փաստել, որ նոր իրավակարգավորման պարագայում մոտեցումն այլ է: Ըստ էության, ցանկացած բռնությունից կարելի է պաշտպանվել զենքի կամ այլ միջոցների կամ առարկաների գործադրմամբ, ուղղակի պատճառված վնասը պետք է համաչափ լինի հակաիրավական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը և բխի պաշտպանվելու անհրաժեշտությունից ( 32-րդ հոդված, 3-րդ մաս):

Քրեական նոր օրենսգրքի 32-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Եթե տվյալ իրադրությունում պաշտպանվողը վախի, հուզմունքի, սթրեսի կամ այլ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների հետևանքով չի գիտակցել և չէր կարող գիտակցել, որ հակաիրավական ոտնձգությունը կամ դրա իրական սպառնալիքը բացակայում է, ապա վնաս պատճառող արարքը համարվում է անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված: Եթե պաշտպանվողը տվյալ իրադրությունում կարող էր գիտակցել, որ հակաիրավական ոտնձգությունը բացակայում է, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության անզգուշությամբ վնաս պատճառելու համար: Եթե տվյալ իրադրությունում պաշտպանվողը թույլ է տվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում, ապա ենթակա է քրեական պատասխանատվության անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ հանցանք կատարելու համար»:

Քրեական նախկին օրենսգրքում համաբնույթ իրավակարգավորումը բացակայում էր և նման իրավիճակներին գնահատական էր տրվում փաստական սխալի կանոններին համապատասխան: Մա զուտ դոկտրինալ, տեսական մոտեցում էր, ինչն իրավակիրառ պրակտիկայում չուներ միանշանակ ընկալում: Ինքնին հասկանալի է, որ տեսական տարբեր աղբյուրներում, տարբեր տեսաբանների աշխատություններում փաստական սխալը, դրա կանոնները, այս կամ այն իրավիճակներին վերաբերելիությունը մեկնաբանվում է տարբեր դիտանկյուններից, յուրովի և հաճախ տրամագծորեն միմյանցից տարբեր կերպով: Այս է պատճառը, որ միանշանակորեն դրական պետք է համարել օրենսդրական հստակ կարգավորման նախատեսումը, ինչը զերծ կպահի

իրավական պրակտիկան տարամեկնաբանություններից և թյուրըմբռնումներից:

Հարկ է նշել նաև, որ այս իրավակարգավորումը որոշակի ընդհանրություններ ունի ԳԴՀ քրեական օրենսգրքի § 33-ով նախատեսված դրույթի հետ, որի համաձայն՝ եթե կատարողը թույլ է տալիս անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում հուզմունքի, վախի կամ սարսափի ազդեցությամբ, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության<sup>39</sup>:

Քրեական նոր օրենսգրքով նախատեսվել է ևս մեկ իրավակարգավորում, որը բացակայում էր նախկին օրենսգրքում: Խոսքը վերաբերում է 32-րդ հոդվածի 7-րդ մասին, որով սահմանվում է. «Անհրաժեշտ պաշտպանության վիճակը բացակայում է, եթե տեղի է ունեցել անհրաժեշտ պաշտպանության սադրում, այսինքն՝ երբ անձին վնաս պատճառելու նպատակով պաշտպանվողը նրան դրդել է հակաիրավական ոտնձգություն կատարելու»: Անհրաժեշտ պաշտպանության սադրումը կամ պրովոկացիան այն իրավիճակն է, երբ անձը, ցանկանալով հաշվեհարդար տեսնել մեկ ուրիշի նկատմամբ, «հրահրում է» նրան հանրորեն վտանգավոր ոտնձգություն կատարելու և այդ ընթացքում, իբրև թե անհրաժեշտ պաշտպանություն իրականացնելով, վնաս է հասցնում վերջինիս: Այսպիսի դեպքերում հանրորեն վտանգավոր ոտնձգություն հրահրողը չի կարող արդարանալ անհրաժեշտ պաշտպանության վիճակով և ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով՝ դիտավորյալ հանցագործության համար<sup>40</sup>: Մինչ քրեական նոր օրենսգրքով վերոնշյալ դրույթի ամրագրումը, այս հարցը ևս լուծվում էր գուտ տեսական հայեցակարգերի և մեկնաբանությունների հիման վրա:

Նոր օրենքը չի կարգավորում նաև փոխադարձ կովի ժամանակ անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունները, ինչը ևս պետք է համարել բացթողում: Օրենսդրության ապագա զարգացումը և հետագա լրամշակումները պետք է միտված լինեն այս բացերի վերացմանը, չթողնելով այս բարդ իրավիճակների կարգավորումը գուտ տեսական մեկնաբանությունների կամ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների տիրույթում: Մասնավորապես, փոխադարձ կովի ընթացքում անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի առանձնահատկություններին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գոռ Ասատրյանի վերաբերյալ որոշմամբ<sup>41</sup>: Մույն որոշմամբ, մասնավորապես նշվել է, որ «(...)/Փոխադարձ կովն անձանց

<sup>39</sup> Տե՛ս [https://www.uni-potsdam.de/fileadmin/projects/lshellmann/Forschungsstelle\\_Russisches\\_Recht/Neuaufgabe\\_der\\_kommentierten\\_StGB-%C3%9Cbersetzung\\_von\\_Pavel\\_Golovnenkov.pdf](https://www.uni-potsdam.de/fileadmin/projects/lshellmann/Forschungsstelle_Russisches_Recht/Neuaufgabe_der_kommentierten_StGB-%C3%9Cbersetzung_von_Pavel_Golovnenkov.pdf)

<sup>40</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). /Ս.Առաքելյան, Ա.Գաբրիելյան, Հ.Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 320:

<sup>41</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գոռ Ասատրյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԿԴ3/0028/01/14 որոշումը:

Ֆիզիկական ընդհարումն է, որը կարող է սկսվել կողմերի՝ միմյանց միաժամանակ վնաս հասցնելով, ինչպես նաև այն դեպքում, երբ կռիվը սկսվում է կողմերից մեկի նախաձեռնությամբ, սակայն մյուս կողմն ընդունում է մարտահրավերը և ընդգրկվում կռվի մեջ: Փոխադարձ կռվի ժամանակ երկու կողմն էլ հանդես են գալիս ոտնձգողի դերում, դրսևորում ոչ իրավաչափ վարքագիծ, ասելության, վրեժի, զայրույթի կամ այլ շարժառիթներով փոխադարձ հարվածներ են հասցնում միմյանց՝ նպատակ ունենալով մեկը մյուսին վնաս պատճառելու:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը փաստում է, որ փոխադարձ կռվի ժամանակ, որպես կանոն, անհրաժեշտ պաշտպանության վիճակն անհնար է, քանի որ կռվողներից յուրաքանչյուրը, հանդես գալով ոտնձգողի դերում, չի ղեկավարվում պաշտպանությանը բնորոշ շարժառիթներով և նպատակներով: Այսինքն՝ թեև կռվի մասնակից երկու կողմերի դեպքում էլ առերևույթ առկա են անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանները, սակայն դրանք չեզոքանում են փոխադարձ կռվի իրողությամբ: Հետևաբար՝ այդ պարագայում նրանց արարքը ենթակա է որակման ըստ փաստացի վրա հասած հետևանքի:

15. Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փոխադարձ կռվի ընթացքում կողմերի նպատակները և դրդապատճառները կարող են փոխվել, ինչը կարող է հանգեցնել նաև նրանց վարքագծի փոփոխմանը և անհրաժեշտ պաշտպանության վիճակ առաջացնել: Մասնավորապես՝ որպես այդպիսին կարող են գնահատվել այն իրավիճակները, երբ՝

ա) կռվի ընթացքում կողմերից մեկը դադարեցնում է կռիվը, իսկ մյուսը շարունակում է հարվածներ հասցնել: Այս պայմաններում փոխադարձ կռիվը, ըստ էության, ավարտված է և հարվածներ հասցնող ու կռիվը շարունակող կողմն արդեն հանդես է գալիս ոտնձգողի դերում, իսկ նրա գործողությունները դիտարկվում են ոչ իրավաչափ, ինչն էլ հիմք է հանդիսանում կռիվը դադարեցրած կողմի համար օգտվելու անհրաժեշտ պաշտպանության իրավունքից: Այլ կերպ՝ այն դեպքում, երբ կռիվը դադարեցրած կողմը սկսում է հանրորեն փտանգավոր ոտնձգությունից պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, ապա նրա գործողությունները պետք է գնահատել որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված,

բ) կռվի ընթացքում կողմերից մեկի հնարավորությունները շեշտակի ուժեղանում են (օրինակ՝ կողմերից մեկը զինվում է, կամ նրա կողմից սկսում են կռվել այլ անձինք): այս դեպքում մյուս կողմն անհրաժեշտ պաշտպանության իրավունք է ստանում,

գ) կռիվը դադարեցնելու, ծանր հետևանքները կանխելու նպատակով կռվին չմասնակցող երրորդ անձինք վնաս են հասցնում կռվող կողմերից մեկին կամ երկուսին՝ ստանալով անհրաժեշտ պաշտպանության իրավունք (...):»:

Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտացոլված մոտեցումներն ունեն տեսական

հենք<sup>42</sup>, սակայն, կարծում ենք, որ դրանցից որոշները պետք է ստանան նաև օրենսդրական ամրագրում: Գործնականում խիստ դժվար է տարբերակել այն իրավիճակները, երբ երկու կողմն էլ հանդիսանում են ոտնձգող, այն իրավիճակներից, երբ կողմերից մեկը ոտնձգող է, իսկ մյուս կողմը իրականացնում է պաշտպանությունը:

Այս, և մի շարք այլ խնդիրներ, կապված փոխադարձ կռվի ժամանակ անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունների հետ՝ դեռևս սպասում են հստակ օրենսդրական կարգավորմանը:

Քրեական նոր օրենսգրքով որևէ դրույթ սահմանված չէ նաև պաշտպանական մեխանիզմների կիրառման վերաբերյալ, սակայն տեխնոլոգիական առկա առաջընթացի և մարտահրավերների պարագայում պաշտպանական մեխանիզմների, ավտոմատացված և ռոբոտացված պաշտպանիչ հարմարանքների դերը, նշանակությունը և կիրառությունը էքսպոնենտալ կերպով աճում են: Կարծում ենք՝ հետագայում օրենքում պետք է նախատեսել այս մեխանիզմների հնարավոր կիրառությունը կանոնակարգող դրույթներ:

## **ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆ ԲՈՆԵԼԻՍ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ**

Քրեական նոր օրենսգրքով համակարգային փոփոխությունների է ենթարկվել **«Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու»** ինստիտուտը, որը վերանվանվել է **«Հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը»**: Հողվածի վերնագրի փոփոխությունը որոշակի առումով արտացոլում է մի շարք հիմնարար մոտեցումների և հայեցակարգերի փոփոխությունը:

Այսպես՝ քրեական նախկին օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը հանցանք կատարած անձին վնաս է պատճառել նրան՝ իրավասու մարմիններին հանձնելու կամ նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակով բռնելիս, եթե դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանների անցում թույլ չի տրվել»: Քրեական նոր օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձին վնաս է պատճառել** նրան իրավասու մարմիններին հանձնելու կամ նոր հակաիրավական արարքը կանխելու նպատակով բռնելիս, եթե **տվյալ իրադրությունում բացակայել են բռնելու այլ՝ վնաս պատճառելու հետ չկապված միջոցները, կամ դրանց առկայությունը**

<sup>42</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) /Ս.Առաքելյան, Ա.Գաբրուզյան, Հ.Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 319: Տե՛ս նաև՝ <https://stykrf.ru/37>



չի գիտակցվել և չէր կարող գիտակցվել բռնողի կողմից, և դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում թույլ չի տրվել»:

Կատարված փոփոխություններն ակներև են և միտված՝ քննարկվող ինստիտուտի կատարելագործմանը և դրա կիրառման ընթացքում կատարվող արարքների իրավաչափության պայմանների հստակեցմանը: Ինչպես տեսնում ենք, նոր իրավակարգավորմամբ խոսվում է ոչ թե «հանցանք կատարած անձին վնաս պատճառելու», այլ **«սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձին վնաս պատճառելու»** մասին: Սա հույժ կարևոր փոփոխություն է, քանզի դեպքի պահին ֆիքսել, որ կատարվածը հանցանք է պարզապես անհնարին է և ոչ իրավաչափ: Արարքը հանցագործություն կարող է համարվել բացառապես դատարանի ուժի մեջ մտած դատավճռով: Արարքը կատարելու պահին հայտնի չէ, արդյո՞ք այն կատարվում է մեղավորությամբ, մեղքի ո՞ր ձևն է առկա, արդյո՞ք այն կատարող անձը կամ անձինք օժտված են հանցագործության սուբյեկտի հատկանիշներով և այլն: Այս և մի շարք այլ հանգամանքներ կարող են պարզվել բացառապես գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում: Այս է պատճառը, որ **«հանցանք կատարած»** օրենսդրական ձևակերպումը, ոչ իրավաչափ է: Քրեական նոր օրենսգրքում կիրառվել է շատ ավելի հաջողված եզրութաբանություն, քանզի, ինչպես նշվեց, այստեղ խոսվում է **«սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձի»** մասին: Այս ձևակերպման կիրառությունն ունի մի շարք առավելություններ: Նախ՝ դրանով սահմանափակվում են այս ինստիտուտի կիրառման սահմանները, քանզի նշվում է, որ վնաս կարելի է պատճառել բացառապես քրեական օրենքով նախատեսված հակաիրավական արարք կատարած անձին, այսինքն՝ քննարկվող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքը կիրառելի է ոչ բոլոր հանրորեն վտանգավոր արարք կատարած անձանց նկատմամբ: Բացի այդ, խոսվում է բացառապես **«սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձի մասին»**, այսինքն՝ շեշտվում է հանրորեն վտանգավոր արարքի արտաքին կողմը, առանց անդրադառնալու այն ուղեկցող ներքին հոգեբանական գործընթացներին, այսինքն՝ չի խոսվում մեղքի և ընդհանրապես հանցանքի մասին, որը բաղկացած է որոշակի տարրերից: Նման բնորոշման պայմաններում բավական է, որ վնաս պատճառողը գիտակցի, որ կատարվում է քրեական օրենսգրքով նախատեսված արարք, իսկ հանցակազմի մյուս տարրերի և հատկանիշների մասին գիտակցումը պարտադիր չէ, իսկ որոշ դեպքերում՝ ուղղակի անհնարին:

Քրեական նոր օրենսգրքում նշվել է նաև, որ **տվյալ իրադրությունում պետք է բացակայեն բռնելու այլ՝ վնաս պատճառելու հետ չկապված միջոցները, կամ դրանց առկայությունը չի գիտակցվել և չէր կարող գիտակցվել բռնողի կողմից:** Սա հույժ կարևոր իրավաչափության պայման է, որը մինչ այս քննարկվել է բացառապես

դոկտրինալ մակարդակում, տարբեր դասագրքերում, մեկնաբանություններում, թեզերում<sup>43</sup>: Սակայն, եթե այս դրույթն օրենսդրորեն չնախատեսվեր, ապա դա գործնականում կարող էր հանգեցնել տարամեկնաբանությունների և քննարկվող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի անհարկի ընդարձակ կիրառության, անգամ այն դեպքերում, երբ առկա են բռնելու այլ՝ վնաս պատճառելու հետ չկապված միջոցներ:

Նոր իրավակարգավորմամբ որպես նպատակ նշվում է նաև «**նոր հակաիրավական արարքը կանխելը**», ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որտեղ սահմանվում էր «հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելը»: Ըստ էության՝ նոր իրավակարգավորմամբ շեշտվում է արարքի «հակաիրավականությունը», նախկին «հանրային վտանգավորության» փոխարեն: Այս մոտեցումը ողջունելի է, քանի որ հանրային վտանգավորությամբ օժտված են ոչ միայն հանցագործությունները, այլև այլ իրավախախտումները: Սակայն, հարկ է նկատել, որ նոր օրենսդրական կարգավորումը ևս որոշակի առումով թերի է, քանի որ խոսքը գնում է ոչ թե **քրեական** հակաիրավականության, այլ ընդհանրապես հակաիրավականության մասին, որպիսի հատկանիշով օժտված են նաև այլ բնույթի իրավախախտումները: Կարծում ենք՝ այս բացը հետագայում պետք է լրացվի օրենսդրական փոփոխությունների կամ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների միջոցով:

Քրեական նախկին օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր. «Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում է համարվում բռնելու միջոցների ակնհայտ անհամապատասխանությունն արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը, ինչպես նաև բռնելու հանգամանքներին, որոնց հետևանքով անձին դիտավորությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ»: Քրեական նոր օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «Սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում է համարվում բռնելու միջոցների անհամապատասխանությունն արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը, ինչպես նաև բռնելու հանգամանքներին, որոնց հետևանքով անձին դիտավորությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ»:

Այս հասկացությունների միջև առկա է տարբերություն, որը հանգում է հետևյալին. Նոր օրենքում չի կիրառվել «ակնհայտ» եզրույթը և դա պետք է դրական համարել:

<sup>43</sup> Տե՛ս օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս ԵՊՀ հրատ., 2012, էջ 339, <https://www.dissercat.com/content/prichinenie-vreda-pri-zaderzhanii-litsa-sovershivshego-prestuplenie-ugolovno-pravovye-aspekt/read> և այլն:

«Ակնհայտ» եզրույթի անհարկի կիրառությունը բարդացնում է իրավակիրառ պրակտիկան, քանի որ այս եզրույթն օժտված է բավականաչափ ցածր իրավական որոշակիությամբ և տարբեր տեսաբանների և իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից մեկնաբանվում է յուրովի: Ավելին՝ այս եզրույթը հաճախ կիրառվում է ռուսերեն «заведомо» (նախապես հայտնի) եզրույթի փոխարեն, սակայն իմաստային առումով այս եզրույթների միջև առկա է զգալի տարբերություն: Քրեական օրենքում անհրաժեշտ է հնարավորինս քիչ օգտագործել անորոշ, ոչ հստակ հասկացություններ, ինչը և արվել է տվյալ պարագայում: Բացի այդ՝ նոր իրավակարգավորմամբ խոսվում է «**դիտավորությամբ**» այնպիսի վնաս պատճառելու մասին, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ: Այս նորամուծությունը ևս պետք է հաջողված համարել, քանզի անզգուշությամբ սահմանազանցում չի կարող լինել, սակայն դրա օրենսդրորեն ամրագրումը ևս հույժ կարևոր է:

Այս առումով հատկանշական է, որ քրեական նոր օրենսգրքում կարգավորվում են փաստական սխալի տարբեր իրավիճակներում հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու առանձնահատկությունները, ինչը նախկին իրավակարգավորմամբ բացակայում էր: Այսպես՝ 33-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է. «Եթե տվյալ իրադրությունում բռնողը վախի, հուզմունքի, սթրեսի կամ այլ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով չի գիտակցել և չէր կարող գիտակցել, որ ոտնձգությունը հակաիրավական չէ, կամ կատարվել է ոչ այդ անձի կողմից, ապա նման իրավիճակը համարվում է հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու վիճակ: Եթե բռնողը տվյալ իրադրությունում կարող էր գիտակցել, որ ոտնձգությունը հակաիրավական չէ, կամ կատարվել է ոչ այդ անձի կողմից, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության անզգուշությամբ վնաս պատճառելու համար: Եթե տվյալ իրադրությունում անձը թույլ է տվել սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում, ապա ենթակա է քրեական պատասխանատվության հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ հանցանք կատարելու համար»:

Այս իրավակարգավորումը որոշակի աղերսներ ունի ԳԴՀ քրեական օրենսգրքի 4-րդ գլխի §33-ով նախատեսված իրավակարգավորման հետ, չնայած դրանում խոսքը վերաբերում է անհրաժեշտ պաշտպանությանը: Նշված դրույթը միտված է որոշակի ծայրահեղ հոգեֆիզիոլոգիական վիճակներում հայտնված անձանց քրեական պատասխանատվությունից ազատելուն, քանի որ վախի, սթրեսի կամ համանման օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ անձն իրոք

կարող է ոչ ադեկվատ գնահատել իրավիճակը և թվացյալ հակաիրավական ոտնձգություն կատարողին վնաս պատճառել, ինչը ոչ միշտ է, որ պետք է հանգեցնի քրեական պատասխանատվության:

Քրեական նախկին օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը համապատասխանաբար սահմանում էին՝ «3. Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով:

4. Հանցանք կատարած անձին բռնելու իրավունք, դրա համար հատկապես լիազորված անձանցից բացի, ունեն նաև **տուժողը և այլ անձինք**»:

Համանման դրույթներ, որոշակի տարբերություններով սահմանվում են նաև քրեական նոր օրենսգրքով: Այսպես՝ 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով»: Նույն հոդվածի 5-րդ մասը նախատեսում է. «Սույն օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու իրավունք, դրա համար լիազորված անձանցից բացի, ունի նաև **յուրաքանչյուր ոք**»: Նշված մասերը միմյանցից հիմնականում տարբերվում են կիրառված եզրույթաբանությամբ: Հարկ է նշել, որ նոր իրավակարգավորումն ավելի համապարփակ է և «դրա համար հատկապես լիազորված անձանցից բացի, ունեն նաև տուժողը և այլ անձինք» իրավակարգավորման փոխարեն օգտագործում է «դրա համար լիազորված անձանցից բացի, ունի նաև **յուրաքանչյուր ոք**»: Փաստորեն նոր կարգավորմամբ հեռացվել է «**հատկապես**» եզրույթը, քանզի այն որոշակի առումով խնդրահարույց էր և **յուրաքանչյուր** դեպքում, երբ հանցանք կատարած անձին բռնում էին պետական կառույցները, հարկ էր ճշտել՝ արդյո՞ք նրանք **հատկապես** լիազորված էին նման գործառույթ կատարելու: Նոր իրավակարգավորումը շտկել է այդ հանգամանքը: Բացի դա՝ նոր իրավակարգավորմամբ չի կոնկրետացվում «**տուժողը և այլ անձինք**», այլ պարզապես նշվում է՝ «**յուրաքանչյուր ոք**», ինչն առավել համապարփակ և քիչ խնդրահարույց տարբերակ է:

Հարկ է նշել նաև, որ հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտն առավել բնորոշ է ԱՊՀ երկրների քրեական օրենսդրությանը, որոնք հիմնականում ձևավորվել են 1996 թվականին ընդունված «ԱՊՀ մոդելային քրեական օրենսգրքի» հիման վրա: Եվրոպական երկրների քրեական օրենսդրությամբ այս արարքի հանցավորությունը բացառող կամ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի մասին չի նշվում և նշված գործառույթը վերապահվում է բացառապես իրավապահ մարմիններին (ԳԴՀ, Ֆրանսիա և այլն):

## ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական նոր օրենսգրքով ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը ենթարկվել է արմատական փոփոխությունների: Արարքի հանցավորությունը կամ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շարքում՝ այս ինստիտուտը միշտ աչքի է ընկել իր ուրույն դերով, առանձնահատկություններով և կիրառման բարդությամբ: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ծայրահեղ անհրաժեշտության, որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի կիրառման պարագայում, վնասը պատճառվում է ոչ թե ոտնձգողին կամ հակաիրավական ոտնձգություն կատարած անձին, այլ քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող բարիքներին, օրենքով պաշտպանվող շահերին, ուղղակի դա կատարվում է առավել մեծ վտանգը կանխելու համար: Այս է պատճառը, որ ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտին ներկայացվում են ավելի խիստ պահանջներ և իրավաչափության պայմաններ: Տարբեր է նաև ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի իրավաընկալումն արտասահմանյան երկրների օրենսդրությամբ: Եթե հանցանք կամ հակաիրավական ոտնձգություն կատարող անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի արտասահմանյան համարժեքները դժվար է գտնել (բացառությամբ հետխորհրդային պետությունների), ապա ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը լայնորեն ներկայացված է արտասահմանյան տարբեր երկրների քրեական օրենսդրությամբ և իրավակիրառ պրակտիկայում: Քրեական նոր օրենսգրքով սահմանվել է այս քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի լիովին նոր իրավակարգավորում, որը համահունչ է ժամանակակից միտումներին և մարտահրավերներին, արդյունավետ տեղայնացվել է արտասահմանյան փորձը, ինչը թույլ կտա առավել արդյունավետ կիրառել ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը՝ նպաստելով քրեական օրենքով պաշտպանվող բարիքների համապարփակ պաշտպանությանը:

Քրեական նախկին օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր՝ «**Հանցագործություն չի համարվում** քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով, և թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում»:

Նոր իրավակարգավորմամբ սահմանվում է՝ «**Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը**, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել

ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին, **ազատություններին** կամ օրինական շահերին, հասարակության կամ պետության **օրինական շահերին** անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե **տվյալ իրադրությունում** այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով, և թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցում» (34-րդ հոդված, 1-ին մաս):

Վերն ընդգծված մի շարք հանգամանքներին արդեն անդրադարձ է կատարվել քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքների քննարկման ժամանակ: Այստեղ հարկ է անդրադառնալ **«տվյալ իրադրությունում»** արտահայտության կիրառմանը, քանի որ ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի պարագայում կարևոր է, որ տվյալ **իրավիճակում կամ իրադրությունում** անհնարին լինի վնաս պատճառելու հետ չկապված միջոցներով վտանգի կանխումը և ոչ թե ընդհանրապես առանց վնաս պատճառելու այդ վտանգը վերացնելու հնարավորություն չլինի:

Պետք է նշել, որ թե՛ նախկին, և թե՛ նոր իրավակարգավորման համաձայն, ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցման իրավիճակը (քրեական նախկին օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մաս և քրեական նոր օրենսգրքի 34 հոդվածի 2-րդ մաս) սահմանվել է գրեթե նույնական կերպով և այս առումով չնչին եզրութաբանական շտկումների քննարկման անհրաժեշտությունը սույն ուղեցույցի շրջանակներում բացակայում է:

Քրեական նոր օրենսգիրքը չի սահմանափակվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցման քրեաիրավական դոկտրինայում և պրակտիկայում ընդունված նկարագրությամբ, այլ դրանում ներկայացվել են իրավիճակներ, որոնց պարագայում ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանները ստանում են բոլորովին այլ բնույթ և բովանդակություն: Այսպես, քրեական նոր օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվում է. «Ծայրահեղ անհրաժեշտության սահմանազանցումը բացակայում է, եթե **անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքին կամ առողջությանն** անմիջական վտանգ սպառնալու դեպքում կանխված վնասի համեմատությամբ **հավասար կամ ավելի մեծ վնաս է պատճառվել**: Այս դրույթը չի տարածվում այն անձանց վրա, որոնց մասնագիտական պարտականությունների մեջ է մտնում այլ անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, հասարակության կամ պետության օրինական շահերի **պաշտպանությունը**»: Այս դրույթը որոշակի ընդհանրություններ ունի ԳԴՀ քրեական օրենսգրքի § 35-ի իրավակարգավորումների հետ, և, ընդհանուր առմամբ, ավելի արդարացի մոտեցում է, քանի որ գրեթե յուրաքանչյուր անձի պարագայում՝ իր կամ իր մերձավորի կյանքն ու առողջությունն ավելի մեծ արժեք են ներկայացնում, քան այլոցը և դժվար է դատապարտել մարդուն այն բանի համար, որ վերջինս գերադասել է իր կամ

իր հարազատի կյանքն ու առողջությունը՝ այլոցից: Սակայն, նշված դրույթը չունի անսահմանափակ կիրառություն և չի կարող վերաբերելի լինել այն անձանց, ովքեր իրականացնում են մասնագիտական պարտականություններ՝ կապված այլոց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, հասարակության կամ պետության օրինական շահերի պաշտպանության հետ (հրշեջ, փրկարար, ոստիկան և այլն):

Քրեական նոր օրենսգրքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Ծայրահեղ անհրաժեշտության վիճակը բացակայում է, եթե վտանգն ստեղծվել է այն կանխող անձի կողմից կատարված արարքի հետևանքով: Այդ դեպքում վտանգի կանխմանն ուղղված նրա ջանքերը հաշվի են առնվում որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք»: Այս դրույթը ևս որոշակի աղերսներ ունի ԳԴՀ քրեական օրենսգրքի § 35-ի (2) մասի իրավակարգավորումների հետ: Նշված դրույթի նախատեսումը միտված է ծայրահեղ անհրաժեշտության և դրան համանման վիճակների սահմանազատմանը: Արդարացված պետք է համարել օրենսդրի այն մոտեցումը, համաձայն որի՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակի մասին խոսք չի կարող լինել, եթե վտանգը ստեղծվել է այն կանխող անձի կողմից կատարված արարքի հետևանքով: Սակայն, արդարացի չի լինի այն հանգամանքը, եթե վտանգը ստեղծողի կողմից այն կանխելուն միտված ջանքերը որևէ իրավական գնահատականի չարժանանան: Այս է պատճառը, որ համաձայն քննարկվող իրավադրույթի՝ վտանգը ստեղծողի կողմից այն կանխելուն ուղղված ջանքերը հաշվի են առնվում որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

Քրեական նոր օրենսգրքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե ծայրահեղ անհրաժեշտության վիճակում վնաս պատճառող անձին չի հաջողվել կանխել սպառնացող վտանգը, սպա նա ենթակա է քրեական պատասխանատվության անզգուշությամբ վնաս պատճառելու համար, եթե նա կարող էր գիտակցել, որ իր ձեռնարկած միջոցները բավարար չեն եղել վտանգը կանխելու համար»: Ինչպես վերը նշվեց, նոր իրավակարգավորումը բավականաչափ համապարփակ կերպով սահմանում է ծայրահեղ անհրաժեշտության վիճակին բնորոշ տարբեր իրադրությունները և դրանց արդյունքում հանրային շահին պատճառված վնասի հետ կապված հանգամանքները: Քննարկվող իրավադրույթը միտված է կարգավորելու այն իրավիճակները, երբ անձը փորձում է կանխել սպառնացող վտանգը, վնաս է հասցնում քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող հասարակական հարաբերություններին, սակայն վտանգը կանխել չի հաջողվում: Այս իրավիճակների հետ կապված տեսության մեջ առկա են բազմաթիվ կարծիքներ և մոտեցումներ, որոնք հաճախ իրարամերժ են և հակասական: Այս դրույթի իրավական ամրագրումը, որ նշված դեպքում անձը ենթակա է պատասխանատվության անզգուշությամբ հանցանք կատարելու համար, պետք է

համարել դրական, քանզի այն կոյուրացնի իրավակիրառ պրակտիկան և թույլ կտա նման պայմաններում առաջնորդվել ոչ թե դոկտրինալ ոչ միանշանակ մոտեցումներով, այլ հստակ օրենսդրական իրավակարգավորմամբ:

Նոր իրավակարգավորմամբ սահմանվել է նաև, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակը բացակայում է, եթե տեղի է ունեցել ծայրահեղ անհրաժեշտության սադրում, այսինքն՝ երբ օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով անձն իր արարքով վտանգ է ստեղծել օրենքով պաշտպանվող այլ շահերի համար, այնուհետև վնաս պատճառել օրենքով պաշտպանվող շահերին՝ իբրև թե ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գտնվելով (34-րդ հոդված, 6-րդ մաս): Այս համատեքստում սադրումը կամ պրովոկացիան պետք է դիտարկել նույն լույսի ներքո, ինչ անհրաժեշտ պաշտպանության վիճակում: Քննարկվող իրավակարգավորման նախատեսումն ունի հույժ կարևոր նշանակություն, քանի որ առանց հստակ օրենսդրական կարգավորման, նման սադրումը, ձևական առումով, կարող էր համարվել ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակ և իրականում հանցանք կատարած անձն այս հիմքով ազատվեր քրեական պատասխանատվությունից: Այս առումով՝ նշված իրավադրույթի նախատեսումը բարձրացնում է իրավական որոշակիության աստիճանը և թույլ չի տալիս օրենսդրական բացերն օգտագործել հակաիրավական վարքագիծը քողարկելու նկատառումներով:

## ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԸ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՍ ՀՈԳԵԿԱՆ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԸ

Քրեական նոր օրենսգրքով էական փոփոխությունների է ենթարկվել նախկին իրավակարգավորմամբ սահմանված «Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը» արարքի հանցավորությունը բացառող հանգամանքը: Այսպես՝ քրեական նախկին օրենսգրքի 45-րդ հոդվածը, որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք նախատեսում էր «Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը»: Քննարկվող հոդվածի առաջին մասն ուներ հետևյալ բովանդակությունը. «Հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, եթե դրա հետևանքով անձը չէր կարող ղեկավարել իր գործողությունները (անգործությունը)»: Քրեական նոր օրենսգրքի 35-րդ հոդվածը որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք նախատեսում է «**Անհաղթահարելի ուժը**, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը»: Քրեական նոր օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող



շահերին վնաս է պատճառել ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ, եթե դրա հետևանքով անձը չէր կարող **գիտակցել** կամ ղեկավարել իր **արարքը**»:

Ինչպես տեսնում ենք, նոր իրավակարգավորմամբ կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք միտված են քննարկվող ինստիտուտի կատարելագործմանը: Ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ իր արարքը ղեկավարելու հնարավորության կորստից բացի, սահմանվել է նաև այն գիտակցելու հնարավորության կորուստը, քանի որ ֆիզիկական և հատկապես հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ պայմանավորված անձը կարող է զրկվել իր արարքը գիտակցելու հնարավորությունից: Հաջորդ փոփոխությունը կապված է այն հանգամանքի հետ, որ «գործողությունները (անգործությունը)» եզրույթի փոխարեն կիրառվել է «արարք» եզրույթը, ինչն ավելի համապարփակ է դարձնում նոր իրավակարգավորումը:

Քրեական նախկին օրենսգրքի 45-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Քրեական պատասխանատվության հարցն այն դեպքերում, երբ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառվում հոգեկան, ինչպես նաև ֆիզիկական այնպիսի հարկադրանքի ազդեցությամբ, որն անձին չի զրկում իր գործողությունները ղեկավարելու հնարավորությունից, լուծվում է՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 44-րդ հոդվածի դրույթները»: Համաբնույթ իրավակարգավորում է սահմանվել նաև քրեական նոր օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ «Այն դեպքերում, երբ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառվում հոգեկան, ինչպես նաև ֆիզիկական այնպիսի հարկադրանքի ազդեցությամբ, որն անձին չի զրկում իր արարքը գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորությունից, քրեական պատասխանատվության հարցը լուծվում է՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 34-րդ հոդվածի դրույթները»: Երկու դեպքում էլ, ըստ էության, ֆիքսվում է, որ նշված իրավիճակներում պետք է գործեն ոչ թե քննարկվող ինստիտուտի, այլ ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանները:

Նոր իրավակարգավորմամբ քննարկվող ինստիտուտը կատարելագործվել է և դրանում ներառվել է նաև անհաղթահարելի ուժի ազդեցությամբ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելուն վերաբերող դրույթ: Այսպես, քրեական նոր օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել անհաղթահարելի ուժի ազդեցության ներքո» (Համանման կարգավորում նախատեսված է նաև Ֆրանսիական քրեական օրենսդրությամբ (հոդված 122-2): Սա կարևոր նորամուծություն է, քանի որ մինչ դրա նախատեսումն անհաղթահարելի ուժի ազդեցության պարագայում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրավիճակները չունեին օրենսդրական որևէ հստակ կարգավորում և այս առումով առկա էր իրավական բաց, որը պրակտիկայում լրացվում

էր անալոգիայի կիրառմամբ, ինչը քրեական օրենքով արգելվում էր (քրեական նոր օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական օրենքի Հատուկ մասի նորմերն անալոգիայով կիրառելն արգելվում է»:

Քրեական նոր օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանվում է. «Անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից սույն հոդվածով նախատեսված հիմքով, եթե օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակով ինքն է ստեղծել անհաղթահարելի ուժ կամ մեկ ուրիշին դրդել է իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանք գործադրել՝ հետագայում իր կողմից օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն անհաղթահարելի ուժի կամ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արդարացնելու համար»:

Ըստ էության՝ խոսքը քննարկվող իրավիճակի սադրումի մասին է և այս նորմը կոչված է կանխելու քրեական պատասխանատվությունից ազատելու նշված հանգամանքի կիրառման հնարավոր չարաշահումներն այն դեպքերում, երբ անձն ինքն է ստեղծում դրա կիրառման համար «իրավաչափ» իրավիճակ:

## ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՌԻՍԿ

Հիմնավորված ռիսկը, որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, նախատեսված էր քրեական նախկին օրենսգրքում: Քրեական նոր օրենսգրքով հիմնավորված ռիսկը սահմանվել է որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք, կատարվել են մի շարք լրամշակումներ և շտկումներ, որոնք միտված են այս ինստիտուտի տեսական և գործնական կատարելագործմանը: Ավելին՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող ինքնուրույն հանգամանք նախատեսվել է սպորտային ռիսկը, որը առանձին կքննարկենք ստորև:

Քրեական նախկին օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը հանրորեն օգտակար նպատակի հասնելու համար գործադրված հիմնավորված ռիսկի ժամանակ»: Քրեական նոր օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը. «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել **անձի, հասարակության կամ պետության** համար օգտակար, **իրավաչափ** նպատակի հասնելու համար գործադրված հիմնավորված ռիսկի ժամանակ»: Նկատելի է, որ քննարկվող նորմերն ունեն էական տարբերություններ: Նախ, պետք է փաստել, որ որպես հիմնավորված ռիսկի նպատակ է սահմանվել ոչ միայն «հանրորեն», այլև «անձի և պետության» համար օգտակարը: Բացի դա, կատարվել է շատ կարևոր հստակեցում, քանի որ սահմանվել է, որ այդ նպատակը պետք է լինի **իրավաչափ**, քանի որ ռիսկի

դիմողի համար այն կարող է լինել շատ օգտակար (նաև նյութական իմաստով), սակայն չլինի իրավաչափ՝ ենթադրելով օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների խախտում:

Քրեական նախկին օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր. «Ռիսկը համարվում է հիմնավորված, եթե հիշյալ նպատակին չէր կարելի հասնել ռիսկի հետ չկապված գործողություններով (անգործությամբ), և ռիսկի դիմած անձն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը կանխելու համար»: Նոր իրավակարգավորման համաձայն՝ «Ռիսկը համարվում է հիմնավորված, եթե հետապնդվող նպատակին չէր կարելի հասնել առանց ռիսկի դիմելու, և ռիսկի դիմած անձն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը կանխելու համար» (36-րդ հոդված, 2-րդ մաս): Ինչպես տեսնում ենք՝ նշված հոդվածների մասերը միմյանցից տարբերվում են հիմնականում եզրութաբանական առումով և քրեաիրավական համատեքստում դրանց համեմատական քննարկման անհրաժեշտությունը բացակայում է:

Նախկին իրավակարգավորմամբ սահմանվում էր նաև, որ ռիսկը հիմնավորված չի համարվում, եթե դա ակնհայտորեն զուգորդված է եղել երրորդ անձանց զոհվելու վտանգով, էկոլոգիական կամ հասարակական աղետի սպառնալիքով: Համանման դրույթ սահմանված է նաև քրեական նոր օրենսգրքով, որի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ռիսկը հիմնավորված չի համարվում, եթե դա ակնհայտորեն զուգորդված է եղել այլ անձի զոհվելու վտանգով կամ արտակարգ իրավիճակի սպառնալիքով»: Նշված սահմանումները որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Եթե նախկին իրավակարգավորումը նշում էր «երրորդ անձանց զոհվելու վտանգը», ապա նոր սահմանման մեջ խոսվում է այլ անձի զոհվելու վտանգի մասին, ինչն ավելի հստակ կարգավորում է: Բացի դա՝ նոր օրենքով «էկոլոգիական կամ հասարակական աղետ» հասկացությունները ներառված չեն և դրանց փոխարեն՝ սահմանված է ցանկացած **«արտակարգ իրավիճակ»**: Այս հստակեցումը պետք է հաջողված համարվել, քանի որ ռիսկը կարող է զուգորդվել ոչ միայն էկոլոգիական կամ հասարակական աղետի (հասարակական աղետը բավականին անորոշ հասկացություն է), այլև՝ արտադրական աղետի, տարատեսակ հիվանդությունների բռնկումների, էպիդեմիաների կամ պանդեմիաների սպառնալիքներով և այլն:

Նշենք նաև, որ արտասահմանյան մի շարք երկրներում հիմնավորված ռիսկի ինստիտուտը, որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք նախատեսված չէ և համաբնույթ իրավիճակները լուծվում են ծայրահեղ անհրաժեշտության կանոններով (ԳԴՀ, Չինաստան և այլն), սակայն հետխորհրդային շատ երկրներում քննարկվող ինստիտուտն այս կամ այն ձևակերպմամբ նախատեսված է, իսկ որոշ պետությունների քրեական օրենսդրություն էլ սահմանում է բացառապես

հիմնավորված ռիսկի այս կամ այն տարատեսակը՝ բժշկական ռիսկը, սպորտային ռիսկը և այլն<sup>44</sup>:

## ՀՐԱՄԱՆ ԿԱՄ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ

Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների շարքում քրեական նախկին օրենսգրքով սահմանվում էր նաև «Հրաման կամ կարգադրություն կատարելը»: Քրեական նոր օրենսգրքին այս ինստիտուտը ևս նախատեսել է որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք: Նախկին իրավակարգավորմամբ սահմանվում էր. «Հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելն այն անձի կողմից, ով գործել է ի կատարումն իր համար պարտադիր՝ սահմանված կարգով արձակված հրամանի կամ կարգադրության: Այդպիսի վնաս պատճառելու համար պատասխանատվություն է կրում **անօրինական** հրաման կամ կարգադրություն արձակած անձը» (47-րդ հոդված, 1-ին մաս): Նոր իրավադրույթն ունի հետևյալ տեսքը. «Քրեական պատասխանատվության ենթակա չէ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որը գործել է ի կատարումն իր համար պարտադիր՝ սահմանված կարգով արձակված հրամանի կամ կարգադրության: Այդպիսի վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվության է ենթակա **հանցավոր** հրաման կամ կարգադրություն արձակած անձը»: Քննարկվող իրավադրույթների տարբերությունը, ի թիվս այլոց, եզրութաբանական բնույթի է և հիմնականում կապված է «արարքի հանցավորությունը բացառող» և «քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների» տարբերության հետ: Բացի այդ, քրեական նոր օրենսգրքում նշվում է հրամանի «**հանցավոր**» բնույթի մասին, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որում նշվում էր «անօրինական» հրամանի մասին: Ինքնին՝ անօրինական հրամանը, չի ենթադրում հանցավոր հրաման և այս շտկումն ունի հույժ կարևոր նշանակություն օրենսդրության հստակության և որոշակիության դիտանկյունից:

Քրեական նախկին օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր. «Ակնհայտ անօրինական հրամանով կամ կարգադրությամբ դիտավորյալ հանցանք կատարած անձը պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով»: Այս դրույթը որոշակի փոփոխություններով արտացոլվել է նաև նոր քրեական օրենսդրությամբ և ունի հետևյալ բովանդակությունը. «Եթե անձը գիտակցել է հրամանի կամ կարգադրության հանցավոր բնույթը կամ չի գիտակցել, սակայն կարող էր գիտակցել և կատարել է դա, ապա ենթակա է քրեական պատասխանատվության» (40-րդ հոդված, 2-րդ մաս): Նոր իրավակարգավորումը որոշակի առումով հստակեցրել է նախկինը, սակայն ունի նաև որոշակի խնդրահարույց տարր: Նախ՝ կրկին խոսվում է հրամանի

<sup>44</sup> Տե՛ս <https://wiselawyer.ru/poleznoe/22122-obosnovannyj-risk-yuridicheskie-konstrukcii-otechestvennom-zarubezhnom-ugolovnom>

**հանցավոր** և ոչ թե ակնհայտ անօրինական բնույթի մասին, ինչը միանշանակ դրական պետք է համարել: Հարկ է նկատել, որ նոր իրավակարգավորման այն դրույթը, որով նախատեսվել է. «...կամ չի գիտակցել, սակայն կարող էր գիտակցել և կատարել է դա, ապա ենթակա է քրեական պատասխանատվության» ունի անարդարության որոշակի տարր: Այստեղ, փաստորեն, հավասարության նշան է դրվում այն իրավիճակների միջև, երբ անձը հստակ գիտի, որ կատարում է դիտավորյալ հանցանք և այն իրավիճակների մեջ, երբ անձը չի գիտակցել, որ հանցավոր հրաման է կատարում, թեև կարող էր գիտակցել դա: Կարծում ենք, նշված դեպքում անձը պետք է կամ ազատվի քրեական պատասխանատվությունից կամ, առավելագույնը, պատասխանատվության ենթարկվի անզգույշ հանցանքի կատարման համար<sup>45</sup>: Լիառույս ենք, որ օրենսդրության հետագա լրամշակումը հնարավորություն կտա շտկելու այս բացը:

Քրեական նախկին օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ակնհայտ անօրինական հրամանը կամ կարգադրությունը չկատարելը բացառում է քրեական պատասխանատվությունը»: Գրեթե նույնական սահմանում է տրված նաև քրեական նոր օրենսգրքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով, այն բացառությամբ, որ այստեղ ևս խոսվում է ոչ թե ակնհայտ անօրինական, այլ հանցավոր հրամանի կամ կարգադրության մասին:

Պետք է փաստել, որ այս ինստիտուտը, բացի ԱՊՀ երկրների քրեական օրենսդրությունից, նախատեսված է նաև մի շարք արտասահմանյան երկրների օրենսդրությամբ: Այն ներմուծվել է ազգային քրեական օրենսդրություններ միջազգային քրեական դատարանների և տրիբունալների պրակտիկայից: ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից ձևակերպած Նյուրնբերգյան դատավարության սկզբունքների համաձայն<sup>46</sup>՝ կառավարության կամ ղեկավարի կողմից տրված հրամանի կատարումը չի ազատում պատասխանատվությունից, եթե առկա է եղել գիտակցված ընտրության հնարավորություն<sup>47</sup>: Եթե անձը գիտակցված ընտրության հնարավորությունից զրկված է եղել, ապա վերջինս ենթակա չէ պատասխանատվության: Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 122-4 հոդվածի համաձայն՝ պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը կատարել է որևէ արարք օրինական իշխանության պահանջով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ արարքն ակնհայտ ապօրինի է: Համանման կարգավորում նախատեսված է նաև Նիդերլանդների քրեական օրենսդրությամբ:

Ընդհանրացնելով՝ հարկ է նկատել, որ քրեական նոր օրենսգրքում առկա իրավակարգավորումը բավականաչափ համապարփակ է, լրամշակված և

<sup>45</sup>Տե՛ս [https://mvd.ru/upload/site125/dissertaciyyuridich\\_nauki/nikulenko\\_a\\_v/Avtoreferat\\_Nikulenko\\_A.V.pdf](https://mvd.ru/upload/site125/dissertaciyyuridich_nauki/nikulenko_a_v/Avtoreferat_Nikulenko_A.V.pdf), էջ 17.

<sup>46</sup>Տե՛ս

[https://ru.wikipedia.org/wiki/%D0%98%D1%81%D0%BF%D0%BE%D0%BB%D0%BD%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5\\_%D0%BF%D1%80%D0%B8%D0%BA%D0%B0%D0%B7%D0%B0\\_%D0%B8%D0%BB%D0%B8\\_%D1%80%D0%B0%D1%81%D0%BF%D0%BE%D1%80%D1%8F%D0%B6%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F#%D0%98%D0%BD%D1%8B%D0%B5\\_%D1%81%D1%82%D1%80%D0%B0%D0%BD%D1%8B](https://ru.wikipedia.org/wiki/%D0%98%D1%81%D0%BF%D0%BE%D0%BB%D0%BD%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5_%D0%BF%D1%80%D0%B8%D0%BA%D0%B0%D0%B7%D0%B0_%D0%B8%D0%BB%D0%B8_%D1%80%D0%B0%D1%81%D0%BF%D0%BE%D1%80%D1%8F%D0%B6%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F#%D0%98%D0%BD%D1%8B%D0%B5_%D1%81%D1%82%D1%80%D0%B0%D0%BD%D1%8B)

<sup>47</sup> Տե՛ս [https://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/principles.shtml](https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/principles.shtml)

համապատասխանում է թե՛ ներպետական, և թե՛ միջազգային իրավական սկզբունքներին և կարգավորումներին:

## **ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ**

ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանվել են քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքներ, որոնց նախատեսումն ինքնանպատակ չէ, այլ միտված է քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող հասարակական հարաբերությունների առավել համապարփակ կանոնակարգմանը, այն արարքների համար քրեական պատասխանատվության բացառմանը, որոնք իրական վտանգ չեն ներկայացնում հասարակական հարաբերությունների համար, ընդհակառակը, դրանք հաճախ անհրաժեշտ և օգտակար են այս համատեքստում:

### **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

Նման հանգամանքներից առաջինը կքննարկենք «Մասնագիտական գործառույթների իրականացումը»: Ինքնին տրամաբանական և հասկանալի է, որ մասնագիտական գործառույթների իրականացումը, երբ պահպանվում են դրանց համար անհրաժեշտ կանոնակարգերը, չի կարող հանգեցնել որևէ պատասխանատվության: Սակայն, այն պարագայում, երբ դրանց իրականացման արդյունքում «վնաս» է պատճառվում հանրային բարիքներին, հարց է առաջանում, թե ի՞նչ հիմքով տվյալ անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից: Օրինակ՝ վիրաբույժը հեռացնում է հիվանդի որևէ օրգան, ինչը պարունակում է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու բոլոր հատկանիշները: Բնականաբար՝ գործնականում որևէ խնդիր նման իրավիճակներում չի առաջանում, քանի որ, եթե պահպանվել են տվյալ վիրահատության կանոնները, պատասխանատվության մասին խոսք լինել չի կարող, սակայն այս համատեքստում իրավական հենքը բացակայում է, ինչն էլ փորձ է կատարվել լրացնելու քրեական նոր օրենսգրքով:

Այսպես՝ քրեական նոր օրենսգրքի 37-րդ հոդվածը, որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք սահմանում է «Մասնագիտական գործառույթների իրականացումը»: Սույն հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը. «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել ի կատարումն անձի մասնագիտական գործառույթների, եթե պահպանվել են այդ մասնագիտական գործառույթների իրականացման համար իրավական ակտերով սահմանված պահանջները»:

Քրեական պատասխանատվությունը բացառող նշված հանգամանքը, այս կամ այն ձևակերպմամբ, նախատեսված է նաև մի շարք այլ երկրների քրեական օրենսդրությամբ, ինչպես օրինակ՝ Իսպանիայի, Շվեյցարիայի, Լիտվայի և այլն: Քրեական պատասխանատվությունը բացառող այս հանգամանքի նախատեսումը պետք է դրական համարել՝ ՀՀ քրեական իրավունքի զարգացման համատեքստում: Ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի ինստիտուտներն ամբողջությամբ չեն կարող կարգավորել այն հասարակական հարաբերությունները, որոնք կարող են ծագել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու պարագայում, երբ խոսքը գնում է անձի մասնագիտական գործառույթների, պարտականությունների կատարման մասին: Չնայած այս հանգամանքին, հարկ է նկատել, որ տեսության մեջ արտահայտվել է նաև հակառակ կարծիքը, որ քննարկվող ինստիտուտի առանձին նախատեսումը նպատակահարմար չէ, քանի որ այն ներառված է այլ՝ հանցավորությունը կամ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների մեջ, իսկ սահմանված կանոնները խախտելու դեպքում անձը, միևնույն է, ենթակա է քրեական պատասխանատվության<sup>48</sup>:

Հարկ է նշել, որ այս ինստիտուտի կիրառմամբ անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից միայն այն պարագայում, երբ պահպանվել են այդ մասնագիտական գործառույթների իրականացման համար իրավական ակտերով սահմանված պահանջները: Եթե այդ պահանջները չեն պահպանվել, անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով:

### ՄՊՈՐՏԱՅԻՆ ՌԻՄԿԸ

Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շարքում ներդրվել է «Սպորտային ռիսկի» ինստիտուտը: Նախկինում համաբնույթ հարաբերությունները կարգավորվում էին «Հիմնավորված ռիսկի» իրավաչափության պայմանների շրջանակներում: «Սպորտային ռիսկի» ինստիտուտը, որպես քրեական պատասխանատվությունը բացառող ինքնուրույն հանգամանք, չունի մեծ տարածում թե՛ տեսական և թե՛ գործնական մակարդակներում: Այն նորամուծություն է հայկական քրեական օրենսդրության մեջ և, ըստ էության, նմանատիպ իրավակարգավորում առկա չէ որևէ երկրի քրեական օրենսդրությամբ: Որոշ երկրներում համաբնույթ հարցերը քննարկվում և կարգավորվում են «Սպորտային իրավունքի» համատեքստում<sup>49</sup>: Տեսական մակարդակով առավելապես քննարկվում է սպորտային միջոցառումների ժամանակ ռիսկի կանխարգելման, վնասվածքների դեպքում պատշաճ բժշկական օգնության տրամադրման, ապահով և անվտանգ սպորտային միջավայրի ձևավորման

<sup>48</sup> Տե՛ս <https://studfile.net/preview/4542546/page:72/>

<sup>49</sup> Տե՛ս <http://classic.austlii.edu.au/au/journals/ANZSportsLawJl/2006/3.pdf>

հիմնահարցերը<sup>50</sup>: Բազմաթիվ տեսական աղբյուրներում սպորտային ռիսկը քննարկվում է որպես հիմնավորված ռիսկի առանձին դրսևորում, այլ ոչ թե որպես արարքի հանցավորությունը բացառող կամ քրեական պատասխանատվությունը բացառող ինքնուրույն հանգամանք<sup>51 52</sup>:

Սպորտի զարգացման արդի միտումները, այս ոլորտում առկա բազմաթիվ կանոնները և իրավակարգավորումները, միտված են մարզիկների կյանքի և առողջության հնարավորինս համապարփակ պաշտպանությանը: Այս համատեքստում՝ կարևոր է նաև «սպորտային ռիսկի», որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի արդյունավետ ներդրման գործընթացը, չնայած՝ դրա նպատակահարմարության և իրական կյանքում կենսագործման հետ կապված խնդիրները կարող են ի հայտ գալ նոր օրենսդրության կիրառմանը զուգընթաց:

Քրեական նոր օրենսգրքի 38-րդ հոդվածը սահմանում է «Սպորտային ռիսկը» որպես քրեական պատասխանատվությունը բացառող ինքնուրույն հանգամանք: Հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ արհեստավարժ մարզամրցմանը կամ մարզումներին մասնակից անձը, որն արհեստավարժ մարզամրցման կամ մարզումների ընթացքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել, եթե նա պահպանել է տվյալ մարզատեսակի համար սահմանված կանոնները»:

Ինչպես տեսնում ենք՝ այստեղ խոսքը վերաբերում է թե՛ արհեստավարժ մարզամրցմանը մասնակցող մարզիկներին և թե՛ պարզապես տվյալ մարզաձևի մարզումների մասնակիցներին, ինչը միտված է մարզիկների համար հավասար պայմաններ ապահովելուն: Քանի որ բազմաթիվ մարզաձևեր գուցորդված են անձի կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու իրական ներուժով, այդ իսկ պատճառով սահմանվում են դրանց անցկացման հստակ կանոններ, որոնց պահպանումը, սույն հոդվածի ուժով, բացառում է պատասխանատվությունը, իսկ չպահպանման դեպքում վնաս պատճառելը հանգեցնում է պատասխանատվության, այդ թվում՝ քրեական: Քննարկվող հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ «Տվյալ մարզատեսակի համար սահմանված կանոնները դիտավորությամբ խախտելու հետևանքով անզգուշությամբ մարդու մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառած անձը ենթակա է քրեական պատասխանատվության»: Այս դրույթի համաձայն՝ եթե դիտավորությամբ կանոնները խախտվում են մարզիկի կողմից, սակայն առաջացած վտանգավոր հետևանքների կապակցությամբ վերջինս դրսևորում է անզգուշություն, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության բացառապես անզգուշությամբ մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու պարագայում, իսկ առողջությանն

<sup>50</sup> Տե՛ս <https://sportlaw.ca/risk-management-for-sport-organizations-and-sport-facilities/>

<sup>51</sup> Տե՛ս <https://cyberleninka.ru/article/n/problemnye-aspekty-obosnovannogo-riska-v-sporte>

<sup>52</sup> Տե՛ս <http://novaum.ru/public/p1927>



անզգուշությամբ պատճառված այլ վնասի (թեթև կամ միջին ծանրության), **ինչպես նաև անզգուշությամբ գույքային վնաս պատճառելու** դեպքում վերջինս ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Սույն հոդվածի երրորդ մասը սահմանում է. «Տվյալ մարզատեսակի համար սահմանված կանոնները դիտավորությամբ խախտելու հետևանքով քրեական օրենքով պաշտպանվող շահերին դիտավորությամբ վնաս պատճառած անձը ենթակա է քրեական պատասխանատվության»: Այս իրավակարգավորումը վերաբերելի է անագնիվ սպորտային պայքարի այն իրավիճակներին, երբ կանոնները խախտվում են դիտավորությամբ և վտանգավոր հետևանքների նկատմամբ ևս մարզիկը դրսևորում է դիտավորություն: Այս դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով և այս ինստիտուտի «պաշտպանությունից» օգտվել չի կարող:

### **ՕՐԵՆՔԻ ԿԱՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ԱԿՏԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

Քրեական նոր օրենսգիրքը, որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք սահմանել է «Օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները կատարելը»: Քրեական նոր օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որը կատարել է օրենքով կամ իրավական այլ ակտերով թույլատրվող արարք կամ իր վրա դրված պարտականություն, եթե պահպանվել են դրա իրականացման՝ օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պայմանները»: Համաբնույթ իրավակարգավորումներ առկա են մի շարք արտասահմանյան երկրների քրեական օրենքներում, մասնավորապես ԱՄՆ-ում (Նյու Յորք նահանգի քրեական օրենսգրքի 35-րդ հոդված), Ֆրանսիայում (Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 122-4 հոդված), Իսպանիայում և այլն:

Դոկտրինալ աղբյուրներում նշվում է, որ օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները կատարելը չպետք է նախատեսվի որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, քանի որ ինքնին հասկանալի է, որ օրինական գործունեությունը չի կարող հանգեցնել պատասխանատվության և այդ մասին օրենքում փաստելը ոչ այլ ինչ է, քան տվյալ օրենքի դերի և նշանակության նսեմացում<sup>53</sup>:

Սակայն, հասարակական հարաբերությունների զարգացմանը և դրանց բարդացմանը զուգընթաց՝ առաջ են գալիս մի շարք իրավիճակներ, որոնց պարագայում հստակ իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտություն է առաջ գալիս: Քննարկվող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի

<sup>53</sup> Տե՛ս <https://wiselawyer.ru/poleznoe/27116-ispolnenie-zakona-obstoyatelstvo-isklyuchayushhee-prestupnost-deyaniya>

առկայությունը փաստելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձը անշեղորեն պահպանի օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված համապատասխան կարգավորումները և պայմանները: Օրինակ՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում»: Այս նորմի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ եթե երեխայի տասը տարին չի լրացել, ապա որոշակի կրոնական միջոցառումներին մասնակցելու համար ծնողները պարտավոր չեն հաշվի առնել վերջինիս համաձայնությունը և դա չի կարող դիտվել որպես երեխայի խղճի կամ դավանանքի ազատության իրավունքի իրականացման խոչընդոտում՝ պատասխանատվություն առաջացնելով քրեական նոր օրենսգրքի 209-րդ հոդվածի հատկանիշներով (քրեական նախկին օրենսգրքի 160-րդ հոդված):

Քննարկվող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի նախատեսումը, ընդհանուր առմամբ, պետք է գնահատել դրական: Գործնականում՝ այն իրական մեծ ազդեցություն ունենալ չի կարող, քանզի, այսպես թե այնպես, օրինական վարքագծի դրսևորման պարագայում որևէ պատասխանատվության մասին խոսք լինել չի կարող, սակայն այս իրավադրույթի սահմանումը կարող է կանխել հնարավոր չարաշահումները և տարամեկնաբանությունները:

## **ՕՊԵՐԱՏԻՎ-ՇԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ**

### **ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՇԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼԸ**

Քրեական նոր օրենսգրքի 41-րդ հոդվածով, որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք, նախատեսվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը»: Քրեական պատասխանատվությունը բացառող նշված հանգամանքը նորույթ է ՀՀ քրեական օրենսդրությունում, իսկ դրա ուղղակի համարժեքները նախատեսված չեն որևէ երկրի քրեական օրենսդրությամբ:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք ազատվում են հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվությունից՝ օրենքով սահմանված կարգով»:

Մինչ քրեական նոր օրենսգրքում քննարկվող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի նախատեսումը՝ «Օպերատիվ-հետախուզական

գործունեության մասին» օրենքում նշված իրավանորմի կենսագործումը գործնականում հնարավոր չէր, քանի որ բացակայում էր նյութաիրավական այն հենքը, համաձայն որի՝ նշված անձինք պետք է ազատվեին քրեական պատասխանատվությունից: Քրեական պատասխանատվությունը բացառող այս նոր հանգամանքի նախատեսումը մեծապես միտված է նշված իրավական բացի լրացմանը: Բացի այդ՝ սահմանվում են իրավաչափության այն պայմանները, որոնց առկայության պարագայում միայն անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից:

Այսպես՝ քրեական նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որն օրենքով սահմանված կարգով համագործակցել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ՝ հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում, եթե այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են»:

Քննարկվող նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ նշված պարագայում պետք է բացակայեն այլ, վնաս պատճառելու հետ չկապված միջոցները, այլապես անձը չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից նշված բացառող հանգամանքի ուժով: Նման ձևակերպման նպատակը՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց հնարավոր կամայականությունների և ոչ իրավաչափ վարքագծի կանխարգելումն է:

Քննարկվող հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելիս անձը ենթակա է քրեական պատասխանատվության մարդու դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք կատարելու դեպքում»:

Նշված իրավադրույթը կոչված է սահմանափակելու համագործակցության շրջանակներում կատարվող քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված հնարավոր արարքների շրջանակը: Անգամ վերը նշված հանցագործությունների նախապատրաստության կամ հանցափորձի համար համագործակցող անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե օրենքով սահմանված նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են: Սակայն, եթե կատարվում է մարդու դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ապա նշված անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե, իհարկե, նրա արարքում առկա չեն քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքներ:

Քրեական նոր օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե օպերատիվ-

հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելիս անձը մասնակցել է հանցավոր կազմակերպությանը կամ հանցանքը կատարել է հանցավոր կազմակերպության կազմում, որը սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք, և այդ ծանրացնող հանգամանքի շնորհիվ է հանցանքը **համարվում առանձնապես ծանր կամ ծանր**, եթե նրա կողմից կատարված հանցանքն առանձնապես ծանր կամ ծանր է համարվում «առանձնապես խոշոր» չափով կատարած լինելու հատկանիշով, ապա դա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձին չի մեղսագրվում»:

Այս դրույթն օժտված է որոշակի թերություններով, որոնք ենթակա են շտկման օրենսդրության հետագա լրամշակման արդյունքում: Մասնավորապես՝ չի կոնկրետացվում, որ քննարկվող բացառությունը վերաբերելի է հողվածի երկրորդ մասի իրավակարգավորմանը: Այս իրավակարգավորման նպատակը, ըստ էության, հողվածի երկրորդ մասով նախատեսված դրույթներից բացառություն կատարելն է այն դեպքերում, երբ անձի դեմ ուղղված հանցանքը ծանր կամ առանձնապես ծանր է համարվում կապված հանցակցության ձևի կամ հափշտակության, պատճառած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի առանձնապես խոշոր չափերի հետ կամ ընդհանրապես՝ ծանր կամ առանձնապես ծանր է համարվում «առանձնապես խոշոր» չափով կատարած լինելու հատկանիշով, օրինակ՝ թմրամիջոցների պարագայում: Կարծում ենք, քրեական նոր օրենսգրքի 41 հողվածի երրորդ մասը ենթակա է լրամշակման: Բացի այդ, նոր իրավակարգավորմամբ չի պահպանվել օրենսդրական շարադրանքի տրամաբանությունը, քանի որ հողվածի մի մասում խոսվում է՝ «ծանր կամ առանձնապես ծանր» հանցանքների մասին, իսկ մյուս մասում՝ «առանձնապես ծանր և ծանր»: Նշված խնդիրը տեխնիկական բնույթ է կրում, սակայն օրենսդրության միասնական տրամաբանության համատեքստում՝ կարևոր է ձևակերպումների հստակությունը:

## Գլուխ 7

### ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Քրեական օրենսդրությունը կարգավորում է նաև հանցագործության փուլերի հարցը: Այստեղ նույնպես առկա են որոշ նորություններ: Ինչպես և նախկին օրենսդրությունը, քրեական նոր օրեսգրքով նույնպես հանցագործության փուլերն են 1. հանցագործության նախապատրաստությունը, 2. հանցափորձը և 3. ավարտված հանցագործությունը: Նորույթ է առկա դրանց հասկացությունների մեջ: Մասնավորապես՝ **նախապատրաստության** հասկացությունը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «հանցագործության նախապատրաստություն է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայման ստեղծելը, եթե անձն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում սկսել դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը:

Եթե դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայման ստեղծելն այլ ավարտված հանցագործության հատկանիշներ են պարունակում, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ՝ այն հանցագործության նախապատրաստություն, որն ընդգրկված էր անձի դիտավորության մեջ և որը պատրաստվում էր նա կատարել և այն ավարտված հանցագործությունը, որն իրենից անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն է ներկայացնում»:

Քրեական նոր օրենսգրքում նշվում է ոչ թե անձի կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չհասցնելու մասին, այլ այն մասին, որ հանցավորը չի կարողանում սկսել հանցագործության օբյեկտիվ կողմը: Դրանով նախ հստակ երևում է, թե ինչպես է հանցագործության նախապատրաստությունը տարբերվում հանցափորձից: Բացի դա, մեր կարծիքով արդարացիորեն նշվում է այն մասին, որ հանցագործության նախապատրաստության դեպքում հանցավորը չի հասցնում կատարել հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքներից որևէ մեկը: Եվ վերջապես, օրենսդրորեն ամրագրված է տեսության մեջ հայտնի այն դրույթը, որ եթե դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելն այլ ավարտված հանցագործության հատկանիշներ են պարունակում, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ անձը ցանկանում է սպանել որևէ մեկին և դրա համար ապօրինաբար հրազեն է ձեռք բերում ու այդ պահին բռնվում է: Նա պատասխանատվության կենթարկվի սպանության նախապատրաստության և ապօրինաբար հրազեն ձեռք բերելու համար:

Պետք է նշել նաև, որ, ի տարբերություն նախկին օրենքի, նոր օրենքով

հանցագործությունն է նաև ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստությունը: Դա հիմնավորվում է նրանով, որ որոշ դեպքերում իրենից հանրային վտանգավորություն ներկայացնող արարք կատարած անձն անպատիժ էր մնում: Օրինակ՝ նախկին օրենսգրքի համաձայն՝ էթե հանցագործությունն ավարտին չէր հասնում կազմակերպչի, դրդիչի կամ օժանդակողի կամքից անկախ հանգամանքներով, ապա նրանք պատասխանատվության էին ենթարկվում հանցագործության նախապատրաստության համար: Բնականաբար այս անձինք պատասխանատվության կենթարկվեին հանցագործության նախապատրաստության համար, եթե խոսքը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին էր: Ստացվում էր, որ, օրինակ, մարդու առևանգում կազմակերպողը ենթակա չէր քրեական պատասխանատվության, եթե հանցագործությունն ավարտին չէր հասնում նրա կամքից անկախ հանգամանքներով, որովհետև մարդուն առևանգելու հասարակ տեսակը միջին ծանրության հանցագործություն էր: Կարծում ենք, որ դա հիմնավորված չէր:

Պետք է նշել նաև, որ արտասահմանյան երկրների մեծ մասում, բացառությամբ ԱՊՀ երկրների, հանցագործության նախապատրաստության ինստիտուտ գոյություն չունի: Որոշ երկրներում, օրինակ, ԱՄՆ-ում խոսք է գնում դավադրության մասին: Խոսքը հանցանք կատարելու համաձայնությունն ձեռք բերելու մասին է<sup>54</sup>: Մեր օրենսդրության համաձայն՝ դա հանցագործության նախապատրաստություն է:

**Հանցափորձը** բնորոշվում է հետևյալ կերպ. հանցափորձ է համարվում դիտավորությամբ կատարվող գործողությունը կամ անգործությունը, որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն և պարունակում է քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, սակայն անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվում՝ տվյալ հանցակազմի որևէ հատկանիշի բացակայության հետևանքով:

Հանցափորձի հասկացության մեջ, ի տարբերություն նախորդ օրենսգրքի, շեշտը դրվում է նրա վրա, որ հանցափորձի ժամանակ կարևորը ոչ թե այն է, որ հանցագործությունը չի ավարտվում, այլ այն, որ չի իրագործվում անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով: Օրինակ՝ անձը սպանում է մի կնոջ՝ կարծելով թե կինը հղի է, սակայն հետագայում պարզվում է, որ կինը հղի չէր: Հանցավորը պատասխանատվության կենթարկվի հղի կնոջ սպանության փորձի համար: Բնականաբար հանցափորձ է նաև այն իրադրությունը, երբ հանցավորը չի կարողանում իրագործել դիտավորության մեջ ընդգրկված հանցակազմն իր կամքից անկախ հանգամանքներով, որովհետև չի կարողանում կատարել ամբողջ օբյեկտիվ կողմը և հանցակազմի որևէ հատկանիշ այդ պատճառով բացակայում է:

<sup>54</sup> St' u Уголовное законодательство зарубежных стран. М. 1999, էջ 180-183:

Հանցափորձի այս հասկացությունը շատ նման է որոշ երկրների քրեական օրենսդրություններում առկա հանցափորձի հասկացությանը: Օրինակ՝ ԳԴՀ քրեական օրենսգրքի § 22-ում հանցափորձը բնորոշվում է հետևյալ կերպ. հանցափորձ է կատարում նա, ով արարքի մասին իր պատկերացումների համաձայն անմիջականորեն սկսում է հանցակազմի իրականացումը<sup>55</sup>:

Օրենքում ամրագրված է նաև տեսությանը հայտնի այն դրույթը, որ եթե հանցափորձի ժամանակ հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին ավելի փոքր վնաս է պատճառվում, քան ընդգրկված էր դիտավորության մեջ, ապա դա կլանվում է անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի մեջ և ինքնուրույն չի որակվում: Եթե հանցափորձն իրականացնելիս հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին անզգուշությամբ պատճառվում է ավելի մեծ վնաս, քան ընդգրկված էր դիտավորության մեջ կամ վնաս է պատճառվում մեկ այլ օբյեկտի, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ եթե անձը ցանկանում է սպանել մեկին, բայց նրա առողջությանը ծանր վնաս է պատճառում, ապա արարքը որակվում է որպես սպանության փորձ, իսկ եթե ցանկանում է սպանել Ա.-ին, կրակում է նրա ուղղությամբ, վրիպում է և փամփուշտը դիպչում է Բ.-ին ու մահանում է Բ.-ն, ապա արարքը կորակվի համակցությամբ՝ որպես Ա.-ի սպանության փորձ և Բ.-ին անզգուշությամբ կյանքից զրկել: Կամ ցանկանում է մեկի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել, հարվածում է նրան՝ առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառում, բայց վերջինս հարվածից ընկնում է և առողջությանը ծանր վնաս է պատճառվում: Այդ դեպքում հանցավորը պատասխան կտա դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու և անզգուշությամբ ծանր վնաս պատճառելու համար:

Օրենքը կարգավորում է նաև հանցափորձի տեսակների հարցը, որն առկա էր տեսության մեջ, բայց ուներ և ներկայումս էլ մեծ գործնական նշանակություն ունի: Ընդ որում, հանցափորձի տեսակների բնորոշումը համահունչ է ՀՀ վճռաբեկ դատարանի սոված բնորոշումներին: Այսպես՝ հանցափորձը համարվում է ավարտված, եթե անձը կատարում է այն արարքը, որն անհրաժեշտ ու բավարար էր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունն ավարտին հասցնելու համար, և գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին է հասել, կամ հանցագործությունն ավարտելու համար արարքը շարունակելու անհրաժեշտություն չկա:

Հանցափորձը համարվում է չավարտված, եթե անձը գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել սկսած արարքի կատարումը կամ նոր արարք կատարել: Այսպես, եթե հանցավորը կրակում է տուժողի վրա, վերջինս վայր է ընկնում, իսկ հանցավորը կարծում է, թե սպանել է

<sup>55</sup> St' u Уголовное законодательство зарубежных стран. М. 1999, էջ 256:

տուժողին, թեև իրականում տուժողը չի մահանում, ապա առկա է ավարտված հանցափորձը, իսկ եթե հանցավորը կրակում է տուժողի վրա, վերջինս վիրավորվում է և հանցավորը տեսնում է դա, ու գիտակցում է, որ սպանությունն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել սկսած արարքի կատարումը կամ նոր արարք կատարել (օրինակ՝ այլևս փամփուշտ չունի և պետք է այլ եղանակով կատարի սպանությունը), ապա այդ պահին առկա է չավարտված հանցափորձը:

Փոփոխության է ենթարկվել ավարտված հանցագործության հասկացությունը: Քրեական նոր օրենսգրքում այդ հասկացության մեջ շեշտը դրվում է հանցավորի դիտավորության վրա: Այժմ ավարտված հանցագործությունը բնորոշվում է հետևյալ կերպ. դիտավորյալ հանցագործությունը համարվում է ավարտված, եթե պարունակում է հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված հանցակազմի բոլոր հատկանիշները: Բանն այն է, որ եթե հանցավորը ցանկանում է սպանել տուժողին և կրակում է նրա վրա, բայց կարողանում է միայն առողջությանը ծանր վնաս պատճառել, ապա արարքը որակվում է որպես սպանության փորձ, չնայած արարքում առկա են առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի բոլոր հատկանիշները: Ուստի ճիշտ է այն ձևակերպումը, որ ավարտված հանցագործությունն առկա է այն դեպքում, երբ արարքում առկա են հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Հանցագործությունից կամովին հրաժարվելը նախատեսվել է որպես քրեական պատասխանատվությունից ազատելու տեսակ, որովհետև իրականում այդ ինստիտուտը ոչ մի առնչություն չունի հանցագործության փուլերի հետ:



## Գլուխ 8 ՀԱՆՑԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Որոշակի փոփոխությունների է ենթարկվել **հանցակցության ինստիտուտը**:

Ճշգրտվել է հանցակցության հասկացությունը: Նախ՝ նշվել է այն փաստը, որ հանցակցությունը առկա է այն դեպքում, երբ դիտավորյալ հանցանքի կատարմանը մասնակցում են քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձինք: Նշվել է նաև, որ համակատարումը բացակայում է հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում, երբ հանցանք կատարողը օգտագործում է այնպիսի անձի, որն օրենքի ուժով ընդհանրապես ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար որպես կատարող կամ հանցանքը կատարել է անզուգուշությամբ: Հանցագործության միջնորդավորված կատարման մասին են խոսում նաև ԳԴՀ, Իտալիայի քրեական օրենսդրությունները<sup>56</sup>:

Ճշգրտվել են հանցակիցների տեսակների բնորոշումները:

Հանցակիցներ են համարվում կատարողը, դրդիչը, կազմակերպիչը և օժանդակողը:

Կատարողի հասկացության մեջ փոփոխությունն այն է, որ նշվել է այն, որ կատարողը կարող է օգտագործել այնպիսի անձի, որն օրենքի ուժով **ընդհանրապես** ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության **տվյալ հանցագործության համար** որպես կատարող:

Կարգավորման է ենթարկվել նաև այն դեպքը, երբ կատարողը դրդում է հանցանք կատարելու այնպիսի անձի, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության, սակայն կատարողը չի գիտակցում դա: Այդ դեպքում, եթե կատարողի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն ավարտին է հասնում, նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության փորձի համար: Եթե կատարողի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունն ավարտին չի հասնում, ապա նա ենթակա է պատասխանատվության համապատասխանաբար՝ այդ հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար: Օրինակ՝ անձը դրդում է սպանություն կատարելու անմեղսունակին՝ չիմանալով, որ վերջինս անմեղսունակ է: Անմեղսունակը կատարում է սպանությունը: Եթե սպանությունն ավարտվում է, ապա անմեղսունակին դրդած անձը պատասխանատվության կենթարկվի սպանության փորձի համար, քանի որ հանցանքն ըստ էության չի կատարվել (անմեղսունակի կատարածը հանցանք չէ): Եթե սպանությունը խափանվում է նախապատրաստության փուլում, ապա դրդողը պատասխանատվության կենթարկվի սպանության նախապատրաստության համար, իսկ եթե խափանվի հանցափորձի

<sup>56</sup> Ст' у Уголовное право зарубежных государств. М. 2003, էջ 396, 543:

փուլում, ապա սպանության փորձի համար:

Մյուս հանցակիցների հասկացությունների մեջ փոփոխությունն այն է, որ նշվում է հանցակցության այդ տեսակը միջնորդավորված եղանակով կատարելու մասին՝ այնպիսի անձի օգտագործելու միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության: Բացի այդ՝ կազմակերպչի հասկացության մեջ նշվում է մեկ ուրիշին հանցանքի կատարումը կազմակերպելուն կամ ղեկավարելուն դրդելու մասին, ինչպես նաև, ի տարբերություն նախկին օրենսգրքի, չի նշվում կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու մասին (քրեական նոր օրենսգրքով՝ հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու մասին), որովհետև դա ըստ էության կատարողի արարք է (հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու համար ինքնուրույն պատասխանատվություն է սահմանված): Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների մեծ մասում կամզակերպչի ինստիտուտը բացակայում է. խոսվում է միայն դրդիչի և օժանդակողի մասին<sup>57</sup>:

Էական փոփոխությունների է ենթարկվել օժանդակողի հասկացությունը:

Օժանդակող է համարվում ոչ միայն այն անձը, որը հանցագործությանը նպաստել է նախկին օրենքով նշված արարքները կատարելով, այլև այն անձը, որը մեկ ուրիշին դրդել է օժանդակության, այն անձը, որը նախապես համաձայնություն է տվել մասնակցելու հանցագործությանը որպես համակատարող, սակայն մյուս համակատարողի կողմից հանցանքը կատարելու ընթացքում, անմիջականորեն չմասնակցելով հանցանքի կատարմանը, իր ներկայությամբ ամրապնդել է կատարողի՝ հանցանք կատարելու վճռականությունը, ինչպես նաև այն անձը, որը հատուկ սուբյեկտի դրդմամբ կատարել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը՝ հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, որի սուբյեկտ ինքը չի համարվում, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և չորրորդ պարբերություններով նախատեսված պայմանները: Փաստորեն, ընդլայնելով հանդերձ, տրվում է օժանդակողի արարքների սպառիչ ցանկը: Արտասահմանյան շատ երկրներում այն հիմնվում են այն գաղափարի վրա, որ օժանդակություն կարող է համարվել յուրաքանչյուր արարք, որով անձը նպաստում է, օգնում է հանցանքի կատարմանը, եթե, իհարկե, այն բավարարում է հանցակցության հատկանիշներին: Ուստի օժանդակող է համարվում յուրաքանչյուր անձ, որը որևէ ձևով օգնում է հանցանքի կատարմանը: Նման մոտեցում է առկա նաև որոշ երկրների

<sup>57</sup> Sté u Уголовное законодательство зарубежных стран М., 1999, Соучастие в преступлении - Соучастие во Франции, (հասանելի է <https://refdb.ru/look/2739268-pall.html> հղումով 22.07.2021թ. դրությամբ), Уголовное законодательство Норвегии, Перевод с норвежского / Пер.: Жмени А. В.; Науч. ред. и вступ. ст.: Голик Ю. В., Изд. Юрид. центр Пресс, СПб., 2003, էջ 57, Уголовный кодекс ФРГ, науч. ред. и вступ. статья д.ю.н., проф. Д. А. Шестакова; предисловие доктора права Г. Г. Йешека; перевод с немецкого Н. С. Рачковой, Изд. «Юридический центр Пресс», СПб., 2003, էջ 132-133:

քրեական օրենսդրություններում: Օրինակ՝ Դանիայի քրեական օրենսգրքի § 23-ի համաձայն՝ հանցագործությանը նպաստելու համար քրեական պատասխանատվության են ենթակա այն անձինք, ովքեր օժանդակել են հանցագործությանը կամ նպաստել են դրան խորհուրդներով, ցուցումներով կամ այլ գործողություններով<sup>58</sup>: Թայլանդի քրեական օրենսգիրքն առանձնացնում է կատարողներին, դրդիչներին և հանցակիցներին ովքեր նպաստում են հանցագործությանը<sup>59</sup>:

Փոփոխություններ են առկա նաև հանցակիցների քրեական պատասխանատվության հարցում: Քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ հանրորեն վտանգավոր հետևանքները մեղսագրվում են բոլոր համակատարողներին, եթե նրանց դիտավորության մեջ ընդգրկված է եղել այդ հետևանքների առաջացումը, անկախ նրանից, թե կոնկրետ ում արարքից են առաջացել այդ հետևանքները: Օրինակ՝ եթե համակատարողները ցանկանում են ծեծելով սպանել մեկին և վերջինս մահանում է, ապա բոլորն էլ պատասխանատվության կենթարկվեն սպանության համար, անկախ նրանից, թե ում հարվածն է եղել մահացու, եթե բոլորի մոտ էլ առկա է եղել սպանելու կոնկրետացված կամ չկոնկրետացված դիտավորությունը (բանն այն է, որ ծեծողներից ոմանք հնարավոր է չկարողանան մահացու հարված հասցնել, որովհետև հարվածում էին ասենք զոհի ոտքերին այն պատճառով, որ տեղ չկար): Այս նորմը կարգավորում է որոշ դեպքերում համակատարողների արարքների որակման հարցում գործնականում խնդիրներ առաջացնող այն իրադրությունները, երբ հնարավոր չի լինում պարզել, թե համակատարողներից կոնկրետ ում արարքից են առաջացել հանցագործության հետևանքները կամ, երբ համակատարողները հանցանքը կատարում են միասնական դիտավորությամբ, սակայն հանցագործությամբ պատճառված վնասն առաջանում է նրանցից մեկի կամ մի քանիսի արարքներից:

Բացի այդ նշվում է, որ եթե համակատարողների հանցագործությունն ավարտին չի հասնում իրենց կամքից անկախ հանգամանքներով, ապա Հատուկ մասի հոդվածից բացի, հղում է կատարվում նաև օրենսգրքի 43-րդ կամ 44-րդ հոդվածի վրա:

Ի տարբերություն նախկին օրենսգրքի, նորի համաձայն՝ եթե կատարողի կողմից իրենից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չհասցնելու դեպքում մյուս հանցակիցները պատասխանատվություն են կրում ոչ թե հանցագործության նախապատրաստությանը կամ հանցափորձին հանցակցելու, այլ հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար: Բանն այն է, որ ի սկզբանե հանցակիցների դիտավորության մեջ եղել է ոչ թե նախապատրաստությանը կամ հանցափորձին հանցակցելը, այլ ավարտված հանցագործությանը հանցակցելը, դրա

<sup>58</sup> St' u Уголовный кодекс Дании, Науч. ред. С. С. Беляев, Пер. с дат. С. С. Беляева и А. Н. Рычевой, Изд. Юридический центр Пресс (СПб.), СПб., 2001, էջ 27:

<sup>59</sup> St' u Уголовный кодекс Таиланда, Научное редактированиеи предисловие: Голик Ю. В., Коробеев А. И., Перевод: Четсумон А., Изд. "Юридический центр Пресс", СПб., 2005, էջ 61-62:

համար էլ ճիշտ է թվում այն դիրքորոշումը, որ այդ դեպքում հանցակցությունը բացակայում է և գործ ունենք պարզապես հանցանքը կատարողի հետ:

Նոր օրենսգրքով յուրովի է լուծվում նաև այն հարցը, թե ինչպես պետք է որակվի հանցակիցների արարքը, այսպես կոչված, չհաջողված հանցակցության դեպքում, երբ հանցագործությունն ավարտին չի հասնում կազմակերպչի, դրդիչի կամ օժանդակողի կամքից անկախ հանգամանքներով: Չհաջողված հանցակցության դեպքում նախկին օրենսգրքով մյուս հանցակիցները միանշանակ պատասխան էին տալիս միայն դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար, իսկ նոր օրենսգրքով նաև հանցափորձի համար: Եթե հանցագործությունը կազմակերպելուն, դրդելուն կամ օժանդակելուն ուղղված արարքները չեն հաջողվում նշված անձանց կամքից անկախ հանգամանքներով, ապա նրանք պատասխանատվություն են կրում իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար, եթե կատարողի մեջ հանցանք կատարելու դիտավորություն չի առաջանում կամ ծանր հիվանդության, մահանալու կամ այլ պատճառներով կատարողը ձեռնամուխ չի լինում հանցանքի կատարմանը կամ հանցագործությունից կամովին հրաժարվում է հանցագործության նախապատրաստության փուլում: Իսկ եթե կատարողը հանցագործությունից կամովին հրաժարվում է հանցափորձի փուլում, կատարում է հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասը, ապա մյուս հանցակիցները պատասխանատվության կենթարկվեն դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար:

Նոր օրենսգրքում կարգավորվում է հանցագործության ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները հանցակիցներին մեղսագրելու հարցը: Ըստ օրենքի՝ հանցակիցները ենթակա են պատասխանատվության հանցագործության միայն այն ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքների համար, որոնք գիտակցվել են նրանց կողմից: Նախ՝ պետք է նշել, որ խոսքը հանցակազմի ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքների մասին է: Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող կամ մեղմացնող այն հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ չեն, այլ հաշվի են առնվում միայն քրեական պատասխանատվությունն ու պատիժը անհատականացնելու համար, անհատական բնույթ ունեն և վերաբերում են միայն կոնկրետ անձին. դրանք չեն կարող մեղսագրվել մյուս հանցակիցներին:

Բացի այդ՝ անհրաժեշտ է նշել, որ կազմակերպչին, դրդիչին կամ օժանդակողին վերաբերող ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները վերաբերում են միայն նրան, ում կապակցությամբ դրանք առկա են: Այսինքն՝ օրինակ՝ կազմակերպչի արարքում կամ նրա անձին վերաբերող ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները վերաբերում են միայն նրան և չեն կարող տարածվել մյուս հանցակիցների վրա: Օրինակ՝ կազմակերպիչը սպանությունը կազմակերպում է շահադիտական

դրդումներով, իսկ կատարողը հասարակ սպանություն է կատարում՝ ընկերոջ շահերից ելնելով:

Ինչ վերաբերում է ծննդկանի կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից հետո՝ հոգեճնշող կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում իր մինչև երեք ամսական երեխայի սպանությանը, ապա այս դեպքում հանցակիցները պետք է ինքնուրույն պատասխանատվություն կրեն, քանի որ հանցակազմի հատկանիշները (հոգեճնշող կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակ) վերաբերում են զուտ ծննդկանին: Դա է պատճառը, որ օրենքն այս հանցագործության հանցակիցների համար առանձին պատասխանատվություն է նախատեսել:

Նոր օրենսգրքում, ի տարբերություն նախկինի, կարգավորվում է նաև **հատուկ սուբյեկտի կողմից կատարվող հանցագործություններում հանցակցության խնդիրը**:

Այսպես, եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը կատարել է հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության տվյալ հանցագործությանն օժանդակելու համար, եթե նրա արարքում այլ հանցակազմ չկա:

Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, և նրա արարքում առկա է այլ հանցակազմ, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն հատուկ սուբյեկտով հանցագործությանը օժանդակելու համար, եթե հատուկ սուբյեկտով հանցագործության համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի արարքում և հակառակը՝ եթե հատուկ սուբյեկտով հանցագործության համար ավելի մեղմ պատիժ է նախատեսված, քան այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի արարքում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն այդ հանցագործության համար:

Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, և նրա արարքում առկա է այլ հատուկ սուբյեկտով հանցագործության հանցակազմ, որի սուբյեկտ է ինքը, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության որպես այդ հանցագործության կատարող: Օրինակ՝ ՀՀ քաղաքացին դրդում է մեկ այլ երկրի քաղաքացու լրտեսություն կատարի՝ ի վնաս ՀՀ շահերի: Այդ դեպքում ՀՀ քաղաքացին պատասխան կտա պետական դավաճանության համար, իսկ օտարերկրյա քաղաքացին՝ լրտեսության համար:

Եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության

հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմն իր նախաձեռնությամբ, ապա ենթակա է պատասխանատվության քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված մեկ այլ հանցագործության համար, եթե նրա արարքում կան այդ հանցագործության հատկանիշները: Օրինակ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող անձը ներկայանում է քաղաքացիներին որպես իշխանության ներկայացուցիչ և իբրև թե նրանց օգտին որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար գումար է վերցնում: Այդ անձը պատասխանատվության կենթարկվի ոչ թե կաշառք ստանալու համար, քանի որ պաշտոնեական հանցագործության սուբյեկտ չէ, այլ կաշառք ստանալու համար, այլ օրենսգրքի 440-րդ հոդվածի առաջին մասով, որի հատկանիշներն առկա են նրա արարքում:

Նոր օրենքում կարգավորվել է նաև **հանցակցի սահմանզանցման** հարցը:

Այսպես՝ եթե հանցանքը կատարողը վնաս է պատճառում այն օբյեկտին, որին վնաս պատճառելը պայմանավորված էր հանցակիցների հետ, սակայն պայմանավորվածից ավելի ծանր վնաս է պատճառում կամ վնաս է պատճառում պայմանավորված օբյեկտին, սակայն պայմանավորվածի փոխարեն այլ՝ ավելի ծանր հանցանք կատարելով, որով իրագործվում է նաև հանցակիցների նպատակը, կամ պայմանավորված հանցանքը կատարում է ծանրացնող հանգամանքով, որն ընդգրկված չէր մյուս հանցակիցների դիտավորության մեջ, ապա հանցակիցները ենթակա են քրեական պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը հանցակցելու համար: Օրինակ՝ հանցակիցները պայմանավորվում են տուժողի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառել, սակայն կատարողը ծանր վնաս է պատճառում, կամ հանցակիցները պայմանավորվում են մանր չափերի հափշտակություն կատարել, սակայն կատարողը խոշոր չափերի հափշտակություն է կատարում և այլն, կամ պայմանավորվում են շորթում կատարել, բայց կատարողը ավազակություն է կատարում, կամ պայմանավորվում են հասարակ սպանություն կատարել, բայց կատարողը սպանությունը կատարում է ծանրացնող հանգամանքներով:

Եթե հանցանք կատարողը պայմանավորվածի փոխարեն կատարում է ավելի մեղմ հանցանք, մեկ այլ օբյեկտի վնաս պատճառելով, ապա մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար, իսկ եթե ավելի թեթև վնաս է պատճառում պայմանավորված օբյեկտին, ապա մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար:

Եթե հանցանք կատարողը պայմանավորվածի փոխարեն վնաս է պատճառում այլ օբյեկտի, ապա մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց

դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ կատարողը պայմանավորված հանցանքի փոխարեն կատարում է մեկ այլ՝ տարաբնույթ հանցանք՝ պայմանավորվածի փոխարեն վնաս պատճառելով մեկ այլ օբյեկտի: Օրինակ՝ հանցակիցները պայմանավորվել են հափշտակություն կատարել, սակայն կատարողը դրա փոխարեն սպանություն է կատարում, կամ հանցակիցները պայմանավորվել են շորթում կատարել, սակայն կատարողը տուժողի առողջությանը ծանր վնաս է պատճառում՝ առանց շորթման որևէ փորձ կատարելու: Նման իրադրությունները նույնպես չհաջողված հանցակցության դրսևորումներ են, ուստի մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար:

Օրենքը կարգավորում է որակական սահմանազանցման ևս մի տեսակ, երբ կատարողը վնաս է պատճառում այլ օբյեկտի, սակայն դրանով փաստորեն իրագործվում է նաև հանցակիցների դիտավորությամբ ընդգրկված հանցանքը: Օրենքի համաձայն՝ եթե կատարողը պայմանավորվածի փոխարեն մեկ այլ օբյեկտի է վնաս պատճառում, ապա մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը հանցակցելու համար, եթե կատարողի արարքն ավելի ծանր հանցագործություն է և հանցակիցների դիտավորության մեջ ընդգրկված հանցանքը դրա բաղկացուցիչ մասն է ու կլանվում է կատարողի հանցագործությամբ: Օրինակ՝ հանցակիցները պայմանավորվում են տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառել, սակայն կատարողը սպանում է նրան: Այս դեպքում հանցակիցները պետք է պատասխանատվության ենթարկվեն առողջությանը ծանր վնաս պատճառելուն հանցակցելու համար: Առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելուն պայմանավորվելու դեպքում, եթե կատարողը կյանքից զրկի տուժողին, հանցակիցները պատասխանատվության կենթարկվեն դրանց նախապատրաստության համար, որովհետև դրանք վտանգավոր չեն կյանքի համար: Օրենքը նշում է կատարողի կողմից ավելի ծանր հանցանք կատարելու մասին: Ուստի, եթե կատարողը վնաս է պատճառում այլ օբյեկտի, սակայն կատարվածը ավելի թեթև հանցանք է, ապա մյուս հանցակիցները պետք է պատասխանատվության ենթարկվեն իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության համար: Օրինակ՝ եթե հանցակիցները պայմանավորվել են տուժողին սպանել, սակայն կատարողը դրա փոխարեն դիտավորությամբ նրա առողջությանն է վնաս պատճառում, ընդ որում նա հենց այդպիսի վնաս պատճառելու և ոչ թե սպանության դիտավորություն է ունենում, ապա մյուս հանցակիցները պետք է ենթարկվեն պատասխանատվության սպանության նախապատրաստության համար:

Բացի կատարողից, բացառիկ դեպքերում սահմանազանցում կարող են թույլ տալ նաև մյուս հանցակիցները: Նման դեպքերում մյուս հանցակիցների արարքների որակումը պետք է իրականացվի սահմանազանցման դեպքում արարքի որակման արդեն նշված կանոններով: Օրինակ՝ դրդիչը դրդում է մեկ ուրիշին, որ վերջինս իր հերթին դրդի կատարողին տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու, սակայն երկրորդ դրդիչը կատարողին դրդում է սպանության: Այդ դեպքում առաջին դրդիչը պետք է պատասխանատվության ենթարկվի առողջությանը ծանր վնաս պատճառելուն դրդելու համար: Իսկ եթե դրդիչը դրդում է մեկ ուրիշին, որ վերջինս իր հերթին դրդի կատարողին սպանության, սակայն երկրորդ դրդիչը դրդում է առողջությանը վնաս պատճառելու, ապա առաջին դրդիչը պետք է պատասխանատվության ենթարկվի սպանության նախապատրաստության համար: Կամ՝ եթե դրդիչը կամ կազմակերպիչը դրդում են մեկ այլ անձի, որ վերջինս կատարողին դրդի գողության կամ կազմակերպի գողություն, իսկ վերջինս կատարողին դրդում է կողոպուտի կամ ավազակության, կամ կազմակերպում է այդ հանցանքներից որևէ մեկի կատարումը, ապա առաջին դրդիչը կամ կազմակերպիչը պետք է պատասխանատվության ենթարկվեն գողությունը դրդելու կամ կազմակերպելու համար: Օժանդակողի սահմանազանցման դեպքերում մյուս հանցակիցների արարքների որակումը խնդիրներ չի առաջացնում: Եթե օժանդակողը նպաստում է հանցանքի կատարմանը և այն կատարվում է, ապա մյուս հանցակիցները բնականաբար քրեական պատասխանատվության են ենթարկվում իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը հանցակցելու համար: Օրինակ՝ պայմանավորվածության համաձայն՝ օժանդակողը պետք է շարքից հաներ այն պահեստի ազդանշանային համակարգը, որտեղից հանցակիցները պետք է հափշտակություն կատարեին, սակայն օժանդակողը, բացի ազդանշանային համակարգը շարքից հանելուց նաև սպանում է պահակին: Այս դեպքում մյուս հանցակիցները պետք է պատասխանատվության ենթարկվեն միայն հափշտակության համար:

Փոփոխությունների է ենթարկվել **հանցակցության ձևերի** ինստիտուտը: Պահպանվել է հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարած լինելը (նախական համաձայնությամբ կամ առանց նախնական համաձայնության):

Նորությունները հանգում են հետևյալին:

Կազմակերպած խմբի և հանցավոր համագործակցության փոխարեն նախատեսվել է հանցավոր կազմակերպությունը: Պետք է նշել, որ արտասահմանյան շատ երկրների քրեական օրենսդրություններում, որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված կամ միայն հանցավոր կազմակերպությունը, կամ միայն կազմակերպված խումբը՝ դրանք չտարանջատելով իրարից<sup>60</sup>:

<sup>60</sup> St' u Уголовное законодательство зарубежных стран, (Англии, США, Франции, Германии, Японии),



Գործնականում հաճախ դժվարություն էր առաջացնում դրանք միմյանցից սահմանազատելը: Չնայած ՀՀ վճռաբեկ դատարանը մշակել էր դրանք միմյանցից սահմանազատելու չափանիշներ<sup>61</sup>, բայց, կարծում ենք, որ դրանք հստակ չեն: Օրինակ՝ վճռաբեկ դատարանը խոսում է հանցավոր համագործակցության ավելի համախմբված լինելու մասին: Ինչ է նշանակում «ավելի», ինչքան է դա: Դրա փոխարեն քրեական նոր օրենսգրքը հստակ նշում է, որ հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից:

Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը: Հանցավոր կազմակերպության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքերում, երբ դրա անդամների թիվը երկուսից ավելի է: Ըստ այդմ՝ քրեական նոր օրենսգրքում հանցավոր կազմակերպությունը բնորոշվում է որպես երեք կամ ավելի անձից բաղկացած խումբ: Հանցավոր կազմակերպության մյուս կարևոր հատկանիշը խմբի կամ խմբերի միավորման կայունությունն է: Կայունություն ասելով հասկացվում է, որ խումբը ստեղծվել է տևական ժամանակով հանցավոր գործունեություն իրականացնելու նպատակով: Որպես կանոն խումբը կամ խմբերի միավորումը ստեղծվում են մեկից ավելի հանցանքներ կատարելու նպատակով, սակայն չի բացառվում, որ դրանք ստեղծվեն մեկ, բայց այնպիսի հանցանք կատարելու համար, որը երկարատև նախապատրաստություն է պահանջում: Օրինակ՝ խումբը ստեղծվել է բանկի վրա ավազակային հարձակում կատարելու նպատակով, ինչի համար ամիսներ շարունակ նախապատրաստական գործունեություն է իրականացվում (հարձակման ենթակա օբյեկտի ուսումնասիրությունը, հանցագործության գործիքներ կամ միջոցներ ձեռք բերելը, բանկի պահպանության առանձնահատկությունները ուսումնասիրելը, կատարողներ հավաքագրելը և այլն): Կայունությունը նշանակում է նաև, որ խմբի անդամների միջև կայուն կապեր են հաստատված՝ ուղղված հանցավոր նպատակների իրագործմանը: Ստեղծված խումբը կամ խմբերի միավորումը հանցավոր կազմակերպություն գնահատելու համար դրանց նպատակների մեջ ընդգրկված հանցագործությունների վտանգավորության աստիճանը նշանակություն չունի: Նման խմբեր կարող են ստեղծվել

сборник законодательных материалов, под ред. **И. Д. Козочкина**, Изд. Зерцало, М., 1999, УК Франции, էջ 232:

<sup>61</sup> Տե՛ս Հասմիկ Մալխասյանի և մյուսների գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 11.05.2011 թ. թիվ ԼԴ/0136/01/10 որոշումը, Արթուր Մովսիսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 01.08.2018թ. թիվ ԵԱԴԴ/0051/01/17 որոշման 12.1 կետը:

Տե՛ս Уголовное законодательство зарубежных;

նան ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ կատարելու համար: Օրինակ՝ խումբը ստեղծվում է պահեստարաններ կամ շինություններ ապօրինաբար մուտք գործելով հափշտակություններ կատարելու համար: Նկատի ունենալով նման խմբերի բարձր հանրային վտանգավորությունը՝ օրենքը սահմանում է, որ հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքերում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

Հանցանքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը քրեական օրենսգրքի Հատուկ մասի բազմաթիվ հոդվածներով նախատեսված է որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք: Վերը նշված դրույթը նշանակում է, որ հանցանքը կորակվի այս ծանրացնող հանգամանքով ոչ միայն այն դեպքերում, երբ դա կատարվել է խմբի մեկից ավելի անդամների կողմից, այլև այն դեպքերում, երբ հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացրել է խմբի թեկուզ մեկ անդամը: Բացի այդ՝ հանցանքը կորակվի այս ծանրացնող հանգամանքով այն դեպքերում, երբ խմբի առաջադրանքով հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացնում է խմբի անդամ չհանդիսացող անձը: Դրա դասական օրինակ կարող է լինել վարձու մարդասպանը, որը, հանցավոր կազմակերպության անդամ չհանդիսանալով, կատարում է խումբը ստեղծողի կամ ղեկավարողի՝ որևէ մեկին սպանելու պատվերը:

Օրենքը նշում է, որ հանցավոր կազմակերպություն ստեղծած կամ ղեկավարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու համար, ինչպես նաև հանցավոր կազմակերպության կողմից կատարված այն բոլոր հանցանքների համար, որոնք ընդգրկված են եղել նրա դիտավորության մեջ: Քրեական օրենսգրքի Հատուկ մասի 318-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսված հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու համար: Ուստի հանցավոր կազմակերպություն ստեղծած կամ այն ղեկավարող անձը նախ՝ պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի 318-րդ հոդվածով: Բացի այդ՝ նա պետք է պատասխանատվության ենթարկվի հանցավոր կազմակերպության կողմից կատարված բոլոր այն հանցանքների համար, որոնք ընդգրկված են եղել նրա դիտավորության մեջ:

Հանցավոր կազմակերպության անդամը ենթակա է քրեական պատասխանատվության հանցավոր կազմակերպությանը մասնակցելու համար, ինչպես նաև այն հանցագործության կամ հանցագործությունների համար, որոնց կատարմանը կամ նախապատրաստությանը նա մասնակցել է:

Այս անձանց արարքները որակելիս օրենսգրքի 46-րդ հոդվածի վրա հղում չի կատարվում:

Նշվում է նաև տեսությանը հայտնի այն դրույթը, որ եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը՝ առանց կոնկրետացնելու դրա ձևը, և մյուս ձևերը նախատեսված չեն որպես առավել ծանրացնող հանգամանք, ապա արարքը որակվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նախատեսված ծանրացնող հանգամանքով:

Նշվում է նաև, որ եթե հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը նոր քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի համապատասխան մասով նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք, ապա դա չի մեղսագրվում հանցագործության անչափահաս մասնակիցներին: Օրենսդիրը հաշվի է առել այն, որ խմբով գործելն անչափահասների բնական վիճակն է, իսկ բնական երևույթի համար չի կարելի պատասխանատվությունը խստացնել, բացի այդ անչափահասների նկատմամբ պետք է դրսևորել հնարավորինս մեղմ մոտեցում: Դա չի կարող համարվել նաև պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք:

## Գլուխ 9

### ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՒԹՅԱՆ

### ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հանցագործությունների բազմակիությունը եղել և մնում է քրեական իրավունքի գիտության առավել բարդ, բազմաշերտ և հակասական ինստիտուտներից մեկը: Դրա վերաբերյալ առկա են բազմաթիվ տեսական հայեցակարգեր, որոնցից ոչ մեկը միանշանակ չի ընդունվում թե՛ տեսական և թե՛ գործնական մակարդակներում:

Մինչ քրեական նոր օրենսգրքի ընդունումը՝ հանցագործությունների բազմակիության հասկացությունը քննարկվել է բացառապես տեսական մակարդակում: Նախկին ԽՍՀՄ երկրների քրեական օրենսգրքերում ևս հանցագործությունների բազմակիության առանձին ինստիտուտ ներառված չէ, իսկ օրինակ՝ Վրաստանի քրեական օրենսգրքում՝ հանցագործությունների բազմակիությունը, թեև ներառված է առանձին գլխում, սակայն դրա հասկացությունը տրված չէ (Վրաստանի քրեական օրենսգիրք, գլուխ 5):

Քրեական նոր օրենսգրքով ՀՀ-ում առաջին անգամ տրվել է հանցագործությունների բազմակիության հասկացությունը: Այսպես՝ նոր քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունների բազմակիություն է համարվում միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանք կատարելը»: Տեսության մեջ առկա են հանցագործությունների բազմակիության բազմաթիվ հասկացություններ, ինչպես օրինակ՝ «Հանցագործությունների բազմակիություն ասելով պետք է հասկանալ այն դեպքերը, երբ անձը մեկ կամ մի քանի արարքներով կատարում է երկու կամ ավելի հանցանք»<sup>62</sup>, «Հանցագործությունների բազմակիությունը միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանրության համար վտանգավոր արարքների կատարումն է, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է որոշակի հանցակազմի բոլոր հատկանիշները»<sup>63</sup> և այլն: Այս դիտանկյունից՝ օրենսդրորեն հանցագործությունների բազմակիության հասկացության նախատեսումն ունի կարևոր նշանակություն: Այն կնպաստի իրավական որոշակիության մակարդակի բարձրացմանը և հնարավորինս կբացառի տարամեկնաբանությունները:

Քրեական նոր օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանցագործությունների բազմակիության տեսակներն են հանցագործությունների համակցությունը և հանցագործությունների ռեցիդիվը»: Թեև՝ նախկին քրեական օրենսդրությամբ ևս, ըստ էության, սահմանված էին բազմակիության նշված տեսակները, սակայն այդ մասին որևէ նշում չկար, իսկ հանցագործությունների համակցության և ռեցիդիվի ինստիտուտ-

<sup>62</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով)/Ս. Առաքելյան, Ա. Գաբրիելյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 296:

<sup>63</sup> Տե՛ս <https://stykrf.ru/17>

ները քննարկվում էին «Հանցագործության հասկացությունը և տեսակները» վերտա-  
ռությամբ 3-րդ գլխում (20 և 22 հոդվածներ):

Քրեական նոր օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցագործու-  
թյունների բազմակիությունը բացակայում է, եթե նախորդ հանցագործության համար  
մարվել կամ վերացվել է դատվածությունը, կամ անձն օրենքով սահմանված կարգով ա-  
զատվել է քրեական պատասխանատվությունից»: Այս դրույթն ունի ճշգրտող բնույթ:  
Դոկտրինալ մակարդակում՝ որևէ հարց կամ տարակուսանք չի առաջացրել այն մոտե-  
ցումը, համաձայն որի՝ հանցագործությունների բազմակիության մեջ չեն կարող ներառ-  
վել կամ դիտարկվել այն հանցանքները, որոնց համար մարվել կամ վերացվել է դատվա-  
ծությունը: Հանցագործությունների բազմակիությունն առկա չէ նաև այն դեպքում, երբ նա-  
խորդ հանցանքի համար անձն օրենքով սահմանված կարգով ազատվել է քրեական պա-  
տասխանատվությունից: Տեսության մեջ վաղուց կարծրացած այս դրույթների օրենսդրո-  
րեն սահմանումը ևս կարևոր է, քանի որ գործնականում դրանք կարող են տարբեր մեկ-  
նաբանություններ ունենալ, որոնք շեղվում են ընդունված մոտեցումներից՝ հանգեցնելով  
անձի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումների:

Քրեական նոր օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանցագործու-  
թյունների բազմակիությունը բացակայում է մեկ տևող կամ շարունակվող հանցագոր-  
ծության դեպքում»: Տևող կամ շարունակվող հանցագործությունները հանդիսանում են  
եզակի հանցագործության տեսակներ և, առանձին վերցրած, չեն կարող առաջացնել  
հանցագործությունների բազմակիություն: Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 24-րդ և  
25-րդ կետերը սահմանում են տևող և շարունակվող հանցագործությունների հասկա-  
ցությունները: Տևող հանցագործությունը բնորոշվում է որպես՝ տևական ժամանակա-  
հատվածում միևնույն հանցանքի անընդհատ իրականացում, իսկ շարունակվողը՝ մեկ  
միասնական դիտավորությամբ, միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական արարքնե-  
րով հանցանքի կատարում: Ինչպես նշվեց՝ այս պարագայում խոսքը եզակի հանցագոր-  
ծության դրսևորման մասին է և բազմակիությունը նշված դեպքերում բացակայում է:

Քրեական նոր օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Հանցագործու-  
թյունների բազմակիությունը բացակայում է սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատես-  
ված քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում»: Այս իրավակարգավորման  
նախատեսումը ևս կարևոր է, քանի որ քրեաիրավական նորմերի մրցակցությունը պետք  
է հստակ սահմանազատել հանցագործությունների բազմակիությունից: Այս մասին  
կխոսվի ստորև:

**ՀԱՏՈՒՎ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Քրեական նոր օրենսգրքը սահմանել է առանձին իրավակարգավորում՝ կապված հատուկ մասում նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության հետ: Այս իրավակարգավորումը եզակի է մեր քրեական օրենսդրությամբ, քանզի դրա համարժեքներն այլ երկրների քրեական օրենսգրքերում բացակայում են: Հատուկ մասում նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության ինստիտուտն առավելապես առնչվում է հանցագործությունների որակման հիմնահարցերին և քննարկվում է դոկտրինալ մակարդակում: Օրենսդրորեն հատուկ մասում նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության ինստիտուտի ամրագրումը կարող է էապես նպաստել հանցագործությունների որակման գործընթացի դյուրինացմանը՝ ստեղծելով միասնական իրավակիրառ պրակտիկա:

Հատուկ մասում նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցության ինստիտուտն անմիջականորեն առնչվում է հանցագործությունների բազմակիությանը:

Հատուկ մասի նորմերի մրցակցությունն առկա է այն ժամանակ, երբ կատարված մեկ արարքը համապատասխանում է Հատուկ մասի երկու հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին, սակայն օրենքն այդ արարքի համար առանձնացնում է առանձին նորմ՝ հաշվի առնելով հանցակազմի այս կամ այն հատկանիշի առանձնահատկությունը: Հատուկ մասի նորմերի մրցակցության դեպքում կատարված արարքը պետք է որակել մեկ հոդվածով կամ հոդվածի մասով, ընդ որում՝ այն հոդվածով, որն առավել ամբողջական է արտացոլում կատարված հանցանքի բոլոր հատկանիշները<sup>64</sup>:

Քրեական նոր օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքը որակվում է սույն օրենսգրքի մեկ հոդվածով կամ հոդվածի մեկ մասով կամ կետով»:

Քննարկվող նորմի համաձայն՝ եթե կատարված մեկ արարքը համապատասխանում է երկու հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին, արարքը պետք է որակել մեկ հոդվածով կամ հոդվածի մասով, ընդ որում՝ այն հոդվածով, որն առավել ամբողջական է արտացոլում կատարված հանցանքի բոլոր հատկանիշները:

Այնուհետև անդրադարձ է կատարվում քրեաիրավական նորմերի մրցակցության որոշակի դրսևորումների բացահայտմանը: Այսպես՝ 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են հանցակազմի

---

<sup>64</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով)/Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Ն. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 307:

մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ապա արարքը որակվում է միայն մեղմացնող հանգամանքներով հանցակազմը նախատեսող հոդվածով»: Օրինակ՝ 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով պատասխանատվություն է սահմանվում այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության համար, իսկ 156-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության համար: 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձը հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարի այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն, ապա նրա արարքը կորակվի միայն 156-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներով, որպես՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն:

Քննարկվող հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները, ապա արարքը որակվում է հոդվածի միայն առավել ծանրացնող հանգամանքները նախատեսող մասով»: Այս իրավակարգավորման նախատեսումը ևս հույժ կարևոր է՝ հանցագործությունների որակման և եզակի հանցագործությունը հանցագործությունների բազմակիությունից տարբերակելու տեսանկյունից: Օրինակ՝ եթե անձը կատարել է 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ բնակարան ապօրինի մուտք գործելով ավազակություն, և միևնույն ժամանակ տուժողը եղել է հղի վիճակում, ինչը, որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ապա նրա արարքը ենթակա է որակման բացառապես որպես առավել ծանրացնող հանգամանքով նախատեսված բնակարան ապօրինի մուտք գործելով ավազակություն, իսկ այլ ծանրացնող հանգամանքները պետք է նկարագրվեն և հաշվի առնվեն պատժի անհատականացման գործընթացում:

52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են հանցակազմի մեղմացնող և առավել մեղմացնող հանգամանքները, ապա արարքը որակվում է միայն առավել մեղմացնող հանգամանքներով հանցակազմը նախատեսող հոդվածով»: Այս դրույթը ևս ունի տեսական հենք և կոչված է ապահովելու համաիրավական մարդասիրության սկզբունքի կենսագործումը:

Այն դեպքում, երբ հանցագործության մեջ միաժամանակ առկա են երկու կամ ավելի մեղմացնող հանգամանքներ, առաջնությունը տրվում է առավել մեղմացնող հանգամանքին<sup>65</sup>: Օրինակ՝ եթե հոգեկան խիստ հուզմունքի վիճակում (քրեական օրենսգրքի 156-րդ հոդված) անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ (քրեական օրենսգրքի 159-րդ հոդված) սպանություն է կատարվել, ապա արարքը պետք է որակել որպես անհ-

<sup>65</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով)/Ս. Առաքելյան, Ա. Գաբուրյան, Շ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 308:

րաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանություն: Հարկ է նշել, որ այս օրինակում արտահայտված մոտեցումը միանշանակ չի ընդունվում տեսության մեջ և դրա կապակցությամբ արտահայտվել է նաև հակառակ կարծիք, որի համաձայն՝ աֆեկտի կամ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում անձը չի կարող իրականացնել անհրաժեշտ պաշտպանություն կամ թույլ տալ դրա սահմանազանցում:

Անդրադառնալով հատուկ մասով նախատեսված քրեաիրավական նորմերի մրցակցությանը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը Գարսևան Ոսկանյանի վերաբերյալ որոշմամբ<sup>66</sup> արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Անձի մեկ արարքում միևնույն հողվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշների առկայության դեպքում (հիմնական, ծանրացնող և (կամ) առավել ծանրացնող) համապատասխան նորմերը միմյանց հետ սերտ կապի մեջ են գտնվում և իրենց հիմնական հատկանիշներով համընկնում են: Դրանցից յուրաքանչյուրն իր ծավալով և բովանդակությամբ համապատասխանում է մյուսին, սակայն առանձնացվում է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ որևէ հատկանիշի առանձնահատկությամբ: Այս դեպքում արարքը որակվում է միայն այն նորմով, որն առավել ամբողջական է պարունակում կատարված հանցանքի բոլոր հատկանիշները: Այլ խոսքով՝ եթե անձի կատարած մեկ արարքում միաժամանակ առկա են հիմնական և ծանրացնող կամ ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով հանցակազմերի հատկանիշներ, ապա արարքը գնահատվում է որպես մեկ հանցագործություն և որակվում միայն ծանրացնող (կամ առավել ծանրացնող) հանգամանքը նախատեսող մասով:

Այս առումով Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ հիմնական և ծանրացնող հանգամանքով հանցակազմերի մրցակցության դեպքում արարքը ծանրացնող հանգամանքով որակելը, ինչպես նաև ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով հանցակազմերի մրցակցության դեպքում արարքը առավել ծանրացնող հանցակազմով որակելը չի նշանակում, որ անձի արարքում առկա մյուս ծանրացնող հանգամանքներն անտեսվում են: Նախաքննական մարմինն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման և մեղադրական եզրակացության մեջ, իսկ դատարանը դատավճռի նկարագրական հատվածում պարտավոր են արտացոլել արարքում առկա բոլոր ծանրացնող հանգամանքները, ինչը թույլ է տալիս ամբողջությամբ գնահատել հանցագործության հանրային վտանգավորությունը և մեկից ավելի ծանրացնող հանգամանքների առկայությունը հաշվի առնել պատիժ նշանակելիս:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերևում շարադրվածը չի վերաբերում այն դեպքերին, երբ անձի կողմից առանձին արարքներով կատարվում են միևնույն հողվածի միևնույն կամ տարբեր մասերով՝ հիմնական, ծանրացնող կամ առա-

<sup>66</sup> Մանրամասն տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գարսևան Ոսկանյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԷԴ/0119/01/13 որոշումը:



*վել ծանրացնող հանգամանքներով նախատեսված հանցագործություններ, քանի որ տվյալ դեպքերում ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն առկա է իրական համակցություն, այլ ոչ թե եզակի հանցագործություն (...):*

Քրեական նոր օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են սույն օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմեր, ապա արարքը որակվում է միայն հատուկ նորմով»: Օրինակ՝ 435-րդ հոդվածով նախատեսված «կաշառք ստանալը» հանդիսանում է 441-րդ հոդվածով նախատեսված «պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը» հանցատեսակի հատուկ դրսևորում: 52-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորման կիրառման պարագայում հստակ է, որ պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու դեպքում՝ արարքը պետք է որակվի բացառապես 435-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներով, առանց համակցելու 441-րդ հոդվածով սահմանված հանցանքի հետ:

Քննարկվող հոդվածի վեցերորդ մասը սահմանում է. «Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը»:

Այս իրավակարգավորումն առանցքային նշանակություն ունի հանցագործությունների որակման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համատեքստում: Առանց խորքային տեսական վերլուծություններ կատարելու՝ նշենք, որ այս դրույթի կենսագործման պարագայում՝ հանցանքի բաղկացուցիչ մաս կազմող առանձին հանցանքն ինքնուրույն կորակվի միայն այն դեպքում, երբ դրա համար հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված քրեական օրենքով: Որպես օրինակ՝ կարելի է բերել ծեծի ընթացքում կատարված սպանությունը: Այս դեպքում՝ արարքը լրացուցիչ ծեծ չի որակվում, քանի որ կոնկրետ դեպքում, հանդիսացել է սպանության եղանակ, իսկ ավազակության ժամանակ կատարված սպանությունը ենթակա է որակման նաև սպանության ծանրացնող հանգամանքով հանցակազմով, քանի որ այդ արարքի համար ավելի խիստ պատիժ է սահմանվում քրեական օրենքով:

## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական նոր օրենսգրքով հանցագործությունների բազմակիության տեսակները ենթարկվել են հիմնարար փոփոխությունների: Դրանք կրում են ինչպես եզրութաբանական, այնպես էլ հայեցակարգային բնույթ: քրեական նախկին օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Հանցագործությունների համակցություն է համարվում՝ 1) սույն օրենսգրքով (տարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ տարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել. 2) այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է սույն օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ»: Այստեղ, փաստորեն, ներկայացված է հանցագործությունների համակցության դասական բնորոշումը՝ առանձնացնելով իրական և իդեալական համակցության տեսակները:

Քրեական նոր օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասով տրվում է հանցագործությունների համակցության հետևյալ բնորոշումը՝ «Հանցագործությունների համակցություն է համարվում միևնույն անձի կողմից մեկ կամ մեկից ավելի արարքներով սույն օրենսգրքով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, եթե նա դրանցից ոչ մեկի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել»:

Հանցագործությունների համակցության ինստիտուտի նման բնորոշումն ավելի համապարփակ և համակողմանի է՝ իր մեջ ներառելով թե՛ իրական և թե՛ իդեալական համակցության դրսևորումները: Նոր իրավակարգավորմամբ նշվում է նաև այն հանգամանքը, որ անձը կատարված արարքներից ոչ մեկի համար չի ենթարկվել **քրեական պատասխանատվության**, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որի պարագայում խոսքը վերաբերում էր կատարված արարքների համար դատապարտված չլինելուն:

Քրեական նոր օրենսգրքով հստակեցվել են այն դեպքերը, որոնց պարագայում հանցագործությունների համակցությունը բացակայում է: 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե անձի մեկ արարքում առկա են սույն օրենսգրքի միևնույն հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված ծանրացնող հանգամանքներ, ապա հանցագործությունների համակցությունը բացակայում է: Այդ դեպքում արարքը որակելիս նշվում են այն բոլոր կետերը, որոնցում նախատեսված հանգամանքներն առկա են անձի արարքում»: Այս դրույթը էապես կարող է նպաստել հանցագործությունների որակման գործընթացի դյուրինացմանը, քանի որ այն սահմանում է հստակ չափորոշիչներ այն դեպքերի համար, երբ անձի **մեկ արարքում** առկա են որոշակի հոդվածի **միևնույն մասի** տարբեր կետերով նախատեսված ծանրացնող հանգամանքներ: Օրինակ՝ անձը կատարել է առանձին դաժանությամբ այլ

անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն: Այս դեպքում նրա արարքը ենթակա է որակման 155-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերով, որոնք թեև առանձին նկարագրվում են, սակայն միմյանց հետ համակցություն չեն կազմում:

Քրեական նոր օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցագործությունների համակցությունը բացակայում է նաև երկրնտրելի օբյեկտիվ կողմ ունեցող հանցակազմերի իրականացման այն դեպքում, երբ միևնույն անձը միասնական դիտավորությամբ կատարում է այդ հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ մտնող մեկից ավելի արարքներ»: Այս դրույթի նախատեսումը ևս կարևոր է և միտված է հանցագործությունների որակման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Նման դրույթի նախատեսումը բացառում է տարամեկնաբանություններն այն պարագայում, երբ անձը միասնական դիտավորությամբ, մեկ հանցավոր մտադրության շրջանակներում կատարում է տվյալ հանցակազմի երկրնտրելի օբյեկտիվ կողմը կազմող արարքներից մի քանիսը: Օրինակ՝ 335-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության համար: Նշված հոդվածի դիսպոզիցիայում, որպես դրա օբյեկտիվ կողմի դրսևորումներ ներկայացված են քննարկվող առարկաներն ապօրինի կերպով ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը: 53-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման համաձայն՝ եթե անձը մեկ դիտավորության շրջանակներում ապօրինի և՛ ձեռք բերի, և՛ փոխադրի հրազենը, ապա վերջինիս արարքներում հանցագործությունների համակցությունը բացակայում է, քանի որ կատարվածը եզակի հանցագործության դրսևորում է:

Քննարկվող հոդվածի չորրորդ մասով սահմանվում է՝ «Հանցագործությունների համակցության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության յուրաքանչյուր հանցագործության համար՝ սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով»: Համանման կարգավորում առկա էր նաև քրեական նախկին օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ «Հանցագործությունների համակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր հանցագործության համար՝ սույն օրենսգրքի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով»: Նոր օրենսգրքում կատարված փոփոխությամբ հստակեցվել է քննարկվող իրավակարգավորումը, նշվել է՝ անձը «ենթակա է պատասխանատվության» արտահայտությունը և ոչ թե «պատասխանատվություն է կրում» ձևակերպումը, որն առկա էր նախկին օրենսգրքում: Ընդգծվել է նաև այն հանգամանքը, որ անձը պատասխանատվություն է կրում սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով: Այս առումով, հարկ է նկատել, որ նախկին իրավակարգավորումն ավելի համապարփակ էր, քանզի այնտեղ առանձին նշված չէր «Հատուկ մաս» ձևակերպումը: Անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս դժվար է սահմանափակվել միայն հատուկ մասի

կարգավորումներով, օրինակ՝ հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար և, այս համատեքստում, նախկին իրավակարգավորումն ավելի ամբողջական է թվում:

### **ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԸ**

Հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտը քրեական նոր օրենսգրքում ենթարկվել է արմատական փոփոխությունների, որոնք միտված են ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական միջոցների կատարելագործմանը՝ ժամանակի մարտահրավերներին համահունչ: Հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտը բավականաչափ դյուրինացվել և համապատասխանեցվել է իրավակիրառ գործունեության պահանջներին, մյուս կողմից սահմանվել են նոր կարգավորումներ, որոնց պարագայում նախկինում հանցագործությունների ռեցիդիվ համարվող արարքներն այլևս այդպիսին չեն համարվում:

Քրեական նախկին օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար»: Քրեական նոր օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, որը դատվածություն ունի դիտավորյալ հանցագործության կատարման համար»: Ինչպես տեսնում ենք, բացի որոշակի շարահյուսական տարբերություններից, հիմնական տարբերությունն այն է, որ նոր ձևակերպման մեջ բացակայում է «նախկինում» եզրույթը: Այս փոփոխությունը հստակեցնող բնույթ ունի և միտված է օրենքի տրամաբանական կառուցվածքի ապահովմանը: Ինքնին հասկանալի է, որ եթե անձը դատվածություն ունի, ուրեմն նախորդ հանցանքը կատարել է անցյալում և «նախկինում» եզրույթի կիրառությունը ավելորդ է թվում:

Քրեական նոր օրենսգիրքը հրաժարվել է «վտանգավոր» և «առանձնապես վտանգավոր» ռեցիդիվների հասկացություններից: Դրանց հետ կապված առկա էին բազմաթիվ անհամապատասխանություններ, անհստակություններ և իրավակիրառ պրակտիկայում բարդություններ, որոնք առավել խրթին էին դարձնում հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտը և, երբեմն, հանգեցնում էին անարդարացի լուծումների: Բացի այդ՝ «վտանգավոր» և «առանձնապես վտանգավոր» ռեցիդիվների սահմանումներն ավելորդ պիտակավորում (ստիգմատիզացնում) էին դրանք կատարած անձանց՝ ազդելով նաև իրավակիրառ մարմինների և դատարանի մոտ ներքին համոզմունքի ձևավորման վրա: Միննույն ժամանակ հարկ է փաստել, որ քրեական նոր օրենսգրքի 76-րդ հոդվածը կարգավորում է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու առանձնահատկությունները, որի պարագայում

հաշվի է առնվում նախկինում կատարված հանցագործությունների բնույթը, քանակը, ծանրությունը, նախկինում ազատազրկման դատապարտված լինելու հանգամանքը և այլն:

Քրեական նախկին օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում»:

Քրեական նոր օրենսգիրքը ևս սահմանում է համանման իրավակարգավորում: 54-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս հաշվի չի առնվում այն դատվածությունը, որը՝ 1) վերացվել է օրենքով սահմանված կարգով, 2) առաջացել է մինչև անձի 18 տարին լրանալը կատարված հանցագործության հետևանքով, 3) առաջացել է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ նշանակելու հետևանքով»: Բացի եզրութաբանական վերաձևակերպումներից, նոր իրավակարգավորման տարբերությունը նախորդից կայանում է նրանում, որ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ նշանակելու հետևանքով առաջացած դատվածությունը հաշվի չի առնվում հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս: Այս նորամուծությունը կրում է մարդաստիճանական բնույթ, համահունչ է արդի իրավական զարգացումներին, իսկ համանման կարգավորումներ առկա են նաև այլ երկրների քրեական օրենսդրությամբ, որոնց հաջող տեղայնացումը և ներդրումը մեր օրենսդրության մեջ ևս հույժ կարևոր է<sup>67</sup>:

---

<sup>67</sup> <https://stykrf.ru/18>

## Գլուխ 10

### ՊԱՏԺԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Քրեական նոր օրենսգիրքը տալիս է պատժի նույն բնորոշումը, ինչ և քրեական նախկին օրենսգիրքը, այն սահմանելով որպես պետական հարկադրանքի միջոց, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից քրեական օրենսգրքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը որպես պատժի նպատակներ է դիտարկում սոցիալական արդարությունը վերականգնելը, հանցագործությունները կանխելը, սակայն պատժի ենթարկված անձին ուղղելու փոխարեն սահմանում է առավել իրատեսական նպատակ՝ պատժի ենթարկված անձին վերասոցիալականացնելը: Նման փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «պատժի ենթարկված անձին ուղղել» հասկացությունը շատ վերացական է և ընդգրկուն, մինչդեռ վերասոցիալականացումը ենթադրում է անձի հետ տարվող այնպիսի աշխատանք, որը վերջինիս թույլ կտա հասարակությունում ադապտացվել, ապրել առանց քրեական օրենքի հետ կոնֆլիկտի:

Քրեական նոր օրենսգրքում բովանդակային և կառուցվածքային փոփոխության է ենթարկվել պատժի համակարգը. նախատեսվել են նոր պատժատեսակներ, օրինակ՝ ազատության սահմանափակումը, օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը, փոխվել են առանձին պատժատեսակների անվանումները, օրինակ՝ կալանք պատժատեսակը վերանվանվել է կարճաժամկետ ազատազրկում, բովանդակային փոփոխության են ենթարկվել պահպանված մյուս պատժատեսակների մեծ մասը, օրինակ՝ տուգանք պատժատեսակը թեև պահպանվել է, բայց սկզբունքային փոփոխություն է տեղի ունեցել դրա հաշվարկման հիմքի առումով: Եթե քրեական նախկին օրենսգրքում տուգանքի հաշվարկային հիմքը նվազագույն աշխատավարձն էր, ապա քրեական նոր օրենսգրքում՝ հանցանքի կատարման համար մեղավոր ճանաչված անձի եկամուտը:

Պատժի համակարգում փոփոխվել է նաև պատժատեսակների հերթախոխումը, ինչը կարևոր նշանակություն ունի, օրինակ, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելիս կամ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելիս: Եթե քրեական նախկին օրենսգրքում պատժի համակարգում առաջինը նշվում էր տուգանքը, ապա քրեական նոր օրենսգրքում՝ պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը: Պատժի համակարգը կառուցված է այն տրամաբանությամբ, որ յուրաքանչյուր հաջորդող

պատժատեսակ առավել խիստ է, քան նախորդողը: Պատահական չէ, որ պատժի համակարգը եզրափակվում է ցմահ ազատազրկմամբ:

Քրեական նոր օրենսգրքում պատժի համակարգն ունի հետևյալ տեսքը՝

1) պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը,

2) տուգանքը,

3) հանրային աշխատանքները,

4) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,

5) օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը,

6) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը,

7) ազատության սահմանափակումը,

8) կարճաժամկետ ազատազրկումը,

9) կարգապահական գումարտակում պահելը,

10) ազատազրկումը,

11) ցմահ ազատազրկումը:

Քրեական նոր օրենսգրքով փոփոխություններ են կատարվել հիմնական և լրացուցիչ պատժատեսակների սահմանման ժամանակ: Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում օրենսդիրը սահմանել է, որ մեկ հանցագործության համար կարող է նշանակվել միայն մեկ հիմնական պատիժ: Հիմնական պատժին կարող է միացվել մեկ կամ մի քանի լրացուցիչ պատիժ: Քրեական նոր օրենսգրքը որպես հիմնական պատժատեսակներ է դիտարկում հանրային աշխատանքները, կարճաժամկետ ազատազրկումը (որը համարժեք է քրեական նախկին օրենսգրքում եղած կալանք պատժատեսակին), կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը: Սրանցից բացի՝ քրեական նոր օրենսգրքը սահմանում է ևս մեկ, նոր նախատեսված հիմնական պատժատեսակ՝ ազատության սահմանափակումը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում տուգանքը, զինվորական ծառայության մեջ սահմանափակումը դասվել են այն պատժատեսակների թվին, որոնք կարող են կիրառվել և որպես հիմնական և որպես լրացուցիչ պատժատեսակ: Քրեական նախկին օրենսգրքում այս պատժատեսակները կարող էին կիրառվել միայն որպես հիմնական պատժատեսակներ:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը (որը համարժեք է քրեական նախկին օրենսգրքում նախատեսված հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ

որակավորման դասից զրկել պատժատեսակին) և քրեական նոր օրենսգրքում նախատեսված օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը կիրառվում են միայն որպես լրացուցիչ պատիժներ:

Ինչ վերաբերում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել պատժատեսակին, ապա քրեական նոր օրենսգրքում այն կարող է կիրառվել թե՛ որպես հիմնական, թե՛ որպես լրացուցիչ պատժատեսակ: Սակայն կատարվել է մեկ սկզբունքային փոփոխություն. եթե քրեական նախկին օրենսգրքում նշված էր, որ այս պատժատեսակը կարող է կիրառվել որպես լրացուցիչ պատժատեսակ միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված դեպքերում, ապա քրեական նոր օրենսգիրքը նման պահանջ չի սահմանում: Ընդ որում, այդ մոտեցումը վերաբերում է լրացուցիչ պատժի կարգավիճակով կիրառվող բոլոր պատժատեսակներին. Քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում լրացուցիչ պատժատեսակները մատնանշված չեն, հետևաբար դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորի լրացուցիչ այս կամ այն պատժատեսակը կիրառելու անհրաժեշտությունը:

Քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ հանցագործության համար անձին դատապարտելիս դատարանը, հաշվի առնելով հանցագործության բնույթը, հանգամանքները, հանցավորի անձը բնութագրող տվյալները, նրան կարող է զրկել ***պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից***. Այս պատժատեսակն, ըստ էության նույնական է քրեական նախկին օրենսգրքով սահմանված հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու պատժատեսակին, սակայն այն տարբերությամբ, որ հստակեցվել է, թե որ հատուկ կոչումներից անձին կարելի է զրկել, սահմանելով, որ դրանց թվին են դասվում պատվավոր կոչումները: Միաժամանակ, քրեական նոր օրենսգրքով անձին կարելի է զրկել նաև պետական պարգևից, ինչը նախատեսված չէր քրեական նախկին օրենսգրքով:

Կարևորագույն փոփոխություն է այն, որ եթե քրեական նախկին օրենսգրքով այս պատժատեսակը կիրառելի էր միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում, ապա քրեական նոր օրենսգիրքը նման սահմանափակում չի նախատեսում, և եթե դատարանը գտնի, որ հանցագործության բնույթով կամ հանցավորի անձով պայմանավորված, կարիք կա քննարկվող պատժատեսակը կիրառելու, ապա այդ առումով որևէ արգելք առկա չէ:

Վերականգնողական արդարադատության համար առանցքային նշանակություն ունի ***տուգանք*** պատժատեսակի կանոնակարգումը: Քրեական նախկին օրենսգիրքը սահմանում էր, որ «տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար քրեական օրենսգրքի Հատուկ մասով



նախատեսված դեպքերում և սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին ՀՀ-ում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից երեքհազարապատիկի չափով»:

Քրեական նոր օրենսգրքը ևս նախատեսել է տուգանք պատժատեսակը, բայց մի քանի առանցքային փոփոխություններով՝

Նախ, ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, տուգանքը կարող է կիրառվել որպես հիմնական պատժատեսակ՝ այն դեպքերում, երբ նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում կամ օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելիս կամ պատիժ նշանակելու կամ պատժից ազատելու առանձին ինստիտուտներ կիրառելիս, սակայն ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ նոր կարգավորումներով այն կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ պատժատեսակ:

Բացի այդ, եթե քրեական նախկին օրենսգրքում այն կիրառվում էր միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքում, ապա քրեական նոր օրենսգրքով այն կարող է կիրառվել նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների պարագայում՝ սակայն որպես լրացուցիչ պատժատեսակ: Տուգանքը որպես հիմնական պատիժ սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի հնգապատիկից հիսնապատիկի չափով: Տուգանքը որպես լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել ծանր և առանձնապես ծանր՝ գույքային վնաս պատճառելու հետ կապված կամ շահադիտական դրդումներով կատարված հանցագործությունների համար՝ հանցանք կատարած անձի ամսական եկամտի կրկնապատիկից քսանապատիկի չափով: Ի համեմատ քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում սահմանված տուգանքի չափերի նման էական փոփոխությունը (նախկինում սահմանված 30-պատիկից 3000-պատիկի փոխարեն՝ եկամտի 5-պատիկից 50-պատիկը որպես հիմնական, և 2-պատիկից 20-պատիկը՝ որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս) պայմանավորված է տուգանքի հաշվարկման հիմքում դրվող չափանիշի փոփոխությամբ:

Մասնավորապես, տուգանքի հաշվարկման հիմքում դրվում է ոչ թե նվազագույն աշխատավարձը, այսինքն պետությունում սահմանված ֆիքսված որևէ գումար, այլ հանցանք կատարած անձի եկամուտը: Քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում սահմանվում է ամսական եկամտի հաշվարկման կանոնը, ինչն էլ մանրամասն ներկայացված է ուղեցույցի համապատասխան բաժնում:

Հաշվի առնելով այն, որ քրեական նոր օրենսգրքում տուգանքի հաշվարկման հիմքում դրվում է հանցանք կատարած անձի եկամուտը, օրենսդիրը կարգավորել է նաև այն իրավիճակները, երբ անձը եկամուտ չունի կամ դրա չափը անհնարին է պարզել: Այդ դեպքերում տուգանքի չափը հաշվարկվում է հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով: Տուգանքի չափը որոշվում է այդ կարգով նաև այն

դեպքերում, երբ հանցանք կատարած անձի եկամուտն առաջացել է հանցանքն ավարտվելուց հետո կամ անձի ամսական եկամտի հաշվարկի արդյունքով դրա չափը պակաս է ստացվում նվազագույն աշխատավարձի չափից: Օրինակ, եթե 2022 թ.-ի հուլիսի 5-ին հանցանք կատարած անձի ամսական եկամուտը 55 000 ՀՀ դրամ է, ապա տուգանքի հաշվարկման հիմքում պետք է դրվի ոչ թե 55 000 ՀՀ դրամը, այլ 68 000 ՀՀ դրամը:

Քրեական նոր օրենսգրքով առավել մանրամասն են կարգավորվում այն հարցերը, որոնք դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն անձի նկատմամբ տուգանք պատժատեսակ նշանակելու հնարավորությունը քննարկելիս: Օրենսդիրը սահմանում է, որ դատարանը պետք է ուշադրություն դարձնի հանցագործության ծանրությանը, հանցագործությամբ պատճառված վնասի բնույթին ու չափին, հանցագործությամբ ստացված գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներին, դատապարտվողի ու նրա ընտանիքի գույքային դրությանը, ինչպես նաև դատապարտվողի՝ եկամուտ ստանալու հնարավորությանը կամ նրան պատկանող այնպիսի գույքի առկայությանը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել: Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքում ամրագրված է, որ եթե դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում՝ առավելագույնը 1 տարի, կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում:

Սակայն, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքը կարգավորում է նաև այն իրավիճակները, երբ տուգանքը նշանակելուց հետո դատապարտյալի նյութական վիճակի վատթարացման հետևանքով նա զրկվում է տուգանքը վճարելու հնարավորությունից: Նման դեպքերում սահմանվում է, որ դատարանը, հաշվի առնելով դատապարտյալի դիրքորոշումը՝

1) երկարաձգում է տուգանքի վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը 1 տարով,

2) նշանակում է հանրային աշխատանքներ՝ հանրային աշխատանքների 24 ժամը հաշվարկելով հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի չափով:

Ուշադրություն է պետք դարձնել այն հանգամանքին, որ թեև տուգանքի չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում հանցանք կատարած անձի եկամուտը, սակայն տուգանքը վճարելու անհնարինության դեպքում այն հանրային աշխատանքներով փոխարինելիս հանրային աշխատանքների 24 ժամը հաշվարկում է հանցանքը կատարելու պահին սահմանված նվազագույն աշխատավարձի դիմաց: Օրինակ, եթե դատարանը 2022 թ.-ի հուլիս ամսին հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակել է տուգանք՝ իր եկամտի 10-պատիկի չափով և ստացել 1 175 000 ՀՀ դրամ, որի 175 000-ը վճարելուց հետո անձի նյութական վիճակի վատթարացման հետևանքով նա զրկվել է

տուգանքի չվճարված մասը վճարելու հնարավորությունից, ապա չվճարված 1 000 000 ՀՀ դրամը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքում պետք է 1 000 000-ը բաժանի 68 000-ի, ապա ստացված ցուցիչը (մեր օրինակում՝ 14.7) բազմապատկի 24-ով: Արդյունքում՝ մեր օրինակում ստացվեց 352 ժամ, ինչը, բնականաբար, իրագործվել չի կարող, քանի որ քրեական նոր օրենսգրքով հանրային աշխատանքների վերին շեմը 270 ժամն է:

Այդ առումով քրեական նոր օրենսգրքին ունի հստակ կանոնակարգում, որը սահմանում է՝ եթե տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելիս հաշվարկի արդյունքով հանրային աշխատանքների տևողությունը գերազանցում է 270 ժամը, ապա նշանակվում են 270 ժամ տևողությամբ հանրային աշխատանքներ: Եթե հաշվարկի արդյունքով հանրային աշխատանքների տևողությունը պակաս է ստացվում 60 ժամից, ապա հանրային աշխատանքները նշանակվում են այն տևողությամբ, որն ստացվել է հաշվարկի արդյունքով: Ըստ էության, քրեական նոր օրենսգրքում այս կարգավորումը նպատակ ունի վերացնել տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելիս առկա այն բացերը, որոնք արձանագրվել էին ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի, այնպես էլ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից<sup>68</sup>:

Հարկ է նշել, որ քրեական նոր օրենսգրքով, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքով սահմանված կանոնակարգման, տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում այն հանրային աշխատանքներով փոխարինելու հնարավորություն նախատեսված չէ. օրենսդիրը սահմանում է, որ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնագանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին համարժեք գույք, եթե այդպիսին առկա է: Եթե այդպիսի գույք առկա չէ, ապա տուգանքը փոխարինվում է ազատազրկմամբ՝ ազատազրկման 3 օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ քրեական նոր օրենսգրքը նախատեսում է ոչ թե «չարամտորեն խուսափել», այլ «խուսափել» եզրույթը: Օրենսդիրը հստակեցրել է, թե ով պետք է դիտարկվի որպես տուգանք վճարելուց խուսափող, այն է՝ այն դատապարտյալը, որը տուգանքի մասին պրոբացիայի ծառայության կողմից պատշաճ ծանուցվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, տուգանքի վճարման անդորրագիրը չի ներկայացրել լիազոր մարմին կամ խախտել է տուգանքի վճարումը հետաձգելու կամ տուգանքը մաս առ մաս վճարելու կարգն ու պայմանները, բացառությամբ այն դեպքերի, երբ նման արարքները

---

<sup>68</sup> Տե՛ս, Գարիկ Սողոմոնյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թ.-ի սեպտեմբերի 13-ի թիվ ՄԴ/0001/15/13 որոշում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի եվ 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թ.-ի ապրիլի 23-ի թիվ ՄԴՈ-1082 որոշում:

պայմանավորված են եղել անձի նյութական վիճակի վատթարացմամբ: Բնականաբար, նոր կանոնակարգումների պարագայում առաջնային խնդիրներից մեկը պետք է լինի տուգանքը չվճարելու պատճառը պարզելը, ինչն էլ թույլ կտա տարանջատել «տուգանքը վճարելու անհնարինությունը» և «տուգանքը վճարելուց խուսափել» հասկացությունները: Այդ մասին անդրադարձ կատարվել է նաև Ռուշան Նիկողոսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման շրջանակներում<sup>69</sup>:

Քրեական նոր օրենսգրքում տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում օրենսդիրը նախատեսել է տուգանքը ազատագրկմամբ փոխարինելու տարբերակը: Թեև օրենսդիրը չի մատնանշում, որ խոսքը տուգանքի չվճարված մասին է վերաբերում, սակայն դա անմիջականորեն բխում է իրավական նորմերի տրամաբանական մեկնաբանման կանոններից:

Մի կարևոր հստակեցում ևս. տուգանքն ազատագրկմամբ փոխարինելիս ազատագրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Ընդ որում, եթե հաշվարկի հետևանքով ազատագրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով: Եթե Հատուկ մասի սանկցիայով ազատագրկում նախատեսված չէ, ապա այդ դեպքում ազատագրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Օրենսդիրը սահմանում է նաև տուգանքի վճարման առանձնահատկություններն այն դեպքերում, երբ տուգանքը նշանակվում է որպես լրացուցիչ պատիժ, մասնավորապես՝ սահմանելով, որ եթե այն նշանակվում է ազատությունից զրկելու հետ կապված պատժի հետ, կամ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ, և դատապարտվողը հնարավորություն չի ունենում անհապաղ կամ պատիժը կրելու ընթացքում վճարելու այն, ապա տուգանքի վճարումը կարող է հետաձգվել մինչև հիմնական պատիժը կրելու ավարտը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքում նախատեսված է, որ **հանրային աշխատանքները** դատարանի նշանակած և իրավասու մարմնի որոշած վայրում չվարձատրվող, դատապարտյալի ուսումնառությունից կամ աշխատանքից ազատ ժամանակահատվածում նրա կողմից հանրության համար օգտակար այնպիսի աշխատանքների կատարումն է, որոնք չեն վտանգում նրա ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը:

---

<sup>69</sup> Տե՛ս, Ռուշան Նիկողոսյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007 թ.-ի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-171/07 որոշում:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում դրանք հանդես են գալիս ոչ թե որպես ազատազրկման այլընտրանք, այլ՝ ինքնուրույն կիրառվող հիմնական պատիժ: Եթե քրեական նախկին օրենսգրքի Հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում հանրային աշխատանքները որպես ինքնուրույն պատժատեսակ նշված չէին, ապա քրեական նոր օրենսգրքում արդեն ամրագրված են: Քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ հանրային աշխատանքները կարող են նշանակվել քրեական օրենսգրքի Հատուկ մասով, ինչպես նաև տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու դեպքերում:

Բացի այդ, քրեական նոր օրենսգրքում կտրուկ կրճատվել է հանրային աշխատանքների տևողությունը. քրեական նախկին օրենսգրքով դրանք կարող էին նշանակվել 270 ժամից մինչև 2200 ժամ, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում՝ 60-ից 270 ժամ տիրույթում: Ավելին՝ հանրային աշխատանքների նվազագույն տևողությունը քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է պակաս լինել 60 ժամից:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, նոր կանոնակարգմամբ ևս՝ հանրային աշխատանքները կարող են կիրառվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձի նկատմամբ, սակայն եթե նախկինում նաև պահանջ էր դրված, որ այդ արարքների համար անձի նկատմամբ նշանակված ազատազրկման ժամկետը չգերազանցի 2 տարին, ապա քրեական նոր օրենսգրքով նման սահմանափակում նախատեսված չէ:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում վերանայվել են հանրային աշխատանքների կիրառման սահմանափակումները: Քրեական նախկին օրենսգրքը սահմանում էր, որ հանրային աշխատանքները չեն նշանակվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց և ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ: Մինչդեռ քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ հանրային աշխատանքներ չեն նշանակվում դատավճիռ կայացնելու պահին 15 տարին չլրացած անչափահասի, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ: Այսինքն՝ օրենսդիրը փոփոխություն է կատարել և հնարավոր դիտել հանրային աշխատանքները անչափահասների նկատմամբ կիրառել ոչ թե 16, այլ 15 տարեկանից:

Քրեական նոր օրենսգրքում սահմանված են նաև հանրային աշխատանքների կիրառման խնդիրները անձի առողջական վիճակի վատթարացման դեպքում, մասնավորապես՝ եթե հանրային աշխատանքները նշանակելուց հետո տեղի է ունեցել դատապարտյալի առողջական վիճակի այնպիսի վատթարացում, որի պայմաններում նա զրկվել է հանրային աշխատանքների հետագա կատարման հնարավորությունից, ապա անձն ազատվում է պատժի հետագա կրումից:

Ինչպես և տուգանք պատժատեսակի պարագայում, հանրային աշխատանքների դեպքում ևս օրենսդիրն առավել կոշտ դիրքորոշում է դրսևորել հանրային աշխատանքները կատարելուց խուսափողների նկատմամբ, սահմանելով, որ հանրային աշխատանքները կատարելուց խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ՝ հանրային աշխատանքների 8 ժամը հաշվարկելով ազատազրկման 1 օրվա դիմաց:

Ընդ որում, հանրային աշխատանքները կատարելուց խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը՝

1) 1 ամսվա ընթացքում կատարել է հանրային աշխատաժամերի հաշվառման քարտով նախատեսված աշխատանքների 90 տոկոսից պակաս հանրային աշխատանքներ՝ առանց հարգելի պատճառի,

2) հանրային աշխատանքների կատարման ժամանակ 1 ամսվա ընթացքում երկուսից ավելի անգամ կոպտորեն խախտել է աշխատանքային կարգապահության կանոնները,

3) ծանուցվելու դեպքում երկու և ավելի անգամ անընդմեջ կամ օրենքով նախատեսված դեպքում չի ներկայացել տարածքային մարմին,

4) հրաժարվել է հանրային աշխատանքներ կատարելուց:

Հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու կանոնը սահմանելիս՝ օրենսդիրը դրսևորել է նույն մոտեցումը, ինչ և տուգանք պատժատեսակի պարագայում և հստակեցրել, որ ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքով ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով: Այս կանոնով է իրականացվում հաշվարկը նաև այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատազրկում նախատեսված չէ: Այդ դեպքում սահմանվող ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում սահմանված է, որ *որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելը*՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելը, իսկ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելն է:

Այս պատժատեսակի ժամկետների առումով քրեական նոր օրենսգրքում տեղ գտած կանոնակարգումը նույնական է քրեական նախկին օրենսգրքում եղածին,

մասնավորապես՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես հիմնական պատիժ սահմանվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 2-7, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 1-3 տարի, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար՝ 1-5 տարի ժամկետով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական նախկին օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում ուղղակիորեն ամրագրված էին այս պատժատեսակը որպես լրացուցիչ պատիժ կիրառելու դեպքերը, իսկ քրեական նոր օրենսգրքում լրացուցիչ պատժատեսակները Հատուկ մասի հոդվածի սանկցիայում չեն արտացոլվել, օրենսդիրը հստակեցրել է այն ուղենիշերը, որոնք պետք է կիրառվեն քննարկվող պատժատեսակը որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս: Մասնավորապես՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ կարող է նշանակվել այն դեպքում, երբ դատարանը, ելնելով հանցավորի պաշտոնավարության կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու ժամանակ նրա կատարած հանցանքի բնույթից, հնարավոր չի համարում անձի կողմից հետագա ժամանակահատվածում որոշակի պաշտոններ զբաղեցնելը կամ որոշակի գործունեությամբ զբաղվելը: Այս հարցին անդրադարձ կատարել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Լիլիթ Վարդանյանի, Զարինե Այվազյանի գործով, ինչպես նաև Աշոտ Գևորգյանի գործով իր որոշումներում<sup>70</sup>: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն ազատությունից զրկելու հետ կապված պատժի հետ որպես հիմնական (հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելիս) կամ լրացուցիչ պատիժ նշանակելիս այն տարածվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելու ամբողջ ժամանակահատվածի վրա, իսկ դրա ժամկետի հաշվարկն սկսվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց հետո: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը մնացած պատժատեսակների հետ նշանակելիս դրա ժամկետը հաշվարկվում է դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Ներկայացված ձևակերպումից հետևում է, որ այս պատժատեսակը, որպես լրացուցիչ պատժատեսակ, կարող է կիրառվել ցանկացած պատժատեսակի հետ՝ ինչպես ազատությունից զրկելու հետ կապված, այնպես էլ չկապված: Քննարկվող պատժատեսակը որպես լրացուցիչ պատիժ կիրառելու հարցերին անդրադարձ կատարվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից՝ Գագիկ Գևորգյանի գործով որոշման

<sup>70</sup> Տե՛ս, Լիլիթ Վարդանյանի, Զարինե Այվազյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թ.-ի հունիսի 24-ի թիվ ԵԱՔԴ/0016/01/14 որոշում, Աշոտ Գևորգյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թ.-ի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ/0044/01/15 որոշում:

մեջ<sup>71</sup>:

Ինչպես և մյուս պատժատեսակների կատարումից խուսափելու դեպքում՝ այս պատժատեսակի դեպքում ևս այն փոխարինվում է ազատազրկմամբ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու 3 օրը հաշվարկելով ազատազրկման 1 օրվա դիմաց: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելն ազատազրկմամբ փոխարինելիս ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքով ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով:

Այս կանոնով է իրականացվում հաշվարկը նաև այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատազրկում նախատեսված չէ: Այդ դեպքում ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Քրեական նոր օրենսգրքի պատժի համակարգում տեղ գտած նորամուծություններից է *օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը* պատժատեսակը: Այս պատժատեսակը քրեական նախկին օրենսգրքում առկա չէր և սահմանվել է քրեական նոր օրենսգրքով: Մասնավորապես, օրենսդիրը սահմանել է, որ օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության ենթակա օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության սահմաններից հեռացնելն է՝ արգելելով նրան գտնվել Հայաստանի Հանրապետությունում:

Այս պատժատեսակը լրացուցիչ պատժատեսակ է, որը կարող է կիրառվել բացառապես օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ՝ պայմանով, որ վերջիններս չեն օգտվում չվերադարձելիության սկզբունքից կամ ՀՀ օրենսդրությամբ կամ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով սահմանված համանման պաշտպանությունից: ՀՀ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ այս պատժատեսակը կիրառվել չի կարող: Այն կիրառելի չէ նաև ՀՀ կամ միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված չվերադարձելիության սկզբունքից օգտվող անձանց (օրինակ՝ փախստականների, ապաստան ստացած, ապաստան հայցող անձանց) նկատմամբ, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի: Չվերադարձելիության սկզբունքից օգտվող անձանց շրջանակը սահմանված է

<sup>71</sup> Տե՛ս, Գագիկ Գևորգյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2021 թ.-ի փետրվարի 19-ի թիվ ԵԴ/1090/01/19 որոշում:



միջազգային իրավական փաստաթղթերով<sup>72</sup>, ինչպես նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով<sup>73</sup>: Քննարկվող պատժատեսակը սահմանվում է 5-10 տարի ժամկետով: Օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս դրա ժամկետի հաշվարկն սկսվում է ՀՀ տարածքից վտարելու պահից:

Օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը կատարվում է դատապարտյալի նկատմամբ նշանակված հիմնական պատիժը կրելուց հետո: Այն դեպքում, երբ արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմինը ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համաձայնություն է ձեռք բերում դատապարտյալին պատժի մնացած մասը կրելու նպատակով իր քաղաքացիության երկիր փոխանցելու վերաբերյալ, ապա օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը համարվում է ի կատար ածված դատապարտյալի փոխանցումն իրականացնելու մասին արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմնի ծանուցումն ստանալուց հետո: Այն դեպքում, երբ պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հիմքով կայացվել է անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշում, օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը կատարվում է փորձաշրջանն ավարտվելուց հետո:

Եթե օտարերկրյա քաղաքացին դատապարտվել էր հանրային աշխատանքների, ապա քրեական նոր օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում անձին պատժի հետագա կրումից ազատելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով կամ 88-րդ հոդվածով սահմանված կարգով անձին հիմնական պատժից ազատելու դեպքում օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է պատժի հետագա կրումից կամ պատժից ազատելուց հետո:

Օտարերկրյա քաղաքացին կարող է վտարվել իր քաղաքացիության պետություն կամ այն պետություն, որտեղ վերջինս մշտապես բնակվում է: Վտարման երկիրը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով դատապարտյալի կարծիքը:

Քրեական նոր օրենսգիրքը պարզաբանում է, որ այս պատժատեսակը չի կարող նշանակվել՝

1) փախստականի կարգավիճակ ունեցող կամ ՀՀ-ում ապաստան ստացած անձի նկատմամբ, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

<sup>72</sup> Տե՛ս, Convention Relating to the Status of Refugees, 28.07.1951, Protocol Relating to the Status of Refugees, 16.12.1966:

<sup>73</sup> Տե՛ս, «Փախստականների և ապաստանի մասին» օրենք, 27.11.2008:

2) չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրյա քաղաքացու նկատմամբ, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

3) մինչև հանցանք կատարելը ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում հատուկ կացության կարգավիճակ ունեցող կամ ՀՀ-ում մշտապես բնակվող անձի հետ ամուսնացած կամ խնամքին ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձի նկատմամբ,

4) եթե անձը վտարվող պետության տարածքում քրեական հետապնդման է ենթարկվում այնպիսի արարքի համար, որը կարող է պատժվել մահապատժով,

5) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է հետապնդման ենթարկվել ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար, կամ

6) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է ենթարկվել խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Օրենսդիրը հստակ ընդգծում է, որ ՀՀ-ից չեն կարող վտարվել այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է քննարկվող պատիժը, սակայն մինչև պատժի կատարումը դատապարտյալը ձեռք է բերել փախստականի կամ ՀՀ-ում ապաստան ստացածի կարգավիճակ, կամ նրա նկատմամբ հաստատվել է չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը, բացառությամբ ՀՀ պայմանագրերով նախատեսված դեպքերի:

***Չհնվորական ծառայության մեջ սահմանափակումը*** նախատեսված էր ինչպես քրեական նախկին, այնպես էլ նոր օրենսգրքով: Քրեական նոր օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցանք կատարած սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողին իր զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր (այդ թվում՝ ավելի բարձր վարձատրվող) պաշտոնի նշանակվելու, ավելի բարձր հերթական կոչում ստանալու իրավունքից զրկելն է՝ դրամական բավարարման գումարից հոգուտ պետության 10-ից մինչև 20 տոկոս պահումով:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ նոր կարգավորման մեջ տեղ են գտել մի քանի առանցքային փոփոխություններ: Նախ՝ փոխվել է այն անձանց շրջանակը, ում նկատմամբ այս պատժատեսակը կարող է կիրառվել: Նախկինում այն կիրառելի էր սպայի կամ ենթասպայի կոչում ունեցող, մինչդեռ քրեական նոր օրենսգրքով՝ սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի նկատմամբ:

Հստակեցվել է պահման ենթակա գումարի չափը՝ եթե նախկինում նշվում էր մինչև 20% պահում, ապա նոր կարգավորմամբ սահմանվում է, որ դրա տակ պետք է հասկանալ 10%-ից սկսած չափով պահում կատարելը:

Քրեական նախկին օրենսգրքով քննարկվող պատժատեսակը դիտարկվում էր միայն

որպես հիմնական պատժատեսակ, մինչդեռ քրեական նոր օրենսգրքով այն կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ պատժատեսակ:

Բացի այդ, քրեական նախկին օրենսգրքով այն կարող էր կիրառվել միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար, մինչդեռ քրեական նոր օրենսգրքով նման հստակ սահմանափակում չի արվում, այլ նշվում է, որ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու դեպքում քննարկվող պատժատեսակը չի նշանակվում, եթե հանցագործություններից որևէ մեկի համար նշանակվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

Օրենսդիրը հստակեցրել է, որ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը որպես հիմնական պատիժ կարող է նշանակվել քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Ընդ որում, քրեական նոր օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար այն որպես հիմնական պատիժ սահմանվում է 3 ամսից 3 տարի, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ 3 ամսից 2 տարի ժամկետով: Վերջին ձևակերպումը որոշակի տարբերությունների տեղիք կարող է տալ, եթե չհամադրվի նույն հոդվածի 1-ին մասի հետ:

Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասում, քննարկվող պատժատեսակը բնութագրելիս, օրենսդիրը չի հստակեցրել, թե հանցագործությունների դասակարգման որ խմբերի նկատմամբ է այն կիրառելի, ինչից կարելի է եզրակացնել, որ այն վերաբերելի է ինչպես ոչ մեծ և միջին ծանրության, այնպես էլ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին: Համադրելով քննարկվող հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ կարելի է եզրակացնել, որ զինվորական ծառայության մեջ սահմանափակումը, որպես լրացուցիչ պատժատեսակ, կարելի է կիրառել նաև ծանր և առանձնապես ծանր հանցանքների պարագայում:

Խնդրահարույց է սակայն այն հարցը, թե որպես լրացուցիչ պատժատեսակ, այն կարող է արդյո՞ք կիրառվել տուգանք պատժատեսակի հետ, քանի որ նշված երկու պատժատեսակներն էլ գույքային սահմանափակում են նախատեսում՝ անձի եկամտի որոշակի մասը հոգուտ պետության բռնագանձելով: Թեև օրենսդիրն այս հարցին պատասխան չի տվել, սակայն անտրամաբանական է այս պատժատեսակների գուգակցումը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս նախատեսվում է, որ զինվորական ծառայության մեջ սահմանափակելու ժամկետով դատարանը կարող է սահմանել կրթական կամ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու լրացուցիչ պարտականություն:

Զինվորական ծառայության մեջ սահմանափակում պատժատեսակը կրելու ընթացքում օրենքով սահմանված հիմքերով զինվորական ծառայությունից

դատապարտյալի ազատվելու դեպքում պատժի կատարումը դադարեցվում է: Ջինվորական ծառայությունից դատապարտյալի՝ իր դիմումի համաձայն ազատվելու դեպքում պատիժը փոխարինվում է քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տուգանքով՝ զինվորական ծառայության մեջ սահմանափակման 1 ամիսը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց՝ ոչ ավելի, քան տուգանքի տասնապատիկի չափով:

Քրեական նոր օրենսգրքով սահմանված նոր պատժատեսակներից է ***ազատության սահմանափակումը***: Այս պատժատեսակը, որպես այդպիսին, նախատեսված է մի շարք արտասահմանյան երկրներում, օրինակ՝ ՌԴ-ում<sup>74</sup>:

Քրեական նոր օրենսգրքով սահմանված է, որ ազատության սահմանափակումը դատապարտյալին առանց ուսումնառությունից կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելն է: Ազատության սահմանափակումը հիմնական պատժատեսակ է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ 6 ամսից 3 տարի ժամկետով: Դատարանը, ազատության սահմանափակում նշանակելով, արգելում է հանցանք կատարած անձին այցելել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ, կազմակերպել, մասնակցել կամ այցելել որոշակի միջոցառումների կամ առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը կամ որոշակի ժամերի բացակայել տնից: Օրենսդիրը հստակ մատնանշել է, որ դատարանը ազատության սահմանափակում նշանակելով, դատապարտյալի նկատմամբ սահմանում է վերը նշված արգելքներից մեկը կամ մի քանիսը:

Օրենսդիրը նաև հստակ պահանջում է, որ դատարանի նշանակած արգելքները չսահմանափակեն դատապարտյալի հետ համատեղ բնակվող անձանց ազատության կամ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը: Այս դրույթը կիրառման առումով ունի առանցքային նշանակություն, քանի որ անձի նկատմամբ ազատության սահմանափակում պատժատեսակը կիրառելիս առավելագույն ջանասիրություն պետք է դրսևորվի՝ նրա հետ համատեղ ապրող այլ անձանց նկատմամբ հնարավոր սահմանափակումները, վերջիններիս իրավունքների խախտումները կանխելու առումով: Հետևաբար, պատիժ կիրառելիս կամ պետք է հավաստիանալ, որ դատապարտյալը մենակ է բնակվում կամ ստանալ նրա հետ համատեղ ապրող անձանց կամավոր համաձայնությունը՝ իրենց հետ համատեղ բնակվող դատապարտյալի հանդեպ ազատության սահմանափակման պատժատեսակը կիրառելու արդյունքում որոշակի սահմանափակումներով պայմանավորված՝ իրենց որոշ իրավունքների կամ

<sup>74</sup> Ст' u, Уголовный кодекс Российской Федерации" от 13.06.1996 N 63-ФЗ.

ազատությունների սահմանափակման վերաբերյալ:

Ազատության սահմանափակում պատժատեսակի կիրառմամբ պայմանավորված՝ որոշակի ժամերի տնից բացակայելու արգելքը չի կարող պակաս լինել օրական 8 և չի կարող ավելի լինել օրական 12 ժամից: Օրենսդիրը նախատեսել է ընդամենը մեկ սահմանափակում՝ նշելով, որ ազատության սահմանափակումը չի կարող նշանակվել ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ: Օրենսդրական կարգավորում, սակայն, չի ստացել այն հարցը, թե հնարավոր է արդյոք այս պատժատեսակը կիրառել 24-ժամյա հերթափոխով աշխատող անձանց նկատմամբ, օրինակ՝ հերթապահող բուժաշխատողների, ժամկետային զինծառայող չհանդիսացող զինծառայողների: Քրեական նոր օրենսգրքում այս կատեգորիաների ներկայացուցիչների նկատմամբ ազատության սահմանափակում կիրառելու արգելքի բացակայությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը հնարավոր է դիտարկել նշված պատժատեսակը նրանց նկատմամբ կիրառելը: Ենթադրաբար, այս անձանց կողմից պատիժը կրելու առանձնահատկությունները պետք է սահմանվեին ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ, ինչը սակայն դեռևս տեղի չի ունեցել: Հիմնվելով պատժից խուսափելու դեպքում քրեական նոր օրենսգրքում տեղ գտած մոտեցման վրա՝ օրենսդիրը սահմանում է, որ ազատության սահմանափակում պատժից դատապարտյալի խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ՝ ազատության սահմանափակման 2 օրը հաշվարկելով ազատազրկման 1 օրվա դիմաց: Այդ դեպքում ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի արդյունքով ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի արդյունքով ստացված ժամկետի չափով: Այս կանոնով է իրականացվում հաշվարկը նաև այն դեպքում, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատազրկում նախատեսված չէ: Այդ դեպքում ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին:

Օրենսդիրը ազատության սահմանափակում պատժատեսակից խուսափող է դիտում այն դատապարտյալին, ով 2 կամ ավելի անգամ խախտել է դատարանի սահմանած արգելքը:

Քրեական նոր օրենսգրքով սահմանված *կարճաժամկետ ազատազրկումը* նույնական է քրեական նախկին օրենսգրքով սահմանված կալանք պատժատեսակին, այն է՝ դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում անազատության մեջ պահելուն: Այն հիմնական

պատժատեսակ է: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը կալանքի ժամկետ էր սահմանում 15 օրից 3 ամիսը, նոր կարգավորմամբ կարճաժամկետ ազատազրկումը նշանակվում է նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չկրած, ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ կատարած անձի նկատմամբ՝ 15 օրից 2 ամիս ժամկետով: Ընդ որում, կարճաժամկետ ազատազրկման նվազագույն ժամկետը քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում, օրինակ՝ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելիս, կարող է 15 օրից պակաս լինել:

Այս պատժատեսակի նշանակման համար անհրաժեշտ են 2 պայմաններ՝

- անձը կատարած լինի ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք,
- անձը նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած չլինի:

Այս պատժատեսակի նշանակման առումով քրեական նոր օրենսգրքում որևէ այլ սահմանափակում չի նախատեսվել: Մինչդեռ քրեական նախկին օրենսգիրքը սահմանում էր, որ կալանքը չէր կարող կիրառվել այն դեպքում, եթե որպես խափանման միջոց կիրառվել էր կալանավորումը: Միաժամանակ, կալանքը չէր նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ:

ՀՀ քրեական նոր օրենսգրքում, ինչպես և քրեական նախկին օրենսգրքում սահմանվել է **կարգապահական գումարտակում պահելու** պատժատեսակը: Այն հիմնական պատիժ է: Կարգապահական գումարտակում պահելը հանցանք կատարած զինձառայողին (բացառությամբ սպայական և ավագ ենթասպայական կազմերի) մեկուսացման պայմաններում անազատության մեջ պահելն է: Ձևակերպումից երևում է, որ քրեական նախկին օրենսգրքի համեմատ ընդլայնվել է այն անձանց շրջանակը, ում նկատմամբ այս պատժատեսակը կարող է կիրառվել. քրեական նախկին օրենսգրքով այս պատժատեսակը կիրառելի էր միայն հանցանք կատարած ինչպես պարտադիր, այնպես էլ պայմանազրային ժամկետային ծառայության զինձառայողների նկատմամբ, մինչդեռ քրեական նոր օրենսգրքով՝ նաև կրտսեր ենթասպաների:

Կարգապահական գումարտակը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ կատարած զինձառայողի նկատմամբ՝ 3 ամսից 3 տարի ժամկետով, ինչպես նաև այն դեպքերում, երբ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները և նախկինում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չկրած դատապարտյալի անձնավորությունը, նպատակահարմար է համարում առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկման փոխարեն կիրառել կարգապահական գումարտակում պահելը՝ նույն ժամկետով:

Բնականաբար, քրեական նոր օրենսգրքում տեղ է գտել նաև **ազատազրկում** պատժատեսակը: Այն նույնանում է քրեական նախկին օրենսգրքով սահմանված

ազատագրվումը որոշակի ժամկետով պատժատեսակին: Քրեական նոր օրենսգիրքը, ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, սահմանում է, որ ազատագրվումը դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից որոշակի ժամկետով մեկուսացնելն է, որը կարող է նշանակվել քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում: Ազատագրվումը նշանակվում է 3 ամսից 20 տարի ժամկետով: Ազատագրվման նվազագույն ժամկետը քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է պակաս լինել 3 ամսից: Անզգույշ հանցագործության համար ազատագրվումը չի կարող գերազանցել 10 տարին:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հիմնական նորույթն այն է, որ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատագրվման:

Մնացած առումներով, ազատագրվում պատժատեսակի կիրառումը կառուցված է քրեական նախկին օրենսգրքի տրամաբանությամբ: Քրեական նախկին օրենսգրքով, ազատագրվումը որոշակի ժամկետով պատժատեսակը սահմանելիս, օրենսդիրը նաև նշում էր, որ հանցագործությունների և դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելիս ազատագրվման առավելագույն ժամկետը չէր կարող գերազանցել համապատասխանաբար 25 և 30 տարին: Քրեական նոր օրենսգրքով այս շեմերը ևս նախատեսված են, սակայն ոչ թե ազատագրվում պատժատեսակը սահմանող 67-րդ հոդվածում, այլ հանցագործությունների և դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու կանոնները սահմանող 74-րդ և 75-րդ հոդվածներում:

Ինչպես և քրեական նախկին, այնպես էլ նոր օրենսգրքում ամրագրում ստացած պատժի համակարգում ամենախիստ պատժատեսակը *ցմահ ազատագրվումն* է: Քրեական նոր օրենսգիրքը, ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, որպես առավել խիստ պատիժ է դիտարկում ցմահ ազատագրվումը, սահմանելով, որ ցմահ ազատագրվումը դատապարտյալին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է, որը քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է նշանակվել առանձնապես ծանր հանցագործությունների համար:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ ցմահ ազատագրվման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս 18 տարին չլրացած անձինք: Մինչդեռ քրեական նախկին օրենսգիրքը նման արգելք էր սահմանում նաև հանցանքի կատարման կամ դատավճռի կայացման պահին հղիության վիճակում գտնվող անձանց համար:

## Գլուխ 11

### ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքում սահմանված են *պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները*: Օրենսդիրն ամրագրել է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

Օրենսդիրն հստակեցրել է, որ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անզուգուշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում առավել մանրամասն են շարադրվում այն հանգամանքները, որոնք պետք է դատարանի կողմից գնահատվեն՝ պատիժ նշանակելիս: Եթե քրեական նախկին օրենսգրքը նշում էր հանցանքի վտանգավորության բնույթն ու աստիճանը, հանցավորի անձնավորությունը, մեղմացնող և ծանրացնող հանգամանքները հաշվի առնելու անհրաժեշտությունը, ապա քրեական նոր օրենսգրքը մատնանշում է նաև այն հանգամանքների գնահատման անհրաժեշտությունը, որոնք վերաբերում են հանցավորի վերասոցիալականացմանը, իրավահպատակ վարքագծի ձևավորմանը, նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությանը:

Քրեական նախկին օրենսգրքը սահմանում էր, որ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները, մինչդեռ քրեական նոր օրենսգրքը սահմանում է, որ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կարող է նշանակվել, եթե դատարանը հիմնավորի, որ առավել մեղմ պատժատեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները: Հետևաբար, առավել խիստ պահանջ է ներկայացվում ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակների կիրառման որոշման կայացմանը:

Քրեական նոր օրենսգրքում վերանայվել են *քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները*: Մեղմացնող հանգամանքների մի մասը նույնությամբ կամ վերաշարադրմամբ կրկնում է քրեական նախկին օրենսգրքում եղած



հանգամանքները, օրինակ՝ հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի հղիությունը, հանցանքը սպառնալիքի, հարկադրանքի կամ այն անձի ազդեցությամբ կատարելը, որից հանցավորը գտնվում է նյութական, ծառայողական կամ այլ կախվածության տակ, հանցանքը կյանքի ծանր հանգամանքների զուգորդմամբ կատարելը, հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը (վերջին երկու հանգամանքները քրեական նախկին օրենսգրքում շարադրված էին նույն կետի տակ, իսկ քրեական նոր օրենսգրքում՝ առանձին կետերով):

Առանձին հանգամանքեր շարադրելիս՝ օրենսդիրը դրանք բովանդակային վերաշարադրման է ենթարկել, օրինակ՝ քրեական նախկին օրենսգիրքը որպես մեղմացնող հանգամանք էր դիտարկում առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում խոսք է գնում հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելու մասին, այսինքն՝ դա կարող է լինել նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցանք:

Մեղմացնող առանձին հանգամանքերի բովանդակությունը քրեական նոր օրենսգրքում լրացվել է, օրինակ՝ պատիժ նշանակելու պահին հանցանք կատարած անձի խնամքի տակ անչափահասի կամ հաշմանդամություն ունեցող անձի առկայությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցանքը կատարվել է խնամքի տակ գտնվող անձի նկատմամբ: Քրեական նախկին օրենսգիրքը որպես մեղմացնող էր դիտարկում պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքի տակ մինչև տասնչորս տարեկան երեխայի առկայությունը: Նոր կարգավորմամբ, նախ՝ մեղմացնող է դիտվում խնամքին ցանկացած տարիքի անչափահասի և հաշմանդամի առկայությունը, բացի այդ՝ մեղմացնող հանգամանք առկա չի լինի, եթե անձը ոտնձգություն կատարած լինի իր խնամքի տակ գտնվող անչափահասի կամ հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ:

Քրեական նոր օրենսգրքով մեղմացնող է դիտվում նաև հանցանքը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները խախտելով կատարելը, որը, ըստ էության, փոխարինում է քրեական նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում տեղ գտած հանգամանքին: Ձևակերպման փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ քրեական նոր օրենսգրքով ընդլայնվել է քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների շրջանակը և այն չի սահմանափակվում միայն անհրաժեշտ պաշտպանությամբ, ծայրահեղ անհրաժեշտությամբ, հիմնավորված ռիսկով, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքով, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելով, հրաման կամ կարգադրություն կատարելով:

Քրեական նոր օրենսգրքով առավել մանրամասն շարադրանք են ստացել քրեական

նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերում ձևակերպված հանգամանքները: Քրեական նոր օրենսգրքով մեղմացնող հանգամանքներ են դիտարկվում հանցանք կատարած անձի մեղայականով ներկայանալը, հանցագործությունը, հանցագործության այլ մասնակցին բացահայտելուն, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն, գործով ապացույց ձեռք բերելուն աջակցելը, հանցանք կատարած անձի կողմից հանցագործությունից հետո հանցագործությունից տուժած անձին բժշկական կամ այլ օգնություն ցույց տալը, հանցանք կատարած անձի կողմից հանցագործությամբ պատճառված վնասը կամովին հատուցելուն կամ այլ կերպ հարթելուն ուղղված գործողություն կատարելը:

Քրեական նախկին օրենսգրքից հիմնական տարբերությունն այն է, որ քրեական նոր օրենսգրքով մեղմացնող է դիտվում նաև հանցավորի կողմից գործով ապացույց ձեռք բերելուն աջակցելը:

Քրեական նոր օրենսգրքի նորամուծություններից է հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի 65 տարին լրացած լինելը, որպես պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք դիտարկելը: Սա մարդասիրական սկզբունքի դրսևորման արդյունք է: Միաժամանակ, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում որպես մեղմացնող հանգամանք նախատեսված չէ հանցանքը կատարելու պահին անչափահաս լինելը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսգրքում անչափահասների համար նախատեսված են պատժի նշանակման հատուկ՝ մեղմ կանոններ, հետևաբար հանցավորի անչափահասությունը արդեն մեկ անգամ այդտեղ հաշվի է առնվում և կրկնակի մեղմացման կարիք չկա: Սա բխում է նաև քրեաիրավական այն մոտեցման տրամաբանությունից, որ եթե որևէ հանգամանք Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած փոփոխություններից է նաև քրեական նախկին օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում տեղ գտած մեղմացնող հանգամանքի վերաշարադրումը. քրեական նախկին օրենսգրքում մեղմացնող էր դիտվում տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում՝ հանցանքը հանցագործությունից տուժած անձի հակաիրավական վարքագծի ազդեցության տակ կատարելը: Փաստացի, օրենսդիրը մեղմացնող հանգամանք չի դիտարկում այն իրավիճակները, երբ հանցանքի կատարումը պայմանավորված է եղել տուժած անձի հակաբարոյական վարքագծով: Նման մոտեցման հիմքում դրված է այն գաղափարը, որ «հակաբարոյական վարքագիծ» հասկացության բնորոշում առկա չէ,

դրա բովանդակության բացահայտումը խիստ սուբյեկտիվ է, հետևաբար իրավական որոշակիության տեսակետից՝ խնդրահարույց:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս նշվում է, որ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև որպես մեղմացնող հանգամանք չնախատեսված մեղմացնող այլ հանգամանքներ: Այդ հանգամանքների առավել մանրամասն գնահատման համար առանցքային նշանակություն ունի Պարույր Բայրամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշումը<sup>75</sup>: Մասնավորապես, դրանով սահմանվում է, որ «(...)պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև մեղմացնող այլ հանգամանքներ, որոնք նշված չեն 62-րդ հոդվածի 1-ին մասում: Այնուհանդերձ, դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը,

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանվեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները»:

Քրեական նոր օրենսգրքով վերանայվել են նաև **քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքները**: Քրեական նոր օրենսգրքում նույնությամբ կամ որոշակի խմբագրական փոփոխություններով տեղ են գտել մի շարք հանգամանքներ, որոնք նախատեսված էին նաև քրեական նախկին օրենսգրքով, մասնավորապես՝ հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը, հանցանքն այլ հանցագործությունը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարելը, հանցանքը հանրության համար վտանգավոր եղանակով կատարելը:

Մի շարք հանգամանքներ ենթարկվել են բովանդակային փոփոխության, օրինակ՝ քրեական նախկին օրենսգրքում նախատեսված հանցանքը մի խումբ անձանց, կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կազմում կատարելը հանգամանքի փոխարեն նախատեսվել է հանցանքը խմբի կամ հանցավոր կազմակերպության կազմում կատարելը: Այս փոփոխությունը պայմանավորված է

<sup>75</sup> Տե՛ս, Պարույր Բայրամյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի թիվ ՎԲ-84/07 որոշում:

քրեական նոր օրենսգրքում հանցակցության ձևերի փոփոխությամբ, ինչի արդյունքում վերացել են կազմակերպված խմբի և հանցավոր համագործակցության տեսակները և նախատեսված է հանցավոր կազմակերպությունը:

Քրեական նախկին օրենսգրքում նախատեսված՝ հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելու փոխարեն քրեական նոր օրենսգրքը նախատեսել է երկու ինքնուրույն հանգամանքներ՝

□ հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը, ինչը, քրեական նախկին օրենսգրքում եղած ձևակերպման համեմատ, առավել մանրամասն է ներկայացնում այն գործոնները, որոնք հանգեցնում են հանցանքի կատարման հիմք հանդիսացող ատելության, նաև՝ մատնանշում նույն գործոններով պայմանավորված անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթը: Մասնավորապես, քննարկվող գործոնների շարքում տեղ են գտել անձի էթնիկ պատկանելությունը, քաղաքական կամ այլ հայացքները, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները (օրինակ՝ ԼԳՏՊ համայնքի ներկայացուցիչ լինելը):

□ հանցանքն այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթով կատարելը:

Քրեական նոր օրենսգրքում հստակեցվել են քրեական նախկին օրենսգրքով նախատեսված մի շարք ծանրացնող հանգամանքները, օրինակ՝ քրեական նախկին օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում տեղ գտած հանգամանքը ձևակերպվել է՝ հանցանքը կատարելուն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կամ ոչ սթափ (հարբած) վիճակում գտնվող կամ քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքի չհասած անձին ներգրավելը, եթե հանցավորը գիտակցում է, որ անձը հոգեկան առողջության խնդիրներ ունի, ոչ սթափ (հարբած) վիճակում է կամ չի հասել քրեական պատասխանատվության համար սահմանված տարիքի: Նույն տրամաբանությունն է ընկած նաև քրեական նախկին օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում տեղ գտած հանգամանքը քրեական նոր օրենսգրքում արտացոլելիս՝ հանցանքը հղի կնոջ, անօգնական, խոցելի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը, եթե հանցավորը գիտակցում է, որ կինը հղի է, կամ անձը անօգնական, խոցելի կամ իրենից կախյալ վիճակում է: Այսինքն՝ օրենսդիրը բացահայտել է նախկին ձևակերպման մեջ տեղ գտած «ակնհայտ» եզրույթի բովանդակությունը՝ դա նույնացնելով հանցավորի գիտակցման հետ առ այն, որ գործ ունի կոնկրետ կատեգորիայի անձանց, օրինակ՝ հոգեկան առողջության խնդիրներ

ունեցող կամ հղի կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի հետ:

Կարևորելով հանցավոր ոտնձգություններից անչափահասներին զերծ պահելը՝ քրեական նոր օրենսգրքում որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող ինքնուրույն հանգամանք նախատեսվել է դիտավորյալ հանցանքն անչափահասի նկատմամբ, նրա հետ համատեղ կամ հանցավորի արարքի բնույթը գիտակցող անչափահասի ներկայությամբ կատարելը, եթե հանցավորը գիտակցում է, որ անձն անչափահաս է:

Քրեական նոր օրենսգրքում անդրադառնալով քրեական նախկին օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում տեղ գտած հանգամանքին՝ օրենսդիրը հստակեցրել է, որ ծանրացնող հանգամանք պետք է դիտարկել հանցանքն ոչ միայն անձի կամ նրա մերձավոր ազգականի, այլև մերձավորի նկատմամբ կատարելը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ հասարակական պարտքը կատարելու հետ: Փաստացի, օրենսդիրը նշում է նաև մասնագիտական գործունեության հանգամանքը, ինչը բացակայում էր քրեական նախկին օրենսգրքում եղած կանոնակարգման մեջ:

Լրացում է տեղ գտել նաև քրեական նախկին օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նախատեսված հանգամանքը ձևակերպելիս. քրեական նոր օրենսգրքում ծանրացնող հանգամանք է դիտվում հանցանքն առանձին դաժանությամբ, անձին ծաղրուծանակի, տանջանքի կամ տառապանքի ենթարկելով կատարելը: Ի տարբերություն նախկին կանոնակարգման՝ օրենսդիրը չի նշում, որ ծաղրուծանակը կամ տանջանքը պետք է կիրառվեն միայն տուժողի նկատմամբ, այլ ձևակերպման մեջ օգտագործում է «անձի» եզրույթը, դրանով իսկ թույլ տալով այս հանգամանքի առավել լայն մեկնաբանությունը: Նաև՝ նոր կանոնակարգման մեջ նշվում է անձին տառապանքի ենթարկելով հանցանքը կատարելու հանգամանքը, ինչը ենթադրում է հոգեկան բացասական ապրումներ պատճառելով հանցանքի կատարումը:

Քրեական նոր օրենսգրքում հստակեցվել են նաև քրեական նախկին օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ և 14-րդ կետերում տեղ գտած հանգամանքները, մասնավորապես սահմանվել է՝ հանցանքը ռազմական կամ արտակարգ դրության, արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով կատարելը կամ հանցանքն ակոհողի, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ ուժեղ ներգործող դեղերի ազդեցությամբ կատարելը, եթե հանցավորն ինքն է իրեն դրել այդ վիճակի մեջ: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպումների՝ օրենսդիրը հստակեցրել է, որ ծանրացնող հանգամանք պետք է դիտարկել հանցանքը ոչ թե պարզապես ռազմական կամ արտակարգ դրության, արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների ժամանակ կատարելը, այլ դրանց պայմաններն օգտագործելով

կատարելը: Մասնավորապես, եթե պատերազմի ժամանակ տեղ է գտել շարունակվող հանցագործությունն հանդիսացող ընտանեկան բռնության էպիզոդ, ապա դա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք դիտարկել պետք չէ: Մակայն, եթե պատերազմի ժամանակ գողություն է կատարվել՝ օգտվելով այն հանգամանքից, որ տանտերերը ապաստարանում են և ի վիճակի չեն վերահսկել իրենց գույքը, ապա սա արդեն պետք է դիտարկել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

Ինչ վերաբերում է հանցանքը թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ ուժեղ ներգործող դեղերի ազդեցությամբ կատարելուն, ապա օրենսդիրը հստակեցրել է, որ այս ծանրացնող հանգամանքը առկա կլինի միայն այն դեպքում, երբ հանցավորն ինքն է իրեն դրել նման վիճակի մեջ: Հետևաբար՝ այս ծանրացնող հանգամանքը կիրառելի չի լինի, եթե, օրինակ, անձին իր կամքին հակառակ թմրանյութ են ներարկել, ինչի հետևանքով էլ վերջինս հայտնվել է դրանց ազդեցության տակ և հանցանք կատարել:

Սկզբունքային փոփոխություններից մեկը տեղ է գտել քրեական նոր օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում՝ հանցանքը դատվածություն ունեցող անձի կողմից կատարելը: Քրեական նախկին օրենսգրքում կար նման մի ծանրացնող հանգամանք՝ հանցանքը կատարելու ռեցիդիվը, հանցանքը որպես արհեստ կատարելը: Այնուհանդերձ, քրեական նոր օրենսգրքը սկզբունքային մոտեցում է դրսևորել և սահմանել, որ այս ծանրացնող հանգամանքը կարող է գործել ոչ թե ռեցիդիվի, այլ դատվածության առկայության դեպքում, ինչը ենթադրում է ոչ միայն դիտավորությամբ, այլև անզգուշությամբ կատարված հանցագործությունների պարագայում դատվածության առկայություն: Օրինակ, եթե անձը դատվածություն ունի ՃԵԿ կանոնները խախտելու արդյունքում անձին անզգուշությամբ մահ պատճառելու համար և այդ վարքագիծը կրկնվում է: Ընդ որում, օրենսդիրը նաև սահմանում է, որ պատիժ նշանակելիս դատարանը որպես ծանրացնող հանգամանք չի կարող հաշվի առնել քննարկվող հանցամասնքը, եթե պատիժ է նշանակում ռեցիդիվի կանոններով:

Քրեական նոր օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասում, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները սահմանելիս, օրենսդիրը չի նախատեսել նախկինում որպես ծանրացնող դիտարկվող երկու հանգամանքներ՝ հանցագործությամբ ծանր հետևանքներ պատճառելը և հանցանքն այնպիսի անձի կողմից կատարելը, ով դրանով խախտել է զինվորական կամ մասնագիտական երդումը: Փոխարենը, այդ հոդվածում նախատեսվել են պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող նոր հանգամանքներ՝

- հանցանքն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը (70-րդ հոդվածի 1-ին մասի

12-րդ կետ): Այս ծանրացնող հանգամանքը ենթադրում է, որ հանցավոր վարքագիծ դրսևորող անձը կիրառում է կամ իր ծառայողական լիազորությունները կամ իշխանական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը:

- հանցանքը զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքերի կամ ռադիոակտիվ նյութերի գործադրմամբ կամ դրանց գործադրման սպառնալիքով կատարելը (70-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ): Ենթադրվում է, որ այս ծանրացնող հանգամանքը պետք է կիրառվի, օրինակ, այն դեպքերում, երբ հանցավորի մոտ օրինական հիմունքներով գտնվող զենքը կամ ռազմամթերքն է կիրառվել:

- հանցանքը թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ ուժեղ ներգործող դեղերի գործադրմամբ կատարելը (70-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետ):

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, այնպես էլ քրեական նոր օրենսգրքով քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքները թվարկված են սպառիչ: Այդ հարցին անդրադարձ արվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից<sup>76</sup>:

Եթե քննարկվող հանգամանքներն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված են որպես հանցագործության հատկանիշ, ապա դրանք չեն կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք: Օրինակ, եթե անձը կաշառք է ստացել՝ իր իշխանական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ապա արարքը պետք է որակվի որպես կաշառք ստանալ և 70-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հանգամանքը որպես ծանրացնող այլև չպետք է դատարանի կողմից հաշվի առնվի:

## **ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾԻՑ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ**

Քրեական նոր օրենսգրքում, ինչպես և քրեական նախկին օրենսգրքով սահմանված է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտը: Հիմնականում, այն նույնությամբ կրկնում է այն պահանջները, որոնք առկա էին քրեական նախկին օրենսգրքում:

Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք այն աստիճան են նվազեցրել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, որ

<sup>76</sup> Տե՛ս, Հրանտ Գաբրիելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի ապրիլի 6-ի թիվ ՎԲ-65/07 որոշում:

դատարանի համոզմամբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափը կամ ժամկետը խիստ է տվյալ անձի համար, ինչպես նաև խմբի կողմից կատարված հանցանքի մասնակցի կողմից այդ խմբի կատարած հանցագործությունը բացահայտելուն աջակցելու դեպքում դատարանը կարող է նշանակել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափ կամ ժամկետ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասում լրացուցիչ սանկցիաները ֆիքսված չեն, այս կանոնի շարադրման ժամանակ օրենսդիրը զերծ է մնացել քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած այն դրույթի շարադրումից, որը վերաբերում էր պարտադիր հանդիսացող լրացուցիչ պատիժը չկիրառելուն: Միաժամանակ, քրեական նոր օրենսգրքում փորձ է արվել հստակեցնել քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած «էականորեն նվազեցրել» արտահայտությունը, սահմանելով, որ խոսքն այն բացառիկ հանգամանքների առկայությանն է վերաբերում, որոնք այն աստիճան են նվազեցրել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, որ դատարանի համոզմամբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափը կամ ժամկետը խիստ է տվյալ անձի համար: Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ եթե քրեական նախկին օրենսգրքում նշվում էր, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կարող է նշանակվել, եթե առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են արարքի հանրային վտանգավորության աստիճանը, ապա քրեական նոր օրենսգրքում խոսք է գնում անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնելու մասին, այսինքն՝ շեշտադրում է կատարվում նաև անձի վտանգավորության նվազեցման վրա:

Օրենսդիրը սահմանել է, որ բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը: Առանձին մեղմացնող հանգամանքը կամ դրանց համակցությունը օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու նախապայման դիտելու խնդիրներին բազմիցս անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը<sup>77</sup>:

Ընդ որում, համագործակցության վարույթ կիրառելու դեպքում ևս դատարանը կարող է նշանակել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ

---

<sup>77</sup>Տե՛ս, Գոռ Ավետիսյանի, Արմեն Հովակիմյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ԵԱՔԴ/0164/01/09 որոշում, Համլետ Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2021 թվականի մարտի 9-ի թիվ ԱՎԴ/0104/01/19 որոշում:



Ժամկետից պակաս չափ կամ ժամկետ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով: Օրենսդիրը նաև հստակեցրել է, որ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելն արգելք չէ լրացուցիչ պատիժ նշանակելու համար:

## **ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ ՉԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Քրեական նոր օրենսգրքում առավել հստակ են կարգավորվել չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու կանոնները: Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս սահմանվում է, որ չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս հաշվի են առնվում հանցավորի արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունն ավարտին չի հասցվել:

Քրեական նախկին օրենսգրքով ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստությունը հանցագործություն չէր, հետևաբար այդ առումով որևէ դրույթ չկար: Սակայն քրեական նոր օրենսգրքով այդ արարքները դիտարկվում են որպես հանցագործություն: Դա նկատի ունենալով՝ քրեական նոր օրենսգրքում հստակ ֆիքսվում է, որ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստության համար ազատազրկում չի նշանակվում: Հետևաբար, նման արարքների դեպքում պետք է կիրառվեն ազատազրկումից ավելի մեղմ պատժատեսակներ:

Միաժամանակ, նոր կանոնակարգումներով սահմանվում է, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետի մեկ երկրորդը, իսկ նվազագույն ժամկետը չի կարող պակաս լինել Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված ազատազրկման նվազագույն ժամկետի մեկ երկրորդից: Եթե նշված կանոնները կիրառելիս ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում 3 ամսից, ապա նշանակվում է կանոնները կիրառելու հետևանքով ստացված ժամկետով ազատազրկում:

Ներկայացված ձևակերպումը վերջ դրեց այն վեճերին, որոնք կապված էին չավարտված հանցագործության դեպքում պատժի նշանակման դեպքում սանկցիայի ստորին սահմանի որոշմանը: Քրեական նախկին օրենսգրքը սահմանափակում նախատեսել էր միայն վերին շեմի առումով, սահմանելով, որ Հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող

գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը, մինչդեռ ստորին շեմի առումով որևէ կարգավորում չէին տվել: Համանման վիճակ էր նաև հանցափորձի առումով: Դա էլ հիմք էր տվել իրավակիրառ ոլորտում տարակարծությունների՝ հանցագործությունների նախապատրաստության և հանցափորձի դեպքում պատիժ նշանակելիս ղեկավարվել սանկցիայի վերին և ստորին սահմանների համապատասխանաբար՝ 1/2-ով և 3/4-ով, թե որպես ստորին շեմ դիտարկել ազատազրկում պատժատեսակի ընդհանուր մասում նախատեսված նվազագույն ժամկետը: Այս հարցին անդրադարձ կատարել էր ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Արմեն Արզումանյանի գործով որոշման շրջանակներում, որպես ստորին շեմ դիտարկելով ազատազրկում պատժատեսակի ընդհանուր մասում նախատեսված նվազագույն ժամկետը <sup>78</sup>: Ինչպես տեսնում ենք, քրեական նոր օրենսգրքում այս հարցի շուրջ այլ դիրքորոշում է արտահայտված:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ֆիքսվել է, որ հանցագործության նախապատրաստության համար ցմահ ազատազրկում չի նշանակվում, որևէ սահմանափակում չնախատեսելով հանցափորձի համար: Միաժամանակ, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքը որևէ վերին շեմ չի նախատեսում հանցափորձի դեպքում պատիժ նշանակելու համար: Ընդ որում, ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, այնպես էլ նոր կարգավորումներով, հանցագործությունների նախապատրաստության դեպքում կիրառվող սահմանափակումները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս: Այդ հարցին անդրադարձ կատարվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից<sup>79</sup>:

Հետևաբար, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքը թույլ է տալիս հանցափորձի դեպքում պատիժ նշանակելիս կիրառել նախատեսված սանկցիան լիիրավ կերպով, առանց որևէ սահմանափակման: Ավելին, եթե դատարանի կողմից կհիմնավորվի հանցափորձի դեպքում ցմահ ազատազրկում պատժատեսակի կիրառման անհրաժեշտությունը, դա ևս կարող է կիրառվել:

## **ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

Ինչպես և քրեական նախկին, այնպես էլ նոր օրենսգրքը սահմանում է, որ

<sup>78</sup> Տե՛ս, Արմեն Արզումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԱԸԴ1/0164/01/09 որոշում, Համլետ Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2021 թվականի մարտի 9-ի թիվ ԱՎԴ/0077/01/17 որոշում:

<sup>79</sup> Տե՛ս, Սահակ Թադևոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴ3/0006/01/12 որոշում:

հանցագործությունների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքը մասնակի գումարման ուղենիշ է սահմանում՝ ամրագրելով, որ վերջնական պատիժը պետք է ավելի լինի, քան համակցության մեջ մտնող հանցագործությունների համար նշանակված առավել խիստ պատիժը: Օրինակ՝ եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար նախատեսված է 5 տարի, իսկ մյուսի համար՝ 1 տարի ժամկետով ազատազրկում, ապա մասնակի գումարման միջոցով վերջնական պատիժը սահմանելիս, այն պետք է 5 տարուց ավել լինի:

Միննույն ժամանակ, օրենսդիրը սահմանում է, որ հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշելիս մասնակի գումարվող պատիժը չի կարող պակաս լինել տվյալ պատժատեսակի համար քրեական օրենսգրքով նախատեսված նվազագույն չափից կամ ժամկետից, սակայն վերջնական պատիժը չի կարող գերազանցել քրեական նոր օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 9-րդ մասերով նախատեսված առավելագույն չափը կամ ժամկետը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս միայն ոչ մեծ ծանրության, ինչպես նաև միայն միջին կամ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ ընդգրկող համակցությունների պարագայում գործում են նույն կանոնները: Երկուսի պարագայում էլ ազատազրկման ձևով վերջնական պատիժը նշանակվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով, ընդ որում՝ քրեական նոր օրենսգրքում այս կանոնն է գործում համակցության բոլոր դրսևորումների պարագայում: Եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է միայն ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 5 տարին, իսկ եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է միայն միջին ծանրության կամ միջին և ոչ մեծ ծանրության հանցանքներ՝ 10 տարին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական նոր օրենսգրքում հանցագործությունների դասակարգումը փոփոխվել է և անզուգուշությամբ կատարված ծանր հանցանքներ ևս կարող են լինել, օրենսդիրը սահմանել է, որ եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է անզուգուշությամբ կատարված ծանր հանցանքներ, ապա ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 10 տարին:

Եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է դիտավորությամբ կատարված ծանր հանցանք, ապա ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 15 տարին, իսկ եթե համակցությունն ընդգրկում է առանձնապես ծանր հանցանք՝ 20 տարին: Օրինակ, եթե հանցագործությունների համակցության մեջ

ընդգրկված են անզգուշությամբ կատարված մեկ ծանր և դիտավորությամբ կատարված երկու ծանր հանցանքներ, ապա ազատազրկման ձևով վերջնական պատժաժամկետը չպետք է գերազանցի 15 տարին:

Քրեական նոր օրենսգրքում հատուկ ուշադրություն է դարձվում այն դեպքերի կանոնակարգմանը, երբ առնչվում ենք դիտավորությամբ կյանքից զրկելու հետ կապված առանձնապես ծանր հանցանքի հետ: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում սահմանվում է, որ եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է առանձնապես ծանր այնպիսի հանցանք, որը կապված է դիտավորությամբ կյանքից զրկելու հետ, ապա ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 25 տարին: Եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է դիտավորությամբ կյանքից զրկելու հետ կապված երկու կամ ավելի առանձնապես ծանր հանցանքներ, ապա դատարանը, հաշվի առնելով հանցագործությունների շարժառիթը, նպատակը, եղանակը և հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, կարող է վերջնական պատիժ նշանակել ցմահ ազատազրկումը, եթե նույնիսկ կատարված հանցանքներից ոչ մեկի համար քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով դա նախատեսված չէ:

Այս կարգավորումը առավել քան կարևոր է, նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասում, որպես սպանության ծանրացնող հանգամանք նախատեսված չէ 2 կամ ավելի անձանց սպանությունը, իսկ այս կարգավորումը հնարավորություն է ընձեռում ցմահ ազատազրկում կիրառել համանման դեպքերում:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս նշվում է, որ եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատազրկում, ապա վերջնական հիմնական պատիժ է նշանակվում ցմահ ազատազրկումը: Հանցագործությունների համակցության դեպքում մյուս պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը:

Ինչպես և նախկինում, նոր կանոնակարգումներով ևս՝ հանցագործությունների համակցության դեպքում նշանակված հիմնական պատժին կարող են միացվել համակցությունը կազմող հանցանքների համար նշանակված լրացուցիչ պատիժները: Լրացուցիչ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու դեպքում վերջնական լրացուցիչ պատիժը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը:

Ընդ որում, պատիժը նշանակվում է հանցագործությունների համակցության կանոններով, եթե դատավճիռ կայացնելուց հետո պարզվի, որ դատապարտյալը

մեղավոր է նաև մեկ այլ հանցանքի համար, որը նա կատարել է նախքան առաջին գործով դատավճիռ կայացնելը: Այդ դեպքում վերջնական պատժի ժամկետին հաշվակցվում է առաջին դատավճռով նշանակված պատժի կրած մասը: Կարևոր է, որ քրեական նոր օրենսգիրքը հստակեցրել է, որ այդ դեպքում պատժի կրման սկիզբ է համարվում առաջին դատավճռով նշանակված պատժի կրման սկիզբը: Այս հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանն Էդուարդ Ներսիսյանի գործով 2010թ. օգոստոսի 27-ի թիվ ԵԷԴ/0124/01/09 որոշմամբ<sup>80</sup>:

Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու կանոն նախատեսված է նաև քրեական նոր օրենսգրքի 76-րդ հոդվածի 4-րդ մասում, որը քննարկում է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելը և նշում, որ ռեցիդիվի դեպքում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս ազատազրկման առավելագույն ժամկետը կարող է լինել 30 տարի:

### **ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, այնպես էլ քրեական նոր օրենսգրքով սահմանվում են դատավճիռների համակցության դեպքում պատիժ նշանակելու կանոնները, որոնք գրեթե նույնությամբ կրկնում են քրեական նախկին օրենսգրքում եղած կարգավորումները, հետևաբար՝ կիրառական տեսանկյունից այս ինստիտուտը լուրջ դժվարությունների հանգեցնել չի կարող:

Քրեական նոր օրենսգրքով սահմանվում է, որ եթե դատավճիռ կայացնելուց հետո, բայց մինչև պատիժը լրիվ կրելը դատապարտյալը նոր հանցանք է կատարել, ապա դատարանը նոր դատավճռով նշանակված պատժին լրիվ կամ մասնակիորեն գումարում է նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասը: Դատավճիռների համակցությամբ վերջնական պատիժը, բացառությամբ ազատազրկման ձևով վերջնական պատժի, չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակների համար սահմանված առավելագույն չափը:

Օրենսդիրը հստակեցրել է, որ դատավճիռների համակցությամբ ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 30 տարին, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը կատարում է այնպիսի հանցագործություն, որի համար նախատեսված է նաև ցմահ ազատազրկում:

Դատավճիռների համակցությամբ ազատազրկման ձևով վերջնական պատիժը պետք է ավելի մեծ լինի ինչպես նոր հանցագործության համար նշանակված պատժից, այնպես էլ նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասից: Դատավճիռների

<sup>80</sup> Տե՛ս, Էդուարդ Ներսիսյանի գործով 2010թ. օգոստոսի 27-ի ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0124/01/09 որոշում:

համակցությամբ պատիժ նշանակելիս լրացուցիչ պատիժների միացումը կատարվում է քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կանոններով: Յմահ ազատազրկում կրող դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու դեպքում նոր նշանակված պատիժը կլանվում է ցմահ ազատազրկմամբ:

## **ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ**

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, այնպես էլ քրեական նոր օրենսգրքով սահմանվում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցանքների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկինում նշանակված պատիժը բավարար չի եղել անձի վերասոցիալականացման համար, ինչպես նաև նոր հանցանքի բնույթը, ծանրությունը և հետևանքները:

Այնուհանդերձ, քրեական նախկին օրենսգրքի կանոնակարգումներից քրեական նոր օրենսգրքում տեղ գտած ձևակերպումները տարբերվում են՝ պայմանավորված, առաջին հերթին, այն հանգամանքով, որ քրեական նոր օրենսգրքը հրաժարվել է «վտանգավոր ռեցիդիվ» կամ «առանձնապես վտանգավոր ռեցիդիվ» հասկացություններից:

Քրեական նոր օրենսգրքում ռեցիդիվի ոչ բոլոր դրսևորումների դեպքում է օրենսդիրը նախատեսել պատժի ստորին շեմերի խստացման պահանջներ: Քրեական նախկին օրենսգրքով սահմանվում էր, որ ռեցիդիվի դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երկու երրորդից, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երեք քառորդից:

Մինչդեռ քրեական նոր օրենսգրքը նման կանոնակարգումներ չի նախատեսում, օրինակ, եթե անձը կատարել է դիտավորյալ հանցանք և դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար, որի համար նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկման հետ չկապված պատժատեսակ: Օրենսդիրը ռեցիդիվի դեպքում առանձնահատուկ կանոններ է սահմանել այն դեպքերի համար, երբ անձը կատարել է նոր դիտավորյալ հանցանք, որի համար դատապարտվում է ազատազրկման և նախկինում կատարված դիտավորյալ հանցանքի համար ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ է կրել կամ կրում է: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքը կիրառելիս պետք է ղեկավարվել հետևյալ տիրույթներով՝

- եթե դիտավորյալ հանցագործության համար նախկինում ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած կամ կրող, դատվածություն ունեցող անձը կատարել է դիտավորյալ հանցանք, որի համար դատապարտվում է ազատազրկման,

ապա նշանակվող պատժի նվազագույն ժամկետը չի կարող պակաս լինել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետի երկու երրորդից: Ընդ որում, ցանկացած դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետից: Օրենսդիրն այս պարագայում չի նախատեսում սանկցիայի առավելագույն տիրույթից դուրս գալու հնարավորություն: Օրինակ, եթե Հատուկ մասի սանկցիան նախատեսում է ազատազրկում 5-ից 9 տարի, ապա անձի նկատմամբ նշանակված պատժաչափը չի կարող պակաս լինել 6 տարուց: Եթե հոդվածի սանկցիան նախատեսում է ազատազրկում 7-9 տարի ժամկետով, ապա նշանակված պատիժը չի կարող պակաս լինել 7 տարուց:

- եթե ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցագործության համար նախկինում ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած կամ կրող, դատվածություն ունեցող անձը կատարել է դիտավորյալ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք, ապա նշանակվող պատժի նվազագույն ժամկետը պետք է որոշվի նախորդ պարագրաֆում ներկայացված կանոնով, իսկ առավելագույն պատժաչափ պետք է համարվի այն ժամկետը, որը գերազանցում է տվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը՝ դրա մեկ երրորդի չափով, բայց ոչ ավելի, քան 25 տարին: Օրինակ, եթե անձի կողմից կատարված հանցանքի համար նախատեսվում է ազատազրկում 8-ից 15 տարի ժամկետով, ապա այս կանոնը կիրառելով՝ դատարանը կարող է պատիժ նշանակել 10 տարուց մինչև 20 տարվա տիրույթում: Եթե հոդվածի սանկցիան նախատեսում է ազատազրկում 12-ից 20 տարի ժամկետով, ապա դատարանը կարող է պատիժ նշանակել 13 տարի 4 ամսից մինչև 25 տարի տիրույթում:

- Եթե դիտավորյալ հանցագործության համար նախկինում ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած կամ կրող, դատվածություն ունեցող անձը կատարել է մեկից ավելի հանցանքներ, ապա համակցության մեջ մտնող յուրաքանչյուր դիտավորյալ հանցանքի համար պատիժը որոշվում է քրեական նոր օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված կանոններով: Այդ դեպքում հանցագործությունների համակցությամբ ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 30 տարին: Օրինակ, եթե միջին ծանրության դիտավորյալ հանցանքի կատարման համար ազատազրկման ձևով պատիժ կրող անձը պատժի կրման ընթացքում կատարել է երկու դիտավորյալ ծանր հանցանքներ, ապա համակցության մեջ մտնող յուրաքանչյուր նոր հանցանքի համար պատիժը որոշվելու է կատարված արարքի համար քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի շրջանակներում, սակայն առավել խիստ պատժի 2/3-ից ոչ պակաս: Դրանից հետո միայն

որոշվելու է վերջնական պատիժը, սակայն այն չի կարող գերազանցել ազատագրկման 30 տարին:

Այս կարգավորումը, փաստացի, հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու ընդհանուր կանոններից տարբերվող՝ հատուկ կարգավորում է, որն էլ պետք է կիրառվի ռեցիդիվի դեպքում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս:

Օրենսդիրը նաև սահմանել է, որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները չեն կարող արգելք հանդիսանալ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար: Այս դեպքում օրենքով նախատեսված պատիժ է համարվում այն պատիժը, որը համապատասխանում է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու սահմանված կարգի կիրառման արդյունքում ստացվող պատժին:

### **ՊԱՏԻՃ ՆՇԱՆԱԿԵԼԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԴԵՊՔՈՒՄ**

Ինչպես և քրեական նախկին, այնպես էլ նոր օրենսգրքով նախատեսված է համաձայնեցման կամ համագործակցության վարույթի դեպքում պատիժ նշանակելու ինստիտուտը: Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած սահմանումը ամբողջությամբ կրկնում է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կանոնակարգումը, հետևաբար կիրառման տեսանկյունից լուրջ դժվարություններ չեն առաջանա:

Մասնավորապես, սահմանվում է, որ համաձայնեցման վարույթ կիրառելու դեպքում պատիժը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն չափի կամ ժամկետի երկու երրորդը: Եթե առավել խիստ պատժատեսակի երկու երրորդը պակաս է ստացվում քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի նվազագույն չափից կամ ժամկետից, ապա այն չի կարող պակաս լինել նվազագույն չափից կամ ժամկետից:

Չավարտված հանցագործություններով համաձայնեցման վարույթ կիրառելու դեպքում վերը քննարկված կանոնը կիրառվում է չավարտված հանցագործության համար պատժի նշանակման կանոնները կիրառելուց հետո: Եթե հաշվարկի արդյունքով պատժաչափը պակաս է ստացվում չավարտված հանցագործության համար պատժի նշանակման կանոնների կիրառմամբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել խիստ պատժատեսակի նվազագույն չափից կամ ժամկետից, ապա նշանակվում է այն չափը կամ ժամկետը, որն ստացվել է հաշվարկի արդյունքով:



Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններով համագործակցության վարույթ կիրառելու դեպքում նշանակվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժատեսակը կամ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում: Ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններով համագործակցության վարույթ կիրառելու դեպքում նշանակվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավել մեղմ պատժատեսակի նվազագույն չափը կամ ժամկետը կամ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կամ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվում:

Հիմնվելով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում<sup>81</sup> արտահայտված դիրքորոշման վրա՝ ինչպես քրեական նախկին, այնպես էլ նոր օրենսգրքերը ամրագրել են, որ համագործակցության կամ համաձայնեցման վարույթի կիրառման պարագայում պատիժ նշանակելիս ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կանոնները չեն գործում:

Հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելիս քննարկվող ինստիտուտի կանոնները կիրառելի են համակցության մեջ ընդգրկված յուրաքանչյուր հանցագործության համար առանձին:

Քննարկվող ինստիտուտի վերաբերյալ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նոր կարգավորումը վերաբերում է լրացուցիչ պատիժ կամ անվտանգության միջոց կիրառելուն: Մասնավորապես, օրենսդիրը սահմանում է, որ համաձայնեցման կամ համագործակցության վարույթ կիրառելն արգելք չէ լրացուցիչ պատիժ կամ անվտանգության միջոց նշանակելու համար: Այս առումով պետք է նշել, որ անվտանգության միջոցների առանձին դրսևորումները, թեև բովանդակային առումով առկա էին նաև քրեական նախկին օրենսգրքում, օրինակ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները, սակայն այս եզրույթի ներքո նորամուծություն են, ինչին առավել մանրամասն անդրադարձ կարվի ուղեցույցի համապատասխան գլխում:

## **ՊԱՏԺԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՈՐՈՇԵԼԸ ԴՐԱՆՔ ԳՈՒՄԱՐԵԼԻՍ**

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս սահմանվում է, որ հանցանքների համակցությամբ և դատավճիռների համակցությամբ պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելիս ազատազրկման 1 օրվան համապատասխանում է կարճաժամկետ ազատազրկման 1 օրը, կարգապահական գումարտակում պահելու 1 օրը: Փոփոխություն է տեղի ունեցել հանրային

<sup>81</sup> Տե՛ս, Նորայր Զաքարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիս 26-ի թիվ ԼԴ4/0031/01/16 որոշում, Ալեք Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԴ/0071/01/13 որոշում:

աշխատանքների հաշվարկի առումով. եթե նախկին կանոնակարգմամբ ազատագրկման մեկ օրվան համապատասխանում էր հանրային աշխատանքների 3 ժամը, ապա քրեական նոր օրենսգրքում այդ հարաբերակցությունը փոխվել է՝ ազատագրկման մեկ օրվան համապատասխանում է հանրային աշխատանքների 8 ժամը: Նկատի ունենալով քրեական նոր օրենսգրքով սահմանված պատժի համակարգում նոր պատժատեսակների նախատեսումը, օրենսդիրը նաև հստակեցրել է, որ ազատագրկման մեկ օրվան համապատասխանում է ազատության սահմանափակման 2 օրը:

Քրեական նոր օրենսգրքում հստակեցվել է, որ պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելու, տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելու, ինչպես նաև զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով պատիժները հանրային աշխատանքների, ազատության սահմանափակման, կարճաժամկետ ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու, ազատագրկման կամ ցմահ ազատագրկման հետ գումարելիս ի կատար են ածվում առանձին:

#### **ՊԱՏԺԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼԸ ԵՎ ՊԱՏԻԺԸ ՀԱՇՎԱԿՑԵԼԸ**

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, այնպես էլ քրեական նոր օրենսգրքով սահմանվում է, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, զինվորական ծառայության մեջ սահմանափակման, կարգապահական գումարտակում պահելու, ազատագրկման ժամկետները հաշվարկվում են ամիսներով և տարիներով: Նույն մոտեցումն է դրսևորվել նաև օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու և ազատության սահմանափակման ժամկետները հաշվարկելիս: Հանրային աշխատանքների ժամկետը հաշվարկվում է ժամերով: Կարճաժամկետ ազատագրկման ժամկետը հաշվարկվում է օրերով և ամիսներով: Նշված պատիժները փոխարինելիս կամ գումարելիս, ինչպես նաև պատիժը հաշվակցելիս ժամկետները կարող են հաշվարկվել օրերով:

Օրենսդիրը սահմանում է, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, անկախ ՀՀ իրավագործությունից, փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը հաշվակցվում է կարճաժամկետ ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու, ազատագրկման ձևով նշանակված պատժին՝ 1 օրը հաշվելով 1 օրվա դիմաց, ազատության սահմանափակման ձևով նշանակված պատժին՝ 1 օրը հաշվելով 2 օրվա դիմաց, իսկ հանրային աշխատանքների դեպքում՝ 1 օրը 8 ժամի դիմաց: Ի

տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում հստակեցվել է, որ հաշվակցման ենթակա է ոչ միայն մինչ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ գտնվելու, այլ փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը, ինչը վերաբերելի է, օրինակ, ձերբակալման պարագայում անազատության մեջ գտնվելուն:

Օրենսդիրը նաև սահմանել է, որ անազատության մեջ գտնվող անձի նկատմամբ տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, զինվորական ծառայության մեջ սահմանափակման ձևով հիմնական պատիժ նշանակելիս դատարանը, հաշվի առնելով մինչև դատավճիռ կայացնելը, անկախ ՀՀ իրավագործությունից, փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը, մեղմացնում է նշանակված պատիժը կամ ազատում է պատիժը կրելուց: Քրեական նախկին օրենսգրքում նման կանոնակարգում օրենսդիրը նախատեսել էր միայն տուգանքի, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պարագայում, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում դրանց ավելացել է նաև զինվորական ծառայության մեջ սահմանափակումը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս կարգավորվել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների ժամկետների հաշվակցման հարցը, մասնավորապես՝ օրենսդիրը սահմանել է, որ հանցանքը կատարելուց հետո հոգեկան առողջության խնդիրներ ի հայտ գալու հիմքով անձի նկատմամբ նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու ժամկետը քրեական օրենսգրքով սահմանված կարգով հաշվակցվում է պատժի ժամկետին: Այս հարցն իր կանոնակարգումը ստացել է քրեական նոր օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է, որ հանցանքի կատարման համար դեռևս չդատապարտված կամ պատժի ժամկետը լրիվ կամ մասնակիորեն չկրած և հոգեբուժական կազմակերպությունում հարկադիր բուժման ուղարկված անձի ապաքինման դեպքում նրա նկատմամբ պատիժ նշանակելիս կամ պատիժը կրելը վերականգնելիս հոգեբուժական կազմակերպությունում հարկադիր բուժման ժամկետը հաշվակցվում է պատժի ժամկետին՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու 1 օրը հաշվելով ազատագրկման 1 օրվա դիմաց:

## Գլուխ 12

### ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ

#### ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՍՈՎԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

ՀՀ քրեական նոր օրենսգրքով հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը ստացել է նոր բովանդակություն, հիմնովին վերանայվել է այս ինստիտուտի հայեցակարգը, իսկ դրա կարգավորումներն ընդլայնվել են և ստացել են հանգամանալից և մանրամասն ձևակերպումներ:

Քրեական նախկին օրենսգրքի «Ավարտված և չավարտված հանցագործությունները» վերտառությամբ 6-րդ գլխի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը»: Ինչպես տեսնում ենք, քրեական նախկին օրենսգրքի իրավակարգավորմամբ հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը քննարկվում էր ավարտված և չավարտված հանցագործությունների, ավելի ստույգ՝ հանցագործության փուլերի համատեքստում: Նույնը վերաբերելի է դոկտրինալ մակարդակին, քանի որ թե՛ հայրենական, թե՛ ԱՊՀ մի շարք երկրների քրեական օրենսդրությունը հանցագործությունից կամովին հրաժարումը դիտարկում է ավարտված և չավարտված հանցագործությունների լույսի ներքո: Սակայն այստեղ առկա էր անհամապատասխանություն, քանի որ հանցագործության տարբեր փուլերում, ավարտված և չավարտված հանցագործությունների պարագայում անձը ենթակա է քրեական պատասխանատվության (իհարկե որոշակի բացառություններով, օրինակ՝ 33-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում էր, որ չավարտված հանցագործություն են համարվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը): Իսկ կամովին հրաժարման պարագայում՝ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, այսինքն՝ հանցագործությունից կամովին հրաժարումը պետք է դիտարկել ոչ թե որպես չավարտված հանցագործություն, այլ որպես քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմք:

Արտասահմանյան մի շարք երկրների (օր.՝ ԳԴՀ) քրեական օրենսդրության համաձայն՝ հանցագործությունից կամովին հրաժարումը դիտվում է ոչ թե որպես քրեական պատասխանատվությունից, այլ՝ պատժից ազատելու հիմք<sup>82</sup>:

Քրեական նոր օրենսգրքը, ի տարբերություն նախկին օրենսգրքի, արմատապես այլ

<sup>82</sup> Տե՛ս օր.՝ [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_stgb/englisch\\_stgb.html#p0158](https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html#p0158), Section 24.

մոտեցում է ցուցաբերել՝ կապված քննարկվող ինստիտուտի հետ: Հանցագործությունից կամովին հրաժարվելը դիտվել է որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք: Քրեական նոր օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե անձը կամովին հրաժարվում է հանցագործությունից, ապա ազատվում է այդ հանցագործության համար քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»: Այս ձևակերպումը շատ ավելի հստակ է և թույլ է տալիս լուծել մի շարք խնդիրներ, որոնք կարող էին առաջանալ իրավակիրառ գործունեության ընթացքում: Հանցագործությունից կամովին հրաժարվելու նախկին բնորոշման մեջ առկա էին մի շարք ձևակերպումներ, որոնք խրթին էին, իրարամերժ և իրական կյանքում դժվար կիրառելի: Դժվար էր սահմանազատել «հանցափորձը» և օրենքում կիրառված «անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը)» հասկացությունները, որոնք, ըստ էության, նույնական էին: Նոր ձևակերպմամբ՝ այս անհատականությունը վերացվել է: Դրանում նաև ճշգրտվել է, թե՞ որ հանցագործության մասին է խոսքը և կիրառվել է՝ «այդ հանցագործության համար քրեական պատասխանատվությունից» ձևակերպումը: Այսինքն՝ կամովին հրաժարված անձը ոչ թե ընդհանրապես ազատվում է քրեական պատասխանատվությունից, այլ միայն այն հանցագործության համար նախատեսված քրեական պատասխանատվությունից, որի կատարումից վերջինս կամովին հրաժարվել է: Քրեական նախկին օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է՝ «Հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա՝ փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում»: Այս դրույթի տառացի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե անձի արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից կամովին հրաժարման հիմքով: Ակնհայտ է, որ օրենսդրի կամքն ուղղված չի եղել վերոնշյալին, այլ ուղղակի գործ ունենք անհաջող ձևակերպման հետ: Նոր իրավակարգավորման համաձայն՝ եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար: Այս դրույթը բավականաչափ հստակ է, որոշակի և թույլ կտա խուսափել տարամեկնաբանություններից ու թյուրիմացություններից:

Քրեական նոր օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանցագործությունից կամովին հրաժարվելն անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամովին, վերջնականապես դադարեցնելն է կամ արարքի վտանգավոր հետևանքները կանխելը, եթե նա գիտակցել է սվյալ իրադրությունում հանցագործությունն ավարտին հասցնելու

հնարավորությունը»: Այս ձևակերպումն էականորեն տարբերվում է քրեական նախկին օրենսգրքում տրված համապատասխան բնորոշումից: Քրեական նախկին օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասն ընդամենը նշում էր, որ անձը պետք է գիտակցի հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը: Նոր իրավակարգավորումն այս առումով շատ ավելի մանրամասն է և հաջողված: Դրանում ներառված են տեսության մեջ վաղուց աքսիոմ դարձած կամովին հրաժարման հատկանիշները: Փաստվել է, որ հրաժարումը պետք է լինի կամովին, վերջնականապես և անձը պետք է գիտակցի տվյալ իրադրությունում հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը: Լուծվել է նաև ավարտված հանցափորձի պարագայում հանցագործությունից կամովին հրաժարման խնդիրը, քանի որ բացի հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամովին դադարեցնելուց, նշվել է նաև արարքի վտանգավոր հետևանքները կանխելը, ինչը նշանակում է, որ կամովին հրաժարումը հնարավոր է նաև ավարտված հանցափորձի փուլում, երբ անձը կատարում է այն արարքը, որն անհրաժեշտ ու բավարար էր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունն ավարտին հասցնելու համար, սակայն հետևանքները վրա հասնելու համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ: Եթե անձն այդ ընթացքում կանխում է հետևանքները, ապա դա ևս կհամարվի հանցագործությունից կամովին հրաժարում: Օրինակ՝ վնասագերծում է տեղադրված և մարտական վիճակի բերված ռումբը կամ տուժողին, ում թունավորել է, տալիս է հակաթույն և այլն: Համաբնույթ իրավիճակներն ավելի հանգամանալից կարգավորելու նպատակով քրեական նոր օրենսգիրքը սահմանել է ևս մի դրույթ, որը վերաբերելի է այն դեպքերին, երբ քրեական օրենքով արգելված արարքը կատարած անձին, ով փորձում է կանխել դրա հետևանքները, այնուամենայնիվ, չի հաջողվում դա անել: 80-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Եթե հանցագործությունից կամովին հրաժարվելը դրսևորվում է արարքի հետևանքները կանխելու ձևով, ապա հանցանք կատարող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից միայն այն դեպքում, երբ միջոցներ է ձեռնարկել իր դիտավորության մեջ ընդգրկված վտանգավոր հետևանքները կանխելու համար և կանխել է դրանք: Եթե ձեռնարկված միջոցները չեն հանգեցրել վտանգավոր հետևանքները կանխելուն, ապա անձի կողմից դրանք կանխելու համար միջոցներ ձեռնարկելը համարվում է քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք»: Այս իրավակարգավորման համաձայն՝ հանցագործությունից կամովին հրաժարում կդիտվի միայն այն իրավիճակը, երբ ավարտված հանցափորձի պարագայում անձին հաջողվի կանխել վտանգավոր հետևանքները, այլապես՝ նա ենթակա է քրեական պատասխանատվության, քանի որ քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտը վնասվում է: Սակայն վտանգավոր հետևանքները կանխելուն միտված վերջինիս ջանքերը դիտվում են որպես քրեական

պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք:

Քրեական նախկին օրենսգրքով կարգավորվում էին նաև հանցակիցների կամովին հրաժարման առանձնահատկությունները: 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը կամովին հրաժարվելու դեպքում ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը»: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում էր՝ «Եթե սույն հոդվածի երրորդ մասում նշված գործողությունները չեն հանգեցրել կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները պատիժ նշանակելիս կարող են հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»:

Համանման, սակայն ավելի հանգամանալից կարգավորումներ նախատեսված են նաև քրեական նոր օրենսգրքով: 80-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա իրավասու մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը: Եթե կազմակերպիչի, դրդիչի կամ օժանդակողի գործողությունները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները հաշվի են առնվում որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք»: Այս իրավակարգավորումը, բացի եզրութաբանական որոշակի տարբերություններից, ըստ էության նույնական է քրեական նախկին օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված դրույթների հետ: Սակայն՝ քրեական նոր օրենսգրքով, ինչպես վերը նշվեց, սահմանվել են հանցակիցների հանցագործությունից կամովին հրաժարման առավել հանգամանալից և մանրամասն կարգավորումներ: 80-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է՝ «Գործիք կամ միջոց տրամադրելու կամ խոչընդոտը վերացնելու եղանակներով օժանդակության դեպքում անձն օժանդակության համար ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա հետ է վերցրել տրամադրված գործիքը կամ միջոցը կամ վերականգնել է խոչընդոտները: Այդ դեպքում անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում հանցագործության մասին չհայտնելու համար, եթե նրա արարքում առկա են այդ հանցակազմի հատկանիշները»: Այս իրավակարգավորումը ոչ միանշանակ է, քանի որ գործիք կամ միջոց տրամադրելով՝ հանցակիցը կարող է լրջորեն նպաստել կատարողի մոտ առկա դիտավորության ամրապնդմանը: Հարկ է նշել, որ համանման կարգավորում առկա է ԳԴՀ քրեական օրենսգրքում (§ 24), սակայն այս կարգավորումները նույնական չեն և, կարծում ենք, այս համատեքստում օրենքը ենթակա է լրամշակման, քանի որ գործիք կամ միջոց

տրամադրելով, այնուհետև դրանք հետ վերցնելով, հանցակցի վտանգավորությունը չի չեզոքանում այն աստիճանի, որպեսզի վերջինս ազատվի քրեական պատասխանատվությունից:

Քրեական նոր օրենսգրքի 80-րդ հոդվածի 6-րդ մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Համակատարողը հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա իրավասու մարմիններին հաղորդելով կամ այլ միջոցներով կանխում է կատարողի կողմից հանցագործությունը ավարտին հասցնելը: Եթե համակատարողի գործադրած միջոցները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները հաշվի են առնվում որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»: Մա ևս հույժ կարևոր դրույթ է, քանի որ համակատարողի կամովին հրաժարման առանձնահատկությունները նախկին օրենսդրությամբ ընդհանրապես կարգավորված չէին, ինչն իրավական բաց էր, որը և լրացվել է նոր իրավակարգավորմամբ: Քանի որ հնարավոր են դեպքեր, երբ համակատարողը, ով որոշել է կամովին հրաժարվել հանցագործությունից, իր գործադրած միջոցներով այդպես էլ չկարողանա կանխել այլ համակատարողների կողմից հանցանքի կատարումը, վերոնշյալ դրույթի համաձայն՝ վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության, սակայն հանցանքը կանխելուն միտված նրա ջանքերը հաշվի են առնվում որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

## **ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ**

### **ԳՈՐԾՈՒՆ ԶՂՋԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ**

Գործուն գղջալը, որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, նախատեսված էր քրեական նախկին օրենսգրքով: Այն, որոշակի փոփոխություններով, նախատեսվել է նաև քրեական նոր օրենսգրքում: Քրեական նախկին օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»: Քրեական նոր օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է՝ «Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը,



վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»: Այս դրույթների միջև առկա տարբերությունները հիմնականում եզրութաբանական բնույթի են և առանձին վերլուծություն չեն պահանջում: Միայն հարկ է անդրադառնալ «չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը» ձևակերպմանը, քանի որ դրանով նոր պայման է ավելացվել քննարկվող ինստիտուտի կիրառման համար: Ըստ նոր իրավակարգավորման՝ եթե անձը չի ընդունում մեղադրանքը, նա չի կարող գործուն գոջալու հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից:

Քրեական նախկին օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Այլ տեսակի հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում»: Քրեական նոր օրենսգրքը նման դրույթ չի սահմանել, ինչը, որոշակի առումով, խնդրահարույց է: Քրեական նոր օրենսգրքով, տարբեր հոդվածներով սահմանվել են քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքեր, որոնք, ըստ էության, գործուն գոջալու հատուկ դրսևորումներ են, իսկ այս իրավակարգավորման բացակայությունը հնարավորություն չի տալիս հստակ նշելու, թե ինչ հիմքով է անձն ազատվում քրեական պատասխանատվությունից: Օրինակ՝ 315-րդ հոդվածի (Պատանդ վերցնելը կամ պահելը) 4-րդ մասը սահմանում է՝ «Իր պահանջներից հրաժարված և պատանդին կամովին ազատ արձակած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նա նախկինում չի ազատվել քրեական պատասխանատվությունից սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հիմքով(...)»: Նոր օրենսգրքի իրավակարգավորումների շրջանակներում բացակայում է ընդհանուր մասի այն հիմքը, որով անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Ստացվում է, որ քրեական օրենսգրքի Հատուկ մասում սահմանվում են քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմքեր, ինչը, որոշակի առումով, խախտում է օրենքի ներքին տրամաբանությունը: Կարծում ենք, այս դրույթը ենթակա է հետագա լրամշակման:

Քրեական նոր օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է՝ «Նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից»: Նախկին իրավակարգավորմամբ նման ձևակերպումը բացակայում էր, ինչը բավականաչափ խնդրահարույց էր:

Քննարկվող ձևակերպումն ունի ճշգրտող բնույթ, քանի որ քրեական պատասխանատվությունից ազատելը բացառում է նաև դատվածության առկայությունը: Եթե նման դրույթ չսահմանվեր, ապա անձը, ով նախկինում այս հիմքով ազատվել է քրեական պատասխանատվությունից, հետագայում ոչ մեծ կամ միջին ծանրության

հանցանք կատարելու պարագայում կհամարվեր առաջին անգամ հանցանք կատարած անձ և գործուն գղջալու հիմքով կարող էր նորից ազատվել քրեական պատասխանատվությունից: Նշված իրավակարգավորումը կոչված է չեզոքացնելու քրեական պատասխանատվությունից ազատելու քննարկվող հիմքի կիրառման հնարավոր չարաշահումները: Քննարկվող հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը միտված է փաստելու, որ այս հիմքով քրեական պատասխանատվությունից անձը կարող է ազատվել միայն մեկ անգամ:

**ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ ՏՈՒԺՈՂԻ ԵՎ ՀԱՆՑԱՆՔ  
ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ**

Քրեական պատասխանատվությունից ազատելու նշված հիմքն առաջին անգամ նախատեսվել է 1996 թվականի ԱՊՀ մոդելային քրեական օրենսգրքով: Դրա հիման վրա՝ այս ինստիտուտը նախատեսվել է հետխորհրդային մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ: Քրեական նախկին օրենսգրքի «Քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում» վերտառությամբ 73-րդ հոդվածը սահմանում էր՝ «Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»: Մի շարք երկրների (օրինակ՝ ՌԴ, Ղազախստան և այլն) քրեական օրենսդրությամբ, որոշակի առանձնահատկություններով, նախատեսվում է այս ինստիտուտի կիրառումը ոչ միայն «ոչ մեծ», այլև «միջին ծանրության» հանցագործությունների դեպքում<sup>83</sup>: Համանման մոտեցում ցուցաբերվել է նաև քրեական նոր օրենսգրքում, որի 82-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ»:

Այս բնորոշումն էականորեն տարբերվում է քրեական նախկին օրենսգրքում առկա ձևակերպումից: Հիմնական տարբերությունը հանգում է նրան, որ քննարկվող քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը դարձել է «իմպերատիվ», այսինքն, եթե նախկին ձևակերպմամբ նշվում էր՝ «(...)կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից(...)», ապա նոր տարբերակում ձևակերպումը հետևյալն է՝

<sup>83</sup> [https://online.zakon.kz/document/?doc\\_id=31575252&sub\\_id=680000&pos=1232;-28#pos=1232;-28](https://online.zakon.kz/document/?doc_id=31575252&sub_id=680000&pos=1232;-28#pos=1232;-28)  
[http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_10699/6f25c9f69f57c511abe1a8838b8ef42856958e0e/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/6f25c9f69f57c511abe1a8838b8ef42856958e0e/)

«(...)ազատվում է քրեական պատասխանատվությունից(...)», այսինքն՝ անհրաժեշտ վավերապայմանների առկայության պարագայում՝ անձը պարտադիր ազատվում է քրեական պատասխանատվությունից և դա չի թողնվում վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Բացի դա՝ նոր իրավակարգավորմամբ, ի տարբերություն նախկինի, նշվում է, որ այս ինստիտուտը կիրառելի է բացառապես այն պարագայում, երբ անձն **առաջին անգամ** է կատարել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք: Օրենքում հատուկ նշվել է, որ հաշտությունը պետք է լինի հիմնված տուժողի և հանցանք կատարած անձի ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա: Բացի այդ, ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետ իրականացման նկատառումներից էլնելով, քրեական նոր օրենսգրքում սահմանվել է, որ այս ինստիտուտը կիրառելի չէ ընտանեկան բռնության հետ կապված դեպքերում:

Հարկ է նշել, որ նոր քրեական օրենքը նախատեսել է տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմով քրեական պատասխանատվությունից ազատելու շատ ավելի մանրամասն և հանգամանալից իրավակարգավորումներ: Առանձին անդրադարձ է կատարվել հանցակցի, ինչպես նաև հանցանք կատարած անչափահաս և սահմանափակ մեղսունակ անձանց կողմից տուժողի հետ հաշտվելու առանձնահատկություններին: Այսպես՝ 82-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, որը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությանը հանցակցություն է, ապա նա հաշտության հիմքով ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե առկա է հաշտության վերաբերյալ տուժողի և տվյալ հանցակցի՝ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասը նախատեսում է՝ «Եթե անչափահաս կամ սահմանափակ մեղսունակ անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա նա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և առկա է հաշտության վերաբերյալ տուժողի և հանցագործության համար մեղադրվող անձի շահերի պաշտպանության պարտականություն ունեցող անձի՝ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը»:

Նախկինում նշված իրավիճակները որևէ իրավական կարգավորվում չունեին և գործնականում կիրառվում էին տեսության մեջ առկա, երբեմն իրարամերժ մոտեցումներ, ինչն անթույլատրելի էր: Հանցակիցների, ինչպես նաև անչափահաս կամ սահմանափակ մեղսունակության վիճակում հանցանք կատարած անձանց և տուժողի միջև հաշտության վերաբերյալ քրեական նոր օրենսգրքով նախատեսված իրավադրույթների սահմանումը կարևոր է՝ իրավական որոշակիության և օրենսդրության հստակության տեսանկյունից:

Քրեական նոր օրենսգրքի 82-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Եթե

հանցագործությունից տուժողը 14 տարին չլրացած անձ է կամ հոգեկան առողջության խնդիրների կամ մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով լրիվ կամ մասնակիորեն զրկված է իր դեմ ուղղված հանցագործության բնույթն ու հետևանքները գիտակցելու կամ իր վարքագիծը ղեկավարելու հնարավորությունից, ապա նրա դեմ ուղղված հանցանք կատարած անձը չի կարող հաշտության հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից»:

Այս դրույթի նախատեսումը ևս կարևոր է, քանի որ տուժողների որոշակի առանձնահատկություններից ելնելով, ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ապահովել վերջիններիս ինքնուրույն և ազատ կամարտահայտությունը: Այս պարագայում՝ ելնելով տուժողի որոշակի խոցելի կարգավիճակից, նշված ինստիտուտի կիրառումը դառնում է աննպատակահարմար:

Քննարկվող հոդվածի 5-րդ մասով նախատեսվել է՝ «Նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից»: Այս դրույթի նախատեսումը ևս հույժ կարևոր է, քանզի տուժողի նկատմամբ որոշակի ազդեցություն կամ հեղինակություն ունեցող անձը կարող է նրա նկատմամբ բազմաթիվ հանցանքներ կատարել և հետագայում այս հիմքով ազատվել քրեական պատասխանատվությունից: Քննարկվող դրույթի նախատեսումը բացառում է նման իրավիճակները:

## **ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ**

Վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը, որոշակի փոփոխություններով և լրամշակումներով, նախատեսվել է քրեական նոր օրենսգրքով: Մինչ քրեական պատասխանատվությունից ազատելու այս հիմքի քննարկումը՝ նշենք, որ քրեական նոր օրենսգիրքը, որպես քրեական պատասխանատվությունից ազատելու տեսակ, չի նախատեսել իրադրության փոփոխման դեպքը, ինչը, կարծում ենք, ճիշտ մոտեցում է, քանի որ այդ ինստիտուտը վաղուց հնացել և կորցրել է իր արդիականությունը, իսկ դրա կարգավորումները հեռու էին որոշակի և հստակ լինելուց:

Քրեական նախկին օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները. 1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից. 2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից. 3) տասը տարի՝ ծանր

հանցանքն ավարտված համարելու օրվանից. 4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից»:

Քրեական նոր օրենսգրքով նախատեսվել են **վաղեմության ավելի երկար ժամկետներ**: Այսպես՝ 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են հետևյալ ժամկետները. 1) 5 տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում. 2) 10 տարի՝ միջին ծանրության հանցանքի դեպքում. 3) 15 տարի՝ ծանր հանցանքի դեպքում. 4) 20 տարի՝ առանձնապես ծանր հանցանքի դեպքում»:

Այս իրավակարգավորումը համահունչ է ժամանակակից իրավական միտումներին, ավելի հստակ է և թույլ կտա բացահայտել հանցագործությունները ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում: Համանման իրավակարգավորումներ, անգամ ավելի երկար վաղեմության ժամկետների սահմանմամբ, նախատեսված են նաև այլ երկրների քրեական օրենսդրությամբ: Օրինակ՝ ԳՂՀ քրեական օրենսգրքի § 78-ի համաձայն՝ ցմահ ազատազրկմամբ դատապարտվող հանցագործությունների վաղեմության ժամկետը սահմանված է 30 տարի<sup>84</sup>:

Քրեական նոր օրենսգրքը հստակեցրել է նաև վաղեմության ժամկետի հաշվարկման կարգը: 83-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է՝ «Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են հետևյալ ժամկետները(...)»: Այսինքն՝ վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է հանցանքն **ավարտվելուն հաջորդող օրվանից**, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որով, որպես վաղեմության ժամկետի սկիզբ, նշվում էր հանցանքն ավարտված համարելու օրը:

Քրեական նախկին օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելու պահից»:

Քրեական նոր օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով համապատասխանաբար սահմանվում են՝ «2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից մինչև անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելը»: «3. Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելուն հաջորդող օրվանից, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելուն հաջորդող օրվանից»:

Նոր իրավակարգավորումը բավականաչափ հաջողված է և միտված է

<sup>84</sup> [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_stgb/englisch\\_stgb.html#p0830](https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html#p0830) Section 78

արդարադատության ավելի արդյունավետ իրականացմանը: Արդի պայմաններում, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, գործի քննությունը, այնուհետև՝ տարբեր դատական ատյաններում դրա բողոքարկումը, կարող է բավականաչափ երկար տևել, հաճախ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը, վաղեմության ժամկետները անցնում են և իրավապահ համակարգի և դատարանի կողմից ծախսված ժամանակային և նյութական ռեսուրսները դառնում են ապարդյուն: Նոր իրավակարգավորումը, վստահաբար, կլուծի այս խնդիրը: Տևող և շարունակվող հանցագործությունների պարագայում՝ նոր իրավակարգավորումն ուղղակի հստակեցնում է, որ ժամկետի հաշվարկի սկիզբ պետք է համարել դրանք ավարտվելու հաջորդ օրը:

Քրեական նոր օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «**Չավարտված հանցագործության դեպքում** վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցագործության նախապատրաստություն կամ հանցափորձ համարվող արարքը դադարելու պահից»: Այս իրավակարգավորումը ևս շատ կարևոր է, քանի որ հստակեցնում է չավարտված հանցագործության պարագայում վաղեմության ժամկետի հաշվարկի ընթացակարգը, ինչը բացակայում էր նախկին օրենսդրությամբ: Հարկ է նշել, որ օրենսդրության միասնական տրամաբանությունը պահպանելու նկատառումներից ելնելով՝ 83-րդ հոդվածի 4-րդ մասում ևս կարելի էր նախատեսել, որ վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցագործության նախապատրաստություն կամ հանցափորձ համարվող արարքը դադարելու հաջորդ օրվանից:

Քրեական նոր օրենսգրքով կարգավորվել է նաև **հանցակցությամբ կատարված հանցանքի** վաղեմության ժամկետի հաշվարկի առանձնահատկությունները, ինչը՝ նախկին օրենսդրությամբ որևէ կերպ չէր սահմանվում և համանման իրավիճակները կարգավորվում էին ձևավորված իրավական պրակտիկայի և դոկտրինայի տարաբնույթ մեկնաբանությունների հիման վրա: 83-րդ հոդվածի 5-րդ մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Հանցակցությամբ հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե կատարողի կողմից հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները»: Սա նշանակում է, որ հանցակիցների արարքի վաղեմության ժամկետի հաշվարկն ուղղակիորեն կապվում է կատարողի կողմից հանցանքն ավարտելու ժամկետի հետ, անկախ նրանից, թե որքան ժամանակ է հանցակիցներից պահանջվել հանցագործությունը կազմակերպելու, դրա կատարմանը դրդելու կամ օժանդակելու համար:

Քրեական նախկին օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր՝ «Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է նոր հանցանքի

ավարտված համարելու պահից»:

Քրեական նոր օրենսգիրքը ևս պարունակում է համանման դրույթ, սակայն որոշակի լրամշակումներով: 83-րդ հոդվածի 6-րդ մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է նոր հանցանք: Այդ դեպքում յուրաքանչյուր հանցագործության համար վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է նոր հանցանքն ավարտվելու պահից»: Հիմնական փոփոխությունը հանգում է նրան, որ վաղեմության ժամկետն ընդհատվում է **ցանկացած նոր հանցանք** կատարելու պարագայում, այլ ոչ թե՝ միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք կատարելու դեպքում, ինչպես նշված էր նախկին իրավակարգավորմամբ: Նոր մոտեցումն ավելի արդարացի է և միտված է հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Քրեական նոր օրենսգրքով սահմանվում են վաղեմության ժամկետի կասեցման նոր, ավելի խիստ, իրավակարգավորումներ: 83-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է **քննությունից**: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքն ավարտվելու օրվանից անցել է **15 տարի**, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտվելու օրվանից՝ **25 տարի**, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ»: Նախկին իրավակարգավորումը հետևյալն էր՝ «Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է **քննությունից կամ դատից**: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է **տասը** տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ **քսան** տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ» (75-րդ հոդված, 4-րդ մաս): Ինչպես նկատելի է, այս իրավակարգավորումները գրեթե նույնական են և հիմնական տարբերությունը **հանգում է ժամկետներին**: Նոր իրավակարգավորումն ավելի երկար կասեցման ժամկետներ է սահմանել, ինչը թույլ կտա քննությունից խուսափող անձանց հայտնաբերել և ենթարկել քրեական պատասխանատվության ավելի մեծ ժամանակահատվածի ընթացքում:

Քրեական նախկին օրենսգրքի 75-րդ հոդվածի 4.1.-րդ մասի համաձայն՝ «Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է նաև, եթե անձի հետ կնքվել է մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է համագործակցությունը դադարեցվելու կամ

համագործակցության վարույթով դատաքննության հատուկ կարգ կիրառելու մասին միջնորդությունը դատարան ներկայացնելու պահից»:

Այս նորմի նախատեսումը տարակուսանք է առաջացնում, քանի որ ստացվում է, որ եթե անձը կնքում է համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, վերջինս հայտնվում է անշահեկան վիճակում և նրա կատարած հանցանքի համար վաղեմության ժամկետը կասեցվում է: Հավանաբար՝ այս դրույթը նախատեսվել է այն տրամաբանությամբ, որպեսզի համագործակցության համաձայնագիր կնքած անձը մինչև վերջ կատարի իր ստանձնած պարտականությունները և հետագայում չհրաժարվի դրանցից, նշելով, որ իր կատարած հանցանքի վաղեմության ժամկետներն անցել են:

Հատկանշական է, որ քրեական նոր օրենսգրքով այս դրույթը նախատեսված չէ, քանի որ այն հակասական է և չի բխում արդարության սկզբունքից:

Քրեական նախկին օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Վաղեմության ժամկետի կիրառման հարցն այն անձի նկատմամբ, ով ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանք է կատարել, լուծում է դատարանը: Եթե դատարանը հնարավոր չի գտնում վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին ազատել քրեական պատասխանատվությունից, ապա ցմահ ազատազրկում չի կիրառվում»:

Նոր իրավակարգավորումն ավելի հստակ է: 83-րդ հոդվածի 8-րդ մասում նշվում է՝ «Վաղեմության ժամկետ չի կիրառվում այն հանցանքների կապակցությամբ, որոնց համար սույն օրենսգրքով որպես պատիժ նախատեսված է նաև ցմահ ազատազրկումը»:

Նոր իրավակարգավորմամբ՝ ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանքների պարագայում՝ օրենսդրորեն իմպերատիվ արգելք է սահմանվել վաղեմության ժամկետներ կիրառելու առումով, այսինքն՝ նման հանցանքների համար վաղեմության ժամկետներ սահմանված չեն:

Քրեական նախկին օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված»:

Համաբնույթ իրավակարգավորումներ նախատեսվել են նաև Քրեական նոր օրենսգրքի 83-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով: Նշված հոդվածի 9-րդ մասը սահմանում է՝ «Սույն օրենսգրքի 133-154-րդ հոդվածներով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 450-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում՝ անկախ



հանցանքի կատարման պահից»: Նույն հոդվածի 10-րդ մասը սահմանում է՝ «Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված»:

Հարկ է նշել, որ նոր իրավակարգավորումն **ընդլայնել է այն հանցատեսակների ցանկը**, որոնց պարագայում վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Բացի խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններից (133-154-րդ հոդվածներ), որոնք, առանց բացառության, նախատեսվել են նշված ցանկում, ներառվել են նաև ահաբեկչությունը (308-րդ հոդված), պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով (441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ) և խոշտանգումը (450-րդ հոդված): Պետք է նշել, որ նոր օրենքում կիրառված ձևակերպումն այնքան էլ հաջողված չէ, քանի որ նշվել է «(...)վաղեմության ժամկետներ չեն կիրառվում՝ անկախ հանցանքի կատարման պահից»: Լիովին բավարար էր նշել, որ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում, իսկ **«անկախ հանցանքի կատարման պահից»** ձևակերպումը կարող է տարամեկնաբանություններ առաջացնել՝ **քրեական օրենսդրության հետադարձ ուժի դիտանկյունից**:

Նախկին իրավակարգավորմամբ նշվում էր նաև՝ «Սույն օրենսգրքի 132.2-րդ և 168-րդ հոդվածներով, ինչպես նաև անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է տուժողի տասնութ տարին լրանալու պահից» (75-րդ հոդված, 7-րդ մաս):

Քրեական նոր օրենսգրքի 83-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է՝ «Սույն օրենսգրքի 189-րդ, 198-202-րդ, 241-րդ կամ 242-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է հանցագործությունից տուժած անձի 18 տարին լրանալու պահից»:

Պետք է նշել, որ այս դեպքում ևս, քննարկվող հանցագործությունների ցանկը, նախկինի համեմատ, **ընդլայնվել է** և դրանում ներառվել են նաև՝ «Ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը (241-րդ հոդված)» և «Երեխայի առքը կամ վաճառքը (242-րդ հոդված)» հանցատեսակները:

### Գլուխ 13 ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼԸ

Քրեական նոր օրենսգրքում պատժից ազատելու ինստիտուտը ենթարկվել է որոշակի վերափոխման: Նախ՝ պատժից ազատելու ինստիտուտը կանոնակարգող գլխում տեղ է գտել պատիժը պայմանականորեն չկիրառելը, որը նախկինում դիտվում էր որպես պատիժ նշանակելու ինստիտուտ: Միաժամանակ՝ նախատեսվում է պատիժը պայմանականորեն չկիրառելիս սահմանված փորձաշրջանի երկարաձգման հնարավորություն:

Բովանդակային փոփոխության է ենթարկվել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը, մասնավորապես պատժից ազատման համար անհրաժեշտ, պարտադիր պատժաժամկետը, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որոշվում է ոչ թե ըստ հանցագործությունների դասակարգման խմբի պատկանելության, այլ դատարանի նշանակած պատժի:

Թեև քրեական նոր օրենսգրքում նախատեսվել է անձին պատժից ազատելը՝ պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելով, սակայն բովանդակային առումով այն բնեռայնորեն տարբերվում է քրեական նախկին օրենսգրքում այս ինստիտուտի կանոնակարգման ժամանակ եղած մոտեցումից:

### ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼԸ

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքում կանոնակարգում է ստացել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը: Այն սահմանում է, որ եթե դատարանը հանցանք կատարած անձի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս հանգում է հետևության, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

Քրեական նոր օրենսգրքում օրենսդիրը հստակեցրել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով պատժից կարող է ազատվել նաև այն անձը, որի նկատմամբ նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, կամ կիրառվել է համաձայնեցման կամ համագործակցության վարույթ: Եթե առկա է հանցագործությունների համակցություն, ապա այդ դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը որոշվում է համակցությամբ վերջնական պատիժը նշանակելուց հետո:

Քրեական նախկին օրենսգրքը սահմանում էր, որ այս ինստիտուտը կիրառելու

վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է հաշվի առնվեն հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, մինչդեռ քրեական նոր օրենսգիրքը առավել մանրամասն է շարադրում այն պահանջները, որոնց դատարանը պետք է ուշադրություն դարձնի՝

- 1) անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,
- 2) պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,
- 3) հանցանք կատարածի անձը,

4) պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը նույնպես սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ 1-5 տարի ժամկետով, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողության ներքո և պարտավոր է կատարել դատարանի որոշմամբ սահմանված պարտականությունները: Քրեական նոր օրենսգրքով լրացվել է այն պարտականությունների շրջանակը, որոնք կարող են դատարանի կողմից նշանակվել դատապարտյալի նկատմամբ՝

1) կրթական և մշակութային ծրագրերին մասնակցելը, այդ թվում՝ նոր արհեստ կամ մասնագիտություն ձեռք բերելը,

2) առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության ՀՀ տարածքը չլքելը,

3) բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում իր նոր բնակության վայրի հասցեն հայտնելը (քրեական նախկին օրենսգրքով սահմանվում էր բնակության վայրը չփոխելու պահանջ, ինչը բավականին խնդրահարույց էր),

4) ոգելից խմիչքներից (ալկոհոլից), թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող նյութերից ունեցած կախվածությունից բուժման կուրս անցնելը,

5) հանրօգուտ աշխատանքներում ներգրավվելը,

6) սեռավարակից կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունից բուժման կուրս անցնելը,

7) տուժողի, նրա ընտանիքի անդամի, նրա խնամքի տակ գտնվող անձի կամ դատարանի կողմից նշված այլ անձի հետ որևէ շփում ունենալու արգելքը,

8) որոշակի վայրեր այցելելու արգելքը,

9) հոգեբանական-վերականգնողական կուրս անցնելը:

Ընդ որում, եթե քրեական նախկին օրենսգրքում նշվում էր, որ դատարանը կարող է դատապարտյալի վրա դնել պարտականություններ, ապա քրեական նոր օրենսգրքով անձի վրա պարտականություն դնելը պարտադիր բնույթ է կրում: Օրենսդիրը սահմանել է, որ դատարանը դատապարտյալի վրա դնում է նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ այլ պարտականություններ, որոնք կարող են նպաստել նրա վերասոցիալականացմանը: Քրեական նախկին օրենսգրքում ևս նախատեսված էր դատապարտյալի վրա նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ դնելու հնարավորություն, սակայն քրեական նոր օրենսգրքը փորձել է դրանք առավել կոնկրետացնել, կիրառման ուղենիշեր սահմանել: Քրեական նոր օրենսգրքում հատուկ կարգավորում է սահմանված զինծառայողների համար: Օրենսդիրը նախատեսել է, որ զինծառայողի վրա կարող են դրվել այնպիսի պարտականություններ, որոնք չեն խոչընդոտում զինված ուժերի համապատասխան ստորաբաժանումում իր ծառայողական պարտականությունների կատարումը: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը կարող է նշանակել նաև լրացուցիչ պատիժ, ինչպես նաև անվտանգության միջոց:

Քրեական նոր օրենսգրքում նորամուծություն է այն, որ եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում խուսափում է դատարանի սահմանած պարտականությունները կատարելուց, վերահսկողությունից կամ դատարանի նշանակած անվտանգության միջոցը կամ լրացուցիչ պատիժը կատարելուց, ապա համակողմանի գնահատման ենթարկելով խուսափելու պատճառները՝ դատարանը վերացնում է անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ դատապարտյալի միջնորդությամբ մինչև 1 տարի ժամկետով երկարաձգում է անձի նկատմամբ նշանակված փորձաշրջանի ժամկետը, այդ թվում՝ առավելագույն՝ 5 տարի ժամկետով նշանակված փորձաշրջանի ժամկետը:

Եթե փորձաշրջանի ժամկետը երկարաձգելուց հետո անձը շարունակում է խուսափել դատարանի սահմանած պարտականությունները կատարելուց, վերահսկողությունից կամ դատարանի նշանակած անվտանգության միջոցը կամ լրացուցիչ պատիժը կատարելուց, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը:

Օրենսդիրը հստակեցրել է, որ եթե հանցագործությունների համակցությամբ նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, որը պայմանականորեն չի կիրառվել, և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ, ապա դրա կատարումից

խուսափելու դեպքում դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը վերացնում է:

Օրենսդրի կողմից առանձին կանոնակարգման են ենթարկվել փորձաշրջանի ընթացքում հանցանք կատարելու իրավական հետևանքները: Քրեական նախկին օրենսգիրքը սահմանում էր, որ փորձաշրջանի ընթացքում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը, մինչդեռ անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում, պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը թողնված էր դատարանի հայեցողությանը:

Քրեական նոր օրենսգրքում այս հարցի շուրջ մոտեցումը փոքր-ինչ այլ է. եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է նոր դիտավորյալ հանցանք (ցանկացած ծանրության), ապա նրա նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշումը վերացվում է: Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է անզգույշ հանցանք, ապա պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը լուծում է դատարանը: Եթե դատարանը գործի հանգամանքների համակողմանի գնահատման արդյունքով որոշում է չվերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելը և նոր կատարված հանցանքի համար նշանակում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, ապա այդ պատիժը պայմանականորեն չի կիրառվում, և փորձաշրջանի ժամկետը երկարաձգվում է մինչև 5 տարի ժամկետով: Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարում է մեկից ավելի անզգույշ հանցանք, ապա պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը վերացվում է:

Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցության համար պատիժ նշանակելու կարգով: Հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժ նշանակելիս դատարանը, կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ: Եթե դատարանը նպատակահարմար չի համարում պատիժը պայմանականորեն չկիրառելը, ապա անցած փորձաշրջանի 2 օրը հաշվվում է կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման 1 օրվա դիմաց:

Եթե անձը կատարել է նոր հանցանք մինչև պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշումն ուժի մեջ մտնելը, ապա դատարանը վերացնում է պատիժը

պայմանականորեն չկիրառելու մասին որոշումը և պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու կանոններով: Եթե փորձաշրջանի ընթացքում անձը կատարել է նոր հանցանք, որը բացահայտվում է փորձաշրջանն անցնելուց հետո, ապա անձը դրա համար պատիժը կրում է առանձին:

### ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼԸ

Քրեական նոր օրենսգրքը, ինչպես և քրեական նախկին օրենսգրքը սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գրեթե նույնական կարգավորում, ամրագրելով՝ կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալը դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ կարող է ազատվել պատժից, եթե դատապարտյալը կրել է պատժի՝ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված համապատասխան նվազագույն ժամկետը, և դատարանը դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացրած զեկույցների ուսումնասիրման հիման վրա համոզվում է, որ դատապարտյալի վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, քանի որ՝

- 1) պատժի կրման ընթացքում նա դրսևորել է պատշաճ վարքագիծ և
- 2) նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է:

Քրեական նոր օրենսգրքում, դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի առնվող հանգամանքներն ամրագրելիս, օրենսդիրը նախատեսել է նույն դրույթները, ինչ և քրեական նախկին օրենսգրքի պարագայում: Մասնավորապես, օրենսդիրը նշել, որ դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի են առնվում՝

- 1) պատժի կրման ընթացքում խրախուսանքի կամ տույժի առկայությունը,

2) պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն,

3) պատժի կրման ընթացքում աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, և չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով (քրեական նախկին օրենսգրքով նախատեսվում էր նվազագույնը 3 ամիս տևողությամբ աշխատելը, ինչը սակայն նոր օրենսգրքում փոփոխվել է և ժամանակային որևէ շեմ չի նախատեսվել),

- 4) դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

Դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը

գնահատելիս հաշվի առնվող հանգամանքներին անդրադառնալիս՝ քրեական նոր օրենսգրքում օրենդիրը գրեթե նույնությամբ ներկայացրել է քրեական նախկին օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.2-րդ մասում ներկայացված գործոնները, ավելացնելով միայն մեկը՝ հանցանքի կատարմանը նպաստած հանգամանքների փոփոխությունները: Նման վիճակ կարող է ստեղծվել, օրինակ, անչափահաս դատապարտյալի ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման դեպքում, եթե պարզվի, որ անձը հանցանքը կատարել էր ընտանեկան սոցիալական վատ պայմաններից ելնելով, ընտանիքի կենսական պահանջմունքները բավարարելու համար:

Քննարկվող հանգամանքների գնահատման առումով դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Գարիկ Դավթյանի գործով որոշման շրջանակներում<sup>85</sup>:

Քննարկվող ինստիտուտը ներկայացնելիս՝ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած առանցքային փոփոխությունը վերաբերում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հիմք հանդիսացող, պատժի պարտադիր կրման ժամանակահատվածի սահմանմանը. օրենսդիրն այն կապում է ոչ թե հանցանքի ծանրության, այլ դատարանի դատավճռով նշանակված վերջնական պատժաժամկետի հետ: Մասնավորապես, սահմանվում է, որ դատապարտյալը կարող է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե կրել է՝

1) 5 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը,

2) 15 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երկրորդը,

3) 30 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան երկու երրորդը,

4) նոր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան երեք քառորդը՝ նախկինում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու և այն վերացվելու դեպքում.

5) ազատազրկման ձևով նշանակված պատժի ոչ պակաս, քան 20 տարին՝ ցմահ ազատազրկման դատապարտված լինելու դեպքում:

Կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատժի փաստացի կրած ժամկետը չի կարող 3 ամսից պակաս լինել:

Ժամկետների հաշվման այս մոտեցումը թույլ է տալիս խուսափել այն խնդիրներից, որոնք ծագում էին քրեական նախկին օրենսգրքով, հանցագործությունների կամ դատավճիռների համակցության դեպքում պատիժ նշանակելու պարագայում:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում

<sup>85</sup> Տե՛ս, Գարիկ Դավթյանի գործով Վճռաբեկ դատարանի 2022 թվականի մարտի 23-ի թիվ ՇԴ/0021/15/20 որոշում, Արմեն Եղոյանի գործով Վճռաբեկ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ՍԴ3/0010/12/18 որոշում:

կայացնելու դեպքում պատժի չկրած մասը համարվում է փորձաշրջան, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողության ներքո: Յմահ ազատագրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելիս սահմանվում է փորձաշրջան՝ 10 տարի ժամկետով:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում կայացնելիս դատարանն անձի վրա դնում է քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը: Եթե դատապարտյալը դեռևս չի հատուցել կամ այլ կերպ հարթել տուժողին պատճառված իրական վնասը, ապա դատարանը դատապարտյալի վրա նման պարտականություն է դնում: Ինչպես և պատիժը պայմանականորեն չկիրառելիս, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելիս, փորձաշրջանի ընթացքում, դատապարտյալի վրա պարտադիր կերպով դրվում են նշված պարտականություններից մեկը կամ մի քանիսը:

Եթե պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձը խուսափում է դատարանի սահմանած պարտականությունները կատարելուց կամ վերահսկողությունից, ապա, ինչպես և քրեական նախկին օրենսգրքով էր սահմանված, դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը:

Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք կամ պարզվում է, որ նա հանցանք է կատարել պատիժը կրելու ընթացքում, ապա դատարանը վերացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը և պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու սահմանված կարգով: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը քննարկվող ինստիտուտի վերացման իմպերատիվ պահանջ սահմանում էր միայն դիտավորյալ հանցանքի պարագայում, իսկ անզգույշ հանցանքինը՝ թողնում դատարանի հայեցողությանը, քրեական նոր օրենսգիրքը հստակ ամրագրում է, որ ցանկացած նոր հանցանքի կատարման պարագայում դատարանը վերացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը:

Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ անձը մինչև դատապարտվելը կատարել է այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը վերացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշումը և պատիժ է նշանակում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու սահմանված կարգով:



Այս դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ժամկետի հաշվարկն սկսվում է նորից՝ դատապարտյալի կողմից պատժի կրումը վերսկսելու պահից:

Քրեական նախկին օրենսգիրքը չէր հստակեցնում, թե ինչպես պետք է իրականացվի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու՝ փաստացի կրման համար պարտադիր համարվող ժամկետի հաշվարկը, եթե դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում նոր հանցանք էր կատարվել: Միայն մեկ կանոնակարգում կար, որը սահմանում էր. եթե ցմահ ազատազրկում կրող անձը դիտավորյալ այնպիսի նոր հանցանք է կատարել, որի համար նշանակվում է ազատազրկում, ապա պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար պարտադիր կրման ենթակա ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև նոր պատժի ժամկետը լրանալը:

Քրեական նոր օրենսգիրքն այս առումով առավել հստակ կանոնակարգում է իրականացրել, սահմանելով, որ դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում նոր հանցանք (ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգույշ) կատարելու դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու՝ պարտադիր կրման ենթակա ժամկետի ընթացքն ընդհատվում է: Այս դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ժամկետի հաշվարկը սկսվում է նորից՝ դատապարտյալի կողմից հիմնական պատժի կրումն սկսելու պահից:

Եթե ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձն այնպիսի նոր հանցանք է կատարել, որի համար նշանակվում է ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ, ապա պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար պարտադիր կրման ենթակա ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև ազատազրկման ձևով նոր նշանակված պատժի ժամկետը լրանալը, իսկ ցմահ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու դեպքում՝ մինչև 20 տարին լրանալը:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում անձը չի ազատվում իր նկատմամբ նշանակված լրացուցիչ պատժից: Այլ պատժատեսակն ազատազրկմամբ փոխարինելիս դատապարտյալը չի կարող պայմանական վաղաժամկետ ազատվել պատժի կրումից:

## **ՀՂԻ ԿՆՈՋ ԿԱՍ ԽՆԱՄՔԻՆ ՄԻՆՉԵՎ 6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՊԱՏՃԻ ԿՍՏԱՐՈՒՄԸ ՀԵՏԱԶԳԵԼԸ**

Պատժից ազատելու այս հիմքը եկել է փոխարինելու քրեական նախկին օրենսգրքով սահմանված հղի կանանց կամ մինչ երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելուն կամ պատժից ազատելուն: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը սահմանում է պատժի հետաձգում երեխայի ոչ թե

մինչև 3, այլ մինչև 6 տարեկան դառնալը: Մասնավորապես, սահմանվում է, որ մինչև 5 տարի ժամկետով ազատազրկման կամ ազատազրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի նկատմամբ նշանակված պատժի կատարումը կարող է հետաձգվել մինչև երեխայի 6 տարեկան դառնալը, եթե դատարանը համարում է, որ պատժի նպատակներին հասնելու համար պատիժն անմիջապես կատարելն անհրաժեշտ չէ:

Քրեական նախկին օրենսգիրքը չէր սահմանում, թե դատարանը ինչ հանգամանքներ պետք է հաշվի առնի պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշում կայացնելիս, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում հստակեցվել են այդ հանգամանքները՝

- 1) անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,
- 2) պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,
- 3) հանցանք կատարածի անձը,

4) պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել:

Պատժի կատարումը հետաձգելու մասին որոշում կայացնելու դեպքում պատժի հետաձգված ժամկետը համարվում է փորձաշրջան, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողության ներքո և պարտավոր է կատարել դատարանի որոշմամբ սահմանված քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունները: Պատժի կատարումը հետաձգելու մասին որոշում կայացնելիս դատարանն անձի վրա դնում է քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը: Այսինքն՝ ինչպես և պատիժը պայմանականորեն չկիրառելիս կամ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելիս՝ դատարանի կողմից դատապարտյալի վրա պարտադիր կերպով դրվում են մեկ կամ մի քանի պարտականություններ: Դատարանը կարող է այնպիսի պարտականություններ դնել հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի վրա, որոնք իրագործելի են նրա կողմից:

Այն դեպքում, երբ հղի կինը կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձը խուսափում է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը: Փորձաշրջանի ընթացքում նոր հանցանք կատարելու դեպքում դատարանն անձի նկատմամբ պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ

նշանակելու կարգով:

Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցության համար պատիժ նշանակելու կարգով: Եթե հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը, ապա դատարանը, կարող է որոշում կայացնել պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ: Եթե հղի կինն ընդհատում է հղիությունն առանց դրա ընդհատման համար օրենքով սահմանված բժշկական ցուցումների կամ հրաժարվում է երեխայից կամ նրան հանձնում է մանկատուն կամ խուսափում է նրան խնամելուց և դաստիարակելուց, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում հստակեցվում է, որ երեխայի մահվան դեպքում դատարանը չի վերացնում պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը, եթե փորձաշրջանի ընթացքում անձը բարեխղճորեն կատարել է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները: Եթե պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը չի վերացվում, ապա փորձաշրջանն ավարտվելուց հետո անձն ազատվում է պատժի կրումից:

## **ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼԸ ԿԱՍ ՊԱՏԻԺԸ ՀԵՏԱԶԳԵԼԸ**

### **ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ**

Քրեական նոր օրենսգրքում, ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, պատժից ազատելու հիմքերից մեկը անձի մոտ ծանր հիվանդության առկայությունն է: Այս ինստիտուտի կիրառումը տարբերակվում է երկու կտրվածքով՝ պատժից ազատելն անձի հոգեկան առողջության խնդիրների դեպքում և պատժից ազատելն այլ ծանր հիվանդությունների պարագայում: Որպես առանձնահատուկ կանոնակարգում օրենսդիրը նախատեսում է նաև պատժից ազատելը այս հիմքով, եթե անձի մոտ առկա հիվանդության (պարտադիր չէ, որ այն լինի ծանր հիվանդություն) հետևանքով նա դարձել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

Քրեական նոր օրենսգրքը սահմանում է, որ եթե հանցանքը կատարելուց հետո, բայց մինչև դատավճիռ կայացնելը անձի մոտ ի հայտ է եկել հոգեկան առողջության այնպիսի խնդիր, որն անհնարին է դարձնում պատիժ նշանակելը, ապա դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության հիման վրա պատժի

նշանակումը հետաձգվում է: Այդ անձի նկատմամբ նշանակվում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, իսկ առողջական վիճակի այնպիսի փոփոխության դեպքում, երբ հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ անձը կարող է կրել պատիժ, դատարանը վերացնում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը և նշանակում է պատիժ: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, նոր կարգավորումից հետևում է, որ հնարավոր է պատժի հետաձգում՝ առանց պատիժ նշանակելու, եթե անձի մոտ հոգեկան խանգարումն ի հայտ է եկել մինչ դատավճիռ կայացնելը: Միաժամանակ, քրեական նոր օրենսգրքում տեղ գտած ձևակերպման մեջ օգտագործվում է ոչ թե «հիվանդացել է», այլ՝ «ի հայտ է եկել» եզրույթը, ինչն առավել հստակ և ճիշտ է, քանի որ անձը կարող է հիվանդ լինել նաև մինչ հանցանք կատարելը, սակայն հիվանդությունն ի հայտ գա հանցանքի կատարումից հետո: Միաժամանակ, կարևոր փոփոխություն է այն, որ այս հիմքով պատժից ազատելն արդեն ոչ թե դատարանի հայեցողության լայն շրջանակում է, այլ պայմանավորված է բժշկական կամ հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ:

Քրեական նոր օրենսգիրքը առավել հետևողական է նաև պատժից ազատելու առումով, սահմանելով, որ եթե դատավճիռ կայացնելուց հետո անձի մոտ ի հայտ է եկել հոգեկան առողջության այնպիսի խնդիր, որն անհնարին է դարձնում պատիժը կատարելը, ապա դատարանը դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության հիման վրա նրան ազատում է պատիժը կրելուց: Այդ անձի նկատմամբ նշանակվում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, իսկ առողջական վիճակի այնպիսի փոփոխության դեպքում, երբ հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության համաձայն՝ անձը կարող է կրել պատիժ, դատարանը վերացնում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը և որոշում է կայացնում անձին ուղարկել պատիժը կրելու: Ի տարբերություն քրեական նոր օրենսգրքի, քրեական նախկին օրենսգրքում խոսքը վերաբերում էր պատժի կրման ընթացքում նման խնդրի ծագման մասին, մինչդեռ հնարավոր է հոգեկան խանգարման սրում կամ ծագում դատավճռի կայացումից հետո, բայց մինչ պատժի կրումը սկսելը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, այնպես էլ քրեական նոր օրենսգիրքը սահմանում է այլ ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելը, ավելին՝ ի տարբերություն նախկին կանոնակարգումների, օրենսդիրը հնարավոր է դիտում նաև այդպիսի հիվանդության պարագայում պատիժ չնշանակելը: Մասնավորապես, օրենսդիրը սահմանում է, որ եթե հանցանքը կատարելուց հետո, բայց մինչև դատավճիռ կայացնելը անձի մոտ ի հայտ է եկել այնպիսի այլ հիվանդություն (օրինակ՝ 3-րդ աստիճանի չարորակ նորագոյացություն), որն անհնարին է դարձնում պատիժ նշանակելը, ապա դատաբժշկական փորձաքննության հիման վրա պատժի նշանակումը հետաձգվում է: Անձի առողջական վիճակի այնպիսի փոփոխության դեպքում, որը,

բժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն, հնարավոր է դարձնում պատժի կատարումը, դատարանը պատիժ է նշանակում: Հարկ է նշել, որ ՀՀ-ում Կառավարության որոշմամբ հաստատվել է այն ծանր հիվանդությունների ցանկը, որոնք խոչընդոտում են պատիժը կրելուն<sup>86</sup>:

Եթե դատավճիռ կայացնելուց հետո անձի մոտ ի հայտ է եկել այնպիսի այլ հիվանդություն, որն անհնարին է դարձնում պատիժ կրելը, ապա դատարանը դատաբժշկական փորձաքննության հիման վրա նրան ազատում է պատիժը կրելուց: Անձի առողջական վիճակի այնպիսի փոփոխության դեպքում, որը, բժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն, հնարավոր է դարձնում պատժի կատարումը, դատարանը որոշում է կայացնում անձին ուղարկել պատիժը կրելու: Ըստ էության, այս կարգավորումը նույնական է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած նորմին:

Օրենսդիրը սահմանում է, որ անձի առողջական վիճակի փոփոխության հարցը բժշկական կամ հոգեբուժական հանձնաժողովը քննության է առնում 6 ամիսը մեկ պարբերականությամբ: Անձի առողջական վիճակի այնպիսի փոփոխության դեպքում, որը հնարավոր է դարձնում պատժի կատարումը, անձը ենթակա է պատժի, եթե չեն անցել վաղեմության ժամկետները:

Եթե անձի մոտ ծանր հիվանդությունն ի հայտ է եկել դատավճռի կայացումից հետո, և նա ծանր հիվանդության հիմքով ազատվել է պատժից, սակայն մինչև դատավճռի կատարման վաղեմության ժամկետը լրանալը կատարում է նոր հանցանք, ապա դատարանը պատիժ է նշանակում դատավճիռների համակցության կանոններով: Եթե անձի մոտ ծանր հիվանդությունն ի հայտ է եկել հանցանքի կատարումից հետո, բայց մինչ դատավճիռ կայացնելը և մինչ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելը նա է կատարում է նոր հանցանք, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու կանոններով: Կարգապահական գումարտակում պահելու դատապարտված զինծառայողը պատիժը կրելուց ազատվում է այնպիսի հիվանդության դեպքում, որի հետևանքով նա համարվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

## **ՊԱՏԻՃՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՍ ՊԱՏԺՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼԸ ԿԱՍ ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼԸ**

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած այս ինստիտուտը բովանդակային առումով լիովին տարբերվում է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած՝ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու ինստիտուտից:

<sup>86</sup> Տե՛ս, ՀՀ Կառավարության 2006 թ.-ի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման հավելված 2:

Քրեական նախկին օրենսգիրքը նախատեսում էր, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատազրկում կրող անձի պատժի չկրած մասը դատարանը կարող էր փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով՝ հաշվի առնելով պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հիմք հանդիսացող, անձին, նրա վարքագիծը, ռիսկայնությունը բնութագրող հանգամանքները և դրանց վերաբերյալ քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները:

Քրեական նոր օրենսգիրքը նման հնարավորություն չի ընձեռում, այլ նախատեսում է պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու կամ պատժից ազատելու հնարավորություն միայն այն դեպքում, եթե դատավճիռը կայացնելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով նշանակված պատժատեսակի կատարումն օբյեկտիվորեն անհնարին է դարձել: Օրինակ՝ կարգապահական գումարտակում պատիժ կրող անձի մոտ ի հայտ են եկել այնպիսի առողջական խնդիրներ, որոնք անհնարին են դարձրել նրա կողմից նշված պատժատեսակի կրումը, ավելին՝ դատապարտյալին դարձրել են զինվորական ծառայության համար ոչ պիտանի: Նման դեպքերում դատարանը նշանակված հիմնական կամ լրացուցիչ պատիժը կամ դրա չկրած մասը փոխարինում է ավելի մեղմ պատժով, իսկ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու անհնարինության դեպքում դատապարտյալին ազատում է պատիժը կրելուց: Ընդ որում, քրեական նոր օրենսգիրքը նաև չի նախատեսում որևէ սահմանափակում ըստ հանցանքի ծանրության, հետևաբար այն հնարավոր է կիրառել ինչպես ոչ մեծ կամ միջին ծանրության, այնպես էլ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարման դեպքում:

### **ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ**

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքում նախատեսված է արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու ինստիտուտը: Սակայն, բովանդակային առումով, այս ինստիտուտը քրեական նոր օրենսգրքում փոփոխված է:

Քրեական նախկին օրենսգիրքը հնարավոր էր համարում այս ինստիտուտի կիրառումը ոչ մեծ և միջին ծանրության հանցագործության դեպքում, մինչդեռ քրեական նոր օրենսգիրքը նման սահմանափակում չի դրել: Փոխարենը՝ վերջինս սահմանել է, որ հանցանք կատարած անձը, որը դատապարտվել է առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկման կամ քրեական օրենսգրքով նախատեսված ավելի մեղմ պատժի, կարող է ազատվել պատժից, եթե ընտանիքի միակ աշխատունակ անդամի հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժի կրումը դատապարտյալի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների:

Ասվածից հետևում է, որ նույնիսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի պարագայում, եթե անձը դատապարտվի 5 տարի ժամկետը չգերազանցող ազատազրկման, այս ինստիտուտի կիրառումը հնարավոր է:

Քրեական նոր օրենսգրքում առանձին չեն մատնանշվել «հրդեհը, տեխնոլոգիական կամ տարերային աղետը», սակայն դրանք դիտարկվում են «արտակարգ այլ հանգամանքներ» հասկացության ներքո: Քննարկվող ինստիտուտը կիրառելու առանձնահատկություններին անդրադարձ կատարվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից՝ Տիրան Բուդադյանի գործի շրջանակներում<sup>87</sup>:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում սահմանվում է, որ արտակարգ հանգամանքների հետևանքով ազատությունից զրկելու հետ կապված պատժից ազատելու մասին որոշում կայացնելու դեպքում նշանակված կամ պատժի չկրած ժամկետը համարվում է փորձաշրջան, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողության ներքո: Փորձաշրջանի ընթացքում դատարանը դատապարտյալի վրա դնում է քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը: Կրկին, ինչպես և պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում, դատարանը դատապարտյալի վրա պարտադիր դնում է մեկ կամ մի քանի պարտականություն:

Այն դեպքում, երբ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատված անձը խուսափում է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց, վերահսկողությունից կամ փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք, ապա դատարանը վերացնում է արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշումը: Արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշումը փորձաշրջանի ընթացքում կատարված հանցանքի հիմքով վերացնելու դեպքում դատարանն անձի նկատմամբ պատիժ է նշանակում դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու սահմանված կարգով: Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու սահմանված կարգով և լուծում է արտակարգ հանգամանքների հետևանքով անձին պատժից

---

<sup>87</sup> Տե՛ս, Տիրան Բուդադյանի գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ ԱՎԴ/0100/01/08 որոշում:

ազատելու վերաբերյալ որոշումը վերացնելու հարցը:

**ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼԸ ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՃՈՒ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ**

Քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է առանձնահատուկ դրույթներ մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ, սահմանելով, որ հանցագործության համար դատապարտված անձը դատարանի որոշմամբ ազատվում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվել դատավճռով նշանակված պատժի ժամկետին հավասար ժամանակահատվածում: Ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված անձը դատարանի որոշմամբ ազատվում է պատիժը կրելուց, եթե օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեղադրական դատավճիռն ի կատար չի ածվել 1 տարվա ընթացքում:

Ակնհայտ է, որ ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը դատավճռի վաղեմության ժամկետները կապում է ոչ թե հանցագործության ծանրության, այլ դատավճռով սահմանված պատժաժամկետի հետ: Քրեական նախկին օրենսգիրքը մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետները սահմանում էր՝ 2 տարի՝ ոչ մեծ ծանրության, 5 տարի՝ միջին ծանրության, 10 տարի՝ ծանր, 15 տարի՝ առանձնապես ծանր հանցանքի համար մեղադրական դատավճիռն ուժի մեջ մտնելու պահից: Քրեական նոր օրենսգրքում դատավճռի կատարման վաղեմության ժամկետը հաշվվում է մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից և հավասար է դատավճռով նշանակված ազատազրկում պատժատեսակի տևողությանը: Օրինակ, եթե դատարանը առանձնապես ծանր հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառում է օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ և նրան դատապարտում 4 տարի ժամկետով ազատազրկման, ապա դատավճռի կատարման վաղեմության ժամկետը կսկսվի դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից և կընթանա 4 տարի:

Մեղադրական դատավճռով նշանակված պատժի կատարումը հետաձգելու դեպքում մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ դատարանի որոշումը վերացնելուց հետո: Ինչպես և քրեական նախկին օրենսգրքի պարագայում, քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է վաղեմության ժամկետի ընդհատում, սակայն ոչ թե դիտավորյալ (ինչպես նախատեսված էր քրեական նախկին օրենսգրքում), այլ ցանկացած նոր հանցանքի կատարման դեպքում: Մասնավորապես, սահմանվում է, որ վաղեմության



Ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև մեղադրական դատավճռի կատարման վաղեմության ժամկետներն անցնելն անձը նոր հանցանք է կատարում: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքը կատարելու հաջորդ օրվանից:

Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե դատապարտյալը խուսափում է հիմնական պատիժը կրելուց: Այս դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսվում է նրան ձերբակալելու, մեղայականով ներկայանալու կամ խուսափելը դադարեցնելու պահից: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է կասեցման դեպքում վաղեմության ժամկետի երկարաձգում ոչ թե ֆիքսված ժամանակահատվածով, ինչպես քրեական նախկին օրենսգրքում էր (նախկին կանոնակարգումներով՝ կասեցման պարագայում, եթե անձը դատապարտվել էր ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի համար, վաղեմության ժամկետը դառնում էր 10 տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի դեպքում՝ 20 տարի), այլ նշում է, որ կասեցման դեպքում քրեական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված ժամկետը երկարաձգվում է դրա մեկ երկրորդի չափով: Օրինակ՝ եթե անձը դատապարտվել է ազատազրկման 8 տարի ժամկետով, որից հետո դիմել փախուստի, ապա վաղեմության ժամկետը կասեցվում է և վաղեմության ժամկետը ավելանում է 1/2-ով, այսինքն 4 տարով: Արդյունքում՝ վաղեմության ժամկետը դառնում է 12 տարի:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ վաղեմության ժամկետի կիրառման հարցը թողնում էր դատարանին, քրեական նոր օրենսգիրքը նման դեպքերում հստակ նշում է, որ վաղեմության ժամկետ չի կիրառվում:

Քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ օրենսգրքի 133-154-րդ հոդվածներով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքները կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում՝ անկախ մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված:

## Գլուխ 14

### ՀԱՄԱՆԵՐՈՒՄԸ, ՆԵՐՈՒՄԸ, ԴԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ փոփոխությունների են ենթարկվել **համաներման և ներման ինստիտուտները**: Պահպանվել են դրանց իրավական հետևանքները, բայց արգելվում է համաներում և ներում կիրառել խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցանքներ, ահաբեկչություն, խոշտանգում կատարած անձանց նկատմամբ, այն պաշտոնատար անձի նկատմամբ, որը ծանրացնող հանգամանքներում չարաշահել է իր իշխանությունը, ծառայողական լիազորությունները կամ դրանցից բխող ազդեցությունը կամ անցել է իր լիազորությունները: Համաներման վերաբերյալ նախադեպային դիրքորոշում է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանը: Ըստ դրա՝ համաներման ակտի կիրառումը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում: Ընդ որում, համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման ակտով և պետք է պահպանվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել դատվածությունը: Այդ կանոններից շեղումները, այդ թվում՝ նախատեսված համաներման չկիրառումը կամ նախատեսվածից դուրս համաներման կիրառումը կարող են հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառություն<sup>88</sup>: Փաստորեն, համաներման կիրառման սահմանափակումները ներկայումս նախատեսված են ոչ միայն համաներման ակտով, այլև քրեական նոր օրենսգրքով:

Փոփոխությունների է ենթարկվել նաև **դատվածության ինստիտուտը**:

Նախ՝ ճշգրտվել է, որ դատվածության վերացման հիմք են ոչ միայն դատվածության մարումը, այլև համաներումը, ինչպես նաև արարքի ապաքրեականացումը:

Օրենքի համաձայն՝ փորձաշրջանն ավարտվելուց հետո դատվածություն չունեցողներ են համարվում այն անձինք, որոնք ազատվել են պատժից 84, 85, 88, 89 հոդվածներով, ինչպես նաև ում պատժի կրումը հետաձգվել է 86 հոդվածով նախատեսված կարգով: Այն անձը, որը ազատվել է պատիժը կրելուց 90 հոդվածով նախատեսված կարգով, համարվում է դատվածություն չունեցող:

Բացի այդ, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, ազատությունից զրկելու

<sup>88</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավետիսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11 որոշման 16-րդ կետը:

հետ կապված պատժից ավելի մեղմ պատիժ նշանակելու դեպքում, անձը համարվում է դատվածություն չունեցող ոչ թե պատիժը կատարելուց մեկ տարի անցնելուց հետո, այլ անմիջապես պատիժը կատարելուց հետո: Իսկ ազատագրվում նշանակելու դեպքում, ի տարբերություն նախկին օրենսգրքի, դատվածության մարման ժամկետը կապվում է ոչ թե հանցագործության տեսակի, այլ նշանակված պատժի ժամկետի հետ:

Քրեական նոր օրենսգիրքը, նախկինի նման, նշելով, որ դատվածության մարումը կամ վերացումը հանգեցնում են դատվածության հետ կապված քրեաիրավական հետևանքների վերացմանը, ոչինչ չի նշում այն մասին, որ դատվածության մարումը կամ վերացումը արգելք չէ օրենքով սահմանափակումներ նախատեսելու՝ դատավորի, դատախազի, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, ոստիկանության ծառայողի, քրեակատարողական ծառայողի, ազգային անվտանգության մարմիններում ծառայողի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի, ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոններ զբաղեցնելու համար: Օրենսդիրը հիմնվում է այն գաղափարի վրա, որ դա քրեաիրավական նորմ չէ, և այդ սահմանափակումները կարող են տեղ գտնել այլ իրավական ակտերում:

## Գլուխ 15

### ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՇԱՆԱԿՎՈՂ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

#### ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՇԱՆԱԿՎՈՂ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, հատուկ կանոնակարգումներ են նախատեսում անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առումով: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում սահմանվում է, որ քրեական օրենսգրքի իմաստով՝ հանցանք կատարած անչափահաս է համարվում հանցագործության պահին 14 տարին լրացած, սակայն 18 տարին չլրացած անձը:

Քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ հանցանք կատարած անչափահասի նկատմամբ կարող են նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց, անվտանգության միջոց կամ պատիժ, իսկ դատարանի կողմից պատժից ազատվելու դեպքում նա կարող է տեղավորվել անչափահասների վերականգնողական հաստատությունում:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում սահմանվում է, որ պատժի ընդհանուր նպատակներից բացի, հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող *պատիժը նպատակ* է հետապնդում ապահովելու նրա ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումը, դաստիարակելու նրան և պաշտպանելու այլ անձի բացասական ազդեցությունից: Այս դրույթի նախատեսումը, ըստ էության, «Երեխայի լավագույն շահը» ապահովելուն միտված կարգավորում է, ինչն անմիջականորեն բխում է ինչպես Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայից, այնպես էլ Պեկինյան կանոններից<sup>89</sup>:

Քրեական նոր օրենսգրքում վերանայվել է անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա *պատժի համակարգը*: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը անչափահասների նկատմամբ հնարավոր էր համարում կիրառել տուգանք, հանրային աշխատանքներ, կալանք և ազատազրկում որոշակի ժամկետով, քրեական նոր օրենսգրքով սահմանվում է, որ անչափահասների նկատմամբ կարող են կիրառվել՝

- 1) տուգանքը,
- 2) հանրային աշխատանքները,

<sup>89</sup> Տե՛ս, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 20.11.1989, ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ, («Պեկինյան կանոններ»), 29.11.1985:

- 3) որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
- 4) ազատության սահմանափակումը,
- 5) կարճաժամկետ ազատազրկումը,
- 6) ազատազրկումը:

Միաժամանակ, քրեական նոր օրենսգիրքը լուծում է տվել պատժի նշանակման ժամանակ հանդիպող մի խնդրի, որը վերաբերում էր անչափահասներին, այն է՝ հողվածի սանկցիայի շեմերին: Քրեական նախկին օրենսգիրքը թեև սահմանում էր անչափահասների նկատմամբ պատժի նշանակման հատուկ կանոններ, բայց և միաժամանակ նշում էր, որ պատիժ նշանակելիս դատարանը պետք է ղեկավարվեր Հատուկ մասի հողվածի սանկցիայի շեմերով, ինչը գործնականում խնդիրներ էր ստեղծում անչափահասների նկատմամբ արդարացի և արդյունավետ պատժի նշանակման առումով: Օրինակ, եթե 17 տարեկանը կատարում էր գողություն՝ բնակարան ապօրինի մուտք գործելով, ապա դատարանը պետք է պատիժ նշանակեր քրեական նախկին օրենսգրքի 177-րդ հողվածի 3-րդ մասի սանկցիայի շրջանակներում՝ 4-8 տարի ժամկետով ազատազրկման տիրույթում: Նույն սանկցիան կիրառելի էր նաև չափահասների համար:

Քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ մինչև 16 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել Հատուկ մասի համապատասխան հողվածով կամ հողվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երրորդը: 16-ից մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատժի նվազագույն և առավելագույն ժամկետը կամ չափը չի կարող գերազանցել Հատուկ մասի համապատասխան հողվածով կամ հողվածի մասով նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի կամ չափի մեկ երկրորդը: Եթե նշված կանոնները կիրառելիս պատժի ժամկետը կամ չափը պակաս է ստացվում տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից կամ չափից, ապա նշանակվում է ստացված ժամկետով կամ չափով պատիժ:

Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքում ևս բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության սանկցիան 4-8 տարի ժամկետով ազատազրկումն է: Մակայն եթե նշված հանցանքը կատարի 16-18 տարեկան անչափահասը, դատարանի համար պատժի նշանակման թույլատրելի տիրույթը 2-4 տարի ժամկետով ազատազրկումն է, քանի որ 16-18 տարեկանների պարագայում սանկցիայի ստորին և վերին շեմերը կրճատվում են 1/2-ով: Եթե նույն հանցանքը կատարի 14-16 տարեկանը, ապա դատարանի համար պատժի նշանակման թույլատրելի տիրույթը կլինի ազատազրկում 1 տարի 4 ամսից մինչև 2 տարի 8 ամիս, քանի որ այս տարիքային խմբի

պարագայում դատարանի համար կողմնորոշիչ պետք է լինեն սանկցիայի ստորին և վերին շեմերի 1/3-ը:

Անդրադառնալով անչափահասների նկատմամբ կիրառելի պատժատեսակներին՝ քրեական նոր օրենսգրքը սահմանում է, որ **տուգանքը** կիրառվում է անչափահասի ինքնուրույն եկամտի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է բռնագանձում տարածվել: Օրենսդիրը չի նախատեսել անչափահասների համար տուգանքի նվազեցված չափեր, ինչպես դա արված էր քրեական նախկին օրենսգրքում, ելնելով այն հանգամանքից, որ անչափահասի եկամուտը քիչ է լինելու և ըստ այդմ էլ՝ նրա տուգանքի չափն է ավելի պակաս լինելու, քան չափահասներինը: Հետևաբար՝ անչափահասների նկատմամբ տուգանքը կիրառելիս, դատարանները պետք է ղեկավարվեն քրեական նոր օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված չափերով, օրինակ՝ որպես հիմնական պատժատեսակ տուգանքը կիրառելիս՝ անչափահասի եկամտի 5-պատիկից մինչև 50-պատիկով:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը թույլ չէր տալիս **հանրային աշխատանքներ** կիրառել 16 տարին չլրացած անչափահասի նկատմամբ, քրեական նոր օրենսգրքը նախատեսում է հանրային աշխատանքների կիրառման հնարավորություն անչափահասի նկատմամբ՝ սկսած 15 տարեկանից: Օրենսդիրը սահմանում է, որ հանրային աշխատանքների տևողությունը դատավճիռ կայացնելու պահին 15 տարին լրացած անչափահասների համար չի կարող գերազանցել օրական 2 ժամը, իսկ 16-18 տարին չլրացած անչափահասների համար՝ օրական 3 ժամը: Անչափահասները չեն կարող ներգրավվել իրենց ֆիզիկական կամ հոգևոր զարգացման կամ առողջության համար վտանգ ներկայացնող աշխատանքներում: Հանրային աշխատանքներից խուսափելու դեպքում այն փոխարինվում է ազատազրկմամբ՝ քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով, եթե հանրային աշխատանքներից խուսափելու հետևանքների մասին նախազգուշացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, նա չի սկսի կամ վերսկսի հանրային աշխատանքների իրականացումը: Քրեական նոր օրենսգրքով սահմանվում է, որ հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելիս, եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի սանկցիայով ազատազրկում նախատեսված չէ, ապա ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել դատավճիռ կայացնելու պահին 15 տարին լրացած անչափահասների համար՝ 4 ամիսը, իսկ 16-18 տարին չլրացած անչափահասների համար՝ 6 ամիսը:

Քրեական նոր օրենսգրքը, հիմնվելով երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային իրավական ակտերի պահանջների վրա, սահմանում է ազատությունից զրկելու շատ խիստ շեմեր: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքով սահմանվում է, որ **կարճաժամկետ ազատազրկումն** անչափահասի

նկատմամբ նշանակվում է միայն այն դեպքում, երբ ավելի մեղմ պատժատեսակը չի կարող նպաստել պատժի նպատակների իրականացմանը:

Ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է, անչափահասի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկում չի նշանակվում: Այսինքն, եթե երեխան կատարի մի քանի անգամ ոչ մեծ ծանրության հանցանքներ, ապա կարճաժամկետ ազատազրկում նշանակել չի կարելի: Նույն պահանջն է նաև այն դեպքում, եթե երեխան առաջին անգամ է հանցանք կատարել և կատարածն էլ միջին ծանրության հանցանք է: Սակայն, եթե երեխան նախկինում կատարել է ծանր հանցանք, հետո միջին ծանրության, այս արգելքն այլևս չի գործի:

Քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ անչափահասի նկատմամբ **ազատազրկումը** պատժի բացառիկ միջոց է, որը նշանակվում է միայն այն դեպքում, երբ ոչ մի այլ միջոց չի կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը: Ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է և զուգորդված չէ բռնությամբ, անչափահասի նկատմամբ ազատազրկում չի նշանակվում: Եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար, բացի ազատազրկումից, այլ պատիժ նախատեսված չէ, ապա դատարանը նշանակում է պատժի համակարգում առկա ազատությունից զրկելու հետ չկապված ավելի մեղմ պատժատեսակ, որը կիրառելի է անչափահասի նկատմամբ:

Այս առումով պետք է նշել, որ նոր կարգավորումները էապես տարբերվում են քրեական նախկին օրենսգրքով առկա կանոնակարգումներից, որը թույլ էր տալիս անչափահասին ազատությունից զրկել թե՛ ոչ մեծ ծանրության, թե՛ միջին ծանրության հանցանքի կատարման դեպքում:

Անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա մյուս պատժատեսակների առումով օրենսդիրը առանձնահատկություններ չի նախատեսել, հետևաբար դրանց կիրառումը պետք է իրականացվի ելնելով այն կանոններից, որոնք սահմանված են չափահասների համար՝ հաշվի առնելով անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու առանձնահատկությունները:

## Գլուխ 16

### ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐԻ ԵՎ 21 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծություններից է 21 տարին չլրացած անձանց նկատմամբ պատիժ նշանակելու, նրանց քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու հատուկ կանոններ նախատեսելը: Քրեական նախկին օրենսգիրքը նման մոտեցումներ ուներ անչափահասների պարագայում, սակայն քրեական նոր օրենսգիրքը նման կանոնակարգումներ նախատեսել է նաև 21 տարին չլրացած երիտասարդների համար, ելնելով այն տրամաբանությունից, որ այս տարիքային խմբի ներկայացուցիչների մեծամասնությանը դեռևս բնորոշ են անչափահասների մոտիվացիոն, հոգեբանական առանձնահատկությունները:

Քրեական նոր օրենսգրքով սահմանվում է, որ անչափահասի կամ 21 տարին չլրացած անձի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում ինչպես սույն պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, այնպես էլ նրանց կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկան զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկություններն ու նրանց վրա այլ անձանց ազդեցությունը:

Ընդ որում, անչափահասներին և 21 տարին չլրացած անձանց վերաբերյալ առկա հատուկ դրույթները բացառում են պատիժ նշանակելիս անչափահասությունը կամ 21 տարին լրացած չլինելը որպես քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանք գնահատելը:

Քրեական նոր օրենսգիրքը հատուկ կանոններ է սահմանում անչափահասների և 21 տարին չլրացած անձանց նկատմամբ չավարտված հանցանքի պարագայում պատիժ նշանակելու առումով, սահմանելով, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն ժամկետի մեկ քառորդը, իսկ նվազագույն ժամկետը չի կարող պակաս լինել Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված ազատազրկման նվազագույն ժամկետի մեկ քառորդից: Եթե նշված կանոնները կիրառելիս ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում 3 ամսից, ապա նշանակվում է 3 ամսից պակաս ժամկետով ազատազրկում: Օրինակ, եթե անչափահասը կամ 21 տարին չլրացած անձը իրականացրել է ծանրացուցիչ հանգամանքներով սպանության նախապատրաստություն, ապա նրա նկատմամբ կիրառման ենթակա ազատազրկման տիրույթը կլինի ոչ թե 14-ից 20 տարի, ինչպես նախատեսված է սպանության որակյալ



տեսակի սանկցիայում, այլ 3 տարի 6 ամսից մինչև 5 տարի:

Հանցագործությունների համակցության դեպքում ևս, քրեական նոր օրենսգիրքը հատուկ կանոնակարգումներ ունի, սահմանելով, որ մինչև 16 տարին լրանալը միայն միջին ծանրության կամ ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 3, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձանց նկատմամբ՝ 7 տարին: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ 16-ից մինչև 18 տարին լրանալը միայն միջին ծանրության կամ ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 5, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձանց նկատմամբ՝ 10 տարին:

Քրեական նոր օրենսգրքի կանոնակարգումը նախատեսում է, որ եթե մինչև 18 տարին լրանալը կատարված հանցագործությունների համակցությունն ընդգրկում է առանձնապես ծանր այնպիսի հանցանք, որը կապված է դիտավորությամբ կյանքից զրկելու հետ, ապա անչափահասի նկատմամբ ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել 12 տարին:

Քրեական նոր օրենսգիրքը հատուկ կանոններ է պարունակում 18-21 տարեկան երիտասարդների համար, սահմանելով, որ 18-ից մինչև 21 տարին լրանալը միայն ոչ մեծ ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 5, միայն միջին ծանրության կամ ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ՝ 8, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձանց նկատմամբ՝ 20 տարին: Եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատազրկում, ապա վերջնական հիմնական պատիժ է նշանակվում ցմահ ազատազրկումը:

Թեև քրեական նոր օրենսգրքի մշակման ընթացքում քննարկվում էր 21 տարին չլրացած անձանց նկատմամբ ցմահ ազատազրկում պատժատեսակի նշանակման արգելք սահմանելը, սակայն այդ գաղափարը քրեական նոր օրենսգրքում տեղ չգտավ:

Քրեական նոր օրենսգիրքը պատասխան է տվել նաև իրավակիրառ պրակտիկայում հանդիպող մեկ այլ հարցի, ինչպես վարվել, եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկը կատարվել է ավելի ցածր, մյուսը ավելի բարձր տարիքում: Քրեական նոր օրենսգիրքը սահմանել է, որ եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկը կամ մի քանիսը կատարվել են ավելի ցածր, իսկ մյուսը կամ մյուսները ավելի բարձր տարիքում, ապա հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշելիս կիրառվում է

ավելի բարձր տարիքի համար սահմանված կանոնը: Եթե հանցագործությունների համակցության մեջ մտնող հանցանքներից մեկը կամ մի քանիսը կատարվել են մինչև 21 տարին լրանալը, իսկ մյուսը կամ մյուսները ավելի բարձր տարիքում, ապա հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշելիս կիրառվում է ավելի բարձր տարիքի համար սահմանված կանոնը:

Քրեական նոր օրենսգիրքը կանոնակարգել է նաև դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու հարցերը, սահմանելով, որ դատավճիռների համակցությամբ վերջնական պատիժը, բացառությամբ ազատազրկման ձևով վերջնական պատժի, չի կարող գերազանցել քրեական օրենսգրքով՝ պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն չափը: Դատավճիռների համակցությամբ ազատազրկման ձևով վերջնական պատիժը վերջին հանցանքը կատարելու պահին 16 տարին չլրացած անձանց նկատմամբ չի կարող գերազանցել 10, 18 տարին չլրացած անձանց նկատմամբ՝ 12, իսկ 21 տարին չլրացած անձանց նկատմամբ՝ 25 տարի ժամկետը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը կատարում է այնպիսի հանցանք, որի համար նախատեսված է նաև ցմահ ազատազրկում:

## Գլուխ 17

### ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ԵՎ 21 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԱՆՉԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, այնպես էլ քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է անչափահասներին քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն՝ *դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ* կիրառելով: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը նման հնարավորություն նախատեսում է նաև 21 տարին չլրացած անձանց համար:

Օրենսդիրը նշում է, որ եթե անչափահասը կամ 21 տարին չլրացած անձն առաջին անգամ է մեղադրվում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելու մեջ, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը հիմնավորում է, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով:

Այս ձևակերպման մեջ ամրագրում է ստացել քրեական նախկին օրենսգրքի մոտեցումը՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը թույլ տալ միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար, թեև առավել արդյունավետ լուծում կլիներ, եթե նման հնարավորություն ընձեռվեր ցանկացած հանցանք կատարելու դեպքում՝ դատարանին թույլ տալով որոշել, թե որ դեպքերում է դրանց կիրառումն իմաստավորված: Այնուհանդերձ, քրեական նոր օրենսգրքում ներկայումս նման հնարավորություն տրված է միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարելու պարագայում, ավելին՝ օրենսդիրը նշում է, որ անչափահասը կամ 21 տարին չլրացած անձը 1-ին անգամ պետք է մեղադրվի դրանց մեջ: Այս առումով, ներկայացված դրույթը տարբերվում է նաև քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կանոնակարգումից. վերջինս սահմանում էր, որ անչափահասը 1-ին անգամ պետք է հանցանք կատարած լիներ, բայց խոսք չէր գնում մեղադրվելու մասին:

Քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ անչափահասի կամ 21 տարին չլրացած անձի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները.

1) տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով,

2) պատճառած վնասը հարթելու պարտականություն դնելը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետում,

3) ժամանցի ազատությունը սահմանափակելը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջներ սահմանելը՝ առավելագույնը 1 տարի ժամկետով,

4) ուսման անցնելը, ուսումը շարունակելը, 18-ից մինչև 21 տարեկանում հանցանք կատարած անձի՝ տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի անցնելը,

5) հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը կամ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին մասնակցելը:

Ակնհայտ է, որ ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը առավել իրատեսական է մոտեցել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների սահմանմանը, դրանց մեջ կարևորելով հատկապես կրթության բաղադրիչը: Ընդ որում, 21 տարին չլրացած անձի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է որոշակի հետևանքներ՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից խուսափելու համար: Մասնավորապես, դաստիարակչական բնույթի հարկադրանքի նշանակված միջոցից խուսափելու կամ դրա պայմանները խախտելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանը կարող է վերացնել նշանակված միջոցը և անչափահասին կամ 21 տարին չլրացած անձին ենթարկել քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կամ 3-րդ կետով նախատեսված անվտանգության միջոցի:

Օրենսդիրը սահմանում է, որ նոր հանցանք կատարելիս անչափահասը կամ 21 տարին չլրացած անձը քրեական պատասխանատվության ենթակա չէ նախկին հանցագործության համար, եթե վերջինիս կապակցությամբ նրա նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց: Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառմամբ քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նոր հանցագործության համար ազատվել քրեական պատասխանատվությունից՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով:

Տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը նշված մարմինների պահանջները կատարելու պարտականություն դնելն է:

Պատճառած վնասը հարթելու պարտականությունը դրվում է՝ հաշվի առնելով անչափահասի կամ 21 տարին չլրացած անձի և նրա ընտանիքի գույքային դրությունը, ինչպես նաև նրա համապատասխան հմտությունները կամ աշխատանքային ունակությունները:

Ժամանցի ազատության սահմանափակումը և անչափահասի կամ 21 տարին

չլրացած անձի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը կարող է նախատեսել որոշակի վայրեր այցելելու, ժամանցի որոշակի ձևերի, այդ թվում՝ որոշակի անձանց հետ շփվելու, տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված արգելք կամ օրվա որոշակի ժամերին տնից դուրս գտնվելու, առանց տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության այլ վայրեր ուղևորվելու իրավունքի սահմանափակում:

Ուսման անցնելը, ուսումը շարունակելը, 18-ից մինչև 21 տարեկանում հանցանք կատարած անձի՝ տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի անցնելը ուսման անցնելու, ուսումը շարունակելու կամ աշխատանքի տեղավորվելու՝ դատարանի սահմանած պարտականությունն է:

Հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրերին կամ միջոցառումներին ներգրավվելը հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ հանրային ծրագրին կամ միջոցառմանը ներգրավվելու պարտականությունն է, իսկ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրին մասնակցելը նշված հաստատությունում իրականացվող վերականգնողական ծրագրին մասնակցելու պարտականությունն է:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է անչափահասներին քրեական պատասխանատվությունից ազատելու՝ **վաղեմության** կրճատված ժամկետներ, մասնավորապես քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելիս սույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են մեկ երկրորդի չափով:

Քրեական նոր օրենսգրքով կրճատված ժամկետներ են նախատեսվում նաև 18-21 տարեկան անձանց համար, մասնավորապես նշվում է, որ 18-ից մինչև 21 տարին լրանալը հանցանք կատարած անձին վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելիս քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են մեկ երրորդի չափով: Այսինքն՝ եթե 21 տարին չլրացած անձը կատարել է ծանր հանցանք, ապա կատարված հանցանքի վաղեմության ժամկետը կլինի ոչ թե 15 տարի, ինչպես 21 տարին լրացած անձանց համար, այլ՝ 10 տարի:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, քրեական նոր օրենսգիրքը ևս նախատեսում է անչափահասների **դատվածության** ավելի վաղ մարման հնարավորություն, սահմանելով, որ ազատազրկում պատժատեսակից ավելի մեղմ պատիժը կրելուց հետո անչափահասի դատվածությունը համարվում է մարված:

Մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձանց համար քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածով նախատեսված դատվածությունը մարվելու ժամկետները կրճատվում են և համապատասխանաբար հավասար են՝

1) 6 ամսվա՝ առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո,

2) 1 տարվա՝ առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո,

3) 3 տարվա՝ առավելագույնը 10 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո,

4) 5 տարվա՝ 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո:

Հատուկ կանոններ են նախատեսվում նաև 18-21 տարեկան անձանց համար, մասնավորապես նշվում է, որ 18-ից մինչև 21 տարին լրանալը հանցանք կատարած անձանց համար սույն օրենսգրքի 93-րդ հոդվածով նախատեսված դատվածությունը մարվելու ժամկետները կրճատվում են և համապատասխանաբար հավասար են՝

1) 1 տարվա՝ առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո,

2) 2 տարվա՝ առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո,

3) 4 տարվա՝ առավելագույնը 10 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո,

4) 7 տարվա՝ 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո:

## Գլուխ 18

### ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ԵՎ 21 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԱՆՉԱՆՑ ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրեական նախկին օրենսգիրքը հնարավոր էր համարում անչափահասին պատժից ազատելու հնարավորություն՝ հատուկ բժշկական ուսումնական հաստատությունում տեղավորելու միջոցով: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը նախատեսում է նրանց տեղավորում վերականգնողական հաստատությունում: Մասնավորապես, սահմանվում է, որ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելով՝ դատարանը նրան ազատում է պատժից, եթե հիմնավորում է, որ պատժի նպատակներին կարելի է հասնել նրան վերականգնողական հաստատությունում տեղավորելով: Վերականգնողական հաստատությունում տեղավորելը նշանակվում է առավելագույնը 3 տարի ժամկետով:

Վերականգնողական հաստատությունում գտնվելը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե դատարանը համարի, որ անձը տվյալ միջոցը հետագա կրելու կարիք չունի: Վերականգնողական հաստատությունում տեղավորելու ձևով հարկադրանքի միջոցից խուսափելու դեպքում այդ հարկադրանքի միջոցը փոխարինվում է դատավճռով նշանակված պատժով:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, այնպես էլ քրեական նոր օրենսգրքով հատուկ կանոններ են նախատեսված անչափահասներին *պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու* առումով: Քրեական նախկին օրենսգիրքը նման դեպքերում նշում էր, որ անչափահաս տարիքում հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անձը կարող է պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե փաստացի կրել էր՝

1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը.

2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը.

3) առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ մինչև 21 տարին լրանալը հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է՝

1) 3 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան

մեկ քառորդը,

2) 5 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ երրորդը,

3) 10 տարին չգերազանցող ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան մեկ երկրորդը,

4) 10 տարուց ավելի ժամկետով նշանակված ազատազրկման ոչ պակաս, քան երկու երրորդը:

Նման կանոնակարգումը առավել հստակ և հիմնավորված է, քանի որ թույլ է տալիս այս ժամկետներն առանց որևէ տարաձայնության կիրառել նաև հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ նշանակված պատժի պարագայում, հատկապես երբ համակցության մեջ ընդգրկված են հանցագործությունների դասակարգման տարբեր խմբերի հանցանքներ:

Քրեական նոր օրենսգիրքը, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, հատուկ կանոններ է նախատեսել նաև անչափահասի կամ 21 տարին չլրացած անձի **պատիժը պայմանականորեն** չկիրառելու առումով: Օրենսդրի հիմնական պահանջն այն է որ անչափահասի կամ 21 տարին չլրացած անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի առնի ինչպես հանցագործության բնույթը, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, այնպես էլ հանցավորի տարիքից բխող բարոյահոգեբանական առանձնահատկությունները, նրա կյանքի և դաստիարակության պայմանները: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ 1-3 տարի ժամկետով:



## Գլուխ 19

### ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄԸ

Քրեական նոր օրենսգրքի նորամուծությունների շարքին են դասվում անվտանգության միջոցները: Թեև «անվտանգության միջոցներ» եզրույթը քրեական նախկին օրենսգրքում առկա չէր, սակայն դրա առանձին տեսակները նախատեսված էին նաև նախկինում, օրինակ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները:

Քրեական նոր օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվտանգության միջոցը պետական հարկադրանքով ապահովված քրեախրավական ներգործության միջոց է, որը դատարանի դատավճռով կամ որոշմամբ պետության անունից նշանակվում է պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Անվտանգության միջոցների նպատակն է կանխել պատժի սպառնալիքով արգելված արարքների կատարումը:

Անվտանգության միջոց նշանակելը դատարանի համար ոչ թե պարտականություն է, այլ հայեցողության շրջանակներում տրված իրավունք: Օրենսդիրը հստակեցնում է, որ դատարանը կարող է նշանակել անվտանգության միջոց, եթե համարի, որ քրեական օրենսգրքով պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը կրկին կարող է այդպիսի արարք կատարել, կամ անվտանգության միջոցի կիրառումն անհրաժեշտ է իր կամ այլ անձի անվտանգությունն ապահովելու համար: Օրինակ, դատարանը, հաշվի առնելով հանցանք կատարած անձի մոտ հոգեբանական խնդիրների առկայությունը, ագրեսիվությունը, ինքնատիրապետման հետ կապված խնդիրները, կարող է որոշում կայացնել անվտանգության միջոց կիրառելու մասին՝ հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն սահմանելով: Ընդ որում, նշված անվտանգության միջոցի նշանակման վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ անձի նկատմամբ դրա կիրառման անհրաժեշտության և առավել արդյունավետ իրականացման եղանակների վերաբերյալ փորձագետի, իսկ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման վերաբերյալ՝ բժշկական-մասնագիտական հանձնաժողովի տված եզրակացությունը: Ընդ որում, այդ եզրակացությունը դատարանի համար կաշկանդող չէ, քանի որ վերջինս ունի դատական հայեցողության շրջանակներում գործելու հնարավորություն, ինչին անդրադարձ կատարել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Արտավագո Շատուրյանի գործով որոշման շրջանակներում<sup>90</sup>:

Անվտանգության միջոց կարող է նշանակվել ինչպես պատժի հետ զուգակցված, եթե դատարանը հիմնավորի, որ միայն պատիժ կիրառելով հնարավոր չէ վերացնել անձի կողմից նոր հանցանքի կատարման հավանականությունը, այնպես էլ առանց պատժի

<sup>90</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արտավագո Շատուրյանի գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԿԴ/0045/14/13 որոշում:

հետ զուգակցելու՝ որպես ինքնուրույն ներգործության միջոց, այդ թվում՝ անձին քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս: Անձի կողմից կատարված և պատժի սպառնալիքով արգելված մեկ արարքի համար կարող են նշանակվել մեկից ավելի անվտանգության միջոցներ:

Հետևաբար՝ անվտանգության միջոցներ կարող են կիրառվել ինչպես հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված, այնպես էլ քրեական օրենքով արգելված արարքը կատարած այլ անձի նկատմամբ, այդ թվում՝ անմեղսունակի, քրեական պատասխանատվությունից ազատված անձի և այլն:

Քրեական նոր օրենսգրքով անվտանգության միջոցների շարքին են դասվում՝

1) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները՝

ա. հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում,

բ. ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում,

գ. հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում,

2) որոշակի վայրեր այցելելու արգելքը,

3) հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, քրեական նոր օրենսգրքով, դատարանը բժշկական բնույթի հարկադրանքի միջոց է նշանակում այն անձի նկատմամբ, որը

1) պատժի սպառնալիքով արգելված արարքի կատարման պահին գտնվել է անմեղսունակության վիճակում,

2) հանցանքի կատարման պահին գտնվել է սահմանափակ մեղսունակության վիճակում,

3) հանցանքի կատարման պահին գտնվել է մեղսունակության վիճակում, սակայն դրանից հետո նրա մոտ դրսևորվել է հոգեկան առողջության խնդիր (ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որտեղ նշվում էր, որ հանցանքի կատարումից հետո անձի մոտ առաջացել է հոգեկան խանգարում, նոր կանոնակարգմամբ սահմանվում է, որ անձի մոտ դրսևորվել է հոգեկան առողջության խնդիրը, քանի որ հիվանդությունը կարող է անձի մոտ առաջացած լինի նախկինում, սակայն դրսևորվի հանցանքի կատարումից հետո),

4) կատարել է հանցանք և ակոհոլամոլությունից, թմրամոլությունից, դեղամոլությունից կամ թունամոլությունից բուժման կարիք ունի:

Այնուհանդերձ, սուկ վերը նշված կատեգորիայի անձանց շրջանակին պատկանելը դեռևս չի նշանակում, որ դատարանը պարտադիր պետք է նշանակի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ: Դատարանն անձի նկատմամբ նշանակում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, եթե հանգում է հետևության, որ անձը, իր առողջական վիճակով պայմանավորված, կարիք ունի բժշկական միջամտության, որը կապահովի իր կամ այլ անձի անվտանգությունը, ինչպես նաև անվտանգության միջոցների կիրառման նպատակի իրականացումը: Օրինակ, եթե անձը հանցանքի կատարման պահին գտնվել

է պաթոլոգիական աֆեկտով պայմանավորված անմեղսունակության վիճակում, և բժշկական-մասնագիտական հանձնաժողովը գտնում է, որ անձի նկատմամբ բժշկական միջամտության, հսկողության կարիք չկա, և նույն համոզմունքն էլ առկա է դատարանի մոտ, ապա դատարանը պետք է գերծ մնա բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելուց: Այն դեպքերում, երբ հանցանքի կատարման պահին անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության վիճակում գտնված կամ հանցանքի կատարումից հետո հոգեկան խնդիրներ դրսևորած կամ ակոհոլամոլությունից, թմրամոլությունից, դեղամոլությունից կամ թունամոլությունից բուժման կարիք ունեցող անձը հոգեկան վիճակով իր կամ այլ անձի համար վտանգավորություն չի ներկայացնում, դատարանն անձի վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկում է առողջապահության համապատասխան մարմին՝ այդ անձի բուժման հարցը լուծելու համար:

Ինչ վերաբերում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման հիմքերին, ապա դրանք նույնական են քրեական նախկին օրենսգրքում եղած կանոնակարգումներին:

Հիմնվելով քրեական նախկին օրենսգրքում եղած մոտեցման վրա, քրեական նոր օրենսգրքում սահմանվում է, որ դատարանը հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում է նշանակում պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած այն անձի նկատմամբ, որն իր հոգեկան վիճակով հիվանդանոցային բուժման կարիք չունի: Օրենսդիրը հստակեցնում է, որ ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակի դատապարտված անձը, որի նկատմամբ նշանակվել է հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում, այն կրում է ըստ ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակի կրման վայրի, իսկ ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակի դատապարտվածը՝ արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն և սպասարկում իրականացնող հոգեբուժական կազմակերպություններում:

Դատարանը հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում է նշանակում այն անձի նկատմամբ, որի հոգեկան վիճակը պահանջում է բուժման, խնամքի և հսկողության այնպիսի պայմաններ, որոնք կարող են իրականացվել միայն հիվանդանոցային պայմաններում: Դատարանը հոգեբուժական կազմակերպության հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում է նշանակում պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած այն անձի նկատմամբ, որն իր հոգեկան վիճակով վտանգավոր է իր կամ այլ անձի համար և պահանջում է մշտական հսկողություն: Ընդ որում, եթե քրեական նախկին օրենսգրքում օրենսդիրը նշում էր, որ անձը կարիք ունի մշտական հսկողության և բուժման, ապա քրեական նոր օրենսգրքում շեշտադրումը դրվում է միայն մշտական հսկողության վրա, քանի որ անձի իրավունքն է հրաժարվել բուժումից:

Զարգացնելով քրեական նախկին օրենսգրքում եղած մոտեցումը՝ քրեական նոր օրենսգիրքը սահմանում է, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դա-

տարանը հաշվի է առնում պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի հոգեկան առողջության խնդրի դրսևորումն ու բնույթը, կատարված արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, դրա կատարմանը նպաստած գործոնները, անձի կողմից պատժի սպառնալիքով արգելված արարք կրկին կատարելու հավանականությունը, իր կամ այլ անձի համար վտանգավորություն ներկայացնելը: Քրեական նախկին օրենսգիրքը սահմանափակվում էր միայն անձի հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը հաշվի առնելու պահանջ ձևակերպելով:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կոնկրետ տեսակը նշանակելու որոշում կայացնելիս դատարանը հիմնվում է հոգեբուժական կազմակերպության հանձնաժողովի տված եզրակացության վրա: Դատարանն է որոշում կայացնում նշանակված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառումը շարունակելու, դադարեցնելու կամ դրա տեսակը փոխելու մասին:

Հանցանքի կատարման համար դեռևս չդատապարտված կամ պատժի ժամկետը լրիվ կամ մասնակիորեն չկրած և հոգեբուժական կազմակերպությունում հարկադիր բուժման ուղարկված անձի ապաքինման դեպքում նրա նկատմամբ պատիժ նշանակելիս կամ պատիժը կրելը վերականգնելիս հոգեբուժական կազմակերպությունում հարկադիր բուժման ժամկետը հաշվակցվում է պատժի ժամկետին՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու 1 օրը հաշվելով ազատազրկման 1 օրվա դիմաց:

Քրեական նոր օրենսգրքի նորամուծություններից է ***որոշակի վայրեր այցելելու արգելք*** անվտանգության միջոցը, որը սահմանում է՝ եթե դատարանը համարում է, որ որոշակի վայրերում գտնվելու դեպքում բարձրանում է պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի կողմից կրկին այդպիսի արարք կատարելու հավանականությունը, կարող է որոշում կայացնել անձին որոշակի վայրեր այցելելը արգելելու մասին՝ 3 ամսից մինչև 2 տարի ժամկետով: Այն վայրերի շրջանակը, որոնք անձին արգելվում է այցելել, սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կատարված արարքի բնույթը, դրա կատարմանը նպաստած գործոնները, պատժի սպառնալիքով արգելված արարք կատարածի անձը: Օրինակ, ժամանցի վայրում խուլիգանություն կատարած անձին կարող է արգելել այցելել ժամանցի վայրեր:

Եթե որոշակի վայրեր այցելելու արգելքը նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատժի հետ զուգակցված, ապա դրա ժամկետը հաշվվում է պատժի կրումն ավարտվելու կամ անձին պատժի կրումից ազատելու պահից: Եթե անձը խուսափում է որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջները կատարելուց, ապա այն փոխարինվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ նշանակված անվտանգության միջոցի 1 ամիսը հաշվարկելով կարճաժամկետ ազատազրկման 3 օրվա դիմաց: Եթե հաշվարկի արդյունքով ստացված կարճաժամկետ ազատազրկման ժամկետը գերազանցում է 2 ամիսը, ապա նշանակվում է 2 ամիս ժամկետով կարճաժամկետ ազատազրկում:

Օրենսդիրը հստակեցրել է, որ անձը որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջ-

ները կատարելուց խուսափող է համարվում, եթե 2 և ավելի անգամ խախտել է դատարանի սահմանած արգելքը:

Քրեական նոր օրենսգրքի նորամուծություններից է նաև **հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը**: Օրենսդիրը սահմանում է, որ եթե դատարանը համարում է, որ պատժի սպառնալիքով արգելված արարք կատարելը պայմանավորված է եղել անձի հոգեվիճակով, հոգեբանական խնդիրներով կամ բարդույթներով, ապա կարող է որոշում կայացնել անձի նկատմամբ իրավասու մարմիններում հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն նշանակելու մասին՝ 3 ամսից մինչև 2 տարի ժամկետով: Հոգեբանական օգնություն ստանալու պարտականություն նշանակելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը հիմնվում է հոգեբան-փորձագետի տված եզրակացության վրա: Եթե հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատժի հետ զուգակցված, ապա դրա ժամկետը հաշվվում է հոգեբանական օգնությունը փաստացի ստանալու պահից, իսկ պատիժը պայմանականորեն չլիքառելու դեպքում՝ փորձաշրջանը սկսվելու պահից:

Օրենսդիրը հստակեցնում է այն իրավական հետևանքները, որոնք կառաջանան անվտանգության այս միջոցից խուսափելու կամ դրանից հրաժարվելու դեպքում, այն է՝ հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը փոխարինվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ նշանակված անվտանգության միջոցի 1 ամիսը հաշվարկելով կարճաժամկետ ազատազրկման 3 օրվա դիմաց: Եթե հաշվարկի արդյունքով ստացված կարճաժամկետ ազատազրկման ժամկետը գերազանցում է 2 ամիսը, ապա նշանակվում է 2 ամիս ժամկետով կարճաժամկետ ազատազրկում:

Դատարանն օրենքով սահմանված կարգով կարող է կրճատել կամ երկարաձգել հոգեբանական օգնություն ստանալու պարտականության տևողությունը՝ 3 ամսից մինչև 2 տարվա ժամկետների սահմաններում, կամ դադարեցնել հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը:

Օրենսդիրը հստակեցրել է, որ անձը հոգեբանական օգնություն ստանալու պարտականության պահանջները կատարելուց խուսափող է համարվում, եթե 2 և ավելի անգամ չի կատարում դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս սահմանված է **գույքի բռնագրավման** հնարավորությունը: Քրեական նոր օրենսգրքում այն վերնագրված է հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը:

Քննարկվող ներգործության միջոցի սահմանման ժամանակ օրենսդիրը հիմնականում ղեկավարվել է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած գույքի բռնագրավման ձևակերպումներով: Մասնավորապես, սահմանվել է, որ հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործու-

յան առարկան դատարանի կողմից ենթակա են պարտադիր բռնագրավման՝ անհատույց վերցման, բացառությամբ քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ընդ որում, հաշվի առնելով որ քրեական նոր օրենսգիրքը հնարավոր է համարում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն, քրեական նոր օրենսգրքում սահմանված է, որ գույքի բռնագրավումը կարող է կիրառվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձի նկատմամբ:

Քրեական նոր օրենսգրքում բռնագրավման ենթակա օբյեկտների/առարկաների շրջանակը սահմանելիս՝ օրենսդիրը ընդլայնել է այն, նշելով, որ բռնագրավման ենթակա է ոչ թե կոնկրետ տեսակի (օրինակ՝ մաքսանենգության), այլ ցանկացած հանցագործության առարկա: Օրենսդիրը նաև հստակեցնում է, որ գույք, եկամուտ կամ այլ տեսակի օգուտ են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ ֆինանսական (դրամական) միջոցները, վճարային գործիքները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները:

Քրեական նոր օրենսգրքում հատուկ շեշտվել է, որ հանցանքը կատարելու համար օգտագործված կամ շրջանառությունից հանված հանցագործության գործիքները կամ միջոցները, ինչպես նաև հանցագործության առարկա հանդիսացող իրերը, նյութերը, փաստաթղթերը, գույքը, առարկաները ենթակա են պարտադիր բռնագրավման, բացառությամբ այն դեպքի, երբ դրանց բռնագրավումն ակնհայտ անհամաչափ է՝ հաշվի առնելով կատարված հանցանքի բնույթն ու ծանրության աստիճանը: Օրենսդիրը չի հստակեցնում «ակնհայտ անհամաչափության» սահմանները, թողնելով այն իրավակիրառողի մեկնաբանությանը: Ակնհայտ անհամաչափության օրինակ կարող է լինել բեռնատար ավտոմեքենայի բռնագրավումը, երբ այն օգտագործվել է գողություն կատարած անձանց տեղափոխման համար:

Շրջանառությունից հանված օբյեկտ համարվող կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքը ենթակա է պարտադիր բռնագրավման՝ անկախ այն հանգամանքից, թե ում է այն պատկանում:

Քրեական նոր օրենսգրքում հստակեցվել է, որ բռնագրավման ենթակա չէ հանցանք կատարած անձի կամ նրա խնամքի տակ գտնվող անձի համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով, բարեխիղճ երրորդ անձի գույքը, տուժողին վերադարձման ենթակա գույքը, ինչպես նաև տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ գույքը: Եթե բռնագրավման ենթակա գույքը ծանրաբեռնված է բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներով, ապա այդպիսի իրավունքները պահպանվում են բռնագրավումից հետո: Եթե տուժողի և բարեխիղճ երրորդ անձի միջև առկա է վեճ բռնագրավման ենթակա գույքի վերաբերյալ, ապա այդ գույքի բռնագրավումը կարող է կատարվել քաղաքացիական դատավարության

կարգով:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս տեղ է գտել այն մոտեցումը, որ դատարանի կողմից քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցնելն արգելք չէ հանցավոր ծագում ունեցող գույքը, եկամուտը կամ այլ տեսակի օգուտը, հանցագործության գործիքը, միջոցը կամ հանցագործության առարկան բռնագրավելու համար: Եթե հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը կամ այլ տեսակի օգուտը միախառնված է օրինական ճանապարհով ստացված գույքի հետ, պատկանում է բարեխիղճ երրորդ անձի, կամ այն չի հայտնաբերվել, ապա բռնագրավման է ենթակա համարժեք գույք:

Բարեխիղճ երրորդ անձ է համարվում այն անձը, որը ձեռք է բերել հանցավոր ծագում ունեցող գույքը կամ ծանրաբեռնել է այն իր իրավունքներով, բայց չզիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանցագործության արդյունքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք կամ միջոց կամ հանցագործության առարկա: Բարեխիղճ երրորդ անձ է համարվում նաև այն անձը, որի գույքն իր կամքից անկախ հանգամանքներով դուրս է եկել իր տիրապետությունից, կամ որը գույքը հանձնել է այլ անձի, եթե նա չզիտեր ու չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցանք կատարելու նպատակներով:

Անդրադառնալով համաձայնեցման և համագործակցության վարույթների կիրառման դեպքում գույքի բռնագրավմանը, օրենսդիրը նշել է, որ քննարկվող կանոնները կիրառելի են, եթե համաձայնության արձանագրությամբ կամ մինչդատական համագործակցության վերաբերյալ համաձայնագրով բռնագրավման ենթակա գույքի կամ դրա չափի վերաբերյալ այլ բան նախատեսված չէ, բացառությամբ շրջանառությունից հանված օբյեկտ համարվող կամ անձանց ու հասարակության համար վտանգ ներկայացնող գույքի: Բանակցությունների արդյունքով համաձայնեցված՝ բռնագրավման ենթակա գույքի չափը չի կարող պակաս լինել ընդհանուր կարգով բռնագրավման ենթակա գույքի արժեքի 75 տոկոսից:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՔՐԵԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Քրեական նոր օրենսգրքում առկա է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կարգավորումը, որը ՀՀ քրեական օրենսդրության համար նորամուծություն է:

Նախ՝ նշվում է, որ ՀՀ-ում քրեական պատասխանատվության են ենթակա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամ օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձը: Այնուհետև նշվում է, որ քրեական պատասխանատվության ենթակա չեն պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց հիմնարկները, ՀՀ կենտրոնական բանկը: Այսպիսով՝ ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթակա են միայն մասնավոր իրավաբանական անձինք, իսկ պետական մարմինները, դրանց հիմնարկները, ՀՀ կենտրոնական Բանկը ենթակա չեն քրեական պատասխանատվության:

Պետք է նշել նաև, որ քրեական նոր օրենսգրքով՝ իրավաբանական անձը ենթակա է պատասխանատվության սկզբունքորեն բոլոր հանցագործությունների համար: Օրենքում չկա հանցագործությունների թվարկում, որոնց համար կարող է իրավաբանական անձը ենթարկվել պատասխանատվության: Այս մոտեցումն ընդունված է Անգլիայում, Կանադայում, Ավստրիայում<sup>91</sup>:

Այնուհետև կարգավորվում են այլ պետության տարածքում հանցանք կատարելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվության ենթարկելու դեպքերը: Եթե ՀՀ օրենսդրությամբ ստեղծված իրավաբանական անձը ՀՀ տարածքից դուրս հանցանք է կատարում, ապա ենթակա է պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե այդ երկրում չի ենթարկվել պատասխանատվության: Այս դրույթից հետևում է, որ անկախ նրանից, թե ում շահերի դեմ է ուղղված եղել արարքը, ՀՀ օրենսդրությամբ ստեղծված իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե օտարերկրյա պետությունում չի ենթարկվել պատասխանատվության տվյալ հանցագործության համար:

Օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձը ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելու համար ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե հանցագործությունն ուղղված է եղել է Հայաստանի Հանրապետության, ՀՀ քաղաքացու, ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, ՀՀ-ում ստեղծված իրավաբանական անձի կամ այլ կազմակերպության շահերի դեմ և, եթե օտարերկրյա պետությունում չի ենթարկվել քրեական պատասխանատվության:

<sup>91</sup> Anca Lulia Pop, Criminal Liability of Corporation-Comparative Jurisprudence.



յան սովյալ հանցագործության համար:

Իրենից հետաքրքրություն է ներկայացնում այն, թե որն է իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմքը, երբ է իրավաբանական անձը ենթակա քրեական պատասխանատվության: Քրեական օրենսգրքի համաձայն՝ իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության հետևյալ դեպքերում՝ 1. հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ այդպիսի անձի թողություններ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով, 2. իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից հանցանքի կատարմանը, 3. Հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով):

Փաստորեն, ՀՀ-ում ընդունվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության խառը մոդելը:

Առաջին կետը նախատեսում է նույնականացման և կազմակերպական մոդելը: Ըստ առաջինի՝ իրավաբանական անձի ղեկավարները գործում են հանցանք կատարելու դիտավորությամբ և նրանց կատարածը վերագրվում է իրավաբանական անձին, այլ կերպ ասած, նրանք գործում են որպես իրավաբանական անձ<sup>92</sup>: Ընդ որում, հանցանքը համարվում է իրավաբանական անձի կողմից կատարված, եթե այն կատարվել է ոչ միայն բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, այլև այն դեպքում, երբ այն կատարվել է նրանց թողություններ կամ դրդմամբ: Այլ կերպ ասած, այս դեպքում իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձն անձամբ հանցանք չի կատարում, այլ դա անում է ուրիշի ձեռքերով:

Ըստ առաջին կետի՝ հանցանքը համարվում է իրավաբանական անձի կողմից կատարված այն դեպքում, երբ այն կատարվում է բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով: Սա նշանակում է, որ իրավաբանական անձի աշխատակիցը պետք է գործի իրավաբանական անձի անունից: Դա

<sup>92</sup> Anca Lulia Pop, Criminal Liability of Corporation-Comparative Jurisprudence.

նշանակում է, որ աշխատակիցը պետք է գործի իրավաբանական անձի շահին ծառայելու մտադրությամբ, սակայն պարտադիր չէ, որ ընկերությունը, ըստ էության, օգուտ ունենա աշխատակցի արարքից<sup>93</sup>: Եթե աշխատակիցը գործել է՝ ելնելով միայն իր կամ երրորդ անձանց շահերից, ընկերությունը պատասխանատվություն չի կրում: Եթե աշխատակիցը գործել է՝ ելնելով իր և իրավաբանական անձի շահերից, ընկերությունը ենթարկվում է քրեական պատասխանատվության: Օրենքը սահմանում է, թե որն է իրավաբանական անձի շահը: Իրավաբանական անձի շահ են համարվում գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտներ ստանալը, այդ թվում եկամուտներն ավելացնելը, ծախսերը կամ կորուստները նվազեցնելը, իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից ազատվելը, իրավունքներ ձեռք բերելը կամ պարտականություններից ազատվելը: Իրավաբանական անձի շահ կարող են լինել, օրինակ, մրցակիցներին վերացնելը, շուկան գրավելը, մենաշնորհ սահմանելը, հարկեր վճարելուց խուսափելը, շահույթ ստանալը և այլն: Ինչպես արդեն նշել ենք, այն դեպքում, երբ անձը գործում է զուտ իր շահերից ելնելով, ապա իրավաբանական անձը պատասխանատվության չի ենթարկվում:

Երկրորդ կետը նախատեսում է կազմակերպական մոդելը, ըստ որի՝ իրավաբանական անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության, եթե իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից հանցանքի կատարմանը: Փաստորեն իրավաբանական անձի քաղաքականությունը, նրա կողմից պատշաճ հսկողություն, օրինակ՝ ներքին աուդիտ չիրականացնելը նպաստում է դրա աշխատակիցների կողմից հանցանքի կատարմանը: Դա կարող է կատարվել ոչ միայն իրավաբանական անձի, այլև դրա ներկայացուցիչների շահերից ելնելով:

Երրորդ կետը, փաստորեն նույնպես նախատեսում է կազմակերպական մոդելը: Ըստ դրա՝ հանցանքը համարվում է իրավաբանական անձի կողմից կատարված, եթե հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով): Փաստորեն, այս դեպքում նույնպես իրավաբանական անձի քաղաքականությունը, նրա կողմից պատշաճ հսկողություն չիրականացնելը, անկարգապահությունը, ամենաթողությունը, նպաստում են իրավաբանական անձի ներկայացուցիչների կողմից հանցանքի կատարմանը: Ընդ որում, դա,

---

<sup>93</sup> Cristina De Maglie, *Models of Corporate Criminal Liability in Comparative Law*, 4 Wash. U. Glob. Stud. L. Rev. 547 (2005), <http://digitalcommons.law.wustl.edu/globalstudies/vol4/iss3/4/>

ինչպես և երկրորդ դեպքում, կարող է կատարվել ոչ միայն իրավաբանական անձի, այլև դրա ներկայացուցիչների շահերից ելնելով:

Իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող է համարվում այն անձը, որը կանոնադրական կապիտալում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության ուժով իրավունք ունի իրավաբանական անձի համար տալու պարտադիր ցուցումներ կամ այլ ձևով ներգործելու իրավաբանական անձի գործունեության կամ կայացվող որոշումների վրա: Փաստորեն դրանք իրավաբանական անձի հիմնադիրներն են, նաև նրանք, որոնք մասնաբաժին ունեն իրավաբանական անձի մեջ:

Օրենքը նշում է նաև, որ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում իրավաբանական անձին նույն հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվության ենթարկելը, իսկ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հիմք չէ իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Օրենքը կարգավորում է նաև իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու և իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառելու հարցերը:

Այսպես՝ իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից օրենսգրքի 12-րդ գլխով սահմանված հիմքերով՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու, գործուն գոջալու, վաղեմության ժամկետն անցնելու, տուժողի հետ հաշտվելու հիմքերով, որքանով դրանք կիրառելի են իրավաբանական անձի համար: Կարծում ենք, որ այս հիմքերն իրավաբանական անձի համար միշտ էլ կիրառելի են: Իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից նաև այն դեպքում, երբ վերացել են հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, հատուցել է պատճառած վնասը և հարթել է ենթադրյալ հանցագործության այլ հետևանքները, վերադարձրել է հանցանքի կատարման արդյունքում ձեռք բերված գույքը, այդ թվում՝ եկամուտները:

Իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից նաև օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Օրինակ՝ Հատուկ մասում մի շարք խրախուսական նորմեր են սահմանվում որոշ հանցանքների կատարումից դրական վարքագիծ դրսևորելու համար: Ընդ որում, իրավաբանական անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից նշված հիմքերի առկայության դեպքում:

Իրավաբանական անձի պատասխանատվությունը բացառվում է այն դեպքում, երբ իրավաբանական անձի մասնակիցները, փայատերերը կամ բաժնետերերը ձեռնարկել են ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ վերը նշված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

## Գլուխ 21

### ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ

#### ԿԻՐԱՌՎՈՂ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Նախատեսվում է իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների համակարգը: Նախատեսված են հետևյալ միջոցները՝ 1. տուգանքը, 2. գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը, 3. հարկադիր լուծարումը, 4. ՀՀ տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը:

Եվրոպական Միության օրենսդրությունը տարբեր գործիքների միջոցով ապահովում է իրավաբանական անձանց նկատմամբ պատժամիջոցների կիրառման հնարավորություններ՝ հասարակության դեմ գործողություններ իրականացնելու համար: Այս օրենքները սահմանում են պետությունների՝ իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ միջոցներ կիրառելու համար անհրաժեշտ միջոցառումների համակարգ ներդնելու և այդ գործողությունների ցանկը սահմանելու պարտավորությունը<sup>94</sup>: Օրինակ, 1997թ. հունիսի 19-ի Եվրոպական համայնքների ֆինանսական շահերի պաշտպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը սահմանում է քրեական պատիժներ և այլ ֆինանսական պատժամիջոցներ և միջոցներ, որոնք պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ<sup>95</sup>: Այլընտրանքային ֆինանսական պատժամիջոցները կարող են ներառել պետական նպաստներից և օգնության իրավունքից զրկելը, առևտրային գործունեություն իրականացնելու ժամանակավոր կամ հիմնական արգելքը, դատական հսկողության տակ դնելը, դատարանի որոշումն ընկերությունը լուծարելու մասին, հանցագործության գործիքների և հանցավոր եկամուտների վերացումը կամ այն գույքի առգրավումը, որի արժեքը համապատասխանում է ձեռքբերված եկամուտներին:

ԵՄ նախարարների կոմիտեի 1988թ. հոկտեմբերի 20-ի թիվ 88 (18) առաջարկություններում ներկայացվում է պատժամիջոցների մի ընդարձակ ցանկ, որոնք պետք է կիրառվեն անդամ պետությունների կողմից ընկերությունների նկատմամբ: Հատուկ ուշադրություն է հատկացվել հանցագործությունների հետագա կանխարգելմանը<sup>96</sup>: Առաջարկությունները ներառում են հետևյալ պատիժները և

<sup>94</sup> Lukas Bohuslav, On Selected Aspects of Criminal Liability of Legal Entities in the Legal System of Various European Countries, Charles University in Prague, Law Faculty, [www.Magnanimitas.cz/ADALTA/0101/papers/bohuslav.pdf](http://www.Magnanimitas.cz/ADALTA/0101/papers/bohuslav.pdf) /Լուկաս Բոհուսլավ, Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը տարբեր եվրոպական երկրների համակարգերում, Պրահայի համալսարան, Իրավաբանական ֆակուլտետ, [www.Magnanimitas.cz/ADALTA/0101/papers/bohuslav.pdf](http://www.Magnanimitas.cz/ADALTA/0101/papers/bohuslav.pdf) / էջ 212:

<sup>95</sup> Տե՛ս նույն տեղում

<sup>96</sup> <http://eur-lex.europa.eu>

միջոցները՝ զգուշացում, նկատողություն, հանձնարարություն, պատասխանատվության մասին դեկլարատիվ որոշում՝ առանց պատժի, տույժ կամ պատժի այլ դրամական պատժամիջոց, գույքի առգրավում, որն օգտագործվել է հանցագործության կատարման ժամանակ կամ հանդիսանում է ապօրինի գործունեությունից ստացված ձեռքբերում, կոնկրետ գործողությունների պրոբացիա, մասնավորապես՝ պետական մարմինների հետ բիզնես գործունեություն իրականացնելու արգելք, հարկաբյուջետային արտոնություններից և սուբսիդիաներից զրկում, ապրանքների և ծառայությունների գովազդի արգելք, լիցենզիաների չեղյալ համարում, կառավարիչների հեռացում, դատական համակարգի կողմից ժամանակավոր պատասխանատուի նշանակում, ընկերության փակում, ընկերության լուծարում, փոխհատուցում գոհերին և/կամ նրանց հատուցում, նախորդ վիճակի վերականգնում, պատիժ կամ այլ միջոց սահմանող որոշման հրապարակում:

Պետք է նշել, որ որոշ դեպքերում քրեական նոր օրենսգիրքը համահունչ է ԵԽ նախարարների կոմիտեի 1988թ. հոկտեմբերի 20-ի թիվ 88 (18) առաջարկություններին, որոշ քրեաիրավական ներգործության միջոցներ առկա են քրեական օրենսգրքի այլ մասերում կամ այլ օրենսգրքերում, օրինակ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածում, որը նախատեսում է հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավում (նշանակություն չունի, թե ով է հանցանք կատարողը՝ իրավաբանական թե ֆիզիկական անձը): Սակայն պետք է նշել, որ որոշ պատժամիջոցներ տեղ չեն գտել ՀՀ քրեական օրենսգրքում: Այսպիսով՝ նախատեսված են չորս տեսակի քրեաիրավական ներգործության միջոցներ:

Առաջինը տուգանքն է: Համաձայն օրենքի՝ տուգանքի չափը և այն նշանակելու հնարավորությունը դատարանը որոշում է՝ հաշվի առնելով հանցագործության ծանրությունը, հանցագործությամբ ստացված գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտները, իրավաբանական անձի գույքային դրությունը, իրավաբանական անձի՝ եկամուտ ստանալու հնարավորությունը, կամ նրան պատկանող այնպիսի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել: Տուգանքի չափը պետք է համաչափ լինի հանցագործության ծանրությանը և չի կարող գերազանցել հանցանքն ավարտելուն նախորդած 1 տարվա ընթացքում իրավաբանական անձի համախառն եկամտի 20 տոկոսը:

Տուգանքի չափը չի կարող այնպիսին լինել, որն ուղղակիորեն կհանգեցնի իրավաբանական անձի սնանկացման կամ լուծարման:

Եթե իրավաբանական անձն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում՝ առավելագույնը 3 տարի, կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Եթե տուգանքը նշանակելուց հետո իրավաբանական անձի նյութական վիճակի վատթարացման հետևանքով նա զրկվում է տուգանքը վճարելու

հնարավորությունից, ապա դատարանը իրավաբանական անձի միջնորդության հիման վրա կարող է երկարաձգել տուգանքի վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը 3 տարով:

Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում դատարանը բռնագանձում է տուգանքի չափին համարժեք գույք՝ դրա առկայության դեպքում: Բռնագանձման ենթակա գույքի բացակայության դեպքում դատարանը տուգանքը փոխարինում է գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցմամբ՝ քրեական օրենսգրքի 129-րդ հոդվածով նախատեսված ժամկետներով:

Տուգանքի կիրառմամբ պետական բյուջեում գոյացած միջոցների հաշվին յուրաքանչյուր տարի պետության կողմից կարող են իրականացվել հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցմանն ուղղված սոցիալական ծրագրեր: Հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման սկզբունքները, առաջնահերթությունները, փոխհատուցման կարգը և չափը սահմանում է կառավարությունը:

Հաջորդը՝ գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումն է:

Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական, կամ այլ գործունեության որոշակի տեսակով կամ մի քանի տեսակներով զբաղվելու արգելքն է՝ 2 ամսից մինչև 2 տարի ժամկետով:

Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը նշանակվում է գործունեության այն տեսակի համար, որի իրականացման ընթացքում կատարվել է հանցանքը, կամ որի իրականացման հետ կապված է եղել հանցագործությունը: Եթե հանցագործությունը կապված է եղել գործունեության մի քանի տեսակների հետ, ապա դատարանը ժամանակավոր դադարեցնում է գործունեության այն տեսակով զբաղվելու իրավունքը, որն անմիջականորեն կապված է եղել հանցանքի կատարման հետ:

Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը նշանակվում է, եթե դա ուղղակիորեն չի հանգեցնի իրավաբանական անձի սնանկացման:

Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումից խուսափելու դեպքում այն փոխարինվում է հարկադիր լուծարմամբ:

Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը չի կարող նշանակվել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի նկատմամբ, ինչպես նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը դադարեցնելու

համար Սահմանադրությամբ կամ այլ իրավական ակտերով հատուկ կարգ է սահմանված:

Հաջորդը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքն է:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը կարող է նշանակվել միայն օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք իրենց գործունեությունն են իրականացնում Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը կարող է նշանակվել միայն ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար:

Հաջորդը՝ հարկադիր լուծարումն է: Հարկադիր լուծարումը բացառիկ քրեաիրավական ներգործության միջոց է, որն իրավաբանական անձի նկատմամբ նշանակվում է առանձնապես ծանր հանցանքի համար՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ու պատճառված վնասի բնույթն ու չափը, դատվածության առկայությունը, հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, որոնք վկայում են տվյալ իրավաբանական անձի հետագա գործունեությունը շարունակելու անթույլատրելիության մասին:

Հարկադիր լուծարումը չի կարող նշանակվել օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձի, հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի նկատմամբ, ինչպես նաև այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը դադարեցնելու համար Սահմանադրությամբ կամ այլ իրավական ակտերով հատուկ կարգ է սահմանված:

Օրենքը նախատեսում է նաև իրավաբանական անձի դատվածության ինստիտուտը:

Իրավաբանական անձի դատվածությունը մարվում է՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 1 տարի հետո, միջին ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 2 տարի հետո, ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 3 տարի հետո, առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում, եթե չի նշանակվել հարկադիր լուծարում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելք՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 5 տարի հետո:

Դատվածության մարման ժամկետի ընթացքում քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով նոր հանցանք կատարելու դեպքում դատվածության մարման ժամկետն ընդհատվում է և սկսվում է հաշվվել նոր հանցագործության համար նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց հետո:



## ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

### Գլուխ 22

#### ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված քրեական նոր օրենսգրքի Հատուկ մասը սկսվում է «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» բաժնով՝ դրանով ևս մեկ անգամ ընդգծելով այս հանցագործությունների վտանգավորությունը և դրանց դեմ քրեական արդարադատության ամենախիստ դրսևորումներով պայքար մղելու անհրաժեշտությունը: Քրեական նախկին օրենսգրքում այս բաժինը ևս նախատեսված էր, սակայն այն ոչ միայն եզրափակում էր քրեական օրենսգրքում տեղ գտած հանցագործությունների շրջանակը (բաժին 13, գլուխ 33), այլև բովանդակային ընդգրկման առումով ավելի նեղ էր, առավել ընդհանրական: Քրեական նոր օրենսգրքում հնարավորինս մանրամասն կանոնակարգում են ստացել խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, ինչպես նաև հստակեցվել են այս հանցագործությունների հատկանիշները, դրանց համար քրեական պատասխանատվության ենթարկելու պայմանները:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքի համաձայն՝ քննարկվող հանցագործությունների սուբյեկտ կարող է հանդիսանալ ինչպես 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը, այնպես էլ իրավաբանական անձը: 14 տարին բոլորած, սակայն 16 տարեկան չդարձած անձը քննարկվող հանցագործությունների սուբյեկտ չէ, սակայն կարող է պատասխանատվության ենթարկվել քննարկվող հանցագործությունների օբյեկտիվ կողմի հատկանիշ հանդիսացող այն արարքների կատարման կամ դրանց հանցակցելու համար, որոնց համար քրեական պատասխանատվություն է սահմանված 14 տարեկանից, օրինակ՝ անձին սպանելու կամ նրա առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ բռնաբարության կամ մարդուն առևանգելու համար և այլն:

Առանձին դեպքերում քննարկվող հանցագործությունները օբյեկտիվորեն կարող են կատարվել միայն հատուկ սուբյեկտի կողմից: Օրինակ՝ ագրեսիայի սուբյեկտ կարող է լինել պետության քաղաքական կամ ռազմական գործողությունները փաստացի ղեկավարող կամ վերահսկող կամ ուղղորդող անձը:

ՀՀ քրեական նոր օրենսգրքում խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հատկանիշները հիմնականում պահպանվել են, պարզապես կան հանցակազմեր, որոնք մեկ հոդվածի փոխարեն տեղ են գտել մի քանի հոդվածներում: Խոսքը պատերազմական հանցագործությունների մասին է, որոնց

շարքում առանձնացվում են հովանավորվող անձի դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները, սեփականության կամ այլ իրավունքների դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները, մարդասիրական օգնության ցուցաբերման կամ այլ տարբերանշանների դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները, պատերազմ վարելու արգելված եղանակների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները, պատերազմ վարելու արգելված միջոցների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս **ցեղասպանության** հանցակազմը պահպանվել է: ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ցեղասպանության համար, այն է՝ «Ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս կամ հոգեկան լուրջ խեղում պատճառելը կամ այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանն ուղղված կյանքի պայմաններ ստեղծելը, այդ թվում՝ բռնությամբ տեղահանելը, այդ խմբում մանկածնությունը կանխելուն ուղղված միջոցներ իրականացնելը կամ այդ խմբի երեխաներին մարդկային այդ խմբից այլ խումբ հարկադրաբար փոխանցելը»:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած այս ձևակերպումը հիմնականում կրկնում է քրեական նախկին օրենսգրքում եղած ձևակերպումը, այն տարբերությամբ, որ ցեղասպանության օբյեկտիվ կողմի հատկանիշ է դիտում նաև ցեղասպանության թիրախ հանդիսացող խմբի անդամներին հոգեկան լուրջ խեղում պատճառելը: Միաժամանակ, եթե քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպման մեջ օգտագործվում էր «այդ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելը», ապա քրեական նոր օրենսգրքում՝ «այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանն ուղղված կյանքի պայմաններ ստեղծելը» արտահայտությունը: Օրենսդիրը հստակեցնում է, թե ինչ է հասկանում նման պայմանների տակ՝ մատնանշելով, օրինակ՝ բռնությամբ տեղահանելը, մանկածնությանը խոչընդոտելը: Հանցանքն ավարտված դիտելու համար բավական է թվարկված արարքներից որևէ մեկի կատարումը: Ընդ որում, պարտադիր չէ, որ հանցավորը հասնի նշված խմբերի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակին. հանցակազմն առկա է, երբ այդ նպատակով նշված արարքներից որևէ մեկը կատարվել է:

Հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և հատուկ նպատակով՝ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացումը:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հանցակազմերից է **ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրելը**: Օրենսդիրը սահմանել է

պատասխանատվություն ցեղասպանություն ուղղակի և հրապարակային հրահրելու համար, ինչը ենթադրում է, որ արարքը պետք է կատարվի միմիայն դիտավորությամբ:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են դիտվում ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրելը, որը կատարվել է՝

1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կամ

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Այս հանցակազմի առավել ծանրացնող հանգամանքներ են դիտվում՝ նույն արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Հիմնվելով միջազգային քրեական դատարանի կանոնադրության՝ Հռոմի կանոնադրության<sup>97</sup> և Ժնևյան կոնվենցիաների<sup>98</sup> պահանջների վրա, քրեական նոր օրենսգրքում առավել մանրամասն կարգավորման են ենթարկվել **մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները**, որոնք քրեական նախկին օրենսգրքում անվանվում էին մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ: Այս հանցակազմի առանձնահատկությունն այն է, որ պատասխանատվություն է սահմանել քաղաքացիական անձանց դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակման շրջանակներում հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելու համար՝

1) սպանություն,

2) բնաջնջում,

3) ստրկացում,

4) բնակչության բնագաղթ կամ բռնի տեղահանում,

5) ազատությունից զրկել՝ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի խախտմամբ,

6) խոշտանգում,

7) սեքսուալ բնույթի բռնի գործողություն, սեքսուալ ստրկացում, պոռնկության հարկադրում, հարկադրական հղիացում կամ ամլացում կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրում,

8) նույնականացվող ցանկացած խմբի կամ հանրույթի հետապնդում՝ պայմանավորված քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկ, մշակութային, կրոնական կամ սեռային պատկանելությամբ կամ միջազգային իրավունքով

<sup>97</sup> Տե՛ս, Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտ, 17.07.1998:

<sup>98</sup> Տե՛ս, Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիա, 12.08.1949,

համընդհանրորեն անընդունելի ճանաչված այլ հիմքով,

9) մարդկանց բռնի անհետացում,

10) ապարտեիդ,

11) համարժեք այլ անմարդկային արարք, որը պատճառել է մարդու առողջությանը ծանր վնաս կամ ուժեղ տառապանք:

Օրենսդիրը հենց հողվածում բացահայտում է հանցակազմի ձևակերպման ժամանակ օգտագործված հասկացությունների բովանդակությունը՝ բացատրելով, թե ինչ պետք է հասկանալ բնաջնջել, հարձակում և այլ հասկացությունների ներքո:

Ինչպես և մի շարք եվրոպական երկրներում, օրինակ՝ Շվեյցարիայում, Գերմանիայում<sup>99</sup>, այնպես էլ ՀՀ-ում պատասխանատվություն է սահմանվում **ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելու, արդարացնելու, դրանք քարոզելու կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելու համար**, եթե դա կատարվել է ռասայական պատկանելության, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկ ծագման կամ կրոնական պատկանելության հիման վրա՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն հրահրելու նպատակով: Քննարկվող հանցագործության դրսևորման լավագույն օրինակներից է Փերինչեկն ընդդեմ Շվեյցարիայի ՄԻԵԴ գործը<sup>100</sup>: Այս հանցակազմի կիրառման հիմնական խնդիրը վերաբերում է նրան, թե ինչպես է այն հարաբերակցվում ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքի հետ:

Հանցանքի ծանրացնող հանգամանքներով տեսակներն են՝ արարքը, որը կատարվել է՝

1) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում խմբավորվել են **պատերազմական հանցագործությունները**: Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է նախատեսել միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքով հովանավորվող անձի կամ միջազգային իրավունքով պաշտպանությունից օգտվող այլ անձի հանդեպ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից

<sup>99</sup> St 'u, Criminal Code of Germany, 01.01.1972; Criminal Code of Switzerland, 01.01.1942:

<sup>100</sup> Stu, Perincek vs Switzerland, 15.10.2015.

որն է մեկը կատարելու համար՝

1) առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելը,

2) առանց անձի նկատմամբ արդար դատաքննության իրականացման՝ պատիժ նշանակելը կամ կատարելը կամ

3) պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը:

Նաև պատասխանատվություն է սահմանվում նշված անձանց նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որն է մեկը կատարելու համար՝

1) սպանությունը,

2) խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը, ապօրինաբար բժշկական, կենսաբանական, գիտական կամ այլ փորձի ենթարկելը, մարմնի մաս կամ հյուսվածք հեռացնելը կամ նրանց նկատմամբ փոխպատվաստման վիրահատություն իրականացնելը,

3) մարդու առողջությանը ծանր վնաս կամ ուժեղ տառապանք պատճառելը կամ անձի առողջական վիճակից ելնելով անձին բժշկական օգնություն տրամադրելու անհրաժեշտությամբ չպայմանավորված՝ բժշկական կամ այլ միջամտության արդյունքով ֆիզիկական խեղում պատճառելը,

4) սեքսուալ բնույթի բռնի գործողությունը, սեքսուալ ստրկացումը, պոռնկության հարկադրումը, հարկադրական հղիացումը կամ ամլացումը կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրումը,

5) ստրկացնելը,

6) պատանդ վերցնելը կամ պահելը,

7) երեխաներին զինված ուժեր զինվորական ծառայության գորակոչելը կամ հավաքագրելը կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը կամ

8) անօրինական բռնագաղթը, տեղափոխումը, բռնի անհետացումը կամ այլ ձևով ազատությունից զրկելը:

Ինքնուրույն պատասխանատվություն է սահմանված միջազգային զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կամ պատերազմ վարելու օրենքների կամ սովորույթների այլ լուրջ խախտում համարվող հետևյալ արարքներից որն է մեկը կատարելու համար՝

1) քննարկվող հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց հակառակորդ պետության զինված ուժերում ծառայելուն հարկադրելը կամ

2) ռազմական գործողություններն ավարտելուց հետո ռազմագերու կամ քաղաքացիական անձի հայրենադարձությունը խոչընդոտելը կամ չհիմնավորված

ձգձգելը:

Հիմնվելով Ժնևյան կոնվենցիաների վրա՝ օրենսդիրը տալիս է նաև հովանավորվող անձի հասկացությունը՝

1) միջազգային զինված ընդհարման առնչությամբ 1949 թվականի Ժնևի կոնվենցիաներով կամ Առաջին լրացուցիչ արձանագրությամբ հովանավորվող անձինք, մասնավորապես վիրավորները, հիվանդները, նավաբեկյալները, ռազմագերիները և քաղաքացիական անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով զինված ընդհարման ժամանակ միջազգային պաշտպանությունից օգտվող այլ անձինք,

2) միջազգային բնույթ չկրող ընդհարման առնչությամբ վիրավորները, հիվանդները, նավաբեկյալները կամ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող անձինք, որոնք գտնվում են հակառակորդի վերահսկողության ներքո,

3) հակառակորդի զինված ուժերի անդամները կամ կոմբատանտները, որոնք վայր են դրել զենքը կամ զրկված են պաշտպանության որևէ հնարավորությունից:

Քրեական նոր օրենսգրքի նորամուծություններից է պատերազմական հանցագործությունների այն դրսևորումների հստակեցումը, որոնք վերաբերում են միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ հակառակորդի գույքն ապօրինի, կամայական, խոշոր չափերով ոչնչացնելուն կամ վստահված գույքը հափշտակելուն, որը պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ, կամ միջազգային զինված ընդհարման ժամանակ դատարանում հակառակորդ կողմի քաղաքացիների իրավունքները կամ հայցերը չեղարկված, կասեցված կամ անընդունելի հայտարարելուն:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, այնպես էլ քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) մարդասիրական օգնության ցուցաբերման աշխատանքներում կամ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան խաղաղության պահպանման առաքելությունում ներգրավված անձնակազմի, օբյեկտների, նյութերի, ստորաբաժանումների կամ փոխադրամիջոցների վրա հարձակվելու համար, քանի դեռ նրանք (դրանք) օգտվում են միջազգային մարդասիրական իրավունքով քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական օբյեկտներին տրամադրվող պաշտպանության իրավունքից կամ

2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով պաշտպանություն նախատեսող, տարբերանշաններ կրող շենքերի, նյութերի, բժշկական հաստատությունների, փոխադրամիջոցների կամ դրանց անձնակազմի վրա հարձակվելու համար, միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող

զինված ընդհարման ժամանակ Կարմիր խաչի, Կարմիր մահիկի կամ Կարմիր բյուրեղի տարբերանշանները, բանագնացի դրոշը կամ հակառակորդ կամ չեզոք պետության զինված ուժերի դրոշը, համազգեստը կամ պետական տարբերանշանները կամ պետական դրոշը կամ Միավորված ազգերի կազմակերպության համազգեստը, զինվորական տարբերանշանները, դրոշը կամ մշակութային արժեքների պաշտպանության համար նախատեսված տարբերանշանները կամ միջազգային իրավունքով պահպանվող այլ տարբերանշաններն ապօրինի օգտագործելու համար: Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում այդ արարքների համար, որոնք անզուգուշությամբ առաջացրել են մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում:

Հանցագործության *սուբյեկտիվ կողմը* բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:

Առավել հստակեցվել են նաև պատերազմ վարելու արգելված եղանակների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները, այն է՝

❖ միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) քաղաքացիական բնակչության կամ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող առանձին քաղաքացիական անձանց կամ ռազմական գործողություններին անմիջական մասնակցությունը հանցավորի համար ակնհայտորեն դադարեցրած անձի վրա հարձակումը,

2) քաղաքացիական օբյեկտների, այդ թվում՝ կրոնական, կրթության, արվեստի, գիտության կամ բարեգործության նպատակների համար նախատեսված շենքերի, պատմական հուշարձանների, բժշկական հաստատությունների, հիվանդների կամ վիրավորների կենտրոնացման վայրերի կամ չպաշտպանվող տարածքների կամ ապառազմականացված գոտիների կամ չպաշտպանվող կամ ռազմական օբյեկտ չհանդիսացող այլ բնակավայրերի կամ շենքերի կամ շինությունների վրա հարձակումը,

3) հարձակումը, եթե ակնհայտ է, որ այն կհանգեցնի քաղաքացիական անձանց պատահական մահվան կամ խեղման կամ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին կամ լայնածավալ, երկարաժամկետ և լուրջ վնաս կպատճառի շրջակա միջավայրին, եթե այդպիսի վնասներ պատճառելը ակնհայտորեն անհամաչափ է կոնկրետ կամ անմիջականորեն ակնկալվող ընդհանուր ռազմական առավելության համեմատությամբ, կամ

4) վտանգավոր ուժեր պարունակող կառույցների և սարքերի վրա հարձակվելը, եթե ակնհայտ է, որ այդպիսի հարձակումը կհանգեցնի չափազանց մեծ կորուստների կամ վիրավորումների քաղաքացիական անձանց շրջանում կամ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին կամ շրջակա միջավայրին, եթե այդպիսի վնասներ պատճառելը ակնհայտորեն անհամաչափ է կոնկրետ կամ անմիջականորեն ակնկալվող

ընդհանուր ռազմական առավելության համեմատությամբ,

❖ միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) քաղաքացիական բնակչությանը սովի մատնելը՝ իբրև պատերազմ վարելու եղանակ, նրանց զրկելով գոյատևելու համար անհրաժեշտ միջոցներից, ներառյալ վերաբերելի միջազգային փաստաթղթերով նախատեսված օգնություն տրամադրելուն խոչընդոտելը,

2) ոչ ոքի կենդանի չթողնելու հրաման տալը կամ նման հրամանով սպառնալը,

3) օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մասում նշված հովանավորվող անձանց ներկայության օգտագործումը՝ որոշակի վայրեր, տարածքներ կամ զինված ուժեր ռազմական գործողություններից անձեռնմխելի դարձնելու համար,

4) բռնազավթող պետության կողմից իր սեփական քաղաքացիական բնակչության մի մասի վերաբնակեցումը բռնազավթված տարածքում կամ բռնազավթած տարածքի ամբողջ բնակչության կամ դրա մի մասի տեղահանումը կամ տեղափոխումը բռնազավթված տարածքի սահմաններում կամ դրանից դուրս,

5) հատուկ պաշտպանության տակ գտնվող, հստակ տարրոշված, ժողովուրդների մշակութային կամ հոգևոր ժառանգություն համարվող պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը կամ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային այլ արժեքներ հարձակման օբյեկտ դարձնելը և հարձակման հետևանքով դրանց խոշոր չափի վնաս պատճառելը, եթե դրանք չեն գտնվում ռազմական օբյեկտների անմիջական հարևանությամբ, և եթե տվյալներ չկան այդ պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը կամ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային այլ արժեքները հակառակորդի կողմից ռազմական գործողություններին նպաստելու համար օգտագործելու մասին, կամ

6) ավելորդ վնասվածք առաջացնող կամ ավելորդ տառապանք պատճառող կամ իրենց բնույթով ոչ ընտրական համարվող պատերազմ վարելու եղանակների կիրառումը՝ ի խախտումն զինված ընդհարումների միջազգային իրավունքի, պայմանով, որ այդպիսի եղանակները համապարփակ արգելքի առարկա են:

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում այդ արարքների համար, որոնք անզուրույթությամբ առաջացրել են մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում, սահմանված է պատասխանատվություն նաև միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ հակառակորդ պետության զինված ուժերի անդամի կամ հակառակորդի կոմբատանտի ուխտադրուժ սպանության կամ վիրավորման համար:



Հստակեցվել են նաև, թե որ միջոցների գործադրումն է դիտվում պատերազմական հանցագործություն, այն է՝ միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) թույնի կամ թունավոր զենքի կիրառումը,

2) հեղձուցիչ, թունավոր կամ այլ գազերի կամ նմանատիպ այլ հեղուկների, նյութերի կամ միջոցների կիրառումը,

3) մարդու մարմնում հեշտ պայթող կամ սեղմվող փամփուշտների կիրառումը, այդ թվում՝ պատյանային փամփուշտների կիրառումը, որոնց կոշտ պատյանը չի ծածկում ամբողջ միջուկը, կամ որոնք կտրվածքներ ունեն, կամ

4) ավելորդ վնասվածք առաջացնող կամ ավելորդ տառապանք պատճառող կամ իրենց բնույթով ոչ ընտրական համարվող զենքի, ռազմամթերքի կամ սարքի կիրառումը՝ ի խախտումն զինված ընդհարումների միջազգային իրավունքի, պայմանով, որ այդպիսի զենքը, ռազմամթերքը կամ սարքը համապարփակ արգելքի առարկա է:

Առավել խիստ պատասխանատվություն է ծագում, եթե այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, այնպես էլ քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում **դիակապտության**՝ մարտադաշտում սպանվածների կամ վիրավորվածների իրերը հափշտակելու համար:

Նախ, հարկ է նշել, որ այս հանցակազմը նախկինում դիտվում էր որպես զինվորական հանցագործություն, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում դիտվում է որպես խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցավոր արարք:

Բացի այդ, ընդլայնվել է հանցակազմի բովանդակությունը. քրեական նախկին օրենսգրքով պատասխանատվություն էր սահմանվում մարտադաշտում սպանվածների կամ վիրավորների մոտ գտնվող իրերը հափշտակելու համար, մինչդեռ նոր կարգավորմամբ պարտադիր չէ, որ այդ իրերը գտնվեն սպանվածների կամ վիրավորների մոտ:

Օրենսգրքի նորամուծություններից է այն, որ քրեական պատասխանատվություն է սահմանվել մարտադաշտում սպանվածների դիակները խեղելու, անդամահատելու կամ այլ եղանակով անարգելու համար:

Առավել խիստ է պատասխանատվությունը, եթե դա կատարվել է զինվորական ծառայություն կրող անձի կողմից կամ զուգորդվել է սպանվածների դիակների խեղման, անդամահատման կամ այլ եղանակով անարգման ընթացքի լուսանկարահանմամբ կամ տեսանկարահանմամբ:

Հանցագործության **սուբյեկտ** կարող է լինել 16 տարին լրացած ֆիզիկական

մեղսունակ անձը: Հանցագործության *սուբյեկտիվ կողմը* բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:

Ինչպես և ՀՀ նախկին քրեական օրենսգրքում, այնպես էլ ՀՀ նոր քրեական օրենսգրքում պատասխանատվություն է սահմանված միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային արժեքներ ոչնչացնելու, վնասելու, հափշտակելու, դրանց գտնվելու վայրից դրանք ապօրինաբար տեղափոխելու, այդ թվում՝ մի պետության տարածքից մյուսը, կամ ապօրինաբար տեղափոխված մշակութային արժեքները չվերադարձնելու համար, իսկ նորամուծություն է այն, որ պատասխանատվություն է սահմանվել պատմական, մշակութային կամ գիտական ապացույցը ոչնչացնելու կամ թաքցնելու նպատակով մշակութային արժեքները կամ դրանց նպատակային նշանակությունը փոփոխելու համար:

Հանցագործության *սուբյեկտ* կարող է լինել 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը: ՀՀ նոր քրեական օրենսգրքով այս հանցանքի կատարման համար պատասխանատվության կարող է ենթարկվել նաև իրավաբանական անձը:

Պատասխանատվություն է սահմանված նաև օկուպացված տարածքում կամ պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային արժեքների պաշտպանության կանոնները խախտելու համար, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 139-րդ, 140-րդ կամ 144-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները:

ՀՀ քրեական նոր օրենսգրքը առանձին պատասխանատվություն է սահմանում ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական թշնամանք հարուցելու նպատակով մշակութային արժեքներ, այդ թվում՝ կրոնական կամ ծիսական նշանակության շենքեր կամ շինություններ ոչնչացնելու կամ վնասելու համար:

*Վարձկանության* հանցակազմը սահմանվել է որպես վարձկան հավաքագրելը, վարձկանների ուսուցման ճամբար կազմակերպելը, որպես վարձկան հանդես գալու հմտություններ սովորեցնելը կամ սովորելը, վարձկանության ֆինանսավորումը, զինված ընդհարման կամ ռազմական գործողությունների ժամանակ վարձկան օգտագործելը կամ զինված ընդհարմանը կամ ռազմական գործողությանը կամ բռնության համաձայնեցված արարքին որպես վարձկան մասնակցելը:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած այս ձևակերպումը որոշակիորեն տարբերվում է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած մոտեցումից. օրենսդիրը բացահայտել է «ուսուցանել» հասկացությունը՝ մատնանշելով, որ դա կարող է կատարվել վարձկանների ուսուցման ճամբար կազմակերպելով, որպես վարձկան

հանդես գալու հմտություններ սովորեցնելով:

Միաժամանակ, քրեական նոր օրենսգրքով պատժելի է համարվում ոչ միայն վարձկաններին ուսուցանելը, այլև որպես վարձկան հանդես գալու հմտություններ սովորելը:

Փոփոխության են ենթարկվել քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակները՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) անչափահասին ներգրավելով:

Օրենսդիրը հստակեցրել է նաև վարձկանի հասկացությունը՝ ցանկացած անձ, որը Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հատուկ հավաքագրվել է զինված հակամարտությունում կռվելու նպատակով կամ փաստացի մասնակցում է ռազմական գործողություններին՝ ղեկավարվելով անձնական շահ ստանալու ցանկությամբ, որին հակամարտող կողմերից որևէ մեկի կողմից կամ անունից նյութական վարձատրություն է խոստացվել, որը գերազանցում է այն վարձատրությունը, որը խոստացվում կամ վճարվում է տվյալ կողմի զինված ուժերի կազմի մեջ մտնող՝ նույն դասի մարտիկներին, չի հանդիսանում հակամարտող կողմերից որևէ մեկի քաղաքացի կամ այդ կողմերից որևէ մեկի վերահսկողության ներքո գտնվող տարածքի մշտական բնակիչ, չի մտնում հակամարտող կողմերից որևէ մեկի զինված ուժերի կազմի մեջ և չի ուղարկվել տվյալ հակամարտության կողմ չհանդիսացող պետության կողմից՝ որպես դրա զինված ուժերի կազմի մեջ մտնող անձ՝ պաշտոնական հանձնարարություններ կատարելու համար: Վարձկան է համարվում նաև ցանկացած անձ, որը որևէ այլ իրավիճակում Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հատուկ հավաքագրվել է բռնության համաձայնեցված արարքին մասնակցելու նպատակով, որն ուղղված է պետության կառավարության տապալմանը կամ սահմանադրական կարգը որևէ այլ կերպ խախտելուն կամ պետության տարածքային ամբողջականությունը խախտելուն, կամ փաստացի մասնակցում է դրան՝ ղեկավարվելով անձնական շահ ստանալու ցանկությամբ, որին խոստացվում կամ վճարվում է նյութական վարձատրություն, և որը չի հանդիսանում այն պետության քաղաքացի կամ մշտական բնակիչ, որի դեմ ուղղված է տվյալ գործողությունը, չի ուղարկվել պետության կողմից պաշտոնական հանձնարարություններ կատարելու համար և չի մտնում այն պետության զինված ուժերի կազմի մեջ, որի տարածքում նախաձեռնվում է տվյալ գործողությունը:

ՀՀ քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում Միջազգային

զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ ենթակայի կողմից քրեական օրենսգրքի 133-րդ, 135-րդ կամ 137-146-րդ հոդվածներով նախատեսված հանցանքի կատարման մասին պետի, հրամանատարի, վերադասի կամ պաշտոնատար անձի կողմից հանցավորի պատասխանատվությունը կամ հանցանքի քննությունը ապահովելու նպատակով իրավասու մարմիններին չտեղեկացնելու համար:

Նորամուծություն է այն, որ պատասխանատվություն է սահմանվում միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ պետի, հրամանատարի, վերադասի կամ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների սահմաններում բոլոր հնարավոր միջոցները չձեռնարկելու համար՝ ենթակայի կողմից քրեական օրենսգրքի 133-րդ, 135-րդ կամ 137-146-րդ հոդվածներով նախատեսված հանցանքի կատարումը կանխելու համար, եթե նա չի իմացել, սակայն պարտավոր էր իմանալ, որ իր ենթական կատարում կամ մտադրվում է կատարել նշված հանցանքներից որևէ մեկը, այդ թվում՝ եթե նա տիրապետել է այնպիսի տեղեկության, որի հիման վրա նա կարող էր կամ պարտավոր էր եզրակացնել ենթակայի կողմից հանցանքի կատարման կամ կատարման մտադրության մասին, կամ եթե իր իրավասության սահմաններում նա անփութության կամ հանցավոր ինքնավստահության հետևանքով չի ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ այդ հանցագործությունը խափանելու կամ կանխելու համար: Իմանալու պարագայում հանցակազմը ձևակերպված է հետևյալ կերպ. «Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ կամ օկուպացված տարածքում պետի, հրամանատարի, վերադասի կամ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների սահմաններում բոլոր հնարավոր միջոցները չձեռնարկելը՝ ենթակայի կողմից քրեական օրենսգրքի 133-րդ, 135-րդ կամ 137-146-րդ հոդվածներով նախատեսված հանցանքի կատարումը կանխելու համար, եթե նա իմացել է, որ իր ենթական կատարում կամ մտադրվում է կատարել նշված հանցանքներից որևէ մեկը, և եթե իր իրավասության սահմաններում նա չի ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ այդ հանցագործությունը խափանելու կամ կանխելու համար»:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում պահպանվել է ագրեսիայի հանցակազմը՝ պետության քաղաքական կամ ռազմական գործողությունները փաստացի դեկավարող կամ վերահսկող կամ ուղղորդող անձի կողմից ագրեսիա պլանավորելը, նախապատրաստելը, նախաձեռնելը կամ իրականացնելը:

Ագրեսիա է համարվում հետևյալ արարքներից որևէ մեկը, եթե այն իր բնույթով, լրջությամբ ու ծավալով ակնհայտորեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության կոպիտ խախտում է՝

1) պետության զինված ուժերի ներխուժումը կամ հարձակումը մեկ այլ պետության տարածքի վրա կամ այդպիսի ներխուժման կամ հարձակման արդյունքում այդ պետության տարածքի կամ դրա մասի օկուպացիան՝ անկախ դրա տևողությունից, ինչպես նաև ուժի գործադրմամբ այդ պետության տարածքի կամ դրա մի մասի անեքսիան,

2) պետության զինված ուժերի կողմից մեկ այլ պետության տարածքի ուրբակոծումը կամ այդ տարածքի դեմ որևէ զենքի օգտագործումը,

3) պետության զինված ուժերի կողմից մեկ այլ պետության նավահանգիստների կամ ափերի շրջափակումը,

4) պետության զինված ուժերի կողմից մեկ այլ պետության ցամաքային, ծովային կամ օդային զինված ուժերի վրա կամ ծովային կամ օդային նավատորմի վրա հարձակումը,

5) պետության կողմից մեկ այլ պետության տարածքում այդ պետության համաձայնությամբ գտնվող զինված ուժերը համաձայնության պայմաններին հակասող եղանակով օգտագործելը կամ այդպիսի համաձայնության դադարեցումից հետո դրանց ներկայությունը շարունակելը,

6) պետության կողմից թույլատրելի, որպեսզի իր տարածքը, որը վերջինս տրամադրել է մեկ այլ պետության, օգտագործվի այդ պետության կողմից երրորդ պետության դեմ ագրեսիա իրականացնելու համար,

7) պետության կողմից կամ անունից զինված խմբեր կամ խմբավորումներ, անկանոն զորամիավորումներ կամ վարձկաններ ուղարկելը, որոնք այլ պետության դեմ իրականացնում են ռազմական այնպիսի գործողություններ, որոնք իրենց լրջությամբ համարժեք են սույն հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերով նախատեսված արարքներին, կամ նման արարքներում այդ պետության էական ներգրավումը,

8) այլ արարքներ, որոնք ագրեսիա են համարվում միջազգային իրավունքի համաձայն:

Քրեական նոր օրենսգրքի նորամուծություններից է **համավարակի կամ մարդկության անվտանգությանն անմիջական սպառնալիքի իրավիճակի պայմաններում ագրեսիվ ռազմական գործողություններ նախաձեռնելը, իրականացնելը կամ դրանք չդադարեցնելը**: Այն բնութագրվում է որպես Միավորված ազգերի կազմակերպության կամ դրա մասնագիտացած կազմակերպության կողմից հայտարարված համավարակի կամ ողջ մարդկության անվտանգությանն անմիջական սպառնալիքի իրավիճակի պայմաններում պետության քաղաքական կամ ռազմական գործողությունները փաստացի ղեկավարող կամ վերահսկող կամ ուղղորդող անձի կողմից ագրեսիվ ռազմական գործողություններ նախաձեռնելը, իրականացնելը կամ

դրանք չդադարեցնելը:

Հանցագործության **սուբյեկտ** կարող է լինել 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը: ՀՀ նոր քրեական օրենսգրքով այս հանցանքի կատարման համար պատասխանատվության կարող է ենթարկվել նաև իրավաբանական անձը:

Հանցագործության **սուբյեկտիվ կողմը** բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ:

ՀՀ քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում նաև ագրեսիա նախաձեռնելու կամ դրան մասնակցելու ուղղակի և հրապարակային կոչի համար, ինչը նախատեսված էր նաև քրեական նախկին օրենսգրքով: Առավել խիստ պատասխանատվություն է նախատեսվում, եթե այդ արարքը կատարվել է հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների կամ զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքը, քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում միջազգային ահաբեկչության համար՝ միջազգային լարվածություն կամ պատերազմ հրահրելու կամ այլ պետության ներքին վիճակն ապակայունացնելու նպատակով այդ պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ դրա անունից հանդես եկող անձին առնանգելը, ազատությունից ապօրինի զրկելը, պատանդ վերցնելը կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելը կամ այդ պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչության տարածքում պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը: Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում նշված անձի սպանության համար:

Քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում քիմիական, կենսաբանական, միջուկային կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք կամ դրան համալրող որևէ բաղադրամաս, կամ դա ստեղծելու նպատակով՝ դրա կազմի մեջ մտնող նյութ կամ դրա տարածման կամ փոխադրման հատուկ սարք կամ միջոց ստեղծելու, արտադրելու, մշակելու, ձեռք բերելու, պահելու, կուտակելու, փոխադրելու կամ իրացնելու, կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենքի փոխադրման հատուկ միջոցներ օգտագործելու համար: Պատասխանատվություն է սահմանվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման կամ այլ զենք կամ դրա արտադրության համար անհրաժեշտ բաղադրամաս կամ դրանց նկատմամբ վերահսկողությունն այլ պետությանը, պետությունների խմբին, միջազգային կամ այլ կազմակերպությանը կամ խմբավորմանը կամ անձին տրամադրելու, միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման կամ

այլ զենք կամ միջոց ապօրինի փորձարկելու, միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման կամ այլ զենք կամ միջոց կիրառելու համար:

Ինչպես քրեական նախկին օրենսգիրքը, այնպես քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում էկոցիդի համար՝ բուսական կամ կենդանական աշխարհը զանգվածաբար ոչնչացնելով, մթնոլորտը, հողը, ընդերքը կամ ջրային պաշարները թունավորելով, աղտոտելով կամ այլ արարքով էկոլոգիական աղետ առաջացնելը, որը խիստ սահմանափակում կամ անհնարին է դարձնում այդ տարածքում մարդու բնակվելը:

## Գլուխ 23

### ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդու կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցների ձեռնարկումը պետության պոզիտիվ պարտականությունն է: Այդ միջոցներից է մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործությունների համար արդարացի և հիմնավորված քրեական պատասխանատվություն նախատեսելը: Դրա համար էլ քրեական նոր օրենսգրքում որոշ փոփոխությունների են ենթարկվել մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործությունները:

Սպանության հասկացությունից (155-րդ հոդվածի 1-ին մաս) հանվել է «դիտավորությամբ» բառը, որը ավելորդ էր: Օրենսգրքի 24-րդ հոդվածը կարգավորում է այդ հարցը: Օրենսգրքի 24-րդ հոդվածում ուղղակիորեն նշված է, որ անզգուշությամբ կատարված արարքը հանցանք է, եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասով դա նախատեսված է: Ակնհայտ է, որ եթե անզգուշության մասին նշում չկա, ապա հանցանքը համարվում է միայն դիտավորությամբ կատարված:

Փոփոխությունների են ենթարկվել սպանության ծանրացնող հանգամանքները (155-րդ հոդվածի 2-րդ մաս): Նախ՝ այլևս չկա «երկու կամ ավելի անձանց սպանություն» ծանրացնող հանգամանքը: Օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ յուրաքանչյուր մարդու կյանք առանձին արժեք է, և խմբով կյանքից զրկելու համար պատասխանատվություն նախատեսելը նսեմացնում է մարդու կյանքը որպես արժեք: Ուստի, նոր օրենսգրքի պայմաններում, անկախ նրանից, թե կյանքից զրկելու դիտավորությունը միասնական է, թե յուրաքանչյուր սպանության դիտավորություն առանձին է ծագել, արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ, եթե սպանվել է մեկից ավելի անձ: Ասվածի հետ կապված, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումը, համաձայն որի՝ երկու կամ ավելի անձի սպանությունը անկախ նրանից, թե կյանքից զրկելու դիտավորությունը միասնական է, թե յուրաքանչյուր սպանության դիտավորություն առանձին է ծագել, արարքը պետք է որակել որպես երկու կամ ավելի անձանց սպանություն ծանրացնող հանգամանքով, դառնում է ավելորդ<sup>101</sup>:

Վերացվել է «կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդում տվող անձի

<sup>101</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի որոշումը ԵԵԴ/0126/13/11 գործի վերաբերյալ, 24-րդ կետ:



սպանությունը», այլ կերպ ասած, ազդարարի սպանությունը ծանրացնող հանգամանքը: Կարծում ենք, որ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ «անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ծանրացնող հանգամանքով սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ»: Ազդարարի սպանությունը որպես ծանրացնող հանգամանք նախատեսելը, մեր կարծիքով, ավելորդություն էր, բացի այդ, ոչինչ չէր ասվում ազդարարի մերձավորների կամ մերձավոր ազգականների մասին, ինչն իր հասարակական պարտքը կատարող այլ անձի համեմատ թուլացնում էր ազդարարի պաշտպանությունը: Հարց էր առաջանում, թե ինչպես պետք էր որակել ազդարարի մերձավորի կամ մերձավոր ազգականի սպանությունը՝ նրանից վրեժ լուծելու համար: Կարծում ենք, կորակվեր որպես «անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ»: Ասվածը նույնպես ապացուցում է ազդարարի սպանությունը որպես ծանրացնող հանգամանք նախատեսելու ավելորդությունը: Դրանով ցույց էր տրվում, որ պայքարում ենք կառույցիայի դեմ, բայց իրականում ոչ մի պայքարի մասին չէր կարող խոսք լինել, որովհետև, ինչպես նշեցինք վերը, ոչինչ չէր ասվում ազդարարի մերձավորների կամ մերձավոր ազգականների մասին, ինչը իր հասարակական պարտքը կատարող այլ անձի համեմատ թուլացնում էր ազդարարի պաշտպանությունը:

Ասվածի հետ կապված, ավելացնենք նաև, որ որոշ մարդկանց մեջ այն թուր կարծիքը կա, թե հասարակական պարտքի կատարումը պարտականություն է, մինչդեռ հասարակական պարտքի կատարումը նույնպիսի իրավունք է, ինչպիսին մյուս իրավունքներն են, և չի կարող համարվել պարտականություն. անձը պարտավոր չէ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդում տալ, դա յուրաքանչյուրի բարոյական իրավունքն է: Եվ ամենակարևորը, այն չիրականացնելու համար պատասխանատվություն նախատեսված չէ, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է, որ դա ոչ թե պարտականություն է, այլ իրավունք:

Փոփոխության է ենթարկվել «անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ», ծանրացնող հանգամանքը, այժմ այն ձևակերպված է հետևյալ կերպ. «անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ»:

Ծառայողական գործունեությունը աշխատանքային պայմանագրի հիման վրա իրականացվող գործունեությունն է, իսկ քաղաքական գործունեությունը պետության քաղաքականությունը իրականացնելն է, այդ ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալելը, քաղաքական գործունեություն կարող է համարվել նաև պետության քաղաքականությանը հակադրվող, այլ կարծիքի վրա հիմնված գործունեությունը:

Հասարակական գործունեություն են ծավալում հասարակական գործիչները, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում տվյալ հասարակական կազմակերպության, կուսակցության քաղաքականությունը կյանքի կոչելու ուղղությամբ: Ընդ որում, նշանակություն չունի տվյալ հասարակական կազմակերպությունը, կուսակցությունը ընդդիմադիր են, թե համակիր: Կարևոր է, որ դրանք գրանցված լինեն և գործունեություն ծավալեն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Ինչպես տեսնում ենք, ավելացել են մերձավոր ազգականը և պետական, քաղաքական, ինչպես նաև մասնագիտական գործունեությունը: Նախկինում նախատեսված էր միայն մերձավորի սպանությունը, ինչը ճիշտ չէր, որովհետև «մերձավոր ազգական» հասկացությունը այլ է, քան «մերձավոր» հասկացությունը: Բացի այդ առանձնացվել է մասնագիտական գործունեությունը, քանի որ նախկին օրենսգրքում խոսվում էր միայն բժշկի նկատմամբ բռնություն գործադրելու մասին: Ներկայումս ընդհանրական հասկացություն է տրվել, ինչը պաշտպանության տակ է առնում բոլոր հնարավոր մասնագետներին, որովհետև պակաս վտանգավոր չէ, ասենք, գազի վթարը վերացնողի գործունեությանը խոչընդոտելը: Եվ վերջապես, բարձր գնահատելով մարդու կյանքը՝ քրեական նոր օրենսգիրքը պետական, քաղաքական գործչի սպանությունը նախատեսել է ոչ թե որպես սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործություն, այլ որպես մարդու դեմ ուղղված հանցագործության ծանրացնող հանգամանք՝ առաջնային օբյեկտ համարելով մարդու կյանքը:

Քննարկվող ծանրացնող հանգամանքի էությունը հետևյալն է.

Խոսքը ինչպես պետական կամ քաղաքական գործչի սպանության մասին է՝ նրա պետական կամ քաղաքական գործունեությունը դադարեցնելու կամ արդեն կատարվածի համար վրեժ լուծելու նպատակով, այնպես էլ մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու կամ արդեն կատարվածի համար վրեժ լուծելու նպատակով սպանության, օրինակ, բժշկի, հրշեջի սպանությունը և այլն: Ընդ որում, ինչպես արդեն նշել ենք, սպանությունը պետք է կատարվի կա՛մ նշված անձանց գործունեությունը դադարեցնելու, կա՛մ արդեն կատարվածի համար վրեժ լուծելու նպատակով: Այլ նպատակներով սպանությունը կորակվի որպես հասարակ սպանություն, եթե բացակայում են այլ ծանրացնող հանգամանքները: Այս ծանրացնող հանգամանքի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումը անձի ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման

առնչությամբ, պահպանում է իր արդիականությունը և սպանության այս տեսակը խուլիզանական դրդումներով սպանությունից սահմանազատելու համար կարող է օգտակար լինել նաև փոփոխված տարբերակով ծանրացնող հանգամանքի համար<sup>102</sup>: Համաձայն այդ որոշման, եթե խուլիզանական արարքներին միջամտությունը կրում է զուտ դիտողության բնույթ և անձը սպանվում է այդ դիտողության համար, ապա արարքը որակվում է որպես խուլիզանական դրդումներով սպանություն, իսկ եթե խուլիզանական արարքներին միջամտությունը կրում է ակտիվ բնույթ, և անձը փորձում է խոչընդոտել խուլիզանական արարքները ու սպանվում է դրա համար, ապա արարքը պետք որակել որպես անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանություն՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ:

Ինչ վերաբերում է մերձավորին կամ մերձավոր ազգականին, ապա դրանց հասկացությունները տրված են օրենսգրքի 3-րդ հոդվածում: Ինչպես տեսնում ենք, քննարկվող ծանրացնող հանգամանքի բովանդակությունն ընդլայնվել է:

Ճշգրտվել է «մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները օգտագործելու նպատակով սպանություն» ձևակերպումը: Նոր օրենսգրքում խոսվում է «հանցագործությունից տուժած անձի բջիջը, հյուսվածքը, օրգանը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելու նպատակով» սպանության մասին: Դրանով ոչ միայն ընդլայնվել է մարմնի այն մասերի ցանկը, որոնք վերցնելու նպատակով կատարվում է սպանությունը, այլև հասկացությունը համապատասխանեցվել է բժշկության մեջ ընդունված հասկացություններին:

Այսպիսի սպանության օրինակներ կարող են լինել, ասենք, տուժողի արյունը, ավիշը, սաղմը, թուրքը վերցնելու նպատակով սպանությունը և այլն:

Այլ կերպ է ձևակերպվել «շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն» ծանրացնող հանգամանքը: Նոր օրենսգրքով այն ձևակերպված է որպես «այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն»: Ճշգրտվել է այն, որ խոսքը պարզապես շատերի կյանքի համար վտանգավոր եղանակի մասին չէ, այլ այն մասին, որ հանցավորը օգտագործում է այնպիսի եղանակ, որը վտանգավոր է ոչ թե շատերի, այլ *նույնիսկ մեկ մարդու համար*, որը ընդգրկված չի եղել հանցավորի սկզբնական դիտավորության մեջ, պարզ ասած՝ հանցավորը օգտագործում է այնպիսի եղանակ, որը վտանգավոր է *այն մարդու համար, որին կյանքից զրկել անձը ի սկզբանե չի ցանկացել*: Օրինակ՝ հանցավորը ցանկանում է սպանել հինգ մարդու, որոնք խմբով կանգնած են մի մարդու կողքին, որին հանցավորը չէր ցանկանում սպանել, բայց նշված

<sup>102</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշումը ՀՅՔԲԴ/0086/01/08 գործի վերաբերյալ, 15-րդ կետ:

հինգին սպանելու համար, հանցավորը ռումբ է նետում նրանց մեջ, շատ լավ գիտակցելով, որ սպառնում է կյանքից զրկել նաև նրանց կողքին կանգնած մարդուն: Նշված դեպքում, եթե այդ մարդը զրկվի կյանքից, հանցավորի արարքը կորակվի ոչ միայն համակցությամբ՝ որպես վեց սպանություն, այլ նաև կնշվի «այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն» ծանրացնող հանգամանքը:

Ընդ որում, այս դեպքում խոսքը հանցավորի ուղղակի դիտավորության մասին է: Հնարավոր է այս ծանրացնող հանգամանքով սպանությունը կատարվի նաև անուղղակի դիտավորությամբ, երբ հանցավորը չի ցանկանում կոնկրետ որևէ մեկին զրկել կյանքից, բայց կատարում է այնպիսի արարք, որն իրենից վտանգ է ներկայացնում մարդկանց համար: Օրինակ՝ հրկիզում է առանձնատունը՝ գիտակցաբար թույլ տալով այնտեղ բնակվողների մահը: Այդ դեպքում ևս, եթե մարդ կամ մարդիկ մահանան, հանցավորի արարքը կորակվի ոչ միայն համակցությամբ՝ որպես սպանություն և որպես ծանրացնող հանգամանքով գույքի դիտավորությամբ ոչնչացում կամ վնասում, այլ նաև կնշվի «այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն» ծանրացնող հանգամանքը: Բնականաբար, եթե մեկից ավելի մարդ մահանա՝ արարքը կորակվի մեկից ավելի սպանությունների համակցությամբ, կնշվի «այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն» ծանրացնող հանգամանքը և համակցությամբ կորակվի նաև որպես ծանրացնող հանգամանքով գույքը դիտավորությամբ ոչնչացնել կամ վնասել:

Մյուս նորությունն այն է, որ որպես ծանրացնող հանգամանքներ են նախատեսվել անօգնական վիճակում գտնվողի սպանությունը, ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի սպանությունը, անչափահասի սպանությունը, մերձավոր ազգականի կողմից սպանությունը, ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով սպանությունը, ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարված սպանությունը:

Ինչ վերաբերում է անօգնական վիճակում գտնվողի սպանությանը, ապա նշենք, որ տեսության մեջ այն կարծիքն է արտահայտվել, թե անօգնական վիճակում գտնվողի սպանությունը այդպես կորակվի այն դեպքում, երբ անօգնական վիճակում գտնվողը գիտակցում է, որ ցանկանում են իրեն սպանել, սակայն չի կարողանում դիմադրել հանցավորին: Սակայն կարծում ենք, որ այս ծանրացնող հանգամանքով պետք է որակել արարքը նույնիսկ այն դեպքում, երբ անձը չի գիտակցում, որ ցանկանում են իրեն սպանել: Անօգնական վիճակում գտնվողի հասկացությունը տրված է 3-րդ հոդվածում:

Նոր օրենսգրքում նշվում է ոչ թե զանգվածային անկարգությունների ժամանակ զանգվածային անկարգությունների մասնակցի կողմից, այլ ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով սպանության մասին: Այստեղ կարևոր է «պայմաններն օգտագործելով» հասկացությունը: Խոսքը ոչ թե զանգվածային անկարգությունների ժամանակ սպանության մասին է (*դա իրականում չի կարող դիտվել ծանրացնող հանգամանք, որովհետև սպանությունը կարող է նաև ժամանակի առումով պարզապես հանրնկնել զանգվածային անկարգությունների հետ*), այլ այն մասին, որ հանցավորը օգտվում է նշված իրավիճակներով պայմանավորված խառնաշփոթից և կատարում է սպանությունը:

Բացի այդ, ընդլայնվել է սուբյեկտների շրջանակը. հանցագործության սուբյեկտ կարող է լինել ցանկացած անձ և ոչ միայն զանգվածային անկարգությունների մասնակիցը:

Այլ կերպ է ձևակերպված նաև «ազգային, ռասայական կամ կրոնականատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն» ծանրացնող հանգամանքը: Ներկայումս այն ձևակերպված է որպես «ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորվածատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարված սպանությունը»: Ինչպես տեսնում ենք, ծանրացնող հանգամանքը ավելի լայն է ձևակերպված. այն ընդգրկում է նաև էթնիկ, անձնական կամ սոցիալական բնույթի ամենաբազմազան հանգամանքներով պայմանավորվածատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթը:

Ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորվածատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարված սպանությունը առկա է այն դեպքում, երբ տուժողը սպանվում է զուտ իր ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների պատճառով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով: Անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ կարող են լինել, ասենք, աղքատությունը, գյուղացի լինելը, համասեռամոլ լինելը, հեղինակություն չվայելող ծառայություն կատարելը և այլն: Ընդ որում, սպանությունը կատարվում է հենց այդ հանգամանքների պատճառով:

Ինչ վերաբերում է ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի սպանությանը, ապա խոցելի վիճակի հասկացությունը տրված է օրենսգրքի 3-րդ հոդվածում և մեկնաբանության

կարիք ունի ընտանեկան դրություն հասկացությունը: Խոսքը ընտանեկան դրությամբ պայմանավորված խոցելի վիճակի մասին է, այսինքն՝ այն մասին է, որ անձը՝ տվյալ ընտանիքում իր ունեցած կարգավիճակի հետևանքով չունի իր համար ընդունելի այլընտրանք, քան ենթարկվելու իր նկատմամբ կատարվող չարաշահմանը: Օրինակ՝ գտնվում է հանցավորի խնամքի տակ, կամ նյութական կախվածության մեջ է հանցավորից և այլն: Ընդ որում, կարևոր չէ, թե այդ ընտանիքում նա ով է՝ ամուսին, երեխա, պապ, տատ, հորաքույր, մորաքույր և այլն, կարևորը տվյալ ընտանիքում ապրելն է և խոցելի վիճակում գտնվելը: Ընդ որում, խոսքը նաև փաստական ամուսնական հարաբերությունների մասին է, որը հավասարեցվում է ընտանեկան հարաբերություններին, ուստի ընտանեկան դրությամբ պայմանավորված խոցելի վիճակ ասելով՝ պետք է հասկանալ նաև փաստական ամուսնական հարաբերություններով պայմանավորված խոցելի վիճակը:

Ինչ վերաբերում է հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի սպանությանը, ապա արարքը այդպես կորակվի այն դեպքում, երբ հաշմանդամությունը այնպիսին է, որ զրկում է անձին հանցավորին դիմադրելու, նրան չենթարկվելու հնարավորությունից, և անձը հաշմանդամության հետևանքով չունի իր համար ընդունելի այլընտրանք, քան ենթարկվելու իր նկատմամբ կատարվող ոտնձգությանը:

Մերձավոր ազգականի կողմից սպանությունը ցանկացած նպատակով կամ շարժառիթով սպանությունն է, բացառությամբ, բնականաբար, եթե չկան մեղմացնող հանգամանքներով սպանության հատկանիշներ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ և այլն: Մերձավոր ազգականի հասկացությունը տրված է օրենսգրքի 3-րդ հոդվածում: Այս ծանրացնող հանգամանքը նախատեսելը պայմանավորված է ընտանեկան բռնությունը հնարավորինս կանխելու և դրա համար ավելի խիստ պատիժ սահմանելու նպատակով:

Նոր օրենքում չի օգտագործվում «ակնհայտ հղի կնոջ սպանություն» հասկացությունը, որը ոչ միայն ավելորդ էր, այլև տարակարծությունների տեղիք էր տալիս. կնոջ հղի լինելը պետք է աչքով տեսանելի լինի, թե բավարար է, որ հանցավորը գիտակցի դա: Բանն այն է, որ դիտավորության բնորոշումը տալիս է այդ հարցի պատասխանը: Ըստ օրենքի՝ հանցանքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե անձը գիտակցում է իր արարքի այն փաստական հանգամանքները, որոնք տվյալ հանցակազմի հատկանիշ են: Ուստի կնոջ հղի լինելը պարտադիր չէ, որ աչքով տեսանելի լինի, պարզապես բավական է, որ հանցավորը գիտակցի դա, տեղյակ լինի այդ մասին: Այդ պատճառով քննարկվող ծանրացնող հանգամանքը ձևակերպված է «հղի կնոջ սպանությունը» հասկացությամբ:

Այլևս նախատեսված չեն այնպիսի ծանրացնող հանգամանքներ, որոնք այլ

հանցագործություն են: Նման դեպքերում արարքը կարող է որակվել մեկ այլ ծանրացնող հանգամանքով, օրինակ, այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով, կամ, եթե մեկ այլ ծանրացնող հանգամանք չկա, ապա համակցությամբ՝ կատարված մեկ այլ հանցագործության հետ: Իրականում բացառիկ դեպքերում կարող է ծագել համակցությամբ որակելու հարց, որովհետև այլ ծանրացնող հանգամանքները լրացնում են այնպիսի ծանրացնող հանգամանքների բացակայությունը, որոնք այլ հանցագործություն են (այլ հանցագործության հետ զուգորդված սպանությունը հիմնականում կատարվում է այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով):

Այնպիսի ծանրացնող հանգամանքներ, որոնք այլ հանցագործություն են, չեն նախատեսվել որպես ծանրացնող հանգամանք նաև հետևյալ պատճառաբանությամբ.

Հարց էր առաջանում՝ պետք է արդյոք արարքը որակել հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ սպանությունը՝ զուգորդված մարդուն առևանգելու հետ, պետք է արդյոք որակվի որպես մարդուն առևանգելու հետ զուգորդված սպանություն և մարդուն առևանգել: Գտնում ենք, որ ոչ, որովհետև համակցությամբ որակելու դեպքում խախտվում են մի շարք սկզբունքներ: Նախ, փաստորեն անձը այդ դեպքում կրկնակի դատապարտվում է նույն արարքի համար՝ մեկ անգամ սպանության հանցակազմով, և ևս մեկ անգամ՝ առանձին հանցակազմով: Բերված օրինակում՝ որպես մարդուն առևանգելու հետ զուգորդված սպանություն և մարդուն առևանգել, փաստորեն երկու անգամ մարդուն առևանգելու համար: Երկրորդ, ամբողջի և մասի մրցակցության դեպքում մասը առանձին որակվում է միայն այն դեպքում, երբ դրա համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան ամբողջի համար: Տվյալ դեպքում ամբողջը մարդուն առևանգելու հետ զուգորդված սպանությունն է, որի համար բնականաբար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան մարդուն առևանգելու համար, ուստի մարդուն առևանգելը որպես մաս առանձին որակելու կարիք չկա: Եվ վերջապես, մարդուն առևանգելու հետ զուգորդված սպանության համար զգալիորեն ավելի խիստ պատիժ է նախատեսված (ընդհուպ ցմահ ազատազրկում), քան մարդուն առևանգելու համար, ուստի համակցությամբ որակելն անիմաստ է:

Պահպանվել են այնպիսի ծանրացնող հանգամանքներ ինչպիսիք են մի խումբ անձանց կողմից, շահադիտական դրդումներով, պատվերով, խուլիգանական դրդումներով, այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով, առանձին դաժանությամբ սպանությունը: Այս ծանրացնող հանգամանքները նախկինում մեկնաբանվել են և ներկայումս մեկնաբանության կարիք չունեն:

Կարևոր է նշել նաև, որ նոր օրենսգրքի 53-րդ հոդվածում նշված է, որ եթե անձի մեկ արարքում առկա են քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի միևնույն մասի տարբեր

կետերով նախատեսված ծանրացնող հանգամանքներ, ապա հանցագործությունների համակցությունը բացակայում է: Այդ դեպքում արարքը որակելիս նշվում են այն բոլոր կետերը, որոնցում նախատեսված հանգամանքներն առկա են անձի արարքում: Խոսքը այն դեպքերի մասին է, երբ այդ ծանրացնող հանգամանքներն իրականում առկա են անձի միևնույն արարքում: Օրինակ՝ անձը շահադիտական դրդումներով սպանում է հղի կնոջը: Եթե պարզվում է, որ կինը հղի չէր, ապա արարքը չի որակվի որպես հղի կնոջ սպանության փորձ, այլ կորակվի միայն որպես շահադիտական դրդումներով սպանություն, իսկ այն, որ հանցավորի դիտավորության մեջ եղել է նաև հղի կնոջ սպանությունը, կնկարագրվի մեղադրական եզրակացության և դատավճռի մեջ: «Հղի կնոջ սպանություն» ծանրացնող հանգամանքը կնշվի միայն այն դեպքում, երբ կինը իրոք հղի լինի:

Պետք է նշել, որ այլ երկրների քրեական օրենսդրություններում առկա են ն' նույնանման ն' տարբերվող ծանրացնող հանգամանքներ: Այսպես՝ ԳԴՀ քրեական օրենսգրքով սահմանված են սպանության հետևյալ ծանրացնող հանգամանքները՝

- 1) սադիստական մղումներով,
- 2) սեռական հակումը բավարարելու համար,
- 3) շահադիտական դրդումներով կամ ղեկավարվելով ստոր դրդումներով,
- 4) արյունաբքու, դաժան կամ հանրավտանգ միջոցներով,
- 5) այլ հանցանքի կատարումը հեշտացնելու կամ այլ հանցանքի կատարումը թաքցնելու նպատակով:

Շատ նման են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծանրացնող հանգամանքներին Ֆրանսիայի քրեական օրենսգրքով նախատեսված ծանրացնող հանգամանքները: Դրանք են՝

- 1) այլ հանցանքի հետ գուգորդված, այլ հանցանքին նախորդող կամ հաջորդող սպանությունը,
- 2) այլ զանցանքը հեշտացնելու կամ նախապատրաստելու կամ կատարողի կամ հանցակցի փախուստին կամ անպատժելիությանը օժանդակելու համար սպանությունը,
- 3) խորթ հոր կամ մոր կամ մերձավոր ազգականի սպանությունը,
- 4) հաշմանդամության, ֆիզիկական կամ հոգեկան արատի, հղիության, տարիքի կամ հիվանդության ուժով հատկապես խոցելի անձի սպանությունը, եթե կատարողին հայտնի է եղել այդ վիճակի մասին,
- 5) մագիստրի, երդվյալ ատենակալի, փաստաբանի, հանրային ծառայողի, օրենքի ներկայացուցչի, արդարադատության նախարարի կողմից լիազորված ժանդարմի, հանրային ծառայողի գործառույթներ իրականացնող անձի սպանությունը, եթե կատարողը գիտակցել է այդ գործառույթները և սպանությունը կատարել է այդ գործառույթների հետ կապված,



- 6) առանձին դաժանությամբ,
- 7) շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանությունը,
- 8) խուլիգանական դրդումներով սպանությունը,
- 9) այլ հանցանքի կատարումը հեշտացնելու կամ այլ հանցանքի կատարումը թաքցնելու նպատակով սպանությունը,
- 10) անձի կամ նրա մերձավորի սպանությունը, կապված այդ անձի կոմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,
- 11) պատվերով սպանությունը,
- 12) նախկինում սպանություն կատարած անձի կողմից սպանությունը,
- 13) բռնաբարության կամ սեռական հակումներին խաթարված ձևով հագուրդ տալու հետ զուգորդված սպանությունը,
- 14) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ սպանությունը<sup>103</sup>:

Որոշ փոփոխությունների է ենթարկվել **հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը** (156-րդ հոդված): Հանցակազմում այլևս նշված չէ տուժողի արարքի հակաբարոյականության մասին՝ որպես մեղմացնող հանգամանքի: Հակաբարոյական վարքագծի ազդեցության տակ սպանությունը մեղմացնող հանգամանք դիտարկելը չէր բխում «Շնտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի էությունից և տրամաբանությունից: Տուժողի հակաբարոյական գործողությունները (անգործությունը) բարոյականության նորմերին հակասող այն արարքներն են, որոնք կարող են հոգեկան խիստ հուզմունքի վիճակի առաջացման հիմք հանդիսանալ: Սրանց օրինակ կարող են հանդիսանալ, ասենք, ամուսնական անհավատարմությունը, մերձավորների դավաճանությունը և այլն:

Նման իրադրությունում հանցավորի մեջ աստիճանաբար հոգեկան լարվածություն է կուտակվում, և երբ նրա «համբերության բաժակը լցվում է», հանկարծակի առաջ է գալիս հոգեկան խիստ հուզմունք, որն էլ հանգեցնում է սպանության: Հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքը, որը ձևավորվում է երկարատև հոգեճնշող վիճակի ազդեցության տակ՝ կապված տուժողի կողմից պարբերաբար հակաիրավական կամ հակաբարոյական վարքագիծ դրսևորելու հետ, հատկապես բնութագրական է ընտանեկան-կենցաղային հարաբերությունների ոլորտում կատարվող սպանություններին: Սրա վառ օրինակն է այն դեպքը, երբ հարբեցող ամուսնու պարբերական հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծի արդյունքում, որն ուղեկցվում է վիճաբանություններով, ծեծկռտուքով, վիրավորանքներով, նրա

<sup>103</sup> Տե՛ս С.А. Грызыхин, Отягчающие обстоятельства убийства по зарубежному уголовному законодательству Вестник Омского университета. Серия «Право». 2008. № 2 (15). С. 145–150. © С.А. Грызыхин, 2008

ընտանիքի անդամներից մեկի «համբերության բաժակը լցվում է», և նա դիմում է սպանության:

Սպանությունը հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կարող է կատարվել նաև տուժողի մեմանգամյա հակաբարոյական արարքից հանկարծակի ծագած հոգեկան խիստ հուզմունքի վիճակի հետևանքով:

Ընտանիքում կատարվող ցանկացած բռնություն՝ անկախ այն հանգամանքից, որ այն կատարվել է տուժողի հակաբարոյական վարքագծի հետևանքով, չի կարող որակվել որպես մեղմացնող հանգամանք, հակառակ պարագայում կստացվի, որ կնոջ կամ ամուսնու ամուսնական անհավատարմությունը կարող է որակվել որպես «տուժողի հակաբարոյական վարքագիծ», և ըստ այդմ հանդիսանալ մեղմացնող հանգամանք:

Բացի այդ, բարոյականությունը միանշանակ հասկացություն չէ, և այն, ինչ հակաբարոյական է հասարակության մի խավի շրջանում, այդպիսին չէ մեկ այլ խավի շրջանում:

Նշվածից ելնելով տուժողի արարքի հակաբարոյականությունը չի նախատեսվել որպես մեղմացնող հանգամանք:

Բացի հետխորհրդային երկրներից մյուս արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում նույնպես տուժողի արարքի հակաբարոյականությունը չի նախատեսված որպես մեղմացնող հանգամանք<sup>104</sup>:

Այս հանցակազմի մյուս փոփոխությունը հանգում է նրան, որ այլևս նախատեսված չեն «Տուժողի գործադրած բռնության, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ այլ», ինչպես նաև «տուժողի՝ պարբերաբար դրսևորած հակաիրավական կամ հակաբարոյական վարքագծի կապակցությամբ առաջ եկած երկարատև հոգեճնշող իրավիճակի» հատվածները. դրանք հակաիրավական վարքագծի դրսևորումներ են:

Փոփոխությունների է ենթարկվել նաև **մոր կողմից նորածնի սպանության հանցակազմը**, որում օրենսդիրը նախկինում, որոշ դեպքերում հաշվի չէր առնում հանցակազմի սուբյեկտի, նրա հոգեկան վիճակի առանձնահատկությունները: Նոր օրենքով այն կոչվում է **ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի սպանությունը** (157-րդ հոդված): Այսպիսով ճշգրտվել է, որ հանցակազմի սուբյեկտ կարող է լինել նաև փոխնակ մայրը: Բացի այդ, փոփոխությունների է ենթարկվել հանցակազմի դիսպոզիցիան: Նոր օրենքում այն ձևակերպվել է հետևյալ կերպ. «ծննդկանի կամ ծննդաբերի կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից հետո հոգեճնշող կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում մինչև երեք ամսական իրենից ծնված երեխայի սպանությունը»: Օրենսդիրը հիմնվում է այն գաղափարի վրա, որ ծննդկանի կամ ծննդաբերի կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից հետո

<sup>104</sup> St' u Жданов, Н. С. Уголовное законодательство зарубежных стран об ответственности за убийство, совершенное в состоянии аффекта / Н. С. Жданов. — Текст: непосредственный // Молодой ученый. — 2018. — № 16 (202). — С. 209-212. — URL: <https://moluch.ru/archive/202/49623/> (дата обращения: 28.02.2022).

սպանությունը կարող է մեղմացնող հանգամանքներում կատարված սպանություն դիտվել միայն այն դեպքում, երբ կատարվում է հոգեճնշող կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում, հակառակ դեպքում այն չի կարող համարվել մեղմացնող հանգամանքներում կատարված, ինչպես դա արված էր նախկին օրենսգրքում: Ընդ որում, խոսքը մինչև երեք ամսական երեխայի մասին է: Օրենսդիրը հիմնվում է բժշկությանը հայտնի այն գաղափարի վրա, որ հոգեճնշող կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակը կարող է ավելի երկար տևել, քան դա նախատեսված էր նախկին օրենսգրքում:

Նախատեսվել է նաև **ծննդկանի կամ ծննդաբերի կողմից երեխայի սպանությանը հանցակցելու** հանցակազմը (158-րդ հոդված), որը ձևակերպված է հետևյալ կերպ. «[քրեական] օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը կազմակերպելը կամ դրան դրդելը կամ օժանդակելը»: Օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ այս հանցագործությանը հանցակցողի արարքը չի կարող որակվել նշված մեղմացնող հանգամանքով, միևնույն ժամանակ, այն հասարակ սպանությանը հանցակցել չէ:

Նախատեսվել է նաև **տուժողի խնդրանքով սպանությունը** (161-րդ հոդված): Դիսպոզիցիան ունի հետևյալ տեսքը. «տասնութ տարին լրացած անձի սպանությունը նրա գիտակցված և կամովին արտահայտված խնդրանքով՝ նրան ֆիզիկական ուժեղ ցավից կամ տառապանքից ազատելու նպատակով»: Խոսքը ոչ միայն ծանր հիվանդի, այլև այն մարդու մասին է, որը, ասենք, ծանր վիրավոր է, և նրան փրկելու տարբերակ չկա և այլն: Ընդ որում, տուժողը անպայման պետք է տասնութ տարին լրացած լինի: Օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ միայն չափահաս անձը գիտակցաբար կարող է համաձայնություն տալ՝ իրեն կյանքից զրկելու: Ընդ որում, հանցավորը պետք է գիտակցի, որ տուժողին կյանքից զրկում է ֆիզիկական ուժեղ ցավից կամ տառապանքից ազատելու նպատակով և սպանությունը կատարի հենց այդ նպատակով: Նախկինում այս տեսակի սպանությունը որակվում էր որպես հասարակ սպանություն, ինչն արդարացի չէր. ամեն դեպքում ֆիզիկական ուժեղ ցավից կամ տառապանքից ազատելու նպատակով սպանությունը չի կարող հասարակ սպանություն որակվել:

Տուժողի խնդրանքով սպանությունը որպես մեղմացնող հանգամանքով սպանություն է համարվում արտասահմանյան երկրների մեծ մասում: Այն կա՛մ նախատեսվում է քրեական օրենսդրությունում, կա՛մ այդպիսին է համարվում դատարանի կողմից<sup>105</sup>:

Նախկինի նման պահպանվել են «**հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանությունը**» (160-րդ

<sup>105</sup> Ст' u Н.Е. Алёнкин, Уголовная ответственность за убийство по просьбе потерпевшего., ВЕСТН. МОСК. УН-ТА. СЕР. 11. ПРАВО. 2014. № 2, С74-85.

հողված) և «անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանությունը» (159-րդ հոդված) **հանցակազմերը**: Նախկինում հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանությունը անվանվում էր հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանություն: Ներկայումս փոխվել է անվանումը, ինչը նաև բովանդակային նշանակություն ունի: Այժմ այն ձևակերպված է հետևյալ կերպ. «քրեական օրենսգրքով նախատեսված հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանություն»: Փաստորեն խոսքը ոչ միայն հանցանք կատարած անձի մասին է, այլև այն անձի, որը հանցագործության սուբյեկտ չէ կամ արարքը կատարել է առանց մեղքի կամ հարկադրանքի ազդեցության տակ, և նշված կամ այլ պատճառներով նրա կատարած արարքը թեև նախատեսված է քրեական օրենսգրքով, բայց հանցագործություն չէ: Նախկինում հարց էր առաջանում, թե, ասենք, հանրավտանգ արարք կատարած անմեղսունակ անձին վնաս պատճառելը՝ նրա նոր հանրավտանգ արարքը խափանելու նպատակով, ինչպես պետք է գնահատվի, որովհետև չէր համապատասխանում ո՛չ անհրաժեշտ պաշտպանությանը, ո՛չ ծայրահեղ անհրաժեշտությանը, ո՛չ էլ արարքի հանցավորությունը բացառող մեկ այլ որևէ հանգամանքի:

Բնականաբար հանցավորը պետք է գիտակցի, որ վնաս է պատճառում կամ հանցանք կամ հակաիրավական արարք կատարած անձին:

Էական փոփոխությունների է ենթարկվել **ինքնասպանության հասցնելու հանցակազմը** (162-րդ հոդված):

Նախ՝ առանձնացվել են անզգուշությամբ և դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու հանցակազմերը: Ընդ որում, նշանակություն չունի, թե ինչ դիտավորության մասին է խոսքը: Նոր օրենքը նախատեսում է նաև ուղղակի դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու դեպքերը: Օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ, եթե իրեն կյանքից զրկում է գիտակցությամբ և կամքով օժտված անձը, ապա դա սպանություն չէ, այլ ինքնասպանության հասցնել, հատկապես, երբ հանցավորը չի կատարում սպանության օբյեկտիվ կողմը: Բացի այդ, ավելացել են ծանրացնող հանգամանքները, թե անզգուշությամբ, թե դիտավորությամբ հանցանքը կատարելու դեպքերում: Դրանք են.

- ❖ անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու դեպքում՝
  - 1) հղի կնոջ նկատմամբ, անչափահասի նկատմամբ,
  - 2) մերձավոր ազգականի կողմից,
  - 3) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,
  - 4) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ կամ
  - 5) ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ

կրող անձի կամ

6) զինձառայողի նկատմամբ: Ընդ որում, անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու դեպքում, այս ծանրացնող հանգամանքների առկայությունը կարող է գիտակցվել հանցավորի կողմից, կարող է և չգիտակցվել. կարևոր է, որ նա պարտավոր էր և կարող էր նախատեսել անձի ինքնասպան լինելը և նշված ծանրացնող հանգամանքների առկայությունը:

❖ դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու դեպքում՝

- 1) հղի կնոջ նկատմամբ,
- 2) անչափահասի նկատմամբ,
- 3) մի խումբ անձանց կողմից՝ նախնական համաձայնությամբ,
- 4) մերձավոր ազգականի կողմից,
- 5) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,
- 6) շահադիտական դրդումներով,
- 7) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ կամ

8) ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի կամ զինձառայողի նկատմամբ: Բնականաբար դիտավորության դեպքում հանցավորը պետք է գիտակցի նշված ծանրացնող հանգամանքների առկայությունը:

Այս ծանրացնող հանգամանքները մեկնաբանության կարիք չունեն: Թերևսմիայն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ կատարելու մասին նշենք այն, որ այս ծանրացնող հանգամանքի համար, անձը լիովին զրկված չպետք է լինի իր արարքների նշանակությունը գիտակցելու կամ իր արարքը ղեկավարելու ունակությունից, հակառակ դեպքում արարքը կորակվի սպանություն: Բնականաբար հանցավորը պետք է գիտակցի, որ տուժողը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ է:

Պահպանվել է պատասխանատվությունը **ինքնասպանության հակելու** (163-րդ հոդված) համար՝ նույն ծանրացնող հանգամանքներով, ինչ որ ինքնասպանության հասցնելու համար: Փոփոխությունը հանգում է նրան, որ ինքնասպանության հակելու եղանակները թվարկված են սպառիչ, և ավելացել է «**համոզելու**» եղանակը:

Ավելացել է նոր հանցակազմ՝ **ինքնասպանությանը նպաստելը** (164-րդ հոդված)՝ ինքնասպանություն գործելու վճռականություն ունեցող անձին դա իրագործելու համար գործիք կամ միջոց տրամադրելը կամ դրան այլ կերպ նպաստելը, եթե անձը ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ է կատարել, և եթե բացակայում են քրեական օրենսգրքի 161-րդ (տուժողի խնդրանքով սպանությունը) հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները: Որպեսզի այս հանցագործության համար անձը ենթարկվի պատասխանատվության, նա պետք է գիտակցի, որ տվյալ անձը ինքնասպանություն գործելու վճռականություն ունի, բացի այդ չպետք է կատարի

կյանքից զրկելու՝ սպանության օբյեկտիվ կողմը: Օրինակ՝ ինքնասպան լինելու համար թույն տալը կորակվի այս հոդվածով, իսկ կամուրջից նետվելով ինքնասպանություն կատարողին օգնելու համար նրան բրդելը և կամուրջից ցած նետելը կհամարվի սպանություն՝ կա՛մ տուժողի խնդրանքով սպանություն, կա՛մ հասարակ, կա՛մ ծանրացնող հանգամանքներով սպանություն՝ կախված արարքում առկա հատկանիշներից: Այս արարքի քրեականացումը օրենսդրի կարծիքով լրացնում է կյանքի պաշտպանությանն ուղղված այն բացը, որն առկա էր նախկին օրենսգրքում:

Նախատեսվել են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝

- 1) հղի կնոջ նկատմամբ,
- 2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,
- 3) անչափահասի նկատմամբ,
- 4) շահադիտական դրդումներով կամ
- 5) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ:

Սա դիտավորությամբ կատարվող հանցագործություն է, ուստի հանցավորը պետք է գիտակցի նշված ծանրացնող հանգամանքների առկայությունը: Այս ծանրացնող հանգամանքները մեկնաբանության կարիք չունեն:

Պետք է նշել, որ նման հանցակազմ նախատեսված է նաև այլ երկրների քրեական օրենսդրություններում<sup>106</sup>:

Գլուխն ավարտվում է **անզգուշությամբ կյանքից զրկելու** (հոդված 165) հանցակազմով, որը մեկնաբանության կարիք չունի:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսդրությունը լիովին իրականացնում է կյանքի իրավունքի պաշտպանության խնդիրը:

---

<sup>106</sup> St' u B. B. Хатуев Уголовная ответственность за доведение до самоубийства или до покушения на самоубийство по законодательству зарубежных государств., Journal of Foreign Legislation and Comparative Law, 2021, vol. 17, no. 3, էջ 50-70:

## Գլուխ 24

### ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրեական նոր օրենսգրքով պահպանվել է պատասխանատվությունը առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար:

Պետք է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումները այս կապակցությամբ պահպանում են իրենց արդիականությունը<sup>107</sup>: Խոսքը վերաբերում է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու և սպանության փորձի, դիտավորությամբ և անզգուշությամբ առողջությանը վնաս պատճառելու հանցակազմերի սահմանազատմանը, ինչպես նաև դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանրային վտանգավորության գնահատման չափանիշներին:

Առողջության դեմ ուղղված հանցագործություններում հիմնական փոփոխությունները հանգում են հետևյալին.

Նախ՝ բացի դեմքի անջնջելի այլանդակումից, որը նախկին օրենսգրքով նախատեսված էր որպես **առողջությանը ծանր վնասի** (166-րդ հոդված) հատկանիշ, նոր օրենսգրքով նախատեսված է նաև գլխի, ականջի կամ կզակի անջնջելի այլանդակումը: Օրենսդիրը այն կարծիքին է, որ նշված օրգանների այլանդակումը պակաս վանող տեսք չի տալիս տուժողին, քան դեմքի անջնջելի այլանդակումը, ուստի դրանք էլ պետք է նախատեսել որպես առողջությանը ծանր վնասի հատկանիշ:

Բացի այդ, սպանության նմանությամբ փոխվել են որոշ ծանրացնող հանգամանքներ: Այլևս նախատեսված չեն նրանք, որոնք այլ հանցագործություն են, որոշներն արդեն մեկնաբանվել են, իսկ շատերը հանրահայտ են և մեկնաբանության կարիք չունեն: Մասնավորապես, նախատեսվել են հետևյալ ծանրացնող հանգամանքները. անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, անչափահասի նկատմամբ, առանձին դաժանությամբ, այլ անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով, մի խումբ անձանց կողմից, մերձավոր ազգականի կողմից, շահադիտական դրդումներով, պատվերով, խուլիգանական դրդումներով, այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով, ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով, ռասայական,

<sup>107</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արարատ Բաղդասարյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0168/01/10 որոշումը, 15-րդ կետ, , Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԴ/0143/01/13՝ որոշումը, 16-րդ կետ;

ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով, հանցագործությունից տուժած անձի բջիջը, հյուսվածքը, օրգանը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելու նպատակով կամ անզգուշությամբ առաջացնելով հանցագործությունից տուժած անձի մահ:

Նախատեսվել է մարմնական վնասվածք պատճառելու համար զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու ծանրացնող հանգամանքը: Նոր օրենսգրքում խոսվում է ոչ թե որպես զենք օգտագործվող առարկայի, այլ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրման մասին: Օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ հանցանքի կատարումն է իրականում վկայում անձի բարձր հանրային վտանգավորության մասին, այլ ոչ թե որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ առողջությանը վնաս պատճառելը, երբ առարկան կարող է վերցվել նաև դեպքի վայրից: Դեպքի վայրից վերցրած առարկայով պատճառված վնասը կորակվի ըստ փաստացի առաջացած հետևանքի:

Պահպանվել է պատասխանատվությունը **առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու** (167-րդ հոդված) համար՝ նույն ծանրացնող հանգամանքներով, ինչ որ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքում:

Նախկինի նման պահպանվել է **առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը հոգեկան խիստ հուզմունքի վիճակում** (168-րդ հոդված), այն տարբերությամբ, որ սպանության նման, որպես տուժողի արարքի հատկանիշ չի նախատեսվել տուժողի արարքի հակաբարոյականությունը:

Նախկինի նման պահպանվել է **հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու** (169-րդ հոդված) հանցակազմը, բայց այլ ձևակերպմամբ, որը նաև բովանդակային նշանակություն ունի: Այժմ այն ձևակերպված է հետևյալ կերպ. «առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ»: Փաստորեն, սպանության նման, խոսքը ոչ միայն հանցանք կատարած անձի մասին է, այլև այն անձի, որը հանցագործության սուբյեկտ չէ կամ արարքը կատարել է առանց մեղքի կամ հարկադրանքի ազդեցության տակ, և



նշված կամ այլ պատճառներով նրա կատարած արարքը թեև նախատեսված է քրեական օրենսգրքով, բայց հանցագործություն չէ:

**Պահպանվել է պատասխանատվությունը առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու համար՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ (170-րդ հոդված):**

Նախկինի նման պահպանվել են **անզգուշությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու հանցակազմերը** (172-րդ և 173-րդ հոդվածներ), ընդ որում, որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է երկու կամ ավելի անձի նկատմամբ այս հանցանքների կատարումը:

Փոփոխությունների է ենթարկվել դիտավորությամբ **առողջությանը թեթև վնաս պատճառելու** (հոդված 171) հանցակազմը. այստեղ նախատեսվել են ծանրացնող հանգամանքներ: Նախատեսվել են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) անչափահասի նկատմամբ,

5) մի խումբ անձանց կողմից,

6) մերձավոր ազգականի կողմից կամ

7) խուլիզանական դրդումներով:

Առողջությանը թեթև վնաս պատճառելու հանցակազմում նախատեսված ծանրացնող հանգամանքների հետ արդեն ծանոթ ենք, և դրանք մեկնաբանության կարիք չունեն:

Հոդվածում ձևակերպված է մինչև հիմա վեճերի տեղիք տվող կարևոր դրույթ՝ այն մասին, որ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, անհրաժեշտ պաշտպանության կամ հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ մեկ ուրիշի առողջությանը թեթև վնաս պատճառելը հանցագործություն չի համարվում: Մեր կարծիքով այդ մասին չգրելը թերություն չէր համարվի, որովհետև ակնհայտ է, որ եթե արարքը նախատեսված չէ քրեական օրենսգրքով, այն չի կարող հանցագործություն համարվել, իսկ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, անհրաժեշտ պաշտպանության կամ հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ մեկ ուրիշի առողջությանը թեթև վնաս պատճառելը նախատեսված չեն քրեական օրենսգրքում: Այնուամենայնիվ նշված դրույթի

առկայությունը հստակություն է մտցնում և վերջ է տալիս վեճերին:

Առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն են նախատեսում նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունները՝ որոշ առանձնահատկություններով: Օրինակ՝ ԳԴՀ քրեական օրենսդրությունը էական նշանակություն է տալիս հանցագործության եղանակին, օրինակ, թունավորելու միջոցով առողջությանը վնաս պատճառելը, աշխատունակության կորուստը չի համարում առողջությանը վնաս պատճառելու հատկանիշ, նույնն է նաև Շվեդիայի քրեական օրենսդրությունը, որում նշանակություն է տրվում նաև հանցագործության վայրին՝ ասենք օդանավակայանում և այլն<sup>108</sup>:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսդրությունը բավարար չափով է պաշտպանում մարդու առողջությունը և ապահովում է մարդուն խոշտանգումից պաշտպանելու երաշխիքները:

---

<sup>108</sup> St'u УК Швеции, [http://www.sweden4rus.nu/rus/info/juridisk/ugolovnyj\\_kodeks\\_shvecij](http://www.sweden4rus.nu/rus/info/juridisk/ugolovnyj_kodeks_shvecij), УК ФРГ, [http://rawunsch.de/images/Ugolovnyiyi\\_Kodeks.pdf](http://rawunsch.de/images/Ugolovnyiyi_Kodeks.pdf).

## Գլուխ 25

### ԿՅԱՆՔԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս գլխում տեղ գտած հանցակազմերը հիմնականում նույնությամբ կրկնում են քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպումները: Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում **հղիության ապօրինի արհեստական ընդհատում** կատարելու համար՝ սահմանելով պատասխանատվություն ինչպես համապատասխան բժշկական բարձրագույն կրթություն ունեցող անձի կողմից հղիության ապօրինի արհեստական ընդհատում (աբորտ), այնպես էլ համապատասխան բժշկական բարձրագույն կրթություն չունեցող անձի կողմից հղիության ապօրինի արհեստական ընդհատում (աբորտ) կատարելու համար:

Առավել խիստ պատասխանատվություն սահմանվում է նույն հանցանքի համար, որը

1) անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ այլ ծանր հետևանք կամ

2) կատարվել է մարդու սաղմը կամ պտուղը վերցնելու նպատակով:

Մարդու սաղմը կամ պտուղը վերցնելու նպատակով աբորտի կատարումը քրեական նախկին օրենսգրքով նախատեսված չէր, սակայն բժշկության ոլորտում տեխնոլոգիաների զարգացման պայմաններում այն դարձել է իրատեսական: Հանցակազմի առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է դիմել նաև բլանկետային օրենսդրությանը, քանի որ միայն վերջինիս ուսումնասիրության արդյունքում է հնարավոր հավաստել աբորտի ապօրինի լինելու հանգամանքը:

ՀՀ քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանել նաև **հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելու կամ անձի ամլացման համար՝** առանց վերջինիս նախնական և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության:

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ հանգեցրել է նրա կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք:

Նույն տրամաբանությամբ՝ պատասխանատվություն է սահմանվել հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելու համար: Այս հանցակազմը նոր է քրեական օրենսգրքում և նախատեսում է կնոջն իր հղիությունն արհեստական եղանակով ընդհատելուն (աբորտ կատարելուն) կամ անձին ամլացմանը հարկադրելը՝ բռնություն գործադրելով, դա գործադրելու սպառնալիքով, շանտաժով կամ հարկադրանքի այլ եղանակով:

Սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը, սուբյեկտիվ կողմից կատարվում է ուղղակի դիտավորությամբ:

Առավել խիստ պատասխանատվություն նախատեսվում է, եթե այն կատարվել է՝ մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կամ անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ հանգեցրել է նրա կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք:

Ինչպես քրեական նախկին օրենսգիրքը, այնպես էլ քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանել ՄԻԱՎ-ով վարակելու համար, այն տարբերությամբ, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքում հիշյալ արարքը դիտավորությամբ և անզգուշությամբ կատարելը նախատեսված են առանձին հոդվածներով: Քրեական նոր օրենսգրքի կառուցման տրամաբանության հիմքում ընկած է նաև օբյեկտիվ կողմով նույնական արարքները դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարելու դեպքում դրանց առանձին հոդվածներով սահմանելու մոտեցումը:

Առանձին պատասխանատվություն է սահմանվում մեկ ուրիշին **մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելու** համար, ինչը ենթադրում է դիտավորություն: Քրեական նախկին օրենսգրքով այս հանցակազմը բնորոշվում էր որպես այլ անձի ՄԻԱՎ-ի հարոցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը, ինչը գործնականում խնդրահարույց էր, քանի որ հանցակազմում շեշտվում էր ակնհայտ վտանգի ենթարկելը, ոչ թե վարակելը: Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած մոտեցումն առավել հստակ է:

Քննարկվող հանցանքի ծանրացնող հանգամանքեր են համարվում նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) հղի կնոջ նկատմամբ,
- 2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կամ
- 3) անչափահասի նկատմամբ:

Առանձին հոդվածով պատասխանատվություն է սահմանվում նաև մեկ ուրիշին մարդու իմունային անբավարարության վիրուսով հանցավոր ինքնավստահությամբ վարակելու համար: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում չի շեշտվում այն արտահայտությունը, որ անձը պետք է իմանար իր մոտ առկա այդ հիվանդության մասին: Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նոր ձևակերպումը ելնում է այն մոտեցումից, որ անձը պետք է նախատեսեր մեկ ուրիշին վարակելու հնարավորությունը, հետևաբար՝ նա պետք է տեղյակ լիներ իր մոտ եղած հիվանդության մասին: Բացի այդ՝ մեկ ուրիշին ՄԻԱՎ-ով վարակել կարող է ոչ միայն հիվանդը, այլ օրինակ՝ երրորդ անձ, ով վարակված արյունով ներարկիչ է փոխանցում տուժողին կամ բժիշկը: Այդ դեպքում արդեն հանցավոր վարքագիծ դրսևորող անձը

հիվանդ չէ, սակայն նա տեղյակ է, որ ներարկիչում ՄԻԱՎ-ով հիվանդի արյուն է:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված մեկ ուրիշին դիտավորությամբ սեռավարակով վարակելու համար, ընդ որում ծանրացնող հանգամանքներ են դիտվում նույն հանգամանքները, ինչ և նախորդ հանցակազմերի պարագայում:

Օրենսդիրը հստակեցնում է, որ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության քրեական օրենսգրքի 177-րդ, 178-րդ կամ 179-րդ հոդվածով նախատեսված հանցանքները կատարելու համար, եթե սեռական հարաբերության զուգընկերն իմացել է նրա մոտ վարակի առկայության մասին և տվել է սեռական հարաբերություն ունենալու՝ գիտակցված և կամավոր համաձայնություն:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի նորամուծություններից է մեկ ուրիշին շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ վարակելը: Այդ հիվանդությունների շարքին է դասվում, օրինակ՝ տուբերկուլյոզը: Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե արարքը կատարվել է՝

- 1) հղի կնոջ նկատմամբ,
- 2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կամ
- 3) անչափահասի նկատմամբ:

Առավել ծանրացնող հանգամանք է, եթե այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

**Վտանգի մեջ թողնելը** դիտվում է նույն կերպ, ինչ և նախկին քրեական օրենսգրքում էր, այն տարբերությամբ, որ անձը պարտավոր է օգնություն տրամադրել նաև առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող անձին, նույնիսկ եթե ինքը նրան չի դրել նման վիճակի մեջ: Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անհրաժեշտ և ակնհայտ անհետաձգելի օգնություն ցույց չտալու համար, եթե հանցավորն այդ անձին օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել, կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելու համար, եթե պարտավոր չի եղել հոգ տանել նրա մասին և ինքը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր վիճակի մեջ:

Վտանգի մեջ թողնելու համար պատասխանատվություն սահմանող 182-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անօգնական վիճակում թողնելու համար, եթե հանցավորն այդ անձին օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել և պարտավոր է եղել նրան խնամել, կամ ինքն է նրան դրել կյանքի կամ

առողջության համար վտանգավոր վիճակում, եթե կյանքից զրկելու կամ առողջությանը վնաս պատճառելու դիտավորություն չի ունեցել: Այս ձևակերպումը, փաստացի, ներառում է քրեական նախկին օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված հանցակազմը, այն տարբերությամբ, որ շեշտադրում է կատարում հանցավորի մոտ անձին կյանքից զրկելու կամ առողջությանը վնաս պատճառելու դիտավորություն բացակայության վրա:

Առավել խիստ պատասխանատվություն սահմանվում է, եթե արարքը կատարվել է՝

- 1) հղի կնոջ նկատմամբ,
- 2) անչափահասի նկատմամբ կամ
- 3) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ:

Առանձին պաշտպանության են ենթարկվում կենսաբանական նյութերը, էմբրիոնը, պատասխանատվություն է սահմանվում մարդու սաղմը, պտուղը, մարդու կամ դիակի բջիջը, հյուսվածքը, օրգանը, կենսաբանական նյութերը կամ հեղուկներն ապօրինի ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար:

Առավել խիստ պատասխանատվություն սահմանվում է, եթե արարքը՝

- 1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, կամ
- 3) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում փոխպատվաստման նպատակով մարդու կամ դիակի բջիջը, հյուսվածքը, օրգանը, կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելու կամ փոխպատվաստելու կանոն խախտելու համար, որն անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել բջիջ, հյուսվածք, օրգան, կենսաբանական նյութեր կամ հեղուկներ տվողի կամ ընդունողի առողջությանը:

Առավել խիստ պատասխանատվություն է նախատեսվում, եթե այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, իսկ ամենածանր հետևանքները նախատեսվում են, եթե անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում նաև անձին՝ առանց իր ազատ կամարտահայտության և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության իր կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու սպառնալիք պարունակող բժշկական, գիտական կամ այլ փորձի ենթարկելու համար:

Առավել խիստ պատասխանատվություն սահմանվում է, եթե արարքը կատարվել է՝

- 1) բռնություն գործադրելու սպառնալիքով,

- 2) հղի կնոջ նկատմամբ,
- 3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,
- 4) անչափահասի նկատմամբ,
- 5) մի խումբ անձանց կողմից,
- 6) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ կամ
- 7) շահադիտական դրդումներով:

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե արարքը՝

- 1) կատարվել է բռնություն գործադրելով կամ
- 2) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք:

Ինչպես քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս պատասխանատվություն է սահմանված մարդու վերաբարտադրողական կլոնավորման՝ մահացած կամ կենդանի մարդու՝ արհեստական ճանապարհով գենետիկորեն նմանատիպը ստեղծելուն ուղղված ցանկացած գործողություն կատարելու կամ եվգենիկական փորձերի՝ մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված ցանկացած գործողություն կատարելու համար: Առավել խիստ պատասխանատվություն է սահմանված, եթե արարքը կատարվել է՝

- 1) բռնություն գործադրելու սպառնալիքով,
- 2) հղի կնոջ նկատմամբ,
- 3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,
- 4) անչափահասի նկատմամբ,
- 5) մի խումբ անձանց կողմից,
- 6) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ կամ
- 7) շահադիտական դրդումներով:

Առավել խիստ պատասխանատվություն սահմանվում է, եթե արարքը՝

- 1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ
- 2) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք:

Ինչպես և նախկին քրեական օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե նրա անզգուշության հետևանքով հնարավոր չի եղել կանխել հիվանդության հետագա ընթացքը կամ բարդությունների առաջացումը, կամ եթե մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս, կամ առաջացել է սաղմի կամ պտղի վնասում:

Առավել խիստ է պատասխանատվությունը, եթե արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք:

## Գլուխ 26

### ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ՊԱՏՎԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ, ՏԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ՀՈԳԵԿԱՆ ԱՆՁԵՌՆԱԽԵԼԻՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր քրեական օրենսգրքի հոդված 188-ը պատասխանատվություն է նախատեսում մարդու թրաֆիքինգի կամ շահագործման համար: Նոր իրավակարգավորումը բավականաչափ ընդհանրություններ ունի նախկին քրեական օրենսգրքի հոդված 132-ով նախատեսված հանցակազմի հետ, սակայն դրանում կատարվել են մի շարք էական փոփոխություններ, որոնք կարող են նպաստել իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև քննարկվող հանցագործության որակման գործընթացի դյուրինացմանը: Խստացվել է նաև այս հանցագործության համար սահմանված պատիժը, ինչին կանդրադառնանք ստորև:

Այսպես՝ նոր քրեական օրենսգրքի հոդված 188-ի 1-ին մասով սահմանվում է. «Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ **բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով**, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ խոստանալու կամ առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու միջոցով(...)»: Ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որում՝ որպես օբյեկտիվ կողմի դրսևորում հոդվածի 1-ին մասով նախատեսված էր «(...)կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով(...)», նոր քրեական օրենսգրքով սահմանվում է «**բռնություն գործադրելով, կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով**»: Նախկին իրավակարգավորմամբ «կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով» արարքի կատարումը նախատեսված էր որպես հանցակազմի որակյալ դրսևորում՝ 132-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով: Նոր իրավակարգավորմամբ՝ բռնության կամ դրա սպառնալիքի դրսևորման առանձին տեսակներ չեն առանձնացվել, այլ հոդվածի 1-ին մասով



ընդհանրական նշվել է ցանկացած բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի մասին, ինչն առավել համապարփակ և որակման առումով՝ քիչ խոցելի կարգավորում է:

Նախկին իրավակարգավորմամբ որպես քննարկվող հանցագործության կատարման եղանակ նախատեսվում էր՝ «իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելը»: Նոր քրեական օրենսգրքում, որպես համարժեք, օգտագործվում է՝ **«անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը կամ հանցագործությունից տուժած անձի անձնական կախվածությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու»** ձևակերպումը: Նախկին օրենսգրքում առկա «նրան վերահսկող անձի հետ համաձայնությունն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով» ձևակերպումը ևս փոխվել է, դրա փոխարեն նախատեսվել է՝ «հանցագործությունից **տուժած անձին** վերահսկող անձի հետ համաձայնությունն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ խոստանալու կամ **առաջարկելու կամ հանցագործությունից տուժած անձին վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու միջոցով**»: Ըստ էության՝ նախկին ձևակերպումը հստակեցվել է, նշվել է, որ խոսքը հանցագործությունից **տուժած անձի** մասին է, բացի այդ՝ նախկինում բաց էր մնացել **«վերահսկող անձի կողմից նման համաձայնություն տալու համար նման օգուտ ստանալու կամ առաջարկն ընդունելու»** օբյեկտիվ կողմի դրսևորումը, ինչը շտկվել է նոր կարգավորմամբ:

**Անձի պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցությունը օգտագործելով** կատարելը՝ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումներից է, սակայն քննարկվող հանցակազմն ունի նաև համաբնույթ ծանրացնող հանգամանք՝ **իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով /հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ/, որի հետ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորումը դիսոնանս է առաջացնում, ինչն էական թերություն պետք է համարել: Այս իրավակարգավորումը ենթակա է շտկման օրենսդրության հետագա կատարալազորման ընթացքում, իսկ առկա իրավակարգավորմամբ՝ այս ծանրացնող հանգամանքով արարքի որակումը անիրատեսական է թվում, քանզի վատթարացնում է անձի վիճակը:**

Բացի այդ՝ ինչպես վերը նշվեց, հոդվածի 1-ին մասում ներառվել են բռնության բոլոր դրսևորումները, այդ թվում՝ անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը, որը նախկին օրենսգրքով նախատեսվել էր որպես ծանրացնող հանգամանք: Այս համատեքստում ևս՝ պատժի մեղմացումը ճիշտ համարվել չի կարող: Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումն իրավացիորեն համարվում է մարդու ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված առավել վտանգավոր հանցատեսակներից մեկը և,

մեր կարծիքով, այս հանցատեսակի պարագայում պատժողական մեղմ քաղաքականությունն արդարացված համարվել չի կարող:

Նոր քրեական օրենսգրքով որոշակի փոփոխությունների են ենթարկվել նաև քննարկվող հանցատեսակի ծանրացնող հանգամանքները: Այս փոփոխությունները մեծամասամբ կրում են եզրութաբանական բնույթ և դրանք քննարկվել են սույն ուղեցույցի շրջանակներում: Որոշ փոփոխություններ ունեն հստակեցնող նշանակություն, օրինակ՝ նախկին օրենսգրքի հոդված 132-ի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված ծանրացնող հանգամանքը՝ «Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով», նոր օրենսգրքում սահմանվել է հետևյալ կերպ՝ «այլ պետություն տեղափոխելով» (հոդված 188-ի 2-րդ մասի 4-րդ կետ), ինչն ավելի հստակ ձևակերպում է: Նախկին «ակնհայտ հղի կնոջ նկատմամբ» ծանրացնող հանգամանքը նոր օրենքում ունի հետևյալ ձևակերպումը՝ «հղի կնոջ նկատմամբ»: Օրենսդիրն, իրավացիորեն, հրաժարվել է «**ակնհայտ**» եզրույթից, որն իրավական որոշակիության և օրենքում կիրառվող հստակ եզրութաբանության առումով խնդրահարույց էր:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 188-ի 3-րդ մասով, որպես այս հանցատեսակի առավել ծանրացնող հանգամանքներ նախատեսված են՝ «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝ 1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ 2) անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ առողջությանը ծանր վնաս կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք»: Նախկին իրավակարգավորումը, այս համատեքստում, օգտագործում էր ավելի սեղմ ձևակերպում՝ «Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝ 1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից, 2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ», սակայն, այս պարագայում իրավակիրառ պրակտիկայում որոշակի դժվարություններ էին առաջանում, կապված այն հանգամանքի հետ, թե ինչ պետք է հասկանալ «այլ ծանր հետևանքներ» ձևակերպման ներքո: Նոր իրավակարգավորմամբ, որոշակիորեն հստակեցվել է ծանր հետևանքների շրջանակը և, այս պարագայում, կիրառելի է իրավունքի մեկնաբանման **ejusdem generis** հանրաճանաչ սկզբունքը, որի համաձայն՝ «(...)չորոշակիացված տարրի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ելնել որոշակիացված տարրերի բովանդակությունից. անորոշ տարրը պետք է կրի այն ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են որոշակիացված տարրերին»<sup>109</sup>: Այսինքն՝ առաջացած ծանր հետևանքներն իրենց վտանգավորությամբ համարժեք կամ

109

համաբնույթ պետք է լինեն անզգուշությամբ անձի մահ կամ առողջությանը ծանր վնաս պատճառելուն կամ վերջինիս կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանությանը: Նման ձևակերպումն իրավակիրառողի համար կարող է հանդիսանալ ուղենիշ, հարացույց, որի շրջանակներում՝ վերջինս կարող է գնահատել անզգուշությամբ առաջացած հետևանքները, ինչը թույլ կտա խուսափել տարամեկնաբանություններից և անհստակություններից:

Հոդված 188-ի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի, ինչպես նաև սույն օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածների իմաստով՝ շահագործում են համարվում այլ մարդու՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ **հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը**, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, **բջիջը**, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանական նյութերը կամ **հեղուկները վերցնելը**»: Կատարված փոփոխությունները կարելի է դիտարկել երկու տեսանկյուններից՝ նախ հարկ է նշել, որ նոր իրավակարգավորմամբ մանրամասնվել և հստակեցվել է այն գործունեության և արարքների մեջ անձի ներգրավումը, որը կարող է համարվել շահագործում, սակայն մյուս կողմից դրանցում ներառվել են այնպիսիք, որոնք որոշակիության սկզբունքի առումով խոցելի են: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «**հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը**», որպես շահագործման տեսակ ներառելուն: Այս առումով առկա է անհստակություն, որը պետք է շտկվի հետագա օրենսդրական փոփոխություններով կամ օրենքի մեկնաբանություններով: Ինչ վերաբերում է նախկին իրավակարգավորմամբ կիրառված «օրգանները կամ հյուսվածքները վերցնելը» ձևակերպմանը, ապա նոր օրենքում այս դրույթը հստակեցվել է, դրանում ներառվել են ոչ միայն օրգանները կամ հյուսվածքները, այլև մարդու բջիջը, կենսաբանական նյութերը և հեղուկները: Նման իրավակարգավորումն ավելի ամբողջական է և իր մեջ ներառում է այս համատեքստում մարդու շահագործման հնարավոր դրսևորումների առավել լայն շրջանակ:

Հոդված 188-ի 5-րդ մասի իրավակարգավորումը՝ ի համեմատ նախկինի, գրեթե չի փոփոխվել և դրան անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Նոր քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը ենթարկվել է փոփոխությունների, որոնք հստակեցնում և ավելի հակիրճ են դարձնում նախկին ձևակերպումները: Առաջին փոփոխությունը, որին անդրադարձ կկատարենք՝ հոդվածի վերնագրի վերաձևակերպումն է: Նախկին «Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը» ձևակերպման փոխարեն այժմ կիրառվել է «**Երեխայի կամ անօգնական վիճակում**

**գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը**»: Այս փոփոխությունը պետք է հաջողված համարել, քանզի դրանում ներառվում է անօգնական վիճակում գտվող անձանց ավելի լայն շրջանակ՝ չկապելով այն բացառապես անձի որոշակի հոգեկան խանգարումների հետ: Անօգնական վիճակում՝ անձը կարող է հայտնվել ոչ միայն հոգեկան խանգարման, այլ նաև ֆիզիկական անլիարժեքության, հաշմանդամության, որոշակի հիվանդությունների և այլնի արդյունքում, իսկ նշված անձանց թրաֆիքինգին առանձին քրեաիրավական գնահատական չտալը սխալ մոտեցում է: Նոր քրեական օրենսգրքի հոդված 3-ի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է անօգնական վիճակում գտվող անձի հասկացությունը՝ «անօգնական վիճակում գտնվող՝ անձ, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը»: Ասվածի հիման վրա, հարկ է փաստել, որ նոր իրավակարգավորումն ավելի ամբողջական և համապարփակ կերպով սահմանում է քրեական պատասխանատվություն նշված խոցելի խմբերին թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկելու համար:

Հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված օբյեկտիվ կողմի դրսևորումները փոփոխությունների չեն ենթարկվել, իսկ ինչ վերաբերում է սանկցիային, ապա այն, մեր կարծիքով, անհարկի մեղմացվել է, քանի որ, ինչպես նախորդ հոդվածի պարագայում, այստեղ ևս լրացուցիչ պատիժ չի սահմանվել, ինչը չի կարող արդարացված համարվել:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքների շարադրանքում տեղի են ունեցել եզրութաբանական բնույթի փոփոխություններ, որոնց անդրադարձել ենք նախորդ հոդվածի քննարկման շրջանակներում: Հարկ է նկատել, որ նոր օրենքով չի նախատեսվել նախկին օրենսգրքի հոդված 132.2 հոդվածի 2-րդ մասի 1-ին (երկու կամ ավելի անձանց նկատմամբ) և 5-րդ կետերով (առևանգման միջոցով) նախատեսված ծանրացնող հանգամանքները և այդ ձևերով քննարկվող հանցանքը կատարելու պարագայում՝ արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ: Նոր քրեական օրենսգրքում նախատեսվել է սույն հանցակազմի նոր որակյալ տեսակ՝ «**մերձավոր ազգականի կողմից**», ինչը, կարծում ենք, արդարացված է, քանզի հատկապես նշված անձանց պարագայում՝ մերձավոր ազգականների կողմից քննարկվող հանցանքի կատարման թե՛ հավանականությունը և թե՛ վտանգավորությունը բարձր է, ինչին պետք է տրվի համապատասխան քրեաիրավական գնահատական:

**Շահագործման վիճակում գտնվող մարդու ծառայությունից օգտվելու** հանցակազմի պարագայում ևս՝ կատարված շտկումները հիմնականում եզրութաբանական բնույթի են: Նախկին օրենսգրքում կիրառված «Անձ» եզրույթի փոխարեն, նոր իրավակարգավորմամբ կիրառել է «Մարդ» եզրույթը: Հանցակազմի օբյեկտիվ և

սուբյեկտիվ տարրերը և հատկանիշները նույնական են: Նոր օրենքում ավելացվել են այլընտրանքային պատժատեսակներ՝ ազատության սահմանափակումը և կարճաժամկետ ազատազրկումը: Մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի համատեքստում, կարծում ենք, այս հանցատեսակի համար պատժողական քաղաքականությունը չափազանց մեղմ է և հետագայում այն պետք է վերանայվի՝ խստացման առումով:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքները վերախմբագրվել են, իսկ նախկինում նախատեսված «երկու կամ ավելի անձանց նկատմամբ» ծանրացնող հանգամանքը չի նախատեսվել, և նոր իրավակարգավորման պարագայում՝ երկու կամ ավելի անձանց նկատմամբ այս հանցանքը կատարելու դեպքում, արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ:

Վերաշարադրվել է հողվածում առկա խրախուսական նորմը: Նախկին քրեական օրենսգրքի հողված 132.3-ի 3-րդ մասը սահմանում էր՝ «Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է սույն հողվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում»: Նոր իրավակարգավորմամբ խրախուսական նորմն ունի հետևյալ բնորոշումը՝ «Իրավասու մարմիններին հանցագործությունից տուժած անձի շահագործման և նրա գտնվելու վայրի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է սույն հողվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»: Բացի լեզվաբանական շտկումներից՝ նոր օրենքում առկա ձևակերպումն աչքի է ընկնում մի կարևոր դրույթով, որը կապված է փաստացի արարքում այլ հանցակազմ պարունակելու հանգամանքի հետ: Նախկին ձևակերպումն անհաջող էր, և դրա պարագայում ստացվում էր, որ եթե փաստացի կատարածն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը չի ազատվի քրեական պատասխանատվությունից: Նոր ձևակերպումը շատ ավելի հստակ է և թույլ կտա իրապես նպաստել քննարկվող հանցատեսակի բացահայտման գործընթացին:

Նոր քրեական օրենսգրքի հողված 191-ի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում մարդուն առևանգելու համար: Նոր ձևակերպումն էականորեն տարբերվում է նախկինից, դրանում ավելացվել են հանցագործության կատարման նոր եղանակներ, ինչը թույլ կտա ապահովել անձի ազատության հիմնարար իրավունքի ավելի համապարփակ քրեաիրավական պաշտպանություն: Հարկ է նկատել, որ նոր ձևակերպումը, թեև նախկինի համեմատ ունի որոշակի առավելություններ, սակայն դրանում առկա են որոշակի խնդրահարույց տարրեր, որոնց կանդրադառնանք ստորև: Հողվածի նշված մասը սահմանում է՝ «Մարդուն առևանգելը՝ անձին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ

վայր տեղափոխելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները»: Նախկին օրենսգրքի հոդված 131-ի առաջին մասի համաձայն տրվում էր մարդուն առևանգելու հետևյալ բնութագիրը՝ «Խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները»: Այս ձևակերպման պարագայում ստացվում էր, որ օրինակ՝ եթե անձը փողոցում մանկահասակին սայլակի միջից վերցնի և այլ վայր տեղափոխի, ապա վերջինիս արարքում կբացակայի մարդուն առևանգելու հանցակազմը, քանի որ քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ արարք կամ հանցագործության կատարման եղանակ նրա կատարածը չի պարունակում: Նման ձևակերպումն անընդունելի էր և, այս համատեքստում, կատարված փոփոխությունը պետք է դրական գնահատել: Ինչպես նշվեց, նոր կարգավորումն ունի նաև որոշակի խնդրահարույց տարրեր: Բանն այն է, որ դրանում նախատեսված ձևակերպումը՝ «(...)անձին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ վայր տեղափոխելը(...)» պետք է պարունակեր դրա **ապօրինության** մասին նշում, այլապես ստացում է, որ վերը բերված օրինակում, եթե անօգնական վիճակում գտնվող մանկահասակին նրա կամքը հաշվի չառնելով այլ վայր են տեղափոխում ծնողները, ապա ձևական առումով առկա է հանցակազմ: Կարծում ենք, պետք է նախատեսել հետևյալ ձևակերպումը՝ «(...)անձին իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով **ապօրինաբար** այլ վայր տեղափոխելը(...)», որի պարագայում անձի առևանգման մասին խոսք կարող է գնալ միայն այն դեպքում, երբ վերջինս ապօրինաբար է այլ վայր տեղափոխվում՝ լուծելով նաև այն իրավիճակները, երբ անձի նկատմամբ օրինական բռնություն է գործադրվում և վերջինս այլ վայր է տեղափոխվում՝ օրինակ ձերբակալման կամ կալանավորման պարագայում: Նոր ձևակերպմամբ **որևէ նշում չկա խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի մասին, ինչպես նաև արարքը կատարելու գաղտնի կամ բացահայտ եղանակների մասին**, որպիսի պայմաններում՝ ցանկացած ապօրինի եղանակով անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով այլ վայր տեղափոխելը կառաջացնի առևանգման հանցակազմը, իսկ դրսևորած բռնությանը կամ դրա սպառնալիքին պետք է տրվի առանձին քրեաիրավական գնահատական՝ նոր քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործությունների որակման կանոններին համահունչ:

Որոշակի փոփոխությունների են ենթարկվել քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքները: Նոր քրեական օրենսգրքով նախատեսվել են ինչպես նախկին քրեական օրենսգրքում առկա ծանրացնող հանգամանքները՝ որոշ դեպքերում

վերախմբագրված , այնպես էլ նախատեսվել են նոր ծանրացնող հանգամանքներ: Եզրութաբանական շտկումներին սույն ուղեցույցի շրջանակներում անդրադարձ չի կատարվի, եթե դրանք ըստ էության չեն փոխում որակյալ տեսակի բնույթը կամ քննարկվել են նախորդ շարադրանքում: Որպես նոր ծանրացնող հանգամանքներ նախատեսվել են հոդված 191-ի 2-րդ մասի հետևյալ կետերը՝ «1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, 4) այլ անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով, 8) առևանգվածին ազատ արձակելու պայմանով պահանջ ներկայացնելով կամ 9) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով»: Քննարկվող որակյալ տեսակներն իրոք օժտված են բարձր հանրային վտանգավորությամբ և բնորոշ են քննարկվող հանցակազմին: Այս լույսի ներքո՝ դրանց նախատեսումը նպատակահարմար է թվում, իհարկե՝ որոշակի վերապահումներով: Մասնավորապես՝ որոշակի տարակուսանք է առաջացնում 4-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքը՝ **այլ անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով քննարկվող արարքը կատարելը**: Կարծում ենք, նման պարագայում արարքը կարող էր որակվել հանցագործությունների համակցությամբ և նշված որակյալ տեսակի սահմանումն աննպատակահարմար է և կարող է հանգեցնել տարամեկնաբանությունների:

Հարկ է անդրադարձ կատարել 8-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքին՝ «**առևանգվածին ազատ արձակելու պայմանով պահանջ ներկայացնելով**»: Նախկին իրավակարգավորմամբ՝ նման դեպքերը որակվում էին պատանդ վերցնելու հանցակազմով: Սակայն ոչ բոլոր պահանջ ներկայացնելու դեպքերն են, որ կարող են որակվել որպես պատանդ վերցնել: Կան իրավիճակներ, երբ հանցանք կատարած անձը փորձում է գործել հնարավորինս գաղտնի՝ պահանջ ներկայացնելով բացառապես տուժած անձի հարազատներին՝ ձգտելով խուսափել որևէ հանրային արձագանքից: Նման դեպքում խոսք չի կարող գնալ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործության մասին: Բացի դա՝ նոր իրավակարգավորմամբ՝ հոդված 315-ի 1-ին մասին համաձայն՝ պատանդ վերցնելը կամ պահելը հանցակազմն ունի հետևյալ ձևակերպումը՝ «Անձին պատանդ վերցնելը կամ պատանդ պահելը, որը կատարվել է պատանդին ազատելու պայմանով հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում

աշխատող անձին պաշտոնեական կամ ծառայողական գործունեության հետ կապված արարք կատարելուն կամ այդպիսի արարք կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով»: Ակնհայտ է, որ նոր իրավակարգավորմամբ մասնավոր անձին պահանջ ներկայացնելը կամ պաշտոնատար անձին կամ հանրային ծառայողին իր պաշտոնեական կամ ծառայողական գործունեության հետ **չկապված** արարք կատարելուն հարկադրելը՝ անգամ հանրային հնչեղություն ունենալու պարագայում, չի կարող որակվել որպես պատանդ վերցնել կամ պատանդ պահել: **Այս համատեքստում՝ քննարկվող ծանրացնող հանգամանքի նախատեսումը (հոդված 191-ի 2-րդ մասի 8-րդ կետ) անհրաժեշտ է և կարևոր:**

Անհրաժեշտ է քննարկել նաև նոր քրեական օրենսգրքի հոդված 191-ով նախատեսված՝ «մի խումբ անձանց կողմից» և «զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ» ծանրացնող հանգամանքները: Նախկին իրավակարգավորմամբ ևս առկա էին համանման ծանրացնող հանգամանքներ, որոնք, սակայն, վերախմբագրվել են և կատարված փոփոխությունը ոչ միայն եզրութաբանական բնույթ է կրում: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 131-ի 2-րդ մասի 1-ին կետը՝ որպես քննարկվող հանցակազմի որակյալ դրսևորում նախատեսում էր՝ «մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ», իսկ 3-րդ կետը՝ «զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ» հանցանքը կատարելը: Նոր կարգավորմամբ սահմանվել է «մի խումբ անձանց կողմից» ծանրացնող հանգամանքը, որն իր մեջ ներառում է թե՛ նախնական համաձայնությամբ և թե՛ առանց նախնական համաձայնության խմբի կողմից կատարվելու դեպքերը: Այս համատեքստում հարկ է նշել, որ տեղի է ունեցել խստացում, որն արդարացված է և, անկախ հանցակիցների պայմանավորվածության բնույթից, արարքը կորակվի քննարկվող ծանրացնող հանգամանքով: Ինչ վերաբերում է նոր օրենքով նախատեսված «զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ» ծանրացնող հանգամանքին, ապա այս համատեքստում պետք է նշել, որ կատարվել է մեղմացում, քանի որ, եթե նախկին իրավակարգավորմամբ քննարկվող որակյալ տեսակը կարող էր առաջացնել ցանկացած իր կամ առարկա որպես զենք գործադրելը, ապա նոր ձևակերպման պարագայում՝ այն պետք է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված լինի:

Նոր քրեական օրենսգրքով չի նախատեսվել «երկու կամ ավելի անձանց նկատմամբ» ծանրացնող հանգամանքը և այդ պարագայում արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ:

Որպես առավել ծանրացնող հանգամանք նախատեսվել է՝ «անզգուշությամբ



առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք», որն, ի տարբերություն նախկին օրենսգրքով նախատեսված իրավակարգավորման, ներառել է նաև **առողջությանը ծանր վնասի** պատճառումը: Մա թույլ կտա առաջացած հետևանքները գնահատելիս առավել ամբողջական համադրել դրանք թվարկված հետևանքներին համարժեք կամ համաբնույթ վտանգավորություն ներկայացնող հանգամանքների հետ:

Մարդուն առևանգելու հանցակազմի հատկանիշներին Վճռաբեկ դատարանը անդրադարձել է Սուրեն Մարգսյանի և Հարություն Դանոյանի գործով<sup>110</sup> և արտահայտել հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) *Մարդուն առևանգելն ազատության դեմ ուղղված հանցագործություններից է: Տվյալ հանցագործության հիմնական անմիջական օբյեկտն անձի անձնական, ֆիզիկական ազատությունն է: Որպես լրացուցիչ օբյեկտ հանդես է գալիս մարդու կյանքը, առողջությունը և այլն:*

*Մարդուն առևանգելու հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է անձին իր կամքին հակառակ կամ առանց իր կամքը հաշվի առնելու գաղտնի կամ բացահայտ բնական միկրոսոցիալական միջավայրից դուրս հանելով, այլ վայր տեղափոխելով և այնտեղ պահելով: Եթե անձին իր կամքին հակառակ առևանգելու դեպքում տուժողի կամքը ճնշվում է բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով, ապա առանց անձի կամքը հաշվի առնելու առևանգելու դեպքում տուժողի կամքը հաշվի չի առնվում և վերջինս առևանգվում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Ընդհանուր առմամբ, հողվածի դիսպոզիցիայի նկարագրությունից հետևում է, որ անձը կարող է առևանգվել խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով:*

*13.1 Առևանգման վերոնշյալ եղանակներից խաբեությունը դրսևորվում է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելով կամ որոշակի փաստեր, հանգամանքներ, իրադարձություններ թաքցնելով՝ նպատակ հետապնդելով տուժողին ապակողմնորոշելու, ներգործելու իր գտնվելու վայրն ընտրելու ազատ կամաարտահայտության վրա՝ այդ կերպ նաև խուսափելով նրա հնարավոր դիմադրությունից: Մասնավորապես, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ հայտնելով՝ հանցավորը նպատակ է հետապնդում գաղտնի՝ երրորդ անձանց բացակայությամբ, կամ բացահայտ՝ վերջիններիս ներկայությամբ, անձին իր կամքով գտնվելու վայրից տեղափոխելու և պահելու այլ վայրում: Տվյալ եղանակով առևանգման հանցակազմի հատկանիշների առկայությունը հաստատված համարելիս էական նշանակություն ունի տուժողի և հանցավորի փոխհարաբերությունների,*

<sup>110</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Սուրեն Մարգսյանի և Հարություն Դանոյանի գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ ԵԷԴ/0042/01/16 որոշումը:

առևանգմանն անմիջապես նախորդող հանգամանքների, տուժողին իր գտնվելու վայրից հանցավորի կողմից ընտրված վայր հասցնելու համար գործադրված միջոցի, տուժողին հայտնված՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության համակողմանի գնահատումը:

13.2 Սուբյեկտիվ կողմից առևանգումը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը պետք է գիտակցի անձին առևանգելու՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանա իր գործողություններով անձին իր գտնվելու վայրից խաբեությամբ, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնության գործադրման սպառնալիքի միջոցով գաղտնի կամ բացահայտ տեղափոխել այլ վայր և այնտեղ պահել: Որպես հանցագործության սուբյեկտ կարող է հանդես գալ 14 տարին լրացած, մեղսունակ ֆիզիկական անձը: (...):»:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված նշված դիրքորոշումները, նոր իրավակարգավորման պարագայում, որոշակի առումով կորցնում են իրենց այժմեականությունը և հրատապ անհրաժեշտություն կառաջանա մեկնաբանելու նոր իրավակարգավորումները:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 192-ը պատասխանատվություն է սահմանում մարդուն ազատությունից ապօրինի զրկելու համար: Հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի **188-րդ, 189-րդ, 191-րդ կամ 315-րդ հոդվածով նախատեսված հանցանքների** հատկանիշները(...)»: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 133-ի առաջին մասը սահմանում էր՝ «Մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, որն **առևանգելու** հետ կապված չէ(...)»: Ինչպես տեսնում ենք, նոր իրավակարգավորումն ավելի համապարփակ է և այսպես կոչված «բացառող» հանցակազմերի առավել լայն ցանկ է սահմանում: Սակայն հարկ է նկատել, որ ընդհանրապես՝ վիճելի է այն մոտեցումը, համաձայն որի քրեական օրենսգրքի հոդվածում նշվում են այն հանցակազմերը, որոնց բացառման պարագայում միայն արարքը կարող է որակվել քննարկվող հանցակազմով: Այս տրամաբանության պարագայում՝ յուրաքանչյուր հոդվածում պետք է նշվեն այն հնարավոր բոլոր հանցակազմերը, որոնց բացակայության պայմաններում միայն՝ արարքը կարող է որակվել տվյալ հանցակազմի հատկանիշներով, օրինակ՝ գողությունը նկարագրելիս, անհրաժեշտ է նշել, որ պետք է բացակայեն կողոպուտի, ավազակության և հափշտակության այլ տեսակների հատկանիշները: Այս մոտեցումն արդարացված համարվել չի կարող և պետք է հույս հայտնենք, որ օրենսդրության կատարելագործմանը զուգընթաց՝ նման դրույթները քրեական օրենսգրքի հոդվածներում հնարավորինս քիչ կնախատեսվեն: Նոր քրեական օրենսգրքը սահմանում է հանցագործությունների որակման բազմաթիվ կանոններ, որոնք թույլ կտան իրավակիրառողին հստակ սահմանազատել ընդհանուր և հատուկ

նորմերը, փաստական սխալի դեպքերը և, այս պարագայում, նման կառուցվածքի հանցակազմերի անհրաժեշտությունը բացակայում է:

Քննարկվող հոդվածի սանկցիան ևս ենթարկվել է որոշակի փոփոխության, ավելացվել է այլընտրանքային պատժատեսակ՝ «ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքները գրեթե նույնական են վերը նշված՝ մարդուն առևանգելու հանցակազմի հետ և դրանք կրկին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է: Ավելացված է «անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ» ծանրացնող հանգամանքը, ինչը պայմանավորված է նրանով, որ անօգնական վիճակն օգտագործելով մարդուն առևանգելն այդ հանցակազմի առաջին մասով նկարագրված արարքի դրսևորման ձևերից է, իսկ ազատությունից ապօրինի զրկելու պարագայում՝ սույն եղանակով արարքի կատարումը կարող է հանդես գալ որպես ծանրացնող հանգամանք:

Ազատությունից ապօրինի զրկելու հանցակազմին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Էրիկ Եղիսյանի գործով<sup>111</sup> և արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) [ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ] հոդվածի վերլուծությունից հետևում է, որ նախատեսված արարքով տուժողը փաստացի զրկվում է ազատ տեղաշարժվելու հնարավորությունից: Ընդ որում, անձին ազատությունից զրկելու նպատակի բացահայտումը կարևոր է ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածով նախատեսված արարքն այլ հանցակազմերից տարանջատելու համար: Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է մարդուն տեղափոխվելու, գտնվելու վայրն ընտրելու, այլ մարդկանց հետ շփվելու ազատությունից ապօրինաբար և նրա կամքին հակառակ զրկելով: Վերոնշյալ գործողությունները, սակայն, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի մի շարք այլ հանցակազմերում նախատեսված են որպես օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ մաս կամ հանցակազմն առավել որակյալ դարձնող հանգամանք: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել, թե որ դեպքում է ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածով նկարագրված արարքն ինքնուրույն քրեաիրավական որակում ստանում և որ դեպքում՝ կլանվում այն հանցակազմով, որի մասն է կազմում մարդուն ազատությունից ապօրինի զրկելը:

26.1. Վերոնշյալի համատեքստում անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված արարքի հատկանիշների առկայության դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածով սահմանված հանցակազմի հատկանիշների առկայության հարցին՝ հարկ է նշել, որ եթե անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառող վատ վերաբերմունքի դրսևորման եղանակն իր մեջ

<sup>111</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Էրիկ Եղիսյանի գործով 2021 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ ԼԴ1/0030/01/16 որոշումը:

*պարունակում է տուժողին ազատությունից զրկելու տարրեր և հանցավորի դիտավորությունն ուղղված է ոչ թե տուժողին ազատությունից զրկելուն, այլ այդ կերպ նրան հոգեկան ուժեղ տառապանք պատճառելուն, սպա հանցավորի արարքը լրացուցիչ չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածով: (...):»:*

Նշված դիրքորոշումը բավականաչափ վիճելի է, այն համատեքստում, որ նշված օրինակում անձն անխուսափելիորեն զրկվում է ազատությունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազատությունից ապօրինի զրկելը նախկին քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի իրականացման եղանակ չէ, կարծում ենք, որ այդ դեպքերում արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ, քանզի հանցավորը գիտակցում է, որ իր արարքի հետևանքով անձն անխուսափելիորեն զրկվում է ազատության հիմնարար իրավունքից, ընդ որում, այն պարագայում, երբ նշված հանցագործությունները չեն ոտնձգում համասեռ օբյեկտների դեմ: Ինչ վերաբերում է հանցավորի դիտավորության ուղղվածությանը, սպա այն կարող է հաշվի առնվել պատժի անհատականացման գործընթացում:

**Հոգեբուժական կազմակերպությունում ապօրինի տեղավորելու կամ պահելու հանցակազմը** նոր օրենսգրքով ենթարկվել է որոշակի եզրութաբանական փոփոխությունների: Հոդված 193-ի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում հոգեբուժական կազմակերպությունում օրենքով սահմանված կարգի խախտմամբ տեղավորելու կամ պահելու համար: Նախկին իրավակարգավորմամբ սահմանվում էր՝ «Հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը»:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 193-ի բլանկետային դիսպոզիցիան համապատասխանեցվել է ՀՀ գործող օրենսդրությանը: Այսպես՝ 2020 թվականի հունիսի 18-ին ընդունված «Հոգեբուժական օգնության մասին» 2004 թվականի մայիսի 25-ի ՀՕ-80-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի հոդված 3-ի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է՝ «**հոգեբուժական կազմակերպություն**՝ համապատասխան տեսակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող պետական կամ համայնքային հիմնարկ, որը տրամադրում է հոգեբուժական օգնություն և սպասարկում հիվանդանոցային և (կամ) արտահիվանդանոցային ձևով»:

Քննարկվող քրեաիրավական նորմի սանկցիան էապես մեղմացվել է, նախատեսվել են նաև ազատագրկման այլընտրանքային պատժատեսակներ՝ ազատության սահմանափակում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, ինչպես նաև կարճաժամկետ ազատագրկում՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Ազատագրկման ժամկետը չի փոփոխվել՝ «առավելագույնը 3 տարի ժամկետով»: Այս մեղմացումը ևս դժվար է արդարացված համարել, քանի որ խոսքը գնում է ոչ միայն

անձի ազատության հիմնարար իրավունքի ապօրինի սահմանափակման, այլն նրան հատուկ կազմակերպությունում տեղավորելու մասին, որտեղ կատարված անօրինական բժշկական ներգործությունը կարող է էապես խաթարել անձի ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Ավելացվել է նոր ծանրացնող հանգամանք՝ «մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ» կատարելը, ինչպես նաև նախատեսվել է առանձնապես ծանրացնող հանգամանք՝ «հանցավոր կազմակերպության կողմից» կատարելը, ինչը պետք է արդարացված համարել, ելնելով՝ քննարկվող արարքի բնույթից և խմբի կողմից այն կատարելու վտանգավորության բարձր աստիճանից:

Այլ որակյալ տեսակները առկա էին նախկին օրենսդրությամբ, նոր օրենքով շտկվել են դրանց ձևակերպումները:

Քանի որ նոր քրեական օրենքով առանձնացվել են հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող տեսակներ, պետք է փաստել, որ ծանրացնող հանգամանքների սանկցիան (պատժվում է ազատազրկմամբ՝ **երեքից վեց** տարի ժամկետով) ավելի մեղմ է՝ նախկին օրենքում նախատեսվածից (պատժվում է ազատազրկմամբ՝ **չորսից ութ տարի ժամկետով**՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա), իսկ առավել ծանրացնող տեսակինը՝ ավելի խիստ (ազատազրկմամբ՝ **հինգից տասը** տարի ժամկետով), ինչը ևս ճիշտ մոտեցում է քննարկվող հանցատեսակի պարագայում:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 194-ի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում **հոգեկան ներգործության** համար: Նշված հոդվածում տրված է հետևյալ ձևակերպումը՝ «Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը»: Տրված բնորոշման մեջ նկատելի են զգալի տարբերություններ նախկին իրավակարգավորումից: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 137-ը պատասխանատվություն էր սահմանում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի համար, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափը»: Ստացվում էր մի **անհեթեթ իրավիճակ**, երբ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի համար անձը ենթակա էր քրեական

պատասխանատվության, իսկ առանձնապես խոշոր չափի գույքի ոչնչացման սպառնալիքի համար՝ ոչ: Նոր իրավակարգավորումը շտկել է այդ բացը, նախատեսելով նաև առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը: Բացի այդ, սահմանվել են սպառնալիքի նոր դրսևորումներ, որոնց պարագայում դրանք տվող անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Խոսքը՝ **առողջությանը ցանկացած վնաս պատճառելու** (այլ ոչ թե նախկին իրավակարգավորմամբ սահմանված բացառապես ծանր վնաս պատճառելու) խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու սպառնալիքների մասին է, որոնք, իրավամբ, իրենց վտանգավորությամբ չեն զիջում, իսկ որոշ դեպքերում էլ՝ գերազանցում են նախկին օրենսգրքով սահմանված սպառնալիքների վտանգավորությանը:

Նոր օրենսգրքում նախատեսվել են նաև քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի նոր դրսևորումներ՝ **«ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը»**: Հանրորեն վտանգավոր արարքի նման դրսևորումների նախատեսումը տարակուսանք են առաջացնում իրենց անորոշությամբ և կարող են հիմք հանդիսանալ բազմաթիվ տարամեկնաբանությունների և օրենքի կամայական կիրառման համար և, մեր կարծիքով, դրանք պետք է լրամշակվեն և վերախմբագրվեն: Առկա իրավակարգավորման պարագայում՝ որպես սոցիալական մեկուսացման օրինակ կարող է ծառայել այն իրավիճակը, երբ որոշակի ռեֆերենտային խմբի շրջանակներում մի խումբ անձիք նախաձեռնում են ընդհանրապես չշփվել տուժածի հետ, արհամարհել նրան, ինչը կարող է հոգեկան լուրջ տառապանքներ պատճառել վերջինիս: Ամեն դեպքում՝ նշված նորմի որոշակիության հետ կապված առկա են խնդիրներ և գործնականում դրա կիրառությունը բավականին բարդ է լինելու:

Հոդվածում նախատեսվել են բազմաթիվ ծանրացնող հանգամանքներ, որոնք այս կամ այն համատեքստում քննարկվել են սույն ուղեցույցի շրջանակներում և դրանց լրացուցիչ մեկնաբանության անհրաժեշտությունը բացակայում է:

Նախկին քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանը Վլադիկ Խաչատրյանի գործով<sup>112</sup> արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(...) Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության սպառնալիքի հետ մեկտեղ այն պատասխանատվություն է նախատեսում առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու իրական սպառնալիքի համար: Այսինքն՝ նշված հանցակազմի օբյեկտը հավաքական բնույթ է կրում, այն բաղկացած է մարդու կյանքի և*

<sup>112</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Վլադիկ Խաչատրյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԿԴ1/0025/01/11 որոշումը:

առողջության, ինչպես նաև սեփականության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից:

Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքով: Մպառնալիքը մարդու նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որը նպատակ է հետապնդում վախեցնել նրան, առաջացնել տագնապի, սեփական անվտանգության կամ գույքի համար անհանգստության զգացում: Այս հանցակազմի իմաստով սպառնալիքի արտահայտման եղանակները կարող են տարբեր լինել, ինչն արարքի որակման համար նշանակություն չունի: Այն կարող է արտահայտվել բանավոր, գրավոր, որոշակի գործողություններով (օրինակ՝ զենքը ցուցադրաբար թափահարելով):

ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը ձևական է, այսինքն՝ հանցանքն ավարտված է համարվում սպառնալիքը տալու պահից: Հնարավոր են դեպքեր, սակայն, երբ սպառնալիքը տրվել է գրավոր ձևով, և այն ինչ-որ պատճառով չի հասել հասցեատիրոջը: Նման դեպքերում հանցանքն ավարտված կհամարվի այն ժամանակ, երբ տուժողը ծանոթանա սպառնալիքի բովանդակությանը:

18. Քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից են սպառնալիքի կոնկրետությունը և իրական լինելը: Տվյալ դեպքում կոնկրետությունը ենթադրում է այն հանգամանքի հստակեցում, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը՝ սպանել, առողջությանը ծանր վնաս պատճառել, թե խոշոր չափի գույքային վնաս հասցնել: Ընդ որում, սպառնալիքի իրականացման եղանակների մասին հայտարարելը արարքի որակման համար նույնպես նշանակություն չունի:

Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև սպառնալիքի իրական լինելը հավաստելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, սակայն արարքի որակման համար այն անհրաժեշտ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Հնարավոր են դեպքեր, երբ օբյեկտիվ իրադրությունը հիմք չի տալիս սպառնալիքն իրական գնահատելու համար, սակայն անձն իր հոգեկան լարված վիճակի, հոգեկան առանձնահատկությունների կամ այլ պատճառներով իրականությունը խեղաթյուրված է ընկալում՝ կարծելով, թե սպառնալիքն իրական է: Օբյեկտիվ իրադրության գնահատումը ենթադրում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են սպառնալիքի բովանդակությունը, սպառնալիք տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, հանցավորի և տուժողի միջև հարաբերությունների բնույթը, հանցավորի անձը և այլն: Հետևաբար սպառնալիքի

իրական լինելու հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է լուծվի՝ գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով:

19. Սուբյեկտիվ կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով արգելված արարքը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք տալով՝ տուժողի վրա հոգեբանական ազդեցություն է գործադրում՝ վերջինիս մոտ առաջացնելով վախի, անվստահության զգացողություն, նախատեսում և ցանկանում է նշված հետևանքների առաջացումը: Հանցագործության շարժառիթները կարող են տարբեր լինել՝ վրեժ, խանդ, անձնական անբարյացկամ հարաբերություններ և այլն:

20. Այսպիսով, (...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության փորձի ժամանակ հանցավորի դիտավորությունն ուղղված է տուժողին կյանքից զրկելուն, և նա այդ ուղղությամբ որոշակի գործողություններ է կատարում, սակայն հանցագործությունը մինչև վերջ չի հասցնում՝ իր կամքից անկախ հանգամանքներով (զոհի ակտիվ դիմադրություն, այլ անձանց միջամտություն, տուժողին ժամանակին բժշկական օգնություն ցույց տալ և այլն): Այլ խոսքով՝ սպանության փորձի ժամանակ սպանության հանցակազմի օբյեկտիվ կողմի կատարումը սկսվում է, սակայն հետևանքը՝ տուժողի մահը, վրա չի հասնում հանցավորի կամքից անկախ պատճառներով: Մինչդեռ սպանության սպառնալիքի պարագայում հանցավորի գործողությունները սահմանափակվում են միայն այս կամ այն կերպ սպառնալիք տալով, իսկ նրա դիտավորությունն ուղղված է տուժողի հոգեկան առողջությանը վնաս պատճառելուն՝ նրա մոտ սեփական կյանքի համար տազնապի զգացողության առաջացմանը: Այսինքն՝ սպանության սպառնալիքը ենթադրում է միայն հոգեբանական բռնություն, այլ ոչ թե ֆիզիկական (...):»:

Պետք է նշել, որ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված նշված դիրքորոշումները նոր իրավակարգավորմամբ որոշակի առումով շարունակում են արդիական մնալ, սակայն, հաշվի առնելով կատարված փոփոխությունները՝ հետագայում անհրաժեշտություն կառաջանա նոր լույսի ներքո մեկնաբանելու քննարկվող հանցակազմը:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 195-ը պատասխանատվություն է սահմանում ֆիզիկական ներգործության համար: Նշված հոդվածի առաջին մասը սահմանում է՝ «Հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը, եթե չեն առաջացել սույն օրենսգրքի 171-րդ հոդվածով նախատեսված հետևանքները(...)»: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 118-ում տրված էր հետևյալ ձևակերպումը՝ «Ծեծելը կամ այլ բռնի գործողություններ կատարելը, որը չի առաջացրել սույն օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ(...)»:



Առաջին հանգամանքը, որի վրա պետք է ուշադրություն դարձնել նշված հանցակազմերի համեմատական վերլուծության արդյունքում այն է, որ նոր իրավակարգավորմամբ փոխվել է քննարկվող հանցագործության տեսակային օբյեկտը: Նախկինում այն նախատեսված էր քրեական օրենսգրքի «Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում, իսկ նոր իրավակարգավորմամբ նախատեսվել է «Ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում: Այս փոփոխությունը հազիվ թե կարելի է հաջողված համարել, քանի որ ֆիզիկական ներգործության պարագայում վտանգվում են առաջին հերթին մարդու կյանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները, իսկ այն հանգամանքը, որ չպետք է առաջանան օրենսգրքի 171-րդ հոդվածով (Առողջությանը թեթև վնաս պատճառելը) նախատեսված հետևանքները, ամենին չի նշանակում, որ առողջությունը կամ կյանքը մարդուն հարվածներ հասցնելով կամ բռնի այլ գործողություններ կատարելով չի վտանգվում:

Հարկ է նշել նաև, որ 195-րդ հոդվածով նախատեսված հանցակազմով սահմանվել են մի շարք որակյալ տեսակներ, որոնց քննարկմանն անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 196-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ **«Անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը**, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 166-րդ կամ 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները(...)»:

Համանման իրավակարգավորում նախատեսված էր նաև նախկին քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով:

Նախորդ հանցակազմը քննարկելիս՝ հանցագործության օբյեկտին առնչվող դիտարկումներն արդիական են նաև սույն հանցակազմի համատեքստում:

Նոր իրավակարգավորմամբ՝ վերաձևակերպվել են ծանրացնող հանգամանքները, վերաձևակերպվել է՝ հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ ծանրացնող հանգամանքը, ինչպես նաև առանձին նախատեսվել է առևանգված կամ որպես պատանդ վերցված անձի նկատմամբ, որակյալ տեսակները, իսկ երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելու որակյալ տեսակը չի նախատեսվել, որպիսի պարագայում՝ արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ:

Մինևույն ժամանակ՝ հարկ է նկատել, որ թե՛ նախկին և թե՛ նոր իրավակարգավորումներն աչքի են ընկնում անորոշությամբ և անհստակությամբ: Բավարար է նշել միայն, որ ցավի ընկալումը տարբեր մարդկանց մոտ խիստ յուրահատուկ է, բացակայում է դրա միանշանակ չափորոշիչը, այն արարքը, որը մեկ

անձին կարող է ուժեղ ցավ պատճառել, մյուսի համար կարող է այդպիսին չհանդիսանալ՝ կախված անձի ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկություններից:

«Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը» հանցակազմը Վճռաբեկ դատարանը վերլուծել է Էրիկ Եդինյանի գործով<sup>113</sup>, համաձայն որի՝ «(...) Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ներպետական օրենսդրության մակարդակով օրենսդրի կողմից 2015 թվականի հունիսի 9-ի՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-69-Ն օրենքի ընդունմամբ հստակ տարբերակվեց հանրային իշխանության ներկայացուցիչների և մասնավոր անձանց կողմից խոշտանգման կամ այլ վատ վերաբերմունքի դրսևորման քրեաիրավական որակումները: Մասնավորապես, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածը, համապատասխանեցվելով «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայով սահմանված պահանջներին, նախատեսում է քրեական պատասխանատվություն պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի խոշտանգելու համար, ապա մասնավոր անձանց համարժեք գործողությունների դեպքում վերջիններիս արարքը ենթակա է քննարկման ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված՝ ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի պատճառման հանցակազմի համատեքստում, որը չունի հատուկ սուբյեկտ: Նշված պատճառաբանությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները կարող են առաջանալ միայն այն դեպքում, երբ անձի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի հանցակազմի տարրերը:

ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի օբյեկտը հավաքական բնույթ է կրում, այն բաղկացած է մարդու կյանքի և առողջության, ինչպես նաև անձի հոգեբանական և բարոյական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից:

Ընդ որում, ուշագրավ է, որ քննարկվող հոդվածում օրենսդիրը չի կոնկրետացրել, թե ինչ գործողությունների ձևով կարող է արտահայտվել հանցակազմի պարտադիր հատկանիշ՝ հանրորեն վտանգավոր գործողությունը (անգործությունը)՝ սահմանափակվելով հանրության համար վտանգավոր հետևանքների շրջանակի ընդգծմամբ (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու այլընտրանքային հետևանքներով), որոնց առաջացման դեպքում արարքը կարող է

<sup>113</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Էրիկ Եդինյանի գործով 2021 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ ԼԴ1/0030/01/16 որոշումը:

որակվել նշված հոդվածով: Հասկանալի է նաև այն, որ ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի, որտեղ նշված են հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման հնարավոր ձևերը, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով հանցակազմի օբյեկտիվ կողմը ներառում է անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելուն ուղղված ցանկացած գործողություն (անգործություն):

18. Անդրադառնալով ֆիզիկական ուժեղ ցավի և հոգեկան ուժեղ տառապանքի բովանդակությանը՝ պարզ է դառնում, որ «ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի» տարրի բովանդակության գնահատման չափանիշների որոշակիացումը շարունակում է մնալ արդիական ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակում, մասնավորապես՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածում և փոխկապակցված միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, այդ թվում՝ Եվրոպական կոնվենցիայի ժամանակակից մեկնաբանություններում: Այս առումով հարկ է նշել, որ հենց ֆիզիկական ցավի ու հոգեկան տառապանքի ուժգնության աստիճանն է այն հիմնական չափանիշը վատ վերաբերմունքի դրսևորման ձևերը տարբերակելու և համապատասխան քրեաիրավական գնահատական տալու համար:

Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների վերաբերյալ զեկույցում նշվում է, որ «հոգեբանական խոշտանգումը» պետք է մեկնաբանվի՝ ներառելով բոլոր այն մեթոդները, միջոցները և հանգամանքները, որոնք միտված են կամ նախատեսված են ուժեղ հոգեբանական ցավ կամ տառապանք նպատակապես հասցնելու համար՝ առանց ուժեղ ֆիզիկական ցավի կամ տառապանքի պատճառման կամ դրա ազդեցության օգտագործման: Իսկ «ֆիզիկական խոշտանգումը» պետք է մեկնաբանվի այնպես, որ ներառի բոլոր մեթոդները, միջոցները և միջավայրերը, որոնք միտված են կամ նախատեսված են ուժեղ ֆիզիկական ցավ կամ տառապանք առաջացնելու համար՝ անկախ հոգեկան ցավի կամ տառապանքի զուգահեռ պատճառումից<sup>14</sup>:

19. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված՝ «ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի» այլընտրանքային հետևանքների առաջացումը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ՝

- ցավի առկայությունը չի պահանջում, որ պարտադիր այն լինի ծայրահեղ, երկար, մշտական, սուբյեկտի համար դժվար դիմանալու, չպետք է ներառի մահ, օրգանի անբավարարություն կամ որոշակի ֆունկցիայի լուրջ խանգարում, ուժեղ ցավը կարող է նաև կարճատև լինել,

- ուժգնությունը կարող է առաջանալ անհատական մեթոդից կամ մեթոդների

<sup>14</sup> Տե՛ս ՄՄԿ-ի խոշտանգումների վերաբերյալ Հատուկ զեկուցողի թեմատիկ զեկույցը, A/HRC/43/49, կետ 19:

կուտակումից կամ համադրությունից (ինչպես սովորաբար ցավ է պատճառվում), որը տեղի է ունենում մի առիթով կամ որոշակի ժամանակահատվածում,

- հոգեկան տառապանքը կարող է ուժեղ լինել՝ առանց գուգակցվելու ֆիզիկական ցավի հետ:

Միաժամանակ, ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի ուժգնության աստիճանը գնահատելիս կարևոր է նաև «խստության նվազագույն մակարդակի» թեսթի օգտագործումը, որը կիրառվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Դատարանը նշել է, որ դաժան վերաբերմունքը պետք է ուժգնության նվազագույն մակարդակի հասնի, որպեսզի դիտարկվի 3-րդ հոդվածի շրջանակներում: Ուժգնության նվազագույնի գնահատումը հարաբերական է. Դա կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են՝ բուժման տևողությունը, դրա ֆիզիկական և մտավոր ազդեցությունները և, որոշ գործերով, զոհի սեռը, տարիքը և առողջական վիճակը<sup>115</sup>: Նշվածի հաշվառմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի շրջանակներում գործողությունը (անգործությունը) որպես ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառող վերաբերմունք դիտարկելու համար այն պետք է ունենա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կիրառվող չափանիշներին համարժեք խստության նվազագույն աստիճան:

20. Սույն որոշման 17-19-րդ կետերում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով նաև ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի ուժգնության աստիճանի և այն որակյալ դարձնող՝ նույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված՝ առանձին դաժանության հարաբերակցությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինքնին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու յուրաքանչյուր դեպք կրում է դաժանության հատկանիշներ: Մինչդեռ առանձին դաժանությունն անզթության, անողորմության, վայրագության և անխղճության դրսևորման բարձր աստիճանն է, որը գուգակցվում է հանրության համար վտանգավոր արարքի կատարման հետ և ուղղված է տուժողին առանձնակի տանջալից սպրումներ պատճառելու եղանակով հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացմանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «առանձին դաժանություն» հասկացությունը գնահատողական կատեգորիա է և որոշվում է միայն գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ հետազոտելու արդյունքում: Քննարկվող հանցակազմի իմաստով, առանձին դաժանությունը կապված է այն հանգամանքների ամբողջության հետ, որոնք վկայում են հանցավորի կողմից դաժանության բարձր աստիճանին հասնող վերաբերմունքի դրսևորման դիտավորության մասին: Այս

<sup>115</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Labita v. Italy* [GC] գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, զանգատ թիվ 26772/95, կետ 120:

առումով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հանցավորը պետք է գիտակցի արարքի առանձին դաժանության բնույթը, նախատեսի ոչ միայն ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք, այլև տուժողին առանձնակի տանջալից ապրումներ պատճառելու փաստը, ինչպես նաև ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա տուժողին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու հենց նման բնույթը: Այլ խոսքով՝ առանձին դաժանությամբ անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելիս հանցավորը պետք է գիտակցի արարքի առանձին դաժանության բնույթը, նախատեսի առանձին դաժանությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը և ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա դրանք: Հետևաբար, քննարկվող որակյալ հանցակազմը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Ուստի, վերոնշյալ հանգամանքների համակցության գնահատման արդյունքում միայն հնարավոր է սահմանազատել ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի ուժգնության աստիճանն այն որակյալ դարձնող՝ նույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված՝ առանձին դաժանությամբ ֆիզիկական ուժեղ ցավի կամ հոգեկան ուժեղ տառապանքի պատճառման աստիճանից:

21. Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասին 3-րդ կետով նախատեսված՝ հանցավորից նյութական կախվածություն ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու որակյալ հատկանիշին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դրա առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է պատշաճ իրավական գնահատման ենթարկել տուժողի և հանցավորի փոխհարաբերություններն փաստացի բնույթը:

Այսպես՝ նյութական կախվածության դեպքում տուժողը ֆինանսական կախվածության մեջ է գտնվում հանցավորից: Ընդ որում, նյութական կախվածությունն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ տուժողը ֆինանսական տեսանկյունից ուղղակիորեն կախված է լինում հանցավորից, այլև, երբ տուժողի համար նախատեսված նյութական օգնությունը կամ եկամուտն ամբողջությամբ կամ դրա էական մասը տնօրինվում է հանցավորի կողմից: Ուստի, նշված դեպքերում կախվածության առկայության վերաբերյալ հարցը լուծելիս միշտ պետք է հիմնվել հանցավորի և տուժողի միջև գոյություն ունեցող փաստական հարաբերությունների բնույթի և բովանդակության վրա (...):»:

ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված նշված դիրքորոշումները, նոր իրավակարգավորման պարագայում չեն կորցնում իրենց արդիականությունը:

Քրեական նոր օրենսգրքի 197-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում **ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն**

**հարկադրելու** համար: Նշված հոդվածի առաջին մասի դիսպոզիցիան ունի հետևյալ բովանդակությունը՝ «Բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, շանտաժի, արժանապատվությունը նվաստացնելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ հարկադրանքի այլ եղանակով անձին ամուսնությանը կամ ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելը(...)»:

Նախկին քրեական օրենսգրքով համանման հանցակազմ նախատեսված չէր:

## Գլուխ 27

### ՍԵՌԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքով անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցատեսակները ենթարկվել են արմատական փոփոխությունների: Նոր իրավակարգավորմամբ՝ մի շարք հանցակազմեր ստացել են այլ ձևակերպումներ, միավորվել են բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերը, նախատեսվել է նոր հանցակազմ՝ 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկելը (գրումինգ): Բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցատեսակների միավորումը կապված է այն հանգամանքի հետ, որ բռնաբարությունը, ըստ էության, հանդիսանում է սեքսուալ բնույթի բռնի գործողության տարատեսակ:

Այսպիսով, նոր քրեական օրենսգրքում պատասխանատվություն է սահմանվում **սեքսուալ բնույթի բռնի գործողությունների համար**: Հողված 198-ի առաջին մասի համաձայն՝ «Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»: Այս հանցակազմում միավորվել են ինչպես բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, այնպես էլ բռնի կամ անօգնական վիճակն օգտագործելով անառակաբարո գործողությունների հանցակազմերը, քանի որ որպես օբյեկտիվ կողմի դրսևորում նախատեսվել է նաև սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք բնորոշ են անառակաբարո գործողությունների հանցակազմին այն տարբերությամբ, որ այս պարագայում պատասխանատվություն է սահմանվում նման գործողությունների համար՝ չսահմանվելով տարիքային շրջանակ, իսկ անչափահասների և մանկահասակների պարագայում նախատեսվում է առավել խիստ պատասխանատվություն:

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ այլ տարրերն ու հատկանիշները գրեթե նույնական են նախկին իրավակարգավորման հետ, և դրանք առանձին քննարկելու անհրաժեշտություն չկա:

Հողված 198-ի 2-րդ մասով սահմանվել են մի շարք նոր ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև որոշակի վերաձևակերպումների են ենթարկվել նախկին քրեական օրենսգրքի հողվածներ 138-ով և 139-ով նախատեսված ծանրացնող հանգամանքները: Նոր ձևակերպում ստացած որակյալ տեսակները սույն համատեքստում չենք քննարկի, անդրադարձ կկատարվի նոր ծանրացնող հանգամանքներին, դրանք են՝ «մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ, նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ»: Նշված անձանց կողմից և տուժած անձանց քննարկվող շրջանակի նկատմամբ հանցանքը կատարելն իրոք օժտված է ավելի բարձր հանրային վտանգավորությամբ, և քննարկվող որակյալ տեսակների սահմանումն արդարացված է:

Հողված 198-ի 3-րդ մասով սահմանվում է՝ «Սույն հողվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է 18 տարին չլրացած անձի նկատմամբ վերընթաց ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն,

2) կատարվել է 12-ից 14 տարին չլրացած անձի նկատմամբ կամ

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ հոգեկան խանգարում կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք»: Նշված ծանրացնող հանգամանքների նախատեսումն արդարացված է: Վերընթաց ազգականի հասկացությունը տրված է 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՀ ընտանեկան օրենսգրքի հողված 11-ի բ) կետով՝ «մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) (...): Նախկին քրեական օրենսգրքով անզգուշությամբ մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ առաջացնելը նախատեսված էր որպես ծանրացնող հանգամանք, նոր օրենսգրքը, արդարացիորեն, այն նախատեսել է որպես առավել ծանրացնող հանգամանք՝ ավելացնելով նաև «առողջությանը ծանր վնասի պատճառում կամ հոգեկան խանգարում կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք» ձևակերպումը, ինչը հետևանքների շրջանակն ընդլայնում է և դյուրինացնում հանցագործությունների որակման գործընթացը:

Քննարկվող հողվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության



նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 12 տարին չլրացած անձի նկատմամբ (...): Նշված նորմը կոչված է ապահովելու մանկահասակների սեռական անձեռնմխելիության առավել համապարփակ և խիստ քրեակիրավական պաշտպանություն, իսկ դրա նախատեսումը, անշուշտ, արդարացված է:

Հոդված 198-ի 5-րդ մասում նշվում է՝ **«Սույն հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը»:** Նախկին իրավակարգավորմամբ՝ 138-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում էր՝ **«Սույն օրենսգրքի 138-րդ և 139-րդ հոդվածների իմաստով անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, որը որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը»:**

Նախկին ձևակերպմամբ նշվում էր՝ «որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել» արտահայտությունը, որն այնքան էլ որոշակի չէր, և անհրաժեշտություն էր առաջանում պարզելու այդ «որոշակի» հանգամանքները, ինչպես նաև դրանց «մշտապես կամ ժամանակավորապես» լինելու հանգամանքը, ինչը լրացուցիչ խոչընդոտներ կարող էր առաջացնել իրավակիրառողների համար: Իրավացիորեն հանվել է նաև «կամ հասկանալու» ավելորդ եզրույթը:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 199-ի 1-ին մասը սահմանում է՝ «Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի կամ նույն եղանակներով նրան սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ կամ 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները (...): Ինչպես տեսնում ենք, նոր օրենսդրությամբ կատարվել են մի շարք փոփոխություններ, վերախմբագրվել է հոդվածի վերտառությունը, նախկին՝ «Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը» (նախկին քրեական օրենսգրքի հոդված 140) ձևակերպման փոխարեն, կիրառվել է ավելի հակիրճ՝ «Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը» ձևակերպումը, քանի որ, ինչպես վերն արդեն նշվեց, բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների

հանցակազմերը նոր քրեական օրենսգրքով միավորվել են և բնական սեռական հարաբերության կամ այլ կերպ դրսևորված սեքսուալ բնույթի գործողությունների միջև օրենսդրորեն տարբերություն չի դրվում, այդ իսկ պատճառով՝ առանձին սեռական հարաբերության մասին նշումը սույն հոդվածի վերտառությամբ այժմ անատարկայական է: Ընդլայնվել է քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարվող արարքների շրջանակը, սեքսուալ բնույթի գործողությունների համատեքստում նշվել է նաև **սեռական հարաբերության նմանակման կամ սեռական կարիքների բավարարման մասին**, իսկ նախկին իրավակարգավորմամբ սահմանված «այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն» ձևակերպումը նոր օրենսգրքում չի օգտագործվել, քանի որ համասեռական գործողությունները ևս հանդիսանում են սեքսուալ բնույթի գործողություններ, և դրանց առանձին շեշտադրման անհրաժեշտությունը բացակայում է:

Որոշակի առումով խնդրահարույց է քննարկվող հանցագործության կատարման նոր եղանակների նախատեսումը: Այսպես՝ բացի նախկին օրենսդրությամբ նախատեսված եղանակներից, հոդված 199-ով նախատեսված արարքը կարող է կատարվել նաև «**առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի**»: Առանց անձի համաձայնության սեռական հարաբերությունները որոշ երկրների քրեական օրենսդրությամբ համարվում են բռնաբարություն, օրինակ՝ Ուկրաինայի քրեական օրենսգրքի հոդված 152-ի համաձայն՝ բռնաբարություն է համարվում «Սեռական բնույթի գործողություններ կատարելը, որոնք կապված են սեռական օրգանների կամ որևէ այլ առարկայի միջոցով այլ անձի մարմին հեշտոցային, անալ կամ օրալ ներթափանցման հետ՝ առանց տուժողի կամավոր համաձայնության (բռնաբարություն)»<sup>116</sup>:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի համաձայն՝ **առանց** հանցագործությունից տուժած անձի **համաձայնության ողջամիտ համոզմունքի** վերջինիս նկատմամբ վերը նշված գործողությունների կատարումը համարվում է ոչ թե բռնաբարություն, այլ սեռական բնույթի գործողություններին հարկադրել, ինչն ավելի ճիշտ մոտեցում է և թույլ է տալիս բռնությամբ, դրա սպառնալիքով կամ տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով սեռական բնույթի գործողությունների վտանգավորությունը սահմանազատել պարզապես առանց նրա համաձայնության սեքսուալ բնույթի գործողություններից:

Անհրաժեշտ է նշել նաև, որ նոր քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածով, ի տարբերություն նախկինի, պատասխանատվություն է սահմանվել ոչ միայն թվարկված գործողություններ կատարելուն հարկադրելու, այլ նաև դրանք անմիջականորեն կատարելու համար: Այս նորամուծությունը էական համարվել չի կարող, քանի որ սա

<sup>116</sup> <https://meget.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks/razdel-1-4/>

հատված հանցակազմ է և արդեն իսկ նման եղանակով հարկադրելու պահից համարվում է ավարտված, անկախ այն հանգամանքից՝ այդ հարկադրանքը հանգեցրել է թվարկված գործողությունների կատարմանը՝ թե ոչ:

Քրեական օրենսգրքի հոդված 199-ի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված են քննարկվող հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող տեսակները, որոնք քննարկվել են սույն ուղեցույցի շրջանակներում և դրանց կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 200-ը պատասխանատվություն է սահմանում **16 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու** համար: Նշված հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Մեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ **սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը**, որոնք կատարվել են 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձի նկատմամբ, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ, 198-րդ կամ 199-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները (...)»:

Խստացվել է այս հանցատեսակի համար ազատազրկման ձևով նախատեսված պատիժը՝ նախատեսելով մինչև երեք տարի՝ նախկին երկու տարվա փոխարեն: Նախատեսվել են նաև այլընտրանքային պատժատեսակներ՝ ազատության սահմանափակում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով և կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Օրենսդիրն արդարացիորեն հրաժարվել է տուգանք պատժատեսակից, քանի որ անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցատեսակների պարագայում այս պատժատեսակի նախատեսումն աննպատակահարմար է և չի կարող նպաստել պատժի նպատակների կենսագործմանը:

Նախատեսվել են նաև սույն հանցակազմի մի շարք ծանրացնող հանգամանքներ, սակայն դրանք արդեն իսկ քննարկվել են սույն ուղեցույցի շրջանակներում:

Քննարկվող հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է՝ «Սույն հոդվածով նախատեսված սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, միննույն անձի կողմից միննույն անձի նկատմամբ մեկից ավելի անգամ կատարելը որակվում է որպես մեկ հանցագործություն»: Հարկ է նշել, որ նախկին քրեական օրենսգրքի հոդված 141-ի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ որպես ծանրացնող հանգամանք նախատեսված էր միննույն անձի նկատմամբ քննարկվող հանցանքը պարբերաբար կատարելը: Նոր օրենքում ամրագրված մոտեցումը տարակուսանք է առաջացնում և, մեր կարծիքով, լրջագույն սպառնալիք է անչափահասների սեռական անձեռնմխելիության ապահովմանն ուղղված

հասարակական հարաբերությունների համար: Առաջին հայացքից՝ կարող է թվալ, որ նոր դրույթի նախատեսումը միտված է հանցանք կատարած անձի վիճակի ավելորդ վատթարացումից խուսափելուն, քանի որ, հատկապես այն դեպքերում, երբ սույն հանցանքը կատարվում է փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անչափահասի նկատմամբ, ստացվում է, որ յուրաքանչյուր սեռական հարաբերության դրվագին պետք է տրվի ինքնուրույն քրեաիրավական գնահատական, արարքները պետք է որակել հանցագործությունների համակցությամբ, ինչով պայմանավորված՝ կնշանակվի խիստ պատիժ: Սակայն, մյուս կողմից, նման հանցանքը կարող է կատարվել միևնույն անչափահասի նկատմամբ և կապված չլինի փաստական ամուսնական հարաբերությունների հետ՝ լրջորեն խաթարելով վերջինիս ֆիզիկական և հոգեկան զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Կարծում ենք, որ նոր օրենքում նախատեսված այս դրույթը ենթակա է արմատական լրամշակման և վերաձևակերպման:

Նախկին քրեական օրենսգրքի հոդված 142-ով նախատեսված «Անառակաբարո գործողությունները» հանցակազմը նոր քրեական օրենսգրքով վերախմբագրվել է, դրանում կատարվել են մի շարք փոփոխություններ: Նախ՝ փոխվել է հոդվածի վերնագիրը, այժմ այն ունի «*Անառակաբարո արարք կատարելը*» վերտառությունը: Չնայած անառակաբարո գործողությունների մեծամասնությունը կատարվում են գործողությամբ, չեն բացառվում իրավիճակներ, երբ այդ արարքը կատարվի անգործությամբ, օրինակ՝ չափահաս անձը հեռուստացույցով դիտում է պոռնկագրական ֆիլմ, ներս է մտնում 16 տարին չլրացած անչափահասը, և չափահասը ոչինչ չի ձեռնարկում, չի փոխում հեռուստացույցի ալիքը կամ անջատում այն՝ նպատակ ունենալով 16 տարին չլրացած անձի մեջ սեքսուալ բնույթի ցանկություն առաջացնել: Նոր քրեական օրենսգրքի հոդված 201-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «18 տարին լրացած անձի կողմից պոռնկագրական նյութ կամ առարկա, այդ թվում՝ տպագիր հրատարակություն, կինոյի կամ տեսաֆիլմի նյութ, էլեկտրոնային կրիչի վրա պահվող նյութ, պատկեր կամ պոռնկագրական բնույթի այլ առարկա 16 տարին չլրացած անձանց շրջանում տարածելը, ցուցադրելը, 16 տարին չլրացած անձի ներկայությամբ սեռական հարաբերությունը, մերկանալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություն կատարելը, 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գրույցը կամ 16 տարին չլրացած անձի մեջ սեքսուալ բնույթի ցանկություն առաջացնելուն ուղղված այլ արարքը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 198-րդ, 199-րդ կամ 200-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները (...): Նախկին քրեական օրենսգրքով նախատեսված բավականաչափ անորոշ «անառակաբարո գործողությունները» ձևակերպման փոխարեն՝ նոր քրեական օրենսգրքը մանրամասն նախատեսում է հանրավտանգ արարքների այն դրսևորումները, որոնք համարվում են

անառակաբար: Գործում է բացառման սկզբունքը, քանի որ եթե արարքը պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ, 199-րդ կամ 200-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները, ապա լրացուցիչ չի որակվում որպես անառակաբար արարք, այլ որակվում է նշված հանցակազմերով: Բացի այդ, հարկ է նշել, որ նոր քրեական օրենսգիրքը հիմնականում նախատեսել է ինտելեկտուալ անառակաբար գործողությունները, որոնք կարող են դրսևորվել 18 տարին լրացած անձի կողմից պոռնկագրական նյութ կամ առարկա, այդ թվում՝ տպագիր հրատարակություն, կինոյի կամ տեսաֆիլմի նյութ, էլեկտրոնային կրիչի վրա պահվող նյութ, պատկեր կամ պոռնկագրական բնույթի այլ առարկա 16 տարին չլրացած անձանց շրջանում տարածելու, ցուցադրելու, 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի զրույց վարելու ձևերով: Նախատեսվել են նաև ֆիզիկական անառակաբար արարքի կատարման դրսևորումներ՝ 16 տարին չլրացած անձի ներկայությամբ սեռական հարաբերությունը, մերկանալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություն կատարելը, իսկ 16 տարին չլրացած անձի մեջ սեքսուալ բնույթի ցանկություն առաջացնելուն ուղղված այլ արարքը կարող է դրսևորվել թե՛ ֆիզիկական, և թե՛ ինտելեկտուալ եղանակներով, կարևոր է, սակայն, որ բացակայեն 198-րդ, 199-րդ կամ 200-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները:

Հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նախատեսվել են քննարկվող հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող տեսակները, որոնց մեծամասնությունը քննարկվել է սույն ուղեցույցի շրջանակներում: Ուշագրավ է հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «կատարվել է հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ» ծանրացնող հանգամանքի նախատեսումը: Այս ծանրացնող հանգամանքի սահմանումն արդարացված կարող էր լինել այն պարագայում, եթե օրենսդիրն անառակաբար արարքի շրջանակներում դիտարկեր ֆիզիկական այն տեսակները, որոնք կապված են սեռական հարաբերության նմանակման կամ սեռական կարիքները բավարարելու հետ՝ առանց տուժած անձի մարմնի մեջ սեռական ներթափանցման: Սակայն, ինչպես տեսանք, այդ արարքները նախատեսվել են սեռական այլ հանցագործությունների համատեքստում:

Կարևոր է, որ նոր քրեական օրենսգրքի հոդված 201-ի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ որպես ծանրացնող հանգամանք նախատեսվել է՝ «անզգուշությամբ առաջացրել է հոգեկան խանգարում կամ այլ ծանր հետևանք» դրույթը, քանի որ անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված այս հանցանքն իրական սպառնալիք է վերջիններիս ֆիզիկական և հատկապես՝ հոգեկան առողջության համար:

Հարկ է անդրադառնալ նաև քննարկվող հանցատեսակի համար նախատեսված

պատժի խստությանը: Մեր կարծիքով՝ պատժողական քաղաքականությունը հանցավոր վարքագծի նշված վտանգավոր դրսևորումների պարագայում ՀՀ-ում շատ մեղմ է, և այն անհրաժեշտ է խստացնել: Այս համատեքստում՝ խիստ տարօրինակ է, որ նոր քրեական օրենսգրքով այս արարքի համար նախատեսված պատիժը մեղմացվել է: Եթե նախկին իրավակարգավորմամբ առավել ծանրացնող հանգամանքի կատարման համար նախատեսվում էր ազատազրկում 3-7 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա, ապա նոր իրավակարգավորմամբ՝ նախատեսվել է 3-6 տարի ժամկետով ազատազրկում, ինչը մտահոգիչ է և չի կարող նպաստել այս հանցատեսակի դեմ պայքարին: Հարկ է փաստել, որ ՌԴ քրեական օրենսգրքի հոդված 135-ով (անառակաբարո գործողությունները), որպես ծանրացնող հանգամանքներով (այն անձի կողմից կատարելը, ով դատվածություն ունի անչափահասի սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործության համար), նախատեսված հանցակազմի սանկցիա՝ նախատեսված է մինչև 15 տարի ժամկետով ազատազրկումը, ինչը շատ ավելի արդարացի և համահունչ պատժաչափ է քննարկվող հանցատեսակի պարագայում:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 202-ն ունի հետևյալ վերտառությունը՝ **«16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկելը (գրումինգ)»**: Հարկ է նկատել, որ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ գրումինգի համար պատասխանատվություն հիմնականում նախատեսված չէ, և այս համատեքստում քրեորեն պատժելի է միայն երեխայի նկատմամբ սեռական հանցանք կատարելուն օժանդակելը<sup>117</sup>: Սակայն որոշ երկրներում, օրինակ՝ Ավստրալիայում<sup>118</sup>, Մեծ Բրիտանիայում<sup>119</sup> և այլն, այն համարվում է հանցագործություն:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 202-ի 1-ին մասը սահմանում է՝ «Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձին հանդիպում առաջարկելը և հանդիպմանն ուղղված գործողություն կատարելը՝ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունների, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակման կամ սեռական կարիքները բավարարելու, կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելու կամ արտադրելու նպատակով, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ կամ 198-201-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշները (...)»:

<sup>117</sup> <https://www.whitelawpllc.com/blog/2022/february/is-grooming-a-crime/>

<sup>118</sup> <https://www.justice.vic.gov.au/safer-communities/protecting-children-and-families/grooming-offence>

<sup>119</sup> <https://www.abvsolicitors.co.uk/sexual-offences/criminal-accusations-and-charges-of-sexual-grooming/>

## Գլուխ 28

### ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քրեական նոր օրենսգիրքը, ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունների համար: Քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած մի շարք հանցակազմեր գրեթե առանց փոփոխության, կամ խմբագրական փոփոխություններով տեղ են գտել նաև քրեական նոր օրենսգրքում:

Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 210-217, 221-224, 226, 229, 230-235, 237-րդ հոդվածներում տեղ գտած հանցակազմերը գրեթե չեն տարբերվում քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած հանցակազմերից և դրանցում տեղ գտած փոփոխություններն առավելապես խմբագրական բնույթի են: Առանձին դեպքերում՝ նախատեսվել են ծանրացնող հանգամանքներով հանցակազմեր, որոնք քրեական նախկին օրենսգրքով նախատեսված չեն եղել: Այնուհանդերձ, նկատի ունենալով այն, որ քննարկվող հանցակազմերում փոփոխություններն էական չեն և կիրառման առումով դժվարությունների չեն հանգեցնի, սույն Ուղեցույցի շրջանակներում դրանց առանձին անդրադարձ չի կատարվի:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծություններից է *խտրականության* համար քրեական պատասխանատվության սահմանումը: Քրեական նախկին օրենսգրքում նախատեսված էր մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելը, որը նկարագրված էր նյութական հանցակազմով: Նախկին կանոնակարգումներով շեշտադրումը դրվում էր մարդու կամ քաղաքացու իրավունքները կամ ազատությունները ուղղակի կամ անուղղակի խախտելու վրա՝ կախված անձի սեռից, ռասայից և այլ գործոններից, որը վնաս էր պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին և օրինական շահերին:

Մինչդեռ քրեական նոր օրենսգիրքը խտրականություն է դիտարկում տարբերակված վերաբերմունքի դրսևորումը, որը ոտնահարում է անձի իրավունքները կամ ազատությունները, կամ որով անձին առավելություններ են տրվում՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծննդի, առողջական վիճակի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով: Հանցակազմը ավարտված է համարվում տարբերակված վերաբերմունքի դրսևորման պահից: Այն ձևական հանցակազմ է:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում լրացվել են այն հանգամանքները, որոնք կարող են հիմք հանդիսանալ խտրականության համար: Օրինակ, եթե նախկինում նշվում էր հաշմանդամությունը, ապա քրեական նոր օրենսգրքում դրան ավելացել է առողջական վիճակը:

Բացի այդ, եթե նախկինում խոսվում էր անձի իրավունքները կամ ազատությունները ոտնահարելու մասին, ապա քրեական նոր օրենսգրքում՝ նաև անձին առավելություններ տալու մասին՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքով տեսակ է՝ քննարկվող արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում *մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկությունն առանց նրա համաձայնության օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու կամ այդ տեղեկությունն օրենքով սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու նպատակով ձեռք բերելու կամ պահելու* համար: Քրեական նախկին օրենսգրքով ևս պատասխանատվություն էր սահմանվում մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու համար, սակայն հիմնական տարբերությունը հանգում է նրան, որ նոր կարգավորումներով պարտադիր չէ, որ այդ տեղեկությունները տարածվեն հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով: Ավելին՝ նման վարքագիծը, ինչպես նաև հանցագործության առարկա հանդիսացող տեղեկատվությունը տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով տարածելը քրեական նոր օրենսգրքով դիտվում է որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքով տեսակի հատկանիշ: Ծանրացնող հանգամանքով հանցակազմի տեսակ է 1-ին մասով նախատեսված տեղեկությունը հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով տարածելը:

Քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում *բժշկական գաղտնիք հրապարակելու*՝ բժշկական գաղտնիք պարունակող տվյալը, օրենքով նախատեսված անձնական տվյալներ մշակողի կողմից առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության, ապօրինաբար մեկ այլ անձի հայտնելու համար: Քրեական նախկին օրենսգրքից հիմնական տարբերությունը հանգում է նրան, որ օրենսդիրը նախկինում պատասխանատվություն էր սահմանում բժշկական գաղտնիք փոխանցելու համար, մինչդեռ նոր կարգավորմամբ



պատասխանատվություն է սահմանված ապօրինաբար մեկ այլ անձին հայտնելու համար: Ընդ որում, ինչպես և քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպման պարագայում, այս հանցանքի սուբյեկտ պարտադիր չէ, որ լինի բուժաշխատողը, այլ՝ անձնական տվյալներ մշակող անձը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանք է բժշկական գաղտնիք պարունակող տվյալը, օրենքով նախատեսված անձնական տվյալներ մշակողի կողմից առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության, հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով, զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով է տարածվում:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած փոփոխություն է այն, որ ծանրացնող հանգամանք է դիտարկում, եթե արարքը կատարվել է բուժաշխատողի կողմից:

Առավել խիստ պատասխանատվություն է նախատեսված, եթե բժշկական գաղտնիք հայտնելը անզուշուրյամբ հանգեցրել է ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի, անձի պատիվը, արժանապատվությունը կամ բարի համբավը նվաստացնելուն կամ այլ ծանր հետևանքի:

Ինչպես և քրեական նախկին, այնպես էլ նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում ***մարդու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունն ապօրինի խախտելու համար***: Այն, ըստ էության, կրկնում է քրեական նախկին օրենսգրքի 146-րդ հոդվածի ձևակերպումը, այն տարբերությամբ, որ նախկին կանոնակարգմամբ օգտագործված «փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումներ» արտահայտության փոխարեն կիրառում է «հաղորդակցության այլ ձևեր», առավել ընդգրկուն եզրույթը: Նման մոտեցումն առավել արդարացված է՝ նկատի ունենալով հաղորդակցության տեխնոլոգիաների անընդհատ զարգացումը:

Օրենսդիրն առավել խիստ պատասխանատվություն է սահմանում, եթե քննարկվող հանցանքը կատարվել է՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) տեղեկության գաղտնի հավաքման համար նախատեսված տեխնիկական հատուկ միջոց օգտագործելով:

Քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվում մարդու կամքին հակառակ կամ կամքն անտեսելով նրա ***բնակարան ապօրինի մուտք գործելու*** համար: Այս հանցակազմը նախատեսված էր նաև քրեական նախկին օրենսգրքում, այն տարբերությամբ, որ նախկինում պատասխանատվություն էր սահմանվում մարդու

կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելու համար: Քրեական նոր օրենսգրքում դրան ավելացել է նաև մարդու կամքն անտեսելով մուտք գործելը: Այս հարցի շուրջ քննարկումներ եղել են նաև նախկինում, ինչին անդրադարձ կատարվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից՝ Հարութ Ավանեսյանի գործով որոշման շրջանակներում<sup>120</sup>: Մասնավորապես, նշված որոշման մեջ փաստվել է, որ «քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է միայն գործողություններով, այն է՝ մարդու կամքին հակառակ (նրանից մերժում ստանալով կամ նրա կամքն անտեսելով) նրա բնակարան ապօրինի մուտք գործելով: Բնակարան ապօրինի մուտք գործելը կարող է լինել ինչպես գաղտնի, այնպես էլ բացահայտ»:

Առավել խիստ է պատասխանատվությունը, եթե քննարկվող արարքը կատարվել է՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում ***անձին տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելու*** համար, այսինքն՝ անձին՝ նրա իրավունքներին կամ օրինական շահերին առնչվող փաստաթուղթ կամ այլ տեղեկություն իրավասու անձի կողմից ապօրինի չտրամադրելու կամ անձին այդ փաստաթուղթը կամ տեղեկությունն ապօրինի ոչ լրիվ կամ աղավաղված տրամադրելու համար, եթե դա խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս է պատճառել անձի իրավունքներին կամ օրինական շահերին:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կարգավորման՝ քրեական նոր օրենսգրքը ընդլայնել է հանցագործության առարկայի շրջանակը՝ «նյութերը» եզրույթի փոխարեն օգտագործելով «այլ տեղեկություն» արտահայտությունը: Միաժամանակ, հստակեցվել է, թե անձի իրավունքները ինչ չափով վնասելու պարագայում պետք է առաջանա քրեական պատասխանատվություն: Քրեական նախկին օրենսգրքը պարզապես նշում էր, որ քրեական պատասխանատվություն առաջանում է, եթե տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելը անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում նշվում է, որ դա պետք է լինի խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս:

Քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում անձի ***խղճի կամ դավանանքի ազատության իրավունքի իրականացմանը, այդ թվում՝ կրոնական կազմակերպության օրինական գործունեությանը կամ կրոնական ծեսի կատարմանը***

<sup>120</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Հարութ Ավանեսյանի գործով 2018 թվականի մարտի 20-ի թիվ ՍԴ3/0147/01/16 որոշում:

**խոչընդոտելու** համար: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, օրենսդիրը ընդլայնել է հանցակազմի բովանդակությունը և հանցավոր դիտել խղճի կամ դավանանքի ազատության իրավունքի իրականացմանը խոչընդոտելը՝ կրոնական կազմակերպության օրինական գործունեությանը կամ կրոնական ծեսի կատարմանը խոչընդոտելը դիտելով որպես քննարկվող իրավունքի իրականացմանը խոչընդոտելու մասնավոր դրսևորում:

Հանցակազմի ծանրացնող հանգամանք է հանցանքի կատարումը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Քրեական նոր օրենսգրքով առավել մանրամասն կանոնակարգման են ենթարկվել **ընտրակաշառքին** վերաբերող դրույթները: Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել ընտրակաշառք ստանալու, տալու, ինչպես նաև միջնորդության համար:

Քրեական նախկին օրենսգրքի 154.2-րդ հոդվածը պատասխանատվություն էր սահմանում ինչպես ընտրողներին կաշառք տալու, այնպես էլ կաշառք ստանալու, ընտրությունների ժամանակ բարեգործության արգելքի խախտման կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելու համար:

Ելնելով քրեական նոր օրենսգրքի կառուցման տրամաբանությունից, որը նույն հոդվածի շրջանակներում եզակի դեպքերում է նախատեսում տարբեր հանցանքների հանցակազմեր, 154.2-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմերը նոր կանոնակարգմամբ տեղ են գտել տարբեր հոդվածներում:

Քրեական նոր օրենսգրքի 218-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար ընտրակաշառք՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալու, պահանջելու, տալու առաջարկ ներկայացնելու կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելու համար:

Քննարկվող հանցակազմի շրջանակներում ընտրակաշառք ստանալու հանցակազմը ձևակերպվել է կոռուպցիոն հանցանքի դրսևորում հանդիսացող կաշառք ստանալու հանցակազմին ներկայացվող հիմնական պահանջները պահելով, այն է՝ թե՛ ընտրակաշառքի առարկայի, թե՛ օբյեկտիվ կողմի տեսանկյունից: Քրեական նոր օրենսգրքում քննարկվող հանցակազմի ձևակերպումից հետևում է, որ հանցանքն ավարտված պետք է դիտել ընտրակաշառքը պահանջելու, ընտրակաշառք տալու առաջարկ ներկայացնելու կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելու պահից:

Ընտրակաշառք ստանալու սուբյեկտ կարող է լինել այն անձը, ով կարող է հանդես գալ որպես ընտրող: Ընդ որում, նա կարող է ընտրակաշառքը ստանալ ինչպես անձամբ, այնպես էլ միջնորդի միջոցով:

Քրեական նոր օրենսգրքի 219-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ընտրակաշառք տալու համար, այն է՝ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելու, հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելու, քվեաթերթիկն անվավեր դարձնելու կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելու պայմանով ընտրողին անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրակաշառք՝ գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն առաջարկելու, խոստանալու կամ տալու համար:

Ըստ էության, այս ձևակերպումը նույնությամբ կրկնում է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած բնորոշումը:

Ընտրակաշառք տալու, ինչպես նաև ստանալու հանցակազմերի ծանրացնող հանգամանք է մի խումբ անձանց կողմից հանցանքի կատարումը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգիրքն առավել մանրամասն է ներկայացնում ընտրակաշառքի միջնորդության հատկանիշները, այն բնորոշելով որպես ընտրակաշառքի շուրջ ընտրակաշառք տվողի և ընտրակաշառք ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելը, ընտրակաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում ընտրակաշառքի առարկան ընտրողին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնությունն դրսևորելը կամ այն փոխանցելու խոստում տալը կամ փոխանցելը կամ ընտրակաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը: Ներկայացված ձևակերպման մեջ օրենսդիրը մատնանշում է ընտրակաշառքի առարկան ընտրողին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնությունն դրսևորելը կամ այն փոխանցելու խոստում տալը կամ փոխանցելը: Նախկին կանոնակարգումներում այս արարքները բացակայում էին:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակ է նույն հանցանքի կատարումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում նախատեսված չէ խրախուսական նորմ ընտրակաշառք ստացողի համար: Նախկինում օրենսդիրը նման հնարավորություն ընձեռում էր, եթե ընտրակաշառք ստացող անձը մինչ ընտրակաշառքի մասին իրավապահ մարմիններին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ քան 3-օրյա ժամկետում այդ մասին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և

աջակցել հանցագործությունը բացահայտելուն: Այդ դեպքում նա ազատվում էր քրեական պատասխանատվությունից:

Քրեական նոր օրենսգրքում նախատեսվել է հանցակազմ, որը վերաբերում է **Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելուն կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելուն կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելուն կամ հայտարարագիր չներկայացնելուն:** Օրենսդիրը սահմանում է՝ «Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից խոշոր չափով չկատարելը կամ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրում քարոզչության նպատակով ձեռք բերված ապրանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չներառելը (եթե դա ձեռք է բերվել կամ մատուցվել է անհատույց կամ շուկայական արժեքից ցածր գնով կամ մինչև նախընտրական հիմնադրամի կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամի ձևավորումը), որը կազմել է խոշոր չափ (...): Ակնհայտ է, որ քրեական պատասխանատվություն է առաջանում, եթե քրեական նոր օրենսգրքի 221.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները կատարվել են խոշոր չափով: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ խոշոր չափ է համարվում 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը:

Միաժամանակ, օրենսդիրը պատասխանատվություն է նախատեսում Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կամ հանրաքվեի քարոզչության հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը քվեարկությունից հետո օրենքով՝ ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ ընկած ժամանակահատվածում չներկայացնելու համար:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է սահմանված **գործադուլի մասնակցելուն կամ գործադուլին մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու** համար: Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասը քրեորեն պատժելի է դիտում շանտաժի կամ անձի կամ նրա

մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի գույքը ոչնչացնելու կամ վնասելու կամ վերցնելու սպառնալիքով գործադուլի մասնակցություն կամ օրինական գործադուլի մասնակցություն հրաժարվելուն հարկադրելը: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որտեղ քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ էին բռնությունը, բռնության գործադրման սպառնալիքը, քրեական նոր օրենսգրքում գործադուլին մասնակցելու կամ դրան մասնակցելուց հրաժարվելու եղանակների ցանկը լրամշակվել է. ավելացել են շանտաժը, անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքը:

Օրենսդրի կողմից նաև բացահայտվել է «շանտաժ» եզրույթի բովանդակությունը: Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետում այն բնորոշվում է որպես անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառող կամ անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու կամ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիք:

Շանցակազմի ծանրացնող հանգամանքներ են հանցանքի կատարումը՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով

պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելով կամ գույք ոչնչացնելով կամ վնասելով:

Քրեական նախկին օրենսգրքի համեմատ՝ որոշակի փոփոխություններ կատարվել են *հեղինակային և արտոնագրային իրավունքի խախտման* համար քրեական պատասխանատվություն սահմանող հանցակազմերում:

Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվում հեղինակությունը յուրացնելու կամ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելու կամ առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը իրացնելու համար, եթե դա խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել հեղինակին կամ այլ իրավատիրոջ:

Քրեական նախկին օրենսգրքում նախատեսվում էր պատասխանատվություն, եթե արարքը կատարվել էր զգալի չափերով, մինչդեռ նոր կարգավորմամբ անհրաժեշտ է, որ խոշոր չափերի գույքային վնաս պատճառվի հեղինակին կամ այլ իրավատիրոջ: Նույն պահանջն է սահմանված նաև արտոնագրային իրավունքը խախտելու դեպքում:

Պատճառված վնասի չափի որոշումը կատարվում է քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝ չափերին վերաբերող իրավակարգավորման կտրվածքով:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներն են՝ եթե արարքը՝

1) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել հեղինակին կամ այլ իրավատիրոջը,

2) կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով,

3) կատարվել է համահեղինակության հարկադրելով,

4) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

5) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

228-րդ հոդվածի համաձայն.

«1. Արտոնագրային իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ մինչև այդ իրավունքի պաշտոնական ճանաչումը դրա էության վերաբերյալ առանց հայտատուի համաձայնության տեղեկություն տարածելը կամ դրա հեղինակությունը յուրացնելը, եթե դա խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել (...)

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել,

2) կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով,

3) կատարվել է համահեղինակության հարկադրելով,

4) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

5) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: (...):»:

***Հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելու կամ հարկադրելու***

հանցակազմը սահմանելիս՝ օրենսդիրը պահպանել է քրեական նախկին օրենսգրքում եղած ձևակերպումը, այն տարբերությամբ, որ նշել է, որ պատասխանատվություն պետք է առաջանա օրինական հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելու համար:

Ինչ վերաբերում է հավաքին մասնակցելուն հարկադրելուն, ապա ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը պատասխանատվություն էր սահմանում հավաքին մասնակցելուն հարկադրելու կամ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելու համար, նոր կանոնակարգմամբ պատասխանատվություն է սահմանվում նաև օրինական կամ անօրինական հավաքին մասնակցելուն հարկադրելու համար՝ անձի կամ նրա

մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ շանտաժի միջոցով:

Ակնհայտ է, որ ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, օրենսդիրը հնարավոր է դիտում հավաքին մասնակցելուն հարկադրելու հանցակազմի առկայությունը թե օրինական, թե անօրինական հավաքների պարագայում: Առանձնահատուկ են նաև հանցանքի կատարման եղանակները՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրել, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիք կամ շանտաժ:

Հանցակազմի ծանրացնող հանգամանք է հանցանքի կատարումը իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:



## Գլուխ 29

### ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԵՐԵԽԱՅԻ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 238-ը պատասխանատվություն է նախատեսում *անչափահասին<sup>121</sup> հանցանքի կատարմանը հակելու կամ դրան մասնակից դարձնելու* համար: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 165-ով պատասխանատվություն էր սահմանվում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու համար: Նոր իրավակարգավորումը **հիմնովին տարբերվում** է նախկինից: Հոդված 238-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «18 տարին լրացած անձի կողմից անչափահասին հանցագործության հմտություններ սովորեցնելը, անչափահասի մեջ հանցավոր գաղափարախոսություն, հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ, հանցավոր վարքագծի կանոններ կամ սովորույթներ սերմանելը կամ հանցանքներ կատարելու քարոզը, ինչպես նաև անչափահասի նախաձեռնությամբ իր կամ այլ անձի կողմից կատարվող հանցանքին մասնակից դարձնելը (...)»: Նախկին իրավակարգավորման համաձայն՝ 18 տարին լրացած անձը պատժվում էր ինչպես սովյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով հանցանքի կատարմանը ներգրավելու համար, այնպես էլ հանցագործության դրոշմության կամ այն կազմակերպելու համար, ինչը հանգեցնում էր կրկնակի պատասխանատվության: Կատարված փոփոխությունների հիմնական իմաստը հանգում է նրան, որ անձը ենթարկվի քրեական պատասխանատվության անչափահասին որոշակի հանցավոր հմտություններ սովորեցնելու կամ նրան հանցավոր սովորույթներ, հանցավոր ենթամշակույթի տարրեր քարոզելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ անչափահասն է նախաձեռնում, որպեսզի մասնակից դառնա սովյալ չափահաս անձի կողմից կատարվող կամ կատարվելիք հանցագործությանը: Նոր քրեական օրենսգրքով չի նախատեսվել նաև «սովյալ հանցագործության համար սույն օրենսգրքով քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին» ձևակերպումը, և ցանկացած երեխայի նկատմամբ նշված արարքի կատարումը կորակվի սույն հանցակազմով:

Նախկին քրեական օրենսգրքի հոդված 165-ով նախատեսված արարքի կատարման պարագայում՝ անձը պատասխանատվության կենթարկվի հանցակցության համար, իսկ համակատարողի կամ այլ հանցակցի անչափահաս լինելու հանգամանքը հաշվի կառնվի պատժի անհատականացման գործընթացում:

---

<sup>121</sup> Սույն օրենսգրքում անչափահաս և երեխա եզրույթները նույնանում են, ինչն այնքան էլ ընդունելի տարբերակ չէ: Օրենսգրքի միասնական տրամաբանության ապահովման դիտանկյունից՝ պետք է կիրառել նույնական եզրութաբանություն:

Քննարկվող հանցակազմի պարագայում դրական պետք է համարել որպես ծանրացնող հանգամանք «տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով» նախատեսելը (2-րդ մասի 2-րդ կետ), քանզի նշված սովորույթների կամ ավանդույթների սերմանումը այս եղանակով (հատկապես համացանցն օգտագործելով) օժտված է չափազանց բարձր հանրային վտանգավորությամբ:

Նախկին քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածի առնչությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն Արսեն Ամիրխանյանի գործով<sup>122</sup> արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ակտիվ գործողություններով, որոնք ուղղված են անչափահասի մոտ մեկ կամ մի քանի հանցագործություն կատարելու կամ դրա(նց) կատարմանը մասնակից լինելու ցանկություն առաջացնելուն: Այս հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ անչափահասին ներգրավում է հանցագործությանը և ցանկանում է դա:

*Վերոնշյալ ակտիվ գործողությունները կարող են դրսևորվել տարբեր եղանակներով: Մասնավորապես,*

*ա) խոստումներ տալով (օրինակ՝ վարձատրելու, նվերներ տալու, զվարճանքներով ապահովելու և այլն).*

*բ) խաբեությամբ, երբ ներգրավողի քողարկված խնդրանքը կամ հանձնարարությունը կատարելով՝ անչափահասը հայտնվում է մոլորության մեջ և չի գիտակցում կատարվելիք արարքի հանցավոր բնույթը.*

*գ) այլ եղանակով, որը ենթադրում է բռնության հետ չկապված տարաբնույթ դիտավորյալ հոգեբանական ազդեցություն՝ ուղղված անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելուն, այդ թվում՝ նյութական վնաս պատճառելու, հասակակիցների կամ ընկերների ներկայությամբ նվաստացնելու և նման այլ սպառնալիքներ, համոզում, կաշառում, հանցագործության կատարման մասին անչափահասի հետ նպատակաուղղված զրույցների վարում, որոշակի անձանց նկատմամբ թշնամանքի, ատելության, նախանձի ձևավորում, դաժանության սերմանում, շահադիտական ձգտումների առաջացում, շողոքորթում և այլն:*

*Վերը նշված գործողությունների նկատմամբ ներգրավողը պետք է դրսևորի ուղղակի դիտավորություն: Այսինքն՝ պետք է գիտակցի խոստումներ տալով, խաբեությամբ կամ այլ եղանակով անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանրային վտանգավորությունը և ցանկանում է վերը նշված որևէ միջոցով անչափահասին ներգրավել հանցանքի կատարմանը:*

<sup>122</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արսեն Ամիրխանյանի գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵՄԴ/0086/01/10 որոշումը:

14. Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի կոնկրետ հանգամանքները, մասնավորապես՝ (ա) այն, թե ինչ նպատակներ է հետապնդում անձն անչափահասին հանցանքի կատարման մեջ ենթադրաբար ներգրավելով, (բ) ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի անձի առանձնահատկությունները, (գ) ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի փոխհարաբերությունների բնույթը, (դ) ներգրավող անձի կողմից անչափահասի նկատմամբ ակտիվ ֆիզիկական կամ հոգեկան ներգործության առկայությունը կամ բացակայությունը և այդ ներգործության կոնկրետ դրսևորումը, (ե) անչափահասի մոտ տվյալ հանցագործության կապակցությամբ սեփական շահի առկայությունը կամ բացակայությունը:

15. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցագործությունն ավարտված է անչափահասին հանցագործությանը ներգրավելու պահից՝ անկախ նրա կողմից տվյալ հանցանքը կամ որևէ հանցանք կատարելու հանգամանքից: Այլ կերպ՝ եթե համապատասխան ներգործության արդյունքում անչափահասի մոտ հանցանք կատարելու դիտավորություն է առաջանում, ներգրավումն ավարտված է:

16. Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի՝ սույն որոշման 12-15-րդ կետերում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն փաստը, որ կատարված հանցագործությանը մասնակից է եղել նաև անչափահասը, ինքնին բավարար չէ եզրահանգելու, որ առկա է անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմը:

Բացի այդ, անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի առկայությունը հիմնավորելու համար բավարար չէ ներգրավման այս կամ այն եղանակի կամ եղանակների շարադրումը. անհրաժեշտ է գործի փաստական հանգամանքների միջոցով հիմնավորել ներգրավման տվյալ եղանակի կամ եղանակների առկայությունը (...):»:

Հարկ է նկատել, որ նոր իրավակարգավորման պարագայում ՀՀ Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումները, գրեթե ամբողջությամբ, կորցնում են իրենց արդիականությունը և անհրաժեշտություն է առաջանում նորովի մեկնաբանելու քննարկվող քրեաիրավական նորմը:

239-րդ հոդվածի պարագայում՝ փոփոխությունները հիմնականում եզրութաբանական են: Հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում՝ 18 տարին լրացած անձի կողմից **երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութ կամ առարկա պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություն կատարելուն հակելու կամ ներգրավելու** համար, եթե բացակայում են օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները: Որպես օբյեկտիվ կողմի

դրսևորում նախատեսվել է նաև «**հակելը**», նախկին իրավակարգավորման պարագայում՝ նշվում էր միայն «**ներգրավելը**»: Այս մոտեցումն ավելի ճիշտ է, որպիսի պարագայում անձը կենթարկվի քրեական պատասխանատվության երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութ կամ առարկա պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություն կատարելուն հակելու պահից սկսած, անկախ այն հանգամանքից՝ հաջողվել է նրան անչափահասին իրականում ներգրավել նշված գործունեության մեջ, թե ոչ: Սա թույլ կտա առավել համապարփակ քրեաիրավական պայքար մղել քննարկվող հակաիրավական վարքագծի դրսևորումների դեմ:

Որոշակիորեն փոխվել է նաև պատժողական քաղաքականությունը՝ այն համապատասխանեցվել է նոր քրեական օրենսգրքում առկա իրավակարգավորումներին, իսկ **ազատագրկման պարագայում, պատժի նվազագույն շեմը բարձրացվել է**, ինչը դրական պետք է համարել:

Հանցակազմի որակյալ տեսակները նախատեսված են հոդվածի 2-րդ մասով՝ **1) այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն կամ 2) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով: Ի տարբերություն նախկին իրավակարգավորման՝** որպես առավել որակյալ տեսակներ նախատեսված չեն «1) կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ, 2) գուցորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով» ծանրացնող հանգամանքները, քանի որ նշված դեպքերում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ:

240-րդ հոդվածով նախատեսված հանցակազմում կատարված փոփոխությունները ևս հիմնականում կրում են եզրութաբանական և ճշգրտող բնույթ: Քննարկվող հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվություն է սահմանվել **18 տարին լրացած անձի կողմից երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը կամ ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը կամ թափառաշրջիկության կամ մուրացկանության պարբերաբար ներգրավելու** համար, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները: «Պարբերաբար» եզրույթը վերաբերելի է հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող թվարկված բոլոր արարքներին: Երեխա ասելով պետք է հասկանալ ցանկացած 18 տարին չլրացած անձ: Սույն հանցանքի կատարման համար նախատեսված պատժի առանձնահատկություններին, ինչպես նաև հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ չենք կատարի, քանզի դրանք քննարկվել են սույն ուղեցույցի շրջանակներում:

Հոդված 241-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «**Օտոդներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը**, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքի

հատկանիշները (...)»։ Այս հանցակազմը գրեթե նույնական է նախկին քրեական օրենսգրքի հոդված 167-ով նախատեսվածի հետ, տարբերությունները եզրութաբանական բնույթի են։ Սակայն երկու դեպքում էլ տարակուսելի է այն հանգամանքը, որ խոսվում է բացառապես երեխայի թրաֆիքինգի հանցակազմի բացակայության մասին, սակայն անտեսվում է այն փաստը, որ նման դեպքերում, գրեթե միշտ, առկա է անչափահասի առևանգման հանցակազմը, քանզի վերջինս դուրս է բերվում իր բնական միկրոսոցիալական միջավայրից իր կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով կամ անօգնական վիճակն օգտագործելով, տեղափոխվում է այլ վայր և պահվում է այնտեղ։ Երեխային փոխելու դեպքում՝ առևանգման հանցակազմն առկա է փոխված բոլոր երեխաների նկատմամբ և արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ։ Այս հանցակազմի օբյեկտիվ կողմի առաջին դրսևորման (Օնոդներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, երեխային ապօրինի բաժանելը) նախատեսման նպատակահարմարության հարցը հրատապ է և, մեր կարծիքով, օրենսդիրը պետք է հրաժարվի դրանից, ինչպես դա արվել է արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների գերակշիռ մեծամասնությամբ։ Ինչ վերաբերվում է «երեխային փոխելու» օբյեկտիվ կողմի դրսևորմանը, որն առանձին հանցակազմով նախատեսված է մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ, ապա դրա նախատեսման հարցը ևս քննարկելի է, քանզի խիստ դժվար է ներկայացնել այն տարբերակիչ գծերը, որոնց պարագայում՝ այս արարքը կդադարի համարվել երեխայի առևանգում և կառաջանա ինքնուրույն հանցակազմ։ Ինչ վերաբերում է նման դեպքում «այլ երեխա» տրամադրելուն և այդ հիմքով երեխայի առևանգումից տարբերակելուն, ապա, մեր կարծիքով, դա դուրս է ոչ միայն տրամաբանության, այլև բարոյականության բոլոր հնարավոր շրջանակներից<sup>123</sup>։

Սույն հանցակազմի որակյալ տեսակներին՝ առանձին անդրադարձ չենք կատարի, քանզի դրանք քննարկվել են սույն ուղեցույցի շրջանակներում։

Նոր քրեական օրենսգրքի հոդված 242-ը պատասխանատվություն է սահմանում **երեխայի առքի կամ վաճառքի** համար։ Հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «**Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները...**»։ Նոր իրավակարգավորմամբ՝ պետք է բացակայի «Երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը» հանցակազմը։ Փոփոխվել է նաև հոդվածի վերտառությունը, որն ավելի հակիրճ տեսք է ստացել։

Հանցակազմի որակյալ տեսակները քննարկվել են այլ հանցակազմերը վերլուծելիս

<sup>123</sup> <https://stykrf.ru/153>

և դրանց անդրադարձ չի կատարվի:

Հարկ է նշել, որ առկա իրավակարգավորումը խիստ վիճահարույց է և շատ երկրներ, (օրինակ՝ ՌԴ) իրավացիորեն հրաժարվել են դրանից՝ դիտարկելով քննարկվող հանցակազմը բացառապես երեխայի առևանգման կամ թրաֆիքինգի տիրույթում:

Նոր օրենսգրքի 243-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը ևս ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Հոդվածի առաջին մասը սահմանում է՝ «Երեխայի հետ բնակվող ծնողի կողմից երեխայի հետ չբնակվող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև դատական կարգով սահմանված տեսակցության իրականացմանը մեկ ամսվա ընթացքում երեք կամ ավելի անգամ, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում հինգ կամ ավելի անգամ խոչընդոտելը կամ **առանց տեսակցող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի նախնական համաձայնության՝ տեսակցության ժամերին այլ վայր տեղափոխելը...**»: Նախկին իրավակարգավորմամբ՝ նախատեսվել էր գրեթե նույնական դիսպոզիցիա, այն տարբերությամբ, որ որպես օբյեկտիվ կողմի դրսևորում նշվում էր՝ «**(..).տեսակցություն իրականացնելուց առանց հարգելի պատճառների խուսափելը(...)**»: Հարկ է նշել, որ նախկին իրավակարգավորումը, այս առումով, ավելի ընդհանրական էր, քանի որ նախատեսում էր տեսակցություն իրականացնելու առանց հարգելի պատճառների խուսափելու բոլոր դրսևորումները, իսկ նոր իրավակարգավորմամբ նման դրույթ սահմանված չէ, այլ նշվում է՝ առանց տեսակցող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի նախնական համաձայնության՝ տեսակցության ժամերին այլ վայր տեղափոխելու մասին: Այս ձևակերպումը այնքան էլ հաջողված չէ, քանի որ կամ շաղկապի կիրառումը նշանակում է, որ առանց տեսակցող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի նախնական համաձայնության՝ տեսակցության ժամերին այլ վայր տեղափոխելու ցանկացած դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության, ինչն արդարացի մոտեցում չէ: Կարծում ենք՝ սույն հանցակազմը ենթակա է լրամշակման, որպեսզի վերը նշված **«մեկ ամսվա ընթացքում երեք կամ ավելի անգամ, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում հինգ կամ ավելի անգամ»** դրույթը վերաբերելի լինի նաև **«առանց տեսակցող ծնողի կամ այլ մերձավոր ազգականի նախնական համաձայնության՝ տեսակցության ժամերին այլ վայր տեղափոխելու»** դեպքերին:

Նախկին քրեական օրենսգրքի հոդված 169-ը ուներ հետևյալ վերտառությունը՝ «Որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը»: Նոր իրավակարգավորմամբ՝ սույն հանցակազմը ենթարկվել է որոշակի փոփոխությունների, այն տրոհվել և նախատեսվել է երկու առանձին հոդվածներով՝ **«Որդեգրման գաղտնիքը հրապարակելը»** (նոր քրեական օրենսգրքի հոդված 244) և **«Որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը»** (նոր քրեական օրենսգրքի հոդված 245): Հոդված 244-ի առաջին մասով սահմանվել է՝

«Որդեգրման գաղտնիքը որդեգրողի կամքին հակառակ **կամ նրա կամքն անտեսելով** հրապարակելն այն անձի կողմից, որը որդեգրման փաստը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք, կամ այդ գաղտնիքն այլ անձի կողմից շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հրապարակելը»: Նախկին իրավակարգավորմամբ տուժած անձի կամքն անտեսելու մասին նշում չկար, մինչդեռ հաճախ՝ նշված արարքը կատարվում է տուժած անձի կամքն անտեսելով և ոչ թե վերջինիս կամքին հակառակ:

Հարկ է նշել նաև, որ այս արարքի առումով՝ պատժողական քաղաքականությունը խստացվել է և որպես պատժատեսակ նախատեսվել է նաև ազատազրկումը՝ մինչև երկու տարի ժամկետով:

Պետք է նշել, որ որդեգրվածի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով սույն արարքի կատարումը, որպես հանցակազմի հատկանիշ՝ նախատեսված չէ, ինչը, կարծում ենք, խնդրահարույց է: Քննարկվող հոդվածի 2-րդ մասով նշվել է միայն, որ որդեգրվածի **չափահաս դառնալուց հետո** նրա համաձայնությամբ որդեգրման գաղտնիքը հրապարակելը հանցագործություն չի համարվում:

Ինչպես վերը նշվեց՝ նախկին քրեական օրենսգրքի հոդված 169-ով նախատեսված՝ «Որդեգրման գաղտնիքը հրապարակելը կամ որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը» հանցակազմը տրոհվել է և նախատեսվել է երկու հոդվածներով: Նոր քրեական օրենսգրքի հոդված 245-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «**Որդեգրման նպատակով որդեգրվողի օրինական ներկայացուցչին որդեգրման համաձայնություն տալուն շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հակելը կամ հարկադրելը**»: Նախկին իրավակարգավորմամբ՝ հանցակազմի այս հատվածի բովանդակությունը հետևյալն էր՝ «(...)որդեգրման նպատակով որդեգրվողի օրինական ներկայացուցչի կամքին հակառակ նրան որդեգրման համաձայնություն տալուն շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հակելը կամ հարկադրելը(...)»: Ինչպես տեսնում ենք՝ նշված հանցակազմերի միջև առկա են էական տարբերություններ, քանի որ նախկին իրավակարգավորմամբ նշված էր, որ այս արարքը կատարվում է որդեգրվողի օրինական ներկայացուցչի կամքին հակառակ, իսկ նոր իրավակարգավորմամբ՝ նշված ներկայացուցչի կամքի վրա ազդում են որոշակի շահ խոստանալով կամ այլ ստոր դրդումներով: Նշված արարքը կարող է կատարվել ինչպես օրինական ներկայացուցչի կամքին հակառակ, այնպես էլ նրա կամքով, ավելին՝ վերջինս այդ ամենից կարող է ստանալ նյութական շահ:

Այս հանցատեսակի առումով ևս պատժողական քաղաքականությունը արդարացիորեն խստացվել է՝ ի թիվս այլոց, նախատեսվել է նաև ազատազրկում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 246-ը պատասխանատվություն է

նախատեսում *քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինն սուտ տեղեկություն հաղորդելու* համար: Համանման իրավակարգավորում նախատեսված էր նաև ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 169<sup>1</sup>-ով: Կատարված փոփոխությունները կապված են «տեղեկություն» և «տեղեկություններ» եզրույթների հետ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (07.04.2018) հոդված 18-ի 8-րդ մասի համաձայն՝ «Եթե նորմատիվ իրավական ակտում բառը նշված է եզակի թվով, ապա դա տարածվում է նաև այդ բառի հոգնակիի վրա և ընդհակառակը, եթե տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, կամ ուղղակի այլ բան չի բխում այդ իրավական ակտի բովանդակությունից»: Այս լույսի ներքո՝ կատարված փոփոխությունն էական բնույթ չի կրում:

Հոդված 247-ը պատասխանատվություն է սահմանում *երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու* համար: Նշված հոդվածի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «**Ծնողի, այլ օրինական ներկայացուցչի կամ այլ անձի կողմից, որի վրա երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականություն է դրված, այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը հանգեցրել է երեխայի առողջության վատթարացման...**»: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 170-ը պատասխանատվություն էր սահմանում երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Նոր ձևակերպմամբ՝ վերտառության մեջ ավելացվել է «**կամ խնամքի**» եզրույթը»: Հոդվածի դիսպոզիցիան նույնպես ենթարկվել է որոշակի փոփոխությունների, այն հստակեցվել է և, ի տարբերություն նախկին կարգավորման, ավելի հակիրճ և համապարփակ ձևով է ներկայացվել հանցագործության հատուկ սուբյեկտը (նախկին կարգավորմամբ նշվում էր «Ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականություն, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից...»):

Հանցակազմի որակյալ տեսակների քննարկմանն անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

248-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը ևս վերափոխվել է, այն ստացել է ավելի հակիրճ և հստակ ձևակերպում: Հոդվածի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, եթե դրա հետևանքով երեխայի առողջությանն անգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս»: Նախկին իրավակարգավորմամբ՝ հանցագործության հատուկ սուբյեկտը շատ ավելի մանրամասն էր նկարագրված՝ «...այն անձի կողմից, ում վրա այդ պարտականությունները դրված են ըստ ծառայության, կամ



այն անձի կողմից, ով այդ պարտականությունը կատարում է հատուկ հանձնարարությամբ կամ ստանձնել է կամավոր...»: Նոր ձևակերպումը նման կերպով չի մանրամասնում հանցագործության հատուկ սուբյեկտի հատկանիշները, նշելով միայն անձի **պարտականության** մասին, իսկ թե ինչի՞ց է բխում այդ պարտականությունը, յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորվի՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից: Նախատեսվել է նաև ծանրացնող հանգամանք, որի քննարկմանն անդրադարձ չի կատարվի:

249-րդ հոդվածի և նախկին քրեական օրենսգրքի հոդված 172-ի տարբերությունները եզրութաբանական բնույթի են, և դրանք լրացուցիչ քննարկելու անհրաժեշտությունը մեծամասամբ՝ բացակայում է: Հարկ է նկատել, որ նախկին իրավակարգավորմամբ նշված «այլ անձնական դրդումները» փոխարինվել են «այլ ստոր դրդումներով», ինչպես նաև օբյեկտիվ կողմից հանվել է «առանց անհրաժեշտ աջակցության» հատկանիշը, որը համաբնույթ է «օգնություն» եզրույթին և այն կրկնելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 250-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Հորդորելու, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ այլ եղանակով անձին **ծնողական իրավունքներից հրաժարվելուն հակելը կամ հարկադրելը** (...)»: Նախկին օրենսգրքի համեմատ՝ նոր իրավակարգավորմամբ չի առանձնացվել «կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն» հասկացությունը, հոդվածի առաջին մասում ներառելով բացառապես բռնություն գործադրելու սպառնալիքը: Բռնության գործադրման բոլոր դրսևորումները նախատեսված են որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք (2-րդ մասի, 2-րդ կետ), իսկ այն դեպքերում, երբ գործադրված բռնության արդյունքում քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտին կպատճառվի այնպիսի վնաս, որի համար սահմանված է հավասար կամ ավելի խիստ պատիժ, արարքը կորակվի հանցագործությունների համակցությամբ:

Նախատեսվել են նաև հանցակազմի այլ ծանրացնող հանգամանքներ, որոնց քննարկմանն անդրադարձ չի կատարվի, պարզապես նշենք, որ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված առավել ծանրացնող հանգամանքերը (3-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր) այլևս նախատեսված չեն:

251-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն իր մեջ ներառել է նախկին քրեական օրենսգրքով նախատեսված երկու հանցակազմեր՝ «Հոդված 173. Ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը, Հոդված 174. Ջավակի կողմից անաշխատունակ ծնողին պահելուց չարամտորեն խուսափելը»: Հոդված 251-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Մեկ տարվա ընթացքում դատարանի վճռով

ալիմենտ (ապրուստավճար) երեք և ավելի ամիս վճարելուց խուսափելը(...)»։ Նշված հարաբերությունները հանգամանալից կարգավորվում են ՀՀ Շտանեկան օրենսգրքով, որի Գլուխ 12-ը նվիրված է ծնողների և զավակների ալիմենտային պարտավորությունների կարգավորմանը, գլուխ 13-ը վերաբերում է ամուսինների և նախկին ամուսինների ալիմենտային պարտավորություններին, իսկ 14-րդ գլուխը՝ ընտանիքի մյուս անդամների ալիմենտային պարտավորություններին։ Նոր իրավակարգավորումն ընդլայնել է քննարկվող հանցակազմի շրջանակները, և ցանկացած դեպքում, երբ անձը մեկ տարվա ընթացքում դատարանի վճռով ալիմենտ (ապրուստավճար) երեք և ավելի ամիս վճարելուց խուսափում է, արարքը ենթակա է որակման քննարկվող հանցակազմով։

ՀՀ նոր քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումն ավելի համապարփակ է և նպաստում է քննարկվող հասարակական հարաբերությունների առավել արդյունավետ քրեաիրավական պաշտպանությանը։

**Գլուխ 30**  
**ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մինչ ՀՀ նոր քրեական օրենսդրությամբ սահմանված հափշտակության եղանակների քննարկումը, պետք է նշել, որ հանցագործությունների քննարկվող խմբի օրենսդրական ձևակերպումներում տեղի են ունեցել հիրավի առանցքային փոփոխություններ, որոնք կապված են ինչպես նոր հասկացությունների սահմանման, այնպես էլ հափշտակության տարբեր եղանակների օրենսդրական նկարագրության մեջ կատարված փոփոխությունների հետ:

Թեև՝ նոր քրեական օրենսգրքում տեղ գտած հասկացություններին որոշակի անդրադարձ կատարվել է 3-րդ հոդվածի քննարկման շրջանակներում, սակայն հարկ է կրկին անդրադառնալ այն հասկացություններին և ձևակերպումներին, որոնք կարևոր նշանակություն ունեն հափշտակության տարբեր հանցակազմերում կատարված փոփոխությունների համատեքստում:

Նախ՝ հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսդրության պատմության մեջ առաջին անգամ նոր քրեական օրենսգրքում տրվել է հափշտակության հասկացությունը, ինչն, անշուշտ, առաջընթաց քայլ է, քանի որ թույլ է տալիս հստակորեն սահմանազատել հափշտակությունները համաբնույթ այլ հանցատեսակներից (օրինակ՝ շորթումից, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելուց և այլն): Չնայած նոր հասկացությունն այնքան էլ միանշանակ չէ, սակայն դրա հիմնական առանձնահատկությունների և տեսական վերլուծության քննարկումը դուրս է սույն ուղեցույցի ձևաչափի շրջանակներից: Նշված պատճառով՝ անդրադարձ կկատարվի հափշտակության հասկացության հիմնական բաղադրիչներին և դրանում ներառված նոր մոտեցումներին: Այսպես՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 16-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»: Ինչպես նկատելի է՝ նշված ձևակերպմամբ ավանդաբար հափշտակության հասկացության մեջ ներառված **շահադիտական** դրդումների կամ շարժառիթների մասին որևէ նշում չկա: Սա ամեննին պատահական չէ և պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև հափշտակությունների մեծամասնությունը կատարվում է շահադիտական դրդումներով, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինն է դարձվում այլ շարժառիթներով, օրինակ՝ վրեժի, խանդի և այլն: Բացի այդ շարժառիթները, դրդապատճառները և ընդհանրապես մոտիվացիոն ոլորտը խոր հոգեբանական

գործընթացներ են, որոնց իրական բնույթը հաճախ չի գիտակցվում անգամ հանցանք կատարած անձի կողմից, իսկ դրանք հանցակազմի հատկանիշ դարձնելը ավելորդ բարդացնում է հանցագործությունների որակման գործընթացը: Միևնույն ժամանակ, ասվածը չի նշանակում, որ յուրաքանչյուր դեպքում չպետք է ջանքեր գործադրվեն՝ միտված կատարված հանցագործության շարժառիթները բացահայտելուն, ուղղակի այդ հանգամանքները կարող են հաշվի առնվել պատժի անհատականացման գործընթացում:

Օրենսդրորեն հստակ ֆիքսվել է հափշտակության ավարտման պահը: Ինչպես վերը նշվեց՝ հափշտակությունն **ավարտված է համարվում**, եթե հանցավորը հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել:

Նշված ձևակերպմամբ՝ չի նշվել գույքի **տիրապետման** մասին, քանի որ, եթե հնարավոր է գույքն ապօրինի տնօրինել կամ օգտագործել, ապա՝ ապօրինի տիրապետում հասկացությունն առարկայագուրկ է:

Նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 17-րդ կետը սահմանում է՝ «Հափշտակության, պատճառած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի **չափերը**՝ սույն օրենսգրքում հափշտակված գույքի, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերի»: Այս դրույթի սահմանումը հույժ կարևոր է և այն ունակ է էապես դյուրինացնելու իրավակիրառ գործունեությունը, հանցագործությունների որակման գործընթացը, իսկ դրա նախատեսմամբ՝ օրենսգրքին հաղորդվում է միասնական տրամաբանություն: Այլևս յուրաքանչյուր դեպքում կարիք չկա ուսումնասիրելու տարբեր հանցատեսակներում ներառված չափերը (իհարկե առկա են որոշակի բացառություններ), համադրելու դրանք միմյանց հետ, իսկ նախկին քրեական օրենսգրքում նախատեսված տարատեսակ չափերի առնչությամբ հարկ է փաստել, որ դրանք հաճախ սահմանված էին անորոշ տրամաբանությամբ՝ առաջացնելով իրավական շփոթ: Ընդ որում՝ նոր ձևակերպումը վերաբերելի է ոչ միայն հափշտակություններին, այլև պատճառած գույքային վնասին կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի չափերին:

Հոդված 3-ի 8-րդ կետը սահմանում է **բնակարանի** հասկացությունը, որը ևս հույժ կարևոր է քրեական օրենսդրության միասնականության դիտանկյունից: Նշված դրույթը

սահմանում է՝ «Բնակարան՝ շինությունը, կառույցը կամ դրանց մասը, որը նախատեսված է կամ օգտագործվում է բնակության համար, համապատասխանաբար դրանց հարող ծածկապատշգամբը, վերնասրահը, պատշգամբը, նկուղը կամ ձեղնահարկը կամ այլ շինությունը կամ կառույցը, որոնցից անարգել մուտք է առկա բնակության համար օգտագործվող կամ նախատեսված շինություն, կառույց կամ դրանց մաս, ինչպես նաև հյուրանոցային համարը, նավախցիկը, **հիվանդասենյակը**, գնացքի **մեկուսացված** ճամփորդախցիկը, գետային կամ ծովային նավը կամ այլ տրանսպորտային միջոցը, եթե դրանք մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում են բնակության համար»:

Պետք է նշել, որ նշված հասկացությունը տարբերվում է ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքում գետեղված բնակարանի հասկացությունից, որի 6-րդ հոդվածի 56-րդ կետը սահմանում է՝ «Բնակարան՝ շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է **որոշակի անձի կամ անձանց** բնակության, **հանգստի, գույք պահելու**, ինչպես նաև որոշակի անձի կամ **անձանց մասնագիտական կամ այլ պահանջմունքները բավարարելու համար**, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, **ավտոտնակը, այգետնակը, հյուրանոցային համարը**, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, դրանց այլ բաղկացուցիչ մասերը, **համապատասխանաբար դրանց անմիջական հարող մասնավոր տարածքները, մասնավոր և ծառայողական տրանսպորտային միջոցը, ինչպես նաև աշխատասենյակը**»:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 3-ի 9-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը՝ «**Բռնություն**՝ այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը»: Այս հասկացության գետեղումը ևս կարևոր է հափշտակության եղանակների (հատկապես՝ ավազակության) համատեքստում: Տեսական, բովանդակալից քննարկումներից խուսափելու նկատառումներով՝ նշենք, որ սույն հասկացության գետեղումը կարևոր է, սակայն այն հաջողված համարվել չի կարող, քանի որ՝ ցանկացած դիտավորյալ ֆիզիկական ներգործություն, անգամ ձեռքով բարևելը, թեթև հրելը և այլն, նշված համատեքստում, կարող է դիտվել որպես բռնություն: Բռնության հասկացությանը Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան

տառապանք» (տե՛ս Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱԸԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետը): Թեև նշված ձևակերպումը ևս անխոցելի չէ, սակայն այն ավելի համապարփակ է, քան նոր քրեական օրենսգրքում առկա ձևակերպումը և այս համատեքստում, կարծում ենք, անհրաժեշտ է բռնության հասկացությունը վերաձևակերպել:

Այժմ անդրադառնանք հափշտակության առանձին եղանակների ուսումնասիրությանը և նոր իրավակարգավորումներով կատարված փոփոխություններին:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում **ավազակության** համար: Հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Ավազակությունը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հափշտակությունը»: Չնայած որոշակի նմանությանը՝ այս ձևակերպումն արմատապես տարբերվում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 175-ի 1-ին մասով տրված սահմանումից, որն ուներ հետևյալ բովանդակությունը՝ «Ավազակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»:

Նոր իրավակարգավորմամբ՝ արդեն իսկ տրվել է հափշտակության հասկացությունը և **ուրիշի գույքի** մասին նշում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Բացի այդ, նոր ձևակերպումը լուծել է վաղուց տեսության մեջ քննարկվող խնդիրը, համաձայն որի՝ նախկին ձևակերպմամբ ավազակությունը չէր կարող «դասական» իմաստով համարվել հափշտակություն, քանի որ հափշտակության բոլոր տեսակները ենթադրում են նյութական հանցակազմ, իսկ ավազակությունը ըստ օրենսդրական նկարագրման եղանակի ձևական, իսկ որոշ տեսաբանների կարծիքով՝ հատված հանցակազմ էր: Այսինքն՝ նոր իրավակարգավորմամբ՝ ավազակությունը ևս ձևակերպվել է նյութական հանցակազմով և ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորը հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Սա կարևոր փոփոխություն է և դրա արդյունքում, բազմաթիվ դեպքեր, որոնք նախկին իրավակարգավորմամբ որակվում էին որպես ավարտված ավազակություն, նոր կարգավորմամբ կորակվեն որպես ավազակության փորձ կամ նախապատրաստություն (կախված իրավիճակից):

Նոր ձևակերպմամբ նախատեսված չէ նաև «**հարձակում**» եզրույթը, ինչը ևս ճիշտ մոտեցում է: Հարձակումը միշտ ենթադրում է ֆիզիկական ակտիվ ագրեսիա, բռնության ակտիվ դրսևորում, մինչդեռ քիչ չեն այն դեպքերը, երբ ավազակության պարագայում որևէ ակտիվ, ագրեսիվ գործողություն չի կատարվում, այլ օրինակ՝ ուրիշի թանկարժեք գույքին տիրանալու նպատակով նրա կերակրի մեջ թույն են լցնում, անձը զրկվում է

կյանքից կամ նրա առողջությանը վնաս է պատճառվում, իսկ վերջինիս գույքը հափշտակվում է: Անշուշտ՝ նման դեպքերը պետք է որակել որպես ավազակություն, սակայն «հարձակման» հայեցակարգում դրանք չեն ներառվում: Այս պատճառով՝ օրենսդիրն արդարացիորեն հրաժարվել է այդ եզրույթից և բռնության ցանկացած դրսևորմամբ (այս հասկացության մասին վերը խոսվել է) հափշտակությունը, նոր օրենսգրքի համաձայն՝ կորակվի որպես ավազակություն:

Նոր իրավակարգավորմամբ՝ կարևոր չէ նաև դրսևորված բռնության բնույթը և վտանգավորությունը, **էական չէ՝ այն կյանքի կամ առողջության համար վտանգավոր է, թե ոչ**, ցանկացած բռնության կամ դրա սպառնալիքի արդյունքում կատարված հափշտակությունը պետք է որակել **որպես ավազակություն**: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 176-ի 2-րդ մասի 4-րդ կետը, **որպես կողոպուտի ծանրացնող հանգամանք** նախատեսում էր «գուգորդվել է կյանքի կամ առողջության համար **ոչ վտանգավոր** բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»: Նոր ձևակերպմամբ՝ այս ծանրացնող հանգամանքը նախատեսված չէ և նման դեպքերը, ինչպես նշվեց, կորակվեն որպես ավազակություն:

Զգալի փոփոխությունների են ենթարկվել նաև ավազակության ծանրացնող հանգամանքները: Սույն ուղեցույցի շրջանակներում կքննարկենք այն որակյալ տեսակները, որոնք նոր են կամ արմատապես վերափոխվել կամ վերաձևակերպվել են: 252-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը համապատասխանաբար սահմանում են՝ «1) հղի կնոջ նկատմամբ, 2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ»: Նշված անձանց նկատմամբ կատարված ավազակության առավել մեծ վտանգավորությունն ակնհայտ է և նշված ծանրացնող հանգամանքների նախատեսումն արդարացված պետք է համարել: Հղիության հանգամանքը, որպես սույն որակյալ հանցակազմի հատկանիշ, պետք է գիտակցվի հանցավորի կողմից, այլապես այն չի կարող վերագրվել վերջինիս: Անօգնական վիճակում գտնվող անձի հասկացությունը տրված է հոդված 3-ի 1-ին մասի 1-ին կետով: 252-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է ավազակությունն առանձին դաժանությամբ կատարելը: Քննարկվող որակյալ տեսակի նախատեսումը ևս ճիշտ է, քանի որ գործնականում քիչ չեն այն դեպքերը, երբ ավազակությունը կատարվում է առանձին դաժանության դրսևորումներով, տուժած անձի կամ նրա մերձավորի նկատմամբ այնպիսի միջոցներ, գործիքներ, նյութեր և այլն, գործադրելով, որոնք վերջիններիս պատճառում են ուժեղ ֆիզիկական ցավ, կամ նրանց հասցնում են բազմաթիվ հարվածներ, կտրվածքներ՝ ուժեղ ցավ կամ տառապանք պատճառելու նպատակով: Այս իրավիճակներին պետք է տրվի ավելի խիստ քրեաիրավական գնահատական, ինչը կարող է իրագործվել նոր իրավակարգավորումների շրջանակներում:

Որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանք՝ նախատեսվել է նաև

զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ ավազակություն կատարելը (հոդված 252, 2-րդ մասի 5-րդ կետ): Համանման ծանրացնող հանգամանք նախատեսված էր նաև նախկին քրեական օրենսգրքի հոդված 175-ի 2-րդ մասի 4-րդ կետով՝ «Զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ»: Նոր ձևակերպման հիմնական տարբերությունը հանգում է նրան, որ դեպքի վայրից վերցված առարկաները, եթե դրանք չեն ներառվում «զենք» հասկացության մեջ ( «Զենքի մասին» օրենքի համատեքստում), չեն առաջացնում քննարկվող ծանրացնող հանգամանքներով հանցակազմը: Օրինակ՝ եթե հանցավորը ռեստորանում սեղանի վրայից վերցված շշով հարվածում է տուժածի գլխին և հափշտակում է վերջինիս դրամապանակը, ապա այլ ծանրացնող հանգամանքների բացակայության պարագայում՝ արարքը պետք է որակել որպես «հասարակ» ավազակություն, այսինքն՝ քննարկվող հոդվածի 1-ին մասով: Հարկ է փաստել, որ, իրոք, տարբեր է վտանգավորությունը այն իրավիճակների միջև, երբ գործիքը կամ միջոցն անձը նախապես պատրաստել կամ հարմարեցրել է առողջությանը կամ կյանքին վնաս պատճառելու համար և այն իրավիճակների միջև, երբ դրանք պատահաբար, իրադրությանին են հայտնվում հանցավորի տիրապետության տակ: Նորից շեշտենք, որ խոսքը չի վերաբերում այն առարկաներին, որոնք «զենք» են հանդիսանում:

Որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսվել է նաև ավազակությունը՝ «Տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով» կատարելը: Չնայած թվացյալ բարդությանը, այս ծանրացնող հանգամանքի նման ձևակերպման իմաստը հանգում է նրան, որ հանցավորը պետք է գիտակցի, որ **որոշակի ֆիզիկական արգելք է հաղթահարում**: Այն դեպքերում, երբ անձը որևէ ֆիզիկական արգելք չի հաղթահարում, այլ օրինակ՝ ուղղակի մտնում է պահեստի բաց դռնով կամ բացված վիճակում գտնվող չիրկիզվող պահարանից է կատարում ավազակության եղանակով հափշտակությունը, ապա այն չի դիտվի սույն ծանրացնող հանգամանքով կատարված: Իսկ այն դեպքում, երբ հանցանք կատարած անձը որոշակի միջոցների կամ առարկաների գործադրմամբ հաղթահարում է արգելք՝ գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով, ապա առկա է քննարկվող հափշտակության տեսակի ծանրացնող հանգամանքը: Նախկին իրավակարգավորմամբ՝ պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելու եղանակով ավազակության ծանրացնող հանցակազմի փոխարեն, նախատեսվել է վերը նշված իրավակարգավորումը, ինչն



ավելի հստակ է և արդարացի, այն կարող է նպաստել հանցագործությունների որակման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Եթե այլ հափշտակության եղանակների պարագայում (գողություն, կողոպուտ) **բնակարան** մուտք գործելով հափշտակության կատարումը նախկին իրավակարգավորմամբ նախատեսվել էր որպես հանցակազմի **առավել ծանրացնող հանգամանք**, ապա ավագակության պարագայում դրսևորվել էր «**պարադոքսալ**» մոտեցում և բնակարան մուտք գործելով ավագակությունը նախատեսվել էր որպես ծանրացնող հանգամանք հոդվածի երկրորդ մասով՝ պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելու հետ մեկտեղ: Նոր իրավակարգավորմամբ այս բացը շտկվել է և **բնակարան մուտք գործելով ավագակությունը նախատեսվել է որպես հանցակազմի առավել ծանրացնող հանգամանք**: Ընդ որում՝ բնակարանի պարագայում, բացարձակապես էական չէ՝ հանցավորը որևէ ֆիզիկական արգելք հաղթահարել է ապօրինի մուտք գործելու համար, թե ոչ: Այս դեպքում՝ անգամ բաց դռնից, անխոչընդոտ, սակայն ապօրինի (առանց բնակարանում օրինական հիմքերով բնակվող անձի կամքի կամ այն անտեսելով) բնակարան մուտք գործելով կատարված ավագակությունը պետք է որակել հանցակազմի առավել ծանրացնող հանգամանքով:

«Բնակարան ապօրինի մուտք գործելով» ծանրացնող հանգամանքին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գողության հանցակազմը մեկնաբանելիս Արայիկ Հակոբյանի և Արտակ Գրիգորյանի գործով որոշմամբ, համաձայն որի՝ *□(...)* *[Ք]ննարկվող ծանրացնող հանգամանքի առկայության կամ բացակայության հարցը լուծելիս ուղենիշային են համարվում ոչ միայն հափշտակության կատարման վայրը (բնակարանը), գույքը հափշտակելու դիտավորության առաջացման պահը (հափշտակության դիտավորությունը պետք է ծագած լինի նախքան բնակարան մուտք գործելը), այլև հանցագործության եղանակը՝ բնակարան մուտք գործելը, որը պետք է իրականացվի ապօրինի:*

11. Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բնակարան մուտք գործելը կարող է կատարվել հանցավորի կողմից ինչպես ֆիզիկական, այնպես էլ տեխնիկական միջոցներով կամ տարատեսակ սարքերով, գաղտնի կամ բացահայտ եղանակով բնակարան ներթափանցելով: Ինչ վերաբերում է բնակարան մուտք գործելու ապօրինությանը, ապա այն ենթադրում է, որ հանցավորը հայտնվում է ուրիշի բնակարանում առանց համապատասխան իրավական հիմքերի, բնակարանի տիրոջ կամքին հակառակ, մասնավորապես՝ առանց նրա թույլտվությունը կամ համաձայնությունը ստանալու կամ նրա կամքն ընդհանրապես անտեսելով: Այսպես՝ ներթափանցումը կարող է իրականացվել ինչպես գաղտնի, այնպես էլ բռնություն գործադրելով, դրա սպառնալիքով կամ խաբեության միջոցով, այն է՝ հանցավորի կողմից բնակարանի սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ բնակարան

մուտք գործելու թույլտվությունը կամ համաձայնությունը ձեռք բերելը՝ վերջինիս մոլորության մեջ զգելու արդյունքում (օրինակ՝ ներկայանում է որպես իշխանության կամ սպասարկման ծառայության ներկայացուցիչ, էլեկտրաէներգիայի կամ գազի մատակարարման կազմակերպության աշխատակից, վերանորոգող-փականագործ և այլն): Ընդ որում, բնակարան ապօրինի մուտք գործելու վերոնշյալ եղանակներն արարքի քրեափրավական որակման վրա որևէ կերպ չեն ազդում:

Մինևույն ժամանակ, գողության քննարկվող ծանրացնող հանգամանքը բացակայում է, եթե անձն օրինական հիմքերով է գտնվում բնակարանում (պայմանավորված, օրինակ, ազգակցական կամ ընկերական հարաբերություններով կամ այլ հանգամանքների բերումով), ինչպես նաև այն դեպքում, երբ հափշտակության դիտավորությունը ծագում է բնակարան մուտք գործելուց հետո՝ այնտեղ գտնվելու ընթացքում: Այնինչ, խնդրո առարկա որակյալ հանցակազմի առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է փաստել, որ հանցավորը մուտք է գործել բնակարան հենց ուրիշի գույքը հափշտակելու նպատակով, այսինքն՝ հափշտակության դիտավորությունը վերջինիս մոտ ծագել է նախապես՝ մինչև բնակարան մուտք գործելը:

12. Այսպիսով, ընդհանրացնելով սույն որոշման նախորդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարված գողությունը բնակարան ապօրինի մուտք գործելու ծանրացնող հանգամանքով որակելու համար անհրաժեշտ է հավաստել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝ բնակարան մուտք գործելը եղել է ապօրինի և հափշտակության դիտավորությունը ծագել է նախքան այնտեղ ներթափանցելը:

Անդրադառնալով խաբեությանը բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խաբեությունը դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելն է, անձին դիտավորյալ մոլորության մեջ զգելը, որը կարող է իրականացվել կոնկրետ փաստերը խեղաթյուրելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այլ եղանակներով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած բնակարանի սեփականատերը կամ այլ տիրապետողը թույլատրում է կամ չի խոչընդոտում հանցավորի մուտքը բնակարան: Այլ կերպ՝ թեև տվյալ դեպքում հանցավորը ստանում է տուժողի «համաձայնությունը», այնուամենայնիվ դա որևէ նշանակություն չի կարող ունենալ, քանի որ նման «համաձայնությունը» ձեռք է բերվում խաբեությամբ անձի կամքի և գիտակցության վրա ներագդելու, նրան դիտավորությամբ մոլորության մեջ զգելու արդյունքում, հետևաբար ցանկացած պարագայում պետք է դիտարկվի որպես անձի կամքին հակառակ վերջինիս բնակարան ապօրինի մուտք գործել (...) <sup>124</sup>:

<sup>124</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Հակոբյանի և Արտակ Գրիգորյանի գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱՔԴ/0063/01/17 որոշումը:

Հարկ է նկատել, որ քննարկվող մեկնաբանությունը չի կորցրել իր արդիականությունը, սակայն, կարծում ենք, որ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո բոլոր վերաբերելի նախադեպային որոշումներն անհրաժեշտ է նորովի վերաձևակերպել՝ տեղայնացնելով դրանք նոր իրավակարգավորումների համատեքստում:

Որպես ավագակության առավել ծանրացնող հանգամանք՝ նախատեսվել է նաև «Պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով» կատարելը (հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ): Քանի որ նոր քրեական օրենսգրքում որպես հափշտակության ինքնուրույն տեսակ նախատեսված չէ նախկին քրեական օրենսգրքի հոդված 180-ով նախատեսված «Առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելու» հանցակազմը, այն որպես ծանրացնող հանգամանք նախատեսվել է մի շարք հափշտակության եղանակների պարագայում:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 253-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «**Կողոպուտը**՝ բացահայտ հափշտակությունը, երբ հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ»: Որոշակի կրկնաբանություն պարունակող սույն ձևակերպման նպատակն այն է, որ օրենսդրական մակարդակում անհրաժեշտ էր լուծել տեսության մեջ վաղուց քննարկված և, ընդհանուր առմամբ ընդունելի այն հարցը, որ կողոպուտի պարագայում կարևոր է հանցավորի սուբյեկտիվ ընկալումը՝ կատարված հափշտակության բացահայտ լինելու կապակցությամբ: Թեև այլ անձինք կարող են կարծել, որ իրականում հափշտակություն տեղի չի ունենում, անձն օրինակ՝ վերցրել է իր գույքը կամ խանութից կատարել է առևտուր, սակայն կարևորն այն է, թե ինչպես է իրավիճակն ընկալվում հանցանք կատարած անձի կողմից: Եթե վերջինս գիտակցում է կատարված հափշտակության բացահայտ լինելը, ապա այն պետք է որակվի որպես կողոպուտ, անկախ նրանից՝ իրականում կատարվածը գաղտնի է եղել, թե բացահայտ: Այս համատեքստում՝ գործնականում խնդրահարույց է այն հարցը, թե ինչպես պետք է որակել այն իրավիճակները, երբ անձը որևէ վայրից կատարում է հափշտակություն, որտեղ առկա են տեսանկարահանող սարքավորումներ: Հարցը պետք է լուծվի վերոնշյալ համատեքստում, եթե հանցավորը գիտակցում է, որ գործում է բացահայտ և իր արարքը տվյալ պահին ֆիքսվում է և կարող է գիտակցվել այլ անձանց կողմից, ապա արարքը պետք է որակվի որպես կողոպուտ, իսկ եթե վերջինս համոզված է, որ հափշտակությունը կատարելու պահին իրեն չեն նկատում (օրինակ՝ իրազեկված է, որ նշված տեխնիկական համակարգերն անսարք են), ապա արարքը պետք է որակել որպես գողություն: Եթե հանցավորը գիտակցում է, որ թեև հափշտակությունը կատարելու պահին իր արարքը բացահայտ չէ, սակայն հետագայում՝ տեսաձայնագրությունները դիտելու արդյունքում կարող է պարզվել հափշտակություն կատարած անձի ինքնությունը, ապա արարքը պետք է որակել որպես

գողություն, քանի որ հանցանքը կատարելու պահին անձը գործել է գաղտնի, հափշտակությունն ավարտվել է, իսկ հետագայում բացահայտվելու վտանգը չի կարող գնահատվել որպես բացահայտ հափշտակություն:

Քննարկվող հանցագործության որակման հետ կապված առկա է ևս մեկ խնդիր, կապված այն իրավիճակների հետ, երբ հանցանք կատարած անձը հափշտակությունը կատարում է իր մտերիմների (ամուսնու, ընկերների և այլն) ներկայությամբ, ովքեր թեն հանցակիցներ չեն, սակայն ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում կամ դիմադրում հափշտակության կատարմանը, հանդիսանում են համախոհներ: Այս դեպքում, արարքը պետք է որակել որպես գողություն, քանի որ հանցավորը համոզված է, որ գործում է գաղտնի և իր կատարած հափշտակությունը չի բացահայտվի: Այլ է իրավիճակը, երբ նշված անձինք (մտերիմները) դիմադրում են կամ պարսավանք են հայտնում կատարվածի կապակցությամբ, փորձում են խոչընդոտել հանցանքի կատարմանը: Այս պարագայում՝ անկախ միջանձնային հարաբերությունների բնույթից՝ արարքը պետք է որակել որպես կողոպուտ, քանզի հանցավորը գիտակցում է, որ կատարում է բացահայտ հափշտակություն:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 254-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «**Գողությունը**՝ գաղտնի հափշտակությունը (...): Պայմանավորված այն հանգամանքով, որ հափշտակության հասկացությունը տրվել է ընդհանուր մասում (վերն այս մասին խոսվեց), նոր իրավակարգավորումն ունի ավելի հակիրճ և համապարփակ տեսք, դրանում նշված չեն հափշտակության առանձին հատկանիշներ: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 177-ի 5-րդ մասը սահմանում էր՝ «Գողություն է **համարվում ուրիշի գույքի** գաղտնի հափշտակությունը»: Նոր իրավակարգավորմամբ, ինչպես նշվեց, հափշտակության հատկանիշ հանդիսացող «ուրիշի գույքի» մասին նշումը բացակայում է: Արարքի **գաղտնի լինելու կապակցությամբ** նշանակություն ունի հանցավորի սուբյեկտիվ ընկալումը: Անգամ այն պարագայում, երբ շատերը նկատում են, որ անձը հափշտակություն է կատարում, սակայն վերջինս կարծում է, թե գործում է գաղտնի, արարքը պետք է որակել գողության հանցակազմով: Եթե գաղտնի սկսված հափշտակությունը, ընթացքում վերափոխվում է բացահայտի կամ բռնություն գործադրելով կամ դրա գործադրման սպառնալիքով հափշտակության, ապա արարքը ենթակա է որակման հափշտակության առավել ծանր տեսակով: Այս պարագայում՝ հափշտակությունը պետք է դիտարկել որպես միասնական հանցակազմ և որակել դրա այն եղանակով, որով ավարտվել է արարքը կամ հանցավորի կամքից անկախ հանգամանքներով՝ ընդհատվել: Ասվածն առավելապես վերաբերելի է գողության, կողոպուտի և ավազակության հանցակազմերին, քանի որ հափշտակության այլ

եղանակների պարագայում՝ այս տրանսֆորմացիան դժվար է պատկերացնել: Օրինակ՝ եթե անձը փորձում է կատարել գողություն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով արարքն ավարտին չի հասնում՝ գողությունը այնուհետև չի կարող վերափոխվել խարդախության: Եթե նույն տուժածից հետագայում խաբեությամբ գույք է հափշտակվում, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ գողության փորձ և խարդախություն: Սակայն եթե նույն իրավիճակում՝ գողությունը չի հաջողվում և անձը շարունակում և ավարտում է հափշտակությունը՝ արդեն բացահայտ կերպով, արարքը պետք է որակել որպես կողոպուտ:

Նախկին քրեական օրենսգրքի հոդված 177-ի 1-ին մասը ձևակերպված էր հետևյալ կերպով՝ «Գողությունը, որը կատարվել է **զգալի չափերով**(...)»:

Նոր իրավակարգավորմամբ՝ գողության, ինչպես նաև հափշտակության այլ եղանակների պարագայում (խարդախություն, վստահված գույքը հափշտակելը և այլն), հափշտակության նվազագույն չափ սահմանված չէ: Ցանկացած արժեքի գույքի հափշտակությունը հանցանք է: Իհարկե՝ արդիական է 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը, համաձայն որի՝ «Հանցանք չի համարվում այն արարքը, որը թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հատկանիշներ, սակայն իր նվազ վտանգավորության պատճառով ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանն էական վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել»: Սա գնահատողական կատեգորիա է և յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողը պետք է որոշի՝ կիրառելի է արդյո՞ք այս դրույթը կոնկրետ իրավիճակի պարագայում: Հարկ է նշել, որ այստեղ կարևոր է նաև տուժած անձի ընկալումը, որովհետև նյութական մեծ արժեք չունեցող իրը, կարող է շատ մեծ արժեք հանդիսանալ վերջինիս համար:

Այսպիսով՝ հարկ է փաստել, որ օրենսդիրը, նոր իրավակարգավորմամբ, հրաժարվել է այսպես կոչված «վարչական հափշտակություն» հասկացությունից (ՎԻՎՕ հոդված 53-ի 1-ին մաս (մինչև 2022 թվականի հունիսի 9-ի փոփոխությունները))՝ քրեականացնելով նաև մանր չափերով հափշտակությունը:

Նոր օրենսգրքով՝ նախկին քրեական օրենսգրքի հոդված 177-ի 1.1-մասով նախատեսված այսպես կոչված «գրպանահատության» դրույթը (Անձի մոտ գտնվող իրերի գողությունը, ինչպես նաև գողությունը, որը կատարվել է անձի մոտ գտնվող կամ նրա կրած հագուստից, այդ թվում՝ գրպանից, պայուսակից կամ անձի մոտ գտնվող այլ առարկայից), նախատեսվել է որպես ծանրացնող հանգամանք՝ 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ «տուժողի մարմնի վրայից, հագուստից, պայուսակից, այլ **պահոցից կամ օբյեկտից**»: Այս ծանրացնող հանգամանքի նախատեսումն ինքնին ողջունելի է, քանի որ՝ նման ձևով կատարված գողությունն ավելի վտանգավոր է, քանի որ մեծ է

բացահայտվելու վտանգը, որի պարագայում կարող է վնաս պատճառվել նաև տուժողի կյանքին կամ առողջությանը: Կիրառման առումով կարծում ենք **«օբյեկտից», «այլ պահոցից»** հասկացությունները պետք է մեկնաբանվեն որպես անձի մոտ գտնվող օբյեկտ կամ պահոց:

Հանցակազմի մյուս ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 255-ի 1-ին մասը սահմանում է՝ «Խարդախությունը՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակությունը(...)»: ՀՀ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ կետերը սահմանում են խաբեության և վստահությունը չարաշահելու հասկացությունները: Հոդված 3-ի 11-րդ կետը սահմանում է՝ «խաբեություն՝ դիտավորությամբ իրականությունը խեղաթյուրելը՝ կոնկրետ փաստերը ձևախեղելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել»: Այս հասկացության նախատեսումը հույժ կարևոր է և թույլ է տալիս գործնականում լուծել մի շարք տեսական հարցեր: Այս բնորոշումից բխում է, որ խաբեությունը կարող է դրսևորվել նաև **անգործությամբ**, երբ անձը լռում է իր իրական մտադրության մասին կամ այնպիսի տեղեկություն չի հաղորդում, որն անձը պարտավոր էր հաղորդել: Այս բնորոշումից հետևում է նաև, որ խաբեությունը հիմնականում վերաբերում է **անցյալի կամ ներկայի փաստերը խեղաթյուրելուն**: Նշվածը հիմնավորվում է նաև վստահության չարաշահելու բնորոշմամբ, որը, հոդված 3-ի 12-րդ կետով ձևակերպված է հետևյալ կերպով՝ «Վստահությունը չարաշահել՝ որոշակի վարքագծով, խոստումներով կամ հանցագործությունից տուժածի հետ ունեցած միջանձնային հարաբերություններն օգտագործելով՝ հանցավորի կամ այլ անձի **ապագա վարքագծի կամ ապագայում սպասվող փաստերի կամ իրադարձությունների կապակցությամբ** անձին դիտավորությամբ մոլորության մեջ գցելը»: Որոշ հեղինակներ առաջարկում են վստահության չարաշահումը դիտարկել որպես խաբեության տարատեսակ, նշելով, որ այն ոչ թե հանցանքի կատարման ինքնուրույն եղանակ է, այլ ընդամենը խաբեության դրսևորման յուրահատուկ ձև: Մակայն կարծում ենք, որ վստահության չարաշահման ինքնուրույն հասկացությունը կարևոր է, քանի որ այս դեպքում՝ ժամանակային գործոնի առանձնացումն էական է: Պետք է նշել նաև, որ, ի տարբերություն «խաբեության», «վստահությունը չարաշահելը» **միշտ կատարվում է գործողությամբ**:

Այսպիսով՝ հարկ է նկատել, որ նշված հասկացությունների օրենսդրորեն սահմանումը կարող է էապես դյուրինացնել հանցագործությունների որակման գործընթացը՝ հնարավորինս զերծ պահելով իրավակիրառ պրակտիկան տեսության մեջ

առկա տարակարծություններից:

Պետք է նշել, որ խարդախության օրենսդրական բնորոշման մեջ չի նշվել «նախնական դիտավորության» կամ «նախապես հափշտակություն կատարելու նպատակով» գործադրված խաբեության կամ վստահությունը չարաշահելու մասին, ինչը կարող է գործնականում տարամեկնաբանությունների առարկա լինել և բարդացնել սույն հանցանքի տարանջատումը վստահված գույքը հափշտակելու կամ խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելու հանցատեսակներից:

Խարդախության հանցակազմին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Լիա Ավետիսյանի գործով որոշմամբ, որի համաձայն՝ (...) Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Դուրգարյանի կողմից Լ.Ավետիսյանին բնակարան գնելու համար գումար տալու փաստի ապացուցման հիմնախնդիրը վերաբերում է մասնավոր իրավունքի ոլորտին, և այդ հարցով հանրային շահը չի գերակայում մասնավոր շահի նկատմամբ:

Փաստորեն, Հ.Դուրգարյանի և Լ.Ավետիսյանի միջև առկա է քաղաքացիաիրավական բնույթի վեճ այն հարցի շուրջ, թե արդյոք Հ.Դուրգարյանը Լ.Ավետիսյանին տվել է գումար: Սույն գործի փաստերի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հ.Դուրգարյանի և Լ.Ավետիսյանի միջև առկա վեճը ենթակա է լուծման քաղաքացիական իրավունքի նորմերին համապատասխան և քաղաքացիական դատավարության կարգով: Հետևաբար, սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադառնում է բացառապես Լ.Ավետիսյանին վերագրվող արարքին քրեաիրավական գնահատական տալու խնդրին և գտնում է, որ նախաքննական մարմինը և ստորադաս դատարանները հանգել են սխալ հետևության այն մասին, որ Լ.Ավետիսյանի արարքում առկա է խարդախության հանցակազմ:

Սույն որոշման նախորդ կետում առկա իրավական դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի հիմքում դրված և մեղադրական դատավճռում շարադրված ապացույցների շարքում առկա չէ ոչ մի փաստական տվյալ այն մասին, թե ինչ հանցավոր վարքագիծ է դրսևորել Լ.Ավետիսյանը, որով ներգործել է Հ.Դուրգարյանի գիտակցության և կամքի վրա, որի արդյունքում վերջինս, ընկնելով մոլորության մեջ, անձամբ գույք է հանձնել Լ.Ավետիսյանին (տե՛ս սույն որոշման 23-25-րդ կետերը): Այսինքն՝ գործի նյութերով հիմնավորված չէ Լ.Ավետիսյանի կողմից այնպիսի արարքի կատարում, որը կգնահատվեր որպես խարդախություն: Հետևաբար, բացակայում է խարդախության հանցակազմի օբյեկտիվ կողմը՝ վստահությունը չարաշահելու միջոցով ուրիշի գույքին տիրանալը:

Ինչ վերաբերում է խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմին, ապա գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրանքի կողմը չի ներկայացրել որևէ

պաշտոնական վարկած Լ.Ավետիսյանի արարքում խարդախության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայության մասին: Այսինքն՝ չի հիմնավորվել, որ մինչև Հ.Դուրգարյանի գույքը վերցնելը կամ գույքին տիրանալը Լ.Ավետիսյանը դրսևորել է գույքի հափշտակման ուղղակի դիտավորություն և ունեցել է այն հափշտակելու նպատակ: Սույն որոշման 26-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա՝ այդ դեպքում խարդախությունը բացակայում է:

Հիմք ընդունելով սույն որոշման 22-38-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Ավետիսյանի արարքում բացակայում է խարդախության հանցակազմի թե՛ օբյեկտիվ կողմը և թե՛ սուբյեկտիվ կողմը:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը հիմնադրել է համարում Լ.Ավետիսյանի կողմից Հ.Դուրգարյանի վստահությունը չարաշահելու միջոցով վերջինիս գույքը հափշտակելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Լ.Ավետիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցակազմը բացակայում է: (...) Հարկ է նկատել, որ սույն որոշմամբ արտահայտված մի շարք իրավական դիրքորոշումներ խիստ վիճահարույց են և կարող են հիմք հանդիսանալ գործնականում դրանց կամայական մեկնաբանության համար: Հատկապես խնդրահարույց է Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն առ այն, որ «(...) գումար տալու փաստի ապացուցման հիմնախնդիրը վերաբերում է մասնավոր իրավունքի ոլորտին, և այդ հարցով հանրային շահը չի գերակայում մասնավոր շահի նկատմամբ»: Գործնականում այս դրույթը հաճախ մեկնաբանվում է այն համատեքստում, որ եթե գույքը ստանալու պահին անձը հափշտակության դիտավորություն չի ունեցել, ապա հետագայում հարցը պետք է քննարկվի բացառապես քաղաքացիաիրավական տիրույթում: Մինչդեռ նախկին իրավակարգավորմամբ նախատեսված էր յուրացնելը կամ վատնելը հանցակազմը, իսկ նոր կարգավորմամբ՝ վստահված գույքը հափշտակելու հանցակազմը, որի հատկանիշները լիովին կարող են առկա լինել այն անձի արարքում, ով, թեև գույքը ստանալու պահին հափշտակության դիտավորություն չի ունեցել, սակայն հետո որոշել է յուրացնել կամ վատնել իրեն վստահված, օրինակ՝ փոխառությամբ տրամադրված գույքը: Կարծում ենք, այս ընդհանուր առմամբ հաջողված նախադեպային որոշումը հետագայում, վերաբերելի մասով, անհրաժեշտ է վերանայել և ընդգծել այն սահմանը, երբ քաղաքացիաիրավական հարաբերությունների արդյունքում ստացված գույքը կարող է հափշտակվել:

Խարդախության հանցակազմին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Աշոտ Սուքիասյանի գործով որոշմամբ, համաձայն որի՝ «(...) Վճռաբեկ դատարանը խարդախության հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների վերաբերյալ



մշտապես ընդգծել է, որ խարդախությունն օբյեկտիվ կողմից դրսևորվում է ուրիշի գույքը հափշտակելով, այսինքն՝ այն վերցնելով, հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով, տուժողի կամքի կամ գիտակցության վրա ներգործելու եղանակով, այն է՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով: Սուբյեկտիվ կողմից խարդախությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ և **շահադիտական դրդումներով**: Ընդ որում, խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

ա) խարդախության դեպքում տուժողին խաբելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է **նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը**:

բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դիտավորությունը ծագում է **նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը**<sup>125</sup>: (...)»<sup>126</sup>: Հարկ է նշել, որ նոր քրեական օրենսգրքում առկա հասկացությունների համատեքստում, սույն որոշումը կարող է կորցնել իր արդիականությունը և հետագայում անհրաժեշտ կլինեն այս հարցի կապակցությամբ նոր մեկնաբանություններ:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, միայն հարկ է նշել, որ նախկին օրենսգրքով նախատեսված խիստ վիճահարույց՝ «կաշառք ստանալու պատրվակով» (հոդված 178-ի 2-րդ մասի 5-րդ կետ) խարդախությունը, նոր իրավակարգավորմամբ չի նախատեսվել որպես ծանրացնող հանգամանք, ինչը միանշանակ՝ ողջունելի է:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 179-ը պատասխանատվություն էր սահմանում յուրացնելու կամ վատնելու համար: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում էր՝ «Յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով(...)»: Տեսական մակարդակում բազմիցս քննարկվել են յուրացման և վատման նմանություններն ու տարբերությունը, խոսվել է դրանց առանձին հանցակազմ լինելու մասին և այլն: Սակայն թե՛ արարքի վտանգավորության և թե՛ տուժածի դիտակետից գրեթե միևնույն է՝ վստահված գույքը հափշտակելուց հետո հանցավորն այն միացրել է իր գույքային ֆոնդին՝ դարձրել է իրենը, թե՛ սպառել է՝ հանձնել է ուրիշին: Այս համատեքստում, նոր իրավակարգավորմամբ՝ յուրացնելու և վատնելու հանցակազմերը միավորվել են,

<sup>125</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Լիա Ավետիսյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0176/01/09, Վարդան Մաթևոսյանի գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵՇԴ/0037/01/11, Նելլի Ավոնյանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0009/01/13 որոշումները:

<sup>126</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Աշոտ Սուքիասյանի* գործով 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ ԵԷԴ/0054/01/15 որոշումը:

պատասխանատվություն է սահմանվել վստահված գույքը հափշտակելու համար:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 256-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը **փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքի հափշտակությունը**, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո(...): Այս ձևակերպումն, ընդհանուր առմամբ, հաջողված է, քանի որ չի նշվում առանձին յուրացնելու կամ վատնելու մասին, ինչը կարող է դյուրինացնել իրավակիրառ պրակտիկան և հանցագործությունների որակման գործընթացը: Բացի այդ, ի տարբերություն խարդախության, այս հասկացության մեջ ներառվում է հափշտակության դիտավորության ծագման պահը, ինչը որոշակի առումով կարող է նպաստել նշված հանցատեսակների տարանջատմանը, սակայն, ինչպես վերը նշվեց, համաբնույթ կարգավորում անհրաժեշտ է նախատեսել նաև խարդախության հանցակազմի պարագայում:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի վերաբերյալ Սևակ Լսկավյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) *Յուրացումը սեփականության անվտանգությունն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ ուղղված հանցագործություն է, որը դասվում է հափշտակությունների շարքին: Յուրացման օբյեկտիվ կողմն արտահայտվում է հանցավորի կողմից իր լիազորությունների գործադրմամբ վստահված գույքն ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելով: (...):*»:

Վճռաբեկ դատարանի կողմից համանման իրավական դիրքորոշումներ են հայտնվել նաև Բենիկ Պապիկյանի գործով որոշմամբ՝ «(...) *Միննույն ժամանակ, յուրացման հանցակազմն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է հափշտակության մյուս եղանակներից: Մասնավորապես, յուրացման առարկան ոչ թե ցանկացած, այլ հանցավորին վստահված գույքն է, իսկ սուբյեկտը հատուկ է՝ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական այն անձը, ում վստահվել է ուրիշի գույքը և ում վերապահվել են որոշակի լիազորություններ այդ գույքի նկատմամբ: Այլ կերպ՝ յուրացման դեպքում խոսքը ոչ թե գույքը պարզապես հանցավորին հասանելի լինելու, այլ դրա նկատմամբ վերջինիս կողմից կոնկրետ լիազորություններ ունենալու և դրանց գործադրմամբ ուրիշի գույքը հափշտակելու մասին է: (...):*»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Արսեն Ավետիսյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) *Միննույն ժամանակ, անդրադառնալով յուրացման հանցակազմը մասնավոր-իրավական պայմանագրով ստանձնած գույքային պարտավորությունների չկատարումից սահմանազատելու անհրաժեշտությանը՝ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ հանցավորի կողմից իրեն վստահված գույքի*

հափշտակմամբ բնութագրվող յուրացման հանցակազմը չի կարող նույնացվել մասնավոր-իրավական պայմանագրով ստանձնած գույքային պարտավորությունների չկատարման հետ, երբ կնքված պայմանագրով սահմանված կարգին համապատասխան քաղաքացիական իրավունքի օբյեկտը պարտավորական իրավահարաբերության մի սուբյեկտի կողմից չի հանձնվում մյուսին: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գույքի սեփականատիրոջ իրավունքների ենթադրյալ խախտումների կապակցությամբ քրեադատավարական իրավահարաբերություններում **իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները չեն կարող օգտագործվել**, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավանորմների գործադրման արդյունքում: Այլ կերպ՝ քրեադատավարական կառուցակարգերը չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու, քաղաքացիական իրավահարաբերության օբյեկտի շուրջ ձևավորված վեճը լուծելու համար<sup>127</sup>:»<sup>128</sup> :

Վստահված գույքը հափշտակելու հանցակազմի որակյալ տեսակներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի 257-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Համակարգչային հափշտակությունը՝ ուրիշի գույքի հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության մուտքագրելու, փոփոխելու, ոչնչացնելու, ուղեփակելու (մեկուսացնելու) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործելու միջոցով»: Համանման իրավակարգավորում նախատեսված էր նաև ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածով, որը պատասխանատվություն էր նախատեսում հափշտակության համար, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում էր՝ «Ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ(. . .)»: Ինչպես նկատելի է, նոր իրավակարգավորումը նախատեսում է ավելի մանրամասն և հանգամանալից կարգավորում՝ առանձին նշելով հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորումները: Ընդհանրապես՝ համակարգչային հափշտակությունը, որպես հափշտակության ինքնուրույն եղանակ նախատեսելու հարցը, տեսական բազմաթիվ քննարկումների առարկա է հանդիսացել, քանի որ այս պարագայում խոսքը վերաբերում է կատարված հափշտակության գործիքներին կամ միջոցներին: Որոշ դեպքերում էլ՝ այն դիտարկվում է որպես տեղեկատվական կամ

<sup>127</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սևակ Լսկավյանի գործով վերը հիշատակված որոշման 12-12.3-րդ կետերը:

<sup>128</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Արսեն Ավետիսյանի գործով 2022 թվականի ապրիլի 8-ի թիվ ԵԿԴ/0315/01/17 որոշումը:

համակարգչային հանցագործության տարատեսակ<sup>129</sup>:

Ամեն դեպքում, քանի որ ՀՀ օրենսդիրը քննարկվող հանցատեսակը նախատեսել է առանձին հանցակազմով, պետք է քննարկել դրա գործնական կիրառման հիմնախնդիրները: Հոդված 257-ով նախատեսված հանցակազմով արարքը պետք է որակել բոլոր այն դեպքերում, երբ հանցավորը հափշտակությունը կատարել է համակարգչային տվյալը ապօրինի մուտքագրելու, փոփոխելու, ոչնչացնելու, ուղեփակելու (մեկուսացնելու) կամ համակարգչի, համակարգչային համակարգի կամ համակարգչային ցանցի աշխատանքի նկատմամբ որևէ այլ եղանակով ներգործելու միջոցով: Դա կարող է կատարվել ինչպես համակարգչով, այնպես էլ սմարթֆոնով, կամ ցանկացած հաշվողական տեխնիկայի օգտագործմամբ: Էլեկտրոնային կամ համակարգչային տեղեկատվությունը կարող է ներմուծվել ինչպես կոնկրետ սարքի, օրինակ՝ բանկոմատի, այնպես էլ համացանցի միջոցով, հափշտակությունները կարող են կատարվել տարբեր էլեկտրոնային հաշիվներից, այդ թվում՝ կարող է հափշտակվել կրիպտոարժույթ (կրիպտոարժույթների հափշտակությանը, ինչպես նաև դրանց միջոցով կատարվող հանցատեսակներին առնչվող հիմնահարցերը խորը տեսական և գործնական վերլուծության կարիք ունեն): Եթե անձը համակարգչային տվյալը ներմուծում է համապատասխան ավտոմատացված սարքի, օրինակ՝ բանկոմատի մեջ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով, հափշտակությունն ավարտին չի հասնում, այնուհետև վերջինս ֆիզիկական ներգործության, տարբեր գործիքների միջոցով վնասում է սարքը և հափշտակությունն ավարտին է հասցնում, ապա կախված հափշտակության եղանակից՝ արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես համակարգչային հափշտակության փորձ և օրինակ՝ ծանրացնող հանգամանքներով կողոպուտ (տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով):

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

<sup>129</sup> [https://e-notabene.ru/lr/article\\_30745.html](https://e-notabene.ru/lr/article_30745.html)

## Գլուխ 31

### ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 258-ը պատասխանատվություն է սահմանում **շորթման** համար: Հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Շորթումը՝ անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,

3) շանտաժով կամ

4) հարկադրանքի այլ եղանակով(...):»:

Այս ձևակերպումն էականորեն տարբերվում է նախկին օրենսգրքում առկա շորթման հանցակազմից: Ընդլայնվել և հստակեցվել են թե՛ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքների շրջանակը և թե՛ դրա կատարման եղանակները: Նոր ձևակերպման համաձայն՝ շորթումը բնութագրվում է որպես անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ **հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու** պահանջ, որը կարող է իրականացվել մի շարք եղանակներով: Այս առումով՝ հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 132-ը, որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի տեսակ, նախատեսում է գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները: Այս համատեքստում՝ քրեական օրենքում կարելի էր նշել միայն գույք հասկացությունը: Նոր իրավակարգավորմամբ՝ նախատեսվել է նաև հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջը, այսինքն՝ հստակեցվել է նախկին օրենսգրքում առկա **«գույքային բնույթի այլ գործողություններ»** ընդհանրական հասկացությունը, որը տարամեկնաբանությունների տեղիք էր տալիս: Հստակ նշվել են նաև շորթման կատարման եղանակները՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիք,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիք,

3) շանտաժ (շանտաժի հասկացությունը տրված է քրեական օրենսգրքի հոդված 3-ով, որի 13-րդ կետը սահմանում է՝ «շանտաժ՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառող կամ անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու կամ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքը»),

4) հարկադրանքի այլ եղանակ:

Ըստ էության՝ նշված եղանակներից ամբողջությամբ նորույթ է միայն վերջին՝ 4-րդ կետը: Որպես նման հարկադրանք կարող է դիտվել աշխատանքից ազատելու, պարգևավճար չտրամադրելու և այլ դեպքերը:

Նախատեսվել են նաև մի շարք ծանրացնող հանգամանքներ, որոնցից շատերը նորույթ են և չունեն համարժեքներ նախկին իրավակարգավորմամբ: Նոր որակյալ տեսակներից հարկ է առանձնացնել հետևյալները՝ շորթումը, որը կատարվել է՝

- անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,
- ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,
- հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,
- անչափահասի նկատմամբ,
- արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի նկատմամբ,
- ժամկետային զինձառայողի նկատմամբ,
- իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Նշված ծանրացնող հանգամանքների նախատեսումը պետք է արդարացված համարել, քանզի նշված անձանց նկատմամբ, ինչպես նաև իշխանական լիազորությունների օգտագործմամբ շորթումն օժտված է բարձր հանրային վտանգավորությամբ և արարքի այդ դրսևորումներին պետք է տրվի ավելի խիստ քրեախրավական գնահատական:

Հանցակազմի առավել ծանրացնող հանգամանքները հիմնականում նախկին

իրավակարգավորման վերախմբագրված տարբերակներն են: Նոր օրենսգրքով որպես շորթման առավել ծանրացնող հանգամանք չի նախատեսվել «առողջությանը ծանր վնաս պատճառելով» տեսակը, որի պարագայում՝ արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ: Պետք է նշել նաև, որ որ **«անզգուշությամբ (...)** այլ **ծանր հետևանքի»** փոխարեն քննարկվող հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում սահմանվել է **«անզգուշությամբ (...) առողջությանը ծանր վնաս»** ծանրացնող հանգամանքը:

Նոր օրենսգրքի 259-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը վերախմբագրվել է և զգալիորեն տարբերվում է նախկին քրեական օրենսգրքի հոդված 184-ով նախատեսված հանցատեսակից: Հոդված 259-ի 1-ին մասը սահմանում է՝ **«Խաբեության, վստահությունը չարաշահելու կամ կեղծ տեղեկություն տարածելու կամ ապօրինի այլ եղանակով մեկ ուրիշին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը**, որը դրսևորվել է բաց թողնված օգուտի, գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսեր կատարելու ձևով...»: Հոդվածի վերտառության մեջ ավելացվել է «ապօրինի այլ եղանակով» ձևակերպումը, իսկ դիսպոզիցիայում ներառվել է՝ «կեղծ տեղեկություն տարածելու կամ ապօրինի այլ եղանակով» ձևակերպումը, որը տարակուսելի է:

Նոր իրավակարգավորմամբ հստակեցվել է նաև պատճառվող վնասի դրսևորման եղանակը, այսինքն՝ վնասը պետք է դրսևորվի բաց թողնված օգուտի, գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսեր կատարելու ձևով: Այս նորամուծությունը պետք է հաջողված համարել, քանի որ այն թույլ է տալիս միմյանցից տարբերակել համաբնույթ մի շարք հանցակազմեր՝ դյուրինացնելով հանցագործության որակման գործընթացը:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Նախկին քրեական օրենսգրքի 184-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանը Միքայել Դիլանյանի գործով<sup>130</sup> արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(...) խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմը որոշակի հատկանիշներով նման է խարդախությանը: Մասնավորապես, թե՛ խարդախությունը և թե՛ գույքային վնաս պատճառելը սեփականության դեմ ուղղված հանցագործություններ են, սուբյեկտիվ կողմից դրսևորվում են ուղղակի դիտավորությամբ, իսկ օբյեկտիվ կողմից՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով: Սակայն, ի տարբերություն խարդախության՝ գույքային վնաս պատճառելու դեպքում բացակայում են հափշտակության հատկանիշները (ինչն ուղղակի ամրագրված է ՀՀ քրեական*

<sup>130</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Միքայել Դիլանյանի գործով 2016 թվականի հունիսի 24-ի թիվ ԵԱՔԴ/0105/01/14 որոշումը:

օրենսգրքի 184-րդ հոդվածի դիսպոզիցիայում), այն է՝ ուրիշի գույքն ապօրինի անհատույց շահադիտական նպատակով վերցնելը և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե վերջիններս այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն են ունեցել:

15. Այսպես՝ խարդախությունը դրսևորվում է ուրիշի գույքը վերցնելով և այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով: Այլ խոսքով՝ խարդախության առարկան փաստացի կամ իրավաբանորեն սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի ֆոնդում գտնվող գույքն է, որը դուրս է գալիս նրա ֆոնդից և մուտք է գործում հանցավորի կամ այլ անձի ֆոնդ:

Ինչ վերաբերում է խաբեությանը կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքային վնաս պատճառելու հանցակազմին, ապա դրա առարկան կարող է հանդես գալ.

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում չգտնվող գույքը, որը հանցավորի ապօրինի գործողությունների հետևանքով մուտք չի գործում նրանց ֆոնդ (բաց թողնված օգուտ): Օրինակ՝ հանցավորն անօրինական գիծ անցկացնելու կամ հաշվիչի ցուցիչը խախտելու միջոցով չի վճարում գազի կամ էլեկտրաէներգիայի վճարը և այլն:

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում գտնվող գույքը, որը ապօրինի օգտագործվելու արդյունքում մաշվում է: Այս դեպքում գույքային վնասը դրսևորվում է մաշվածության (ամորտիզացիայի) հետևանքով նշված գույքի արժեքի նվազման միջոցով:

- սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդում գտնվող գույքը, որը քննարկվող հանցագործության հետևանքով դուրս է գալիս նրա ֆոնդից, սակայն այդ գույքը դուրս է բերվում ոչ ուղղակիորեն հանցավորի կողմից և չի դարձվում նրանը կամ նրա դիտավորությունում ընդգրկված այլ անձինը: Այս դեպքում գույքի դուրսբերումը սեփականատիրոջ կամ գույքի այլ տիրապետողի ֆոնդից դրսևորվում է որպես վերջիններիս կողմից իրենց օրինական պարտավորությունների կատարում (օրինակ՝ վարձակալի կողմից կոմունալ վճարումների չկատարման հետևանքով սեփականատիրոջ կողմից դրանց վճարումը, աշխատողի կողմից աշխատանքային գործունեության հետ չկապված անձնական և պատակները



Ֆոնդում և վնասը դրսևորվում է բաց թողնված օգուտի ձևով, կամ գտնվում է այդ ֆոնդում, սակայն վնասը դրսևորվում է գույքի մաշվածության կամ հանցավորի գործողությունների հետևանքով սեփականատիրոջ (այլ տիրապետողի) համար առաջացած օրինական պարտավորությունների կատարման հետևանքով: Քննարկվող հանցակազմի դեպքում բացակայում են խարդախության հանցակազմի այնպիսի պարտադիր հատկանիշներ, ինչպիսիք են ուրիշի գույքը սեփականատիրոջ ֆոնդից վերցնելը և հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը (...):»:

Հարկ է նկատել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումները նոր իրավակարգավորման պարագայում որոշակի իմաստով՝ կորցրել են իրենց այժմեականությունը, քանի որ սահմանվել են մի շարք նոր հանցակազմեր, որոնց անդրադարձ է կատարվել նշված դիրքորոշումներով որպես՝ խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելու դրսևորումների (օրինակ՝ Բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելը կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքներն ապօրինի փոխելը կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելը (Հոդված 262 «տե՛ս նշված հոդվածի վերլուծությունը») կամ Ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելը) և այս համատեքստում՝ հրատապություն են ձեռք բերում քննարկվող քրեաիրավական նորմի նոր մեկնաբանությունները:

Սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով գույքային վնաս պատճառելու հանցակազմը նոր է և չունի իր համարժեքը ՀՀ նախկին քրեական օրենսդրությամբ: Հոդված 260-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը հարկադրելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել, եթե բացակայում են շորթման կամ հափշտակության հատկանիշները, և որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,

3) շանտաժով կամ

4) հարկադրանքի այլ եղանակով (...):»:

Ինչպես տեսնում ենք, քննարկվող հանցատեսակը որոշակի ընդհանրություններ

ունի շորթման հետ, իսկ տվյալ պարագայում՝ օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ հանդիսացող հանցագործության կատարման եղանակների առումով՝ դրանք նույնական են: Հիմնական տարբերությունը հանգում է հանրորեն վտանգավոր արարքին՝ եթե շորթման պարագայում ներկայացվում է անձի կամ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանցավորին կամ մեկ այլ անձին հանձնելու կամ հանցավորի կամ մեկ այլ անձի օգտին գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջ, ապա այս դեպքում անձին հարկադրում են կնքել գործարք կամ գործարք կնքելուց հրաժարվել, պարտավորություն ստանձնել կամ կատարել այլ արարք, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել: Շորթումը, ըստ օրենսդրական նկարագրման եղանակի, ներկայացված է ձևական հանցակազմով և ավարտված է համարվում համապատասխան պահանջը ներկայացնելու պահից, մինչդեռ քննարկվող հանցակազմը նյութական է, և խոշոր չափերի գույքային վնասը նկարագրված է որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ:

Հոդված 260-ի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվել են նշված հանցակազմի ծանրացնող հանգամանքները, որոնք քննարկվել են սույն ուղեցույցի շրջանակներում և դրանց լրացուցիչ անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Գրավառուին վնաս պատճառելու հանցակազմի նոր իրավակարգավորումն ավելի հստակ է և համահունչ քրեական օրենսգրքի ընդհանուր տրամաբանությանը: Հոդված 261-ի 1-ին մասը սահմանում է՝ «Գրավ դրված գույքը ոչնչացնելը, թաքցնելը, օտարելը, վնասելը կամ որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնելը, որով խոչընդոտվել է գրավառուի գույքային իրավունքի իրականացումը, և նրան խոշոր չափերի գույքային վնաս է պատճառվել...»: Նախկին իրավակարգավորմամբ նշված էր «դիտավորությամբ» եզրույթը, ինչն այնքան էլ ճիշտ մոտեցում չէր, քանի որ նախկին քրեական օրենսգրքի հոդված 28-ի 2-րդ մասը սահմանում էր՝ անզգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե դա հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի Հատուկ մասով: Համանման կարգավորում առկա է նաև նոր քրեական օրենսգրքի հոդված 24-ի 2-րդ մասով, որի համաձայն՝ անզգուշությամբ կատարված արարքը հանցանք է, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասով դա նախատեսված է: Բացի այդ՝ նախկին քրեական օրենսգրքով որպես վնասի չափ սահմանվում էր նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկը գերազանցող գումարը, նոր իրավակարգավորմամբ նախատեսվել է խոշոր չափը, որը համաձայն 3-րդ հոդվածի 17-րդ կետի՝ պետք է գերազանցի 500.000 և չպետք է գերազանցի 5.000.000 ՀՀ դրամի չափը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Նշենք նաև, որ համաձայն 261-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Սույն հոդվածով

նախատեսված հանցանքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցել է հանցագործությամբ պատճառված վնասը»:

Բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելու կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքներն ապօրինի փոխելու կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելու հանցակազմը նորույթ է ՀՀ քրեական օրենսդրության մեջ և նախկին իրավակարգավորմամբ չունի իր համարժեքը: Համաբնույթ արարքները նախկինում որակվում էին քրեական օրենսգրքի հոդված 184-ով՝ «Գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով», սակայն նշված որակումը ճիշտ համարվել չէր կարող, քանի որ անձը չէր կատարում քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող որևէ արարք՝ օրենքում նշված եղանակով: Այսինքն՝ ապօրինի միանալով ուրիշին պատկանող գազատարին, հոսանքագծին և այլն, վերջինս որևէ անձի չէր խաբում կամ չէր չարաշահում որևէ մեկի վստահությունը: Նման արարքը դժվար էր որակել նաև հափշտակության հատկանիշներով, քանի որ նշված առարկաները (բնական գազ, էլեկտրական հոսանք, խողովակաշարով հոսող ջուր և այլն), որպես կանոն, չեն դիտվում հափշտակության առարկայի համատեքստում, բացի դա՝ հանցավորը ոչ թե դրանք հանում է սեփականատիրոջ ֆոնդից, այլ պարզապես այն գումարները, որոնք պետք է մուտքագրվեն սեփականատիրոջ գույքային ֆոնդ, հանցավորի հակաիրավական վարքագծի պատճառով չեն մուտքագրվում: Պետք է նշել, որ համաբնույթ իրավակարգավորում առկա է նաև ԳԴՀ քրեական օրենսդրությամբ (Section 248c), որի համաձայն՝ քրեական պատասխանատվություն է սահմանվում էլեկտրական ցանցին ապօրինի միացում կատարելու համար<sup>131</sup>:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 262-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցին ապօրինի միացում կատարելը կամ ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի չափման համար նախատեսված սարքի ցուցմունքն ապօրինի փոխելը կամ դրա բնականոն աշխատանքը խաթարելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել (...):»:

Եթե անձը մատակարար կազմակերպության հետ գտնվում է պայմանագրային հարաբերությունների մեջ և դրսևորում է հակաիրավական վարքագիծ՝ ապօրինի միանալով ցանցին կամ փոխելով չափման սարքի ցուցմունքները, ինչի արդյունքում պատճառում է խոշոր չափերի գույքային վնաս, ապա նրա արարքը ենթակա է որակման ՀՀ ք-

<sup>131</sup> [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_stgb/englisch\\_stgb.html#p2272](https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html#p2272)

րեական օրենսգրքի հոդված 259-ի հատկանիշներով (Գույքային վնաս պատճառելը խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով): Սակայն՝ այն դեպքերում, երբ վերջինս ապօրինի միանում է ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցին կամ ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի չափման համար նախատեսված սարքի ցուցմունքն ապօրինի փոխում է կամ խաթարում է դրա բնականոն աշխատանքը, ինչի արդյունքում խոշոր չափերի գույքային վնաս է պատճառվում, ապա արարքը որակվում է քննարկվող հանցակազմով:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքները կապված են հանցակցության ձևերի, առանձնապես խոշոր չափի գույքային վնաս պատճառելու և իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու հետ: Դրանք արդեն քննարկվել են և լրացուցիչ անդրադարձի անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նոր քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվել ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելու համար: Նշված հանցատեսակի ուղղակի համարժեքը նախկին քրեական օրենսգրքում բացակայում էր, սակայն դրա մասնավոր դրսևորում, այնուամենայնիվ, առկա էր: Խոսքը՝ հոդված 183-ով նախատեսված՝ «Ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալն առանց հափշտակելու նպատակի» հանցակազմի մասին է: Սակայն փաստն այն է, որ հանցավորը կարող է ոչ միայն ավտոմեքենան կամ այլ տրանսպորտային միջոցը ապօրինի օգտագործել, այլև տուժած անձի այլ գույքը, օրինակ՝ արտադրական հզորությունները, հաստոցները, բնակարանում կամ ամառանոցում առկա գույքը և այլն: Նշված գույքն ապօրինի օգտագործման ընթացքում ոչ միայն կարող է ոչնչացվել կամ վնասվել, այլև մաշվել, կորցնել իր սկզբնական հատկանիշները, ենթարկվել ամորտիզացիայի՝ իսկ սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողին պատճառվել խոշոր գույքային վնաս: Այս համատեքստում՝ քննարկվող հանցակազմի նախատեսումն արդարացված է թվում:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 263-ի 1-ին մասը սահմանում է՝ «Սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կամքին հակառակ կամ կամքն անտեսելով կամ սպառնալիքի միջոցով նրա գույքն օգտագործելը՝ առանց այդ գույքն իրենը դարձնելու նպատակի, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել...»: Այստեղ հարկ էր նշել՝ «առանց այդ գույքը իրենը կամ այլ անձինը դարձնելու նպատակի»:

Հանցակազմը նյութական է և ավարտված է համարվում հոդվածում նշված խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու պահից:

Հանցակազմի որակյալ տեսակներից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- «1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,
- 2) կատարվել է ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավոր-

ված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

3) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ (...): Նշված ծանրացնող հանգամանքները կապված են տուժած անձի որոշակի խոցելի, անպաշտպան վիճակում գտնվելու հանգամանքի հետ, ինչով պայմանավորված՝ վերջինիս կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, կամ նրան սպառնալով սույն հանցանքի կատարումն ավելի դյուրին է և վկայում է հանցավորի ավելի բարձր վտանգավորության մասին, ինչին պետք է տրվի ավելի խիստ քրեաիրավական գնահատական: Այլ ծանրացնող հանգամանքներ ևս նախատեսված են, որոնց չենք անդրադառնա:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 264-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել (...): Քննարկվող հանցակազմի նման ձևակերպումն ընդունելի համարվել չի կարող: Եթե նախկին իրավակարգավորմամբ քրեորեն պատժելի էր 30.000 ՀՀ դրամը գերազանցող գույքի դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (նախկին քրեական օրենսգրքի հոդված 185), ապա նոր իրավակարգավորման համաձայն սույն հանցակազմն առկա կլինի 500.000 ՀՀ դրամը գերազանցող գույք ոչնչացնելու կամ վնասելու դեպքում: Նման «թռիչքը» արդարացված չէ և կարող է հանգեցնել գույքի ոչնչացման կամ վնասման հանցատեսակի էքսպոնենտալ աճի: Կարծում ենք՝ նշված նորմը ենթակա է վերանայման և եթե օրենսդրի մոտեցման համաձայն նախկին զգալի չափը (30.000 ՀՀ դրամը) անարդարացի է, ապա այս նորմում կարող է սահմանվել առանձին չափ, օրինակ՝ 50.000 կամ 100.000 դրամը, ինչը չի հակասի նոր օրենքում սահմանված իրավակարգավորումներին, երբ կոնկրետ հանցակազմի դեպքում կարող է սահմանվել առանձին վնասի չափ (ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 3-ի 17-րդ կետը նախատեսում է նման հնարավորություն):

Այս իրավակարգավորման դեպքում, մինչև 500.000 ՀՀ դրամը ներառող գույքային վնասի պատճառման դեպքում անձը ենթակա է քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական պատասխանատվության:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքները ևս վերախմբագրվել են, նախատեսվել են նաև նոր որակյալ դրսևորումներ: Հոդված 264-ի 2-րդ մասը սահմանում է՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝ 1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, 2) կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով, 3) կատարվել է՝ կապված անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, 4) կատարվել է ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնա-

մանքի շարժառիթով, 5) կատարվել է խուլիզանական դրդումներով կամ 6) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել(...): Այս ծանրացնող հանգամանքների շարքում նորույթ են 1-ին և 5-րդ կետերը, որոնց նախատեսումն արդարացված է:

Որպես հանցակազմի առավել ծանրացնող հանգամանքներ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են՝ «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անզգուշությամբ առաջացրել է պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկայի ոչնչացում կամ վնասում(...): Նշված որակյալ տեսակներն առանձին չենք քննարկի, միայն նշենք, որ ողջունելի է օրենսդրի այն մոտեցումը, համաձայն որի չի նախատեսվել նախկին քրեական օրենսգրքի հոդված 185-ի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված ծանրացնող հանգամանքը՝ «անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ»: Նշված տարասեռ օբյեկտներին վնաս պատճառելու պարագայում՝ արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ և նման ծանրացնող հանգամանքի նախատեսումն արդարացված չէր:

Պետք է նկատել, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքով անզգուշությամբ գույքային վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվություն սահմանված չէ, ինչը ողջունելի մոտեցում է:

Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցատեսակը, ի համեմատ նախկին իրավակարգավորման, վերախմբագրվել է, դրանում կատարվել է կարևոր լրացում՝ որի արդյունքում հստակեցվել է հանցագործության սուբյեկտիվ կողմը: Նոր քրեական օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականություն ունեցող անձի կողմից այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե այդ անձի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի խոշոր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ, և եթե չկան հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության հատկանիշներ(...)»: Ինչպես վերը նշվեց՝ անզգույշ մեղքի ձևի մասին նշումը հույժ կարևոր է, քանի որ, եթե անձը դիտավորությամբ է անբարեխիղճ կատարում գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունը, որպեսզի առաջացնի հոդվածում նշված հետևանքները՝ ապա նրա արարքը պետք է որակվի որպես դիտավորյալ հանցագործության հանցակցություն, օրինակ՝ հափշտակության ֆիզիկական օժանդակություն՝ խոչընդոտ վերացնելու ձևով:

Բացի այդ՝ տարակուսանք է առաջացնում «խոշոր չափերի հասնող» ձևակերպումը, որ գործնականում խնդիրներ կարող է հարուցել: Իրավակիրառ պրակտիկայում պետք է նկատի ունենալ՝ «խոշոր չափով», մինչև օրենսդրական համապատասխան լրամշակումը կկատարվի:

Մնացած փոփոխությունները եզրութաբանական բնույթ են կրում և բխում են նոր օրենքի տրամաբանությունից:

Անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու հանցակազմը նորույթ է ՀՀ քրեական օրենսդրության մեջ և չունի իր համարժեքը նախկին օրենսգրքում: Հոդված 266-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Անձի տիրապետությունից պատահաբար կամ սխալմամբ դուրս եկած կամ կորցրած գույքին այն անձի կողմից ապօրինի տիրանալը և իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելը, որն իմացել է, թե ով է գույքի իրական տիրապետողը և չի ձեռնարկել ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ գույքն իրական տիրապետողին վերադարձնելու համար(...)»: Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի իմաստով՝ անձի տիրապետությունից դուրս եկած գույքի արժեքը պետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի չափը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներ 180-182-ը կարգավորում են գտանքի, գտանքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, գտանքի հետ կապված ծախսերը հատուցելու և գույքը գտնողին վարձատրելու հետ կապված իրավահարաբերությունները:

Քրեական պատասխանատվություն սահմանվել է բացառապես այն դեպքերի համար, երբ անձի տիրապետությունից պատահաբար կամ սխալմամբ դուրս եկած կամ կորցրած գույքին տիրանում, իրենը կամ ուրիշինն է դարձնում այն անձը, ով իմացել է, թե ով է գույքի իրական տիրապետողը: Օրինակ՝ նկատել է, թե ինչպես է տուժողի գրպանից ընկնում դրամապանակը, սպասել է մինչև նա հեռանա և տիրացել է գույքին կամ տաքսու վարորդը հստակ գիտի, թե ուղևորներից ով է մեքենայի մեջ թողել պայուսակը (այդ մասին վերջինս կարող է իմանալ նաև պայուսակի պարունակությունը ստուգելիս, օրինակ՝ այնտեղ հայտնաբերելով հավանական տուժածի անձնագիրը): Այսինքն՝ ամենևին պարտադիր չէ, որպեսզի հանցանք կատարած անձն անձամբ ճանաչի տուժածին, բավարար է միայն, որ նա իմանա թե կոնկրետ ում տիրապետությունից է պատահաբար կամ սխալմամբ դուրս եկել կամ ով է կորցրել գույքը: Այլ պարագայում՝ գործում է քաղաքացիաիրավական կարգավորումը:

Հարկ է նկատել, որ նշված իրավակարգավորումը բավականին վիճելի է և տարածաշրջանում եզակի, իսկ արտասահմանյան երկրների մեծամասնության քրեական օրենսդրություններով նման հանցատեսակ նախատեսված չէ: Համանման կարգավորում առկա է օրինակ՝ ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի քրեական օրենսգրքի 485-րդ հոդվածով, որի համաձայն՝ նման իրավիճակները հավասարեցվում են գողությանը<sup>132</sup>:

<sup>132</sup> <https://www.shouselaw.com/ca/defense/penal-code/485/>

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

267-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը իր մեջ միավորում է քրեական նախկին օրենսգրքի 202-րդ և 203-րդ հոդվածներում տեղ գտած՝ կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը և կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը հանցակազմերը:

Քրեական նոր օրենսգրքով այն բնորոշվում է որպես իրացնելու նպատակով կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթուղթ, վճարահաշվարկային այլ փաստաթուղթ կամ վճարային գործիք պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը կամ ձեռք բերելը կամ դրանք իրացնելը:

Ինչպես և նախկին կանոնակարգմամբ, հանցակազմի պարտադիր հատկանիշ է իրացնելու նպատակը:

Ուշադրության արժանի է հանցագործության առարկան: Եթե նախկինում 202-րդ հոդվածում խոսքը վերաբերում էր միայն փողեր կամ արժեթղթեր կեղծելուն, իսկ 203-րդ հոդվածում՝ կեղծ վճարային փաստաթղթերին, ապա քրեական նոր օրենսգրքում օրենսդիրն առավել հետևողական մոտեցում է դրսևորել և հանցակազմի առարկա դիտել արժույթը, արտարժույթը, արժեթուղթը, վճարահաշվարկային այլ փաստաթուղթը կամ վճարային գործիքը: Օրենսդիրը, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կարգավորման, չի բացահայտել վճարահաշվարկային այլ փաստաթղթի կամ վճարային գործիքի բովանդակությունը՝ ղեկավարվելով այն մոտեցմամբ, որ զարգացող տեխնոլոգիաների և իրավական լուծումների պարագայում՝ դրանց տեսակները կարող են փոփոխվել, իսկ առավել ընդգրկուն հասկացությունները թույլ կտան արարքներին համարժեք պատասխանել:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են դիտվում՝ արարքի կատարումը՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով

պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

- 3) խոշոր չափերով՝

Առավել խիստ պատասախանատվություն է սահմանվում նույն արարքի համար, որը կատարվել է՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից կամ
- 2) առանձնապես խոշոր չափերով՝

Օրենսդիրը հստակեցնում է, որ խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը: Այս չափերն



Էականորեն տարբերվում են քրեական նախկին օրենսգրքի 202-րդ հոդվածում տեղ գտած կանոնակարգումից, որով խոշոր չափ էր դիտարկվում 1 մլն, իսկ առանձնապես խոշոր չափ՝ 3 մլն դրամը գերազանցող գումարը:

Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման հանցակազմը արտացոլում է քրեական նախկին օրենսգրքի 190.1-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմը: Այն գրեթե նույնությամբ կրկնում է նախկին հանցակազմի ձևակերպումը, սահմանելով՝ ինսայդերի կողմից ներքին տեղեկության հիման վրա իր կամ այլ անձի հաշվին արժեթուղթ կամ դրա հետ կապված ածանցյալ գործիք գնելը կամ վաճառելը կամ ներքին տեղեկության ապօրինի տրամադրումը երրորդ անձին, որի արդյունքով ստացվել է մանր չափերի շահույթ:

Այնուհանդերձ, առկա է տարբերություն ստացված շահույթի չափերի մասով. Քրեական նախկին օրենսգրքը պատասխանատվություն էր սահմանում զգալի չափերով շահույթ ստանալու պահից, սակայն, նկատի ունենալով այն, որ քրեական նոր օրենսգրքում օրենսդիրը հրաժարվել է զգալի չափերից և հիմնվում է մանր, խոշոր և առանձնապես խոշոր չափերի հասկացությունների վրա, քրեական նոր օրենսգրքում քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ է դիտվել նույնիսկ մանր չափերի շահույթ ստանալը:

Օրենսդիրը, սակայն սահմանել է, որ քննարկվող հանցակազմի և արժեթղթերի շուկայում գնային չարաշահման համար պատասխանատվություն սահմանող հոդվածում մանր չափ է համարվում 20 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ՝ 30 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ՝ 40 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը):

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներ են՝ արարքը՝

- 1) որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ
- 2) որի արդյունքով ստացվել է խոշոր չափի շահույթ:

Առավել ծանրացնող հանգամանքներ են, արարքը՝

- 1) որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից,
- 2) որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ

դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

- 3) որի արդյունքով ստացվել է առանձնապես խոշոր չափերի շահույթ:

Արժեթղթերի շուկայում գնային չարաշահման հանցակազմը նույնանում է քրեական նախկին օրենսգրքի 190.2-րդ հոդվածում տեղ գտած՝ գնային չարաշահումը հանցակազմի հետ:

Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված՝ արժեթղթերի

շուկայում գնային չարաշահման, որը մանր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Ինչպես և նախորդ հանցակազմի պարագայում, այստեղ ևս միակ տարբերությունը վերաբերում է չափերին, այս դեպքում՝ պատճառված գույքային վնասի չափերին: Ինչպես և ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործման պարագայում, այս հանցակազմի ձևակերպման ժամանակ օրենսդիրը «զգալի» եզրույթի փոխարեն օգտագործել է «մանր չափերի գույքային վնաս» արտահայտությունը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը՝

- 1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ
- 2) խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

Առավել ծանրացնող են՝ արարքը, որը՝

- 1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից,
- 2) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել կամ
- 3) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Կանխամտածված կեղծ գովազդի հանցակազմը նույնանում է քրեական նախկին օրենսգրքի 198-րդ հոդվածում տեղ գտած՝ կեղծ գովազդը հանցակազմի հետ: Սակայն, քրեական նոր օրենսգրքում հանցակազմը առավել հստակ և մանրամասն է ձևակերպվել՝ սահմանելով հետևյալը՝ գովազդատուի, գովազդ արտադրողի կամ գովազդակրի կողմից սպառողին հույսերի, ապրանքի, մատուցվող ծառայության որակի, գնի կամ այլ առանձնահատկության վերաբերյալ մոլորության մեջ զցելը, եթե դրա հետևանքով անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառվել է խոշոր չափերի գույքային վնաս:

Նոր ձևակերպման մեջ տեղ գտած հիմնական փոփոխությունը վերաբերում է նրան, որ հանցակազմը ձևական հանցակազմի փոխարեն նկարագրվել է նյութականով, այսինքն՝ միայն սպառողներին մոլորեցնելը բավական չէ, այլ անհրաժեշտ է, որ դրա հետևանքով անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառվի խոշոր չափերի գույքային վնաս:

Պատճառված խոշոր չափերի գույքային վնասը որոշելիս՝ անհրաժեշտ է դիմել քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասում չափերի բնորոշմանը վերաբերող կետին:

Հաջորդ տարբերությունը վերաբերում է նրան, որ օրենսդիրն առավել հստակ է ներկայացրել, թե մոլորության ինչ դրսևորումների պարագայում է գովազդատուն,

գովազդ արտադրողը կամ գովազդակիրը ենթակա քրեական պատասխանատվության: Մասնավորապես, նոր կանոնակարգմամբ սահմանվել է, որ դա կարող է վերաբերել սպառողին հումքի, ապրանքի, մատուցվող ծառայության որակի, գնի կամ այլ առանձնահատկության վերաբերյալ մոլորության մեջ գցելուն:

Կենսապահովման նվազագույն զամբյուղի մեջ մտնող ապրանքները ապրանքային շուկայից հանելու հանցակազմը քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծություն է, որի նպատակը բնակչության սոցիալական վիճակի պաշտպանության երաշխավորումն է: Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում կենսապահովման նվազագույն զամբյուղի մեջ մտնող ապրանքն ապրանքային շուկայից, այդ թվում՝ առևտրի օբյեկտներից կամ առևտրի իրականացման վայրերից այդ ապրանքն արտադրողի, մատակարարողի, իրացնողի կամ ներմուծողի կողմից հանելու համար՝ գների բարձրացում առաջացնելու նպատակով:

Կենսապահովման նվազագույն զամբյուղի մեջ մտնող ապրանքների շրջանակը որոշելու համար անհրաժեշտ է դիմել 2004 թ.-ի մարտի 16-ին ընդունված՝ «Կենսապահովման նվազագույն զամբյուղի եվ կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքի դրույթներին: Նշված օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ կենսապահովման նվազագույն զամբյուղը՝ մարդու առողջության պահպանման և կենսագործունեության պահովման համար անհրաժեշտ՝ միջազգայնորեն ընդունված ֆիզիոլոգիական, առողջապահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ պարենային ապրանքների և ծառայությունների կազմն ու կառուցվածքը սահմանող նվազագույն քանակն է: հարկ է նշել, որ օրենսդիրը քրեական պատասխանատվություն է սահմանել միայն կենսապահովման նվազագույն զամբյուղի մեջ մտնող ապրանքները ապրանքային շուկայից հանելու համար՝ չանդրադառնալով ծառայություններին:

Հանցակազմի պարտադիր հատկանիշ է նպատակը՝ գների բարձրացում առաջացնելը: Եթե ապրանքները ապրանքային շուկայից հանվում են այլ նպատակով, ապա հանցակազմը բացակայում է:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներ են՝ արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի ժամանակ:

Առավել ծանրացնող է դիտվում քննարկվող արարքի կատարումը հանցավոր կազմակերպության կողմից:

Քրեական նոր օրենսգրքում, ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, տեղ են գտել

մասնավոր ոլորտում կաշառակերության դրսևորումները, այն է՝ մասնավոր ոլորտում կաշառք ստանալը, կաշառք տալը, Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը:

Քրեական նախկին օրենսգրքում դրանք տեղ էին գտել երկու հոդվածների շրջանակներում՝ 200-րդ հոդվածում՝ առևտրային կաշառքը և 201-րդ հոդվածում՝ արհեստավարժ մարզամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելը:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած՝ մասնավոր ոլորտում կաշառակերությանը վերաբերող նորմերը գրեթե նույնությամբ կրկնում են քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կանոնակարգումները:

Հիմնական տարբերությունները վերաբերում են այն անձնաց շրջանակին, ովքեր կարող են հանդես գալ որպես մասնավոր ոլորտում կաշառք ստանալու սուբյեկտ: Քրեական նախկին օրենսգրքով այդ շրջանակն ավելի նեղ էր և ներառում էր առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին: Քրեական նոր օրենսգրքով նշված սուբյեկտների ցանկը ընլայնվել է և ներառում է Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության առևտրային կամ այլ կազմակերպության աշխատողին, արբիտրին, աուդիտորին, պահառուին, կառավարչին, նոտարին կամ փաստաբանին: Օրենսդիրը «ծառայող» եզրույթի փոխարեն նոր ձևակերպման մեջ օգտագործել է «աշխատող» եզրույթը:

Հստակեցվել է նաև կաշառքի առարկան. Եթե քրեական նախկին օրենսգրքով դա սահմանափակվում էր «դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն» ձևակերպմամբ, ապա քրեական նոր օրենսգրքում՝ կաշառքի առարկա կարող են լինել գույքը, ներառյալ դրամական միջոցը, արժեթուղթը, վճարային այլ գործիքը, գույքի նկատմամբ իրավունքը, ծառայությունը կամ որևէ այլ առավելությունը:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած փոփոխություններից է այն, որ չի նախատեսվել իրախուսական նորմ մասնավոր ոլորտում կաշառք տվողի համար՝

քրեական պատասխանատվությունից ազատվելու առումով: Քրեական նախկին օրենսգիրքը սահմանում էր, որ առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն: Քրեական նոր օրենսգրքում նման կարգավորում առկա չէ:

Քննարկվող հանցակազմերի առումով մյուս տարբերությունները վերաբերում են ծանրացնող հանգամանքներին:

Մասնավոր ոլորտում կաշառակերության ծանրացնող հանգամանքներ են՝ հանցանքի կատարումը՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար կամ:

Առավել ծանրացնող հանգամանքներ են դիտվում արարքը, որը կատարվել է 1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) առանձնապես խոշոր չափերով:

Մասնավոր ոլորտում պասիվ կաշառակերության, այսինքն՝ կաշառք ստանալու ծանրացնող հանգամանք է նաև արարքի կատարումը՝ անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծությունն է կրթության, առողջապահության, կենցաղային կամ բնակչության սպասարկման այլ ոլորտի հանրային ծառայող չհանդիսացող աշխատակցի կողմից իր ծառայողական կամ մասնագիտական պարտականությունը կատարելու կամ ծառայություն մատուցելու համար անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ապօրինաբար ստանալը կամ պահանջելը:

Նշված հանցակազմը թիրախային ուղղված է կրթության, առողջապահության, կենցաղային կամ բնակչության սպասարկման այլ ոլորտի հանրային ծառայող չհանդիսացող աշխատակցի կողմից իր ծառայողական կամ մասնագիտական պարտականությունը կատարելու կամ ծառայություն մատուցելու համար ապօրինի վարձատրություն ստանալու դեմ:

Մասնավոր ոլորտում տեղ գտնող պասիվ կաշառակերության մյուս դրսևորումներից այն տարբերվում է սուբյեկտային կազմով՝ անձինք, ովքեր չեն հանդիսանում հանրային ծառայող, աշխատում են կրթության, առողջապահության,

կենցաղային կամ բնակչության սպասարկման այլ ոլորտում և ապօրինօի վարձատրություն են ստանում իրենց ծառայողական կամ մասնագիտական պարտականությունը կատարելու համար: Օրինակ՝ բուժքույրը:

Հանցակազմը ձևական է՝ ավարտված է համարվում ապօրինի վարձատրության առարկան պահանջելու կամ ստանալու պահից:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքի կատարումը՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով կամ

3) անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոտնահարելու սպառնալիքով:

Առավել ծանրացնող հանգամանքեր են՝ արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) առանձնապես խոշոր չափերով:

277-րդ հոդվածով սահմանված հանցակազմը նույնական է քրեական նախկին օրենսգրքի 214-րդ հոդվածում տեղ գտած՝ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու հանցակազմին:

Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության առևտրային կամ այլ կազմակերպության աշխատողի, արբիտրի, աուդիտորի, պահառուի, կառավարչի կամ նոտարի կողմից օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս այդ կազմակերպության շահերի օգտագործելու կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ այնպիսի արարք կատարելու համար, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կանոնակարգումից այն տարբերվում է հետևյալով՝

սուբյեկտների շրջանակով. քրեական նախկին օրենսգրքում պատասխանատվություն էր սահմանված առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների, իսկ նոր օրենսգրքում՝ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության առևտրային կամ այլ կազմակերպության աշխատողի, արբիտրի, աուդիտորի, պահառուի, կառավարչի կամ նոտարի կողմից նշված արարքը կատարելու համար:

օբյեկտիվ կողմը կազմող արարքների շրջանակով. նախկին կանոնակարգմամբ պատասխանատվություն էր սահմանված անձի կողմից միայն իրենց վերապահված

լիազորությունները չարաշահելու, իսկ նոր կանոնակարգմամբ՝ նաև դրանց սահմաններն անցնելու համար:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներ են՝ արարքը, որը՝

1) կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս,

3) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

4) անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք:

Քրեական նոր օրենսգրքում առանձին հոդվածներով ներկայացված են քրեական նախկին օրենսգրքի 199-րդ և 199.1-րդ հոդվածներում տեղ գտած հանցակազմերը՝ առևտրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ապօրինի հավաքելը կամ հրապարակելը, ինչպես նաև վարկային պատմություն և վարկային տեղեկատվություն ապօրինի ստանալը, օգտագործելը կամ հրապարակելը:

Օրենսդիրը, քրեական նոր օրենսգրքում այս հանցակազմերը վերակառուցել է այն տրամաբանությամբ, որ տարբերակված պատասխանատվություն սահմանվի այն անձանց համար, ովքեր օրինական հասանելիություն ունեն նշված տեղեկատվությանը և նրանց համար, ովքեր նման հասանելիություն չունեն:

278-րդ հոդվածում օրենսդիրը պատասխանատվություն է նախատեսել առևտրային կամ այլ կազմակերպության աշխատողի, արբիտրի, աուդիտորի, պահառուի, կառավարչի կամ նոտարի կողմից օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման կամ դրանցով պայմանավորված ազդեցության օգտագործման հետևանքով իրեն հայտնի դարձած կամ վստահված տեղեկությունն ապօրինի օգտագործելու համար, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Քրեական նախկին օրենսգրքում խոսքը վերաբերում էր միայն առևտրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիքին, մինչդեռ նոր կանոնակարգմամբ՝ նաև հարկային, մաքսային, կենսաթոշակային, ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությանը:

Օրենսդիրը հստակեցրել է նաև այն սուբյեկտների շրջանակը, ովքեր կարող են լինել այս հանցագործության կատարողներ՝ առևտրային կամ այլ կազմակերպության աշխատող, արբիտր, աուդիտոր, պահառու, կառավարիչ կամ նոտար: Նախկինում օրենսդիրը մատնանշում էր այն անձին, ում այդ գաղտնիքը հայտնի է դարձել մասնագիտական կամ ծառայողական գործունեության հետ կապված:

Ինչպես և նախկին քրեական օրենսգրքում, նոր կանոնակարգմամբ ևս օրենսդիրն այս հանցակազմը նկարագրել է նյութական հանցակազմով, սահմանելով որ խոշոր

չափերի գույքային վնաս պետք է պատճառվի անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին

Միաժամանակ, օրենսդիրն առավել ընդգրկուն կերպով է սահմանել հանցանքի կատարման օբյեկտիվ կողմը, սահմանելով, որ դա կարող է իրականացվել վերը նշված սուբյեկտին օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման կամ դրանցով պայմանավորված ազդեցության օգտագործման հետևանքով իրեն ոչ միայն հայտնի դարձած, այլև վստահված տեղեկությունն ապօրինի օգտագործելու միջոցով:

279-րդ հոդվածում նախատեսված հանցակազմը պատասխանատվություն է սահմանում օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացման կամ դրանցով պայմանավորված ազդեցության օգտագործման հետևանքով հայտնի դարձած կամ վստահված առևտրային, ապահովագրական, հարկային, մաքսային, կենսաթոշակային, ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը կամ վարկային պատմությունը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությունն ապօրինի հրապարակելու համար:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ նա, ում օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացման կամ դրանցով պայմանավորված ազդեցության օգտագործման հետևանքով հայտնի են դարձել կամ վստահված են առևտրային, ապահովագրական, հարկային, մաքսային, կենսաթոշակային, ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը կամ վարկային պատմությունը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությունը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը այս հանցակազմի համար պարտադիր էր համարում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, քրեական նոր օրենսգրքում այն նկարագրված է ձևական հանցակազմով և ավարտված է համարվում հանցակազմի առարկա հանդիսացող տեղեկատվությունը հրապարակելու պահից:

Ի տարբերություն նախորդ հանցակազմերի՝ 280-րդ հոդվածում տեղ գտած նորմը պատասխանատվություն է սահմանում առևտրային, ապահովագրական, հարկային, մաքսային, կենսաթոշակային, ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը կամ վարկային պատմությունը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությունն ապօրինի հավաքելու, օգտագործելու կամ հրապարակելու համար այն անձի կողմից, որն իրավունք չունի ծանոթանալու այդ գաղտնիքին:

Այստեղ արդեն սուբյեկտն այն անձն է, ով իրավունք չունի ծանոթանալու առևտրային, ապահովագրական, հարկային, մաքսային, կենսաթոշակային,



ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությանը կամ վարկային պատմությանը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությանը:

Քրեական նախկին օրենսգրքում առավել մանրամասն, բայց ոչ սպառիչ էին թվարկվում հանցանքի կատարման եղանակները, այն է՝ փաստաթղթեր հափշտակելու, առևտրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիք իմացող անձանց, նրանց մերձավորին կաշառելու կամ սպառնալիքի, կապի միջոցներ որսալու, համակարգչային կամ ծրագրային համակարգ կամ ցանց ապօրինի թափանցելու, հատուկ տեխնիկական միջոցներ օգտագործելու ճանապարհով, ինչպես նաև այլ ապօրինի եղանակներով արարքի կատարումը:

Նոր կանոնակարգմամբ նման ձևակերպումներ առկա չեն:

Հանցակազմը ձևական է՝ ավարտված է համարվում նշված տեղեկատվությունը հավաքելու, օգտագործելու կամ հրապարակելու պահից:

Ապօրինի ձեռնարկատիրական գործունեության հանցակազմը նույնական է քրեական նախկին օրենսգրքի 281-րդ հոդվածում տեղ գտած՝ ապօրինի ձեռնարկատիրությունը հանցակազմին:

Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում առանց պետական հաշվառման կամ գրանցման ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ առանց հատուկ թույլտվության կամ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա կամ առանց ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու ծանուցման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ առանց թույլտվության ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու համար, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ նոր կանոնակարգմամբ պատասխանատվություն է սահմանվում նաև առանց ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու ծանուցման ենթակա ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, առանց թույլտվության ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու համար:

Հաջորդ տարբերությունը վերաբերում է պատճառված վնասին՝ քրեական նախկին օրենսգրքով պատասխանատվություն էր սահմանվում զգալի, իսկ նոր օրենսգրքով՝ խոշոր չափերով վնաս պատճառելու համար:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը՝

- 1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ
- 2) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել:

Օրենսդիրը հստակեցրել է, որ պետությանը պատճառված վնասի հաշվարկում

ներառվում է նաև պետական գրանցման, ինչպես նաև հատուկ թույլտվության, լիցենզիայի, թույլտվության տրման, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար գանձման ենթակա պետական տուրքի չափը:

Նախատեսված է նաև խրախուսական նորմ, որը սահմանում է՝ նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված գույքային վնասը և հաշվարկված տույժերը:

Ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու հանցակազմը նույնական է քրեական նախկին օրենսգրքի 189.1-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմին

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 196-ը պատասխանատվություն էր սահմանում հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելու համար, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին: Նոր իրավակարգավորմամբ՝ հիշյալ քրեաիրավական նորմը վերաձևակերպվել է և սահմանվել է հետևյալ կերպով՝ «Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը(...): Հանցակազմի նշված ձևակերպման պարագայում՝ ավելի հանգամանալից և հստակ են նշվում դրա օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, որոնք, ըստ էության, խաբեությամբ, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելու հատուկ դրսևորումներ են: Հրապարակային սակարկությունների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով (Ընդունված է 2003 թվականի հոկտեմբերի 8-ին), իսկ գնումների հետ կապված իրավահարաբերությունները՝ «Գնումների մասին» օրենքով (Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին): Դիսպոզիցիան բլանկետային է, և քննարկվող քրեաիրավական նորմը բացահայտելու և մեկնաբանելու համար՝ անհրաժեշտ է ուսումնասիրել նշված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորումները:

Նոր օրենքում, արդարացիորեն, չի նախատեսվել «չարամտորեն» եզրույթը, որն անորոշ է և կարող է չարաշահումների և տարամեկնաբանությունների տեղիք տալ: Ընդլայնվել է նաև այն անձանց և կազմակերպությունների շրջանակը, ում կարող է վնաս

պատճառվել քննարկվող հանցանքի կատարման արդյունքում:

Նախատեսվել են հանցակազմի ծանրացնող հանգամանքներ, որոնք բացակայում էին նախկին իրավակարգավորմամբ: Նշված հանգամանքները քննարկվել են սույն ուղեցույցի շրջանակներում և դրանց լրացուցիչ անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Հակամրցակցային գործունեության հանցակազմը նախատեսված էր նախկին քրեական օրենսգրքի հոդված 195-ով: Նոր իրավակարգավորումը տարբերվում է նախկինից՝ սահմանելով հանցագործության օբյեկտիվ կողմի նոր դրսևորումներ: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (Ընդունվել է 06.11.2000) հանգամանալից սահմանվում են հակամրցակցային գործողությունների տեսակները: Նոր քրեական օրենսգրքի հոդված 284-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Տնտեսական գործունեությունը համակարգելը կամ հակամրցակցային համաձայնություն կայացնելը կամ մենաշնորհ կամ գերիշխող դիրքը չարաշահելը կամ համակենտրոնացումը չհայտարարագրելը կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը, որը հանգեցրել է մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման և խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին, կամ որի արդյունքով տնտեսավարող սուբյեկտը ստացել է խոշոր չափերի շահույթ(...)»:

Հանցակազմի որակյալ տեսակներին անդրադարձ չի կատարվի: Հարկ է նշել, որ քննարկվող հոդվածի 4-րդ մասի համաձայն նշվել է՝ «Սույն հոդվածի իմաստով՝ խոշոր չափերի շահույթ է համարվում 5 միլիոնից մինչև 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափերի շահույթ՝ 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը)»: Քննարկվող հոդվածի պարագայում՝ քրեական օրենսգրքի հոդված 3-ով նախատեսված չափերից այս բացառությունը կարող է արդարացված համարվել՝ ելնելով այս հանցատեսակին բնորոշ առանձնահատկություններից և տնտեսական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններին հասցվող վնասի ծավալներից:

Ապօրինի գործունեություն իրականացնելու կամ ապօրինի գործունեությունը քողարկելու նպատակով իրավաբանական անձ, դրա առանձնացված ստորաբաժանում, հիմնարկ ստեղծելու կամ օգտագործելու կամ նույն նպատակով անհատ ձեռնարկատեր հաշվառելու հանցակազմը նախկին քրեական օրենսդրությամբ նախատեսված «Կեղծ ձեռնարկատիրության» (հոդված 189) հանցակազմի նոր խմբագրությունն է, որն այնքան էլ հաջողված համարվել չի կարող: Հարկ է նկատել, որ նոր քրեական օրենսգրքի նախագծում՝ սույն հանցատեսակը նախատեսված էր ամբողջությամբ նոր խմբագրությամբ, որը միտված էր չեզոքացնելու հոդված 189-ում առկա էական

թերությունները և բացթողումները: Այնուհետև՝ կատարված փոփոխությունների արդյունքում, այն ներկայացվեց նոր խմբագրությամբ և տեղ գտավ նոր քրեական օրենսգրքում՝ պարունակելով իր մեջ նախկինում առկա մի շարք հայեցակարգային խնդիրներ: Նոր քրեական օրենսգրքի հոդված 285-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Իրավաբանական անձ, դրա առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու կամ վերակազմակերպելու կամ դրաձո անձի միջոցով կամ դրանք օգտագործելու միջոցով ապօրինի գործունեություն իրականացնելը, որի նպատակն է վարկեր ստանալը, հարկերից խուսափելը, գերավճարներ առաջացնելը, նյութական այլ օգուտներ քաղելը կամ ապօրինի գործունեությունը քողարկելը, կամ նույն նպատակով անհատ ձեռնարկատեր հաշվառելը կամ հաշվառվելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել(...):»:

Նախ՝ հարկ է նկատել, որ նոր կարգավորումը չի սահմանափակվել միայն «առևտրային կազմակերպություն» ձևակերպմամբ, որը խիստ սահմանափակ էր, քանի որ նշված ապօրինի գործունեության համար կարող էր ստեղծվել ոչ միայն առևտրային, այլև ոչ առևտրային կազմակերպություն, հավասարապես նաև անձը կարող էր հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր: Նոր իրավակարգավորմամբ՝ նշված ապօրինի գործունեությունը իրականացնելու նպատակով կարող է ստեղծվել իրավաբանական անձ, դրա առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ կամ դրանք կարող են վերակազմակերպվել: Նշված գործունեության համար կարող է օգտագործվել նաև դրաձո անձ կամ նույն նպատակով անձը կարող է հաշվառել կամ հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր:

Այսպես՝ եթե անձն ապօրինի գործունեություն է ծավալում վարկեր ստանալու համար, ապա այն պարագայում, երբ վերջինս նախնական դիտավորություն ունի այդ վարկերը չվերադարձնելու, ապա գործ ունենք խարդախության հանցակազմի հետ, իսկ մնացած դեպքերում՝ առկա է հանգամանալից քաղաքացիաիրավական կարգավորում:

Եթե հանցավորը փորձում է հարկեր վճարելուց խուսափել, ապա այս նպատակի սահմանումը ևս ճիշտ համարվել չի կարող: Հանցավորը ոչ թե նպատակ է ունենում հարկեր վճարելուց խուսափելու, այլ նա ձգտում է ստանալ նյութական օգուտներ՝ չվճարելով հարկերը: Այս նպատակի նախատեսումն անառարկայական է նաև այն համատեքստում, որ ՀՀ թե՛ նախկին և թե՛ նոր քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է սահմանվում հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելու համար (նոր քրեական օրենսգրքի հոդված 290):

Հոդվածի դիսպոզիցիայում նշված հաջորդ նպատակը՝ նյութական այլ օգուտներ քաղելն է:

Հոդվածում նշվել են նաև քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքները, որոնց քննարկման անհրաժեշտությունը բացակայում է:

Քննարկվող հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե

ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված գույքային վնասը և հաշվարկված տույժերը»: Նման խրախուսական նորմերի սահմանման անթույլատրելիությանն արդեն անդրադարձել ենք սույն ուղեցույցի շրջանակներում:

Նախկին քրեական օրենսգրքի հոդված 189-ը նախատեսում էր ևս մեկ քրեաիրավական նորմ: Նշված հոդվածի 2-րդ մասով սահմանվում էր՝ «Առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրելը, ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելը և ներկայացնելը, որը խոշոր վնաս է պատճառել(...): Նոր քրեական օրենսգրքն այս հանցակազմը նախատեսել է առանձին հոդվածով, ինչն ավելի ճիշտ և համակարգված մոտեցում է: Նոր քրեական օրենսգրքի հոդված 286-ը սահմանում է՝ «Առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթուղթ տրամադրելը կամ ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթուղթ կազմելը և ներկայացնելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել(...): Ակներև է, որ նշված նորմերի միջև տարբերություններ գրեթե առկա չեն:

Քննարկվող հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված գույքային վնասը և հաշվարկված տույժերը»:

Քրեական օրենսգրքի հոդված 287-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի, ֆիզիկական անձի, իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների), իրավաբանական անձի անունից օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես գալու կամ նրան պարտադիր կատարման ենթակա ցուցում տալու կամ որոշումը կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի կամ մարմնի կողմից սնանկության կամ սնանկության հնարավոր կանխատեսման ընթացքում անօրինական գործունեություն ծավալելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին և դրսևորվել է անվճարունակության հատկանիշների առկայության դեպքում՝

1) գույքը կամ եկամուտը, գույքային իրավունքները կամ պարտականությունները թաքցնելով,

2) գույքն առանց օրինական հիմքի ուրիշի տիրապետմանը հանձնելով կամ գույքը ոչնչացնելով, վնասելով կամ ակնհայտ անշահավետ պայմաններով օտարելով,

3) պարտապանի կողմից հայտարարագիր ներկայացնելուց խուսափելով,

4) գույքի, եկամտի կամ դրանց չափի, գտնվելու վայրի կամ դրանց վերաբերյալ գույքային իրավունքների կամ պարտականությունների կամ այլ տեղեկությունը

թաքցնելով կամ խեղաթյուրելով,

5) գույքագրումը խոչընդոտելով,

6) պարտապան ֆիզիկական անձի գույքային վիճակը, անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի գույքային կամ տնտեսական գործունեությունն արտացոլող հաշվապահական կամ այլ փաստաթուղթը թաքցնելով, ոչնչացնելով, վնասելով կամ կեղծելով,

7) առանձին պարտատիրոջ գույքային պահանջն ապօրինի բավարարելով՝ ի վնաս այլ պարտատիրոջ կամ

8) սնանկության կառավարչի կամ սնանկության գործընթացում նման գործառույթներ իրականացնող անձի կամ լուծարման հանձնաժողովի գործունեությունը խոչընդոտելով(...):»:

Նոր իրավակարգավորմամբ՝ բացակայում է նախկինում առկա /«Սնանկության մասին» օրենքով սահմանված կարգով/ ձևակերպումը, ինչը ողջունելի է, քանի որ բլանկետային դիսպոզիցիաներում հստակ օրենսդրական ակտերի մասին նշումը կարող է հանգեցնել քրեական օրենսդրության անհարկի ծանրաբեռնման: Դրական պետք է համարել նաև այն հանգամանքը, որ օրենքը հստակ նշում է՝ «անվճարունակության հատկանիշների առկայության դեպքում» դրույթը, նախկին՝ «սնանկության կամ սնանկության հնարավոր կանխատեսման ընթացքում» անորոշ ձևակերպման փոխարեն:

Հանցակազմի նոր խմբագրությունը, ինչպես և նախկինը, հստակ չեն սահմանում քննարկվող հանցագործության սուբյեկտի հատկանիշները, ինչը գործնականում կարող է հանգեցնել լրջագույն խնդիրների:

Ինչ վերաբերում է հանցագործության կատարման եղանակներին, ապա դրանք հիմնականում նույնական են նախկին քրեական օրենսգրքի հոդված 192-ով նախատեսվածների հետ, իսկ կատարված փոփոխություններին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 288-ը սահմանում է՝ «Կանխամտածված սնանկությունը՝ ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ կամ նրա անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի, իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների), իրավաբանական անձի անունից օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես գալու կամ նրան պարտադիր կատարման ենթակա ցուցում տալու կամ որոշումը կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի կամ մարմնի կողմից սեփականությամբ տվյալ ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքը ոչնչացնելու, ակնհայտ կեղծ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձի

շահերից ելնելով, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին: Քննարկվող հանցակազմը (նախկին քրեական օրենսգրքի հոդված 193) որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Հիմնական նորամուծությունը կապված է «սեփականությամբ տվյալ ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքը ոչնչացնելու, ակնհայտ կեղծ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով» ձևակերպման հետ: Այս ձևակերպումը միտված է քննարկվող քրեաիրավական նորմի որոշակիության ապահովմանը: Հանցագործության սուբյեկտին առնչվող հիմնախնդիրը վերն արդեն քննարկվեց: Հոդվածի 2-րդ մասով նախատեսված է խրախուսական նորմ՝ «Մույն հոդվածով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ հատուցել է հանցագործությամբ պատճառված գույքային վնասը և հաշվարկված տույժերը»:

Ինչ վերաբերում է նախկին քրեական օրենսգրքի հոդված 194-ով նախատեսված «Կեղծ սնանկությունը» հանցակազմին, ապա նոր քրեական օրենսգրքով այն չի նախատեսվել, իսկ նման արարք կատարելու պարագայում՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության փաստաթղթերը կեղծելու, խաբեությամբ, վստահությունը չարաշահելու կամ այլ ապօրինի եղանակով գույքային վնաս պատճառելու և, կախված գործի փաստական հանգամանքներից՝ այլ հանցակազմերով:

Հոդված 289-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Իրացման նպատակով կեղծ ակցիզային դրոշմանիշ կամ դրոշմապիտակ պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք օգտագործելը կամ իրացնելը (...)»: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 208-ը պատասխանատվություն էր սահմանում ակցիզային դրոշմանիշեր և (կամ) դրոշմապիտակներ կեղծելու կամ իրացնելու համար: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում էր՝ «Ակցիզային դրոշմանիշեր և (կամ) դրոշմապիտակներ կեղծելը կամ կեղծ ակցիզային դրոշմանիշեր և (կամ) դրոշմապիտակներ իրացնելը (...)»: Նոր իրավակարգավորումը, չնայած վերը նշված բացթողումների, ավելի հստակ է և մանրամասն կարգավորում է հանցագործության օբյեկտիվ կողմի բոլոր դրսևորումները, ըստ էության, նախկինի համեմատ նախատեսելով ավելի խիստ պատասխանատվություն: Եթե նախկին իրավակարգավորման պարագայում՝ անձն իրացնելու նպատակով կեղծ ակցիզային դրոշմապիտակներ տեղափոխեր, որոնք ինքը չէր կեղծել, ապա արարքում հանցակազմը կբացակայեր, քանի որ նշված դեպքում հանցագործության նախապատրաստության համար քրեական պատասխանատվություն նախատեսված չէր (միջին ծանրության հանցագործություն): Նոր իրավակարգավորմամբ՝ նշված արարքի կատարման դեպքում՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության՝ ավարտված

հանցանք կատարելու համար:

Նոր իրավակարգավորմամբ՝ հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է դարձել իրացման նպատակը: Եթե նախկին խմբագրության պայմաններում ակցիզային դրոշմանիշեր և (կամ) դրոշմապիտակներ կեղծելու դեպքում, անկախ նպատակից, առկա էր հանցակազմ, ապա նոր իրավակարգավորման համաձայն՝ բոլոր թվարկված գործողությունները պետք է կատարվեն բացառապես իրացման նպատակով:

Հանցակազմի մյուս տարրերն ու հատկանիշները, ինչպես նաև որակյալ դրսևորումները քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 209-ով նախատեսված՝ «Ակցիզային դրոշմանիշեր և (կամ) դրոշմապիտակներ օտարելը կամ ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով ապրանքներ դրոշմավորելը» հանցակազմը նոր քրեական օրենսդրությամբ նախատեսված չէ, իսկ նշված հանցակազմի որոշ տարրեր ընդգրկված են 289-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակներում:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 290-ի 1-ին մասը սահմանում է՝ «Իրավաբանական անձի ղեկավարի, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի կամ պատասխանատու այլ անձի կողմից հարկերը, տուրքերը կամ այլ վճարները խոշոր չափերով չվճարելու նպատակով օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկը, տուրքը կամ այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով կամ ժամկետներում չներկայացնելը կամ հաշվետվության, հաշվարկի, հայտարարագրի կամ հարկը, տուրքը կամ այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթի մեջ խեղաթյուրված տվյալ մտցնելը կամ հարկման օբյեկտը թաքցնելը կամ խաբեության այլ դրսևորումը(...)»: Նախկին իրավակարգավորմամբ նշվում էր «ակնհայտ կեղծ տվյալ մտցնելը» և այդ պարագայում անհրաժեշտ էր ապացուցել տվյալի կեղծ լինելու «ակնհայտության» փաստը: Այս առումով՝ նոր ձևակերպումը շատ ավելի հաջողված է:

Ի տարբերություն նախկին իրավակարգավորման, նոր ձևակերպմամբ հստակեցվել է քննարկվող հանցակազմի սուբյեկտը, ինչը թույլ կտա իրավակիրառ պրակտիկայում խուսափել տարամեկնաբանություններից: Հարկեր, տուրքեր կամ այլ վճարներ չվճարելու սուբյեկտ կարող է հանդիսանալ ինչպես իրավաբանական անձի ղեկավարը, անհատ ձեռնարկատերը, այնպես էլ ֆիզիկական անձը կամ պատասխանատու այլ անձը, ում վրա համապատասխան իրավական ակտով կամ պայմանագրով դրված է նման պարտականություն: Նոր իրավակարգավորմամբ առավել հանգամանալից



կարգավորվել են նաև քննարկվող հանցագործության կատարման եղանակները՝ բացի նախկին օրենսգրքի հոդված 205-ում նշվածներից, ավելացվել է նաև հաշվետվության, հաշվարկի, հայտարարագրի կամ հարկը, տուրքը կամ այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթի մեջ խեղաթյուրված տվյալ մտցնելը (նախկին կարգավորմամբ սահմանված էր՝ «ակնհայտ կեղծ տվյալ մտցնելը») կամ հարկման օբյեկտը թաքցնելը կամ խաբեության այլ դրսևորումը: Քննարկվող հանցանքի կատարման եղանակների նման ընդլայնումն արդարացված է և հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ պայքարել տնտեսական գործունեության դեմ ուղղված այս վտանգավոր հանցատեսակի դեմ:

Հարկ է նշել, որ իրավական առումով բաց են մնում այն դեպքերը, երբ անձը ներկայացնում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն հրաժարվում է հարկ, տուրք կամ այլ պարտադիր վճար վճարելուց: Այս դեպքում, թե՛ նախկին և թե՛ նոր քրեական օրենսգրքով՝ քրեական պատասխանատվություն չի սահմանվում և հարցը լուծվում է քաղաքացիաիրավական կարգով, ինչը ոչ միշտ է համահունչ կատարված արարքին և դրա վտանգավորությանը:

Հոդված 290-ի 2-րդ մասը սահմանում է՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է պատասխանատու անձի կատարման համար պարտադիր ցուցումներ տալու, նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող կամ նրա գործունեությունը փաստացի ղեկավարող այլ անձի կողմից՝ պատասխանատու անձի անունից կամ միջոցով»:

Հոդված 290-ի 3-րդ մասը, որպես ծանրացնող հանգամանքներ նախատեսում է հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) առանձնապես խոշոր չափերով: Այս որակյալ դրսևորումների առանձին վերլուծության անհրաժեշտություն չկա, միայն նշենք, որ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ՝ 20 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը», այսինքն՝ սա այն հատուկ դեպքերից է, երբ հատուկ մասով նախատեսվում են առանձին, 3-րդ հոդվածում սահմանված չափերից տարբերվող չափեր:

Հոդված 290-ի 5-րդ մասը սահմանում է խրախուսական նորմ՝ «Սույն հոդվածով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ամբողջությամբ վճարել է չվճարված հարկերը, տուրքերը կամ այլ վճարները և դրանց չվճարման համար հաշվարկված տույժերը»:

Նոր քրեական օրենսգրքում 291-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը

վերաձևակերպվել է, սակայն դրա օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները առանցքային փոփոխությունների չեն ենթարկվել: Հիմնական փոփոխությունները հանգում են հետևյալին. եթե նախկին իրավակարգավորմամբ (հոդված 215.1, 7-րդ մաս) նշվում էր՝ «Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 235.1-ին և 267.1-ին հոդվածներով մաքսանենգություն են համարվում 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափը գերազանցող գումարով կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ընդգրկված ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների՝ օրենքով սահմանված խոշոր չափերով, ինչպես նաև, անկախ չափերից, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և (կամ) դրանց պրեկուրսորների, խիստ ներգործող, թունավոր, պայթուցիկ, ռադիոակտիվ նյութերի, ճառագայթման աղբյուրների, միջուկային նյութերի, հրազենի կամ նրա բաղկացուցիչ մասերի, բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, պայթուցիկ սարքերի, ռազմամթերքի, զանգվածային ոչնչացման զենքի, դրա տեղափոխման միջոցների, այլ զինամթերքի, ռազմական տեխնիկայի, զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող այլ նյութերի կամ սարքավորումների, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ապօրինի տեղափոխումը, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ դրանց մասին հավաստի տեղեկությունները սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու, կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնները, այդ թվում՝ արգելքներն ու սահմանափակումները խախտելու, կամ մաքսային կամ այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու միջոցով:», ապա նոր իրավակարգավորումը, թեև օբյեկտիվ կողմից նույնական է, սակայն քրեական օրենսգրքի առանձին գլուխներով նախատեսված վերոնշյալ մի շարք առարկաների մաքսանենգության ընդհանրական հասկացություն և դրանց հստակ չափորոշիչներ չի պարունակում: Քանի որ մաքսանենգություն եզրույթն օգտագործվում է նաև այլ հանցատեսակները նկարագրելիս, որոնք ոտնձգում են այլ օբյեկտների դեմ, (օրինակ՝ նոր քրեական օրենսգրքի հոդված 340-ը պատասխանատվություն է սահմանում՝ ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, հրազենի կամ այլ նյութերի, սարքերի, առարկաների, ապրանքների մաքսանենգության համար) առավել նպատակահարմար կլիներ մաքսանենգության ընդհանրական հասկացությունը սահմանել քրեական նոր օրենսգրքի 3-րդ հոդվածում:

Նոր կարգավորմամբ նախատեսված չէ նախկին քրեական օրենսգրքի հոդված 215.1 հոդվածի 5-րդ մասով նախատեսված խրախուսական նորմը՝ «Սույն հոդվածով նախատեսված կանխիկ դրամական միջոցները և (կամ) վճարային գործիքները կամովին հանձնելու դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում: Սույն հոդվածով նախատեսված դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների հանձնումը չի կարող դիտվել որպես կամովին հանձնում, եթե դրանք հայտնաբերվել են մաքսային հսկողության ձևերի կիրառման, անձի ձերբակալման կամ քննչական գործողությունների կատարման ընթացքում»:

Հանցակազմի որակյալ տեսակներից՝ հարկ է անդրադառնալ միայն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ շանտաժով (շանտաժի հասկացությունը տրված է նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածով) քննարկվող արարքը կատարելու դեպքին, որն իրոք օժտված է բարձր հանրային վտանգավորությամբ, հետևաբար՝ նշված ծանրացնող հանգամանքի նախատեսումը պետք է համարել արդարացված: Պետք է նշել, որ որպես ծանրացնող հանգամանք չի նախատեսվել «մաքսային կամ սահմանային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելով» որակյալ հատկանիշը: Այս դեպքում արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ (հոդված 452 «Պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը»):

Մշակութային արժեքների և ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների մաքսանենգության հանցատեսակը նույնպես նախատեսված էր նախկին քրեական օրենսգրքի հոդված 235.1 հոդվածով: Նոր իրավակարգավորմամբ այն առանձնացվել է՝ ելնելով հանցագործության առարկայի առանձնահատկություններից: Այս դեպքում՝ հանցագործության առարկան հանդիսանում են մշակութային արժեքները և ռազմավարական տեսանկյունից կարևոր հումքային ապրանքները: ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի 35-Ն որոշմամբ հաստատվել է ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների և մշակութային արժեքների ցանկը<sup>133</sup>: Մինչ այդ՝ օրենքում նշվում էր այս ցանկի մասին, բայց որևէ ցանկ հաստատված չէր: Նշենք նաև, որ այս պարագայում սահմանվել են ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածում նախատեսված չափերից տարբերվող խոշոր չափեր առանձին ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների և մշակութային արժեքների համար: Սույն հանցակազմն այլ էական փոփոխությունների չի ենթարկվել, իսկ դրա որակյալ տեսակներն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

<sup>133</sup> <https://www.e-gov.am/gov-decrees/item/35474>

Հայաստանի Հանրապետությունից արտահանված մշակութային արժեքները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չվերադարձնելու հանցակազմը որևէ փոփոխության չի ենթարկվել և նույնությամբ կրկնում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 215.2-ով նախատեսվածը:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 216.1-ը պատասխանատվություն էր նախատեսում իրական շահառուների վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելու կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելու համար: Նոր քրեական օրենսգրքի հոդված 294-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը (...):»:

Հոդված 295-ի 1-ին մասը սահմանում է՝ «Անձի կողմից շահադիտական դրդումներով այլ անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված գույքը նախապես չխոստացված ձեռք բերելը կամ իրացնելը կամ իրացմանն աջակցելը, եթե առկա չեն սույն օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները(...)»: Հարկ է նկատել, որ նոր իրավակարգավորումը, ի համեմատ նախկինի, ունի թե՛ առավելություններ և թե՛ թերություններ: Որպես առավելություն պետք է դիտարկել այն հանգամանքը, որ նոր ձևակերպմամբ չի նշվել «ակնհայտ» եզրույթը, ինչն իրավակիրառ պրակտիկայում առաջացնում էր լրացուցիչ խոչընդոտներ հանցագործությունների որակման գործընթացում: Ինքնին հասկանալի է, որ գույքի հանցավոր ճանապարհով ստացված լինելու հանգամանքը պետք է գիտակցվի հանցավորի կողմից, քանի որ այն նախատեսված է որպես հանցակազմի հատկանիշ, իսկ չգիտակցելու պարագայում՝ այդ հատկանիշը չի կարող մեղսագրվել անձին: Բացի դա՝ նոր օրենքով, որպես քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ նախատեսված է շահադիտական դրդումներով արարքի կատարումը, ինչը բացակայում էր նախկին իրավակարգավորմամբ: Սա այնքան էլ ճիշտ մոտեցում չէ, քանի որ այդ գույքը անձը կարող է ձեռք բերել այլ շարժառիթներով, օրինակ՝ վրեժի շարժառիթով անձը ձեռք է բերում գողությունից տուժածի գույքը՝ ճանաչելով նրան և, նպատակ չունենալով այդ գույքն օգտագործել կամ տնօրինել, պահում է իր մոտ կամ, անգամ, ոչնչացնում է: Շահադիտական դրդումները նոր օրենսգրքով չեն նախատեսվել անգամ հափշտակության հասկացության մեջ և այս հանցատեսակի պարագայում, առավել ևս, դրա մասին նշելու անհրաժեշտությունը բացակայում է: Արարքը սույն հանցակազմով որակելու համար կարևոր է, որ առկա չլինեն փողերի լվացման հանցակազմի հատկանիշները: Նոր իրավակարգավորման առանձնահատկություններից է նաև այն,

որ նախատեսվել է «այլ անձի կողմից հանցավոր ճանապարհով ստացված գույքը» ձևակերպումը: Այս պարագայում, եթե անձն ինքն է կատարել հանցանք, որի արդյունքում ձեռք է բերվել գույք, ապա այդ գույքը հետագայում իրացնելը, փողերի լվացման հատկանիշների բացակայության պարագայում, չի համարվի առանձին հանցագործություն:

Սույն հանցակազմի որակյալ դրսևորումների առանձին քննարկման անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 190-ը պատասխանատվություն էր սահմանում հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման) համար: Նոր իրավակարգավորմամբ հոդվածի վերտառությունը փոխվել է և սահմանվել է՝ «Փողերի լվացումը»: Հոդված 296-ի առաջին մասը սահմանում է՝ «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում)՝

Հարկ է նկատել, որ նշված ձևակերպումը գրեթե ուղղակի կրկնում է Եվրոպայի խորհրդի կողմից 2005 թվականին ընդունված՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Վարշավայի կոնվենցիայի (Հայաստանի Հանրապետությունը միացել է 2008 թվականին) 9-րդ հոդվածի դրույթները:

Հանցակազմի որակյալ դրսևորումներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձնապես խոշոր չափ՝ 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը)»: Այս կարգավորումը ևս գրեթե նույնական է նախկին իրավակարգավորման հետ, այն տարբերությամբ, որ այժմ ֆիքսվում է կոնկրետ դրամական արտահայտություն, իսկ նախկինում՝ չափերը կապված էին նվազագույն

աշխատավարձի հետ: Այս չափերը ևս տարբերվում են նոր քրեական օրենսգրքի հոդված 3-ով նախատեսված չափերից:

Փողերի լվացման հանցակազմը ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից վերլուծվել է Արսեն Սարգսյանի գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0090/01/09, Հովհաննես Գևորգյանի և Հրաչյա Չանախյանի գործով 2019 թվականի նոյեմբերի 7-ի ԵԿԴ/0161/01/15 և Աշոտ Սուքիասյանի գործով 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ ԵԷԴ/0054/01/15 որոշումներում: Քանի որ նշված հոդվածում կատարված փոփոխություններն ըստ էության եզրութաբանական բնույթի են, ապա հարկ է փաստել, որ նշված նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները մնում են արդիական:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էական փոփոխությունների է ենթարկվել այս գլուխը: Հատկապես փոփոխության է ենթարկվել խուլիգանության (297-րդ հոդված) հանցակազմը: Օրենսդիրը փորձել է, ի տարբերություն նախկին օրենսգրքի, հանցակազմը այնպես ձևակերպել, որ ապահովվի իրավական որոշակիությունն ու կոնկրետությունը: Խուլիգանության դիսպոզիցիան ձևակերպվել է կոնկրետ արարքները նշելով: Այսպես՝ խուլիգանությունը բնորոշվում է հետևյալ կերպ.

«1. Խուլիգանությունը՝ հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելը, որը դրսևորվել է անձին ստորացնելով կամ հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելով կամ նույն եղանակներով հանրային միջոցառումը, արարողությունը խափանելով կամ հասարակական նշանակության օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքը խոչընդոտելով (...):»:

Խուլիգանության դիսպոզիցիայի ձևակերպումը շատ նման է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հասարակական կարգի կոպիտ խախտում» և «հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք» հասկացությունների մեկնաբանությանը<sup>134</sup>: Պարզապես օրենսդիրը, փորձելով ապահովել իրավական որոշակիությունը, թվարկել է այն արարքները, որոնք խուլիգանության օբյեկտիվ կողմն են հանդիսանում: Փաստորեն խոսքը այնպիսի արարքների մասին է, որոնք անհանգստություն կամ զայրույթ են առաջացնում հասարակության անդամների մոտ:

Անձին ստորացնել ասելով կարելի է հասկանալ անձին ծաղրուծանակի ենթարկելը, վիրավորելը, անպարկեշտ արարքներ կատարելուն հարկադրելը և այլն: Խուլիգանություն համարվող մնացած արարքներն արդեն մեկնաբանված են վճռաբեկ դատարանի կողմից և հանրահայտ են իրավակիրառողին: Համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելը կարող է դրսևորվել հասարակության ներկայությամբ սեռական հարաբերություն ունենալով, տարբեր բարձր ձայներով, օդ կրակելով և այլն:

Նախատեսվել են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝ արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից,

<sup>134</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի որոշումը ԱՎԴ/0014/01/11 գործի վերաբերյալ, 18-19-րդ կետեր, 20-21-րդ կետեր:

2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կամ

3) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով:

Նոր օրենսգրքում չեն նախատեսվել այնպիսի ծանրացնող հանգամանքներ, ինչպիսին էին բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով խուլիզանությունը, կազմակերպված խմբի կողմից խուլիզանությունը, իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով, անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով, բացառիկ ցինիզմով զուգորդված խուլիզանությունը, զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիզանությունը: Ինչ վերաբերում է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով խուլիզանությանը, ապա այդ դեպքերում արարքը պետք է որակել համակցությամբ՝ խուլիզանություն և կոնկրետ հանցանքի կատարում: Եթե իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն է ցույց տրվել, ապա արարքը պետք է որակել որպես խուլիզանություն և վարչական իրավախախտում: Եթե իշխանության ներկայացուցչի նկատմամբ ինտենսիվ դիմադրություն, բռնություն է գործադրվել, ապա արարքը պետք է որակել նաև 452-րդ հոդվածի 3-րդ մասով՝ պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելը: Այդ դեպքում առողջությանը վնասի պատճառումը չի որակվում՝ բացառությամբ առողջությանը պատճառված ծանր վնասի: Եթե զենք է օգտագործվել, ապա արարքը կորակվի համակցությամբ, եթե զենքն անօրինական է եղել: Մնացած ծանրացնող հանգամանքները արարքի որակման վրա չեն ազդում, բայց կարող են հաշվի առնվել պատիժ նշանակելիս:

Առանձին հոդվածով նախատեսվել է կավատության (298-րդ հոդված) հանցակազմը. այն բնորոշվում է հետևյալ կերպ՝ կավատությունը՝ շահադիտական նպատակով կամ այլ ստոր դրդումներով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը կամ հակելը, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 188-րդ կամ 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները (խոսքը մարդու թրաֆիքինգի կամ շահագործման և երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգի կամ շահագործման մասին է):



Ըստ էության սա նախկին օրենսգրքում առկա պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելն է, որտեղ ավելացվել է հակելը, որը կարող է կատարվել տարբեր եղանակներով՝ սպառնալիքով, համոզելով, նյութապես շահագրգռելով և այլն: Ավելացել է նաև «ստոր դրդումներ» հասկացությունը: Սա գնահատողական հասկացությունն է. իրավակիրառողը ինքն է որոշում դրդումների ստոր լինելը՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: Ստոր դրդումներ կարող են լինել ներգրավվածին, նրա ծնողներին խայտառակելը, պոռնկության ներգրավվածի կամ նրա մերձավորների մասին արատավորող տեղեկություններ տարածելը, ներգրավվածին կամ նրա մերձավորներին որոշակի բացասական արարքներ կատարելուն հարկադրելը, շահադիտական դրդումներով արարքը կատարելը և այլն:

Ծանրացնող հանգամանքներ են նախատեսված հղի կնոջ նկատմամբ, հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ կատարելը, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը (ըստ էության սա նախկին օրենսգրքում առկա «պաշտոնեական դիրքը օգտագործելով կատարելն է»), որոնք մեկնաբանության կարիք չունեն: Նախատեսված չի երկու կամ ավելի անձի նկատմամբ կատարելը. այդ դեպքում արարքը պետք է որակել համակցությամբ:

Որպես առավել ծանրացնող հանգամանք է նախատեսված նույն արարքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը: Հանցավոր կազմակերպության հասկացությունը տրված է օրենսգրքի 50-րդ հոդվածում:

Պահպանվել է պատասխանատվությունը պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու (299-րդ հոդված) համար: Հանցակազմը ունի հետևյալ ձևակերպումը. պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը՝ պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ հանրային հաստատությունը նույն նպատակով շահագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան, շինություն, ավտոմեքենա կամ այլ կացարան տրամադրելը, եթե բացակայում են քրեական օրենսգրքի 298-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները:

Նախատեսվել են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից:

Նշված ծանրացնող հանգամանքներն արդեն մեկնաբանվել են:

Փոփոխությունների է ենթարկվել պոռնկագրական նյութեր կամ

առարկաներ տարածելու (300-րդ հոդված) հանցակազմը: Նոր օրենսգրքում այն բնորոշվում է հետևյալ կերպ. անորոշ անձանց շրջանակին պոռնկագրական նյութ կամ առարկա, այդ թվում՝ տպագիր հրատարակություն, կինոյի կամ տեսաֆիլմի նյութ, էլեկտրոնային կրիչի վրա պահվող նյութ, պատկեր կամ պոռնկագրական բնույթի այլ առարկա առաջարկելը կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մատչելի դարձնելը կամ անորոշ անձանց շրջանակում այդպիսի նյութ կամ առարկա գովազդելը: Խոսքը անձանց անորոշ շրջանակի մասին է այսինքն՝ հանցավորին անձանոթ, անհատապես չորոշված անձանց: Հոդվածը առանձին մասով պատասխանատվություն է նախատեսում մանկական պոռնոգրաֆիայի համար: Հանցակազմը ձևակերպված է հետևյալ կերպ՝ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելը, արտադրելը, ձեռք բերելը, տարածելը, իրացնելը, արտահանելը, ներմուծելը, առաջարկելը, գովազդելը, մատչելի դարձնելը, տնօրինելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով հասանելիություն ձեռք բերելը կամ համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորումների վրա կամ ցանկացած այլ եղանակով մանկական պոռնոգրաֆիա պահպանելը կամ մանկական պոռնոգրաֆիա դիտելը: Ընդ որում, մանկական պոռնոգրաֆիայի ծանրացնող հանգամանքներ են նախատեսված, եթե կատարվել է մերձավոր ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է եղել երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն, կամ կրթական կամ առողջապահական կազմակերպության այն աշխատակցի կողմից, որը պարտավոր էր հոգ տանել երեխայի մասին կամ վերահսկել նրա վարքագիծը կամ զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով: Կարծում ենք, որ այս ծանրացնող հանգամանքները մեկնաբանության կարիք չունեն:

Առավել ծանրացնող հանգամանք է նախատեսված սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից:

Հատկանշական է, որ տրվել է նաև մանկական պոռնոգրաֆիայի հասկացությունը: Ըստ օրենսգրքի՝ սույն հոդվածի իմաստով՝ մանկական պոռնոգրաֆիա է համարվում ցանկացած նյութ, որտեղ երեխան պատկերված է բացահայտ սեքսուալ բնույթի իրական կամ նմանակված գործողություն կատարելիս կամ սեռական շարժառիթով երեխայի սեռական օրգանը ցուցադրելիս:

Այս հասկացության մեջ մեկնաբանության կարիք ունի «սեռական շարժառիթով երեխայի սեռական օրգանը ցուցադրելիս» հասկացությունը: Բանն այն է, որ եթե երեխայի սեռական օրգանը ցուցադրվում է այլ շարժառիթներով, օրինակ, առողջապահական նպատակներով, ապա հանցակազմը բացակայում է:

Գրեթե նույն օբյեկտիվ կողմն ունի անառակաբարո արարքների կատարումը, ինչը

հարց է առաջացնում, թե ինչպես պետք է դրանք սահմանազատել: Մասնավորապես, անառակաբարո արարքների օբյեկտիվ կողմի մի մասը ձևակերպված է հետևյալ կերպ. 18 տարին լրացած անձի կողմից պոռնկագրական նյութ կամ առարկա, այդ թվում՝ տպագիր հրատարակություն, կինոյի կամ տեսաֆիլմի նյութ, էլեկտրոնային կրիչի վրա պահվող նյութ, պատկեր կամ պոռնկագրական բնույթի այլ առարկա 16 տարին չլրացած անձանց շրջանում տարածելը, ցուցադրելը: Կարծում ենք, որ սահմանազատման չափանիշն անձանց անորոշ շրջանակն է՝ անառակաբարո արարքները կատարվում են անհատապես որոշված անձանց նկատմամբ, իսկ քննարկվող հանցագործությունը՝ անձանց անորոշ շրջանակի նկատմամբ:

Պատմության կամ մշակույթի հուշարձաններ ոչնչացնելու կամ վնասելու (301-րդ հոդված) հանցակազմում, ի տարբերություն նախկին օրենսգրքի, նախատեսվել է մեկ ծանրացնող հանգամանք, այն է՝ նույն արարքը, որը կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով, որը մեկնաբանության կարիք չունի, քանի որ նախկին օրենսգրքի պայմաններում մեկնաբանվել էր: Բացի այդ, առանձին պատասխանատվություն է նախատեսվել պատմության կամ մշակույթի հուշարձաններ անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու (302-րդ հոդված) համար: Ոչնչացնելու և վնասելու հասկացությունները մեկնաբանված են նախորդ օրենսգրքի պայմաններում:

Նախատեսվել են երկու նոր հանցակազմ՝ հնագիտական օբյեկտները ոչնչացնելը կամ վնասելը կամ այլ ապօրինի արարքներ կատարելը և հնագիտական օբյեկտները անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը կամ այլ ապօրինի արարքներ կատարելը (303-րդ և 304-րդ հոդվածներ):

Առաջին հանցակազմը բնորոշվում է հետևյալ կերպ. ապօրինի հնագիտական աշխատանք իրականացնելը, որը հանգեցրել է հնագիտական օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի, կամ այնպիսի ապօրինի արարք կատարելը, որը հանգեցրել է հնագիտական կամ հնէաբանական տեղեկության կորստի, կամ հնագիտական կամ հնէաբանական գտածոյին ապօրինի տիրանալը: Ապօրինի արարք կատարելը, որը հանգեցրել է հնագիտական կամ հնէաբանական տեղեկության կորստի, կամ հնագիտական կամ հնէաբանական գտածոյին ապօրինի տիրանալը կարող են կատարվել նաև առանց հնագիտական աշխատանք ապօրինի իրականացնելու: Երկրորդը նույնն է, միայն թե անզգուշությամբ: Հնագիտական աշխատանք իրականացնելով հանցագործությունը կատարելիս պետք է հստակ ապացուցվի, որ հնագիտական աշխատանք իրականացնելը եղել է ապօրինի, հակառակ պարագայում հանցակազմը բացակայում է: Դիսպոզիցիան բլանկետային է, պետք է հստակ ցույց տրվի, որ հնագիտական աշխատանք իրականացնելը եղել է ապօրինի:

Այս արարքը դիտավորությամբ կատարելու դեպքում, հանցավորը պետք է գիտակցի որ հնագիտական աշխատանք իրականացնելը եղել է ապօրինի կամ հնագիտական

աշխատանք իրականացնելիս կատարվել է ապօրինի արարք, իսկ անզգուշության դեպքում, նման գիտակցումը կարող է առկա լինել, իհարկե հետևանքների նկատմամբ անզգուշություն դրսևորելով կամ հանցավորը կարող է նաև չգիտակցել, սակայն պարտավոր էր և կարող էր գիտակցել նշված հանգամանքը: Արարքի ապօրինությունը չգիտակցելը արարքի փաստական կողմն է և ոչ թե իրավաբանական. անձը կարող է իմանալ, որ հնագիտական օբյեկտները ոչնչացնելը կամ վնասելը կամ այլ ապօրինի արարքներ կատարելը քրեորեն պատժելի են, բայց չգիտակցի իր արարքի ապօրինի լինելու հանգամանքը: Հնագիտական աշխատանք իրականացնելը եղել է ապօրինի թե ոչ կամ կատարվել է ապօրինի արարք թե ոչ, որոշվում է համապատասխան փորձաքննությամբ: Մասնավորապես՝ հնագիտական աշխատանք իրականացնելը ապօրինի կհամարվի, եթե կատարվի այն անձի կողմից, որը դրա իրավունքը, թույլատվությունը չունեն և այլն:

Նախատեսվել են հետևյալ ծանրացնող հանգամանքները, որոնք մեկնաբանության կարիք չունեն. հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակով կամ առանձնակի արժեք ունեցող հնագիտական օբյեկտի նկատմամբ: Օբյեկտը առանձնակի արժեք ունեցող հնագիտական օբյեկտ է, թե ոչ, որոշվում է փորձաքննությամբ:

Փոքր փոփոխության է ենթարկվել կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի (307-րդ հոդված) հանցակազմը: Այլևս նախատեսված չեն այնպիսի արարքներ, ինչպիսիք են՝ ուժեղ հարվածելը, մտրակելը, հրազենով կրակելը, բարձրությունից կամ փոխադրամիջոցներից նետելը: Բանն այն է, որ այս արարքները դաժան վերաբերմունքի մասին չեն վկայում: Փոխարենը նախատեսվել է հետևյալ դիսպոզիցիան՝ կենդանու նկատմամբ դաժան վերաբերմունքը՝ կենդանու կյանքի ընդհատումը խեղդելու, կախելու, մասնատելու, թունավորելու կամ այնպիսի նյութ ներարկելու միջոցով, որը տառապանք պատճառելով է հանգեցնում մահվան, ողջ վիճակում կենդանու մաշկազերծումը, անդամահատումը, կենդանիների մարտի կազմակերպումը կամ իրականացումը կամ անտուն կենդանու այնպիսի հավաքը կամ բռնումը, որը հանգեցնում է կենդանու խեղմանը կամ կենդանու կյանքի ընդհատմանը, ինչպես նաև կենդանուն սահմանված կարգի խախտմամբ գիտահետազոտական, բժշկական կամ փորձարարական նպատակով օգտագործելը կամ այլ դաժան վերաբերմունքը:

Որպեսզի արարքը որակվի որպես կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք, անհրաժեշտ է, որ անձը կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերելու նպատակ հետապնդի և գիտակցի դաժան վերաբերմունք ցուցաբերելու փաստը:

Ծանրացնող հանգամանքներից բացառվել է երկու կամ ավելի կենդանու նկատմամբ կատարելը: Եթե իրականում հանցանքը կատարվի երկու կամ ավելի կենդանու

նկատմամբ, ապա արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ. որքան կենդանի, այնքան հանցագործություն նույնիսկ միասնական դիտավորության դեպքում:

Նախատեսվել են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) առանձին դաժանությամբ,
- 3) 12 տարին չըրացած անձի ներկայությամբ կամ

4) շահադիտական դրդումներով, որոնք մեկնաբանության կարիք չունեն: Միայն առանձին դաժանություն հասկացությունը խիստ գնահատողական է և դժվար է այն սահմանազատել սովորական դաժանությունից: Կարելի է առանձին դաժանություն համարել երկար ժամանակով կենդանու նկատմամբ նշված արարքների կատարումը, նշված արարքները նույն կենդանու նկատմամբ բազմիցս կատարելը և այլն:

Ակնհայտ է, որ հանցավորը պետք է գիտակցի այս ծանրացնող հանգամանքների առկայությունը:

Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելու (305-րդ հոդված) հանցակազմում փոփոխությունն այն է, որ դրանք նախատեսվել են առանձին հոդվածներով, բացի այդ, դիակը անարգանքի ենթարկելու հանցակազմում նշվել են դիակը անարգանքի ենթարկելու մի քանի միջոց՝ դիակը պղծելը, ապօրինի արտաշիրիմելը, նրա հագուստը կամ նրա վրա գտնվող այլ իրը վերցնելը կամ մահացածի հիշատակն այլ կերպ անարգելը:

Դիակը պղծելը, ապօրինի արտաշիրիմելը, նրա հագուստը կամ նրա վրա գտնվող այլ իրը վերցնելը մեկնաբանության կարիք չունեն, որովհետև հանրահայտ հասկացություններ են, իսկ մահացածի հիշատակն այլ կերպ անարգելը ասելով, պետք է հասկանալ հիշատակն անարգելու ցանկացած եղանակ. օրենսդիրը արդարացիորեն ձեռնպահ է մնացել դրանց սպառիչ ցանկը տալուց:

Գերեզմանը անարգելու (306-րդ հոդված) հանցակազմի ծանրացնող հանգամանքներից բացառվել է գերեզմաններում գտնվող կամ դրանց վրա եղած առարկաները հափշտակելով կատարելը, որի առկայության դեպքում արարքը պետք է որակվել համակցությամբ՝ գերեզմանը անարգանքի ենթարկելը և հափշտակության կոնկրետ եղանակ:

Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ առկա են նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում: Այսպես՝ ԱՄՆ - ում այդպիսին են համարվում ամուսնական դավաճանությունը, հասարակական վայրում հարբած հայտնվելը, պոռնոգրաֆիան, պոռնկությունը, արգելված իրերին (օրինակ՝ թմրամիջոցներ) տիրապետելը և այլն, Հունգարիայում՝ պոռնկագրական առարկաներ տարածելը, բռնաբարությունը, Շվեդիայում քրեական պատասխանատվություն է նախատեսված պոռնիկների ծառայությունից օգտվելու

համար, Անգլիայի քրեական օրենսդրությունը քրեական պատասխանատվություն է նախատեսում պատմության և մշակույթի հուշարձանները փչացնելու կամ ոչնչացնելու համար և այլն<sup>135</sup>: Պետք է նշել, որ արտասահմանյան երկրների մի զգալի մասի քրեական օրենսդրություններում այս հանցագործությունները խմբավորված չեն գլխի մեջ և ցրված են օրենսդրության մեջ:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսդրությունը բավարար չափով է քրեականացված և նոր արարքներ նախատեսելու կարիք չկա. այդ օրենսդրությունը լիովին իրականացնում է հասարակական կարգի և բարոյականության պաշտպանությունը:

---

<sup>135</sup> Sliu Шалагин А. Е. Ответственность за преступления против общественной нравственности в зарубежных странах. <https://cyberleninka.ru/article/n/otvetstvennost-za-prestupleniya-protiv-obshchestvennoy-nravstvennosti-v-zarubezhnyh-stranah/viewer>

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 308-ը պատասխանատվություն է սահմանում ահաբեկչության համար: Նոր ձևակերպումը բավականաչափ ընդհանրություններ ունի ՀՀ նախկին քրեական օրենսգրքում առկա ահաբեկչության հանցակազմի նախնական ձևակերպման հետ, որը հետագայում փոփոխվեց՝ ըստ էության կրկնելով 1999 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված ՄԱԿ-ի Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայի (ՀՀ-ում ուժի մեջ է մտել 15.04.2004 թ.) 2-րդ հոդվածի բ) կետը<sup>136</sup>: Նոր իրավակարգավորումը շատ ավելի համապարփակ կերպով արտացոլում է ահաբեկչության հանցակազմի էությունը և իր մեջ ներառելով նաև ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 219-ի հատկանիշները (Շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը): Նոր քրեական օրենսգրքի հոդված 308-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը կամ դրա իրական սպառնալիքը կամ շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելը կամ պահելը՝ զուգորդված քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետևանք առաջացնելու վտանգով, որի նպատակն է բնակչությանը կամ դրա առանձին խմբին ահաբեկելը, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելը, հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում ծառայող անձին որևէ արարք կատարելուն կամ հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելը, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ահաբեկչություն համարվող ցանկացած այլ արարք (...): Նոր ձևակերպումը արմատապես տարբերվում է նախկին ձևակերպումից: Եթե նախկին ձևակերպման պարագայում խոսքը գնում էր քաղաքացիական անձի կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձի բացառապես մահվան կամ առողջությանը ծանր մարմնական վնաս պատճառելու կամ դրա սպառնալիքի մասին, ապա նոր կարգավորմամբ նախատեսվել է «քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ

<sup>136</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=24212>

ծանր հետևանք առաջացնելու վտանգով» ձևակերպումը, որը նախատեսում է հնարավոր հետևանքների ավելի մեծ սպեկտր, ինչը, տվյալ պարագայում, արդարացված է: Ընդ որում՝ բավական է, որ արարքը գուցորդվի նման վնաս պատճառելու վտանգով, իսկ իրական վնաս պատճառելու դեպքում՝ արարքը կորակվի հանցագործությունների համակցությամբ: Նոր ձևակերպմամբ՝ նշված չէ նաև, որ պետք է բացակայեն պատանդ վերցնելու կամ պահելու հանցակազմի հատկանիշները: Նման նշում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, իսկ նշված հանցակազմի առկայության պարագայում՝ արարքը կորակվի հանցագործությունների համակցությամբ: Հանցակազմի որակյալ տեսակներից հարկ է անդրադառնալ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի վրա հարձակմամբ կամ միջուկային կամ ռադիոակտիվ նյութի կամ իոնացնող ճառագայթման այլ աղբյուրի կամ զանգվածային ոչնչացման զենքի, թունավոր, քիմիական կամ կենսաբանական նյութի օգտագործմամբ» ծանրացնող հանգամանքին: ՀՀ-ում առկա է գործող ԱԷԿ, և միջուկային ահաբեկչության վտանգն առավել քան բարձր է: Իհարկե, սույն ծանրացնող հանգամանքի պարագայում, խոսքը միայն միջուկային կամ ռադիոակտիվ ահաբեկչության մասին չէ, այլ դրա մի շարք վտանգավոր դրսևորումների և այս համատեքստում՝ քննարկվող ծանրացնող հանգամանքի նախատեսումն արդարացված է:

Նոր իրավակարգավորմամբ՝ նախատեսված չէ նախկին քրեական օրենսգրքի հոդված 217-ի 4-րդ մասում սահմանված խրախուսական նորմը, համաձայն որի՝ «Ահաբեկչության նախապատրաստությանը մասնակցած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա, իշխանության մարմիններին ժամանակին հայտնելով կամ այլ միջոցներով, նպաստել է ահաբեկչության խափանմանը, և եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում»: Նման ձևակերպումը տարակուսելի էր, քանի որ այն ոչ այլ ինչ էր, քան կամովին հրաժարման նկարագրություն և նման խրախուսական նորմ, այս տրամաբանության պարագայում, կարելի էր նախատեսել ցանկացած հոդվածում, ինչն անընդունելի է:

309-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը նորույթ է ՀՀ քրեական օրենսդրությամբ և չունի իր համարժեքը նախկին կարգավորմամբ: Հոդված 309-ի 1-ին մասը սահմանում է՝ «Ահաբեկչական գործունեությանը նպաստելը՝ սույն օրենսգրքի 308-րդ, 311-րդ, 312-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարելու համար անձանց հավաքագրելը կամ ահաբեկիչների ուսուցման ճամբար կազմակերպելը, սույն օրենսգրքի 308-րդ, 311-րդ, 312-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարելու հմտություններ սովորեցնելը կամ սովորելը կամ նշված արարքները կամ սույն օրենսգրքի 308-րդ, 311-րդ, 312-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հոդվածով նախատեսված հանցանքները կատարելու նպատակով ճանապարհորդությունը կամ դրան այլ կերպ նպաստելը(...)»:



Այս հանցակազմի սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն դեպքերում, երբ անձը չի նախապատրաստվում կոնկրետ ահաբեկչության կամ հողվածում նշված այլ հանցանքների, այլ ընդհանուր առմամբ հավաքագրվում է հնարավոր ահաբեկչական բնույթի հանցանքներ կատարելու համար, կամ սովորում կամ սովորեցնում է հողվածում նշված հանցանքներ կատարելու հմտությունները, անցնում է պատրաստություն համապատասխան ճամբարներում, կամ այդ նպատակով ճանապարհորդում է, ապա նախկին իրավակարգավորման պարագայում այդ արարքները հանցակազմ չէին պարունակում: Նոր իրավակարգավորումը կոչված է լրացնելու այս բացը: Այս պարագայում՝ կոնկրետ, հստակ հանցանք կատարելու դիտավորությունն ապացուցելու անհրաժեշտությունը բացակայում է, բավական է միայն, որ անձը կատարի հողվածում նշված արարքներից մեկը կամ մի քանիսը:

Հանցակազմի որակյալ տեսակներն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է: Սույն հողվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հողվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե իրավասու մարմիններին կամավոր հայտնել է իր կողմից ահաբեկչական գործունեությանը նպաստելու մասին, որը հնարավորություն է տվել կանխելու սույն օրենսգրքի 308-րդ, 310-րդ, 311-րդ, 312-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հողվածով նախատեսված հանցանքների կատարումը: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»: Նշված խրախուսական նորմի սահմանումը կարևոր է, քանի որ այն կարող է իրապես նպաստել ավելի վտանգավոր հանցանքների կանխմանը:

Հողված 310-ի 1-ին մասը սահմանում է՝ «Ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելը՝ գույքի ուղղակի կամ անուղղակի տրամադրումը կամ հավաքագրումը՝ գիտակցելով, որ այն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործվելու է կամ կարող է օգտագործվել անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից կամ սույն օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հողվածով նախատեսված հանցանքներ կատարելու համար կամ ֆինանսական ծառայության մատուցումը՝ գիտակցելով, որ այդ ծառայությունը կամ դրա արդյունքն օգտագործվելու է անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից կամ ուղղված է կամ կարող է ուղղվել սույն օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հողվածով նախատեսված հանցանքներ կատարելուն...»: Այս իրավակարգավորումն ընդհանրություններ ունի նախկին քրեական օրենսգրքի հողված 217<sup>1</sup> նախատեսված «Ահաբեկչության ֆինանսավորումը» հանցակազմի հետ: Կատարված փոփոխությունները ճշգրտող և հստակեցնող բնույթի են, օրինակ՝ նոր օրենքում չի նշվել

«ցանկացած եղանակով» ձևակերպումը, որն առկա էր նախկին կարգավորմամբ: Իրավամբ՝ նման ձևակերպման անհրաժեշտությունը բացակայում է: Բացի այդ՝ էականորեն ընդլայնվել է ահաբեկչական բնույթի հանցագործությունների ցանկը, որոնց համար կարող է տրամադրվել գույքը կամ մատուցվել ֆինանսական ծառայությունը: Քննարկվող հանցակազմը ևս հիմնականում կրկնում է 1999 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված ՄԱԿ-ի Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիայի (ՀՀ-ում ուժի մեջ է մտել 15.04.2004թ.) 2-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը<sup>137</sup>: Հարկ է անդրադառնալ այս հանցակազմի նախատեսման անհրաժեշտությանը: Նման հանցակազմի բացակայության պարագայում՝ ահաբեկչությունը կամ հոդվածում նշված ահաբեկչական բնույթի հանցագործությունները ֆինանսավորելը կորակվեր որպես այդ հանցագործությունների օժանդակություն, որի պարագայում շատ ավելի խիստ քրեական պատասխանատվություն և պատիժ է սահմանված: Պետք է փաստել, որ ֆինանսավորման ձևով օժանդակությունը հաճախ օժանդակության ամենավտանգավոր դրսևորումներից է, որը հնարավորություն է ընձեռում շարունակաբար կատարել ահաբեկչություններ կամ համաբնույթ հանցագործություններ:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ահաբեկչական կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու հանցակազմը ևս նոր է և չունի իր համարժեքը նախկին քրեական օրենսդրությամբ: Այն իրենից ներկայացնում է հոդված 318-ով նախատեսված «Հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը» ընդհանուր նորմի հատուկ դրսևորում: Ահաբեկչական կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու համար նախատեսվել է ավելի խիստ քրեական պատասխանատվություն, քան հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու և այս համատեքստում՝ հատուկ նորմի նախատեսումը պետք է արդարացված համարել: Հոդված 311-ի առաջին մասը սահմանում է՝ «Ահաբեկչական կազմակերպություն ստեղծելը կամ ահաբեկչական կազմակերպությունը ղեկավարելը...»: Հոդվածի 2-րդ մասով տրվում է ահաբեկչական կազմակերպության հասկացությունը, համաձայն որի՝ «Ահաբեկչական է համարվում այն կազմակերպությունը, որն ստեղծվել է սույն օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 310-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարելու համար»:

Ըստ օրենսդրական նկարագրման եղանակի՝ սույն հանցակազմը հատված է, այսինքն՝ արարքն ավարտված է համարվում իր բնույթով նախապատրաստական գործողություններ կատարելու պահից՝ անկախ այն հանգամանքից՝ նշված

<sup>137</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=24212>

կազմակերպության կողմից որևէ կոնկրետ ահաբեկչական ակտ կամ համաբնույթ հանցանք կատարվել է, թե ոչ: Հանցակազմի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ տարրերը կամ հատկանիշները լրացուցիչ քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հոդվածի 3-րդ մասը նախատեսում է խրախուսական նորմ, որն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարած անձը, որը նպաստել է ահաբեկչական կազմակերպության գործունեության խափանմանը, ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»: Այս պարագայում ևս, խրախուսական նորմի նախատեսումը պետք է արդարացված համարել, քանզի այն կարող է նպաստել քննարկվող հանցանքի դեմ պայքարին:

Հոդված 312-ը պատասխանատվություն է սահմանում ահաբեկչական կազմակերպությանը մասնակցելու համար: Ահաբեկչական կազմակերպության հասկացությունը տրված է 311-րդ հոդվածով: Այս պարագայում՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե ինքը չի ստեղծել կամ ղեկավարում նշված կազմակերպությունը, սակայն մասնակցում է ցանկացած ձևով դրա գործունեությանը, կատարում է հանձնարարություններ, նախապատրաստում է որևէ ահաբեկչական բնույթի հանցագործություն, տարաբնույթ կերպով օժանդակում է ահաբեկչական կազմակերպության գործունեությանը (նյութատեխնիկական, կադրային, տեղեկատվական կամ ցանկացած այլ բնույթի օժանդակություն): Եթե նշված կազմակերպության մասնակցի կողմից կատարվում է կոնկրետ ահաբեկչական ակտ, ապա արարքը պետք է որակվի 308-րդ և 312-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համակցությամբ: Հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է խրախուսական նորմ, համաձայն որի՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարած անձը, որը նպաստել է ահաբեկչական կազմակերպության գործունեության խափանմանը, ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»: Նման նորմի նախատեսման նպատակահարմարության մասին վերն արդեն խոսվել է:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 313-ի 1-ին մասը սահմանում է «Հրապարակայնորեն ահաբեկչությունն արդարացնելը կամ քարոզելը, որը զուգորդվել է ահաբեկչության մղելով, կամ սույն օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 310-րդ, 311-րդ, 312-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարելու հրապարակային կոչը, ինչպես նաև այդպիսի կոչ պարունակող նյութ կամ առարկա

տարածելը(...)»: Համանման կարգավորում առկա էր նաև ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 226.1.-ով, որն ուներ հետևյալ վերտառությունը՝ «Ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային ահաբեկչության հրապարակային կոչերը, նշված հանցանքների կատարումը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը»: Նոր օրենքով ընդլայնվել է նաև այն հանցանքների շրջանակը, որոնք կատարելուն կարող է ուղղված լինել հրապարակային կոչը: Բացի այդ, որպես հանրորեն վտանգավոր արարքի դրսևորում՝ նախատեսվել է նաև «այդպիսի կոչ պարունակող նյութ կամ առարկա տարածելը», ինչը բացակայում էր նախկին իրավակարգավորմամբ: Հանցակազմի ծանրացնող հանգամանքներից հարկ է անդրադառնալ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ» դրսևորմանը, որն իրապես օժտված է բարձր հանրային վտանգավորությամբ և էլեկտրոնային տեխնոլոգիաների արդի զարգացմանը զուգընթաց, նշված ծանրացնող հանգամանքի նախատեսման անհրաժեշտությունն էլ ավելի է ընդգծվում:

Հոդված 314-ը պատասխանատվություն է նախատեսում ահաբեկչության մասին սուտ տեղեկություն տարածելու համար, որպես հասակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցատեսակի: Նախկին իրավակարգավորմամբ՝ այս հանցանքը նախատեսված էր «Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում (հոդված 259 Ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը): Նոր մոտեցումն արդարացված է, քանի որ անգամ իրականությանը չհամապատասխանող (կամ այն խեղաթյուրող) ահաբեկչության մասին հաղորդումը վտանգում է հասարակական անվտանգության, այլ ոչ թե հասարակական կարգի և բարոյականության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Նման հաղորդման պարագայում՝ անորոշ շրջանակի անձանց մոտ լրջագույն անհանգստություն, տագնապ կամ վախ է առաջանում իրենց և իրենց մտերիմների կյանքի, առողջության գույքի և այլ հանրային բարիքների հետ կապված, որպիսի հանգամանքը հիմք է տալիս պնդելու, որ նշված արարքի հիմնական անմիջական օբյեկտն իրավամբ պետք է համարել հասարակական անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Պետք է նշել, որ, եթե նախկին իրավակարգավորումը վերաբերում էր «նախապատրաստվող ահաբեկչությանը», և պետք է տրված լիներ «հաղորդման տեսքով», ապա նոր կարգավորմամբ նշվել է՝ «ահաբեկչության մասին սուտ տեղեկություն տարածելը» որն ունի ավելի լայն բովանդակություն:

Հանցակազմի մյուս օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերը և հատկանիշները, ինչպես նաև դրա որակյալ դրսևորումները (նախկին իրավակարգավորմամբ սույն հանցակազմի

ծանրացնող հանգամանքներ նախատեսված չէին) քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Պատանդ վերցնել կամ պահել հանցատեսակը նոր իրավակարգավորմամբ ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Հոդված 315-ի 1-ին մասը սահմանում է՝ «Անձին պատանդ վերցնելը կամ պատանդ պահելը, որը կատարվել է պատանդին ազատելու պայմանով հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում աշխատող անձին պաշտոնեական կամ ծառայողական գործունեության հետ կապված արարք կատարելուն կամ այդպիսի արարք կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով(...)»: Առաջին հայացքից նախկին իրավակարգավորմանը (նախկին քրեական օրենսգրքի հոդված 218) բավականաչափ նմանվող այս ձևակերպումն ունի կարևոր առանձնահատկություններ: Պետք է նշել, որ հանցակազմի օբյեկտիվ կողմը նույնությամբ ձևակերպվել է նաև նոր դիսպոզիցիայում և արտահայտվում է անձին պատանդ վերցնելով կամ պատանդ պահելով: Սակայն սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող նպատակը՝ ձևակերպվել է նորովի՝ «կատարվել է պատանդին ազատելու պայմանով հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում աշխատող անձին պաշտոնեական կամ ծառայողական գործունեության հետ կապված արարք կատարելուն կամ այդպիսի արարք կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով»: Նախկին ձևակերպումը հետադիմական էր, քանի որ նշում էր՝ «պատանդին ազատելու պայմանով պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով»: Բանն այն է, որ հնարավոր չէ հարկադրել պետությանը որևէ արարք կատարելու: Բացի այդ՝ խոսվում էր քաղաքացու մասին, այսինքն՝ տառացի մեկնաբանությամբ քաղաքացիություն չունեցող անձին նման պահանջ չէր կարող ներկայացվել, ինչն անընդունելի մոտեցում էր: Նոր իրավակարգավորումն ավելի հստակ է և համապարփակ: Բացի այդ՝ նոր իրավակարգավորման մասնավոր անձին նշված իրավիճակում պահանջ ներկայացնելը չի դիտվում պատանդ վերցնելու կամ պահելու հանցակազմի շրջանակներում, այլ որակվում է որպես մարդուն առևանգելու կամ սպօրինաբար ազատությունից զրկելու հանցակազմի որակյալ դրսևորում (հոդված 191-ի 2-րդ մասի 8-րդ կետ կամ հոդված 192-ի 2-րդ մասի 9-րդ կետ): Որպես հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցանք՝ պատանդ վերցնելու կամ պահելու պարագայում պահանջը պետք է ներկայացվի պետության կամ որևէ կազմակերպության ներկայացուցչի, ընդ որում, այնպիսի արարք կատարելու կամ դրանից ձեռնպահ մնալու նպատակով, որը կապված

է վերջինիս պաշտոնեական կամ ծառայողական գործունեության հետ: Այսինքն՝ եթե անգամ անձը զրկվում է ազատությունից և հանցանք կատարած անձը պահանջ է ներկայացնում հանրային իշխանության ներկայացուցչին, սակայն այդ պահանջը կապված է ոչ թե վերջինիս պաշտոնեական կամ ծառայողական գործունեության հետ, այլ ասենք՝ պահանջում է գումար տրամադրել իրեն, որը նշված պաշտոնատար անձի իրավասությունից դուրս է և կապ չունի նրա ծառայողական կամ պաշտոնեական գործունեության հետ, ապա գործ ունենք ոչ թե հասարակական անվտանգության, այլ անձի ազատության դեմ ուղղված հանցագործության հետ:

Հանցակազմի որակյալ տեսակներն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է: Քննարկվող հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ «Իր պահանջներից հրաժարված և պատանդին կամովին ազատ արձակած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նա նախկինում չի ազատվել քրեական պատասխանատվությունից սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 316-րդ հոդվածով նախատեսված հիմքով: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»: Խրախուսական նորմի նման ձևակերպումը հաջողված է և թույլ չի տալիս այն չարաշահել՝ պատանդ վերցնել անձանց, պահանջներ ներկայացնել և հետո դրանցից հրաժարվելով ազատվել քրեական պատասխանատվությունից: Նման հնարավորություն անձին ընձեռվում է միայն մեկ անգամ, ինչն արդարացված է: Բացի այդ նշվում է, որ եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար: Նախկին ձևակերպմամբ նշվում էր՝ «Իր պահանջներից հրաժարված և պատանդին կամովին ազատ արձակած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում»: Այս ձևակերպման տառացի մեկնաբանության պարագայում ստացվում էր, որ եթե նրա գործողություններն այլ հանցակազմ են պարունակում, ապա անձը չի ազատվում քրեական պատասխանատվությունից, սակայն իրականում օրենսդրի կամքը դրան չէր միտված: Այս համատեքստում՝ նոր իրավակարգավորումը շատ ավելի հաջողված է:

316-րդ հոդվածով նախատեսված հանցատեսակը ենթարկվել է որոշակի փոփոխությունների, նախատեսվել է դրա օբյեկտիվ կողմի նոր դրսևորում՝ «պահելը»: Հոդված 316-ի առաջին մասը սահմանում է՝ «Օղանավ, նավ կամ երկաթուղային շարժակազմ զավթելը, պահելը կամ փախցնելը(...)»: Նախկին իրավակարգավորմամբ (հոդված 220) նախատեսվում էր միայն «փախցնելը կամ փախցնելու նպատակով զավթելը»: Նոր ձևակերպումը չի նշում որևէ նպատակ և զավթելու (փաստացի նշված տրանսպորտային միջոցներին տիրանալու) ցանկացած դրսևորում արդեն իսկ

առաջացնում է ավարտված հանցագործություն, անկախ նրանից՝ թե ինչ նպատակով է զավթվել կամ պահվում օդանավը, նավը կամ երկաթուղային շարժակազմը: Որոշակի նկատառումներ են առկա՝ կապված նշված հոդվածի նոր վերտառության հետ, որտեղ քննարկվող տրանսպորտային միջոցները նախատեսվել են հոգնակի (Օդանավեր, նավեր կամ երկաթուղային շարժակազմեր): Տեխնիկական առումով՝ դա որևէ խնդիր չի առաջացնում, սակայն հոգնակի նախատեսելու նպատակահարմարության որևէ փաստարկ դժվար է պատկերացնել:

Հանցակազմի որակյալ տեսակներից հարկ է անդրադառնալ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում, զանգվածային անկարգություններ, միջազգային հարաբերություններում բարդացում կամ հակամարտություն, առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք(...)» ծանրացնող հանգամանքին, որը վերախմբագրվել է և նախկին իրավակարգավորման համեմատությամբ՝ նախատեսում է հետևանքների առավել ընդլայնված խումբ: Նախկին իրավակարգավորման՝ «այլ ծանր հետևանքներ» բավականաչափ անորոշ բնորոշման փոխարեն, նոր օրենքը թվարկում է այդ հետևանքներից որոշները և յուրատեսակ ուղեցույց է հանդիսանում իրավակիրառողի համար՝ համաբնույթ հետևանքների գնահատման առումով:

Հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է խրախուսական նորմ, համաձայն որի՝ «Զավթածը կամովին ազատած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նա նախկինում չի ազատվել քրեական պատասխանատվությունից սույն հոդվածով կամ սույն օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հիմքով: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»: Նման խրախուսական նորմեր վերն արդեն քննարկվել են և լրացուցիչ վերլուծության անհրաժեշտությունը բացակայում է: Նշենք միայն, որ նախկին իրավակարգավորմամբ որևէ խրախուսական նորմ նշված հանցակազմի պարագայում նախատեսված չէր, սակայն հարկ է փաստել, որ այս նորմը կարող է մեծապես նպաստել առավել ծանր հետևանքների կանխարգելմանը:

Նախկին քրեական օրենսգրքի հոդված 220-ը պատասխանատվություն էր նախատեսում ծովահենության համար: Նոր իրավակարգավորմամբ՝ քննարկվող հանցակազմն ամբողջությամբ վերախմբագրվել է և վերաձևակերպվել է: ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 317-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Մասնավոր նավի կամ օդանավի ուղևորի կամ անձնակազմի կողմից բաց ծովում կամ չեզոք օդային տարածքում կամ պետության իրավագործությունից դուրս գտնվող տեղում մեկ այլ նավի կամ օդանավի զավթումը, զավթած նավի կամ օդանավի ուղևորի կամ անձնակազմի նկատմամբ բռնությունը կամ այդ անձանց գույքը կողոպուտի կամ ավազակության

եղանակով հափշտակելը(...)»: Ամբողջությամբ նոր այս բնութագիրը, ըստ էության կրկնում է 10.12.1982 թ. ընդունված ՄԱԿ-ի Ծովային իրավունքի մասին կոնվենցիայի<sup>138</sup> 101-րդ հոդվածի բովանդակությունը:

Նոր իրավակարգավորմամբ նախատեսվել է հանցակազմի օբյեկտիվ կողմի նոր դրսևորում, հստակեցվել է հանցագործության կատարման վայրը, ինչպես նաև նշվել են հատուկ սուբյեկտի հատկանիշները: Բացի այդ, հստակեցվել են նաև հանցագործության առարկայի առանձնահատկությունները:

Որպես հատուկ սուբյեկտ՝ նախատեսվում է մասնավոր նավի կամ օդանավի ուղևորը կամ անձնակազմի անդամը: Փաստորեն, այլ անձանց կողմից նույն նպատակներով օդանավ կամ նավ զավթելը ծովահենություն չի համարվի, այլ կդիտվի որպես սեփականության կամ անձի դեմ ուղղված հանցագործություն: Բացի դա՝ նշվել է նաև հանցանքի կատարման վայրը՝ որպիսին կարող է հանդիսանալ բաց ծովը կամ չեզոք օդային տարածքը կամ պետության իրավագործությունից դուրս գտնվող տեղը: Այլ վայրում, օրինակ՝ որևէ պետության իրավասության տարածքում նավի կամ օդանավի զավթումը նույն նպատակով՝ կրկին չի դիտվի որպես ծովահենություն: Նախատեսվել է նաև հանցագործության օբյեկտիվ կողմի նոր դրսևորում, այն է՝ զավթած նավի կամ օդանավի ուղևորի կամ անձնակազմի նկատմամբ բռնությունը կամ այդ անձանց գույքը կողոպուտի կամ ավազակության եղանակով հափշտակելը: Նախկին իրավակարգավորմամբ նախատեսվում էր՝ «Ուրիշի գույքին տիրանալու նպատակով ծովային կամ գետային նավի վրա հարձակվելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով», այսինքն՝ ծովահենությունը պետք է կապված լիներ ուրիշի գույքին տիրանալու նպատակի հետ: Նոր ձևակերպմամբ, որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում նախատեսվում է նաև զավթած նավի կամ օդանավի ուղևորի կամ անձնակազմի նկատմամբ բռնությունը:

Քննարկվող հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվության է ենթակա նաև այն ռազմական նավի, օդանավի, պետական նավի կամ օդանավի անձնակազմը, որը խռովություն է բարձրացրել և վերահսկողություն է հաստատել այդ նավի կամ օդանավի վրա, ինչպես նաև ռազմական նավի, օդանավի, պետական նավի կամ օդանավի այն ուղևորը կամ անձնակազմը, որն ապօրինի զավթել է այդ նավը կամ օդանավը և վերահսկողություն է հաստատել այդ նավի կամ օդանավի վրա»:

Հոդված 317-ի 4-րդ մասը սահմանում է՝ «Նավը կամ օդանավը համարվում է ծովահենական, եթե այն իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձանց կողմից նախատեսվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար կամ արդեն օգտագործվել է այդ նպատակներով և դեռևս գտնվում է

<sup>138</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76633>



հանցավորների վերահսկողության ներքո»:

318-րդ հոդվածի իրավակարգավորումը նոր է և չունի իր ուղղակի համարժեքները նախկին օրենսդրությամբ: Այս հանցակազմն իր մեջ ներառում է նախկին քրեական օրենսդրությամբ սահմանված բանդիտիզմի (հոդված 222) և հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու (հոդված 223) հանցակազմերի տարրերը (բանդայում մասնակցության և հանցավոր համագործակցությանը մասնակցելու նախկին հանցակազմերը նոր իրավակարգավորմամբ նախատեսվել են առանձին հոդվածով):

Հոդված 318-ի 1-ին մասը սահմանում է՝ «Հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը»: ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 50-ի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը»:

Որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք, ի թիվս այլոց, հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսվել է՝ «զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ հարձակում կամ անձի կյանքը կամ առողջությունը վտանգող այլ արարք կազմակերպելով», որը որոշակի ընդհանրություններ ունի նախկին քրեական օրենսգրքով նախատեսված բանդիտիզմի հանցատեսակի հետ, այն տարբերությամբ, որ սահմանում է նաև «անձի կյանքը կամ առողջությունը վտանգող այլ արարք կազմակերպելով» կատարելու եղանակը: Այս որակյալ տեսակներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է, դրանց համարժեքներն առկա էին նաև նախկին իրավակարգավորմամբ: Նորովի է ձևակերպվել նաև խրախուսական նորմը, որն այժմ ունի հետևյալ բովանդակությունը՝ «Հանցավոր կազմակերպության գործունեության խափանմանը նպաստած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար» (հոդվածի 3-րդ մաս): Նման խրախուսական նորմերի առանձնահատկությունների մասին խոսվել է սույն ուղեցույցի շրջանակներում և այն կրկին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հոդված 319-ի 1-ին մասը սահմանում է՝ «Հանցավոր կազմակերպությանը մասնակցելը(...)»: Այս հանցակազմը ևս իր ուղղակի համարժեքը չունի նախկին

քրեական օրենսգրքում: Այն ընդգրկում է նախկին օրենսգրքի հոդվածներ 222-ի 2-րդ մասով (Բանդայում մասնակցությունը կամ բանդայի կողմից կատարվող հարձակումներին մասնակցելը), ինչպես նաև 223-ի 2-րդ մասով (Հանցավոր համագործակցությանը մասնակցելը) նախատեսված հանցակազմերը: Հանցավոր կազմակերպության հասկացության մասին վերը խոսվեց: Ըստ էության քննարկվող հանցակազմով պատասխանատվություն է սահմանվել հանցավոր կազմակերպության անդամակցության համար՝ ցանկացած եղանակով, բացառությամբ այն ստեղծելու կամ ղեկավարելու: Արարքը կարող է դրսևորվել նաև հանցավոր կազմակերպությանը ցանկացած ձևով օժանդակելու (տեղեկատվական, նյութատեխնիկական և այլն), ինչպես նաև դրան անդամակցելու, նախատեսված հանցագործությունները պլանավորելու (եթե դա կապված չէ կազմակերպությունը ստեղծելու կամ ղեկավարելու հետ, այսինքն՝ հիմնականում պլանավորման տեխնիկական և տեղեկատվական բաղադրիչն ապահովելով), դրանք կատարելու և այլ դրսևորումներով:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև նախատեսված խրախուսական նորմն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծել կամ ղեկավարել հանցատեսակը նոր իրավակարգավորմամբ էական փոփոխությունների չի ենթարկվել: Հոդված 320-ի 1-ին մասը սահմանում է՝ «Օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելը կամ ղեկավարելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 318-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները (...):» Այս կարգավորումը գրեթե նույնական է նախկին քրեական օրենսգրքի հոդված 224-ի հետ, այն տարբերությամբ, որ նշված հոդվածով նախատեսված էր նաև «Օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելը (հոդվածի 2-րդ մաս)», իսկ նոր քրեական օրենսգրքով այս արարքը նախատեսված է առանձին հանցակազմով:

Պետք է նշել, որ որպես ծանրացնող հանգամանք ավելացվել է «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից» կատարելը, ինչը ողջունելի է:

Սույն հանցակազմի մյուս որակյալ տեսակները քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ինչպես վերը նշվեց, օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելու հանցակազմը նախատեսված էր նախկին քրեական օրենսգրքի հոդված 224-ի 2-րդ մասով: Նոր քրեական օրենսգիրքն այն առանձնացրել է որպես ինքնուրույն հանցակազմ՝ ելնելով հանցագործության սուբյեկտի, ինչպես նաև օբյեկտիվ կողմի առանձնահատկություններից: Հոդված 321-ի 1-ին մասը սահմանում է՝ «Օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 319-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները(...)»:

Նոր մոտեցման համաձայն՝ նման միավորում ստեղծած կամ ղեկավարող անձի վտանգավորությունն էականորեն տարբերվում է դրա մասնակցի վտանգավորությունից, իսկ ստեղծման և ղեկավարման գործընթացը չի կարող «նույնացվել» ուղղակի նշված կազմակերպության անդամակցության հետ: Այս դիտանկյունից՝ առավել նպատակահարմար է համարվել քննարկվող հանցակազմերը դիֆերենցելը և առանձին հանցակազմով նախատեսելը:

Սույն հանցակազմի որակյալ տեսակները քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

322-րդ հոդվածում կատարված հիմնական փոփոխությունը վերաբերելի է հոդվածի 3-րդ մասին, որի համաձայն՝ «Սույն հոդվածի իմաստով՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) ստացած է համարվում այն անձը, որն, այդ կարգավիճակը ձեռք բերելով, իրական հնարավորություն է ունեցել կատարելու սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները»: Այս նորամուծությունը կարող է նպաստել քննարկվող հանցատեսակի դեմ առավել արդյունավետ պայքարին, քանի որ նախատեսվել է հատված հանցակազմ և նշված անձի կողմից օրենքում նկատագրված գործողությունները կատարելու իրական հնարավորություն ստանալու պարագայում հանցանքը համարվում է ավարտված:

Հոդվածներ 322 (բացի վերոնշյալ նորամուծությունից)-ը, 323-326-ը (Ուշագրավ է, որ նոր քրեական օրենսգրքի 326-րդ հոդվածում «և» շաղկապը փոխարինվել է «կամ»-ով, որպիսի պայմաններում նշված գործողություններից թեկուզ մեկը կատարելու դեպքում անձը ենթակա կլինի պատասխանատվության) գրեթե նույնությամբ կրկնում են նախկին քրեական օրենսգրքի հոդվածներ 223.1-223.4-ը և հոդված 225<sup>1</sup>-ը: Կատարված փոփոխությունները հիմնականում եզրութաբանական և շտկող բնույթի են, որոնց առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 225-ը պատասխանատվություն էր սահմանում զանգվածային անկարգությունների համար: Նոր իրավակարգավորմամբ՝ փոխվել է ինչպես հոդվածի վերտառությունը, այնպես էլ դիսպոզիցիան: Քրեական նոր օրենսգրքի հոդված 327-ի 1-ին մասը սահմանում է՝ «Հասարակական անվտանգությանն սպառնացող զանգվածային անկարգություններին մասնակցելը, եթե մասնակցի արարքը զուգորդվել է բռնություն գործադրելով կամ անձի կյանքը կամ առողջությունը վտանգող այլ արարքի կատարմամբ, հրկիզումով, գույք ոչնչացնելով կամ վնասելով, հրազեն, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք գործադրելով կամ այդ գործողությունները կազմակերպելով կամ ղեկավարելով(...)»: Դրական պետք է համարել այն հանգամանքը, որ նշված հանցագործությունը կազմակերպելու համար չի նախատեսվել առանձին պատասխանատվություն, ինչպես դա արված էր հոդված 225-ի

1-ին մասով:

Նոր իրավակարգավորմամբ զանգվածային անկարգություններ կատարելու հրապարակային կոչերի հանցակազմը նախատեսվել է առանձին հոդվածով, իսկ դրա ձևակերպումը հստակեցվել է: Հոդված 328-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զանգվածային անկարգություններ կատարելու հրապարակային կոչը(...)»: Այսինքն՝ հանցակազմի նոր ձևակերպման պարագայում՝ զանգվածային անկարգություն համարվող ցանկացած արարքի հրապարակային կոչ կատարելու պարագայում՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության:

Քննարկվող հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Զանգվածային անկարգությունների ժամանակ իշխանության ներկայացուցչի օրինական պահանջին չենթարկվելու կամ անձի նկատմամբ բռնություն գործադրելու կոչը»: Այս իրավակարգավորումը գրեթե նույնությամբ կրկնում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 225-ի 4-րդ մասի իրավակարգավորումը և դրա, ինչպես նաև հանցակազմի որակյալ տեսակների լրացուցիչ քննարկման անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 226-ը պատասխանատվություն էր սահմանում ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելու համար: Նոր իրավակարգավորմամբ՝ այս հանցատեսակը ձևակերպվել է նորովի, այն դարձել է ավելի ընդգրկուն և համապարփակ: Հոդված 329-ի 1-ին մասը սահմանում է՝ «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը...»: Նոր իրավակարգավորումը, բացի նախկինում սահմանված ազգային, ռասայական կամ կրոնական հատկանիշներից, սահմանում է նաև էթնիկ կամ սոցիալական ծագումը, քաղաքական կամ այլ հայացքները կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները, որոնցով պայմանավորված կարող է հրահրվել թշնամանք, ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն: Օբյեկտիվ կողմից՝ արարքը կարող է կատարվել հրապարակային խոսքի կամ նշված նպատակով նյութ կամ առարկա տարածելու ձևով: Այս բնորոշումը քննարկվող հանցակազմին հաղորդում է ավելի մեծ հստակություն և որոշակիություն և ավելի համահունչ է առկա մարտահրավերներին: Հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 226.2.-ը պատասխանատվություն էր նախատեսում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար: Նոր

իրավակարգավորումն էսպես տարբերվում է նախկինից: Հոդված 330-ի 1-ին մասը սահմանում է՝ «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 136-րդ, 151-րդ 313-րդ, 328-րդ, 329-րդ կամ 422-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները»: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 226.2-ի առաջին մասով սահմանվում էր «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-ին, 301-րդ, 385-րդ, 397.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները»: Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած ձևակերպումը թույլ է տալիս առավել ընդգրկուն գործոններ հաշվի առնել, քանի որ հոդվածում տեղ գտած թվարկումը սպառիչ չէ:

Քննարկվող հանցակազմի որակյալ դրսևորումներին առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

## Գլուխ 35

### ԶԵՆՔԻ, ՀՐԱԶԵՆԻ ԿԱՄ ԱՅԼ ՀԱՆՐԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը առանձին գլխով պատասխանատվություն է սահմանում ռադիոակտիվ, միջուկային նյութերի, զենքի ապօրինի շրջանառության համար:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգրքով, 331-րդ հոդվածով, պատասխանատվություն է սահմանված ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության համար: Օրենսդիրը պատասխանատվություն է նախատեսում ռադիոակտիվ կամ միջուկային նյութ ապօրինի պատրաստելու, ձեռք բերելու, պահելու, իրացնելու, օգտագործելու, փոխադրելու կամ առաքելու, ինչպես նաև դրանք ոչնչացնելու կամ վնասելու համար:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ օրենսդիրը հստակեցրել է հանցագործության առարկան: Որպես այդպիսին կարող են հանդես գալ ոչ միայն ռադիոակտիվ, այլ նաև միջուկային նյութերը: 1999 թ.-ի փետրվարի 1-ին ընդունված «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ՝ ռադիոակտիվ նյութ՝ միջուկային նյութից տարբեր նյութ է, որի իոնացնող ճառագայթումը կարող է պատճառել միջուկային վնաս, մինչդեռ միջուկային նյութ է՝ ուրան-233, ուրան-235, բնական ուրան (U), թորիում (Th), պլուտոնիում-239, պլուտոնիում-241 ռադիոիզոտոպներն առանձին կամ ցանկացած համակցությամբ պարունակող նյութը:

Միաժամանակ, օրենսդիրը հստակեցրել է օբյեկտիվ կողմը կազմող արարքները, պատասխանատվություն նախատեսելով ոչ միայն հիշյալ առարկաները ապօրինի, ձեռք բերելու, պահելու, իրացնելու, օգտագործելու, փոխադրելու կամ առաքելու, դրանք ոչնչացնելու կամ վնասելու, այլև պատրաստելու համար:

331-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել ապօրինի կերպով միջուկային ռեակտոր, մարդու կյանքի, առողջության կամ շրջակա միջավայրի համար էական վտանգ ներկայացնող միջուկային սարք կամ դրանք համալրող բաղադրամաս պատրաստելու, մշակելու, ձեռք բերելու, պահելու, իրացնելու, օգտագործելու, փոխադրելու կամ առաքելու, ինչպես նաև դրանք ոչնչացնելու կամ վնասելու համար: Այս հանցակազմը նախկինում առկա չէր:

Առավել խիստ է պատասխանատվությունը, եթե արարքն անզուշտությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում, առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ ծանր հետևանք:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս պատասխանատվություն է նախատեսված ռադիոակտիվ նյութ հափշտակելու և շորթելու համար, սակայն քրեական նոր օրենսգրքում դրանք տեղ են գտել առանձին հոդվածներում:

Քրեական նոր օրենսգրքի 332-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ռադիոակտիվ կամ միջուկային նյութ հափշտակելու, իսկ 333-րդ հոդվածը՝ դրանք շորթելու համար:

Բովանդակային առումով՝ քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպումից դրանք տարբերվում են միայն հանցագործության առարկայով, որում տեղ է գտել նաև միջուկային նյութը:

Նշված երկու հոդվածներում էլ, համապատասխանաբար, պատասխանատվություն է սահմանվում միջուկային ռեակտոր, մարդու կյանքի, առողջության կամ շրջակա միջավայրի համար էական վտանգ ներկայացնող միջուկային սարք կամ զանգվածային ոչնչացման զենք կամ դրանք համալրող բաղադրամաս հափշտակելու և շորթելու համար: Նման հանցակազմ քրեական նախկին օրենսգրքում առկա չէր:

Կիրառական տեսանկյունից՝ նորմը բլանկետային է, անհրաժեշտ է հստակեցնել, թե ՀՀ օրենսդրության տեսակետից ինչն է համարվում միջուկային ռեակտոր, մարդու կյանքի, առողջության կամ շրջակա միջավայրի համար էական վտանգ ներկայացնող միջուկային սարք կամ զանգվածային ոչնչացման զենք կամ դրանք համալրող բաղադրամաս:

Ռադիոակտիվ նյութեր հափշտակելու հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներն են՝ արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով,
- 3) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ
- 4) տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով, իսկ առավել ծանրացնող՝ արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից:

Ինչ վերաբերում է ռադիոակտիվ կամ միջուկային նյութ շորթելու ծանրացնող հանգամանքներով տեսակներին, ապա այդպիսիք են՝ արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ
- 2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, իսկ առավել ծանրացնող՝ արարքը,

որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից:

Քրեական նոր օրենսգրքում առանձին հոդվածներում են նախատեսվել հրազենի ապօրինի շրջանառության և քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերը:

Քրեական նոր օրենսգրքի 334-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելու համար, ընդ որում առավել խիստ պատասխանատվություն է, եթե արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ հանցավոր կազմակերպության կողմից: Քրեական նախկին օրենսգրքում պատասխանատվություն էր սահմանված ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ սարքեր, ինչպես նաև գազային, սառը կամ նետողական զենք կրելու համար:

Քրեական նոր օրենսգրքում, փաստացի, պատասխանատվություն նախատեսված չէ քաղաքացիական հրազենի փամփուշտ, քաղաքացիական հրազենի մաս կրելու համար: Հանցագործության առարկայի շրջանակը փոփոխվել է՝ ներառելով քաղաքացիական ողորկափող հրազենը, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենքը: Հանցակազմը ձևական է:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքի 235-րդ հոդվածում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքի 335-րդ հոդվածում պատասխանատվություն է սահմանվում ապօրինի կերպով հրազեն (բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի), դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտ, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ կրելու համար: Հանցակազմի ձևակերպումը գրեթե նույնությամբ վերարտադրել է քրեական նախկին օրենսգրքում եղած հանցակազմը, հետևաբար կիրառության տեսանկյունից դժվարությունների չի հանգեցնի:

Հիմնական տարբերությունը վերաբերում է նրան, որ օրենսդիրն օգտագործել է «քաղաքացիական ողորկափող հրազեն» արտահայտությունը: Հետևաբար, այս դրույթի կիրառման առումով վճռորոշ նշանակություն ունի «Զենքի մասին» օրենքում քաղաքացիական ողորկափող հրազեն համարվող առարկաների շրջանակը: Օրենսդիրը քրեական նոր օրենսգրքում նախատեսել է «քաղաքացիական ողորկափող հրազեն» արտահայտությունը՝ նշում չկատարելով, որ դա պետք է անպայման լինի երկարափող: Հետևաբար, այս առումով օգտակար կարող է լինել ՀՀ Վճռաբեկ



դատարանի որոշումը՝ Երվանդ Մելքոնյանի գործով<sup>139</sup>:

Օրենսդիրը նաև սահմանել է խրախուսական նորմ, որը տարբերվում է նախկին կարգավորմամբ եղածից: Քրեական նախկին օրենսգրքում նշվում էր, քննարկվող հանցակազմի առարկաները կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում: Մինչդեռ քրեական նոր օրենսգիրքը լրացուցիչ պահանջ է սահմանում, նշելով՝ «Սույն հոդվածում կամ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածում նշված առարկաները մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը հանձնած անձն ազատվում է սույն հոդվածով կամ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»: Հետևաբար, խրախուսական նորմի կիրառման անհրաժեշտ նախապայման է, որ անձը դրանք հանձնի մինչև իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալը:

Ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք պատրաստելը, դրանք ձևափոխելը կամ նորոգելը նույնական է քրեական նախկին օրենսգրքի 236-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմին:

Քրեական նոր օրենսգրքում, այս հանցակազմի վերաբերյալ փոփոխությունները վերաբերում են նրան, որ՝ օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել ոչ միայն հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք պատրաստելու կամ նորոգելու, այլև ձևափոխելու համար: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ օրենսդիրը օգտագործել է ոչ թե «պայթուցիկ սարք», այլ «պայթեցման սարք» արտահայտությունը, ինչն առավել ճիշտ է եզրութաբանական տեսանկյունից:

Միաժամանակ, քրեական նախկին օրենսգրքի համեմատ՝ հստակեցվել է հանցագործության առարկան, դրանում ներառվել են նաև հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերը: Այս հասկացությունը բացահայտելու համար անհրաժեշտ է դիմել 1998 թ.-ի հուլիսի 3-ին ընդունված «Զենքի մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

Մնացած կանոնակարգումներով այն նույնական է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կանոնակարգմանը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, այնպես էլ քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի պահպանության պարտականությունը ոչ պատշաճ կատարելու

---

<sup>139</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Երվանդ Մելքոնյանի գործով 2011թ. Մայիսի 11-ի թիվ ԵՇԴ/0090/01/10 որոշումը:

կամ չկատարելու համար:

Քրեական նոր օրենսգրքում այս հանցակազմը ենթարկվել է խմբագրական այլ շարադրման՝ պահպանելով հանցակազմի բոլոր հատկանիշները: Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել հրազենի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի պահպանության պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, եթե հանցավորի դրսևորած անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ առարկայի հափշտակում, ոչնչացում, վնասում կամ առաջացել է մարդու մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք: Քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպումից հիմնական տարբերությունը դրսևորվել է հանցագործության համար պարտադիր հանդիսացող հետևանքների շրջանակի շարադրման առումով: Քրեական նախկին օրենսգրքը այդ առումով սահմանափակվում էր նշելով, որ հանցավորի վարքագիծը պետք է հանգեցնեք դրանց հափշտակման կամ ոչնչացման կամ այլ ծանր հետևանքների, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում նշվում է, որ հանցավորի վարքագծի արդյունքում պետք է տեղի ունենա հացագործության առարկայի հափշտակում, ոչնչացում, վնասում կամ այն հանգեցնի մարդու մահվան կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանքի:

Հանցագործությունը սուբյեկտիվ կողմից դրսևորվում է անզգուշությամբ:

Որոշակի փոփոխություններ տեղ են գտել, սակայն միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք կամ զանգվածային ոչնչացման զենք ստեղծելիս օգտագործվող կամ դրան օժանդակ որևէ նյութի կամ սարքի պահպանության պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմը ձևակերպելիս: Քրեական նախկին օրենսգրքով, որպես դրա հնարավոր հետևանք նշվում էր միայն ծանր վնասը, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում՝ այդ առարկայի հափշտակումը, ոչնչացումը, վնասումը կամ մարդու մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառումը կամ այլ ծանր հետևանքը:

Քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է սահմանվել նաև հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մաս, ռազմամթերք, պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք հափշտակելու կամ շորթելու համար:

Ըստ էության, դրանք նույնությամբ կրկնում են քրեական նախկին օրենսգրքում առկա կանոնակարգումները, այն տարբերությամբ, որ նշվում է նաև հրազենի հիմնական բաղկացուցիչ մաս հափշտակելը կամ շորթելը:

Քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվել նաև ռազմական նշանակության արտադրանքի, տեխնիկայի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի, հրազենի կամ դրա բաղկացուցիչ մասի, ռազմամթերքի, ռադիոակտիվ նյութի կամ

ռադիոակտիվ աղբյուրի, միջուկային նյութի, խիստ ներգործող, թունավոր նյութի, զանգվածային ոչնչացման զենքի կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելու համար օգտագործվող նյութի կամ սարքի, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ զենքի կամ երկակի նշանակության ապրանքի մաքսանենգության համար՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով դրանք ապօրինի տեղափոխելը, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ դրանց մասին հավաստի տեղեկությունը սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման համար սահմանված կանոնը, այդ թվում՝ արգելքը կամ սահմանափակումը խախտելու կամ մաքսային կամ այլ փաստաթուղթը խաբեությամբ օգտագործելու միջոցով:

Ներկայացված հանցակազմը եկել է փոխարինելու քրեական նախկին օրենսգրքի 235.1-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմին:

Քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած ձևակերպումից հիմնական տարբերությունը վերաբերում է նրան, որ առարկան չի ներառում մշակութային արժեքները, ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքները: Այդ արժեքների, ապրանքների մաքսանենգության համար պատասխանատվությունը սահմանվել է քրեական օրենսգրքի 292-րդ հոդվածում:

Մնացած առումներով՝ հանցակազմերը նույնական են:

Գլուխ 36

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մինչ նշված հանցագործությունների խումբը քննարկելը, հարկ է նշել, որ նոր քրեական օրենսգրքով «Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը» (նախկին քրեական օրենսգրքի 244-րդ հոդված) հանցատեսակն ապաքրեականացվել է: Նշված արարքը նոր իրավակարգավորմամբ պետք է քննարկվի «Վտանգի մեջ թողնելը» (Հոդված 182) հանցակազմի համատեքստում: Նախատեսվել է նաև նոր հանցակազմ՝ «Հայաստանի Հանրապետության օդային տարածքի օգտագործման կանոնները խախտելը» (Հոդված 350):

ՕԴԱՅԻՆ, ՋՐԱՅԻՆ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ, ՄԱԳՆԻՍԱԿԱՆ (ՄԱԳԼԵՎԱՅԻՆ),  
ՃՈՊԱՆԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՄ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿԱՄ  
ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ  
ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 341-ը սահմանում է՝ «Օդային, ջրային, երկաթուղային, մագնիսական (մագլևային), ճոպանային տրանսպորտի կամ մետրոպոլիտենի երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ երթևեկության կամ շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելն այն անձի կողմից, որը, ըստ պայմանագրի կամ ծառայողական դիրքի, պարտավոր էր պահպանել այդ պահանջը կամ կանոնը, եթե այդ արարքը մարդու առողջությանն անգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս»: Նոր իրավակարգավորումն ընդլայնել է տրանսպորտային միջոցների ցանկը, որոնց երթևեկության կամ շահագործման կանոնները խախտելու և օրենքում նշված հետևանքներն առաջանալու պարագայում արարքը ենթակա է որակման քննարկվող հանցակազմով: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 241-ը պատասխանատվություն էր սահմանում երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտի երթևեկության անվտանգության կամ շահագործման կանոնները խախտելու համար: Նոր իրավակարգավորմամբ նշված տրանսպորտային միջոցներին ավելացվել են մագնիսական (մագլևային), ճոպանային տրանսպորտը և մետրոպոլիտենը: Ինչ վերաբերում է մագնիսական (մագլևային) տրանսպորտին, ապա հարկ է նշել, որ դեռևս 1987 թվականին ՀՀ-ում նախատեսվում էր ստեղծել մագնիսական երկաթուղի, սակայն երկրաշարժի և դրան հետևած իրադարձությունների պատճառով՝ նշված նախագիծն

ամբողջովին չիրագործվեց, կառուցվեց միայն Էստակադան<sup>140</sup>: Այժմ շատ պետություններում առկա է նման տրանսպորտ, սակայն ՀՀ-ում նման տրանսպորտ դեռևս չի գործում և նշված նորմը որոշակի առումով ժամանակավրեպ է: Այն կարելի էր ներդնել առաջին մագնիսական տրանսպորտի շահագործմանը գուզրնթաց՝ կատարելով համապատասխան փոփոխություն քրեական օրենսգրքում: Ինչ վերաբերում է ճուպանային տրանսպորտին և մետրոպոլիտենին, ապա դրանց շահագործման և երթևեկության առանձին կանոններ են սահմանված, որոնց խախտման պարագայում հնարավոր են հողվածում նշված հետևանքները: Երբեմն, մետրոպոլիտենը նույնացվում է երկաթուղային տրանսպորտի հետ, սակայն դրանք նպատակային նշանակությամբ (օրինակ՝ երկաթուղային տրանսպորտը օգտագործվում է նաև տարբեր բեռներ տեղափոխելու համար), բեռնատարողությամբ, երթուղու երկարությամբ, տեղակայմամբ և մի շարք այլ հատկանիշներով տարբերվում են միմյանցից: Տարբեր են նաև այդ տրանսպորտային միջոցների երթևեկության և շահագործման կանոնները: Այս համատեքստում՝ կատարված փոփոխությունը հաջողված պետք է համարել: Նոր իրավակարգավորմամբ՝ փոխվել է նաև հանցագործության հատուկ սուբյեկտի նկարագիրը: Նախկին՝ «այն անձի կողմից, ով, ըստ կատարվող աշխատանքի կամ զբաղեցրած պաշտոնի» ձևակերպման փոխարեն, նոր կարգավորմամբ սահմանվել է՝ «այն անձի կողմից, որը, ըստ պայմանագրի կամ ծառայողական դիրքի» ձևակերպումը, որն ավելի ընդգրկուն է և հաջողված, որովհետև գերծ է «ըստ կատարվող աշխատանքի» անորոշ ձևակերպումից, ինչ վերաբերում է «պաշտոն» եզրույթին, ապա այս հասկացությունը նախկին օրենսդրությամբ միասնական սահմանում չունեք, ինչը հանգեցնում էր տարամեկնաբանությունների և անալոգիայի կիրառման: Որպես հետևանք՝ նոր իրավակարգավորմամբ նախատեսվել է առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառումը: Նախկին իրավակարգավորմամբ սահմանված խոշոր վնասը նոր իրավակարգավորմամբ նախատեսված չէ և նման վնաս անզգուշությամբ պատճառելու պարագայում՝ առկա են բացառապես քաղաքացիաիրավական հարաբերություններ: Հանցակազմի այլ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ տարրերի և հատկանիշների, ինչպես նաև այն որակյալ տեսակների, որոնց համարժեքները նախատեսված էին նաև նախկին քրեական օրենսգրքով, առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է: Հարկ է անդրադառնալ հողվածի 4-րդ մասով նախատեսված ծանրացնող հանգամանքին՝ «Սույն հողվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը հարբած (ոչ սթափ) վիճակում կատարելը», որի վտանգավորությունն ակնհայտ է (Նոր քրեական օրենսգրքի հողված 27-ը նախատեսում է ակոհոլի, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն), թունավոր կամ այլ թմրեցնող

<sup>140</sup> <https://zen.yandex.ru/media/poezdru/-v-kakih-stranah-poezda-na-magnitnoi-levitacii-byli-esce-v-1980e-5b228b7155876bb399ff8cba>

նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ազդեցության հետևանքով ոչ սթափ (հարբած) վիճակում քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը կատարած անձի քրեական պատասխանատվության առանձնահատկությունները): Այս որակյալ տեսակի նախատեսումն արդարացված է և նշված վիճակում քննարկվող արարքի կատարմանը պետք է տրվի ավելի խիստ քրեաիրավական գնահատական:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ  
ՈՒՂՂՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿԱՍ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՍ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՊԱՀՈՎՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 342-ի 1-ին մասը սահմանում է՝ «Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոն խախտելը, որը մարդու առողջությանն անգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս»: Քննարկվող իրավակարգավորումը գրեթե նույնական է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 242-ով նախատեսված հանցակազմի հետ, իսկ կատարված փոփոխությունները հիմնականում շարահյուսական և եզրութաբանական բնույթի են: Հարկ է անդրադառնալ հանցակազմի ծանրացնող հանգամանքներից՝ հոդվածի 4-րդ մասով նախատեսված որակյալ տեսակին՝ «Սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հարբած (ոչ սթափ վիճակում) կամ համապատասխան տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող անձի կողմից»: Պետք է նշել, որ այս ծանրացնող հանգամանքի նախատեսման անհրաժեշտությունն ուղղակի ակնհայտ է, արդիական և հրատապ: Նոր իրավակարգավորմամբ չի նախատեսվել նախկին քրեական օրենսգրքի հոդված 242-ի 4-րդ մասով նախատեսված դրույթը, համաձայն որի՝ «Սույն հոդվածում մեխանիկական այլ տրանսպորտային միջոցներ են համարվում տրամվայները, տրոլեյբուսները, ինչպես նաև տրակտորները և ինքնագնաց այլ մեքենաները, մոտոցիկլները և մեխանիկական այլ փոխադրամիջոցները»:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՐԲԱԾ (ՈՉ ՍԹԱՓ), ՏԱՄՆՎԵՑ ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ  
ԿԱՍ ՏՎՅԱԼ ՏԵՄԱԿԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ  
ՉՈՒՆԵՑՈՂ ԿԱՍ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ

ԿԱՍ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՍԵՑՎԱԾ ԿԱՍ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՋՐԿՎԱԾ ԱՆՁԻՆ ՀԱՆՁՆԵԼԸ

Քննարկվող հանցակազմը նոր իրավակարգավորմամբ ենթարկվել է զգալի փոփոխությունների: Նախկին քրեական օրենսգրքի հոդված 243-ը պատասխանատվություն էր սահմանում տրանսպորտային միջոցը հարբած կամ տասնվեց տարին չլրացած անձին հանձնելու համար: ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 343-ի 1-ին մասը սահմանում է՝ «Տրանսպորտային միջոցը հարբած (ոչ սթափ), տասնվեց տարին չլրացած կամ տվյալ տեսակի տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոց վարելու իրավունքը կասեցված կամ այն անձին հանձնելը, որը տրանսպորտային միջոցը հանձնող անձի համար ակնհայտորեն տվյալ իրադրությունում իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի հետևանքով չէր կարող տրանսպորտային միջոցն անվտանգ վարել, եթե հանձնողի դրսևորած անզգուշության հետևանքով մարդու առողջությանը պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս»: Քրեական նոր օրենսգրքի հոդված 343-ն էականորեն ընդլայնել է այն անձանց ցանկը, ում տրանսպորտային միջոց հանձնելու և հանձնողի դրսևորած անզգուշության հետևանքով օրենքում նշված հետևանքներն առաջանալու պարագայում անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Բացի հարբած կամ տասնվեց տարին չլրացած անձից՝ նախատեսվել է նաև տվյալ տեսակի տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոց վարելու իրավունքը կասեցված կամ այն անձին հանձնելը, որը տրանսպորտային միջոցը հանձնող անձի համար ակնհայտորեն տվյալ իրադրությունում իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի հետևանքով չէր կարող տրանսպորտային միջոցն անվտանգ վարել:

Նոր օրենքով հստակեցվել է նաև քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքը, ինչպես նաև սուբյեկտիվ կողմը: Նախկին իրավակարգավորմամբ նշվում էր՝ «(...) եթե դրա հետևանքով առաջացել են սույն օրենսգրքի 241-րդ կամ 242-րդ հոդվածներով նախատեսված հետևանքները (...)»: Այս ձևակերպումը տարակուսանք էր առաջացնում, քանի որ հոդված 241-ում նախատեսված հետևանքներն իրենց մեջ լիովին ներառում էին նաև 242-րդ հոդվածով նախատեսվածները, բացի այդ, չէր նշվում հանցանքն անզգուշությամբ կատարելու մասին, իսկ հետևանքների մասին նշումը որևէ կերպ չէր կարող իր ծավալում ներառել նաև հանցագործության սուբյեկտիվ կողմը: Բացի այդ, նշված հանցակազմերում, որպես հետևանք, նախատեսվում էր մարդու առողջությանը ծանր կամ միջին ծանրության

վնաս պատճառելը, այսինքն՝ հոդված 243-ի սուբյեկտիվ կողմը հստակեցված չէր, ինչը տեսական առումով և գործնականում կարող էր հանգեցնել տարամեկնաբանությունների, օրենքի ոչ ճիշտ կիրառության: Նոր իրավակարգավորումը, այս դիտանկյունից, հաջողված է, քանի որ հստակ նշում է թե՛ արարքի հետևանքների և թե՛ հանձնողի դրսևորած անզուգուշության հետևանքով դրանք առաջանալու մասին:

Սույն հանցակազմի որակյալ տեսակները լրացուցիչ քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՋՐԿՎԱԾ ԿԱՍ ԱՅԴ  
ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՍԵՑՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԵԼԸ  
ԿԱՍ ԱՅԴ ԱՆՁԻ ԿԱՍ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ  
ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԲԱԾ (ՈՉ ՍԹԱՓ) ՎԻՃԱԿՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՄԻՋՈՑ ՎԱՐԵԼԸ ԿԱՍ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՁՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒՑ  
ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ԿԱՍ ԽՈՒՍԱՓԵԼԸ

Սույն հանցակազմի նոր շարադրանքում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: Նախկինում նախատեսված 243.1 հոդվածը մասնակի ապաքրեականացվել է և նոր իրավակարգավորմամբ պատասխանատվություն չի սահմանվել նախկին 243.1 հոդվածի 1.1 կետով սահմանված արարքի համար (Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում), որը, ըստ էության, վարչական նախադատելիության (պրեյուդիցիայի) դրսևորում էր:

Քննարկվող հոդվածի շարադրանքում կատարված մյուս փոփոխություններին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՍ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐՆ ԱՆՈՐԱԿ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼԸ ԿԱՍ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ԱՆՍԱՐՔՈՒԹՅԱՄԲ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՑ ԹՈՂՆԵԼԸ

Քննարկվող հանցակազմը նոր իրավակարգավորմամբ հստակեցվել է, չեզոքացվել են նախկին ձևակերպման խոցելի տարրերը: ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 345-ի 1-ին մասը սահմանում է՝ «Տրանսպորտային միջոցների կամ տրասնպորտային ենթակառուցվածքների տեխնիկական վիճակի համար պատասխանատու անձի կողմից



տրանսպորտային միջոցը, հաղորդակցության ուղին, ազդանշանման կամ կապի միջոցը կամ տրանսպորտային այլ սարքավորումն անորակ վերանորոգելը կամ տեխնիկական անսարքությամբ շահագործման բաց թողնելը, եթե այդ արարքը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս»: Նախկին իրավակարգավորումն ուներ մի շարք թերություններ, մասնավորապես սահմանվում էր՝ «Տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի համար պատասխանատու անձի կողմից տրանսպորտային միջոցները, հաղորդակցության ուղիները, ազդանշանման կամ կապի միջոցները կամ տրանսպորտային այլ սարքավորումներն անորակ վերանորոգելը կամ տեխնիկական անսարքությամբ տրանսպորտային միջոցը շահագործման բաց թողնելը, եթե այդ արարքը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ առաջացրել է խոշոր վնաս» (հոդված 245, 1-ին մաս): Որպես հատուկ սուբյեկտ՝ նախատեսվում էր տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի համար պատասխանատու անձը, սակայն հոդվածում նշվում էր նրա կողմից նաև հաղորդակցության ուղիները, ազդանշանման կամ կապի միջոցները կամ տրանսպորտային այլ սարքավորումներն անորակ վերանորոգելու մասին, ինչն անտրամաբանական էր, քանի որ նշված անձը, ըստ էության, չուներ նման պարտականություն, վերջինս պատասխանատու էր բացառապես տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի համար: Նոր կարգավորումը ներառում է՝ «Տրանսպորտային միջոցների կամ տրանսպորտային ենթակառուցվածքների տեխնիկական վիճակի համար պատասխանատու անձի» ձևակերպումը, ինչն ավելի ամբողջական կարգավորում է: Բացի այդ՝ նախկին իրավակարգավորմամբ որպես քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում սահմանվում էր տեխնիկական անսարքությամբ տրանսպորտային միջոցը շահագործման բաց թողնելը, ինչը բավականին վիճելի կարգավորում էր, այն տեսանկյունից, որ տեխնիկական անսարքությամբ շահագործման կարող էր բաց թողնվել ոչ միայն տրանսպորտային միջոցը, այլև ազդանշանման կամ կապի միջոցը կամ տրանսպորտային այլ սարքավորումը, ինչը ևս կարող էր հանգեցնել հոդվածում նշված հետևանքներին: Այս դիտանկյունից՝ նոր կարգավորումը հաջողված է և համապարփակ: Հողվածի նոր խմբագրությամբ, որպես հանրորեն վտանգավոր հետևանք նախատեսվում է մարդու առողջությանն անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառումը, ի տարբերություն նախկին իրավակարգավորման, որի պարագայում՝ բացի նշված հետևանքներից նախատեսվում էր նաև խոշոր վնասի պատճառումը:

Հանցակազմի որակյալ տեսակների առանձին քննարկման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԿԱՄ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՓԶԱՅՆԵԼԸ

Այս հանցակազմը ևս ենթարկվել է որոշակի փոփոխությունների՝ որպես հետևանք չի նախատեսվել նախկին կարգավորմամբ նախատեսված խոշոր վնասը, որի պարագայում կառաջանան քաղաքացիաիրավական հարաբերություններ: Հոդված 346-ի 1-ին մասը սահմանում է՝ «Տրանսպորտային միջոցը, ենթակառուցվածքը, հաղորդակցության ուղին, ազդանշանման կամ կապի միջոցը կամ տրանսպորտային այլ սարքավորումը ոչնչացնելը, վնասելը, արգելափակելը, այլ կերպ փչացնելը կամ երթևեկությունը կարգավորող կեղծ ազդանշան տեղադրելը, եթե այդ արարքը մարդու առողջությանն անգգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս...»: Նոր իրավակարգավորմամբ նախատեսվել է քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի նոր դրսևորում, որն արտահայտվում է՝ երթևեկությունը կարգավորող կեղծ ազդանշան տեղադրելու ձևով: Նշված արարքի վտանգավորությունը ևս խիստ բարձր է և այն կարող է անգգուշությամբ առաջացնել հոդվածում նշված հետևանքները: Հետևանքների նկատմամբ դիտավորություն դրսևորելու պարագայում՝ արարքը ենթակա է որակման որպես մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն:

Հանցակազմի որակյալ տեսակների առանձին քննարկման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՆՎՏԱՆԳ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎՈՂ  
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿԱՄ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

Նոր քրեական օրենսգրքի հոդված 347-ի 1-ին մասը սահմանում է՝ «Ուղևորի, հետիոտնի, հեծանվորդի կամ երթևեկության այլ մասնակցի կողմից (բացառությամբ սույն օրենսգրքի 341-րդ և 342-րդ հոդվածներով նշված անձանցից) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջ կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոն խախտելը, եթե այդ արարքը մարդու առողջությանն անգգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս...»: Քննարկվող քրեաիրավական նորմի ձևակերպման մեջ կատարված հիմնական փոփոխությունը հանգում է նրան, որ նոր կարգավորմամբ՝ որպես հետևանք չի նախատեսվել խոշոր վնասի պատճառումը: Մնացած փոփոխությունները եզրութաբանական բնույթի են և դրանց, ինչպես նաև հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

ԱՂԵՏԻ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻՆ ՆԱՎԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ  
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՉՏԱԼԸ

ՄԱԿ-ի «Ծովային իրավունքի» 1982 թվականի (ՀՀ-ում ուժի մեջ է 08.01.2003 թ.) կոնվենցիայի հոդված 98-ն ունի հետևյալ վերտառությունը՝ «Օգնություն ցույց տալու պարտականությունը»: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Յուրաքանչյուր պետություն իր դրոշի ներքո նավարկող ցանկացած նավի նավապետի պետք է պարտավորեցնի, որ նա, այնքանով, որքանով դա հնարավոր է անել առանց լուրջ վտանգի ենթարկելու նավը, անձնակազմը կամ ուղևորներին՝

ա) օգնություն ցույց տա ծովում հայտնաբերված ցանկացած անձի, որին մահ է սպառնում,

բ) ամբողջ հնարավոր արագությամբ օգնության հասնի վթարի ենթարկված անձանց, եթե իրեն հայտնել են, որ նրանք օգնության կարիք ունեն, քանի որ նրա՝ նման կերպով գործելու վրա կարելի է խելամտորեն հուսալ,

գ) բախումից հետո օգնություն ցույց տա մյուս նավին, նրա անձնակազմին և նրա ուղևորներին և, երբ դա հնարավոր է, այդ նավին հայտնի իր նավի անունը, նրա գնալու նավահանգիստը և մոտակա նավահանգիստը, որտեղ նա պետք է մտնի»:

Քննարկվող կոնվենցիոնալ նորմի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար սահմանվում է քրեական պատասխանատվություն: Քրեական նոր օրենսգրքի հոդված 348-ը սահմանում է «Նավապետի կողմից ծովի կամ ջրային այլ ուղու վրա աղետի ենթարկվող կամ ենթարկված մարդուն օգնություն ցույց չտալը, եթե այդ օգնությունը կարող էր ցույց տրվել առանց նավի անվտանգությունը, դրա անձնակազմի կամ ուղևորի կյանքը կամ առողջությունը վտանգելու»:

Նոր իրավակարգավորմամբ կատարված փոփոխությունները հիմնականում շարահյուսական բնույթի են, որոնց անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹՈՒԳՔՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

Նոր իրավակարգավորմամբ՝ հստակեցվել է քննարկվող հանցագործության սուբյեկտը: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 250-ը սահմանում էր՝ «Սահմանված կարգով թույլատրված երթուղիները, վայրէջքի վայրերը, օդային դարպասները, թռիչքի բարձրությունը չպահպանելը կամ միջազգային թռիչքների այլ կանոնները խախտելը...»: Նոր քրեական օրենսգրքի հոդված 349 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Սահմանված կարգով թույլատրված երթուղին, վայրէջքի վայրը, թռիչքի բարձրությունը չպահպանելը կամ միջազգային թռիչքների այլ կանոն

խախտելն այն անձի կողմից, որը պատասխանատու է այդ կանոնի պահպանման համար...»: Գրեթե նույնական այս ձևակերպումները, տարբերվում են միայն հանցագործության սուբյեկտին վերաբերող տարրով: Չնայած այն հանգամանքին, որ նախկին ձևակերպման պարագայում ևս նկատի էր ունեցվում հանցագործության հատուկ սուբյեկտը, քանի որ խոսվում էր կանոնների մասին, որոնք, ենթադրաբար, պահպանելու պարտականություն ունեին այն անձինք, ովքեր զբաղեցրած պաշտոնի, պայմանագրի կամ այլ իրավական նորմերի ուժով՝ պարտավոր էին այդ կանոնները պահպանել, սակայն հարկ է փաստել, որ իրավական նորմի որոշակիության դիտանկյունից՝ նոր իրավակարգավորումն ավելի հաջողված է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ**

Սույն հանցակազմը նորույթ է ՀՀ քրեական օրենսդրության մեջ և չունի իր համարժեքները նախկին իրավակարգավորմամբ: Քննարկվող հանցատեսակի նախատեսման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ բացի միջազգային թռիչքների կանոնները քրեաիրավական գործիքակազմով պաշտպանելու անհրաժեշտությունից, առկա է նաև ներպետական օդային փոխադրումների կանոնների պաշտպանության հրատապություն: Քննարկվող հարաբերությունները կարգավորվում են «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքով<sup>141</sup>, «Հայաստանի Հանրապետության օդային տարածքի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ<sup>142</sup> և այլ իրավական ակտերով: Քննարկվող դիսպոզիցիան բլանկետային է և դրա իմաստը բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել քննարկվող բնագավառի իրավական ակտերի բովանդակությունը՝ պարզելու համար՝ արդյո՞ք խախտվել են ՀՀ օդային տարածքի օգտագործման կանոնները և անձը ՀՀ օդային տարածքն առանց թույլտվության օգտագործել է այն պարագայում, երբ նշված թույլտվությունը պարտադիր էր, ինչպես նաև այն հանգամանքը, թե հողվածում նշված հետևանքները գտնվում են այդ խախտման հետ պատճառական կապի մեջ, թե ոչ: ՀՀ քրեական նոր օրենսգրքի հոդված 350-ի առաջին մասը սահմանում է՝ «Հայաստանի Հանրապետության օդային տարածքն առանց թույլտվության օգտագործելն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան՝ նշված թույլտվությունը պարտադիր է, եթե այդ արարքը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս»:

Քննարկվող հանցակազմը սուբյեկտիվ կողմից դրսևորվում է անզգուշությամբ,

<sup>141</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74663>

<sup>142</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=11073>

չնայած նշված արարքը կարող է կատարվել նաև գիտակցաբար, սակայն հետևանքների նկատմամբ պետք է դրսևորվի անզգուշություն՝ հակառակ պարագայում գործ ունենք անձի կյանքի, առողջության, պետական կամ հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցատեսակների հետ:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

## Գլուխ 37

### ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ԿԱՄ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախկին իրավակարգավորումից քննարկվող հանցակազմերի առանցքային տարբերությունը կայանում է հանցագործության սուբյեկտի հստակեցման մեջ: Նոր իրավակարգավորմամբ նշվում են մի շարք ձևակերպումներ, որոնք միտված են որոշակիացնելու այս խումբ հանցագործությունների հատուկ սուբյեկտի առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ «այն անձի կողմից, որը, ըստ պայմանագրի կամ ծառայողական դիրքի, պարտավոր էր պահպանել այդ կանոնը կամ պահանջը» կամ «այդ աշխատանքների կատարման համար պատասխանատու անձի կողմից օրենսդրությամբ սահմանված կանոն կամ պահանջ խախտելը» կամ «օրենսդրությամբ սահմանված կանոն կամ պահանջ խախտելն այն անձի կողմից, որը, ըստ պայմանագրի կամ ծառայողական դիրքի, պարտավոր էր պահպանել այդ կանոնը կամ պահանջը»: Նշված փոփոխություններն, ընդհանուր առմամբ, պետք է համարել դրական, քանզի դա միտված է իրավական ակտի որոշակիության բարձրացմանը և կարող է դյուրինացնել հանցագործությունների որակյան գործընթացը: Հարկ է նշել, որ նշված բոլոր հոդվածներում «կանոններից» բացի որպես օբյեկտիվ կողմի դրսևորում ավելացվել է նաև «կամ պահանջները» ձևակերպումը: Թվարկված հոդվածները ներառում են նաև նախկին քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված ունիվերսալ հանցակազմը, որի համարժեքը նոր քրեական օրենսգրքով նախատեսված չէ:

Քննարկվող հոդվածներում կատարված մյուս փոփոխությունները հիմնականում կրում են շարահյուսական և եզրութաբանական բնույթ, որոնց առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ  
ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես և քրեական նախկին, այնպես էլ քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսել համակարգչային անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար: Օրենսդիրը վերանայել է հանցակազմերը՝ դրանք տեխնոլոգիական զարգացման ներկայիս մարտահրավերներին արձագանքելու առումով առավել կենսունակ և արդյունավետ դարձնելու ցանկությամբ:

Քրեական նոր օրենսգրքի 359-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հետևյալ արարքի համար՝ համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելը՝ առանց թույլտվության մուտք գործելը, որը կատարվել է օրենքի կամ պայմանագրի կամ իրավաչափ այլ հիմքի ուժով նման իրավունք չունեցող անձի կողմից և անզուգուրությամբ առաջացրել է համակարգչային տվյալի ոչնչացում, փոփոխություն, վնասում, աղավաղում, ուղեփակում (մեկուսացում), պատճենահանում, խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ էական վնաս:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ նոր կանոնակարգմամբ օրենսդիրը հստակեցրել է, թե ով կարող է լինել քննարկվող հանցագործության սուբյեկտ, մասնավորապես՝ օրենքի կամ պայմանագրի կամ իրավաչափ այլ հիմքի ուժով համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելը իրավունք չունեցող անձը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որտեղ շեշտադրումը դրվում էր համակարգչում, համակարգչային համակարգում, ցանցում կամ մեքենայական կրիչների վրա պահվող և օրենքով պահպանվող տեղեկատվության համակարգի որևէ մաս կամ ամբողջությամբ համակարգ մուտք գործելու մասին, քրեական նոր օրենսգրքում սահմանվել է համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց ներթափանցելը:

Քրեական նոր օրենսգրքում նաև հստակեցվել են այն հնարավոր հետևանքները, որոնք կարող են առաջանալ նման մուտքի պարագայում: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում որպես նման հետևանքներ են դիտարկվում նաև համակարգչային տվյալի վնասումը, աղավաղումը, խոշոր չափերի գույքային վնաս կամ այլ էական վնաս պատճառելը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ հանցակազմի առկայության համար չի պահանջվում, որ նման ներթափանցումը կատարվի պաշտպանիչ համակարգի խախտմամբ: Ավելին, քրեական նոր օրենսգրքում դա արդեն դիտվում է

որպես ծանրացնող հանգամանքով հանցակազմ:

Հանցակազմը նյութական է. հանցակազմի ավարտված տեսակի համար անհրաժեշտ է, որ առաջանան օրենքով նախատեսված հետևանքները:

Սուբյեկտիվ կողմից հանցանքը կատարվում է անզուշտությամբ:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներն են՝ արարքը, որը՝

1) զուգորդվել է պաշտպանիչ համակարգը հաղթահարելով,

2) կատարվել է հատուկ տեխնիկական միջոցի օգտագործմամբ,

3) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

4) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

5) կատարվել է օրենքով պահպանվող տվյալի նկատմամբ կամ

6) անզուշտությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ պատճենահանում կամ այլ ծանր հետևանք:

Քրեական նոր օրենսգրքի 360-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում համակարգչային տվյալը փոփոխելու համար, այն է՝ համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության փոփոխելը, որը վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին: Թեև քննարկվող հանցակազմի վերտառությունը նույնանում է քրեական նախկին օրենսգրքի 252-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հետ, սակայն բովանդակային առումով այն որոշակիորեն տարբերվում է նախկին կանոնակարգումից:

Քրեական նախկին օրենսգրքով համակարգչային տեղեկատվությունը փոփոխելու հանցակազմն առկա էր նաև, եթե դրանցում սուտ տեղեկատվություն էր մտցվում, մինչդեռ օրենսդիրը ներկայումս այն դիտում է որպես ծանրացնող հանգամանքով հանցակազմի հատկանիշ:

Միաժամանակ, օրենսդիրը վերանայել է հանրորեն վտնգավոր հետևանքներին ներկայացվող պահանջը՝ նախկինում անհրաժեշտ էր, որ կատարված արարքի հետևանքով պատճառվեր զգալի վնաս, մինչդեռ քրեական նոր օրենսգրքում սահմանվում է, որ վնաս պատճառվի անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին: Օրենսդիրը չի սահմանում, թե վնասի չափը որքան կարող է լինել, հետևաբար պաշտպանության շատ ավելի կոշտ շեմ է նախատեսել:



Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքեր են՝ արարքը, որը՝

1) զուգորդվել է համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց թույլտվության մուտք գործելով,

2) զուգորդվել է կեղծ տվյալ մուտքագրելով կամ տվյալն այլ կերպ խեղաթյուրելով,

3) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

4) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

5) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի փոփոխություն կամ այլ ծանր հետևանք:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը ևս պատասխանատվություն է սահմանում համակարգչային սաբոտաժի համար, այն է՝ համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության ոչնչացնելը, վնասելը, աղավաղելը կամ ուղեփակելը (մեկուսացնելը):

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգրքում պատասխանատվությունը առաջանում է համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող տվյալը ոչնչացնելու, վնասելու, աղավաղելու կամ ուղեփակելու համար: Քրեական նախկին օրենսգրքում հանցակազմի օբյեկտիվ կողմից դրսևորումներ էին նաև համակարգչային ծրագրերը ոչնչացնելը, ուղեփակելը, համակարգչային սարքավորումները շարքից դուրս բերելը և այլն:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներ են՝ արարքը, որը՝

1) զուգորդվել է համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց թույլտվության մուտք գործելով կամ

2) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ պատճենահանում կամ այլ ծանր հետևանք:

Առավել խիստ է պատասխանատվությունը, եթե արարքն առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ պատճենահանում կամ այլ ծանր հետևանք:

Քրեական նոր օրենսգրքի 362-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում համակարգչային տվյալներն ապօրինի որսալու կամ դրանց տիրանալու համար, այն է՝ համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող ընդհանուր օգտագործման համար չնախատեսված տվյալն առանց օրենքով կամ պայմանագրով կամ իրավաչափ այլ հիմքով նախատեսված թույլտվության որսալը կամ դրան տիրանալը, որը կատարվել է այդ տվյալն օգտագործելու կամ այլ անձանց օգտագործման համար հասանելի դարձնելու կամ այլ կերպ իրացնելու նպատակով: Ըստ էության, այն արտացոլում է քրեական նախկին օրենսգրքի 254-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի հատկանիշները:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ օրենսդիրը հանցակազմի պարտադիր հատկանիշ է դիտում այդ տվյալն օգտագործելու կամ այլ անձանց օգտագործման համար հասանելի դարձնելու կամ այլ կերպ իրացնելու նպատակը:

Մնացած առումներով այն նույնական է նախկինում եղած հանցակազմին:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը՝

1) գուգորդվել է համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց թույլտվության մուտք գործելով,

2) կատարվել է օրենքով պահպանվող տվյալ ստանալու նպատակով,

3) կատարվել է շահադիտական դրդումներով,

4) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

5) կատարվել է համակարգչային կապի միջոցների օգտագործմամբ հաղորդվող տվյալը որսալով,

6) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

7) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար, աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ այլ ծանր հետևանք՝

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե արարքը՝

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար, աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ այլ ծանր հետևանք:

Քրեական նոր օրենսգրքի 363-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցների ապօրինի շրջանառության համար,

այն է՝ համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց առանց թույլտվության մուտք գործելու կամ համակարգչային տվյալը ոչնչացնելու, վնասելու, աղավաղելու կամ ուղեփակելու (մեկուսացնելու) կամ դրանք ապօրինի որսալու կամ դրան ապօրինի տիրանալու համար նախատեսված հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցներ կամ հատուկ հարուցիչով ծրագիր արտադրելը, պատրաստելը, մշակելը, ներմուծելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ արտահանելը՝ դա օգտագործելու կամ իրացնելու նպատակով, կամ այդպիսի ծրագրային կամ գործիքային միջոցը կամ ծրագիրն իրացնելը կամ օգտագործելը:

Այս հանցակազմն իր մեջ միավորում է քրեական նախկին օրենսգրքի 255-րդ և 256-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը: Քրեական նախկին օրենսգրքի 255-րդ հոդվածը պատասխանատվություն էր սահմանում պաշտպանված տեղեկատվություն ապօրինի մուտք գործելու համար հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցներ պատրաստելու համար՝ դրանք իրացնելու նպատակով, ինչպես նաև դրանք իրացնելու համար: Քրեական նոր օրենսգրքում որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ են դիտվում ինչպես «իրացնելու», այնպես էլ «օգտագործելու» նպատակները: Միաժամանակ, մանրամասն թվարկվում են այն գործողությունները, որոնք կարող են հանգեցնել հանցակազմի առկայության՝ հատուկ ծրագրային կամ գործիքային միջոցներ կամ հատուկ հարուցիչով ծրագիր արտադրելը, պատրաստելը, մշակելը, ներմուծելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ արտահանելը: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ այդ գործողությունների շարքը համալրվել է՝ ներառելով նման ծրագրեր արտադրելը, փոխադրելը, առաքելը, արտահանելը, ներմուծելը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքերով տեսակ են՝ արարքը, որը՝

- 1) կատարվել է շահադիտական դրդումներով,
- 2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) կատարվել է այլ հանցանքի կատարումը թաքցնելու կամ հեշտացնելու նպատակով կամ

4) անգոյությունը առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ պատճենահանում կամ այլ ծանր հետևանք:

Առավել խիստ պատասխանատվություն առաջանում է, եթե արարքը՝

- 1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար, աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում), պատճենահանում կամ այլ ծանր հետևանք:

Օրենսդիրը նախատեսել է նաև խրախուսական նորմ՝ սահմանելով, որ հանցագործության առարկա հանդիսացող ծրագրային կամ գործիքային միջոցը կամ ծրագիրն իրավասու մարմիններին կամովին հանձնած անձն ազատվում է ներկայացված հողվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծություններից է քրեական նոր օրենսգրքի 364-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմը՝ համակարգչային կեղծիքը, այն է՝ իրավաբանական հետևանքներ առաջացնելու նպատակով համակարգչային տվյալ ապօրինի մտցնելը, փոփոխելը, ջնջելը կամ այդ տվյալի հասանելիությունն ուղեփակելը (մեկուսացնելը), որը հանգեցրել է ոչ հավաստի տվյալի ստեղծման:

Հանցակազմի սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը: Սուբյեկտիվ կողմից արարքը կատարվում է միմիայն դիտավորությամբ և հատուկ նպատակով՝ իրավաբանական հետևանքներ առաջացնելու նպատակով:

Օբյեկտիվ կողմից այն դրսևորվում է ոչ հավաստի տվյալի ստեղծմանն հանգեցրած արարքով՝ համակարգչային տվյալ ապօրինի մտցնելով, փոփոխելով, ջնջելով կամ այդ տվյալի հասանելիությունն ուղեփակելով:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներն են՝ արարքը, որը՝

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

3) անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ այլ ծանր հետևանք:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքի 257-րդ հոդվածում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքի 365-րդ հոդվածում պատասխանատվություն է սահմանված համակարգիչը, համակարգչային համակարգը կամ ցանցը շահագործելու կանոնները կամ պահանջները խախտելու համար: Քրեական նոր օրենսգրքում հանցակազմը ձևակերպված է՝ համակարգիչը, համակարգչային համակարգը կամ համակարգչային ցանցը շահագործելու կանոն կամ պահանջ խախտելն այն անձի կողմից, որն այդ համակարգիչ, համակարգչային համակարգ կամ համակարգչային ցանց մուտք գործելու թույլտվություն ունի, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորման վրա պահվող, օրենքով պահպանվող տվյալի փոփոխություն, պատճենահանում, ոչնչացում, վնասում կամ ուղեփակում

(մեկուսացում) կամ համակարգչային սարքավորման աշխատանքի խաթարում:

Որոշակի խմբագրական փոփոխություններով՝ հանցակազմը նույնական է նախկին օրենսգրքի 257-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմին: Հիմնական տարբերությունը վերաբերում է պատճառած վնասին: Քրեական նոր օրենսգրքում վնասի չափ չի ֆիքսվում: Փոխարենը՝ ծանրացնող հանգամանքով հանցակազմ է դիտվում արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, հիմնարկի կամ կազմակերպության գործունեության խաթարում, վթար կամ աղետ, առանձնակի արժեք ունեցող տվյալի ոչնչացում, փոփոխություն, ուղեփակում (մեկուսացում) կամ պատճենահանում կամ այլ ծանր հետևանք:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շրջական միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների՝ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած ձևակերպումները հիմնականում նույնանում են քրեական նախկին օրենսգրքում եղած հանցակազմերի հետ: Հիմնական տարբերությունն այն է, որ օրենսդիրը հաճախ առանձին հոդվածներով է նախատեսել շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված, օբյեկտիվ կողմով նույնական արարքները դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարելը: Նման տարբերակումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանցակազմերի ծանրացնող հանգամանքներով տեսակների կամ հանցակազմի հատկանիշ հանդիսացող հետևանքների սահմանման ժամանակ հաճախ անհրաժեշտություն է լինում դրանք առանձնացված ներկայացնել:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը՝ քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսել աշխատանքներ իրականացնելիս շրջակա միջավայրի պահպանության կանոնները խախտելու համար: Պարզապես քրեական նոր օրենսգրքում այս հանցակազմը տեղ է գտել երկու տարբեր հոդվածներում՝ 366-րդ, որում նախատեսվում է քննարկվող հանցակազմը դիտավորությամբ կատարելը և 367-րդ, որը նախատեսում է քննարկվող հանցակազմը անզգուշությամբ կատարելը:

Քրեական նոր օրենսգրքի 366-րդ հոդվածում տրվել է նշված հանցակազմի դիտավորյալ տեսակի բովանդակությունը, այն է՝ արդյունաբերական, գյուղատնտեսական, քաղաքաշինական, գիտական կամ այլ նշանակության օբյեկտները նախագծելու, տեղաբաշխելու, կառուցելու, վերակառուցելու, վերանորոգելու, շահագործման հանձնելու, շահագործելու կամ շահագործումից հանելու ընթացքում շրջակա միջավայրի պահպանության օրենսդրության պահանջն իրավասու անձի կողմից խախտելը, եթե դրա հետևանքով առաջացել է շրջակա միջավայրի քիմիական կամ կենսաբանական աղտոտվածության, շրջակա միջավայրի վրա վնասակար ֆիզիկական ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի էական գերազանցում, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի օբյեկտների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանք: Ի տարբերություն նախկին կանոնակարգման՝ օրենսդիրը թվարկվող օբյեկտները տարանջատել է «կամ» շաղկապով:

Հստակեցվել են նաև հնարավոր հետևանքները՝ շրջակա միջավայրի քիմիական կամ կենսաբանական աղտոտվածության, շրջակա միջավայրի վրա վնասակար ֆիզիկական ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի էական

գերազանցում, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի օբյեկտների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանք:

Աշխատանքներ իրականացնելիս շրջակա միջավայրի պահպանության կանոնները անզգուշությամբ խախտելու համար պատասխանատվությունն առաջանում է, եթե դրա հետևանքով մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս, կամ անզգուշությամբ առաջացել է շրջակա միջավայրի քիմիական կամ կենսաբանական աղտոտվածության կամ շրջակա միջավայրի վրա վնասակար ֆիզիկական ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի էական գերազանցում, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի օբյեկտների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանք: Առավել խիստ պատասխանատվությունն առաջանում է, եթե կատարվածի արդյունքում անձի առողջությանը անզգուշությամբ մահ է պատճառվում:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծություններից էվտանգավոր քիմիական կամ կենսաբանական նյութերի կամ թափոնների ապօրինի շրջանառության համար պատասխանատվությունն սահմանող հանցակազմի նախատեսումը: Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում հետևյալ արարքների համար՝ շրջակա միջավայրի կամ մարդու կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող քիմիական կամ կենսաբանական նյութ կամ թափոն, կենսաբանական ազդանյութ կամ ազդակ կամ իրենց բաղադրության մեջ նշված նյութը, ազդանյութը, ազդակը կամ թափոնը պարունակող ապրանք կամ այլ առարկա օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ արտադրելը, պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, պահեստավորելը, փոխադրելը, առաքելը, ներմուծելը, արտահանելը, օգտագործելը կամ իրացնելը:

Հանցակազմի որակման համար առանցքային նշանակություն ունի դրա առարկայի հստակեցումը՝ շրջակա միջավայրի կամ մարդու կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող քիմիական կամ կենսաբանական նյութ կամ թափոն, կենսաբանական ազդանյութ կամ ազդակ կամ իրենց բաղադրության մեջ նշված նյութը, ազդանյութը, ազդակը կամ թափոնը պարունակող ապրանք կամ այլ առարկա:

Հանցակազմը ձևական է՝ ավարտված է համարվում հիշյալ առարկաները/նյութերը արտադրելու, պատրաստելու, ձեռք բերելու, պահելու, պահեստավորելու, փոխադրելու, առաքելու, ներմուծելու, արտահանելու, օգտագործելու կամ իրացնելու պահից:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներ են՝ արարքը, որը՝

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) անզգուշությամբ մարդու առողջությանը պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ

3) անզգուշությամբ առաջացրել է շրջակա միջավայրի քիմիական կամ կենսաբանական աղտոտվածության, շրջակա միջավայրի վրա վնասակար ֆիզիկական ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի էական գերազանցում, շրջակա միջավայրի թունավորում կամ վարակում, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի օբյեկտների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանք:

Առավել խիստ պատասխանատվություն ծագում է, եթե կատարվածը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը ևս պատասխանատվություն է սահմանում վտանգավոր քիմիական և կենսաբանական նյութերի ու թափոնների հետ վարվելու անվտանգության կանոնները խախտելու համար: Ընդ որում, քրեական նոր օրենսգրքում տարբեր հոդվածներում տեղ են գտել այս արարքը ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ կատարելու համար պատասխանատվություն առաջացնող հանցակազմերը: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 369-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում շրջակա միջավայրի կամ մարդու կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող քիմիական կամ կենսաբանական նյութը կամ թափոնը, կենսաբանական ազդանյութը, ազդակը կամ թունավոր նյութն օգտագործելու, պահպանելու, տեղափոխելու, ոչնչացնելու կամ դրանց հետ վարվելու անվտանգության այլ կանոնն իրավասու անձի կողմից խախտելը, եթե դրա հետևանքով առաջացել է շրջակա միջավայրի քիմիական կամ կենսաբանական աղտոտվածության, շրջակա միջավայրի վրա վնասակար ֆիզիկական ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի էական գերազանցում, շրջակա միջավայրի թունավորում կամ վարակում, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի օբյեկտների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանք:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ իրավասու անձը, ով պարտավոր է պահպանել քննարկվող նյութերի ու թափոնների հետ վարվելու անվտանգության կանոնները:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում նշված է ոչ թե «արգելված վտանգավոր քիմիական և կենսաբանական նյութեր կամ թափոններ», այլ «շրջակա միջավայրի կամ մարդու կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող քիմիական կամ կենսաբանական նյութ կամ թափոն, կենսաբանական ազդանյութ, ազդակ կամ թունավոր նյութ» արտահայտությունը: Ակնհայտ է, որ օրենսդիրը լրացրել է հանցագործության առարկայի շրջանակը՝ ընդլայնելով այն: Ընդ որում, իրավամբ, քրեական նոր օրենսգրքում չի նշվում դրանց արգելված լինելը:

Ինչպես արդեն նշվել է, օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել նաև



շրջակա միջավայրի կամ մարդու կյանքի կամ առողջության համար վտանգ ներկայացնող քիմիական կամ կենսաբանական նյութը կամ թափոնը, կենսաբանական ազդանյութը, ազդակը կամ թունավոր նյութն օգտագործելու, պահպանելու, տեղափոխելու, ոչնչացնելու կամ դրանց հետ վարվելու անվտանգության այլ կանոնն իրավասու անձի կողմից խախտելու համար, եթե դրա հետևանքով մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս, կամ անզգուշությամբ առաջացել է շրջակա միջավայրի քիմիական կամ կենսաբանական աղտոտվածության, շրջակա միջավայրի վրա վնասակար ֆիզիկական ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի էական գերազանցում, շրջակա միջավայրի թունավորում կամ վարակում, մարդկանց, կենդանիների կամ բույսերի շրջանում համաճարակի տարածում, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի օբյեկտների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանք:

Անզգուշությամբ հանցանքը կատարելու պարագայում օրենսդրի կողմից նախատեսված են այլ հետևանքներ՝ մարդու առողջությանն անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս, շրջակա միջավայրի քիմիական կամ կենսաբանական աղտոտվածության, շրջակա միջավայրի վրա վնասակար ֆիզիկական ներգործության սահմանային թույլատրելի մակարդակի էական գերազանցում, շրջակա միջավայրի թունավորում կամ վարակում, մարդկանց, կենդանիների կամ բույսերի շրջանում համաճարակի տարածում, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի, կենդանական աշխարհի կամ բուսական աշխարհի օբյեկտների զանգվածային ոչնչացում կամ այլ ծանր հետևանք:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներն են՝ արարքը, որը՝

1) կատարվել է էկոլոգիական աղետի կամ արտակարգ էկոլոգիական դրության գոտում կամ

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվել անասնաբուժական կամ բույսերի հիվանդությունների կամ վնասատուների դեմ պայքարելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնն իրավասու անձի կողմից խախտելու համար, եթե դրա հետևանքով խոշոր չափերի գույքային վնաս է պատճառվել, մարդկանց, կենդանիների կամ բույսերի շրջանում համաճարակ է տարածվել, կամ առաջացել է այլ ծանր հետևանք: Առանձին հոդվածով պատասխանատվություն է սահմանված նաև այդ կանոնն իրավասու անձի կողմից խախտելու համար, եթե դրա հետևանքով անզգուշությամբ խոշոր չափերի գույքային վնաս է պատճառվել, մարդկանց, կենդանիների կամ բույսերի շրջանում համաճարակ է տարածվել, կամ առաջացել է այլ ծանր հետևանք:

Այս հանցակազմերը, ըստ էության, կրկնում են քրեական նախկին օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում տեղ գտած հանցակազմերի հատկանիշները: Պարզապես օրենսդիրն առավել մանրամասնել է հնարավոր հետևանքները՝ նախատեսելով նաև խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը:

Միաժամանակ, օրենսդիրը հատուկ մատնանշել է, որ հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է հատուկ սուբյեկտ:

Քրեական նոր օրենսգրքում տարբեր հոդվածներում են ներկայացված նաև մթնոլորտային օդն աղտոտելու հանցակազմերը: Քրեական նոր օրենսգրքի 373-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մթնոլորտային օդը դիտավորությամբ աղտոտելու համար՝ սահմանված նորմատիվի գերազանցմամբ արտանետումներով, սարքավորումների, կառույցների կամ այլ օբյեկտների շահագործման կանոնը խախտելու հետևանքով կամ այլ եղանակով մթնոլորտային օդն աղտոտելը կամ դրա բնական հատկություններն այլ ձևով փոփոխելը, որը խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս է պատճառել գյուղացիական տնտեսությանը, շինություններին, մշակութային արժեքներին, կենդանական կամ բուսական աշխարհին, հողին կամ ջրերին կամ առաջացրել է այլ ծանր հետևանք: Գրեթե տառացի կրկնելով քրեական նախկին օրենսգրքի 289-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրում ստացած հանցակազմի բովանդակությունը, քրեական նոր օրենսգրքում տրվել են էական վնասի գնահատման ուղենիշերը՝ խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնասի պատճառումը գյուղացիական տնտեսությանը, շինություններին, մշակութային արժեքներին, կենդանական կամ բուսական աշխարհին, հողին կամ ջրերին կամ այլ ծանր հետևանքի առաջացումը: Քրեական նախկին օրենսգրքը պարզապես նշում էր էական վնասի պատճառման հանգամանքը, ինչն էլ գործնականում խնդիրներ էր առաջացնում դրա որոշման տեսանկյունից: Թեև քրեական նոր օրենսգրքում տեղ գտած ձևակերպումը ևս հեռու է լիարժեք լինելուց, սակայն տալիս է այն ուղղությունները, որոնք պետք է հիմք հանդիսանան հանցակազմի առկայության համար անհրաժեշտ հետևանքները ֆիքսելու համար:

Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված մյուս հանցակազմերի տրամաբանությամբ՝ առանձին հոդվածներով են ներկայացվել նաև ջրերն աղտոտելու հանցակազմերը:

Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել ջրերն աղտոտելու համար, այն է՝ բնական կամ արհեստական ծագման մակերևութային կամ ստորերկրյա ջրերը, խմելու ջրամատակարարման աղբյուրներն աղտոտելը, աղբոտելը, խցանելը, սպառելը կամ դրանց բնական հատկությունները կամ որակական բաղադրությունն այլ կերպ փոփոխելը կամ ջրային ռեսուրսը հյուծելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել, կամ ջրերը ռադիոակտիվ, քիմիական,

կենսաբանական կամ այլ վտանգավոր նյութով կամ թափոնով աղտոտելը կամ ջրային ռեսուրսներին այլ էական վնաս պատճառելը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ օրենսդիրը նախատեսել է ջրերը աղտոտելու հնարավոր եղանակների առավել ընդգրկուն տարբերակ, սահմանելով նաև ջրային ռեսուրսը հյուծելու տարբերակը: Բացի այդ՝ օրենսդիրը շեշտադրում է կատարել նաև հետևանքները հստակեցնելու վրա՝ դիտավորությամբ այս արարքը կատարելու դեպքում որպես հետևանքներ նախատեսելով ոչ թե պարզապես էական վնասը, այլ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը, կամ ջրերը ռադիոակտիվ, քիմիական, կենսաբանական կամ այլ վտանգավոր նյութով կամ թափոնով աղտոտելը կամ ջրային ռեսուրսներին այլ էական վնաս պատճառելը: Անզգուշության դեպքում որպես հետևանքներ են նախատեսվել մարդու առողջությանը անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը կամ գյուղացիական տնտեսությանը, շինություններին, մշակութային արժեքներին, կենդանական կամ բուսական աշխարհին կամ դրանց պաշարներին, հողին կամ ջրերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը կամ այլ էական վնաս կամ այլ ծանր հետևանք պատճառելը:

Ջրերն անզգուշությամբ աղտոտելու ծանրացնող հանգամանքներով տեսակ են՝ արարքը, որը՝

1) կատարվել է բնության հատուկ պահպանվող տարածքում կամ էկոլոգիական աղետի կամ արտակարգ էկոլոգիական դրության գոտում,

2) անհնարին է դարձրել բնակչության ջրամատակարարումը կամ

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

Քրեական նոր օրենսգրքի 377-րդ և 378-րդ հոդվածները պատասխանատվություն են սահմանում ծովային միջավայրն աղտոտելու համար, այն է՝ ցամաքում գտնվող օբյեկտից կամ տրանսպորտային միջոցից կամ ծովում կառուցված արհեստական կառույցից մարդու առողջության կամ ծովի բնական պաշարների համար վտանգավոր կամ ծովային միջավայրի իրավաչափ օգտագործումը խոչընդոտող նյութը կամ հումքն արտանետելու կամ թաղելու կանոնը խախտելու հետևանքով կամ այլ եղանակով ծովային միջավայրն աղտոտելը, որը խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս է պատճառել կենդանական կամ բուսական աշխարհին կամ դրանց պաշարներին, հողին կամ ջրերին կամ առաջացրել է այլ ծանր հետևանք: Անզգուշությամբ կատարվող հանցակազմի պարագայում հետևանքներն են՝ մարդու առողջությանը անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, կամ կենդանական կամ բուսական աշխարհին կամ դրանց պաշարներին, հողին կամ ջրերին այլ էական վնաս կամ խոշոր չափերի գույքային վնաս, անզգուշությամբ այլ ծանր հետևանք առաջացնելը:

Ներկայացված հանցակազմերը նույնությամբ կրկնում են քրեական նախկին օրենսգրքի 288-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի հատկանիշները՝ պարզապես մի

քիչ ավելի մանրամասն են ներկայացնում հնարավոր հետևանքները՝ դրանով իսկ ուղենիշ սահմանելով էական վնասը գնահատելու համար: Միաժամանակ, նախատեսվում է ծովային միջավայրը աղտոտելու ընդգրկուն տարբերակ՝ ծովային միջավայրի աղտոտմանն ուղղված արարքներից հետո նշելով «կամ այլ եղանակով» արտահայտությունը:

Քրեական նոր օրենսգրքի 379-րդ և 380-րդ հոդվածները պատասխանատվություն են սահմանում ձկնային պաշարների պահպանության կանոնները խախտելու համար, արտացոլելով քրեական նախկին օրենսգրքի 293-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի հատկանիշները: Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հանցակազմերը պարզապես առանձնացված են արտացոլել քրեական նախկին օրենսգրքի 293-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի դրսևորումները՝ առանց այլ փոփոխությունների, հետևաբար լրացուցիչ պարզաբանման կարիք չկա:

Քրեական նոր օրենսգրքի 381-րդ և 382-րդ հոդվածներում ամրագրում է ստացել քրեական նախկին օրենսգրքի 290-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմը: Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել հողը փչացնելու համար, այն է՝ հողը հանելու, տեղափոխելու, պահպանելու կամ օգտագործելու կանոնը խախտելով կամ այլ եղանակով հողն աղտոտելը, թունավորելը կամ այլ կերպ փչացնելը, որը խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս է պատճառել կենդանական կամ բուսական աշխարհին կամ դրանց պաշարներին, հողին կամ ջրերին կամ առաջացրել է այլ ծանր հետևանք:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքում առկա կարգավորման՝ օրենսդիրը ոչ թե նշել է տնտեսական կամ այլ գործունեության վնասակար արտադրանքով հողը թունավորելու, աղտոտելու կամ այլ կերպ փչացնելու, այլ ցանկացած եղանակով հողը փչացնելու մասին:

Ընդ որում, կրկին՝ օրենսդիրը նախատեսում է քանակական վնասի այն ուղենիշը, որով պետք է իրավակիրառողը ղեկավարվի էական վնասը որոշելիս՝ խոշոր չափերի գույքային վնասը, այլ ծանր հետևանքը կամ պատճառել կենդանական կամ բուսական աշխարհին կամ դրանց պաշարներին, հողին կամ ջրերին այլ էական վնաս հասցնելը:

Քննարկվող արարքը անզգուշությամբ կատարվելու դեպքում օրենսդիրը որպես հետևանքներ նախատեսում է՝ մարդու առողջությանը անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը կամ խոշոր գույքային կամ այլ էական վնասը՝ կենդանական կամ բուսական աշխարհին կամ դրանց պաշարներին կամ ջրերին կամ անզգուշությամբ այլ ծանր հետևանքի առաջացումը:

Քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է սահմանվում նաև ընդերքի պահպանման կամ օգտագործման կանոնները խախտելու համար, ընդ որում առանձին հանցակազմերով պատասխանատվություն սահմանելով դրանց դիտավորյալ և

անզգույշ դրսևորումների համար:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որտեղ նեղ մեկնաբանությամբ նշվում էր լեռնաարդյունահանող կազմակերպությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորգետնյա շինությունների նախագծման, տեղաբաշխման, շինարարության, շահագործման հանձնելու և շահագործման ընթացքում ընդերքի պահպանության կանոնները խախտելու, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի մակերեսները ինքնակամ կառուցապատելու մասին, քրեական նոր օրենսգրքում առավել ընդհանրական ձևակերպում է տրվել՝ ընդերքի պահպանման կամ օգտագործման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջը խախտելը, որը խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին, շրջակա միջավայրին կամ առաջացրել է այլ ծանր հետևանք:

Նման ձևակերպումը թույլ է տալիս արձագանքել ընդերքի պահպանման կամ օգտագործման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ցանկացած պահանջի խախտման դեպքին:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում առավել հստակ են ներկայացվում նաև հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքները, այն է՝ եթե արարքը խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին, շրջակա միջավայրին կամ առաջացրել է այլ ծանր հետևանք: Անզգուշությամբ այս արարքը կատարվելու դեպքում պատասխանատվություն է սահմանվում, եթե այդ արարքի հետևանքով անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառվել մարդու առողջությանը, խոշոր չափերի գույքային կամ այլ էական վնաս՝ անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին կամ շրջակա միջավայրին, կամ անզգուշությամբ առաջացել է այլ ծանր հետևանք:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներ են, արարքը, որը՝

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) կատարվել է բնության հատուկ պահպանվող տարածքում կամ էկոլոգիական աղետի կամ արտակարգ էկոլոգիական դրության գոտում կամ

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Քրեական նոր օրենսգրքի 385-րդ հոդվածը պատասխանատվություն է

նախատեսում ձուկ կամ ջրային այլ կենդանի ապօրինի որսալու կամ ձուկ, ջրային այլ կենդանի կամ ջրային բույս ապօրինի արդյունահանելու համար, որը կատարվել է՝

1) դրանց զանգվածային ոչնչացման կամ արդյունահանման եղանակ օգտագործելով,

2) դրանց որսի կամ արդյունահանման համար արգելված ժամանակ՝ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով, կամ

3) արգելված վայրում՝ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ օրենսդիրը պատասխանատվություն է սահմանել ոչ միայն ձուկ, ջրային այլ կենդանի կամ ջրային բույս ապօրինի արդյունահանելու, այլև ձուկ որսալու համար՝ պայմանով, որ դրանք կամ կատարվել են արգելված ժամանակ կամ արգելված վայրում, ընդ որում՝ խոշոր չափերով կամ կատարվել են դրանց զանգվածային ոչնչացման կամ արդյունահանման եղանակ օգտագործելով:

Քրեական նախկին օրենսգրքում խոշոր չափերով վնասի պատճառումը կամ արգելված ժամանակ կամ արգելված վայրում քննարկվող արարքը կատարելը արդեն իսկ բավարար էր անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար, մինչդեռ քրեական նոր օրենսգրքը անհրաժեշտ է համարում, որ այդ հանգամանքները զուգակցվեն՝ արարքը կատարվի դրանց որսի կամ արդյունահանման համար արգելված ժամանակ՝ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով կամ արգելված վայրում՝ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով:

Միայն ձկնորսության կամ ջրային կենդանիների, բույսերի արդյունահանման՝ դրանց զանգվածային ոչնչացման կամ արդյունահանման եղանակ օգտագործելու պարագում է, որ օրենսդիրը դրսևորել է նախկին քրեական օրենսգրքում իր արտահայտած մոտեցումը և անհրաժեշտ չի համարում խոշոր չափի գույքային վնասի պատճառումը:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներ են՝ արարքը, որը կատարվել է՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում կամ կենդանիների Կարմիր գրքում գրանցված ձկնատեսակի, ջրային այլ կենդանու կամ ջրային բույսի նկատմամբ կամ հանգեցրել է ձկան, ջրային այլ կենդանու կամ ջրային բույսի որոշակի տեսակի պոպուլյացիայի վերացման կամ

4) բնության հատուկ պահպանվող տարածքում կամ էկոլոգիական աղետի կամ արտակարգ էկոլոգիական դրության գոտում:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս պատասխանատվություն է սահմանվել վայրի կենդանի կամ թռչուն ապօրինի որսալու համար: Այնուհանդերձ, ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ նոր օրենսգրքով սահմանվել է պատասխանատվություն ապօրինի որսի համար՝

1) վայրի կենդանու կամ թռչունի որսի համար արգելված ժամանակ՝ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով,

2) արգելված վայրում՝ խոշոր չափերի գույքային վնաս պատճառելով,

3) պայթուցիկ նյութ, գազ, էլեկտրական հոսանք կամ վայրի կենդանիների զանգվածային վնասման այլ եղանակ կամ որսի իրականացման արգելված այլ ձև, միջոց կամ գործիք օգտագործելով կամ

4) այնպիսի վայրի կենդանու կամ թռչնի նկատմամբ, որոնց որսն ամբողջովին արգելված է:

Կրկին՝ օրենսդիրը որոշակիորեն շեղվել է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած մոտեցումից և քրեական պատասխանատվություն սահմանել ոչ թե պարզապես խոշոր չափերով որսի համար, այլ եթե դա զուգակցվել է արգելված ժամանակ կամ արգելված վայրում որս իրականացնելով:

Նշված չափերի պահանջը չի նշվում, եթե ապօրինի որսը տեղի է ունեցել պայթուցիկ նյութ, գազ, էլեկտրական հոսանք կամ վայրի կենդանիների զանգվածային վնասման այլ եղանակ կամ որսի իրականացման արգելված այլ ձև, միջոց կամ գործիք օգտագործելով կամ այնպիսի վայրի կենդանու կամ թռչնի նկատմամբ, որոնց որսն ամբողջովին արգելված է:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակ է՝ արարքի կատարումը՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանու կամ թռչնի նկատմամբ կամ հանգեցրել է կենդանու կամ թռչնի որոշակի տեսակի պոպուլյացիայի վերացման կամ

4) բնության հատուկ պահպանվող տարածքում կամ էկոլոգիական աղետի կամ արտակարգ էկոլոգիական դրության գոտում:

Քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվել նաև ծառերի, թփերի, բուսածածկի ապօրինի հատման կամ ծառերը, թփերը առանց թույլտվության տեղափոխելու համար, այն է՝ պետական, համայնքային սեփականություն հանդիսացող կամ այլ անձանց պատկանող ծառը, թուփը կամ բուսածածկն ապօրինի հատելը կամ ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը կամ ապօրինի ձեռք բերված կոճղը կամ քամատապալ, ձյունակոտոր, արմատախիլ արված կամ արմատից

հատված կամ մասնատված ծառը կամ թուփը տեղափոխելը, եթե դրա հետևանքով պատճառվել է հարյուր հազար դրամը գերազանցող գույքային կամ այլ էական վնաս անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ օրենսդիրը չի մատնանշում, որ նշված ծառը, թուփը կամ բուսածածկը պետք է գտնվեն անտառային հողերում կամ անտառային հողերի մեջ չմտնող տարածքներում:

Միաժամանակ, օրենսդիրը այս հանցակազմի առումով հրաժարվել է վարչական պրեյուդիցիայից և ոչ թե պահանջում է, որ այդ արարքները կրկին կատարվեն նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, այլ սահմանափակվել է միայն պատճառած վնասի չափով, սահմանելով որ քրեական պատասխանատվություն առաջանում է, եթե դրա հետևանքով պատճառվել է հարյուր հազար դրամը գերազանցող գույքային կամ այլ էական վնաս անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը՝

1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

2) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) կատարվել է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված ծառատեսակի, թփի կամ այլ բուսածածկի նկատմամբ,

4) կատարվել է բնության հատուկ պահպանվող տարածքում կամ էկոլոգիական աղետի կամ արտակարգ էկոլոգիական դրության գոտում,

5) կատարվել է հրկիզման կամ հանրավտանգ այլ եղանակով կամ

6) պատճառել է խոշոր չափերի գույքային վնաս:

Առավել խիստ պատասխանատվություն առաջանում է, եթե արարքը

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Քրեական նոր օրենսգրքի 388-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ծառերը, թփերը կամ բուսածածկը անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար, հանցակազմը ձևակերպելով որպես պետական, համայնքային սեփականություն հանդիսացող կամ այլ անձանց պատկանող ծառը, թուփը կամ բուսածածկը ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է կրակի, պայթուցիկ նյութի կամ առավել վտանգի այլ աղբյուրի հետ անզգուշ վերաբերմունքի արդյունքով, եթե դրա հետևանքով անզգուշությամբ պատճառվել է խոշոր չափերի գույքային վնաս անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ



հասարակության կամ պետության օրինական շահերին:

Ըստ էության, այս հանցակազմը արտացոլում է քրեական նախկին օրենսգրքի 297-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմը, այն տարբերությամբ, որ օրենսդիրը որպես հանցանքի առարկա դիտարկել է ոչ թե անտառները, անտառային հողի մեջ չմտնող տնկարկները, այլ պետական, համայնքային սեփականություն հանդիսացող կամ այլ անձանց պատկանող ծառը, թուփը կամ բուսածածկը:

Միաժամանակ, քրեական նախկին օրենսգրքում հանցակազմի առկայության համար անհրաժեշտ էր զգալի չափերով վնասի պատճառումը, մինչդեռ քրեական նոր օրենսգրքով՝ խոշոր չափերի գույքային վնասի:

Քրեական նոր օրենսգրքի 391-րդ և 392-րդ հոդվածները առանձնացված կերպով, սակայն նույնական հատկանիշներով արտացոլել են քրեական նախկին օրենսգրքի 298-րդ հոդվածում տեղ գտած՝ բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմը խախտելու հանցակազմի դիտավորությամբ և անզգուշությամբ դրսևորումները: Լրացուցիչ պարզաբանման կարիք դրանք չունեն:

Քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է նախատեսվել նաև կարմիր գրքում գրանցված անհետացող կամ հազվագյուտ օրգանիզմների բնակության կամ տարածման վայրը ոչնչացնելու, վնասելու կամ փոփոխելու համար: Օրենսդիրը առանձին հանցակազմերով ձևակերպել է քրեական նախկին օրենսգրքի 295-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմը՝ շարադրման ժամանակ նաև հստակեցնելով հանցակազմի բովանդակությունը: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 389-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում կամ կենդանիների Կարմիր գրքում գրանցված անհետացող կամ հազվագյուտ օրգանիզմների բնակության կամ տարածման վայրը ոչնչացնելու, վնասելու կամ փոփոխելու համար, եթե դա հանգեցրել է այդ օրգանիզմների պոպուլյացիայի բնաջնջման (վերացման):

Քրեական նախկին օրենսգրքում այս հանցակազմի ձևակերպումը խնդրահարույց էր՝ քանի որ անհասկանալի էր, թե օրենսդիրը ինչ նկատի ուներ ՀՀ Կարմիր գրքում գրանցված օրգանիզմների բնակության անհետացող կամ հազվագյուտ վայրերի տակ. ենթադրաբար խոսքը վերաբերում էր անհետացող կամ հազվագյուտ օրգանիզմների բնակության կամ տարածման վայրերին, ինչն էլ արտացոլվել է քրեական նոր օրենսգրքում:

## Գլուխ 40

### ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ, ԴՐԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ, ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ, ԽԻՍՏ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԿԱՍ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս գլխում կատարված փոփոխությունները հանգում են հետևյալին:

Նախ՝ քրեական պատասխանատվություն է նախատեսվել ոչ միայն իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների, այլև դրանց պատրաստուկների և համարժեք նյութերի կամ ածանցյալների ապօրինի արտադրելու, պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, տարածելու, գովազդելու կամ դրանք իրացնելու համար, այլև մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ ածանցյալ ապօրինի ձեռք բերելու համար (393-րդ հոդված)<sup>143</sup>, ուստի ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի որոշումը ԵԵԴ/0125/01/09 գործի վերաբերյալ այլևս արդիական չէ: Ըստ այդ որոշման իրացման նպատակը և իրացումը բացակայում են, եթե թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը միջնորդի կողմից ձեռք են բերվել հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ.

ա) սպառողի խնդրանքով և դրամական միջոցներով,

բ) սպառողի անձնական գործածմանը համապատասխան քանակով,

գ) առանց դրանց նկատմամբ տնօրինման իրավունքի,

դ) միջնորդի դիտավորությունն ընդգրկում է ոչ թե իրացումը, այլ ձեռքբերմանն աջակցելը:

Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե կոնկրետ ո՛ր դերակատարի՝ իրացնողի, թե ձեռք բերողի շահերից ելնելով է գործում միջնորդը, նրա գործողությունները պետք է որակվեն որպես իրացման կամ ձեռքբերման հանցակցություն<sup>144</sup>:

Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների, դրանց պատրաստուկների և համարժեք նյութերի կամ ածանցյալների իրացման կապակցությամբ հետաքրքիր է ստուգիչ գնման հարցը: Այն իրականացնում են իրավապահ մարմինները, որը Եվրոդատարանի նախադեպային որոշման համաձայն՝

<sup>143</sup> Թմրամիջոցների հետ կապված գրեթե նույն արարքների համար պատասխանատվություն է նախատեսված նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ: Ընդ որում, այդ երկրները դասակարգվում են մի քանի խմբերի՝ ըստ այս հանցագործության դեմ պայքարի խստության, տե՛ս Шалагин А.Е Зарубежное законодательство в сфере противодействия незаконному обороту наркотиков, «  
Актуальные проблемы экономики и права. 2011. № 4, С. 91

<sup>144</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Անդրանիկ Ասլանյանի գործով 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԵԴ/0125/01/09 որոշումը, 18-րդ կետ:

պետք է իրականացվի դատարանի որոշմամբ և չպետք է թույլ տրվի պրովոկացիա<sup>145</sup>: Պրովոկացիա է համարվում այն իրավիճակը, երբ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուսորների, դրանց պատրաստուկների և համարժեք նյութերի ապօրինի շրջանառությամբ է զբաղվում այն անձը, որը նախկինում դրանով չէր զբաղվել և ներկայումս կատարում է արարքը գուտ իրավապահ մարմնի աշխատակցի դրդմամբ: Սրա հետ կապված, իր տեսագործնական նշանակությամբ առանձնանում է նաև այն իրավիճակների որակումը, երբ հանցավոր շղթայի մյուս կողմում՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառման մասնակից, օպերատիվ աշխատակիցն է կամ ներդրյալ գործակալը: Օրինակ՝ հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակվի թմրամիջոց իրացնողի արարքն այն դեպքում, երբ ՕՀՄ-ի շրջանակներում, որպես թմրամիջոցի գնորդ, հանդես է գալիս ներդրյալ գործակալը: Մասնագիտական գրականության մեջ առաջարկվում է նման իրավիճակները որակել որպես հանցափորձ, կոնկրետ դեպքում՝ թմրամիջոցի ապօրինի իրացման փորձ, քանի որ տվյալ դեպքում թմրամիջոցի շրջանառությունը դադարում է համարվել ապօրինի<sup>146</sup>:

Մինչդեռ, դժվար է համաձայնել այս մոտեցմանը, գրում են «Հանցագործությունների որակման հիմնախնդիրները» աշխատության հեղինակները, քանզի նշված առարկաների ապօրինի իրացման համար ձեռքբերողի գործողությունների իրավաչափությունը դուրս է քննարկվող հանցակազմերի շրջանակից: Տվյալ դեպքում առանցքային է իրացնող սուբյեկտի գործողությունների ոչ իրավաչափ լինելը և իրացում համարվող արարքի ամբողջ ծավալով իրականացումը: Թմրամիջոցի փոխանցումն, ինքնին, իրացում է, իսկ այն ձեռք բերելիս ներդրյալ գործակալի կամ օպերատիվ աշխատակցի իրավաչափ գործողություններն այդ իրացումը չեն դարձնում օրինական, ոչ էլ ընդհատում են իրացում համարվող գործողության ընթացքը: Ուստի, գտնում ենք, որ նման դեպքերում անձի արարքը չավարտված հանցագործություն որակելը արդարացված չէ, քանզի այն պարունակում է ավարտված հանցագործության բոլոր հատկանիշները<sup>147</sup>: Դժվար է համաձայնել այս տեսակետի հետ: Բանն այն է, որ այդ դեպքում վնաս չի պատճառվում հանցագործության օբյեկտին, այսինքն՝ հանցակազմը, ըստ էության, չի իրականացվում, ուստի ճիշտ է արարքը որպես հանցափորձ որակելը:

Հոդվածի դիսպոզիցիայում, որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ, ավելացել է նշված առարկաների գովազդը: Խոսքը յուրաքանչյուր տեսակի գովազդի մասին է՝ տեղեկատվական տեխնոլոգիաներով, համակարգչի միջոցով, ՁԼՄ-ներով, սովորական խոսքով և այլն:

<sup>145</sup> Տե՛ս Եվրոդատարանի 2020 թ. ապրիլի 20 –ի որոշումը ՌԴ դեմ 9-ը ամբաստանյալների գործով, Ошибка! Недопустимый объект гиперссылки.

<sup>146</sup> Տե՛ս, օրինակ՝ Актуальные проблемы уголовного права. Курс лекций / Проспект, 2019, էջ 171:

<sup>147</sup> Տե՛ս Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ., Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, Արդարադատության ակադեմիա հրատ., Եր., 2020, էջ 71:

Նախատեսվել են նոր ծանրացնող հանգամանքներ՝ արարքը շահադիտական դրդումներով կատարելը և զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում կատարելը: Բանն այն է, որ իրացում կարող է համարվել նաև հյուրասիրելը, ներարկելը<sup>148</sup> առանց նյութական օգուտ ստանալու դիտավորության իսկ նյութական օգուտ ստանալու համար իրացումը, այն է՝ շահադիտական դրդումներով արարքը կատարելը, նախատեսվել է որպես ծանրացնող հանգամանք:

Ծանրացնող հանգամանքների մեջ մյուս փոփոխությունը պայմանավորված է ընդհանուր մասում փոփոխությամբ. որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է ոչ թե հանցանքը կազմակերպված խմբի, այլ հանցավոր կազմակերպության կողմից կատարելը:

Նախատեսվել է, որ թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի անալոգի կամ ածանցյալի չափը համապատասխանում է այն թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի չափին, որի անալոգը կամ ածանցյալը հանդիսանում է այդ նյութը:

Նախատեսվել է նաև, որ հողվածի 1-ին մասով նախատեսված առարկաները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է կամովին հանձնած առարկաների ապօրինի շրջանառության համար սույն հողվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:»:

Առանձին հողվածով պատասխանատվություն է նախատեսված թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) պատրաստելու նպատակով պրեկուրսոր ապօրինի արտադրելու, պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, տարածելու, զովագրելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար (394-րդ հողված):

Նախորդ հանցակազմից տարբերվում է նպատակով և առարկայով. այստեղ խոսքը միայն պրեկուրսորի մասին է՝ հանցավորը այս դեպքում նպատակ է հետապնդում թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) պատրաստելու՝ հողվածում նկարագրված արարքները պրեկուրսորի կապակցությամբ կատարելով:

Ծանրացնող հանգամանքներ են՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) շահադիտական դրդումներով,

<sup>148</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Մարտիկ Բոլյանի գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-135/07 որոշումը:

3) խոշոր չափերով:

Առավել ծանրացնող հանգամանքներն են՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) առանձնապես խոշոր չափերով արարքը կատարելը:

Խոշոր կամ առանձնապես խոշոր չափերը սահմանում է Կառավարությունը: Այս ծանրացնող հանգամանքները մեկնաբանության կարիք չունեն:

Քրեական նոր օրենսգրքում նախատեսվել է խրախուսական նորմ համաձայն որի՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված առարկաները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է կամովին հանձնած առարկաների ապօրինի շրջանառության համար սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Որպեսզի հանցավորը ազատվի քրեական պատասխանատվությունից, նա պետք է երկու պայմանն էլ կատարի՝ և՛ նշված առարկաները կամովին հանձնի և՛ հանցագործությունը բացահայտելուն աջակցի: Նշվել է այն, որ եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար: Օրինակ՝ անձը կամովին հանձնել է թմրամիջոցը, հոգեմետ (հոգեներգործուն) նյութը, դրանց պատրաստուկը կամ դրանց համարժեք նյութը և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցել է, բայց կատարել է նաև այլ հանցանք, ասենք հափշտակություն կամ հակել կամ ներգրավել է թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի, դրանց պատրաստուկի կամ դրանց համարժեք նյութի (անալոգի) գործածմանը: Այդ անձը կազատվի ապօրինի շրջանառության համար նախատեսված քրեական պատասխանատվությունից, բայց պատասխանատվության կենթարկվի հափշտակության կամ թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի, դրանց պատրաստուկի կամ դրանց համարժեք նյութի (անալոգի) գործածմանը հակելու կամ ներգրավելու համար:

Նախկինի նման պատասխանատվություն է նախատեսված թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ ածանցյալների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի (396-րդ հոդված) իրականացնելու համար: Ի տարբերություն նախկին օրենսգրքի, նախատեսվել է խրախուսական նորմ, համաձայն որի. սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված առարկաները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նախկինում քրեական պատասխանատվությունից չի

ազատվել նույն կամ քրեական օրենսգրքի 393-րդ կամ 394-րդ հոդվածով (իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութեր, դրանց պրեկուսորներ, այլն դրանց պատրաստուկներ և համարժեք նյութեր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք իրացնելը, մեկ ուրիշի դրդմամբ՝ նրա համար թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի ձեռք բերելը և թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ ածանցյալ պատրաստելու նպատակով պրեկուսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը) նախատեսված հիմքով: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

Նշենք նաև, որ պրեկուսորների զգալի չափերը սահմանում է Կառավարությունը:

Պատասխանատվություն է նախատեսվել թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի կամ դրանց պատրաստուկի կամ դրանց համարժեք նյութի (անալոգի) կամ դրանց ածանցյալի, ինչպես նաև դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութի, սարքավորման կամ գործիքի օրինական շրջանառության կանոն խախտելու համար՝ այն անձի կողմից, որի վրա դրված է եղել այդ կանոնի պահպանության պարտականությունը, եթե կանոնը խախտողի անզուգուշության հետևանքով տեղի է ունեցել տվյալ նյութի, սարքավորման կամ գործիքի հափշտակություն կամ ապօրինի շրջանառություն (395-րդ հոդված): Այս նորմը բլանկետային է, ուստի հանցակազմի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ծանոթ լինել նշված կանոնի հետ: Նախատեսված չեն ծանրացնող հանգամանքներ՝ արարքի կատարումը խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով: Հանցակազմը նյութական է. հանցագործությունն առկա է այն դեպքում, երբ առաջանում են հոդվածում նշված հետևանքները՝ եթե կանոնը խախտողի անզուգուշության հետևանքով տեղի է ունեցել տվյալ նյութի, սարքավորման կամ գործիքի հափշտակություն կամ ապօրինի շրջանառություն: Կարծում ենք, որ ամեն դեպքում նշված առարկաների շրջանառությունը ապօրինի կլինի: Շրջանառություն է համարվում նշված առարկաները տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք իրացնելը: Հափշտակության հասկացությունը տրված է երրորդ հոդվածում:

Պահպանվել է պատասխանատվությունը թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ դրանց ածանցյալներ կամ պրեկուսորներ հափշտակելու կամ շորթելու համար (397-րդ և 398-րդ հոդվածներ), այն տարբերությամբ, որ հափշտակելու կամ

շորթելու համար պատասխանատվությունը նախատեսվել է առանձին հոդվածներով: Բացի այդ, փոխվել են դրանց ծանրացնող հանգամանքերը՝ մասնավորապես բացակայում են չափերը, իսկ շորթման հանցակազմում չկա բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը: Դա նշանակում է, որ եթե շորթում կատարելիս բռնություն գործադրվի, որը կհանգեցնի առողջությանը ցանկացած աստիճանի վնաս պատճառելուն՝ արարքը պետք է որակել համակցությամբ՝ ոչ միայն թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ պրեկուրսորներ շորթել, այլ նաև մարդու դեմ ուղղված կոնկրետ հանցանք: Թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ ածանցյալներ կամ պրեկուրսորներ հափշտակելու դեպքում բռնություն գործադրելիս, արարքը կորակվի համակցությամբ միայն առողջությանը ծանրացնող հանգամանքներով ծանր վնաս պատճառելու դեպքում: Բնականաբար համակցությամբ կորակվեն տուժողի սպանության դեպքերը:

Պետք է նշել, որ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) կամ ածանցյալներ կամ պրեկուրսորներ հափշտակելն առկա կլինի նույնիսկ հատուցմամբ կատարելու դեպքում, այլ կերպ ասած, հափշտակության՝ երրորդ հոդվածում տրված հասկացությունն այս դեպքում կիրառելի չէ:

Պատասխանատվություն է սահմանված թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի, դրանց պատրաստուկի, դրանց համարժեք նյութի (անալոգ) կամ դրանց ածանցյալների կամ դրանց պրեկուրսորի կամ դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութի, սարքավորման կամ գործիքի կամ մշակումն արգելված՝ թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութ պարունակող բույսի մաքսանենգության համար (399-րդ հոդված):

Համաձայն օրենսգրքի՝ թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի, դրանց պատրաստուկի, դրանց համարժեք նյութի (անալոգ) կամ ածանցյալների կամ դրանց պրեկուրսորի կամ դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութի, սարքավորման կամ գործիքի կամ մշակումն արգելված՝ թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութ պարունակող բույսի մաքսանենգությունը՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով դրանք ապօրինի տեղափոխելն է, որը կատարվել է առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով, կամ դրանց մասին հավաստի տեղեկությունը սահմանված կարգով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու կամ դրանց տեղափոխման

համար սահմանված կանոնը, այդ թվում՝ արգելքը կամ սահմանափակումը խախտելու կամ մաքսային կամ այլ փաստաթուղթը խաբեությամբ օգտագործելու միջոցով: Սա հանրահայտ դրույթ է և մեկնաբանության կարիք չունի:

Բացի այդ, նախատեսվել է նոր ծանրացնող հանգամանք՝ շանտաժի միջոցով, որի հասկացությունը տրված է երրորդ հոդվածում: Չի նախատեսվել նախկին օրենսգրքում առկա այնպիսի ծանրացնող հանգամանք, ինչպիսին է մաքսային կամ սահմանային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելը: Բռնություն գործադրելու դեպքում, եթե դա հանգեցնի առողջությանը ցանկացած աստիճանի վնաս պատճառելուն՝ արարքը պետք է որակել համակցությամբ՝ ոչ միայն թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգ) կամ ածանցյալների կամ պրեկուրսորների մաքսանենգություն, այլ նաև մարդու դեմ ուղղված կոնկրետ հանցանք: Բնականաբար համակցությամբ կորակվեն տուժողի սպանության դեպքերը:

Պահպանվել է պատասխանատվությունը թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց արտադրության կամ պատրաստման համար պրեկուրսոր ստանալու իրավունք տվող կեղծ փաստաթուղթ պատրաստելու, օգտագործելու կամ իրացնելու համար (400-րդ հոդված): Ավելացել է մեկ ծանրացնող հանգամանք՝ արարքի կատարումը շահադիտական դրդումներով:

Նորից նախատեսվել է պատասխանատվություն իրավասու անձի կողմից թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ ստանալու իրավունք տվող դեղատոմս կամ այլ փաստաթուղթ ապօրինի տրամադրելու համար (401-րդ հոդված), այն փոփոխությամբ, որ հանցակազմի հատկանիշ չի նախատեսվել շահադիտական կամ այլ անձնական դրդումը. արարքը կատարելու շարժառիթները որևէ նշանակություն չունեն:

Փոփոխության են ենթարկվել թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի, դրանց պատրաստուկի կամ դրանց համարժեք նյութի (անալոգի) ) կամ ածանցյալի գործածմանը հակելու կամ ներգրավելու (402-րդ հոդված) ծանրացնող հանգամանքները: Քրեական նոր օրենսգրքով նախատեսվել են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝

- 1) անչափահասի նկատմամբ,
- 2) շահադիտական դրդումներով,
- 3) բռնություն գործադրելու սպառնալիքով,
- 4) խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով,
- 5) հանցագործությունից տուժած անձի նկատմամբ ունեցած իշխանությունը, հեղինակությունը,
- 6) հանցագործությունից տուժած անձի վիճակի խոցելիությունը կամ նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով:



Առավել ծանրացնող հանգամանքներն են՝

1) բռնություն գործադրելով կամ

2) անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ նրա առողջությանը ծանր վնասի պատճառում:

Էլ առավել ծանրացնող հանգամանք է հանցավոր կազմակերպության կողմից կատարելը:

Անչափահասի նկատմամբ և շահադիտական դրդումներով ծանրացնող հանգամանքները մեկնաբանության կարիք չունեն: Ինչ վերաբերում է բռնություն գործադրելու սպառնալիքին, ապա խոսքը ինչպես կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր, այնպես էլ վտանգավոր բռնության մասին է: Եթե բռնություն գործադրելու հետևանքով տուժողի առողջությանը վնաս է պատճառվում, ապա արարքը համակցությամբ չի որակվի, որովհետև այս հոդվածի սանկցիան ավելի խիստ է, քան առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառումը, բացառությամբ առավել ծանրացնող հանգամանքներով առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերի. նման դեպքում արարքը կորակվի համակցությամբ: Բնականաբար համակցությամբ կորակվեն տուժողի սպանության դեպքերը: Ինչ վերաբերում է անզգուշությամբ հանցագործությունից տուժած անձի մահ կամ նրա առողջությանը ծանր վնաս պատճառելու ծանրացնող հանգամանքին, ապա անկախ նրանից տուժողը կօգտագործի նշվածը, թե ոչ, հանցավորը պատասխանատուության կենթարկվի այս ծանրացնող հանգամանքով, եթե հակելու կամ ներգրավելու համար այնպիսի արարքներ է կատարել, որոնք կամ որը անզգուշությամբ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի մահվան կամ նրա առողջությանը ծանր վնասի պատճառման: Այլ կերպ ասած, կա պատճառական կապ հանցավորի արարքների և նշված հետևանքների միջև: Մնացած ծանրացնող հանգամանքները մեկնաբանության կարիք չունեն:

Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելու կամ պահելու փոխարեն նախատեսվել է նույնաբովանդակ մեկ այլ հանցակազմ՝ Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ ածանցյալների գործածմանը նպաստելը (403-րդ հոդված)՝ թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ) կամ ածանցյալ գործածելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ հանրային հաստատությունը նույն նպատակով օգտագործելը կամ թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ գործածելու համար բնակարան, շինություն, ավտոմեքենա կամ այլ կացարան տրամադրելը: Ըստ էության սա որջեր կազմակերպելը կամ պահելն է և հանցակազմի օբյեկտիվ կողմի

բովանդակությունը նախկինում բացահայտվել է:

Ավելացել են այս հանցակազմի ծանրացնող հանգամանքները. նոր օրենսգրքով նախատեսված են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3) ձերբակալված կամ կալանավորված անձանց պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում,

4) գործատում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում կամ

5) ուսումնական հաստատությունում կամ դրա հարակից տարածքում:

Առավել ծանրացնող հանգամանք է առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից:

Նշված ծանրացնող հանգամանքները հանրահայտ են և մեկնաբանության կարիք չունեն:

Պահպանվել է պատասխանատվությունը շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելու կամ աճեցնելու համար (404-րդ հոդված): Սրա հետ կապված չի պահպանում արդիականությունը ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումը<sup>149</sup>: Բանն այն է, որ հոդվածի դիսպոզիցիայից հանվել է «ապօրինի» հասկացությունը: Օրենսդիրը գնացել է հեշտ ճանապարհով, այն հիմնավորմամբ, որ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելն ինքնին վտանգավոր և անօրինական է: Չնայած կարծում ենք, որ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը կարող են նաև օրինական լինել, ուստի ավելի ճիշտ կլիներ օրենքով սահմանել դրանց օրինական ցանելու կամ աճեցնելու դեպքերը:

Նորից նախատեսվել է պատասխանատվություն խիստ ներգործող կամ թունավոր նյութերի իրացնելու նպատակով ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու համար (405-րդ հոդված), ընդ որում, նոր ծանրացնող հանգամանքներ նախատեսելով: Այդպիսի ծանրացնող հանգամանքներ են՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) ձերբակալված կամ կալանավորված անձանց պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում,

<sup>149</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի փետրվարի 27-ին կայացված թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշում:

4) գորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում կամ

5) ուսումնական հաստատությունում կամ դրա հարակից տարածքում:

Առավել ծանրացնող հանգամանք է առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից:

Այս ծանրացնող հանգամանքները մեկնաբանության կարիք չունեն: Միայն խոշոր չափերի մասին նշենք, որ չնայած հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով «Խոշոր չափը» նախատեսված է որպես ընդհանուր ծանրացնող հանգամանք, սակայն նույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ այն վերաբերում է միայն խիստ ներգործող նյութերին:

Պատասխանատվություն է նախատեսված թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ չհամարվող խիստ ներգործող կամ թունավոր նյութերի, ինչպես նաև դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութերի, սարքավորումների կամ գործիքների օրինական շրջանառության կանոնները խախտելու համար (406-րդ հոդված):

Այս նորմը նույնպես բլանկետային է. անհրաժեշտ է այդ կանոնների իմացությունը:

Սրանով այս գլուխը ավարտվում է: Մյուս հանցակազմերը, որոնք գտնվում էին այս գլխում, ներկայումս նախատեսված են հաջորդ՝ «Բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործությունները» գլխում:

Պետք է նշել, որ արտասահմանյան բոլոր երկրների քրեական օրենսդրություններում պատասխանատվություն է նախատեսված համանման արարքների համար, իհարկե որոշ երկրներում բավականին լիբերալ վերաբերմունքով (Հոլանդիա, Իսպանիա և այլն)<sup>150</sup>:

---

<sup>150</sup> St' u Afamgotov Э.М. Уголовная ответственность за незаконный оборот наркотиков в странах ближнего и дальнего зарубежья. ОБЩЕСТВО И ПРАВО 2007 №4(18), էջ 268-271:

## Գլուխ 41

### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրեական նոր օրենսգրքում առանձին գլխով նախատեսվել են բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործությունները, որոնք քրեական նախկին օրենսգրքում տեղ էին գտել բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլխում:

Քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում բժկական օգնություն և սպասարկում ապօրինի իրականացնելու համար, այն է՝ առանց օրենքով նախատեսված հատուկ թույլտվության (լիցենզիա) բժկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար, այնպես էլ ապացուցողական բժկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ կամ համապատասխան բժկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժկական գործառույթ իրականացնելու համար, եթե դա անզգուշությամբ միջին կամ թեթև ծանրության վնաս է պատճառել մարդու առողջությանը: Ընդ որում, օրենսդիրն առավել խիստ պատասխանատվություն է նախատեսում, եթե այդ արարքների հետևանքով անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Ըստ էության, քննարկվող հանցակազմը մասնակիորեն արտացոլում է քրեական նախկին օրենսգրքի 280-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի հատկանիշները: Քրեական նախկին օրենսգրքում պատասխանատվություն առաջանում էր առանց պետական գրանցման, հաշվառման կամ լիցենզիայի մասնավոր բժկական կամ դեղագործական գործունեությամբ զբաղվելու համար, եթե դա անզգուշությամբ վնաս է պատճառել մարդու առողջությանը, մինչդեռ քրեական նոր օրենսգրքը նախատեսում է պատասխանատվություն ապացուցողական բժկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ կամ համապատասխան բժկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժկական գործառույթ իրականացնելու համար: Այսինքն՝ հնարավոր է անձը լինի լիցենզավորված բժիշկ, սակայն բժկական գործառույթներն իրականացնի ապացուցողական բժկության սկզբունքների վրա չհիմնված վարքագծով կամ մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ: Հետևաբար՝ հանցագործության սուբյեկտ կարող է լինել ինչպես բժկական կրթություն ունեցող, այնպես էլ չունեցող անձը:

Քրեական նոր օրենսգրքի 408-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում

դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների ապօրինի շրջանառության համար, այն է՝ առանց օրենքով նախատեսված պետական գրանցման կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված, դադարեցված կամ ուժը կորցրած ճանաչելու պայմաններում, առանց հաշվառման կամ հատուկ թույլտվության (լիցենզիա) դեղ, դեղանյութ, դեղաբուսական հումք, օժանդակ նյութ, բժշկական արտադրատեսակ, դրանց մասեր կամ հետազոտվող դեղագործական արտադրանք իրացման նպատակով պատրաստելը, արտադրելը, պահելը, փոխադրելը, առաքելը, ներմուծելը, արտահանելը, մատակարարելը, մատակարարելու առաջարկը, շուկա հանելը կամ դրանք իրացնելը:

Քննարկվող հանցակազմը արտացոլում է 2011 թ.-ի հոկտեմբերի 28-ին ընդունված «Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին» ԵՄ կոնվենցիայի պահանջները<sup>151</sup>:

Հանցակազմը ձևական է, ավարտված է համարվում հանցագործության առարկան իրացման նպատակով պատրաստելու, արտադրելու, պահելու, փոխադրելու, առաքելու, ներմուծելու, արտահանելու, մատակարարելու, մատակարարելու առաջարկի, շուկա հանելու կամ դրանք իրացնելու պահից:

Սուբյեկտիվ կողմից կատարվում է դիտավորությամբ, ընդ որում՝ պարտադիր է իրացման նպատակը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը՝  
1) անզգուշությամբ մարդու առողջությանը պատճառել է միջին կամ թեթև ծանրության վնաս,

2) կատարվել է հանցավորի մասնագիտական կամ ծառայողական պարտականությունների կատարման կամ որպես արտադրող կամ մատակարար հանդես գալու կապակցությամբ ձևավորված վստահությունը չարաշահելով կամ

3) դրսևորվել է այնպիսի միջոցներով, որոնք կարող են ապահովել զանգվածային մատակարարում, դրա առաջարկ կամ իրացում՝

Առավել խիստ պարտասխանատվություն առաջանում է, եթե քննարկվող արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Քրեական նոր օրենսգրքի 409-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում իրացման նպատակով կեղծ ակոհոլային խմիչքների, մանկական սննդի, կենսաբանական ակտիվ հավելումների, դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական

---

<sup>151</sup> Տես, Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին» ԵՄ կոնվենցիա, 28.10.2011:

հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների շրջանառության կամ դրանք իրացնելու համար:

Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում իրացման նպատակով կեղծ ակտիվային խմիչք, մանկական սնունդ, կենսաբանական ակտիվ հավելում, դեղ, դեղանյութ, դեղաբուսական հումք, օժանդակ նյութ, բժշկական արտադրատեսակ, դրանց մասեր կամ հետազոտվող դեղագործական արտադրանք պատրաստելու, արտադրելու, պահելու, փոխադրելու, առաքելու, ներմուծելու, արտահանելու, մատակարարելու, մատակարարելու առաջարկի, շուկա հանելու կամ դրանք իրացնելու համար:

Այս հանցակազմը իր մեջ ներկայացնում է քրեական նախկին օրենսգրքի 207-րդ (Կեղծ գինի կամ կեղծ օղի կամ ակտիվային կեղծ այլ խմիչք իրացման նպատակով պատրաստելը կամ իրացնելը), 280-րդ (Մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ ապօրինաբար զբաղվելը, կեղծ դեղեր պատրաստելը կամ արտադրելը կամ իրացնելը), 280.2-րդ (Ապօրինաբար բժշկական արտադրատեսակ կամ բժշկական կեղծ արտադրատեսակ արտադրելը (պատրաստելը) կամ իրացնելը կամ կիրառելը) հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշները:

Օրենսդիրը հստակեցրել է հանցագործության առարկան՝ կեղծ ակտիվային խմիչք, մանկական սնունդ, կենսաբանական ակտիվ հավելում, դեղ, դեղանյութ, դեղաբուսական հումք, օժանդակ նյութ, բժշկական արտադրատեսակ, դրանց մասեր կամ հետազոտվող դեղագործական արտադրանք:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսևորվում է դիտավորությամբ, ընդ որում հանցակազմի պարտադիր հատկանիշ է իրացման նպատակը: Սուբյեկտ կարող է լինել թե՛ 16 տարին լրացած ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձը:

Օբյեկտիվ կողմից հանցանքը դրսևորվում է հանցագործության առարկան պատրաստելու, արտադրելու, պահելու, փոխադրելու, առաքելու, ներմուծելու, արտահանելու, մատակարարելու, մատակարարելու առաջարկի, շուկա հանելու կամ դրանք իրացնելու տարբերակով: հանցակազմը ձևական է և ավարտված է համարվում նշված արարքներից որևէ մեկը կատարելու պահից:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը՝

1) անզգուշությամբ մարդու առողջությանը պատճառել է միջին կամ թեթև ծանրության վնաս,

2) կատարվել է հանցավորի մասնագիտական, ծառայողական պարտականությունների կատարման կամ որպես արտադրող կամ մատակարար հանդես գալու կապակցությամբ ձևավորված վստահությունը չարաշահելով կամ

3) դրսևորվել է այնպիսի միջոցներով, որոնք կարող են ապահովել զանգվածային

մատակարարում, դրա առաջարկ կամ իրացում:

Առավել ծանրացնող հանգամանք է նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Քրեական նոր օրենսգրքի 410-րդ և 411-րդ հոդվածները պատասխանատվություն են սահմանում կեղծ ակոնհոլային խմիչքի, մանկական սննդի, կենսաբանական ակտիվ հավելման, դեղի, դեղանյութի, դեղաբուսական հումքի, օժանդակ նյութի, բժշկական արտադրատեսակի, դրանց մասերի կամ հետազոտվող դեղագործական արտադրանքի հավաստող, արտադրությանը, տեղաբաշխմանը կամ մատակարարմանը վերաբերող կեղծ փաստաթուղթ պատրաստելու կամ օգտագործելու, ինչպես նաև դրանց վերաբերող իրական փաստաթուղթն ապօրինի օգտագործելու համար:

Եթե 410-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկան կեղծ փաստաթուղթն է, ապա 411-րդ հոդվածը անդրադառնում է իրական փաստաթղթին, որն էլ ապօրինաբար օգտագործվում է:

Սուբյեկտիվ կողմից հանցանքները դրսևորվում են միմիայն դիտավորությամբ:

Քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված նաև իրացնելու նպատակով մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումք կամ ապրանք պատրաստելու, պահելու, փոխադրելու, առաքելու, ձեռք բերելու կամ դրանք իրացնելու կամ այդպիսի աշխատանք կատարելու կամ ծառայություն մատուցելու համար, եթե այդ արարքն անզգուշությամբ մարդու առողջությանը միջին կամ թեթև ծանրության վնաս է պատճառել:

Քննարկվող հանցակազմի առարկա են մարդու կյանքի կամ առողջության անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումքը, ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը:

Հանցանքը նյութական է, պատասխանատվություն կարող է առաջանալ միայն, եթե այդ արարքն անզգուշությամբ մարդու առողջությանը միջին կամ թեթև ծանրության վնաս է պատճառել:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը՝

1) կատարվել է փոքրահասակների համար նախատեսված հումքի, ապրանքի, աշխատանքի կամ ծառայության կապակցությամբ կամ

2) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը ևս պատասխանատվություն է սահմանում սանիտարահակահամաճարակային կանոնները խախտելու համար, այն է՝ սանիտարական կանոն կամ հիգիենիկ նորմատիվ խախտելն այն անձի կողմից, որը պատասխանատու է այդ կանոնի կամ նորմատիվի պահպանման համար, որն անզգուշությամբ մարդու առողջությանը միջին

կամ թեթև ծանրության վնաս է պատճառել: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում հստակեցվել է հանցագործության սուբյեկտը՝ այն անձը, որը պատասխանատու է սանիտարական կանոնի կամ հիգիենիկ նորմատիվի պահպանման համար:

Տարբեր են նաև հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքները. քրեական նախկին օրենսգրքով պատասխանատվություն առաջանում էր, եթե սանիտարահակահամաճարակային կանոնների խախտումը հանգեցնում էր մարդկանց զանգվածային հիվանդացման կամ թունավորման, մինչդեռ նոր կանոնակարգմամբ որպես հետևանքներ են դիտվում անզգուշությամբ մարդու առողջությանը միջին կամ թեթև ծանրության վնաս պատճառելը:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են, արարքը, որը՝

1) անզգուշությամբ մարդու առողջությանը պատճառել է ծանր վնաս կամ

2) անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց հիվանդացում կամ թունավորում:

Առավել խիստ պատասխանատվություն առաջանում է, եթե այդ արարքը անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Քրեական նոր օրենսգրքի 414-րդ հոդվածը նույնությամբ կրկնում է քրեական նախկին օրենսգրքի 277.1-րդ հոդվածը, 415-րդ հոդվածը՝ նախկին օրենսգրքի 277.2-րդ հոդվածը, իսկ 417-րդ հոդվածը՝ քրեական նախկին օրենսգրքի 280.1-րդ հոդվածը, հետևաբար դրանց այս ուղեցույցի շրջանակներում անդրադարձ չի արվի: Որոշակի խմբագրական փոփոխություններով՝ քրեական նոր օրենսգրքի 416-րդ հոդվածը կրկնում է քրեական նախկին օրենսգրքի 278-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմը, հետևաբար այն ևս առանձին չի քննարկվի:



ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որոշ փոփոխությունների են ենթարկվել այս գլխում գտնվող հանցակազմերը:

Մասնավորապես, պետական դավաճանության (418-րդ հոդված) հանցակազմում, բացի օտարերկրյա պետությունից, օտարերկրյա կազմակերպությունից, նախատեսված է նաև միջազգային կազմակերպությանը պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հանձնելը կամ այդ տեղեկությանը նշված անձանց ծանոթանալու համար պայման ստեղծելը: Բանն այն է, որ միջազգային կազմակերպությունը որոշ դեպքերում կարող է գործել ՀՀ շահերի դեմ: Խրախուսական նորմը, ըստ որի պետական դավաճանություն կամ լրտեսություն կատարած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա, իշխանության մարմիններին կամովին հայտնելով կամ այլ ձևով, օժանդակել է հետագա վնասը կանխելուն, եթե այդ վնասը կանխվել է և եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում, նախատեսվել է ոչ թե պետական դավաճանության, այլ լրտեսության հոդվածում, որով, ըստ էության, ոչինչ չի փոխվել: Միայն վնասի կանխումը փաստորեն դարձել է պարտադիր:

Չի նախատեսվել քրեական պատասխանատվությունը պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության համար, որը նախատեսվել է որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն, այն է՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ:

Չի նախատեսվել վնասարարության հանցակազմը: Օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ այդ հանցակազմը խորհրդային ժամանակների մնացուկ է, բայց ամենակարևորը, որ դա հնարավոր չէ հստակ սահմանազատել պաշտոնեական լիազորությունները չարաշահելուց: Նման արարքներ կատարելը, օրինակ, պաշտոնատար անձի կողմից, կհանգեցնի պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար քրեական պատասխանատվության իսկ սովորական քաղաքացու կողմից կազմակերպությունների բնականոն աշխատանքին խոչընդոտելու դեպքում՝ այլ հանցանքի համար: Չնայած պետք է նշել, որ որոշ օտարերկրյա պետությունների քրեական օրենսդրություններում համանման հանցակազմ առկա է: Օրինակ՝ ԳԴՀ քրեական օրենսգրքի 88 պարագրաֆը պատասխանատվություն է սահմանում հակասահմանադրական վնասարարության համար<sup>152</sup>:

Մյուս նորամուծությունն այն է, որ պատասխանատվություն է նախատեսված

<sup>152</sup> St' u YK ФПГ [http://rawunsch.de/images/Ugolovnyiyi\\_Kodeks.pdf](http://rawunsch.de/images/Ugolovnyiyi_Kodeks.pdf).

պետական գաղտնիք պարունակող փաստաթուղթ կամ պետական գաղտնիքի մասին տեղեկություն պարունակող այլ առարկա ապօրինի ոչնչացնելու կամ վնասելու կամ պետական գաղտնիք պարունակող համակարգչային տվյալն ապօրինի ոչնչացնելու, վնասելու կամ ուղեփակելու համար (մեկուսացնելը), որն առաջացրել է այդ տվյալի կամ առարկայի կորուստ (429-րդ հոդված): Ոչնչացնելու, վնասելու, ուղեփակելու հասկացություններն արդեն մեկնաբանված են: Սա դիտավորությամբ կատարվող հանցագործություն է և տվյալի կամ առարկայի ոչնչացման, վնասման նկատմամբ պետք է դրսևորվի դիտավորություն:

Պատասխանատվություն է նախատեսված նաև պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի, առարկաների կամ համակարգչային տվյալների հետ վարվելու կանոնները խախտելու համար՝ պետական գաղտնիք պարունակող փաստաթղթի, այլ առարկայի կամ համակարգչային տվյալի հետ վարվելու կանոն խախտելն այն անձի կողմից, որը պարտավոր էր պահպանել այդ կանոնը, եթե դա անզգուշությամբ առաջացրել է այդ փաստաթղթի, այլ առարկայի կամ համակարգչային տվյալի կորուստ (430-րդ հոդված): Հանցակազմը բլանկետային է. անհրաժեշտ է բացահայտել պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի, առարկաների կամ համակարգչային տվյալների հետ վարվելու կանոնների բովանդակությունը: Հարկավոր է նաև ապացուցել պատճառական կապի առկայությունը նշված կանոնի և նշված առարկաների կորստի միջև: Սա անզգուշությամբ կատարվող հանցագործություն է, հետևանքի նկատմամբ դրսևորվում է անզգուշություն, թեև կանոնը խախտելը կարող է նաև գիտակցաբար կատարվել: Այս և նախորդ հանցակազմի համար, որպես ծանրացնող հանգամանք, նախատեսված է առանձնապես խոշոր չափերի գույքային վնասը կամ այլ ծանր հետևանքներն անզգուշությամբ առաջացնելը: Առանձնապես խոշոր չափերի գույքային վնասի հասկացությունը տրված է երրորդ հոդվածում: Այլ ծանր հետևանքներ են մասնավորապես փաստաթղթի, այլ առարկայի կամ համակարգչային տվյալի հայտնվելը օտարերկրյա պետության, օտարերկրյա կազմակերպության, միջազգային կազմակերպության գործակալների ձեռքում, պետության ռազմական քաղաքականությունը հարկադրված փոխելը, դրա համար ծախսեր կատարելը և այլն:

Պահպանվել է պատասխանատվությունը մի քանի նոր հանցակազմերի համար, որոնք առկա էին նաև նախկին օրենսգրքում: Մասնավորապես՝

1) Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում սահմանված միջոցառումը կամ ժամանակավոր սահմանափակումը խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք (431-րդ հոդված):

Այլ ծանր հետևանքներ կարող են համարվել մեկից ավելի անձանց առողջությանը անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը: Ամեն դեպքում սա գնահատողական

հասկացություն է և յուրաքանչյուր դեպքում որոշվում է իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: Սա անզգուշությամբ կատարվող հանցագործություն է, ոչ թե մեղքի երկու ձևով կատարվող, որովհետև ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում սահմանված միջոցառումը կամ ժամանակավոր սահմանափակումը խախտելը ինքնին հանցանք չէ, իսկ հետևանքի նկատմամբ դրսևորվում է անզգուշություն, թեև կանոնը խախտելը կարող է նաև գիտակցաբար կատարվել:

2) Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների և ուժերի գործունեությունը խոչընդոտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք (432-րդ հոդված): Այլ ծանր հետևանքի բովանդակությունը նույնն է, ինչ նախորդ դեպքում, բացի դրանցից կարելի է ավելացնել իրավական ռեժիմն ապահովող մարմինների և ուժերի գործունեությունը կազմալուծելը, նրանց առաջադրանքը խափանելը: Սա նույնպես անզգուշությամբ կատարվող հանցագործություն է, հետևանքի նկատմամբ դրսևորվում է անզգուշություն, թեև արարքը կարող է նաև գիտակցաբար կատարվել:

3) Ռազմական դրության իրավական ռեժիմի կանոնի խախտման արդյունքով կասեցված տնտեսական գործունեության իրականացումը շարունակելը (433-րդ հոդված):

4) Ռազմական դրության ընթացքում տեղեկության հրապարակման կամ տարածման կանոն խախտելը, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (434-րդ հոդված): Հանցակազմը նյութական է. հանցագործությունն ավարտված է համարվում անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս պատճառելու դեպքում: Հանցակազմի ձևակերպումից երևում է, որ սա դիտավորությամբ կատարվող հանցագործություն է. վնասի նկատմամբ դրսևորվում է դիտավորություն, թեև կարծում ենք, որ ճիշտ կլինեք էական վնասի նկատմամբ անզգուշություն նախատեսելը: Էական վնասը նույնպես գնահատողական հասկացություն է և յուրաքանչյուր դեպքում որոշվում է իրավակիրառողի կողմից՝ հաշվի առնելով գործի հանգամանքները: Էական վնաս կարող են համարվել անձնական գաղտնիք համարվող տեղեկությունների հրապարակումը կամ տարածումը, մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարումը, բնակչության շրջանում խուճապ առաջացնելը, զանգվածային անկարգությունների հանգեցնելը, առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը և այլն:

Նույնությամբ պահպանվել է պատասխանատվությունը իշխանությունը յուրացնելու

(419-րդ հոդված), սահմանադրական կարգը տապալելու (420-րդ հոդված), տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողությունների (421-րդ հոդված), իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերի (422-րդ հոդված), Հանրապետության նախագահին, Ազգային ժողովին, Կառավարությանը կամ Մահմանադրական դատարանին պարտադրելու (423-րդ հոդված), լրտեսության (424-րդ հոդված), դիվերսիայի (425-րդ հոդված), դիտավորությամբ և անզգուշությամբ պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հրապարակելու ( 427-րդ և 428-րդ հոդվածներ) համար:

Համանման հանցակազմեր են նախատեսված օտարերկրյա պետությունների քրեական օրենսդրություններով<sup>153</sup>, բացառությամբ սահմանադրական կարգը տապալելու և նշված չորս հանցակազմերի՝ 1. Ռեզմական դրության իրավական ռեժիմի ընթացքում սահմանված միջոցառումը կամ ժամանակավոր սահմանափակումը խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք 2. Ռեզմական դրության իրավական ռեժիմն ապահովող մարմինների և ուժերի գործունեությունը խոչընդոտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք, 3. Ռեզմական դրության իրավական ռեժիմի կանոնի խախտման արդյունքով կասեցված տնտեսական գործունեության իրականացումը շարունակելը, 4. Ռեզմական դրության ընթացքում տեղեկության հրապարակման կամ տարածման կանոն խախտելը, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

---

<sup>153</sup> Ст' у Уголовное право зарубежных стран. Общая и Особенная части., /под редакцией Козочкина И. Д./ М. 2010.

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես և քրեական նախկին, այնպես էլ նոր օրենսգրքում առանձին գլխով նախատեսված են հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները:

Հիմնականում, քննարկվող գլխում տեղ են գտել նույն հանցակազմերը, ինչ և քրեական նախկին օրենսգրքում:

Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունների առումով քրեական նոր օրենսգրքում տեղ գտած առանցքային փոփոխությունը վերաբերում է պաշտոնատար անձի հասկացության վերանայմանը, ինչին առավել մանրամասն անդրադարձ կատարվել է սույն ուղեցույցի շրջանակներում՝ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասում տեղ գտած հասկացությունները քննարկելիս: Մասնավորապես՝ պաշտոնատար անձի հասկացությունը ենթարկվել է այնպիսի փոփոխության, որ իր մեջ ներառում է ինչպես քրեական նախկին օրենսգրքի 308-րդ հոդվածում տեղ գտած պաշտոնատար անձի, այնպես էլ՝ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի հասկացությունը:

Այդ փոփոխությունն էլ հիմք է հանդիսացել քրեական նոր օրենսգրքում, մեկ հանցակազմի շրջանակներում՝ քրեական նախկին օրենսգրքով որպես ինքնուրույն հանցակազմեր դիտարկվող արարքների միավորմանը: Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքում կաշառք ստանալու հանցակազմը իր մեջ ներառում է քրեական նախկին օրենսգրքի 311-րդ և 311.1-րդ հոդվածներով նախատեսված արարքները, կաշառք տալը՝ համապատասխանաբար՝ 312-րդ և 312.1-րդ հոդվածներով նախատեսված արարքները:

Քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվել ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ կաշառակերության համար: Ինքնուրույն պատասխանատվություն է նախատեսվել նաև կաշառքի միջնորդության համար:

Քրեական նոր օրենսգրքում պասիվ կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, բնորոշվում է որպես պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, կաշառք տալու առաջարկ ներկայացնելը կամ կաշառք տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

Ներկայացված ձևակերպումը գրեթե նույնությամբ կրկնում է քրեական նախկին օրենսգրքի 311-րդ հոդվածում արտացոլված հանցակազմի հատկանիշները:

Հիմնական տարբերությունները հանգում են հետևյալին՝

- քրեական նոր օրենսգրքում հստակեցվել է կաշառքի առարկան, որը ներառում է նաև վճարային այլ գործիքները և ծառայությունը,

- օբյեկտիվ կողմի արարքների շարքում ավելացել է կաշառք տալու առաջարկ ներկայացնելը,

- պաշտոնատար անձի կողմից դրսևորվող վարքագծի առումով հստակեցվել է, որ առանց ծանրացնող հանգամանքի հանցակազմի հատկանիշ է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելը կամ չկատարելը: Քրեական նախկին օրենսգրքով նախատեսված «կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին իր պաշտոնական դիրքն օգտագործելով գործողություն կատարելուն կամ չկատարելուն նպաստելը, ծառայության գծով հովանավորչությունը և թողտվությունը» դուրս են մնացել հիմնական հանցակազմի բնորոշումից: Ավելին՝ քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանք է դիտվում կաշառք ստանալը՝ կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար:

Կաշառք ստանալու ծանրացնող հանգամանքներ են դիտվում՝ կաշառք ստանալը՝

- 1) մի խումբ պաշտոնատար անձանց կողմից,

- 2) խոշոր չափերով,

- 3) կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար կամ

- 4) անձի իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը ոսնահարելու սպառնալիքով:

Առավել ծանրացնող են՝ կաշառք ստանալը, որը կատարվել է՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից,

- 2) դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից կամ

- 3) առանձնապես խոշոր չափերով:

Ակնհայտ է, որ որոշակի փոփոխության ենթարկվել են ծանրացնող հանգամանքները: Այդ առումով ուշադրության է արժանի այն, որ եթե նախկինում ծանրացնող հանգամանքով հանցակազմ էր դիտվում կաշառք ստանալը՝ դատավորի կողմից, ապա քրեական նոր օրենսգրքով՝ կաշառք ստանալը դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից:

Քրեական նոր օրենսգրքով հստակեցվել է նաև կաշառք տալու հանցակազմը: Հիմնական փոփոխությունը վերաբերում է կաշառքի առարկային, ինչն արդեն

մատնանշվել է:

Այս հանցակազմի հետ կապված առավել հիմնարար փոփոխությունը վերաբերում է կաշառք տալու պարագայում խրախուսական նորմի վերացմանը: Քրեական նախկին օրենսգիրքը հնարավոր էր համարում խրախուսական նորմի պարագայում կաշառք տվողին ազատել քրեական պատասխանատվությունից, մինչդեռ քրեական նոր օրենսգիրքը նման հիմք չի նախատեսում: Կաշառք տվող անձը քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել միայն քրեական նոր օրենսգրքի Ընդհանուր մասում տեղ գտած ինստիտուտների ուժով:

Քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում նաև կաշառքի միջնորդության համար, այն է՝ կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելը, կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը կամ այն փոխանցելու խոստում տալը կամ փոխանցելը կամ կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը:

Քննարկվող հանցակազմը լրացրեց այն բացը, որը առկա էր քրեական նախկին օրենսգրքում: Մասնավորապես՝ քրեական նախկին օրենսգրքում նախատեսված չէր պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու միջնորդությունը, իսկ քրեական նոր օրենսգրքում կատարված փոփոխությունը այդ հարցի լուծումն իրականացրեց:

Քրեական նոր օրենսգրքում կաշառքի միջնորդության հանցակազմն առավել հստակ է ձևակերպված՝ ներառելով կաշառքի շուրջ կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության գալուն նպաստելը, կաշառք տվողի և ստացողի միջև համաձայնության առկայության դեպքում կաշառքի առարկան պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին փոխանցելու նախաձեռնություն դրսևորելը կամ այն փոխանցելու խոստում տալը կամ փոխանցելը կամ կաշառք տվողի և ստացողի միջև առկա համաձայնության իրականացմանն այլ կերպ նպաստելը:

Որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքով տեսակներ նախատեսված է արարքի կատարումը՝

1) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգիրքը ևս պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից էլնելով օգտագործելու ակտիվ և պասիվ դրսևորումների համար:

Մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի 438-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում նշված հանցագործության պասիվ դրսևորման համար, այն է՝ պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ ապօրինի վարձատրություն տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

Հանցակազմի կառուցման ժամանակ հետևողականորեն պահպանվել են նույն փոփոխությունները, ինչ և ակտիվ և պասիվ կաշառակերության դեպքում:

Կաշառք ստանալուց այս հանցակազմի հիմնական տարբերակիչ հատկանիշն այն է, որ նյութական վարձատրությունը վերաբերում է ոչ թե պաշտոնատար անձին կամ նրա մատնանշած անձին, այլ երրորդ անձի, ընդ որում պաշտոնատար անձը տեղյակ էլ չի լինում նման վարձատրության գոյության մասին: Վարձատրությունը ստանում է նա, ով պաշտոնատար անձի նկատմամբ փորձում է օգտագործել իր ազդեցությունը, պայմանավորված, օրինակ ընտանեկան, ազգակցական կապերով, ընկերական հարաբերություններով և այլն:

Այս հանցակազմի ծանրացնող հանգամանքներն են՝ արարքի կատարումը՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) ապօրինի վարձատրություն տված կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար կամ

4) անձի իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին վնաս պատճառելու սպառնալիքով՝

Առավել խիստ պատասխանատվություն է առաջանում, եթե արարքը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) առանձնապես խոշոր չափերով:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նոր հանցակազմերից է կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ



առավելություն ստանալը:

Ներկայացված հանցակազմը դրսևորվում է միմիայն դիտավորությամբ:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հաջորդ փոփոխությունը վերաբերում է քրեական նոր օրենսգրքի 441-րդ հոդվածին՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը մեկ հանցակազմի ներքո միավորել է քրեական նախկին օրենսգրքի 308-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը՝ պատասխանատվություն սահմանելով պաշտոնատար անձի կողմից ինչպես պաշտոնեական դիրքի չարաշահում, այնպես էլ լիազորությունների անցում կատարելու համար:

Մասնավորապես, հանցակազմը բնութագրվում է որպես պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում քննարկվող հանցակազմը ձևակերպելիս, օրենսդիրը զերծ է մնացել հանցագործության շարժառիթն ամրագրելուց: Քրեական նախկին օրենսգրքում 308-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշ էր շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերից ելնելը: Քրեական նոր օրենսգրքում նման պահանջ ամրագրված չէ:

Հանցակազմը նյութական է՝ ավարտված հանցակազմի պարտադիր հատկանիշ է անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս պատճառելը: Որպես այդպիսին, գույքային վնասի դեպքում դիտարկվում է խոշոր չափերի գույքային վնասը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներն են՝ արարքը, որը՝

- 1) կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով,
- 2) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս,
- 3) կատարվել է զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,
- 4) կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

5) անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք:

Առավել խիստ խատասխանատվություն է առաջանում, եթե արարքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից:

Քրեական նոր օրենսգիրքը գրեթե նույնությամբ ամրագրել է պաշտոնատար անձի կողմից օրենքով սահմանված արգելքին հակառակ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, այն տարբերությամբ, որ օբյեկտիվ կողմի բնութագրման ժամանակ մատնանշել է նաև կազմակերպության կառավարման տարբերակը՝ կազմակերպության կառավարման մարմնում պաշտոն զբաղեցնելը կամ այդպիսի կազմակերպության կառավարումն այլ կերպ վերահսկելը: Մնացած առումներով այն լիովին նույնական է քրեական նախկին օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված հանցակազմին:

Քրեական նախկին օրենսգրքին գրեթե նույնական՝ քրեական նոր օրենսգրքում տեղ է գտել ապօրինի հարստանալու հանցակազմը: Նույնությամբ կրկնելով քննարկվող հանցակազմի հատկանիշները՝ քրեական նոր օրենսգրքում տեղ է գտել միայն մեկ տարբերություն՝ եթե քրեական նախկին օրենսգրքով էական էր համարվում 5 մլն դրամը գերազանցող գումարը, ապա քրեական նոր օրենսգրքով՝ 3 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը):

Քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար: Այս հանցակազմը արտացոլում է քրեական նախկին օրենսգրքի 314.2-րդ և 314.3-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմը: Այնուհանդերձ, քրեական նոր օրենսգրքում այս հանցակազմի ձևակերպման ժամանակ օրենսդիրը որոշակի փոփոխություններ է կատարել, սահմանելով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը կամ հայտարարագիրը օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, չներկայացնելը: Օրենսդիրը հանցավոր է դիտել նաև հայտարարագիրը օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, չներկայացնելը: Թեև այս ձևակերպման մեջ օրենսդիրը չի նշել դիտավորությամբ ներկայացնելը, սակայն անզգուշության մասին վկայող եզրույթի բացակայությունը ինքնին վկայում է, որ հանցանքի պարագայում պետք է դրսևորվի դիտավորություն:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը: Մնացած հատկանիշներով այն նույնական է քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած հանցակազմին:

Քրեական նոր օրենսգրքում նաև այս հանցակազմի առումով նախատեսված է

ծանրացնող հանգամանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի կամ ծախսի չհայտարարագրմանը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, այնպես էլ քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնեական կեղծիքի համար: Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում պաշտոնատար անձի կողմից պաշտոնական շրջանառության մեջ գտնվող կամ շրջանառության ենթակա փաստաթղթի բովանդակությունը աղավաղելու, դրա մեջ կեղծ տեղեկություն մտցնելու, փաստաթուղթն այլ եղանակով կեղծելու, կեղծ փաստաթուղթ կազմելու կամ տրամադրելու կամ փաստաթղթերի գրանցման տեղեկատվական համակարգում կեղծ տեղեկություն մուտքագրելու համար:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կանոնակարգման՝ օրենսդիրը հանցակազմի պարտադիր հատկանիշ չի դիտում շահադիտական նպատակը կամ անձնական այլ դրդումները կամ խմբային շահերը, որոնք արտացոլված էին քրեական նախկին օրենսգրքի 314-րդ հոդվածում:

Օրենսդիրը նաև առավել մանրամասն ներկայացրել է հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքները՝ պաշտոնական շրջանառության մեջ գտնվող կամ շրջանառության ենթակա փաստաթղթի բովանդակությունը աղավաղելը, դրա մեջ կեղծ տեղեկություն մտցնելը, փաստաթուղթն այլ եղանակով կեղծելը, կեղծ փաստաթուղթ կազմելը կամ տրամադրելը կամ փաստաթղթերի գրանցման տեղեկատվական համակարգում կեղծ տեղեկություն մուտքագրելը:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքով տեսակն է՝ արարքը, որը կատարվել մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իսկ առավել ծանրացնող՝ հանցավոր կազմակերպության կողմից:

Պաշտոնեական անփութության հանցակազմը նույնությամբ կրկնում է քրեական նախկին օրենսգրքի 315-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմը, հետևաբար լրացուցիչ պարզաբանման կարիք չունի: Քրեական նոր օրենսգրքի 447-449-րդ հոդվածներում տեղ գտած հանցակազմերը ևս չեն քննարկվի, քանի որ նույնությամբ կամ որոշ խմբագրական փոփոխություններում ամրագրում են քրեական նախկին օրենսգրքի 314.2, 315.1-315.3-րդ հոդվածներում տեղ գտած հանցակազմերը:

Քրեական նոր օրենսգրքում նախատեսված է նաև խոշտանգման հանցակազմը, որը նույնությամբ կրկնում է քրեական նախկին օրենսգրքի 309.1-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի հատկանիշները:

Հիմնական փոփոխությունը, որը տեղ է գտել քննարկվող հանցակազմը

սահմանելիս, վերաբերում է ծանրացնող հանգամանքներին՝ արարքը, որը՝

1) կատարվել է անձի, նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) կատարվել է հղի կնոջ նկատմամբ,

3) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

5) կատարվել է անչափահասի նկատմամբ,

6) կատարվել է առանձին դաժանությամբ,

7) կատարվել է մի խումբ անձանց կողմից կամ

8) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք: Առավել խիստ պատասխանատվություն է առաջանում, եթե հանցանքը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նորամուծությունն է բռնի անհետացման համար պատասխանատվություն սահմանող դրույթ, այն է՝ պետության կողմից տրված լիազորությամբ, պետության աջակցությամբ, համաձայնությամբ կամ թողտվությամբ գործող պաշտոնատար անձի, այլ անձի կամ մի խումբ անձանց կողմից ազատությունից օրինական հիմքերով կամ ապօրինի զրկված անձի ազատությունից զրկելու փաստը ժխտելը կամ թաքցնելը կամ նրա կարգավիճակի կամ գտնվելու վայրի մասին տեղեկությունը թաքցնելը, որի հետևանքով անհետացած անձը հայտնվում է օրենքի պաշտպանությունից դուրս:

Քննարկվող հանցակազմի կտրվածքով իր դիրքորոշումը հայտնել է ՄԻԵԴ-ը՝ Քուրտն ընդդեմ Թուրքիայի գործով<sup>154</sup>:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են, արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ կամ

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ:

Առավել խիստ պատասխանատվություն առաջանում է, եթե արարքն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք:

<sup>154</sup> St´u, Kurt vs Turkey, 25.05.1998:

#### Գլուխ 44

##### ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էական փոփոխությունների է ենթարկվել այս գլուխը: Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու հանցակազմի փոխարեն նախատեսվել է ավելի լայն հանցակազմ՝ պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու (452-րդ հոդված) հանցակազմը:

Ինչպես արդեն նշվել է, ծառայողական գործունեությունը աշխատանքային պայմանագրի հիման վրա իրականացվող գործունեությունն է, իսկ քաղաքական գործունեությունը պետության քաղաքականությունը իրականացնելն է, այդ ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալելը: Այս հոդվածի իմաստով, կարող է քաղաքական գործունեություն համարվել նաև պետության քաղաքականությանը հակադրվող, այլ կարծիքի վրա հիմնված գործունեությունը՝ պայմանով, որ այդ գործունեությունն իրականացնողը պաշտոնատար անձ է:

Հոդվածի առաջին մասը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի համար: Ի տարբերություն նախկին օրենսգրքի, այստեղ խոսք է գնում ոչ միայն իշխանության ներկայացուցչի և նրա մերձավոր ազգականի մասին, այլև յուրաքանչյուր պաշտոնատար անձի, նրա մերձավորի, ինչպես նաև նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին: Բացի այդ խոսվում է ոչ միայն բռնություն գործադրելու, այլև գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի մասին: Մերձավորի, մերձավոր ազգականի, պաշտոնատար անձի հասկացությունները տրված են 3-րդ հոդվածում: Հանցագործության սուբյեկտ կարող է լինել մեղսունակ, քրեական պատասխանատվության տարիքի հասած ցանկացած ֆիզիկական անձ: Եթե հանցանքը կատարում է մեկ այլ պաշտոնատար անձ՝ իր իշխանությունը, հեղինակությունը, դրանցով պայմանավորված իր ազդեցությունն օգտագործելով, ապա արարքը պետք է որակել համակցությամբ՝ այս հոդվածով և 441-րդ հոդվածի առաջին մասով՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը:

Միջամտելը կարող է դրսևորվել պաշտոնատար անձին որևէ արարք կատարելուն, որոշում կայացնելուն հարկադրելու ձևով, ինչպես նաև արդեն կատարածի համար վրեժ լուծելով:

Հոդվածի երկրորդ մասում պատասխանատվություն է նախատեսված նշված

անձանց գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար: Այդ դեպքում պետք է արարքը համակցությամբ որակել նաև գույքը ոչնչացնել կամ վնասել, հատկապես հոդված 264-ի երկրորդ մասի երրորդ կետով և նշել մյուս ծանրացնող հանգամանքները, եթե դրանք առկա են, բայց, եթե հանցանքը կատարում է մեկ այլ պաշտոնատար անձ՝ նաև իր իշխանությունը, հեղինակությունը, դրանցով պայմանավորված իր ազդեցությունն օգտագործելով, ապա արարքը պետք է որակել նաև որպես պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը՝ 441-րդ հոդվածի առաջին մասով:

Եթե առկա են գույքը ոչնչացնելու կամ վնասելու առավել ծանրացնող հանգամանքները, ապա գույքը ոչնչացնելը կամ վնասելը որակվում է դրանցով:

Հոդվածի երրորդ մասում նախատեսված է նշված անձանց նկատմամբ բռնություն գործադրելը: Ի տարբերություն նախկին օրենսգրքի, այստեղ բռնության տեսակները (կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր կամ կյանքի և առողջության համար վտանգավոր) չեն սահմանազատվում, դրանք նշանակություն ունեն միայն պատժի անհատականացման, բայց ոչ արարքի որակման համար: Պետք է նշել միայն, որ եթե նշված անձանց առողջությանը ծանր վնաս է պատճառվում կամ նրանք կյանքից զրկվում են, ապա արարքը պետք է որակել համակցությամբ՝ նաև որպես սպանություն՝ «անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ», եթե պաշտոնատար անձը սպանվել է կամ առողջությանը ծանր վնասի պատճառում՝ նույն ծանրացնող հանգամանքով, եթե պաշտոնատար անձի առողջությանը ծանր վնաս է պատճառվել: Եթե հանցանքը կատարում է մեկ այլ պաշտոնատար անձ՝ իր իշխանությունը, հեղինակությունը, դրանցով պայմանավորված իր ազդեցությունն օգտագործելով, ապա արարքը պետք է որակել նաև 441-րդ հոդվածի առաջին մասով՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը կամ երկրորդ մասով՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու հետ:

Նախատեսվել են նաև ծանրացնող հանգամանքներ՝ հանցանքի կատարումը հանցավոր կազմակերպության կողմից կամ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ

միջոցի գործադրմամբ, որոնց մեկնաբանությունն արդեն տրված է:

Եթե նույն արարքները կատարվում են ի պատասխան պաշտոնատար անձի անօրինական գործողությունների, ապա արարքը որակվելու է ոչ թե այս հոդվածով, այլ որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն կամ, իրավաչափության պայմանների առկայության դեպքում, կհամարվի անհրաժեշտ պաշտպանություն, եթե կատարվի պաշտոնատար անձի ապօրինի գործողությունները կանխելու նպատակով: Եթե անձը չի գիտակցել, որ պաշտոնատար անձը ապօրինի գործողություններ է կատարում և կարծել է, թե պաշտոնատար անձը օրինական գործողություններ է կատարում ու կատարում է հոդվածում նշված արարքներից որևէ մեկը, ապա ենթակա է պատասխանատվության պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու փորձի համար: Եթե այս դեպքում բռնություն գործադրելու հետևանքով պաշտոնատար անձի առողջությանը վնաս է պատճառվել, ապա արարքը կորակվի համակցությամբ միայն առողջությանը ծանր վնաս պատճառելու և սպանության դեպքում:

Որոշակի փոփոխության է ենթարկվել պաշտոնատար անձի կոչումը կամ իշխանությունն ինքնակամ յուրացնելու (453-րդ հոդված) հանցակազմը: Այս հանցակազմում փոփոխությունը հանգում է նրան, որ «իշխանություն» հասկացության փոխարեն օգտագործվել է ավելի հստակ «լիազորություն» հասկացությունը: Բացի այդ, «դատական և իրավապահ այլ մարմինների» եզրույթը հանվելով քրեականացվել է ցանկացած պաշտոնատար անձի համազգեստը կամ վկայականը օգտագործելը:

Պատիժն ի կատար ածող հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի կամ ձերբակալվածներին պահելու վայրի գործունեությանը խոչընդոտելու հանցակազմում (454-րդ հոդված) փոփոխությունը հանգում է նրան, որ ի տարբերություն նախկին օրենսգրքի, այստեղ, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու հանցակազմի նման, բռնության տեսակները (կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր կամ կյանքի և առողջության համար վտանգավոր) չեն սահմանազատվում: Բացի դա, համապատասխան հաստատության աշխատակիցներից բացի, այսուհետ որպես տուժող են հանդիսանում նաև «այդ հաստատությունում գտնվող այլ անձինք»:

Նախատեսվել են նաև նոր ծանրացնող հանգամանքներ՝ բռնություն գործադրելը, հանցանքի կատարումը հանցավոր կազմակերպության կողմից կամ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ: Եթե բռնության հետևանքով անձի առողջությանը ծանր վնաս է պատճառվել, ապա արարքը պետք է որակվի համակցությամբ՝ պատիժն ի կատար ածող հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի կամ ձերբակալվածներին պահելու վայրի գործունեությանը

խոչընդոտել՝ բռնություն գործադրելով և առողջությանը ծանր վնասի պատճառում: Բնականաբար արարքը համակցությամբ կորակվի սպանության դեպքում:

Պահպանվել է պատասխանատվությունը կապի ուղիները վնասելու (455-րդ հոդված) համար:

Փոփոխության է ենթարկվել փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու հանցակազմը (456 րդ հոդված). այն ավելի լայն է ձևակերպվել: Նոր օրենսգրքում հանցակազմը ձևակերպված է հետևյալ կերպ՝ ուրիշի անձնագիրը կամ նույնականացման քարտը կամ իրավունք վերապահող, պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող կամ իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող փաստաթուղթը, դրոշմը, կնիքը կամ տրանսպորտային միջոցի պետհամարանիշը հափշտակելը, շորթելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը:

Հափշտակության հասկացությունը տրված է 3-րդ հոդվածում, բայց պարտադիր չէ անհատույց լինելը, իսկ մյուս հասկացությունների բովանդակությունը հանրահայտ է:

Էական փոփոխությունների է ենթարկվել փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր իրացնելը, պատրաստելու կամ օգտագործելու (457 րդ հոդված) հանցակազմը: Նախ՝ ճշգրտվել են հանցագործության սուբյեկտները: Դրանք են՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրանց կազմակերպությունը, առևտրային կամ այլ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը, աուդիտորը կամ փաստաթուղթ կազմելու, տալու կամ դրա իսկությունը հավաստելու համար լիազորված այլ անձը: Ճշգրտվել է հանցագործության առարկան՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող կամ իրավունք վերապահող կամ պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող փաստաթուղթը: Վեճերի տեղիք է տվել այն հարցը, թե արդյոք փաստաթղթի պատճենն այս հանցագործության առարկա է, թե ոչ: Կարծում ենք, որ այն դեպքերում, երբ պահանջվում է պատճեն կամ որևէ գործարքի համար բավարարվում են պատճենով, ապա դա համարվում է այս հանցագործության առարկա: Հանցագործության օբյեկտիվ կողմը նույնն է՝ կեղծելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից այն օգտագործելու կամ իրացնելու նպատակով, կամ այդպիսի փաստաթուղթ իրացնելը կամ նույն նպատակով կեղծ դրոշմ, կնիք կամ ձևաթուղթ պատրաստելը կամ իրացնելը, ինչպես նաև կեղծ փաստաթուղթ օգտագործելը: Նույնն է նաև ծանրացնող հանգամանքը: Փաստաթղթի լայն հասկացությունը տրված է 3-րդ հոդվածում: Նորություն է նաև այն, որ նախատեսվել է խրախուսական նորմ, որի համաձայն՝ սույն հոդվածի գործողությունը չի տարածվում ապաստան հայցողի վրա, որը փաստաթուղթը կեղծել կամ կեղծ փաստաթուղթն օգտագործել է Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու նպատակով:

Պետք է նշել, որ հանցակազմի դիսպոզիցիայի ձևակերպումը համահունչ է



Եվրոպական դատարանի դիրքորոշմանը<sup>155</sup>: Պաշտոնական փաստաթղթի և այն կեղծելու հասկացությանն անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը<sup>156</sup>:

Ավելացել է նոր հանցակազմ՝ տրանսպորտային միջոցի կամ հրազենի նույնականացման տարրերը կեղծելը կամ ջնջելը (458-րդ հոդված): Հանցակազմը ձևակերպված է հետևյալ կերպ՝ տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը կամ տրանսպորտային միջոցի նույնականացման այլ տարրը կամ հրազենի նույնականացման տարրը կեղծելը կամ ջնջելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից այն օգտագործելու կամ իրացնելու նպատակով, կամ այն իրացնելը կամ օգտագործելը: Ջնջելու հասկացությունը մեկնաբանության կարիք չունի: Ինչ վերաբերում է կեղծելուն, ապա դա կարող է կատարվել ինչպես լիովին կեղծելով, այնպես էլ առարկան մասամբ կեղծելով՝ օրինակ՝ ջնջում, քերվածք կատարելով: Հանցակազմի ծանրացնող հանգամանքն է՝

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Որոշ փոփոխությունների է ենթարկվել պաշտոնական փաստաթղթեր ապօրինաբար ձեռք բերելու կամ իրացնելու հանցակազմը: Նոր օրենսգրքով նախատեսվել են նաև պետական պարգևները և պատվավոր կոչումները: Հոդվածը ունի հետևյալ տեսքը. ( 459 -րդ հոդված). Փաստաթղթեր կամ պետական պարգևներ կամ պատվավոր կոչումներ ապօրինի ձեռք բերելը կամ իրացնելը

Իրավունք վերապահող կամ պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող փաստաթուղթ, ինչպես նաև այդպիսի փաստաթղթի ձևաթուղթ կամ պետական պարգև կամ պատվավոր կոչում ապօրինի ձեռք բերելը կամ իրացնելը: Հանցակազմը մեկնաբանության կարիք չունի:

Որոշ փոփոխությունների է ենթարկվել ինքնիրավչության (460-րդ հոդված) հանցակազմը: Ի տարբերություն նախկին օրենսգրքի, նորմում խոսքը գնում է միայն օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքի իրականացման մասին: Բացառվել է այլ նորմատիվ իրավական ակտը, որը ըստ էության օրենսդրության բաղկացուցիչ մասն է, ավելացվել է կազմակերպություններին էական վնաս պատճառելը: Տրվել է գույքային վնասի դեպքում էական վնասի հասկացությունը: Նոր օրենսգրքի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը: Խոշոր չափերի հասկացությունը տրված է օրենսգրքի 3-րդ հոդվածում: Նոր

<sup>155</sup> Տե՛ս Եվրոդատարանի վճիռը Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով, 2013 թ. փետրվարի 5:

<sup>156</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սամվել Գաբրիելյանի գործով 2010 թվականի հուլիսի 23-ի թիվ ԵՇԴ/0115/01/09 որոշումը, Սեպուհ Քոչարյանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ՏԴ2/0039/01/17 որոշում:

օրենսգրքում սահմանազատում չի արվում անձանց կամ կազմակերպությունների և հասարակության ու պետության շահերի միջև. երկու դեպքում էլ խոսքը դրանց պատճառված էական վնասի մասին է: Պահպանվել է «իր» բառը, ինչը նշանակում է, որ եթե ինքնագլուխ կամ ինքնակամ իրականացվում է ուրիշի իրավունքը, ապա արարքը պետք է որակել որպես այն հանցագործություն, որի հատկանիշներն առկա են արարքում, օրինակ, հափշտակություն, գույքային վնասի պատճառում, մարդու դեմ ուղղված հանցագործություն և այլն:

Թեև ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թ. դեկտեմբերի 23-ին կայացված թիվ ԱՎԴ1/0063/01/09 որոշման մեջ նշվում է, որ «...ինքնիրավչությունը դրսևորվում է միայն ակտիվ վարքագծով՝ գործողությամբ»<sup>157</sup>, սակայն, կարծում ենք, որ ինքնիրավչությունը կարող է դրսևորվել նաև անգործությամբ: Բերենք օրինակ: Բանվորը վնաս է պատճառել այն ձեռնարկությանը որտեղ աշխատում էր: Ձեռնարկության տնօրենը, որպես վնասի հատուցում, փոխանակ դատարան դիմելու, այդ ամիս աշխատավարձ չի տալիս բանվորին, որը վիճարկում է այդ որոշումը: Ակնհայտ է ձեռնարկության տնօրենի կողմից ինքնիրավչությունը անգործությամբ (չի կատարում իր պարտականությունները) կատարելու փաստը:

Գրեթե նույնությամբ պահպանվել է պատասխանատվությունը ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելու համար, այն տարբերությամբ, որ նոր քրեական օրենսգրքում խոսվում է ոչ թե ժամկետային, այլ պարտադիր ծառայության մասին, իսկ վարժական հավաքներից խուսափելը նախատեսված է առանձին հոդվածով, որտեղ բացակայում է զորահավաքային զորակոչից խուսափելը: Հոդվածներն ունեն հետևյալ ձևակերպումները՝ Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելը՝ այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում (461-րդ հոդված), և անցկացվող վարժական հավաքից խուսափելը՝ այդ վարժական հավաքից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում (462-րդ հոդված):

Ի տարբերություն նախկին օրենսգրքի, նախատեսվել է խրախուսական նորմ համաձայն որի՝ 461-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե կամովին ներկայացել և զորակոչվել է պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության:

Լիովին նույնությամբ պահպանվել է պատասխանատվությունը այլընտրանքային

<sup>157</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ին կայացված թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշում:

աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից խուսափելու (463-րդ հոդված) համար:

Որոշ աննշան փոփոխություններով պահպանվել է պատասխանատվությունը այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ ժամանակին ծառայության վայր չներկայանալու (հոդված 464) համար:

Փոփոխությունները հանգում են նրան, որ ավելի հստակ են նշվել ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ ժամանակին ծառայության վայր չներկայանալու ժամկետները և փոխվել է խրախուսական նորմը, որտեղ նշվել է միայն ծանր հանգամանքների մասին: Այսպես՝ հոդվածը ձևակերպված է հետևյալ կերպ՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության վայր չներկայանալը 72 ժամից ավելի, բայց 240 ժամից ոչ ավելի տևողությամբ, կամ երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև 72 ժամ տևողությամբ: Ծանրացնող հանգամանքներ են նախատեսված՝

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելը, եթե ինքնակամ բացակայությունը տևել է 240 ժամից ավելի,

Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ:

Նախատեսված է խրախուսական նորմ՝ սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքն առաջին անգամ կատարած այլընտրանքային աշխատանքային ծառայողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դա կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով: Ծանր հանգամանքների բովանդակությունը հայտնի է նախորդ օրենսգրքից:

Իրար են միացվել երկու հանցակազմեր՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից ժամանակավորապես խուսափելը և ծառայության առանձին պարտականությունները կատարելը ժամանակավորապես դադարեցնելը: Նոր օրենսգրքով հանցակազմը ձևակերպված է հետևյալ կերպ՝ Այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու) կամ հիվանդության սիմուլյացիայի կամ կեղծ փաստաթուղթ օգտագործելու կամ խաբեության կամ ապօրինի այլ եղանակով այլընտրանքային աշխատանքային ծառայությունից խուսափելը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելը (465-րդ հոդված):

Լիովին նույնությամբ պահպանվել է պատասխանատվությունը այլընտրանքային

աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելու համար, որը զուգորդվել է նրա կողմից դրանց չկատարմամբ կամ փաստացի դադարեցմամբ ( 466-րդ հոդված):

Պահպանված է պատասխանատվությունը ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց հետո զինվորական կոմիսարիատ ներկայանալուց խուսափելու (467-րդ հոդված) համար:

Պահպանված է պատասխանատվությունը զորամաս կամ հատուկ պահպանվող զինվորական այլ տարածք ապօրինի մուտք գործելու համար (468-րդ հոդված), որոշ փոփոխությունների են ենթարկվել ծանրացնող հանգամանքները: Հոդվածը ձևակերպված է հետևյալ կերպ.

Ջորամաս կամ հատուկ պահպանվող զինվորական այլ տարածք սահմանված կարգի խախտմամբ մուտք գործելը: Ծանրացնող հանգամանքներն են՝

սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից,

սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է գենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք,

սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում:

Այս ծանրացնող հանգամանքները արդեն մեկնաբանված են:

Ինչ վերաբերում է ծանր հետևանքին, ապա ծանր հետևանքը գնահատողական հասկացություն է, որը յուրաքանչյուր դեպքում որոշվում է իրավակիրառողի կողմից: Ծանր հետևանք կարող են համարվել, օրինակ, զինվորական կարգապահության անկումը, հրամանատարին հեղինակազրկելը, բազմաթիվ անձանց, ասենք հինգ և ավելի անձանց առողջությանը թեթև վնաս պատճառելը և այլն:

Փոփոխությունների է ենթարկվել պետական սահմանն ապօրինի հատելու (469-րդ հոդված) հանցակազմը: Ավելացել է երկրորդ մաս, որը ունի հետևյալ ձևակերպումը.՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանն առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության հատելուն օժանդակելը կամ դա կազմակերպելը: Խոսքը այն դեպքերի մասին է, երբ օժանդակում կամ կազմակերպում են այն անձի կողմից պետական սահմանն առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության հատելը, ով ենթակա չէ քրեական պատասխանատվության

(անմեղսունակ, քրեական պատասխանատվության տարիքի չհասած): Բանն այն է, որ այս հանցանքը միջնորդավորված կատարելն անհնար է և այն անձի արարքը, ով օժանդակում կամ կազմակերպում է այն անձի կողմից պետական սահմանն առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության հատելը, ով ենթակա չէ քրեական պատասխանատվության, չի կարող որակվել ո՛չ որպես կատարողի, ո՛չ էլ որպես այլ հանցակցի արարք: Դրա համար էլ այն անձի արարքը ճիշտ որակելու համար, ով օժանդակում կամ կազմակերպում է այն անձի կողմից պետական սահմանն առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության հատելը, ով ենթակա չէ քրեական պատասխանատվության՝ անհրաժեշտ էր հատկապես նախատեսել:

Նախատեսված են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝ բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ հանցավոր կազմակերպության կողմից: Եթե բռնություն է գործադրվում, ապա միայն առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքում է, որ արարքը պետք է որակել համակցությամբ:

Նախատեսվել է խրախուսական նորմ, համաձայն որի՝ սույն հոդվածի գործողությունը չի տարածվում թրաֆիքինգից տուժած անձի վրա, ինչպես նաև ապաստան հայցողի վրա, որը, ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրա կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել, առանց ձգձգման դիմում է իրավասու մարմին և մատնանշում իր ապօրինի մուտքի հիմնավոր պատճառը<sup>158</sup>:

Զգձգել ասելով պետք է հասկանալ այն իրադրությունը, երբ անձը իրավասու մարմին չի դիմում առանց հարգելի պատճառների, դիմելու համար ունենալով օբյեկտիվ հնարավորություն:

Պահպանվել է պատասխանատվությունը անօրինական միգրացիա կազմակերպելու (470-րդ հոդված), պետական սահմանի նշանները վերցնելու, տեղաշարժելու կամ ոչնչացնելու (471-րդ հոդված), պետական խորհրդանիշներն անարգելու համար (472-րդ հոդված):

Առաջին հանցակազմից հանվել է նախկինում առկա «սահմանն ապօրինի փոխելու նպատակը». յուրաքանչյուր նպատակ կարող է առկա լինել, իսկ 2-րդ մասից հանվել է դիտավորությունը, որպես ավելորդություն, իսկ երրորդ հանցակազմից հանվել է «այլ պետության պետական խորհրդանիշ» եզրույթը, թողնելով միայն ՀՀ պետական

---

<sup>158</sup> Այս խրախուսական նորմը պայմանավորված է միջազգային փաստաթղթերով: Ավելի մանրամասն տե՛ս UN High Commissioner for Refugees (UNHCR), Submission by the Office of the United Nations High Commissioner for Refugees in the case of Alizada v. Armenia (application no. 2439/18) before the European Court of Human Rights, 26 October 2018, UN High Commissioner for Refugees (UNHCR), Article 31 of the 1951 Convention Relating to the Status of Refugees, July 2017, PPLA/2017/01, UN High Commissioner for Refugees (UNHCR), Summary Conclusions on Non-Penalization for Illegal Entry or Presence: Interpreting and Applying Article 31 of the 1951 Refugee Convention, 15 March 2017, Article 31 of the 1951 Convention Relating to the Status of Refugees: Non-Penalization, Detention, and Protection, June 2003,

խոհրդանիշներն անարգելը:

Բացառվել է պատասխանատվությունը պատերազմի ժամանակ պարհակներ կատարելուց կամ հարկեր վճարելուց խուսափելու համար: Օրենսդիրը ելնում է այն գաղափարից, որ քրեական պատասխանատվությունն այս արարքի համար խիստ է, բացի այդ, դա որոշակի ժամանակահատվածի համար կարող է ընդունվել: Ինչ վերաբերում է կարմիր խաչի կամ կարմիր մահիկի խորհրդանիշը կամ նշանն ապօրինի օգտագործելուն, ապա հանցավորը կարող է պատասխանատվության ենթարկվել 139-րդ հոդվածով՝ Մարդասիրական օգնության ցուցաբերման կամ տարբերանշանների դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները՝ որպես պատերազմական հանցագործություն և ոչ թե կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություն, ինչը ավելի ճիշտ է:

Առանձին բացառություններով, կառավարման կարգի դեմ ուղղված հանցակազմեր են նախատեսված գրեթե բոլոր երկրների քրեական օրենսդրություններով, իհարկե դրանք ցրված են ողջ օրենսգրքում, դրա տարբեր գլուխներում<sup>159</sup>:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսդրությունը բավարար չափով է ապահովում կառավարման կարգը:

---

<sup>159</sup> Տե՛ս նաև УК ФРГ [http://rawunsch.de/images/Ugolovnyiyi\\_Kodeks.pdf](http://rawunsch.de/images/Ugolovnyiyi_Kodeks.pdf),  
<https://www.legislationline.org/ru/documents/section/criminal-codes/country/2/%D0%98%D1%81%D0%BF%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F/show> և այլն:

УК Испании,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործությունները հիմնականում պահպանել են իրենց բովանդակությունը, որոշակի առանձնահատկություններով, որոնց մասին էլ կխոսվի ստորև:

Քրեական նոր օրենսգրքի 477, 480, 483, 487-489, 492, 494, 498-501, 505, 507-508, 510-511-րդ հոդվածներում տեղ գտած հանցակազմերը նույնությամբ կամ խմբագրական փոփոխություններով կրկնում են քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած հանցակազմերը, հետևաբար սույն ուղեցույցի շրջանակներում դրանց անդրադարձ չի արվի:

Ինչպես և քրեական նախկին օրենսգիրքը, քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում հանցագործության մասին չհայտնելու համար, սակայն շեշտադրում կատարում ոչ թե հանցանքի ծանրությանը, այլ նշում հոդվածները:

Օրենսդիրը խատասխանատվություն է սահմանում հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ հանցափորձի փուլում գտնվող, քրեական օրենսգրքի 133-րդ, 149-րդ, 153-րդ, 155-րդ, 166-րդ, 188-րդ, 189-րդ, 198-րդ, 252-րդ, 258-րդ, 291-րդ, 292-րդ, 308-րդ, 309-րդ, 310-րդ, 315-318-րդ, 320-րդ, 323-րդ, 331-333-րդ, 335-րդ, 336-րդ, 338-րդ, 340-րդ, 393-րդ, 394-րդ, 397-399-րդ, 418-րդ-420-րդ, 423-425-րդ, 450-րդ կամ 451-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մասին իրավասու մարմնին չհայտնելն այն ժամանակահատվածում, երբ հնարավոր էր կանխել հանցանքի կատարումը կամ դրա հետևանքների առաջացումը:

Ներկայացված ձևակերպումից երևում է, որ քրեական նոր օրենսգրքում տեղ են գտել մի շարք փոփոխություններ՝

- օրենսդիրը ոչ թե նշել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների մասին չհայտնելը, այլ՝ թվարկել այն հոդվածները, որոնցում տեղ գտած հանցակազմերի մասին չհայտնել էլ հանգեցնելու է պատասխանատվության:

- պատասխանատվություն սահմանվել է ոչ միայն հաստատապես հայտնի նախապատրաստվող, այլև հանցափորձի փուլում գտնվող հանցանքի մասին չհայտնելու համար,

- պատասխանատվության անհրաժեշտ նախապայման է, որ հանցանքի մասին չհայտնելը լինի այն ժամանակահատվածում, երբ հնարավոր էր կանխել հանցանքի կատարումը կամ դրա հետևանքների առաջացումը:

Քննարկվող հանցակազմը սահամնելիս, օրենսդիրը հստակեցրել է, որ հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ հանցափորձի փուլում գտնվող

հանցագործության մասին իրավասու մարմնին չհայտնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե իր ձեռնարկած միջոցներով կանխել է հանցանքի կատարումը կամ հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը:

3. Հանցանք կատարողը կամ տվյալ հանցագործության հանցակիցը ենթակա չէ քրեական պատասխանատվության հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ հանցափորձի փուլում գտնվող հանցագործության մասին իրավասու մարմնին չհայտնելու համար:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, քրեական նոր օրենսգրքում ևս հստակեցվում է, որ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության իր ամուսնու կամ մերձավոր ազգականի կողմից նախապատրաստվող կամ հանցափորձի փուլում գտնվող հանցագործության մասին չհայտնելու համար:

Քրեական նոր օրենսգրքի 474-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում հանցանք կատարած անձին աջակցելու համար, այն է՝ հանցագործության կամ հանցանք կատարած անձի բացահայտմանը, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկելուն, պատժի կամ դրա չկրած մասի, անվտանգության կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի իրականացմանը խոչընդոտելու նպատակով՝ հանցագործությունը կամ հանցանք կատարած անձին առանց նախնական խոստման պարտակելը կամ հանցանք կատարած անձին այլ կերպ աջակցելը:

Քննարկվող հանցակազմը էականորեն տարբերվում է քրեական նախկին օրենսգրքի 334-րդ հոդվածում տեղ գտած հանցագործության պարտական հանցակազմից: Նախ՝ քրեական նոր օրենսգրքում պատժելի է ոչ թե միայն ծանր կամ առանձնապես ծանր, այլ հանցագործությունների դասակարգման ցանկացած խմբում ընդգրկված հանցանքը պարտակելը:

Օրենսդիրը հստակեցրել է նաև հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքները՝ ներառելով ոչ միայն պարտակումը այլև հանցանք կատարած անձին այլ կերպ աջակցելը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ նոր կանոնակարգման մեջ հանցակազմի պարտադիր հատկանիշ է նպատակը՝ հանցագործության կամ հանցանք կատարած անձի բացահայտմանը, հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության կամ պատժի ենթարկելուն, պատժի կամ դրա չկրած մասի, անվտանգության կամ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցի իրականացմանը խոչընդոտելու նպատակը:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,



2) շահադիտական դրդումներով կամ

3) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը օգտագործելով:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքով, այնպես էլ նոր կանոնակարգմամբ սահմանվում է, որ հանցանք կատարած անձի մերձավոր ազգականը կամ տվյալ հանցագործության նրա հանցակիցը ենթակա չէ քրեական պատասխանատվության սույն հոդվածով նախատեսված հանցագործության համար:

Օրենսդիրը նաև սահմանել է, որ անձն ազատվում է քննարկվող հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե աջակցել է այնպիսի անձի, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ռեաբիլիտացնող հիմքով, կամ կայացվել է արդարացման դատավճիռ:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած նոր հանցակազմերից է ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձին ապօրինաբար ազատելը, այն է՝ ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձին ապօրինաբար ազատելը նման լիազորություն չունեցող անձի կողմից, որը կատարվել է բռնություն գործադրելով, սպառնալիքով, խաբեությամբ կամ հակաիրավական այլ եղանակով:

Ներկայացված հանցակազմը իրենից ներկայացնում է հանցանք կատարած անձին աջակցելու տարատեսակ, որի սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը:

Օբյեկտիվ կողմը դրսևորվում է ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձին ապօրինաբար ազատելով, որը կատարվել է բռնություն գործադրելով, սպառնալիքով, խաբեությամբ կամ հակաիրավական այլ եղանակով:

Քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանքներ է՝ արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե արարքը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք գործադրելով:

Քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվում նաև սուտ մատնության համար: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, որը սուտ մատնությունը բնորոշում էր որպես հանցագործության մասին սուտ մատնություն, եթե անձը գործել է՝ զիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, քրեական նոր օրենսգրքում այն դիտվում է որպես իրավասու մարմնին հանցագործության դեպքի

կամ անձի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն տալը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են դիտվում՝ արարքը, որը՝

1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) կատարվել է շահադիտական դրդումներով կամ

3) զուգորդվել է անձին ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով կամ

4) զուգորդվել է մեղադրանքի արհեստական ապացույց ստեղծելով:

Առավել խիստ պատասխանատվություն սահմանվում է, եթե այդ արարքն անզուշությամբ հանգեցրել է՝

1) ինքնասպանության կամ հոգեկան խանգարման կամ

2) անձի կալանավորման, դատապարտման կամ հոգեբուժական կազմակերպությունում տեղավորման:

Քրեական նոր օրենսգրքի 478-րդ հոդվածը ամրագրում է ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու հանցակազմը: Այն հիմնականում կրկնում է քրեական նախկին օրենսգրքի 348-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի հատկանիշները, այն տարբերությամբ, որ պատասխանատվություն է սահմանում նաև ազատման ենթակա ձերբակալված կամ կալանավորված անձին ապօրինի ազատ չարձակելու համար:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որն անզուշությամբ հանգեցրել է ինքնասպանության, հոգեկան խանգարման կամ առանձնապես խոշոր չափերի գույքային վնասի, իսկ առավել ծանրացնող՝ արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) շահադիտական դրդումներով:

Քրեական նոր օրենսգրքում առավել հստակ կարգավորման է ենթարկվել ապացույցներ կեղծելու հանցակազմը: Օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում քաղաքացիական, վարչական կամ քրեական գործով կամ վարչական վարույթով ապացույց, բացատրություն կամ դատավարական փաստաթուղթ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալ կամ առարկա կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ նոր կանոնակարգմամբ՝

□ հստակեցվել է հանցագործության առարկան, այն է՝ քաղաքացիական, վարչական կամ քրեական գործով կամ վարչական վարույթով ապացույց, բացատրություն կամ դատավարական փաստաթուղթ կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալ կամ առարկա: Քրեական նախկին օրենսգրքում պատասխանատվություն էր սահմանվում միայն քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով ապացույց կեղծելու համար, մինչդեռ նոր կանոնակարգմամբ

պատասխանատվություն է առաջանում նաև բացատրություն, դատավարական փաստաթուղթ, օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացվա՞շ տվյալ կամ առարկա կեղծելու համար:

□ չեն նշվել հանցագործության սուբյեկտները, ինչը թույլ է տալիս դրա համար պատասխանատվության ենթարկել սուբյեկտների ավելի լայն շրջանակի:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներն են՝ արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) շահադիտական դրդումներով,

3) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

4) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ գործով:

Առավել խիստ պատասխանատվություն է նախատեսված, եթե արարքը

1) կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անզուշտությամբ առաջացրել է ծանր հետևանք:

Քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հանցակազմերից է շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով՝ դատախազի կամ քննիչի կողմից հանցանք կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը:

Հանցակազմի սուբյեկտ կարող է լինել միայն դատախազը կամ քննիչը:

Սուբյեկտիվ կողմից դրսևորվում է բացառապես դիտավորությամբ: Հանցակազմի պարտադիր հատկանիշ է շարժառիթը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելը:

Օբյեկտիվ կողմից հանցանքը կատարվում է՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելով:

Քրեական նոր օրենսգրքում գրեթե նույնությամբ արտացոլում է գտել նաև շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով՝ դատավորի կողմից ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը: Միակ տարբերությունը վերաբերում է շարժառիթին՝ ավելացել է խմբային շահերից ելնելու հանգամանքը:

Քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է սահմանվել ոչ միայն մինչդատական կամ դատական վարույթի տվյալ, այլև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության առկայության, դրա ընթացքի կամ արդյունքների մասին տվյալն առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար:

Միաժամանակ, պատասխանատվություն է սահմանվել քրեական վարույթի

ընթացքում պաշտպանության միջոցի վերաբերյալ տվյալ հրապարակելն այն անձի կողմից, որին այդ տվյալը հայտնի է դարձել իր ծառայողական լիազորությունների իրականացման առնչությամբ, կամ այն անձի կողմից, որը նախազգուշացվել է դրա հրապարակման անթույլատրելիության մասին: Օրինակ՝ բռնության ենթարկված անձի ապաստարանի տեղը հայտնելը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներն են, արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ
- 2) շահադիտական դրդումներով՝

Առավել խիստ պատասխանատվություն առաջանում է, եթե քննարկվող արարքն, անզուգուշությամբ հանգեցրել է պաշտպանության միջոցի ենթարկված անձի մահվան, առևանգման կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու:

Քրեական նոր օրենսգրքի 486-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում՝ արդարադատության կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը խոչընդոտելու նպատակով դատարանի գործունեությանը կամ գործի քննությունը խոչընդոտելու նպատակով դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի կամ ներկայացուցչի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար:

Այս հանցակազմը ըստ էության հանդիսանում է քրեական նախկին օրենսգրքի 332-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի արտացոլումը, պարզապես օրենսդիրն առավել հստակեցրել է դրա ձևակերպումը:

Որպես հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են դիտվում արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ
- 2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե արարքը կատարվել է՝

- 1) հանցավոր կազմակերպության կողմից կամ
- 2) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է նախատեսված սուտ բացատրություն, կեղծ եզրակացություն, սխալ թարգմանություն տալու համար: Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն տալու կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ կարծիք տալու կամ թարգմանի կողմից սխալ թարգմանություն

կատարելու կամ նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալու համար, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած կանոնակարգման՝ քրեական նոր օրենսգրքում սահմանվել է, որ պատասխանատվություն է առաջանում նաև քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն տալու, փորձագետի կողմից կեղծ կարծիք տալու համար:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներն են՝ արարքը, որը կատարվել է՝

1) շահադիտական դրդումներով կամ

2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առնչությամբ:

Օրենսդիրը հստակեցրել է, որ սուտ բացատրություն, ցուցմունք կամ կեղծ եզրակացություն կամ կարծիք տված կամ սխալ թարգմանություն կատարած անձն ազատվում է քննարկվող հողվածով նախատեսված պատասխանատվությունից, եթե նա հիմնական գործի մինչդատական վարույթի կամ դատական քննության կամ վարչական վարույթի ընթացքում՝ մինչև վարույթն իրականացնողի կողմից դատավճիռ, վճիռ կամ այլ վերջնական (վարույթը եզրափակող) որոշում կայացնելը, կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, բացատրության, կեղծ եզրակացության կամ կարծիքի կամ սխալ թարգմանության մասին: Հիմնական է համարվում քրեական, քաղաքացիական կամ վարչական այն գործը, որի շրջանակներում տրվել է սուտ ցուցմունքը, կեղծ եզրակացությունը կամ կարծիքը, կամ կատարվել է սխալ թարգմանությունը:

Քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է սահմանվել փաստաբանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով: Այս ձևակերպումը որոշակիորեն տարբերվում է քրեական նախկին օրենսգրքի 332.3-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմից, որը պատասխանատվություն էր սահմանում գործի քննությանը խոչընդոտելու նպատակով փաստաբանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար:

Ավելին, քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում նաև մարդու իրավունքների պաշտպանի կամ նրա անունից հանդես եկող անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի համար՝ կապված Մարդու իրավունքների պաշտպանի

ծառայողական գործունեության հետ:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակներն են՝ արարքը, որը դրսևորվել է նշված անձանց մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելով կամ նշված անձանց գույքը ոչնչացնելով կամ վնասելով՝ կապված Մարդու իրավունքների պաշտպանի ծառայողական գործունեության հետ: Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե նշված անձանց նկատմամբ բռնություն է գործադրվել՝ կապված Մարդու իրավունքների պաշտպանի ծառայողական գործունեության հետ կամ արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ հանցավոր կազմակերպության կողմից կամ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ մարդու առողջությանը ծանր վնաս պատճառելով:

Քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է սահմանվել արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի փախուստի կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելու համար:

Քննարկվող հանցակազմն, ըստ էության, նույնանում է քրեական նախկին օրենսգրքի 355-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմին:

Ի տարբերություն նախկին կանոնակարգման՝ օրենսդիրը պատասխանատվություն է սահմանում ոչ միայն փախուստի, այլև ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելու համար:

Քրեական նոր օրենսգրքում նաև սահմանվել է պատասխանատվություն կարճաժամկետ մեկնման կամ պատժի հետաձգման ժամկետի ավարտից հետո ազատությունից զրկելու հետ կապված պատիժը կրելուց խուսափելու համար այն անձի կողմից, որին թույլատրվել է ազատագրված վայրից կարճաժամկետ մեկնում, կամ որի նկատմամբ դատավճռի կատարումը հետաձգվել է:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակ է՝ արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իսկ առավել ծանրացնող՝ արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ

3) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ պայթուցիկ նյութ կամ պայթեցման սարք գործադրելով:

Օրենսդիրը նաև նախատեսել է խրախուսական նորմ՝ սահմանելով, որ փախուստ կատարած անձը փախուստ կատարելու համար ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ռեաբիլիտացնող հիմքով, կամ նա արդարացվել է այն գործով, որով դատապարտվել էր ազատությունից զրկելու հետ կապված պատժի, կալանավորվել կամ ձերբակալվել էր:

Քրեական նոր օրենսգրքում նախատեսվել են նոր հանցակազմեր, որոնք վերաբերում են ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում արգելված գործունեություն ծավալելու հետ: Մասնավորապես, օրենսդիրը պատասխանատվություն է նախատեսում՝ ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից զենք, կտրող-ծակող կամ կյանքից զրկելու կամ առողջությանը վնաս պատճառելու համար այլ գործիք, նյութ կամ առարկա պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, կրելը կամ իրացնելը կամ նրան այդպիսի առարկա փոխանցելու, առանց համապատասխան թույլտվության կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայր կամ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից մոլախաղերի մասնակցելու, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից մոլախաղեր կազմակերպելու, ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում պահվող անձի կողմից թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ կամ դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի գործածելու համար:

Օրենսդիրը նաև հստակեցրել է, որ մոլախաղ է համարվում իր կամ այլ անձի համար գույք կամ այլ առավելություն ստանալու նպատակով ոչ իրավասու մարմնի կազմակերպած ցանկացած խաղ:

Քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում նաև սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն կամ սխալ թարգմանություն կատարելու համար դատավարության մասնակցին կաշառելու համար: Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում ինչպես կաշառքը վերցնելու, այնպես էլ տալու համար:

Օրենսդրի կողմից նաև հստակեցվում է կաշառելու նպատակը՝ իրավասու մարմին չներկայանալու, քննչական կամ դատական գործողություններին չմասնակցելու կամ հաղորդում, բացատրություն, ցուցմունք, եզրակացություն չտալու, թարգմանություն չկատարելու կամ սուտ բացատրություն, ցուցմունք, կեղծ փորձագիտական եզրակացություն կամ կարծիք տալու կամ սխալ թարգմանություն կատարելու համար:

Այս հանցակազմը ավելի լայն է՝ քրեական նախկին օրենսգրքի 340-րդ հոդվածում տեղ գտած հանցակազմի համեմատ, քանի որ նախատեսում է կաշառման հնարավորություն ոչ միայն սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանության, այլև իրավասու մարմին չներկայանալու, քննչական կամ դատական գործողություններին չմասնակցելու կամ հաղորդում, բացատրություն, ցուցմունք, եզրակացություն չտալու, թարգմանություն չկատարելու համար:

Հանցակազմը ձևական է:

Քրեական նոր օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում նաև նախնական քննություն վարելու կամ արդարադատություն իրականացնելու հետ կապված սպառնալիքի կամ բռնի գործողությունների համար, այն է՝ դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի կամ նշված անձանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես դատավոր, դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննության մարմնի, փաստաբան, ներկայացուցիչ, փորձագետ կամ հարկադիր կատարող կամ նշված անձանց մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ:

Քրեական նախկին օրենսգրքի համեմատ՝ քրեական նոր օրենսգրքում առավել մանրամասնվել են հանցանքի կատարման եղանակները՝ քննարկվող հանցագործության դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի կամ նշված անձանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը:

Առավել խիստ պատասխանատվություն սահմանվում է, եթե այդ սպառնալիքները ի կատար են ածվում:

Առավել խիստ է պատասխանատվությունը, եթե արարքը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ
- 2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով



պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Առավել խիստ պատասխանատվություն է սահմանվում, եթե հանցանքը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ

3) մարդու առողջությանը ծանր վնաս պատճառելով:

Քրեական նոր օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով դրանց վարույթի ցանկացած փուլում արգելանքի տակ վերցված գույքի նկատմամբ ապօրինի արարքի համար, որը դրսևորվել է՝

1) գույքի մեկուսացվածությունը կամ նույնականացումն ապահովող և իրավասու անձի կողմից դրված կնիքը կամ կողպեքը ոչնչացնելով, վնասելով կամ այլ կերպ չեզոքացնելով,

2) գույքը յուրացնելով, օտարելով, թաքցնելով, ոչնչացնելով, վնասելով, փոխելով, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելով, այլ կերպ տնօրինելով կամ ապօրինի օգտագործելով այն անձի կողմից, որին այդ գույքը պաշտոնապես վստահված է եղել, ինչպես նաև գույքի սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի կողմից, եթե նրանք տեղյակ են եղել գույքի արգելանքի մասին,

3) գույքի պահպանման պարտականությունը չկատարելով այն անձի կողմից, որի վրա դրված է եղել նման պարտականություն,

4) վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով բանկային գործառնություններ իրականացնելով կամ

5) գույքի բռնագրավման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումից այլ ապօրինի եղանակով խուսափելով:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում առավել մանրամասն կարգավորման են ենթարկվել օբյեկտիվ կողմի հատկանիշները: Քրեական նախկին օրենսգրքում պարզապես մատնանշվում էր արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա խոշոր չափերով գույքը վատնելը, օտարելը, թաքցնելը կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելը կամ վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով խոշոր չափերով բանկային գործառնություններ իրականացնելը:

Ինչպես և քրեական նախկին օրենսգրքը, այնպես էլ քրեական նոր օրենսգրքը պատասխանատվություն է նախատեսում ցուցմունք տալուց հրաժարվելու համար: Օրենսդիրը հանցակազմը բնորոշում է որպես վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք

տալուց ապօրինի հրաժարվելը, փորձագետի կողմից առանց հարգելի պատճառների եզրակացություն կամ կարծիք տալուց հրաժարվելը կամ թարգմանի կողմից առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելը՝ դրա համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու դեպքում:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքում ուղղակիորեն ամրագրված է հնարավոր քրեական պատասխանատվության մասին զգուշացված լինելու պահանջը:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներ են՝ արարքը, որը կատարվել է՝

1) շահադիտական դրդումներով կամ

2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առնչությամբ՝

Օրենսդիրը նաև հստակեցնում է, որ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու համար, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:

## Գլուխ 46

### ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ՀՐԱՄԱՆԸ ՉԿԱՏԱՐԵԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 516-ի 1-ին մասը սահմանում է՝ «Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել, կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին»: Նոր իրավակարգավորման հիմնական նորույթը կայանում է նրանում, որ ավելի որոշակի են սահմանվել քննարկվող նյութական հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքները, ինչը թույլ կտա իրավակիրառողին ճիշտ որակել արարքը և այլ էական վնասը գնահատելիս՝ ունենալ հստակ չափորոշիչներ:

Նախատեսվել են նաև հանցակազմի մի շարք ծանրացնող հանգամանքներ, որոնցից հարկ է անդրադառնալ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որակյալ տեսակին՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է սպայական կամ ավագ ենթասպայական կազմի զինծառայողի կողմից...»:

Նշված ծանրացնող հանգամանքի նախատեսումը հիմնավորված է, քանի որ նշված անձանց կողմից արարքի կատարման հանրային վտանգավորությունը բարձր է և առավել մեծ սպառնալիք է հանդիսանում զինվորական ծառայության անցնելու կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների համար: Հարկ է փաստել, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի զինվորական ծառայության դեմ ուղղված բազմաթիվ հանցատեսակներում այս որակյալ տեսակը նախատեսվել է՝ ինչը միտված է քննարկվող հասարակական հարաբերությունների առավել համապարփակ քրեաիրավական պաշտպանությանը և բխում է սպայական և ենթասպայական անձնակազմին առաջադրվող առավել խիստ պահանջներից և վերջիններիս ստանձնած պատասխանատվությունից:

Ձևակերպման առումով՝ նոր է նաև հոդվածի 3-րդ մասով նախատեսված որակյալ դրսևորումը՝ «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում

կամ այլ ծանր հետևանք...»: Թեև նախկին իրավակարգավորմամբ նշված ծանրացնող հանգամանքի որոշ դրույթներ նախատեսված էին (հոդված 356-ի 3-րդ մաս՝ «Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում...»), սակայն նոր իրավակարգավորումը նախատեսել է ավելի ընդլայնված ձևակերպում, բացի վերոնշյալից ներառելով նաև «անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ մարտական առաջադրանքի կամ գորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ այլ ծանր հետևանք» դրույթը:

Հոդվածի 4-րդ մասով սահմանվում է՝ «Սույն բաժնով նախատեսված զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտը, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի իմաստով, զինծառայող համարվող անձն է (այսուհետ՝ զինծառայող)»: Նշված մոտեցումը արդարացված է, քանի որ սույն բլանկետային դիսպոզիցիայի բովանդակությունը բացահայտելու համար պետք է ուսումնասիրել համապատասխան իրավական ակտերը, որոնց դրույթները քրեական օրենսգրքում սահմանելն անպատակահարմար է և կարող է անհարկի ծանրաբեռնել այն: Բացի այդ՝ նշված օրենսդրական ակտերում հնարավոր են փոփոխություններ, որոնք յուրաքանչյուր անգամ կարիք չի լինի արտացոլել ՀՀ քրեական օրենսգրքում:

Հոդվածի 5-րդ մասը սահմանում է՝ «Սույն բաժնում հրամանատար (պետ) է համարվում ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով զինծառայողից բարձր այն անձը կամ զինվորական ծառայության գծով նրա պարտականությունները կատարող անձը, որը տվյալ իրավահարաբերության շրջանակում եղել է տվյալ զինծառայողի վերադասը, այսինքն՝ ունեցել է իր լիազորություններից բխող հրամաններ կամ կարգադրություններ տալու կամ դրանց կատարումն ապահովելու իրավասություն»: Սույն իրավակարգավորումն համահունչ է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 356-ի 6-րդ մասի դրույթներին:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 516-ի 6-րդ մասը սահմանում է՝ «Եթե զինծառայողն այլ անձի ապօրինի արարքի հետևանքով է ոչ իրավաչափորեն ձեռք բերել զինծառայողի կարգավիճակ, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության սույն բաժնով նախատեսված հանցանքների կատարման համար»:

**ՀՐԱՄԱՆԸ ՉԿԱՏԱՐԵԼԸ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՓՈՒՅԹ ԿԱՍ  
ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ**

Նոր քրեական օրենսգրքի հոդված 517-ի 1-ին մասը սահմանում է՝ «Ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով հրամանը

չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որի հետևանքով անզգուշությամբ մարդու առողջությանը միջին ծանրության վնաս է պատճառվել, կամ որն անզգուշությամբ հանգեցրել է ռազմական գույքի, տեխնիկայի կամ այլ գույքի խոշոր չափերի ոչնչացման կամ վնասման կամ այլ էական վնաս է պատճառել ծառայության շահերին...»:

Քննարկվող իրավակարգավորումը համահունչ է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 356-ի 4-րդ մասի դրույթներին, այն տարբերությամբ, որ այս դեպքում ևս հստակեցվել են հանրորեն վտանգավոր հետևանքները, նշվել են դրանցից որոշները, իսկ ծառայության շահերին պատճառված այլ էական վնասը պետք է գնահատվի նշված համատեքստում:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքները առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ (ՊԵՏԻՆ) ԴԻՄԱԴՐԵԼԸ ԿԱՄ ՆՐԱ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ**

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 518-ը սահմանում է՝ «Հրամանատարին (պետին) դիմադրելը կամ ծառայողական պարտականությունների կատարումը խոչընդոտելը կամ այդ պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն հարկադրելը, որը դրսևորվել է հրամանատարի (պետի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, հրամանատարի (պետի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով կամ շանտաժով»: Սույն հանցակազմի ձևակերպումներում կատարվել են որոշ եզրութաբանական փոփոխություններ, նախատեսվել է «հրամանատար» ձևակերպումը, որը համահունչ է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի (Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին) իրավակարգավորումներին: Նախկին քրեական օրենսգրքում նախատեսված «պետի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ պետի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով» ձևակերպումը փոխարինվել է «շանտաժ» եզրույթով, որի հասկացությունը տրված է ՀՀ նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 13-րդ կետով (շանտաժ՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին կամ օրինական շահերին վնաս պատճառող կամ անձի համար անցանկալի տեղեկություններ հրապարակելու կամ իրավունքներից, ազատություններից զրկելու կամ դրանք սահմանափակելու սպառնալիքը):

Նախատեսվել են նաև սույն հանցակազմի մի շարք ծանրացնող հանգամանքներ, որոնք առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ (ՊԵՏԻ) ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ ԿԱՍ  
ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Հոդված 519-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում հրամանատարի (պետի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ», իսկ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է՝ «Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ հրամանատարի (պետի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը»:

Քննարկվող հոդվածի իրավակարգավորումը գրեթե համընկնում է նախկին քրեական օրենսգրքի հոդված՝ 358-ի հանցակազմին: Կատարված փոփոխությունները, ինչպես նաև նախատեսված ծանրացնող հանցագամանքներն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՍՏՈՐԱԴԱՍԻ (ԵՆԹԱԿԱՅԻ) ՆԿԱՏՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ ԿԱՍ  
ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Նոր քրեական օրենսգրքի հոդված 520-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ (...)»:  
Քննարկվող հանցակազմը գրեթե փոփոխության չի ենթարկվել, դիսպոզիցիայում չի նախատեսվել նախկին քրեական օրենսգրքի հոդված 358.1-ով նախատեսված «ծեծելը» եզրույթը, ինչն արդարացված մոտեցում է, քանի որ այդ գործողությունը բռնության դրսևորում է և այն առանձին նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հատկանշական է, որ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է՝ «Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը (...)»:

Հանցակազմի որակյալ տեսակներն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԱՅԻՆ  
ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ (ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ)  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Սույն հանցակազմը ևս ենթարկվել է փոփոխությունների, հստակեցվել է օբյեկտիվ կողմը: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 359-ի 1-ին մասը սահմանում էր՝ «Զինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ ծեծելով կամ այլ բռնի գործողություններ կատարելով...»: Նոր իրավակարգավորումը, ըստ էության, նախատեսում է նույնական, սակայն ավելի որոշակի իրավակարգավորում: Հոդված 521-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Զինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոն խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձին հարվածներ հասցնելով կամ նրա նկատմամբ բռնի այլ գործողություններ կատարելով կամ պարբերաբար նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելով...»: Նոր կարգավորմամբ տեղի է ունեցել որոշակի մեղմացում, քանի որ քրեական պատասխանատվություն առաջանում է անձի պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու պարագայում, ի տարբերության նախկինի, երբ ծաղրուծանակի մեկ դրսևորումը բավարար էր նշված հանցակազմով արարքը որակելու համար:

Հանցակազմի որակյալ տեսակներն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ԱՆՁԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՅՆԵԼԸ

Ինչպես քրեական նախկին օրենսգրքում, այնպես էլ քրեական նոր օրենսգրքում պատասխանատվություն է սահմանված զինձառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու համար: Հոդված 522-ի առաջին մասը սահմանում է՝ «Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինձառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինձառայողի կողմից (...)»: Այս

իրավակարգավորումը համահունչ է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 360.1-ի իրավակարգավորմանը, այն տարբերությամբ, որ նոր օրենսգրքով չի նախատեսվել «Եթե բացակայում են սույն օրենսգրքի 358-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի, 358.1-ին հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի հատկանիշները» ձևակերպմանը համարժեք ձևակերպում: Սա ճիշտ մոտեցում է, քանի որ նախկին օրենսգրքով կատարված բացառությունն արդարացված չէր: Եթե անգամ անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը պայմանավորված է եղել զինձառայողի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքով, դա ամենևին չի բացառում նշված հանցագործությունների համակցությունը:

Հանցակազմի մյուս որակյալ տեսակներն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՆԵԼԸ

Քննարկվող հանցակազմի հիմնական փոփոխությունը կապված է դիտավորության տեսակի հետ: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 360.2.-ը պատասխանատվություն էր սահմանում զինձառայողին անուղղակի դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու համար: Նոր քրեական օրենսգրքի հոդված 523-ը սահմանում է՝ «Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինձառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու միջոցով ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինձառայողի կողմից...»: Ինչպես նկատելի է, նոր իրավակարգավորումը չի նշում դիտավորության տեսակը, այն կարող է լինել թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի: Սակայն հարկ է փաստել, որ ուղղակի դիտավորության այն դրսևորումները, երբ անձը դրվում է անելանելի դրության մեջ և նրա ընտրությունը սահմանափակվում է մահվան եղանակի հարցում, այսինքն՝ ինքնասպան չլինելու դեպքում սպառնում են անմիջապես զրկել կյանքից, ապա սա պետք է որակվի որպես սպանություն՝ հոգեկան հարկադրանքի եղանակով: Այլ է վիճակը, երբ ուղղակի դիտավորությամբ անձին հասցնում են ինքնասպանության, օրինակ՝ սպառնում են, որ պարտքը չվերադարձնելու դեպքում նա պատվազուրկ կարվի և ավելի լավ է ինքնասպան լինի: Այս դեպքում, անձին ուղղակի դիտավորությամբ հասցնում են ինքնասպանության, ինչը չի կարող որակվել որպես սպանություն:

Հանցակազմի մյուս որակյալ տեսակներն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔ ՀԱՍՑՆԵԼԸ



Քննարկվող իրավակարգավորումը նույնությամբ կրկնում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 360-ով նախատեսված հանցակազմը և այն առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է: Հոդված 524-ի 1-ին մասը սահմանում է՝ «Չորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը մեկ այլ զինծառայողի կողմից»:

Որոշակի փոփոխությունների են ենթարկվել ծանրացնող հանգամանքները, առանձին կետերով նախատեսվել են՝

- «1) ստորադասի (ենթակայի) կողմից հրամանատարի (պետի) նկատմամբ,
- 2) հրամանատարի (պետի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ կամ

3) երկու կամ ավելի զինծառայողների նկատմամբ» որակյալ տեսակները: Նախկին իրավակարգավորմամբ ծանրացնող հանգամանքները պետք է կապված լինեին «զինվորական ծառայության պարտականությունները կատարելու» հետ: Նոր ձևակերպմամբ՝ նման դրույթ արդարացիորեն նախատեսված չէ, քանի որ անկախ այն հանգամանքից, թե ինչով է պայմանավորված հասցված վիրավորանքը, այն խաթարում է զինվորական ենթակայության կարգի և կանոնադրային փոխհարաբերությունների պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Ավելացվել է նոր ծանրացնող հանգամանք՝ «երկու կամ ավելի զինծառայողների նկատմամբ»:

## Գլուխ 47

### ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԴԵՍ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ԶՈՐԱՄԱՍԸ ԿԱՍ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐՆ ԻՆՔՆԱԿԱՍ ԹՈՂՆԵԼԸ ԿԱՍ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ ՉՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 525-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զինճառայողի կողմից զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը 72 ժամից ավելի, բայց 240 ժամից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ՝ յուրաքանչյուրը մեկ ժամից մինչև 72 ժամ տևողությամբ (...)»: Նոր իրավակարգավորման հիմնական տարբերությունը կայանում է ժամային հաշվարկ նախատեսելու մեջ, ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, որտեղ խուսափելու ժամանակահատվածը նախատեսվում էր օրերով, ամիսներով կամ ժամերով (Երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ (...), երեք ամսվա ընթացքում երեք և ավելի անգամ մեկ ժամից մինչև երեք օր տևողությամբ):

Այս առումով հարկ է փաստել, որ նոր իրավակարգավորումն ավելի հստակ է և համակարգված:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներից հարկ է անդրադառնալ հոդվածի 3-րդ մասով նախատեսված որակյալ տեսակին՝ «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելը, եթե ինքնակամ բացակայությունը տևել է 240 ժամից ավելի (...)»: Պետք է նշել, որ նոր քրեական օրենսգրքին արդարացիորեն նախատեսել է ավելի խիստ պատասխանատվություն՝ նախկին կարգավորմամբ սահմանված մեկամսյա ժամկետը կրճատելով և սահմանելով 240 ժամ: Այսինքն՝ արարքը կորակվի այս ծանրացնող հանգամանքով ոչ թե այն պարագայում, երբ ինքնակամ բացակայությունը տևել է մեկ ամսից ավելի, բայց զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով, այլ 240 ժամ բացակայելու դեպքում: Հարկ է նշել նաև, որ նոր կարգավորմամբ ժամանակավորապես խուսափելու նպատակը ծանրացնող հանգամանքը նկարագրելիս նշված չէ, ինչն ավելի հստակ իրավակարգավորում է, քանի որ, որակյալ տեսակը սահմանելիս, հանցակազմի հատկանիշների կրկնության անհրաժեշտությունը բացակայում է:

Հանցակազմի մյուս ծանրացնող հանգամանքները, ինչպես նաև նախատեսված խրախուսական նորմը լրացուցիչ քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

## ԴԱՍԱԼՔՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկվող հանցակազմի դիսպոզիցիան էական փոփոխությունների չի ենթարկվել: Հոդված 526-ի 1-ին մասը սահմանում է՝ «Դասալքությունը՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ նույն նպատակով ծառայության չներկայանալը»: Փոփոխությունը շարահյուսական բնույթի է, որին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Անհրաժեշտ է քննարկել նաև սույն հոդվածի խրախուսական նորմը, որը նախատեսված է 5-րդ մասով: Համաձայն այդ նորմի՝ «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքն առաջին անգամ կատարած զինծառայողն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դա կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով, կամ եթե նա ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով ներկայացել է զորամաս, ծառայության վայր կամ իրավասու մարմին և պատրաստակամություն է հայտնել շարունակելու ծառայությունը»: Նշված բնույթի խրախուսական նորմերը դուրս են նոր քրեական օրենսգրքով որդեգրված ընդհանուր հայեցակարգից, որի համաձայն նշվում է, որ անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված արարքի կատարման համար քրեական պատասխանատվությունից, ոչ թե ընդհանրապես քրեական պատասխանատվությունից, ինչպես դա նշվում էր նախկին իրավակարգավորմամբ՝ առաջացնելով տարբերումներ: Բացի այդ, նոր իրավակարգավորումներում հստակ նշվում է, որ եթե անձի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ արարքի համար՝ ինչը չի նախատեսվել նշված խրախուսական նորմով:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒԻ (ԱՆԴԱՄԱԽԵՂԵԼՈՒԻ), ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ  
ՄԻՄՈՒԼՅԱՅԻԱՅԻ ԿԱՄ ԱՊՕԴԻՆԻ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՈՎ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՄ ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 527-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելու (անդամախեղելու), հիվանդության սիմուլյացիայի, կեղծ փաստաթուղթ օգտագործելու, խաբեության կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելը»: Այս

իրավակարգավորումն իր մեջ ներառել է նախկին քրեական օրենսգրքի հոդված 363-ի առաջին և երրորդ մասերը՝ առանձին չտարանջատելով առողջությանը վնաս պատճառելու և մյուս եղանակներով սույն հանցանքի կատարումը: Նոր իրավակարգավորմամբ նախատեսված չէ նաև նախկին քրեական օրենսգրքի հոդված 363-ի երկրորդ մասով սահմանված ծանրացնող հանգամանքը՝ «Նույն արարքը, որը կատարվել է շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով»: Այս մոտեցումն արդարացված է, քանի որ նշված ծանրացնող հանգամանքի նախատեսումը տվյալ պարագայում չի բխում քննարկվող հանցագործության առանձնահատկություններից, իսկ իր առողջությանը վնաս պատճառելու ընթացքում զինծառայողի կողմից այլոց կյանքին կամ առողջությանը դիտավորությամբ կամ անզգուշությամբ իրական վնաս պատճառելու պարագայում արարքը կորակվի հանցագործությունների համակցությամբ:

Որոշակիորեն փոխվել է քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը, քանի որ չի նախատեսվել «կամ կարող էր հանգեցնել» ձևակերպումը, ինչն, անշուշտ, բարձրացնում է քննարկվող քրեաիրավական նորմի որոշակիության աստիճանը:

Սույն հանցակազմում կատարված մյուս փոփոխություններին առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ (ԱՆԴԱՄԱԽԵՂԵԼԸ), ՈՐԸ ՀԱՆԳԵՑՐԵԼ Է  
ԿԱՍ ԿԱՐՈՂ ԷՐ ՀԱՆԳԵՑՆԵԼ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԿԱՍ ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒՆ

Նոր քրեական օրենսգրքի հոդված 528-ի առաջին մասը սահմանում է՝ «Զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը (անդամախեղելը), որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն, և եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ»: Քննարկվող հանցակազմը նորամուծություն է ՀՀ նոր քրեական օրենսգրքում և չունի իր համարժեքը նախկին իրավակարգավորմամբ:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍ ԴՐԱ  
ԱՌԱՆՁԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 529-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զինծառայողի կողմից զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց հրաժարվելը, որը զուգորդվել է նրա կողմից դրանց չկատարմամբ կամ

փաստացի դադարեցմամբ»: Այս իրավակարգավորումը համահունչ է նախկին քրեական օրենսգրքի հոդված 364-ի 1-ին մասին:

Վերաձևակերպվել է հոդվածի 3-րդ մասով սահմանված ծանրացնող հանգամանքը՝ «Մույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կամ որն առաջացրել է մարտական առաջադրանքի կամ զորավարժության կամ այլ ռազմական միջոցառման խափանում կամ հանգեցրել է զորամասում անկարգությունների կամ առաջացրել է այլ ծանր հետևանք»: Նոր ձևակերպումն ավելի որոշակի է և որպես ծանրացնող հանգամանք նախատեսում է հետևանքների ավելի մեծ խումբ, ինչը, տվյալ պարագայում, արդարացված է:

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄՈԼԱԽԱՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ  
ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼԸ**

Նախկին քրեական օրենսգրքի հոդված 364.1-ի համեմատ՝ նոր իրավակարգավորումն ավելի հստակ է և չի նախատեսում նախկինում սահմանված որոշ ծանրացնող հանգամանքներ՝ կապված էական գույքային վնաս կամ այլ ծանր հետևանքներ պատճառելու հետ: ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 530-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Զինձառայողի կողմից զորամասում, զինվորական ծառայությունը կրելու այլ վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում մոլախաղերի մասնակցելը»: Նոր քրեական օրենսգրքով չի նախատեսվել նշված հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող նպատակը, որը նախկին օրենսգրքով սահմանված էր՝ «իր կամ այլ անձի համար գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալու նպատակով» ձևակերպմամբ: Սա արդարացված մոտեցում է, քանի որ անկախ այն հանգամանքից, թե ինչ նպատակով է անձը մասնակցել կամ կազմակերպել մոլեխաղերը, դրանք զինվորական ծառայության վայրում խիստ վտանգավոր են և կարող են կազմալուծել կամ կաթվածահար անել զինվորական ծառայության հարաբերությունների բնականոն ընթացքը:

Կատարված մյուս փոփոխություններից առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ)  
ՆՅՈՒԹԵՐ, ԴՐԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔ ՆՅՈՒԹԵՐ  
(ԱՆԱԼՈԳ) ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾԱԾԵԼԸ ԿԱՄ ԴՐԱՆՔ ԳՈՐԾԱԾԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ**

Քննարկվող հանցակազմի նոր իրավակարգավորումն ավելի հստակ է և նախատեսում է օբյեկտիվ կողմի նոր դրսևորում: Հոդված 531-ի 1-ին մասը սահմանում է՝ «Ձինձառայողի կողմից գորամասում, զինվորական ծառայությունը կրելու այլ վայրում կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ընթացքում թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի գործածելը կամ դրանք գործածած վիճակում ծառայության ներկայանալը»: Ի տարբերություն նախկին իրավակարգավորման՝ նոր ձևակերպումը նշում է նաև թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի պատրաստուկների, ինչպես նաև դրանց համարժեք նյութերի մասին, ինչն ավելի ընդգրկուն կարգավորում է: Բացի դա, որպես քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմի դրսևորում նախատեսված է՝ «դրանք գործածած վիճակում ծառայության ներկայանալը»: Այս արարքի վտանգավորությունը խիստ բարձր է և դրա նախատեսումը լիովին արդարացված է, քանի որ նշված նյութեր գործածած անձի ներկայությունը ծառայության վայրում կարող է ունենալ անդառնալի հետևանքներ զինվորական ծառայության անցնելու կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների համար:

Նոր իրավակարգավորմամբ չի նախատեսվել նախկին օրենսգրքով սահմանված խրախուսական բնույթի նորմը, համաձայն որի՝ «Այն զինձառայողը, որն առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելու կապակցությամբ բժշկական օգնություն ստանալու համար կամովին դիմել է բժշկական ծառայություն, ազատվում է սույն հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվությունից»:

Գլուխ 48

ԶԵՆՔԻ, ՌԱԶՄԱՍԹԵՐՔԻ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՄ  
ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ, ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ  
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ՍԱՐՔԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԵՏ  
ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԴԵՍ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԶԵՆՔԻ, ՌԱԶՄԱՍԹԵՐՔԻ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ  
ԳՈՒՅՔԻ, ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ,  
ՍԱՐՔԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 373-ը պատասխանատվություն էր սահմանում զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու համար: Նոր իրավակարգավորմամբ կատարվել են որոշակի փոփոխություններ, ընդլայնվել է վերոնշյալ առարկաների ցանկը: Հոդված 532-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, ռադիոակտիվ նյութի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութի, սարքի կամ առարկայի հետ վարվելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ տվյալ առարկայի ոչնչացում կամ վնասում»: Որպես հետևանք չի նախատեսվել նախկին իրավակարգավորմամբ սահմանված առողջությանը թեթև վնաս պատճառելը: Հոդվածի առաջին մասում նախատեսվել է նաև խոշոր գույքային վնասի պատճառումը, որը նախկին իրավակարգավորմամբ սահմանված էր որպես ծանրացնող հանգամանք, սակայն չէր մասնավորեցվում գույքային վնասի չափը այլ նախատեսվում էր՝ «ռազմական տեխնիկայի ոչնչացում կամ այլ ծանր հետևանքներ»: Հոդված 532-ի 4-րդ մասը, որպես ծանրացնող հանգամանք նախատեսում է՝ «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ» ծանրացնող հանգամանքը, որպիսին նախատեսված չէր նախկին քրեական օրենսգրքում: Նշված ծանրացնող հանգամանքի նախատեսումն արդարացված է, քանի որ նշված իրերի կամ առարկաների հետ վարվելու կանոնների խախտումը կարող է հանգեցնել բազմաթիվ մարդկանց անզգուշությամբ մահ պատճառելուն, որպիսի հանգամանքին պետք է տրվի առավել խիստ քրեաիրավական գնահատական:

ԶԵՆՔԸ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԸ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԸ,  
ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ, ՍԱՐՔԵՐԸ ԿԱՄ  
ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ ՀԱՆՁՆԵԼԸ

Հոդված 533-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զինձառայողին վստահված զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան սահմանված կարգի խախտմամբ մեկ ուրիշին հանձնելը, եթե դա անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ տվյալ առարկայի ոչնչացում կամ վնասում կամ այլ ծանր հետևանք»։ Ի տարբերություն նախկին իրավակարգավորման (նախկին քրեական օրենսգրքի հոդված 374), նոր ձևակերպումն ավելի հստակ է և սահմանում է հետևանքների ավելի մեծ շրջանակ։ Նախկին կարգավորմամբ նշվում էր՝ «եթե դա առաջացրել է մարդկային զոհեր կամ այլ ծանր հետևանքներ»։ Այս կարգավորումն անորոշ էր, մասնավորապես կապված «մարդկային զոհեր» ձևակերպման հետ, ինչը կարող էր տարամեկնաբանությունների տեղիք տալ։ Նոր ձևակերպման անվիճելի առավելությունը նկարագրված հետևանքների հստակությունն է, իսկ «այլ ծանր հետևանք» ձևակերպումը պետք է մեկնաբանվի հոդվածում նշված այլ հետևանքների համատեքստում։ Սույն հոդվածում ևս, որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք, նախատեսվել է՝ «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ», ինչն արդարացված է և հիմնավոր (այս մասին խոսվել է նախորդ հոդվածը քննարկելիս)։

ԶԵՆՔԸ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԸ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԸ,  
ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ, ՍԱՐՔԵՐԸ ԿԱՄ  
ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՎՆԱՍԵԼԸ

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 369-ը պատասխանատվություն էր սահմանում ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար։ Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում էր՝ «Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը»։ Նոր իրավակարգավորմամբ շտկվել են նախկինում առկա մի շարք թերություններ, ընդլայնվել է այն առարկաների ցանկը, որոնց վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվություն է առաջանում նշված հանցակազմի հատկանիշներով։ Հոդված 534-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Զենքը, ռազմամթերքը, ռազմական



տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան ոչնչացնելը կամ վնասելը»: Որպես հանցագործության առարկա ավելացվել են «ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան»: Նշված ընդլայնումը հիմնավորված է, քանի որ այս նյութերը կամ առարկաները չեն ընդգրկվում զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի հասկացության մեջ, չնայած՝ հարկ է նկատել, որ լայն մեկնաբանման պարագայում դրանք կարող են ընդգրկվել ռազմական այլ գույք հասկացության ներքո, սակայն առանձին սահմանելը, այնուամենայնիվ, ավելի ճիշտ և հստակ մոտեցում է:

Նոր իրավակարգավորմամբ հոդվածի դիսպոզիցիայում չի խոսվում դիտավորության մասին, քանի որ հոդված 24-ի համաձայն՝ անզգուշությամբ կատարված արարքը հանցանք է, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասով դա նախատեսված է: Այսինքն՝ եթե անզգուշության մասին հոդվածում նշում չկա, ապա այն համարվում է դիտավորությամբ կատարված և այդ մասին կրկին հոդվածի շրջանակներում նշելու կարիք չկա:

Կատարված մյուս փոփոխություններին, որոնք վերաբերում են հոդվածում նախատեսված նոր ծանրացնող հանգամանքներին, առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

ԶԵՆՔԸ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԸ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՅԼ ԳՈՒՅՔԸ,  
ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ, ՍԱՐՔԵՐԸ ԿԱՄ  
ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՎՆԱՍԵԼԸ

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 370-ը պատասխանատվություն էր սահմանում ռազմական գույքն անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար: Նշված հոդվածը սահմանում էր՝ «Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքն ինքնավստահությամբ կամ անփութությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ» Նոր իրավակարգավորմամբ հանցակազմի ձևակերպումները հստակեցվել են: Հոդված 535-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ անզգուշությամբ առաջացրել է խոշոր չափերի գույքային վնաս»: Քրեական նախկին օրենսգրքում տեղ գտած «ծանր հետևանքներ» ձևակերպման

փոխարեն՝ նոր օրենսգրքը թվարկում է մի շարք հետևանքներ, որից հետո տալիս «կամ այլ ծանր հետևանք» ձևակերպումը: Քրեական նոր օրենսգրքի տրամաբանությունից հետևում է, որ «այլ ծանր հետևանք» պետք է դիտարկվեն հողվածում թվարկվածներին համարժեք հետևանքները:

#### ՎՍՏԱՀՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՀԱՓՇՏԱԿԵԼԸ

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հողված 371-ը պատասխանատվություն էր սահմանում ռազմական գույքը յուրացնելու կամ վատնելու համար: Նշված հողվածի 1-ին մասն ուներ հետևյալ բովանդակությունը՝ «Զինձառայողին անձնական կամ ձառայողական օգտագործման համար տրամադրված համազգեստը կամ ռազմական հանդերձանքի առարկաները կամ ռազմական այլ գույքը յուրացնելը կամ վատնելը»: Իսկ 2-րդ մասով սահմանվում էր՝ «Զենքը կամ ռազմամթերքը յուրացնելը կամ վատնելը»:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հողված 536-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զինձառայողին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով անձնական կամ ձառայողական օգտագործման համար հանձնված համազգեստը կամ ռազմական հանդերձանքի առարկան կամ ռազմական այլ գույքը հափշտակելը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո»: Հողվածի 2-րդ մասը սահմանում է՝ «Զինձառայողին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով անձնական կամ ձառայողական օգտագործման համար հանձնված զենքը կամ ռազմամթերքը հափշտակելը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո (...): Նոր իրավակարգավորումը համապատասխանեցրել է նշված հանցակազմը հողված 256-ի (Վստահված գույքը հափշտակելը) բովանդակությանը:

Նոր իրավակարգավորմամբ՝ սույն հողվածի շրջանակներում կատարված կարևոր փոփոխություն պետք է համարել այն, որ սահմանվել է դիտավորության ծագման պահը՝ «եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո», ինչը թույլ կտա իրավակիրառ պրակտիկայում առավել դյուրին սահմանազատել նշված հանցատեսակը համաբնույթ հանցակազմերից: Այս մասին ևս խոսվել է հողված 256-ի քննարկման շրջանակներում:

Հողվածում կատարված այլ փոփոխություններին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԿՈՐՑՆԵԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 537-ի 1-ին մասը սահմանում է՝ «Զինձառայողի կողմից ծառայողական օգտագործման համար իրեն վստահված զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքը, ռադիոակտիվ նյութը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութը, սարքը կամ առարկան կորցնելը, որը կատարվել է դրանց պահպանության կանոնի խախտմամբ (...)»: Ի տարբերություն նախկին իրավակարգավորման (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 372), նոր օրենսգրքով պատասխանատվություն չի նախատեսվել «Զինձառայողի կողմից անձնական օգտագործման համար իրեն տրամադրված զգեստը կամ ռազմական հանդերձանքի առարկաները զգալի չափերով...» կորցնելու համար, քանի որ անձնական օգտագործման համար նախատեսված վերոնշյալ իրերը կորցնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելն անարդարացի է և անտրամաբանական: Կատարված մյուս փոփոխություններին արդեն իսկ անդրադարձ է կատարվել այլ հոդվածների քննարկման ընթացքում և դրանք կրկին վերլուծելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### ՄԵՔԵՆԱՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 377-ը պատասխանատվություն էր նախատեսում մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելու համար: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում էր՝ «Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անգուշությամբ պատճառել է միջին ծանրության կամ ծանր վնաս կամ առաջացրել է այլ ծանր հետևանքներ...»: Նոր իրավակարգավորմամբ կատարվել են որոշակի փոփոխություններ, հստակեցվել են հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ հանդիսացող հետևանքները: Հոդված 538-ի 1-ին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենա վարելու կամ շահագործելու կանոն խախտելը, որն անգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս...»: Գույքային վնասի չափերը, ինչպես բազմիցս նշել ենք, սահմանված են նոր քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածով:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքների առանձին քննարկման անհրաժեշտությունը բացակայում է:

#### ՌԱԶՄԱԿԱՆ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԹՌԻԶՔՆԵՐԻ, ԴՐԱՆՅ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

Հոդված 539-ի 1-ին մասը սահմանում է՝ «Ռազմական թռչող սարքերի թռիչքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս (...)»: Այս պարագայում ևս, նախկին իրավակարգավորումից հիմնական տարբերությունը կայանում է արարքի հետևանքները հստակեցնելու մեջ, իսկ կատարված փոփոխությունները համահունչ են նախորդ հոդվածում քննարկվածներին և դրանց առանձին վերլուծության անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՄԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ  
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՄԱՐՏԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 365-ը պատասխանատվություն էր սահմանում մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու համար: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում էր՝ «Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը վնաս է պատճառել»:

Համաբնույթ հանցակազմ նախատեսվել է նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքով: Հոդված 540-ի 1-ին մասը սահմանում է՝ «Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոն խախտելը, եթե այդ արարքը կարող էր հանգեցնել պետության դեմ հարձակումը ժամանակին չհայտնաբերելուն կամ դրան չդիմակայելուն, կամ եթե այդ արարքը հանգեցրել է մարտական հերթապահության կամ մարտական ծառայության կրման բնականոն ընթացքի խաթարման»:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՄԱՀՄԱՆԱՊԱՀ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 541-ի 1-ին մասը սահմանում է՝ «Սահմանապահ վերակարգի մեջ մտնող կամ սահմանապահ ծառայության այլ պարտականություններ կատարող անձի կողմից սահմանապահ ծառայություն կրելու կանոն խախտելը, եթե այդ արարքն անզգուշությամբ առաջացրել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատում կամ սահմանի որոշակի հատվածի պատշաճ հսկողության բացակայություն, կամ եթե անզգուշությամբ հանգեցրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու կամ խոշոր չափերի գույքային վնասի կամ այլ էական վնասի»:

Օրենսդիրը դրսևորել է հետևողականություն, կանոնների խախտման հետ կապված

հանցատեսակի սուբյեկտիվ կողմը սահմանելով անզուգուշությամբ: Հստակեցվել են նաև սույն հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող հետևանքները, որպես այդպիսիք սահմանելով՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատումը կամ սահմանի որոշակի հատվածի պատշաճ հսկողության բացակայությունը, մարդու առողջությանը միջին ծանրության վնաս պատճառումը կամ խոշոր չափերի գույքային վնասը կամ այլ էական վնասը: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 366-ով նախատեսված համանուն հանցակազմը մեղքի ձև սահմանում էր դիտավորությունը, իսկ որպես հետևանք՝ «(...) այդ արարքը վնաս է պատճառել պետության անվտանգության շահերին»: Այս ձևակերպումն անորոշ էր և նոր իրավակարգավորմամբ կատարված փոփոխությունը պետք է հաջողված համարել, քանի որ սահմանվում է հետևանքների շրջանակը, իսկ այլ էական վնասը պետք է մեկնաբանվի նշված հետևանքների համատեքստում: Հարկ է նշել նաև, որ որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանք հոդվածի 3-րդ մասում նախատեսվել է՝ «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն առաջացրել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատում կամ սահմանի որոշակի հատվածի պատշաճ հսկողության բացակայություն (եթե բացակայում են այլ հանցագործության հատկանիշները)»: Նշված մոտեցումը համահունչ է նախորդ հոդվածի քննարկման ընթացքում նշված նկատառումներին:

Հանցակազմի մյուս ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

542-544-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերում կատարված փոփոխությունները համահունչ են վերը քննարկված հոդվածներ 540-ում և 541-ում կատարված փոփոխություններին և դրանք լրացուցիչ վերլուծելու կամ քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### ՄԱՐՏ ՎԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ՀԱՆՁՆԵԼԸ ԿԱՍ ԹՈՂՆԵԼԸ

Հոդված 545-ի 1-ին մասը սահմանում է՝ «Առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու հրամանատարի (պետի) կողմից ամբողջությամբ, մարտական տեխնիկան կամ մարտ վարելու այլ միջոցը հակառակորդին հանձնելը կամ թողնելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 418-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները»: Հարկ է նկատել, որ նշված հանցակազմը գրեթե նույնական է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 379-ով նախատեսվածի հետ, իսկ կատարված փոփոխությունները եզրութաբանական բնույթի են, որոնք լրացուցիչ քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը նույնական է

ՀՀ քրեական նախկին օրենսգրքի հոդված 380-ի հետ:

ԿԱՄՈՎԻՆ ԳԵՐԻ ՀԱՆՁՆՎԵԼԸ

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 381-ը պատասխանատվություն էր նախատեսում կամովին գերի հանձնվելու համար: Նշված հոդվածը սահմանում էր՝ «Վախկոտության կամ փոքրոգության պատճառով կամովին գերի հանձնվելը...»: Նոր իրավակարգավորմամբ՝ նշված հանցակազմը վերաձևակերպվել է: Հոդված 547-ի 1-ին մասը սահմանում է՝ «Առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու կամովին գերի հանձնվելը (...)»: Նոր ձևակերպումն ավելի հստակ է, քանի որ վախկոտության կամ փոքրոգության հանգամանքն ապացուցելը չափազանց բարդ է, իսկ մարտի հանգամանքներով պայմանավորված լինելը կամ չլինելը, այս դիտանկյունից, ավելի հեշտ է հիմնավորել: Այլ փոփոխություններ, այդ թվում հոդվածի սանկցիայի իմաստով, չեն կատարվել:

ՀԱՆՑԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Քննարկվող հոդվածի շարադրանքում կատարված փոփոխությունները եզրութաբանական և հստակեցնող բնույթի են, որոշակի փոփոխությունների են ենթարկվել հանցակազմի որակյալ տեսակները, որոնք, սակայն, առանձին քննարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԻՇԽԱՆԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԱՇԱՀԵԼԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 549-ի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն առաջացրել է հանցանքի կամ այլ իրավախախտման պարտականում կամ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին (...)»: Համաբնույթ հանցակազմ սահմանված էր նաև նախկին քրեական օրենսգրքով, որի հոդված 375-ը պատասխանատվություն էր սահմանում իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար: Նշված հոդվածը սահմանում էր՝ «Պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել (...)»: Նոր իրավակարգավորմամբ քննարկվող հանցակազմը որոշակի առումով համապատասխանեցվել է հոդված 441-ի իրավակարգավորումներին (Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը): Պետք է փաստել նաև, որ փորձ է կատարվել հստակեցնելու հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ հանդիսացող հետևանքները, քանի որ նախկին ձևակերպմամբ սահմանված «էական վնաս» ձևակերպումը չափազանց անորոշ էր և կարող էր հանգեցնել բազմաթիվ չարաշահումների՝ հանցագործության որակման գործընթացում:

Հոդվածի 4-րդ մասով նշվում է՝ «Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը»:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:



## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԱՆՓՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 550-ի 1-ին մասը սահմանում է՝ «Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփութ վերաբերմունքի հետևանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին»: Նշված ձևակերպումը, ընդհանուր առմամբ հաջողված է, քանի որ հստակեցնում է հանցագործության օբյեկտիվ կողմը՝ հանրորեն վտանգավոր արարքի առումով: Սակայն նախկին ձևակերպմամբ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի հոդված 376) սահմանված «էական վնաս» ձևակերպումը մնացել է նաև նոր կարգավորմամբ:

Հանցակազմի ծանրացնող հանգամանքներին առանձին անդրադարձ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: